









304273, 997.925

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՀԱՅ ԳԱԴԹԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Միջնադարից մինչև 1920-ական թթ.)

ԵՌԱՀԱՏՈՐՅԱԿ

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱԴՈՒԹՆԵՐԸ

199568

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ ԱՇԾԵԱՆ

ՍԱՏԵՆԱՇԱՐ

89



ARCH. MESROB ASHJIAN

BOOK SERIES


89

*Mesrop Ashjian*

ԵՐԵՎԱՆ

Պատմության ինստիտուտ

2013





## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի նախաձեռնած ծրագիրը՝ երեք հատորի սահմաններում ներկայացնել հայ գաղթաշխարհի պատմութիւնը, սույն հատորով ամբողջանում, իր վերջնական ավարտին է հասնում:

Աշխարհասփյուռ հայկական գաղթօջախների պատմութեան առաջին երկու հատորներն ակադեմիկոս Վարդգես Միքայելյանի խմբագրութեամբ հրատարակվել են տասը տարի առաջ՝ 2003 թ.: Առաջին հատորը բովանդակում էր սլավոնական երկրների հայկական գաղութների պատմութիւնը՝ ներառելով Ռուսաստանի, Հյուսիսային Կովկասի և Արևելյան Եվրոպայի երկրների հայութեան անցած ուղին: Երկրորդ հատորն ընդգրկում էր Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութների պատմութիւնը:

Ընթերցողին ներկայացվող երրորդ հատորը նվիրված է Եվրոպայի և Ամերիկայի հայկական գաղութներին: Տվյալ դեպքում դժվարութիւն է հարուցել այն հանգամանքը, որ ոչ բոլոր երկրների հայկական համայնքների պատմութեան վերաբերյալ առանձին և համապարփակ մենագրական ուսումնասիրութիւններ կան: Այդ պատճառով ինստիտուտի տնօրինութիւնը և խմբագրական խորհուրդը հատորի հեղինակային կազմում, ի թիվս հայրենի գիտնականների, ընդգրկել են նաև սվյալ երկրների ճանաչված հայ մասնագետներին: Այդ մոտեցումը, կարծում ենք, իրեն լիովին արդարացնում է՝ մի կողմից սփյուռքի մասնագետների հետ համագործակցութիւնը զորացնելու, մյուս կողմից՝ արտերկրի մասնագետների՝ նյութին և լեզվին քաջածանոթ լինելու հանգամանքն օգտագործելու առումով:

Միջնագրի և նոր շրջանի հայկական գաղթավայրերի համառոտ պատմութեան ներկայացման ավարտը թելադրում է կատարել երկրորդ քայլը՝ հայրենիքի և սփյուռքի մասնագետների հետ համատեղ ձեռնամուխ լինել արդի ժամանակաշրջանի հայկական համայնքների, ասել է թե՛ հայ սփյուռքի պատմութեան հիմնավոր լուսաբանմանը:

# ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂՈՒԹՆԵՐԸ

## ԻՏԱԼԻԱ<sup>1</sup>

Ընդհանրապէս, երբ խօսուում է հայ-իտալական մշակութային կապերի մասին, մտաբերուում է մանաւանդ Մխիթար Աբրահայրը եւ նրա կողմից հիմնուած հոգեւոր կարգը, որ հաստատուել է Վենետիկում XVIII դարի առաջին տասնամեակներում: Սա, անկասկած, այս հաստատութեան կողմից հայ նոր մշակոյթի ու գիտութեան ասպարէզում կատարուած կարեւոր առաքելութիւն է: Այս առաքելութեան մասին մեզ հետաքրքրող կողմն այն է, որ Մխիթարեանները, ըստ յաճախ կրկնուած արտայայտութեան, կամուրջի դեր կատարեցին արեւմտեան մշակոյթի եւ հայկական մշակոյթի միջեւ մի գործունէութիւն, որն իր բարձրակետին հասաւ XVIII եւ XIX դարերում:

Սակայն, Մխիթարի գործը, ինչպէս պատմական եւ մշակութային կարգի ամէն երեւոյթ, անկասկած առանձին պահի արդիւնք չէ:

Պատմական իրադարձութիւնների շարունակականութիւնը սրու իմաստով պայմանաւորուած է պատմական իրարայաջորդ եղելութիւններով: Այս տեսանկիւնից, հայկական իրականութեան մէջ Մխիթար Աբրահայր երեւալը քողագերծում է մի աւելի ծաւալուն պատմական հասկացողութիւն: Գիտենք, որ իրենից շատ առաջ Իտալիայում գոյութիւն ունէին հայկական համայնքներ: Թող յիշուի նաեւ, որ հայերէն գրքի առաջին տպագրութիւնը տեղի ունեցաւ Վենետիկում 1512 թ.: Պատմաբան Աշ. Աբրահամեանը չի վարանում հաստատել, որ Իտալիոյ հայկական գաղութների ուսումնասիրութիւնը կարեւոր է ոչ միայն հայագիտութեան համար, այլեւ ընդհանրապէս Ասիայի ու Եւրոպայի տնտեսական, քաղաքական եւ մշակութային յարաբերութիւնների պատմութեան համար: Իտալիոյ հայ գաղութը անկասկած եղաւ այն ոսկէ կամուրջը, որի վրայով Հա-

<sup>1</sup> Յօդուածը հրատարակուում է հեղինակի «Միջին Դարու Իտալիոյ հայ գաղութները և հայ-իտալական մշակութային կապերը» խորագրով խտայերէն աշխատութեան հիման վրայ (Primo simposio internazionale di arte Armena. 1975, San Lazzaro, Venezia, pp. 803-931).

յաստանը միջնադարում պահպանեց իր կապերը Արեւմտեան Եւրոպայի երկրների հետ<sup>1</sup>:

Առանձին ուսումնասիրութեան առարկայ են հայ եւ արեւմտեան մշակոյթների մէջ առկայ նմանութիւնները, որ յատկապէս նկատուում են կերպարուեստի ասպարէզում:

Իտալիայում հայերի ներկայութիւնն անշուշտ կարօտ է առաւել հիմնաւորուած ղնահատման՝ լոյս սփռելով նրանց գործունէութեան վրայ Իտալիայի մշակոյթի եւ գեղարուեստի ասպարէզում:

Իտալիայում հայերի ներկայութեան պատմութիւնը կարելի է բաժանել երկու գլխաւոր շրջանների:

Առաջինը՝ VI դարից մինչեւ XI դարի վերջը:

Երկրորդը՝ միջնադարից մինչեւ համայնքների ինտենսիւ ճուլումը եւ կազմալուծումը:

Գործնականում հայկական համայնքի սոցիալ-տնտեսական սկզբնաւորման եւ կազմաւորման նոր դարաշրջանի սկիզբը էապէս չի տարբերուում միջին դարից, եւ կարծում եմ, որ հայ-իտալական յարաբերութիւնների նոր փուլը բացւում է յանձին Մխիթարի եւ իր հետեւորդների գործունէութեան:

Առաջադրուած ճշտորոշումը թելադրուած է հետեւեալ միաձոյլ եւ համակենտրոն պատճառաբանութեամբ:

Ա. - Նախ XII դարից սկսեալ երեւան են դալիս բաւական հաստատուն համայնքների մասին առաջին վկայութիւնները: Գործնականում, հայերի կողմից կառուցւում կամ օգտագործւում են եկեղեցիներ: Բացի հոգեւոր կենտրոններից շատ են նաեւ երկրորդ ժամանակաշրջանին վերաբերող փաստաթղթերն ու պատմական վկայութիւնները:

Բ. - Առաջին ժամանակաշրջանում Բիւզանդիան այն կապող կամուրջն է, որով ընդհանրապէս կատարուած է հայերի հոսքը Իտալիա: Մինչդեռ նախ Կիլիկիոյ իշխանութեան (1080 թ.) եւ ասպ թագաւորութեան (1199 թ.) հիմնադրմամբ եւ Բիւզանդիայի դերի հետզհետէ թուլացմամբ, աւելի ուղղակի կապ է ստեղծւում հայերի եւ Արեւմուտքի միջեւ ընդհանրապէս: Բացի այդ, խաչակիրների երեւան գալով սկսուեց փոխադարձ յարաբերութիւնների մի շրջան:

<sup>1</sup> Արրահաման Ա. Գ., Համառոտ ուրուագիծ հայ գաղթավայրերի պատմութեան, հ. 1, Երեւան, 1964, էջ 271:

Գ. - Սկզբնական շրջանում բիւզանդական պետութեան մէջ ծառայող պաշտօնեաները եւ միաբանական խմբերը իտալիայում հայերի ներկայութեան գերիշխող տարրն էին: Յետագայ ժամանակաշրջանում այն կենտրոնացուած է առաւել աշխարհիկ կորիզների շուրջ, որոնց մէջ ցայտուն դեր ունի առեւտրական խաւը:

Սոյն յօդուածի սահմանները թոյլ չեն տալիս իտալիոյ տարբեր մասերում առանձին եւ չափազանց բազմաթիւ հայկական համայնքների մանրամասն ուսումնասիրութիւնը, հետեւաբար պիտի կանգնենք առաւել կարեւոր իրադարձութիւնների վրայ, ընտրելով մանաւանդ նրանք, որոնք վերաբերում են, թէկուզ հպանցիկ, հայկական կամ միջազգային, աշխարհական կամ հոգեւոր (եկեղեցական) պատմութեանը: Իսկ առաւել հին շրջանին անդրադառնալիս հնարաւորինս պիտի ջանանք ընդգծել աւելի հանգամանալից մի պատկեր, քանի որ նոյնիսկ ամենափոքր մանրամասներն անգամ կարող են թէկուզ աղօտ լոյս սփռել առաւելապէս մութ այս ժամանակահատուածի վրայ:

Իտալիայում հայերի ներկայութեանն առնչուող հարցերի մասին եւ հայ-իտալական երկկողմանի յարաբերութիւնների մասին, աւաղ, հնարաւոր չի լինի բացայայտել, առկայ տուեալներով, ծանրակշիռ նորութիւններ: Մենք պիտի փորձենք ինչպէս մի հին խճանկարի բեկորներ հաւաքել ու դասակարգել պատմական տուեալները, որոնք ցրուած են տարբեր աշխատութիւններում, յաճախ կողմնակի, կամ նոյնիսկ առանց բաւարար քննական հիմքերի: Կարծում եմ որ պիտի ստացուի բաւական հանգամանալից մի համադրութիւն, որ կարող է համալրուել յետագայ հետազօտութիւնների եւ ուսումնասիրութիւնների միջոցով:

Աւելորդ չենք համարում հասկնալ մի ակնարկ զգել միջնադարի իտալական հասարակութեան կազմաւորման եւ զարգացման վրայ:

**Քաղաքական եւ մշակութային պայմանները միջնադարեան իտալիայում**

Միջնադարում իտալական թերակղզին մտնում է պատմական մի նոր դարաշրջան, երբ սկսում են կազմաւորուել ազգային, սոցիալական, լեզուագիտական եւ մշակութային դիւսաւոր եզրոյթները տարբեր պետական միաւորներում՝ միջնադարի իտալական հասարակութեան ֆոնի վրայ, որոնք էլ նրան տարբերակում են շրջակայ ժողովուրդներից:

Բիւզանդացիները, քշելով գոթերին, IV դարում գրաւում են Իտալիայի մեծ մասը: Հիւսիսում՝ Ռաւեննան, Պենտապոլիսի Հոդերը (Ռիմինի, Պեպարոյ, Տանոյ, Սենիգալլիա, Անկոնա), Լիգուրեան ծովափը, հարաւում՝ Ապուլիան, Կալաբրիան, Կամպանիան եւ բիւզանդական նահանգ դարձած Սիկիլիան: Բիւզանդական շրջանագծի մէջ են մտնում նաեւ երեք Վենետիկները, Պերուջայի եւ Հոմի դքսութիւնները: 751 թ. լոմբարդներն արդէն տիրում էին ընդարձակ տարածքների թե՛ հիւսիսից եւ թե՛ հարաւից: Բիւզանդացիներից խլում են Ռաւեննան եւ շրջակայ Հոդերը՝ շուտով փրանկներին գիջելու հեռանկարով: 756 թ. վերջիններս այստեղ հաստատում են Պապի դերիշխանութիւնը: 888 թ. փրանկների կայսրութեան կազմալուծման հետեւանքով կարճ ժամանակով հաստատում է Իտալական անկախ թագաւորութիւնը: Մինչդեռ IX դարում Սիկիլիան եւս դուրս գալով Բիւզանդական կայսրութիւնից անցնում է արաբների տիրապետութեան տակ, ուր կը մնայ շուրջ երկու դար: 962 թ. Սաքսոնիայի Օթոն I արքան, իր թագին միացնելով նաեւ Իտալիան, հիմնում է Հռոմէական Գերմանական (Ռոմանա-գերմանական) Սրբազան Կայսրութիւնը:

Քաղաքական այս իրադարձութիւններին զուգահեռ ամրապնդւում են Ֆէոդալական յարաբերութիւնները: Հռոմէական ծաղկուն քաղաքների պետական կարգուսարքը, ինչպէս նաեւ դասական մշակոյթի բեղուն ժամանակաշրջանը անցեալի յուշ է միայն: Մտաւորական եւ գրական ասպարէզում վերջին հռոմէացիներից՝ Բոետիոսից եւ Գրիգոր Մեծից յետոյ, մի մեծ լուսթիւն է տիրում: Իր հերթին ռամիկ լեզուն, լինելով դեռ սաղմի մէջ՝ շատ հեռու է գրական արտայայտութեան գործիք լինելուց:

Մինչդեռ աւելի լուսաւոր վիճակում էին արուեստները:

VI եւ VII դարերում Ռաւեննան դառնում է ճարտարապետութեան եւ մուսաների արուեստի ծաղկուն կենտրոն՝ բիւզանդական գերակշռող ազդեցութեամբ: Արուեստի կենսունակութեան նշաններ են երեւում նաեւ թերակղզու միւս մասերում, յատկապէս Հոմոում եւ հարաւում, ուր բիւզանդական եւ ընդհանրապէ՛ս արեւելեան աշխարհի հետ շփումը առաւել սերտ ու տեւեհան է: Արեւելքում, պատկերամարտութեան տարածման հետեւանքով, բազմաթիւ բիւզանդացի արուեստագէտներ ասպաստան Իձ գտնում Իտալիայում:

Գաղթականութեան այս շարժումը նպաստում է բիւզանդական ազդեցութեան տակ գտնուող նոր կենտրոնների կազմաւորմանը<sup>1</sup>։

Սակայն Հիւսիսային շրջանները եւս, որոնք բիւզանդական ազդեցութիւնից զերծ էին, արուեստի որոշակի զարթօնք էին ապրում։ Իրականում, նուաճող ժողովուրդները, զուրկ լինելով զրական եւ մտաւոր պաշարից, այնուամենայնիւ ունէին մանր արուեստների բաւական մեծ ժառանգութիւն։ Սա նրանց թափառական ապրելակերպի արդիւնքն էր։ Որպէս «բարբարոսական արուեստ» յայտնի այս ձեռնարուեստների ու արեւելեան տարբեր աւանդոյթների միջեւ (իրանական, յունական, սկիւթական, կովկասեան) մեծ նմանութիւններ կային։ Այս ժողովուրդները, Հաստատուելով Իտալիայում եւ Եւրոպայի այլ շրջաններում, սկսել են մշակել նաեւ ճարտարապետութիւնը, քանդակագործութիւնն ու նկարչութիւնը։ Եւ սա, անկասկած, մասամբ նաեւ իրենց նոր նստակեաց կեանքի եւ մասամբ տեղական աւանդոյթների ներմուծման շնորհիւ։ Սակայն նրանք արուեստին՝ յատկապէս ճարտարապետութեանը մի նոր շունչ բերեցին՝ սկսելով մշակել յաջորդ դարերի ռոմանական արուեստի աւանդոյթները։

Մօտաւորապէս Հազար թուականից սկսեալ, իտալական Հաստատութիւնը կազմաւորման եւ ինքնարոտման ժամանակաշրջանից անցում է առաջադիմութեան եւ վերելքի շրջան։ Տարբեր գործօններ մշակալով զարկ են տալիս այս զարգացմանը։ Նշենք դրանցից գլխաւորները.

Ա. - Նադարել եւ ժողովուրդների մասսայական գաղթերը։ Թեւրակղզու բնակիչները թէ՛ օթոնեան եւ թէ՛ նոր տարրերով արդէն Հաստատուել են իրենց սեփական հողերի վրայ եւ գործնականում ունեն մի ընդհանուր ազգային դիմագիծ։

Բ. - Ֆէոդալական Համակարգի թուլացումով երեւան է գալիս մի նոր Հաստատութիւն՝ քաղաքային Համայնքները։ Սրանք, մեծ զարկ տալով արհեստներին ու առեւտրին, միաժամանակ նպաստում են իրար մրցակից մշակութային կենտրոնների կազմաւորմանը։ Այս

<sup>1</sup> Brehier L., Les colonies d'orientaux en Occident au commencement du moyen-âge. V-VIII ss., in BZ, XII (1903), pp. 1-39.

<sup>2</sup> Venturi, Storia dell'arte Italiana, vol. II, Milano, 1902, cap. I-II, pp. 1-351; Histoire de l'art depuis les premiers temps chrétiens jusqu'à nos jours, publ. sous la dir. de A. Michel, t. I, Des débuts de l'Art chrétien à la fin de la période romane, Paris, 1905, pp. 97-125, 303-427.

ժամանակաշրջանում է, որ Իտալիայում, ինչպէս նաեւ Եւրոպայի միւս երկրներում, հիմնւում են մեծ համալսարաններ: Այս ժամանակաշրջանին ենք պարտական նաեւ աշխարհական կարեւոր կորիզների (կենտրոնների) եւ ծովային հզօր հանրապետութիւնների կազմաւորումը, որոնք Միջերկրականը կրկին վերածում են իտալական ծովի եւ բռնում Արեւելքի հետ առեւտրի ճամփան: Համարեա բոլոր քաղաքային այս կենտրոնները եղել են նաեւ մշակոյթի եւ արուեստի մեծ օջախներ:

Գ. - Արաբական մշակոյթի տարածումը, որ ճառագում էր Իսպանիայի եւ Սիկիլիայի զոյգ կենտրոններից, նոր հորիզոններ էր բացում եւրոպական մտքի առջեւ: Արաբները ոչ միայն իւրօրինակ կամուրջ էին Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ, այլեւ իրենց միջոցով Եւրոպան սկսում է ճանաչել իր իսկ անցեալը, մանաւանդ յունական մշակոյթի հոգեզմայլ ստեղծագործութիւնները:

Դ. - Կարեւոր դործօս եղան նաեւ խաչակիրները՝ ցնցելով ամբողջ Եւրոպան: Նրանք միայն մասամբ կարող են դիտուել որպէս կրօնական երեւոյթ: Աւելին, նրանք յեղաշրջեցին XII եւ XIII դարերի եւրոպական հասարակութիւնը տնտեսական, սոցիալական, մշակութային եւ քաղաքական մեծ ծաւալներով: Խաչակիրների կողմից ստեղծուած այս նոր մթնոլորտում է իրականանում նաեւ Մարկոյ Պոլոյի ուղեւորութիւնը, որը ճանաչում է թէ՛ Փոքր եւ թէ՛ Մեծ Հայքը<sup>1</sup>:

Վերջապէս, հին մշակոյթի հզօր ազդեցութիւնը՝ միախառնուած կենսունակութեամբ լի երիտասարդ մի ժողովրդի կօրովին, պոսթ-կում է իտալական միջավայրին յատուկ հանճարի ժայթքումով:

Այս տարրերի ազդեցութեան տակ է, որ հինգ դարից աւելի տեւող անհանգստութիւններն ու փորձերը հասան այն պայծառ ազդիւնքին, որ իտալական միջնադարեան քաղաքակրթութիւն անսնն է կրում: Այժմ ամփոփ ձեւով քննենք նրա գլխաւոր արտայայտութիւնները կրօնական եւ մշակութային ասպարէզներում

### ա - Կրօնական արտայայտութիւններ

Եթէ զանց աւնուեն կրօնականութեան ժողովրդական արտայայտութեան ձեւերը եւ միջնադարեան նախապաշարմունքները, XI

<sup>1</sup> Le livre de Marco Polo, rédigé en français sous sa dictée en 1298 par Rusticien de Pise, publié par M. G. Pauthier, I, Paris 1865, pp. VI-XXVIII. (Introduction), 18, 33-35, 37-39.

եւ XIII դարերում Իտալիայի կրօնական կեանքում յատկապէս երկու հոռանքներ են ուշադրութիւն գրաւում. ա) Կաթարների կամ Ալբի-գեանների շարժումը, բ) Մուրացիկների եւ Քարոզիչների Կարգերը:

XII դարում ամբողջ Եւրոպայում տարածւում է Բալկաններից եկած մի շարժում, ծանօթ Կաթար կամ Ալբիգեան անուններով: Այն մի կողմից վերանորոգում է Հին մանիքէականութիւնը փիլիսոփայական եւ էթիկական տեսակէտից, միւս կողմից, ժխտում է Եկեղեցու Հեղինակութիւնը, նուիրապետական կարգը, նրա խորհուրդները և սրբութիւնները: Ուստի այս աղանդը որոշ տեսակէտներից նախորդում է այն գաղափարներին, որ պիտի արտայայտուեն աւելի ուշ Վիգլիֆի, Հուսի եւ Լուտերի կողմից: Իտալիայում կաթարական հոսանքի ուժը կենտրոնանում է մանաւանդ Հիւսիսային եւ կենտրոնական գօտիներում: Բայց մեզ յատկապէս հետաքրքրողը շարժման տարածումն է դէպի արեւմուտք, որը գալիս է Բալկաններից: Այս երկրներում եւ յատկապէս Բուլղարիայում պրոպագանդողները եզան այսպէս կոչուած Բակոմիլների (Բողոմիլների) աղանդը: Սրանք, իրենց Հերթին ծագում էին Պաւլիկեան Հայերից, որոնք Հայաստանում երեւացին VII դարում եւ քաղաքական ու հոգեւոր իշխանութիւնից խիստ հալածանքի ենթարկուեցին: Հալածանքները նրանց ցրեցին Բիւզանդական կայսրութեան տարբեր քաղաքները: Այսպէս, չնայած պետութեան կողմից ձեռք առնուած խիստ միջոցներին, նրանց յաջողուեց իրենց ազդեցութիւնը տարածել մանաւանդ բալկանեան շրջաններում: Հարկ է նշել Բիւզանդիայում և Եւրոպայում սփռուած Հայերի դերակատարութիւնն այս գործում, մասամբ օգտուելով նաեւ Պաւլիկեանների նկատմամբ համեմատաբար Հանդուրժողականութիւն ցուցաբերող բիւզանդական որոշ կայսրերի յատկապէս պատիւաւարտ Կոստանդին Կոպրոնիմոսի (741—775) եւ Հայածին Յովհաննէս Չմշկիկի (969—976), ինչպէս նաեւ բիւզանդական բանակի շարքերում շառայող, մանաւանդ կայսրութեան սլաւոնական սահմանները պաշտպանող Պաւլիկեան Հայ զինուորների զօրակցութիւնից: Կենտրոնակաւ եւ Հարաւային Եւրոպայում Պաւլիկեանների տարածման համար ահեղագորաւոր միջոցներից մէկն էլ առեւտուրն էր: Ըստ յոյն պատմաբան Պապարիզոպուլոսի. «Թրակիոյ

<sup>1</sup> Garsoian N. G., The Paulician Heresy. The Hague - Paris, 1967. Ter-Mkrtschian K., Die Paulikianer im bysantinischen kaisereich und verwandte ketzereische Erscheinungen in Armenien, Leipzig, 1893.

<sup>2</sup> Charanis P., The Armenians in the Byzantine Empire, Lisboa, 1963, pp. 12 ss., 28 s.

պաւլիկեանները. առեւտրական եւ զինուորական յարաբերութիւններ ունեցան մինչեւ իսկ Հունգարիայի, Իտալիայի, Հարաւային Ճրանսիայի եւ ուրիշ երկրների հետ»<sup>1</sup>:

### Պաւլիկեանները XII դարի Եւրոպայում

Բողոմիլեան ազանդի գաղափարների տարածման կարեւոր պատճառներից մէկը անկասկած պէտք է փնտրել դարաշրջանի սոցիալական պայմանների եւ ամէնից առաջ ֆէոդալական համակարգի արդիւնքում ստեղծուած անհաւասարակշռութեան մէջ: Այս գործոնների ազդեցութիւնն անշո՛ւշտ մուրացող հոգևոր Կարգերի երեւան գալն էր: Սրանք Հանդէս են գալիս որպէս աննկուն պայքարողներ, վերադառնալու համար աւետարանական ոգու աղքատութեան, արգարութեան, պարզութեան: Նրանք, մանաւանդ Դոմինիկեանները, կարեւոր տեղ են յատկացնում ուսմանը եւ ամենաանուանի ուսուցիչներով են ապահովում միջնադարի ֆակուլտետները: Փրանկիսկեաններն, իրենց հերթին, զգալի ազդեցութիւն են ունենում նորաբողոք իտալական արուեստի եւ գրականութեան վրայ: 1300-ականներից սկսած այս միաբանութիւնները իրենց գործունէութիւնը պիտի տարածեն նաեւ հայերի մէջ, թէ՛ Փոքր եւ թէ՛ Մեծ Հայքում, յաճախ դրական, երբեմն ցաւալիօրէն ժխտական արդիւնքներով, որոնց պիտի անդրադառնանք յետագայում:

### բ - Մշակութային արտայայտութիւններ

Երբ կրօնական մարզից անցում է կատարւում մշակութային ասպարէզ, նկատւում է, որ իտալերէնով գրուած առաջին յիշարժան գրական գործերը երեւան են գալիս 1200-ական թթ.: Սակայն հազիւ ծնունդ առած իտալական գրականութիւնը յաջորդ դարում մի այնպիսի զլխապտոյտ վերելք է ապրում, որ դեռ անծանօթ պիտի մնայ Եւրոպայի այլ երկրներին:

Գեղարուեստի ասպարէզում առաջին փորձերը նոյնպէս պատկանում են 1200-ին, որոնք պիտի տանէին ոգով եւ գծերով իւրայատուկ իտալական կերպարուեստի երեւան գալուն: Իսկ մինչդեռ ինքնատիպ դրոշմով այս իտալական արուեստն իր զարգացման ճանապարհն էր յաղթահարում, XI—XV դդ. թէ՛ Իտալիան եւ թէ՛ Եւրոպայի

<sup>1</sup> Paparigopoulos K., Storia della nazione ellenica (in greco), 8 ed., 1930—1932, Atene, p. 394.

միւս երկրներն ընկնում են արուեստի երկու մեծ հոսանքների՝ ռոմանական եւ գոթական ազդեցութեան տակ՝ յատկապէս ճարտարապետութեան ասպարէզում:

Վերածնունդին նախորդող, միջնադարեան արուեստի այս կրկնակ ոճի մէջ, մեզ առաւել հետաքրքրող երեւոյթներից մէկն այն է, որ արուեստի պատմութեան առաջնակարգ հեղինակութիւնները նրանց մէջ նկատել են ցայտուն նմանութիւններ հայկական արուեստի հետ, յատկապէս զարդաքանդակների, նկարների և մանրանկարների մշակման եւ ճարտարապետական ձեւերի մէջ: Սակայն կարծիքները բաժանուում են, երբ հարկ է լինում այդ նմանութիւնները վերլուծել: Ստրժիգովսկին առանց վարանելու այդ նմանութիւնը ներշնչման գլխաւոր աղբիւր է համարում միջնադարի ամբողջ քրիստոնէական արուեստի համար<sup>1</sup>: Դժուար պիտի լինէր այսօր բուրոյժին առանց վերապահումների մօտենալ մեծ հետազօտողի այս կարծիքին: Իրոք, արուեստի մէջ նմանութիւնների եւ փոխադարձ ազդեցութիւնների հարցը նոր ծաւալ ստացաւ: Հիմնականում այդ հարցը փոխադարձ մշակութային ազդեցութիւնների ու կապերի ընդհանուր հարցի սոսկ մէկ մասնակի կողմն է:

Անշուշտ, ազդեցութիւնների մասին խօսելուց առաջ, հարկ է ստուգել նմանութիւնների առկայութիւնը, նրանց ծաւալն ու կարեւորութիւնը: Այս աշխատանքը պահանջում է մասնադէտի հմտութիւն խնդրոյ առարկայ մշակութային երեւոյթի ասպարէզում, քանի որ յիշեալ քննութիւնը հնարաւոր է միայն տեխնիկական հիմքի վրայ: Սրանից յետոյ ազդեցութիւնների հարցի լուծումն իր հերթին պահանջում է տուեալների մանրակրկիտ ուսումնասիրութիւն: Իրոք, նմանութիւնները կարող են լինել ուղղակի, անուղղակի ազդեցութիւնների եւ կամ զուգահեռ եւ անկախ յեղաշրջումների արդիւնք, հնարաւոր է նաեւ ընդհանուր աղբիւրից նրանց ծագումը: Հետեւաբար անհրաժեշտ է ուսումնասիրել, թէ հաղորդակցութեան եւ շփման ինչպիսի՞ հնարաւորութիւններ են եղել հասարակութիւնների միջեւ, երբեմն հնարաւորինս իջնելով մինչեւ անձնական շփումների մակարդակը՝ այդ նոյն համայնքների անձերի կամ խմբերի միջեւ, որոնք սկիզբ են տուել նմանօրինակ մշակութային երեւոյթների:

<sup>1</sup> Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918, vol. II, pp. 711-714.

## 1. Իտալիայի Հայկական գաղթօջախները

### 1. Առաջին ժամանակաշրջան. VI—XI դարեր

Միջնադարեան Իտալիայում հայերի առկայութեան առաջին շօշափելի հետքերը հանդիպում են Ռաւեննայի բիւզանդական եքսարքութեան, որ է փոխարքայութեան մէջ: Փոխարքաներից մի քանիսը հայ էին, ինչպէս հանրայայտ Ներսէս Պատրիկ Ներքինին (542—568) եւ Իսահակը (625): Ռաւեննայի Սան Վիտալէ եկեղեցում է գտնուում վերջինիս փառահեղ յուշարձանը՝ իր հայութիւնը հաստատող քանդակներով եւ արձանագրութիւններով: Գրուած է բացայայտօրէն՝ «Նա Հայաստանի փառքն էր, զի հայ էր»: Նոյն եկեղեցում գտնուող մի խճանկարում Թէոդորա կայսրուհու աջ կողմում երեւում է Ներսէսը: Բացի այդ՝ Ռաւեննա քաղաքի պաշտպանութեան համար նախատեսուած դօրքը մեծաւ մասամբ բաղկացած էր հայերից, որտեղից էլ նրա «հայկական գօրք» կամ «նումերուս արմենիորում» անուանումը: Նոյն պատճառով, քաղաքի ափամերձ գօտում գտնուող Կլասիս թաղամասը, ուր բնակուած էին զինուորները, կոչւում էր «Արմենիա»<sup>1</sup>: Ռաւեննայի այս կորիզը արդարացիօրէն համարուում է Իտալիայի առաջին հայկական գաղթօջախը: Պէտք է սակայն մոռանալ, որ այդ հայերը միեւնոյն ժամանակ Բիւզանդիայի քաղաքացիներ էին, այսինքն՝ բիւզանդահայեր:

Ռաւեննայի գաղթօջախի ժամանակակիցն է Զաքարիա անունով մի եկեղեցական, որը յետագայում դարձաւ Մելիտինէի (Մալաթիա) եպիսկոպոսը Փոքր Հայքում: Թէպէտ յատուկ տեղեկութիւններ չունենք նրա մասին, սակայն նրան է պատկանում Հռոմի եկեղեցիների եւ քրիստոնէական յուշարձանների մասին առաջին պատմական վաւերաթղթերից մէկը: Նոյն ժամանակաշրջանի Իտալիայում յիշուում են հայ զորավետների այլ անուններ եւս. Ներսէս՝ վերոյիշեալից տարբեր՝ Արաղի (Աճառեանի Անձնանունների բառարան)<sup>1</sup> մէջ չյիշուած այս անունը յիշուած է միայն օտար աղբիւրների մէջ, յունական Արատիոս կամ Արատէս ձեւերով) եւ Իսահակի եղբւրջը, որ վախճանուեց 542 թուին Գարտա լճի հիւսիսակողմի Ասղունէի դաշտում պարսիկ Նաբեղի դէմ մղուած պատերազմի ընթացքին:

<sup>1</sup> Ալիշան Հ. Ղ., Հայ-Վենետ, Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջ 6-7: Hartman I.. M., Geschichte Italiens im Mittelalter, vol. II, Gota, 1900, p. 127.

Նա Հայկական մի ողջ գումարտակով օգնութեան էր եկել Բելլիսարին, Ռիմինիի եւ Միլանի պաշարման եւ Տոսկանայի ու Վենետոյի նուաճման ժամանակ: Նրա եղբայրներ Արազը եւ Իսահակը նոյնպէս մասնակցեցին Իտալիայի պատերազմներին: Արտաւազըն ու Արտաբանը իր ազգակից զինակիցների ղեկավարը՝ նոյնպէս յայտնի է իր սխրանքներով Գոթերի տիրապետութիւնից Վերոնայի ու Ֆայենցայի ազատագրման ընթացքում: Յովհաննէս Արշակունու որդի Արտաբանը կայսրութեան բարձրաստիճան սպայ էր եւ տարբեր առաքելութիւններ է կատարել Ափրիկէում, Թրակիայում եւ ի վերջոյ նշանակուել է Սիկիլիայի կառավարիչ: Անզալաս կամ Անզելաս՝ Ներսէս Ներքինիի թիկնապաշտ, մենամարտի ժամանակ յաղթել է գոթ Կոկասին: Յիշատակելի են նաեւ եօթ անանուն Հայեր, որոնք կարեւոր դեր ունեցան Անկոնայի գրաւման ժամանակ: Պրոկոպիոսը յիշում է նաեւ Հայկական դումարտակներ, որոնք օտարազգի հրամանատարներ ունէին, ինչպէս վրացի Փազասը: Պրոկոպիոսի յիշատակած Իտալիայում գործող Հայ սպաների մէջ կային այնպիսիք, օրինակ ոմն Գիլակիոսը (Գլակ), որը միայն Հայերէն էր խօսում: Մա կարող էր պատահել շատ հասարակ զինուորների ղէպքում միայն<sup>1</sup>:

Ռաւեննայի բաժանումը Արեւելեան Կայսրութիւնից տեղի ունեցաւ VIII դարի կէսերին: Սակայն դեռ առկայ են Իտալիայի եւ Բիւզանդիայի միջեւ կապերը: Մի կողմ թողնելով հարաւը, ուր դեռ շարունակուում է Բիւզանդիայի ներկայութիւնը, հիւսիսում յարաբերութիւնների նժարը թեքուում է դէպի Վենետիկ, որն արդէն գտնուելով Ռաւեննայի ազդեցութեան ոլորտում, կապեր ունէր Արեւելքի հետ: VIII դարից յետոյ այդ կապերը նոյնիսկ ընդլայնուում են թե՛ առեւտրական եւ թե՛ մշակութային ասպարէզներում: Այդ տարիներին Վենետիկը առեւտրի եւ մշակոյթի կամուրջ է հանդիսանում Արեւելքի կայսրութեան ու Արաբական աշխարհի եւ Արեւմուտքի միջեւ<sup>2</sup>:

Արդ՝ եթէ Արեւմուտքից մի հայեացք ձգենք Արեւելքի, աւելի ճիշտ Բիւզանդիոնի վրայ կը տեսնենք, որ Բիւզանդիայի դահի վրայ նստած կայսրերից շատերը եւ նրանցից առաւել քաջերը, աւելին, նոյնիսկ ամբողջ տոհմեր՝ ինչպէս Հերակլեաններն ու Մակեդոնեանները հայկական ծագում ունեն: Հայկական ծագում ունէին նաեւ կայսրուհիներ, իշխանութեան ձգտող բանակի եւ ազնուականու-

<sup>1</sup> Procopius, vol. II, De bello Gothico, II, 13, p. 199 et alias, III, 26, pp 390 ss..

<sup>2</sup> Kretschmayr H., Geschichte von Venedig, vol. I, Gotha, 1905, pp. 29 ss..

թեան զգալի մասը: Հայր Կարապետ Տէր Սահակեանը արգարացիօրէն նկատում է. «Հայ էր բանակի մի մասը, հայ էին զօրավարներ, որ առաջնորդում էին նրան, հասարակութեան բոլոր խաւերում կային իշխանութեան ծարաւ մի քանի հայեր»<sup>1</sup>: Գաղափար կազմելու համար Բիւզանդիայում հայկական գաղթօջախի կարեւորութեան մասին, բաւական է մտաբերել աւանդութիւնը, ըստ որի VIII եւ IX դարերում Գրիգոր Լուսաւորչի մասունքների մի մասը տեղափոխուեց Բիւզանդիոն<sup>2</sup>: Սակայն հայկական տարրի առկայութիւնը սահմանափակուած էջը կայսրութեան մայրաքաղաքով, հայերը ցրուած էին ամէնուր, մանաւանդ Բալկանեան երկրներում, ինչպէս արդէն նշել ենք Պաւլիկեան շարժման տարածման առիթով:

Պէտք է նաեւ ուրեմն զարմանալ, թէպէտ հայերի համար չափազանց համակրական շեշտով, նշանաւոր բիւզանդագէտ Հանրի Ֆոսիյոնի խօսքերի վրայ. «Խոնչ ստացաւ Հայաստանը Բիւզանդիոնից, ընդհակառակը, մի՞թէ նրան չի տուել գէթ մի կայսերական տոհմ՝ յանձին Բարսեղ I-ի: Ուրիշ հայ կայսրեր եւս գրաւեցին Բիւզանդիոնի գահը. Թոմանոս Լեկապենոս, Նիկեփոր Փոկաս, Յովհաննէս Չմշկիկ: Հայկական մշակոյթը տարածուեց ամբողջ կայսրութիւնում նկարիչների, ճարտարապետների, նոյնիսկ օրէնսդիրների միջոցով»<sup>3</sup>: Իր կողմից, յոյն հետազօտող Խարանիսը հաստատում է. «Համարեա հինգ դար հայերը կարեւոր դեր խաղացին Բիւզանդական Կայսրութեան քաղաքական, ռազմական եւ վարչական կեանքում ... Այս ժամանակաշրջանում՝ VII–VIII դարերում, երբ կայսրութիւնը պայքարում էր իր սեփական գոյութեան համար, նրանք շատ օժանդակեցին նրա թշնամիներին դիմագրաւելու համար: Բայց նրանց (հայերի) դերը յատկապէս ակնառու եղաւ IX եւ X դարերում, երբ որպէս զինուորներ, սպաներ, վարչական դործիչներ եւ կայսրեր գերիշխեցին սոցիալական, զինուորական եւ քաղաքական կեանքում մի կայսրութեան՝ որ իր հզօրութիւնը պարտաւոր էր մեծ չափով նրանց (հայերին): Իրօք, այնքան մեծ էր նրանց դերը այս ժամանակաշրջանում, որ Բիւզանդական Կայսրութեան այս երկու դարերը, կարելի էր նշել

<sup>1</sup> Տէր Սահակեան Հ. Ա., Հայ կայսրեր Բիւզանդիոնի, հ. I, Վենետիկ, 1905, էջ 9:

<sup>2</sup> Ananian P., Gregorio illuminatore, in "BS", vol. VII, Roma, 1966, col. 184–185; Բալգի Ա., Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս, Վիեննա, 1878, էջ 330–331: Քոչեան Հ. Ա., Հայոց եկեղեցին մինչև Փրոբեմստեան ժողովը, Պէյրութ, 1961, էջ 107, 687:

<sup>3</sup> Baltrusaitis J., Etudes sur l'art médiéval, Introduction par H. Focillon, p. IX.

որպէս յունա-հայկական. յունական՝ որովհետեւ ինչպէս միշտ, յունական էր նրա քաղաքակրթութիւնը եւ հայկական՝ որովհետեւ նրանք, ովքեր ղեկավարեցին նրա ճակատագիրը եւ իրենց ուժերի մեծ մասը ներդրեցին նրա պաշտպանութեան համար, մեծ մասամբ հայեր էին կամ հայկական ծագում ունեցող գինուորներ<sup>1</sup>:

Այս նկատառումները մեզ տանում են հետեւեալ եզրակացութեան. մի կողմից Արեւելքի կայսրութեան ներքին սոցիալական եւ մշակութային վիճակը, միւս կողմից նրա յարաբերութիւնները Արեւմուտքի հետ, մասնաւանդ Վինետիկի երիտասարդ հանրապետութեան հետ, շատ հաւանական են դարձնում, որ նաեւ այս ժամանակաշրջանում, հայ տարրի շփումը Արեւմուտքի հետ, շարունակուած լինի, աւելին՝ ընդլայնուած: Իսլանման յաջողութիւնները, ինչպէս նաեւ հայերի բնական հակումը առեւտրի նկատմամբ, գաղթի արկածախնդրական ոգին, բոլոր այս գործոնները, որ թելադրում էին երկրի աշխարհագրական դիրքից, թւում են հաւատք աւելացնել այս ենթադրութեանը<sup>2</sup>: Այստեղ արժէ յիշել, որ կենտրոնական Ֆրանսիայում՝ Օթէօնի գրադարանում գտնուող IX կամ X դարի լատիներէն մի ձեռագրի վերջում, գտնուում է հայ-լատիներէն մի փոքրիկ բառարան, նախ հրատարակուած Հանրի Օմոնի եւ ապա առանձին հրատարակութեամբ Կարրիերի կողմից 1886-ին<sup>3</sup>: Չնայած թերի կողմերին, այս բառարանը շատ խորհրդանշական փաստ է, որ հաստատում է այդ ժամանակաշրջանում հայերի ներկայութիւնը Ֆրանսիայում: Ֆրանսիայում հայերի առկայութեան մասին այլ փաստեր էլ կան՝ շատ անգամ առասպելական հնչեղութիւն ունեցող: Այս վկայութիւնները յուշում են, որ հայերը մտած պէտք է լինեն նաեւ Իտալիայ, յատկապէս նրա հիւսիսային շրջանները, քանի որ Իտալիան, մասնաւանդ Պոյի հովիտը Արեւելքից դէպի Ֆրանսիայ տանող ճանապարհի վրայ էր գտնուում: Աւելին, վկայութիւններ կան այն մասին, որ հայկական ներկայութիւնը տարածուած է եղել մինչեւ Արեւմուտքի հեռավոր սահմանները՝ մինչեւ Իսպանիայ եւ Իռլանդիայ: Սա ամրապնդում է մեր ենթադրութիւնը:

<sup>1</sup> Charanis P., op. cit., p. 57.

<sup>2</sup> Strzygowski, op. cit., II, pp. 729 ss.: Baltrusaitis J., Le problème de l'ogive, pp. 63 ss.; Ալիշան Հ. Ղ., Միսական, Վեցնտիկ, Ս. Ղազար, 1893, էջ 429:

<sup>3</sup> Omon H., Manuel de conversation arménien-latin du X siècle, in "Bibliothèque de l'École de Chartes", XLIII (1882), pp. 563-564; Carriere A., Un ancien glossaire latin-arménien, Paris, 1886.

երբ Պոյի դաշտավայրից իջնում ենք դէպի թերակղզու կենտրոնական եւ հարաւային շրջանները, հարկ է խօսել հետքերի եւ աւելի յաճախ բացայայտ վկայութիւնների մասին: Բաւական հին մի աւանդութեան համաձայն՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի երկու մասունքներ են պահպանուած Խտալիայում: Նարդոյում՝ մի թեւի ոսկորները եւ Նէպպոլում՝ գանգը, որն այստեղ է փոխադրուել XV դարում Նարդոյից՝ Արագոնի Ֆերդինանդ II-ի օրոք: Նաեւ Բարոնիոյի կողմից կրկնուած տեղական աւանդութիւնը հաստատում է, որ Սրբի մասունքները Խտալիայ են տեղափոխուել Արեւելքից փախած հայ կրօնաւորուհիների եւ հաւատացեալների ձեռքով<sup>1</sup>:

Ըստ Բարոնիոյի, այս իրադարձութիւնները տեղի ունեցած պիտի լինեն պատկերամարտ կայսր Կոստանդին Կոպրոնիմոսի ժամանակաշրջանում (741–775 թթ.): Յայտնի մտաւորական Ակինեանը, համարելով այս աւանդութիւնը հիմքից ու լրջութիւնից զուրկ, հաւանական է համարում սակայն հայկական ստուար մի գաղթօջախի գոյութիւնը Նէպպոլում, քանի որ այդ քաղաքում IX դ. առաջին կէսից մնացած մի օրացոյցում, որ յայտնաբերուել էր Սան Զովաննի Մաջորէ եկեղեցու վերանորոգման ժամանակ, նշուած են Ս. Գրիգոր Լուսաւորչի եւ նահատակուած երկու կոյսերի՝ Հոփսիմէի եւ Գայիանէի տօները: Նոյն հեղինակը, յիշեցնելով այն եղելութիւնը, որ երբ Կոստանդ II կայսրը սպանուեց Սիրակուզայում 668-ին, այնտեղ գտնուող զինուորները հակակայսր հռչակեցին հայ Մծեօին (Միգեգիուս): Դրանից հեղինակը ենթադրում է, որ զինուորների մէջ հայկական տարրի մի որոշիչ կշիռ պէտք է լինէր, որի շնորհիւ կզգում եւ մերձակայ վայրերում կարող էր հաստատուել նաեւ մի մնայուն կորիզ<sup>2</sup>: Իրոք, ինչպէս արդէն տեսանք, VI դարից ի վեր, բիւզանդական բանակում ծառայող հայ զինուորները մեծ թուով գալիս էին Խտալիա եւ հիւսիսային Ափրիկէ:

Սիկիլիայի լեգէոններից երկու հիւպատոսների եւ մէկ դատաւորի կնիքները, երեքն էլ հայեր՝ յայտնաբերուել են Մորթմանի կողմից: Սիկիլիայի կառավարիչների մէջ նշանաւոր էր Ալեքսիս Մուշեղը (Մուսելէս) Մամիկոնեան տոհմից, որը Խտալիայ էր եկել 832 թուին եւ կրում էր պատրիկ, սլրոկոնսուլ, մագիստրոս եւ կեսար տիտղոսները: Նա ամուսնացած էր Թէոփիլոս կայսեր (829–842)

<sup>1</sup> Ananian P., art. cit., col. 184–185.

<sup>2</sup> Ակինեան Հ. Ն., Սուրբ Գրիգոր Լուսաւորչի տօները Նեապոլիսի մարմարեայ տօնացոյցի վրայ, «Հասնէս Ամսօրեայ», 1947, սիւնակ 600–614:



դստեր՝ Մարիայի Հետ<sup>1</sup>: 785 թ. Իրինա կայսրուհու դէմ Հայ զինուորներին ապստամբութեան Հետեւանքով Կաստանդին V-ը Հազարաւոր գերիներին ճակատները սեւ տառերով դրոշմել տուեց "Armeniacus insidiator" (խաբեքայ Հայ) բառերը եւ նրանց ցրեց Սիկիլիայում եւ ուրիշ կղզիներում: Արաբների կողմից Բալաթա անուանեալ մի Հայի, 824-ին, յաջողուեց ժամանակաւորապէս զսպել պատրիկ Գրիգորիոս Սիկիլիացուն սպանող ապստամբ Եւփիմիոսին: Ապա իր Հերթին 827 թ. պարտուելով արաբների կողմից, Բալաթան մահացաւ Կալարիայում՝ ուր պատսպարուել էր<sup>2</sup>:

IX դարի վերջերին եւ X դարում Իտալիայում բիւզանդական տիրապետութեան Հաստատումով թերակղզու քաղաքական կեանքում կրկին տեսնում ենք Հայազգի պաշտօնեաներ: Արդէն IX դարի առաջին տասնամեակներում Իտալիայում տեսնում ենք Պօղոս Կեսփերանոսին, որը վենետիկցիներին օգնութեան է զայլա Պիպինոսի դէմ նրանց պաշտպանելու Համար (809 թ.): Նրան կարճ ժամանակով Հնտեւում է Արշակը՝ Նիկեփորոս I-ի դեսպանը Կարլոս Մեծի արքունիքում, որը Հասնում է Վենետիկ՝ Օբելարիոյ Դոմին դատելու Համար<sup>3</sup>:

825 թ. Իտալիա են խուժում Պալլիկեանների լեգէոններ Հայկական ուժեղ զօրամիւտորումներով: Կրետէի պատերազմում, 911 եւ 949 թուականներին, բիւզանդական հեծելազօրի մէջ Հայկական տարրը կազմում է մէկ երրորդը: Նրանք Իտալիայում կուում էին նաեւ Վասիլ I-ի օրոք՝ Նիկեփորոս Փոկասի պապ Նիկեփորոս Երէցի Հրամանատարութեամբ եւ 934 թ. պատրիկ Կոզմասի Հրամանատարութեամբ<sup>4</sup>: Աւելին, Նիկեփորոս Երէցը մեծ բազմութեամբ Հայերի՝ Հաւանաւոր Պալլիկեանների՝ բնակեցրեց Կալարիայում, ինչպէս ենթադրում է Անրի Գրեգուարը<sup>5</sup>: Անհաւանական չէ, որ Հայ լինէր նաեւ Արաբների յայտնուելուց յետոյ գործող բիւզանդական առաջին Հզօր բանակի Հրամանատար Լեւոնը, կոչուած Ապոստիւպպէս

<sup>1</sup> Adoniz N., Les Taronites, in "Byz", X, 1935, p. 535.

<sup>2</sup> Amari, Storia dei Musulmani di Sicilia, vol. I, Catania, 1933, p. 321; Charanis P., op. cit., p. 16.

<sup>3</sup> Ալիշան Հ. Ղ., Հայ-Վենետ, Վենետիկ, 1896, էջ 14:

<sup>4</sup> Charanis P., op. cit., p. 33.

<sup>5</sup> Grégoire H., La carrière du premier Nicéphore Phocas, "Hellenika Paratema", 4, Tessalonica, 1953, p. 251.

կամ Ապոստիւլայոս, որ 881 թ. Իտալիայում ցամաք դուրս դալով գրաւում է Տարանտոն:

Նիկողայոս I Պապի գահակալութեան ժամանակ (858–867 թթ.), որպէս կայսերական պատուիրակ, Հռոմ է գալիս «գերահռչակ» և «մեծափառ թիկնապահ» Արշաւիրը (յուն.՝ Արսաւիր), ամենայն հաւանականութեամբ Հայ՝ դատելով իր անունից: Նկատելի է, որ «թիկնապահ» տիտղոսը ժամանակի ընթացքին դառնում է Կայսրութեան բարձր ազնուականութեան տիտղոս:

Կարելի է թուել այստեղ Բիւզանդական կայսրութեան ծառայութեան մէջ գտնուող բազմաթիւ Հայերից բուրիւն, որոնք պաշտօնով եկել են Իտալիա և հետք թողել թերակղզու պատմութեան բիւզանդական տարեգրութեան մէջ: Որպէս վերջին անուններ յիշենք երկու մեծ Սմբատներին. մին՝ ծանօթ Սիւմբատիկիոս (Սմբատիկ) անունով, Լեւոն VI Իմաստունի թիկնապահը, որ 891 թ. գրաւում է Բիւզանդիոնի օգտին, թէկուզ կարճ ժամանակով, Բենեւենթոյի դքսութիւնը: Միւսը՝ որ մէկ դար յետոյ, 982 թ., Կալաբրիայում ստորագրում է մի կարեւոր փաստաթուղթ, որպէս «Հրամանատարը Մակեդոնիայի, Թրակիայի և Լոմբարդիայի»: Բիւզանդացիները Լոմբարդիա էին կոչում իտալական թերակղզու իրենց ենթակայ բովանդակ տարածքը: Տիտղոսների բազմութիւնը ինքնին վկայում է առաջնակարգ մի անձնաւորութեան մասին:

Հնարաւոր է արդեօք այս խորհրդաւոր անձնաւորութեան հետ նոյնացնել Կաթողիկոս Գրիգոր Վկայասէրին: Սա համարձակ վարկած է, սակայն ճշմարտութիւնից այնքան էլ հեռու չէ: Իրոք, շատ հաւանական է, որ Գրիգորը կապեր ունենար Գրիգոր VII-ի հետ: Աւելին, որոշ հայկական աղբիւրներ, որոնք հաւաստի են իրենց հնութեամբ, ճշգրիտ կերպով հաստատում են, որ նա գնացել է Հռոմ<sup>1</sup>: Սակայն այս աւանդութեան մասին մասնագէտների տարակարծութեան պատճառով հարցը լուծուած չի կարելի համարել: Մենք նախընտրում ենք հաւանական համարել Վկայասէրի ճամփորդութիւնը դէպի Հռոմ, հետեւաբար՝ նրա նոյնութիւնը վերոյիշեալ վաւերաթղթի հոգեւորականի հետ: Այնուամենայնիւ մեզ թւում է, որ այս վաւերաթուղթը եւս մի վարկած է աւելացնում Վկայասէրի ճամբորդութեան վերաբերեալ: Գուցէ վաւերաթղթի հրապարակումը նոր լոյս սփռի այս հարցի վրայ:

<sup>1</sup> Ալիշան Հ. Ղ, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 34–35:

Մի պատմական իրողութիւն, որ կարծում ենք կապ պէտք է ունենայ Իտալիայում հայերի առկայութեան այս մեծ պաստառի հետ՝ դա որոշ հայ սրբերի մեծարումն է: Իրոք, եթէ նոյնիսկ այդ մեծարումը հիմնուած լինի առասպելական փաստերի վրայ՝ բնական բացատրութիւն է գտնում եւ, մանաւանդ, շեշտում է հայերի առկայութիւնն այս տարածաշրջանում:

Այս սրբերի մէջ իր պատմական հաւաստութեամբ առանձնանում է Սան Դաւիթոյ Արմենոն՝ Սուրբ Դաւիթ Հայկազնը: Նա մեծարում է Լուկկայում, ուր վախճանուել է 1050 թ. յունիսին՝ հիւլանդութեան պատճառով եւ թաղուել Ֆորումի Ս. Միքայէլ գերեզմանոցում, որտեղից էլ, նրա գերեզմանի վրայ կատարուող հրաշագործութիւնների շնորհիւ, աճիւնը տեղափոխել են նոյնանուն եկեղեցին եւ ամփոփել Սան Լուկայի (Սուրբ Ղուկասի) խորանի մօտ գտնուող շիրմով<sup>1</sup>:

Մի ուրիշ սուրբ, որին աւանդութիւնը հայ է կոչել, Սիմէոնն է, ճգնաւոր՝ Մանտովայի մօտերքը Պոլիրոնէ աւանի Սան Բենեդետտոյի (Սուրբ Բենեդիկտոսի) անուան մենաստանում, ուր ի վերջոյ հաստատուել էր Իտալիա, Բրիտանիա, Կոմպոստելլա, Թուր եւ միջնադարեան այլ սրբավայրեր այցելելուց յետոյ: Մահացել է 1016 թ. յուլիսի 26-ին: Նրա վարքում, որ գրի է առել յաջորդ սերնդի Պոլիրոնէի վանականներից մէկը, յիշուում է մի հայ եպիսկոպոս, որ Սիմէոնի թարգմանն է եղել՝ նրա դէմ մղուած հերետիկոսութեան ամբաստանութիւնների և սրանց քննութեան համար, Բենեդիկտոս VII-ի օրոք, Հռոմում յարուցուած դատավարութեան ժամանակ<sup>2</sup>:

Թուարկենք նաեւ մի քանի այլ կէս առասպելական Սրբերի դէմքերը՝ Ս. Էմիլիանոյ՝ Տրելիի եպիսկոպոս Ումբրիայում, որը Իտալիա եկած պէտք է լինի Դիոկլետիանոսի ժամանակ եւ նահատակուած պրոկոնսուլ Մաքսիմիլիանոսի կողմից 302 թ. յունուարի 28-ին<sup>3</sup>:

Ս. Լիբերիոսը (Լիբերիոյ կամ Օլիւիբոյ) մեծարուած է Անկոնայում: Վ դարի այս ճգնաւորը հռչակուած է այդ քաղաքի պաշտպան սուրբ, որի մասունքները 1756 թուականից պահպանուում են Ս. Կիւրիակոսի Մայր Տաճարում: Մի այլ առասպել նրան վերագրում է աւելի նոր ժամանակաշրջան՝ համարելով Կիլիկիայի թագաւորի (Հե-

<sup>1</sup> Lazzari P., Davino Armeno. in "BS", IV, Roma, 1964, col. 520.

<sup>2</sup> Caraffa F., Simeone, eremita di Polirone. in "BS", XI, Roma, 1968, col. 1114-1115.

<sup>3</sup> Amore A., Dionigi, Emiliano e Sebastiano, santi, martiri, in "BS", IV, col. 646.

թում, Հայթոն) որդին<sup>1</sup>: Յլորենցիայի Սան Մինեատոյին (Մինաս) առասպելն անուանում է նաև «Ռեքս էրմինիէ» («Հայոց արքայ»)²:

Այստեղ կարող ենք յիշել նաև մի քանի այլ սրբերի Փոքր Հայքից՝ Իտալիայի հետ նրանց ունեցած առնչութիւնների առիթով, թէպէտ որեւէ ապացոյց չկայ նրանց այս երկիրը գալու մասին: Նրանցից են Ս. Մարտիրոսներ Եւդոկիտոսը և նրա ընկերները՝ Դիոկլետիանոսի ժամանակներից, որոնց մասունքները տեղափոխուած պիտի լինեն Հռոմ, Ադրիանոս I Պապի գահակալութեան ընթացքում (772–795): Նրանք մեծարուած են Ս. Ապողինար (Սանտ'Ապոլլինարէ) եկեղեցու առաջնորդարանում³: Նրանց տօնը նշուած է IX դ. Նէպոլի մարմարեայ օրացոյցում, որ յիշում է նաև Գր. Լուսաւորչի, Ս. Հռիփսիմէի և Գայիանէի տօները: Այս մարմարեայ օրացոյցը, որ յայտնարերուել է 1742 թ., պատկանում է Թ դարին և ակնյայտօրէն մեծ նշանակութիւն ունի Իտալիայում հայերի վաղ ժամանակներից ներկայութեան փաստերի կարգին:

Յիշենք նաև Սան Բիաջոյ (Ս. Վլաս) Սերաստիայի եպիսկոպոսին: Նրան մեծարում են ոչ միայն Իտալիայում, այլև ողջ քրիստոնեայ աշխարհում՝ թէ՛ Արեւելքում և թէ՛ Արեւմուտքում⁴:

Սրբերի և ուխտաւորների այս շարքի կողքին, որոնք ծեծուած են Արեւմուտքի դարպասները, տեղ է գրաւում Ս. Պետրոսի մի մատի մասունքի՝ Հայաստան տեղափոխման մասին աւանդութիւնը: Պատմութիւնը, որ թուագրւում է 965 թուականով, յունարէնից թարգմանուելով մի արձանագրութեան մէջ, վկայում է, որ տեղափոխումը կատարուել է մի հայ իշխանի միջոցով, որը գալով Հռոմ՝ մասունքը խնդրում է Պապից: Այն պահուած պիտի լինէր Արարատ լեռան հարաւում գտնուող Կողովիտ գաւառի Բզրայրի Գոմ գիւղում⁵:

Այս ընդհանուր պատկերը, որ մինչ այժմ ջանացինք ուրուագծել, VI–XI դարերում Իտալիայի տարբեր նահանգներում հայ տարրի բազմաշերտ ներկայութեան մասին, օգնում է նաև ամբողջացնել որոշ տուեալներ և ղէմքեր, որոնց հայութիւնը, առանձին վերցրած, դուցէ առաւել քմահաճ պիտի թուար: Այսպէս է օրինակ ոմն Նար-

<sup>1</sup> Natalucci M., Liberio, in "BS", VIII, Roma, 1966, col. 24–25.

<sup>2</sup> Villani G., Croniche Fiorentine, I, I, cap. LVII, ed. Venezia, 1537, p. 13.

<sup>3</sup> Mottironi S., Eustrazio, Aussenzio, Eugenio, Mardario ed Oreste, in "BS", V, Roma, 1964, col. 313–315.

<sup>4</sup> Brandi M. V., Vighy, Biagio, vescovo di Sebaste, in "BS", III, Roma, 1963, col. 158–170.

<sup>5</sup> Ալիշան Հ. Ղ., Հայաստանում, Վեներտիկ, 1901, էջ 295–299:

սուսի (Ներսէս) մասին վկայութիւնը՝ թէ նա ազնուատուհմ յոյն էր. «Պատրիցիոս էքս Գրեգորում ջններէ օրտուս»: Ամենայն հաւանականութեամբ նա բիւզանդահայ է ու զարմանալի չէ, որ Իտալիայում նա յոյն նկատուէր: Նա երկու եկեղեցի է կառուցել Վենետիկում, որոնցից մին ընծայուած էր Սուրբ Թէոդորոս Նահատակին, իսկ միւսը՝ Ս. Ջեմինիանոյին եւ Ս. Մենային: Ինչպէս տեսանք, աւանդութիւնը, իսկ որոշ ժամանակ անց նաեւ պատմիչները, սխալմամբ այս Նարսէսին նոյնացնում են Ներսէս Պատրիկ Ներքինիի հետ<sup>1</sup>:

Մինչդեռ, աւելի հիմնաւոր քննադատական հետազոտութիւնները ասպցուցում են, որ խնդրոյ առարկայ Ներսէսը IX դարի առաջին կէսի դէմք է, եւ որ վերոյիշեալ եկեղեցիները թուազրուում են Զուստինիանոյ Պարտեզիպացիոյի դքսութեան տարիներին (827–829), եւ որ Նարսեսի մահը աւելի ուշ չի պիտի լինէր Դոմի մահուանից: Արդ, մի կողմից հէնց Ներսէսի անունը եւ մանաւանդ այն, որ Բիւզանդական կայսրութեան մէջ այս անունով ընդհանրապէս յայտնի պաշտօնեաները հայկական ծագում ունէին եւ միւս կողմից հայ տարրի ակնառու առկայութիւնը թէ՛ կայսերական աւաւանու մէջ եւ թէ՛ Իտալական հողի վրայ գերազանցապէս հաւանական են դարձնում, որ նաեւ այս Նարսէսը հայ լինի: Յոյս ունենք, որ նոր հետազոտութիւնները կը կարողանան աւելացնել նմանօրինակ դէպքերի քանակը:

**Մի քանի նկատառումներ Իտալիայում հայերի առկայութեան մասին**

Եթէ կամենանք մի ընդհանուր ակնարկ զցել այն ամէնի վրայ, ինչի մասին վերը խօսեցինք, կը տեսնենք, իսկապէս, հայերի մի շօշափելի առկայութիւն Իտալիայում VI–XI դարերում: Նրանք զինուորներ են, ամէն մակարդակի կառավարական պաշտօնեաներ եւ, ինչու չէ, նաեւ վաճառականներ ու արուեստագէտներ, թէպէտ այդ մասին ճշգրիտ յիշատակութիւններ չկան: Ալիշանը, երբ ինքն իրեն հարց էր տալիս, թէ արդեօք հայերը այդ հեռււոր անցեալում Վենետիկ են եկել առեւտրական նպատակներով, նա այս վարկածն ամենեւեւ անհաւանական չէր գտնում, եւ Դիլը առաւել վստահօրէն է հաստատում, որ հայ եւ բիւզանդացի վաճառականներն արդէն

<sup>1</sup> Galli R., La storia di Venezia dal principio del VI alla fine del XII secolo rinnovata. Le scoperte in una cronaca, Venezia, 1886, pp. 29–41.

VI–VII դարերում մուսուլմանները հին գործել Աֆրիկայ, Իտալիայ, Իսպանիայ եւ Ֆրանսիայ: Այս դարերը անկասկած նշուում են ոչ միայն իբրեւ սկիզբ, այլ նաեւ որպէս այդ գործունէութեան ամենաաշխոյժ ժամանակաշրջան:

Յաջորդ դարերում գուցէ առաւել ցայտուն կը դառնայ Հոգեւոր ներկայացուցիչների ներկայութիւնը: Սակայն դէպի IX դարավերջ, ասպարէզում կրկին հանդէս են գալիս հայ պաշտօնեաներ՝ յանձինս նշանաւոր հրամանատարների ու պատրիկների: Ուստի կարող ենք եզրակացնել, որ վաղ միջնադարի Իտալիայում հայերը թողել են իրենց հետքը, թէկուզ տարբեր ուժով եւ յստակութեամբ՝ այս ու այնտեղ՝ Ռաւեննայից մինչեւ Ֆլորենցիա, Հռոմ, Սիրակուզայ, Բենեւենտոյ, Անկոնայ եւ Վենետիկեան Լագունայի ափերից մինչեւ Ֆրանսիա եւ աւելի հեռու՝ Լոմբարդական դաղթավայրի միջով եւ Պոյի բերրի դաշտերով:

Հայ-իտալական եւ, ընդհանրապէս, հայ-արեւմտեան յարաբերութիւնների մասին առաւել ընդհանրական պատկերացում կազմելու համար հարկ է աչքի առաջ ունենալ նաեւ հարցի միւս կողմը՝ այսինքն Իտալացիների կամ արեւմուտքի ներկայացուցիչների առկայութիւնը Հայաստանում կամ նրա սահմանակից գոտիներում: Հակիրճ անդրադառնանք այս հարցին վերաբերող գլխաւոր փաստերին: Յայտնի է, որ արեւմուտքի ներկայացուցիչների ուխտագնացութիւնների սկզբնաւորումը դէպի Երուսաղէմ Խաչակրաց արշաւանքներից շատ աւելի առաջ է եղել: Բացի այդ, դեռ X, XI դարերում Իտալացի վաճառականների, մանաւանդ պիզացիների, ամաֆիցիների, ջենովացիների, վենետիկցիների ու սիկիլիացիների յաճախ կարելի էր հանդիպել Արեւելքի ճամփաների ու ծովային հաղորդակցութեան ուղիների վրայ: Արդ, հին ժամանակներից ի վեր Երուսաղէտում հայկական գաղթօջախ կար, ինչպէս նաեւ հայոց ճգնարաններ: Նոյնն էր պարագան նաեւ շատ քրիստոնեայ ազգերի համար: Վերջերս Տատիանա Իզմայլովան պնդեց այս խմբերի կարեւորութեան մասին՝ արուեստի որոշ երեւոյթներ բացատրելու նպատակով<sup>1</sup>: Բիւզանդական բանակի մէջ եւս հայերի հետ կողք կողքի Արեւմուտքի բազմաթիւ վարձկաններ էին ծառայում՝ սկսած գոթերից, նորմաններից, փրանկներից, մինչեւ վիկինգներ, որոնք մասնակցեցին նաեւ արեւելեան պատերազմներին:

<sup>1</sup> Ismailova T., Les racines prébyzantines dans les miniatures Arméniennes, in "Armeniaca – Mélanges d'Etudes Arméniennes", Venezia – S. Lazzaro, 1969, p. 233.

Հայ-իտալական կապերի նոյն փաստարկման մէջ է գետեղում նաեւ Պետրոս Սիկիլիացու ճամփորդութիւնը, «Հիստորիա Մանիքէորում»ի հեղինակի («Մանիքեցեցեցի Պատմութիւն»), որը 870 թ. Վասիլ I-ի հրամանով գնաց Մալաթիայի շրջանում հայ պաւլիկեանների մայրաքաղաք Թեփրիկէ (Իփլորիդի)<sup>\*</sup> բիւզանդական գերիների փոխանակման հարցով բանակցութիւններ վարելու նպատակով: Իր գրքում զանց չի առնում ճանապարհին հաւաքուած պատմական եւ աստուածաբանական զանազան հարցեր քննարկել<sup>1</sup>:

Մի պահ կանգ առնենք վերանայելու համար վաղ միջնադարի Հայ-իտալական կապերի մասին այս ամբողջական ակնարկի եզրակացութիւնը, ինչ են յուշում վերը նշուած պատմական թուերն ու դէպքերը, ինչպիսին էին Հայաստանի եւ Իտալիայի միջեւ եղած յարաբերութիւնները, մշակութային փոխազդեցութիւններն ու շփումները, եւ ընդհանրապէս, ինչ մակարդակի վրայ էին Հայաստանի եւ Արեւմուտքի միջեւ կապերը, ինչպէս նաեւ դրանց յետագայ զարգացման հեռանկարները:

Հարցին նայելով այս տեսանկիւնից, բաւական հեռանում ենք այն նպատակաուղուց, որի մէջ այն ընդհանրապէս ուսումնասիրւում է: Իրօք, որպէս մեկնակէտ չենք վերցնում երկու երկրների մշակոյթների նմանութիւնների դիտարկումը, փնտրելու համար նրանց ծագման հնարաւոր բացատրութիւնները: Թէպէտ մեր մեկնակէտը նոյն պատմական իրադարձութիւններն են, մեզ հետաքրքրում է, թէ ինչը կարող է լինել նրանց անդրադարձը մշակութային արտայայտութիւնների վրայ: Ունենալով համեմատութեան երկու հիմքեր, բնական է, որ նրանց փոխադարձ կախուածութիւնը համեմատական լինի նրանց իւրաքանչիւրի ծաւալին: Ուստի մեր հարցը պիտի լինի, թէ արդեօք նկատի առնուած պատմական տուեալները այնպիսի<sup>2</sup> են, որ հայկական արուեստի մղում յուշեն Արեւմուտքում նոյնօրինակ ձեւերի արտայայտման մէջ:

Այսպիսի հարցերին հնարաւոր չէ պարզունակ ու մասնակի լուծում առաջարկել, մանաւանդ երբ հարցը արուեստի եւ մշակոյթի մեծ հոսանքների մասին է, որոնք որոշիչ են եղել ամբողջ մի ժամանակաշրջանի կամ դարաշրջանի քաղաքակրթութեան համար՝ առանց թիրախ ունենալու նրանց ծագման եւ զարգացման ամբողջական ընթացքը՝ տարբեր եւ բազմապիսի ծաւալների մէջ: Իրօք,

<sup>1</sup> Fliche e Martin, Storia della Chiesa, vol. VII, Torino, 1973, par. 435, p. 565, n. 33.

նման ծաւալով երեւոյթները հնարաւոր չէ վերագրել առանձնացած եւ միայնակ գործօններին:

Վերադառնալով մեր հարցին, եթէ մի կողմից արուեստի արտա-  
յայտութիւնները երբեմն ցոյց են տալիս զարմանալի նմանութիւն-  
ներ, պատմական տուեալները իրենց հերթին ներկայացնում են  
չփոմաների այնպիսի աճ, որ հնարաւոր դարձնեն, աւելին՝ հաւանա-  
կան դարձնեն արուեստի եւ մշակոյթի փոխներգործութիւնը: Այսպի-  
սի հաւանականութիւն հնարաւոր է շփման կէտերի թե՛ որակական  
եւ թե՛ քանակական ենթադրութիւնից: Քանակական տեսանկիւնից  
նրանց մէջ ակնառու տեղ են զբաւում պետական պաշտօնեաները,  
նոյնիսկ բարձրաստիճան, ինչպէս նաեւ հոգեւորականները: Բայց  
չատ հաւանական է, որ նրանց մէջ մաս կազմեն նաեւ առեւտրի  
մարդիկ: Այժմ յայտնի է, թէ ինչպիսին եւ երբ է եղել այս դասակար-  
գերի յենարանը, մանաւանդ կրօնական կենտրոնները, միջնադարի  
արուեստի եւ մշակոյթի համար:

Ճարտարապետութիւնը առանձնաշնորհեալ ասպարէզ է, ուր  
արտայայտուել է հայերի մղումը եկեղեցիների, վանքերի եւ հասար-  
ակական շէնքերի կառուցումով: Քանակական տեսակէտից եւս այս  
չփոմաները զանցաւելի կարեւորութիւն չէին ներկայացնում թե՛ ան-  
հատների քանակով եւ թե՛ ժամանակի տեւողութեամբ: Բնականա-  
բար քանակական այս երեւոյթի դնահատումը պէտք է յարաբերա-  
կան լինի այդ դարաշրջանի ազգագրական, հասարակական եւ տեխ-  
նոլոգիական պայմաններին: Միջնադարեան քաղաքներն իրենց նոր  
ընակչութեամբ, փակ համայնքների իրենց նկարագրով կարող են  
համեմատուել դեռ եւս մինչեւ ի դարի առաջին տասնամեակների  
մեր գիւղերի հետ, նաեւ այսօր շատ երկրների հետ, որտեղ որեւէ  
օտար տարրի երեւալը անմիջապէս ուշադրութիւն է զբաւում եւ նոյ-  
նիսկ օտարների մի չնչին խումբ կարող է ուշադրութեան կենտրո-  
նում յայտնուել: Նաեւ փոխադրումների դժուարութիւնը եւ դանդա-  
ղութիւնը, հասարակական հաղորդակցութեան բացակայութիւնը,  
նաեւ ճանապարհների կանգառները կարող էին ծառայել առաւել  
աշխոյժ եւ հետաքրքիր շփումներ ստեղծելու համար, քան մեր օրերի  
դքօսաշրջութիւնը: Ուրեմն կարող ենք եզրակացնել, որ մեր տուեալ-  
ները հայ-իտալական միջնադարեան յարաբերութիւնների մասին իս-  
կապէս նշանակալից կարեւորութիւն են ստանում եւ արժանի են, որ-  
պէսզի նրանց հետ հաշուի նստենք:

Սակայն Հարցը առաւելապէս բարդանում է, երբ ուզում ենք ճշգրտել մշակութային այս փոխանակութեան ծաւալը, ձեւը եւ դերը: Իրօք, բացի արուեստի խնդրոյ առարկայ երեւոյթների մեծ բարդութեանն ու զանազանութեանը, այնտեղ առկայ է նաեւ պատմական մթնոլորտի ծայրայեղ խճճուածութիւնը, որտեղ կողք կողքի գործում են տարբեր պատմական ուժեր՝ Բիւզանդիան իր մշակութային ժառանգութեան միաձուլուածքով ու դրա Հետ միասին իր սզգային բաղադրիչների այլազանութեամբ, արաբները, որ ընթանում են ոչ միայն գէնքի, այլ նաեւ ոգու ուժով, Եւրոպայի տարբեր սզգային մնացուկներ՝ լոնգոբարդները, փրանկները, գերմանները՝ առանց մոռանալու Հին, բայց մեծ Հռոմը, որ դեռ ապրում է իր յուշարձանների մէջ: Մտածում ենք, որ սխալուած չէինք լինի Հաստատելով, որ այս եւ սրա նման ամէն մի գործօն ունի իր յատուկ կշիռը, իրեն յատուկ Փունկցիան, այն բազմաթիւ ջանքերի յեղաշրջման մէջ, որոնք նպաստում են XI–XIII դարերի Եւրոպայի արուեստի զարգացմանը:

Պիտի ասենք գուցէ, որ գործօնների այս հարուստ զանազանութեան մէջ Հայկական տարրը գրաւում է իւրայատուկ տեղ՝ գոնէ որոշ տեսակէտից եւ որոշ շրջաններում: Արդէն իսկ այն իրողութիւնը, որ Հարց է դրւում միջնադարի եւրոպական արուեստի եւ Հայկական արուեստի նմանութիւնների մասին, բաւարար պատճառ է, որպէսզի այս մերձեցումը ներկայացուի, մարդկային մտքի մեծ պատմութեան մէջ որպէս մի առանձին պահ՝ իրեն յատուկ գործունէութեամբ եւ առաքելութեամբ:

## 2. Երկրորդ ժամանակաշրջան. XII–XVII դարեր

Ինչպէս ասացինք արդէն սկզբում, XII դարի Հետ բացւում է մի նոր ժամանակաշրջան Հայ-իտալական յարաբերութիւնների մէջ: Վճռական գործօնները, որ մրցում են նոր պայմաններ ստեղծելու համար, Կիլիկիոյ Հայկական թագաւորութիւնն է եւ Խաչակիրները: ԾնորՀիւ այս նոր գործօնների՝ Հայերի եւ ընդհանրապէս Արեւմուտքի միջեւ ստեղծուում է մի անմիջական շփում, որ չի անցնում այլեւս Բիւզանդական կայսրութեան եւ մշակոյթի խողովակով: Այս նոր պատմական պայմանը օգնեց, որ Իտալիային արդէն իսկ ընտելացած Հայերը աւելի եւս տարածուեն եւ աւելի Հիմնաւորապէս Հաստատուեն թերակղզու համարիս բոլոր քաղաքային կենտրոններում՝ ստեղծելով ծաղկուն գաղթօջախներ:

Այս յարաբերութիւնները, որոնց վկայութիւնները պահպանուած են, գլխաւորապէս իրականանում են եկեղեցական շրջանակներում: Իրօք, այս նոր ժամանակաշրջանով, Հայոց եկեղեցին եւս գտնուում է մի նոր կացութեան մէջ: Այն իր պատմութեան մէջ առաջին անգամ, եթէ բացառենք Ս. Գրիգոր Լուսաւորչի դէպի Հռոմ ճամփորդութեան վերաբերեալ վիճարկուած աւանդութիւնը, սկսում է ուղղակի եւ անմիջական շփման մէջ մտնել Հռոմի եկեղեցու հետ: Արդէն խօսել ենք Գրիգոր Վկայասէր Կաթողիկոսի եւ Գրիգոր VII Պապի յարաբերութիւնների մասին: Թէպէտ Վկայասէրը ապրում էր Բազրաստունիների թագաւորութեան անկումից դէպի Կիլիկիոյ իշխանութեան կաղմաւորումն ընկած անցման ժամանակաշրջանում, առանց նոյնիսկ իր հոգեւոր իշխանութիւնն ի գործ դնելու համար մի հաստատ աթոռ ունենալու, իր բաց մտայնութեամբ շփումների եւ նոր փորձառութիւնների ծարաւ՝ արդէն պատկանում է XII դարի Կիլիկիոյ հայկական էկոմենիկոսի ներկայացուցիչների ընտանիքին:

XII դարի Հայ եւ Հռոմէական եկեղեցիների ուղղակի շփման առաջին վկայութիւնը մի նամակ է, հաւանաբար Հոնորիոս II Պապից (1124–1130)՝ Հայոց Կաթողիկոս Գրիգոր III-ին (1113–1166) ուղղուած: Մեզ թւում է, թէ այս փաստին պէտք է նախորդի մի ուրիշը, ժամանակով աւելի մօտիկ, քան Վկայասէրի պատուիրակութիւնը եւ նրա թղթակցութիւնը Գրիգորիոս VII-ի հետ: Այս ենթադրութեան մասին այնուամենայնիւ ոչ մի ապացոյց չունենք:

Յետագայում Գրիգորիս III-ը իր եղբօր՝ Ներսէս Կլայեցի Շնորհալու հետ մասնակցում է լատինների կողմից գումարուած ժողովներին Անտիոքում (1136) եւ Երուսաղէմում (1140)<sup>2</sup>: Գրիգորիսը Իննովկենտիոս III-ին (1130–1143) ուղղուած մի նամակ է յանձնում վերոյիշեալ ժողովներում նրա պատուիրակ կարգինալ Ալբերիկոյ դի Օստրային: Ունենք միայն Կաթողիկոսին ուղղուած Պապի պատասխանը՝ Հայերէն թարգմանութեամբ<sup>3</sup>: Այնքան մեծ էր եղել Գրիգորիսի եւ մանաւանդ նրա երիտասարդ եղբօր՝ Ներսէսի թողած տպաւորութիւնը, որ Պապը իր պատասխանում ցանկութիւն էր յայտնում տեսնել այս «Աստուածահաճոյ, Հայերի եւ լատինների լեզուի մէջ

<sup>1</sup> Ալիշան Հ. Ղ., Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 171–172:

<sup>2</sup> Grousset R., Histoires des croisades, vol. II, Paris, 1935, pp. 46–51; Fliche e Martin, Storia della Chiesa, vol. IX/1, Torino, 1974. par. 82, pp. 101–102; Ալիշան Հ. Ղ., նշ. աշխ., էջ 153–158:

<sup>3</sup> Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. Գ, Ս. Ղազար, Վենետիկ, 1786, էջ 54:

հմուտ սուրբ եպիսկոպոսին»<sup>1</sup> եւ բանակցել նրա հետ: Ըստ Ներսէս Լամբրոնացու վկայութեան, Պապը նաեւ նուէր է ուղարկել Կաթողիկոսին՝ հովուական մի գաւազան եւ հայրապետական պալիում, այսինքն՝ քօղ<sup>2</sup>:

1144 թուի գարնանը Գրիգորիսը պատուիրակութիւն է ուղարկում մի եպիսկոպոսի նախագահութեամբ, որը 18 ամսուայ ճամփորդութիւնից յետոյ հասնում է Հռոմ: Պատուիրակութիւնը նորընտիր Պապին գտնում է Վիտերբոյում: Սրտաբաց ընդունելութիւն է տեղի ունենում: Ըստ ընդունելութեան միակ ակնանատես Օթոն եպիսկոպոս Ֆրեյզինգենցու՝ այցելութիւնը, ի միջի այլոց, իրաւադաւանաբանական նպատակներ է հետապնդել<sup>3</sup>: Ըստ նոյն Օթոնի՝ վիճաբանել են կարգապահութեան եւ հաւատքի հարցերի շուրջ՝ հասնելով կատարեալ փոխըմբռնման: Մեկնումից առաջ Պապը պատուիրակութեանը Կաթողիկոսին ուղղուած մի նամակ է յանձնում: Վերջինս կորած է համարւում: Միայն մի պատառիկ է պահպանուել 1307 թ. Սսի ժողովում<sup>4</sup>:

Այս պատուիրակութիւնից յետոյ, տարիներ շարունակ, Հռոմի աթոռի հետ յարաբերութեան ոչ մի վկայութիւն չի պահպանուել, մինչեւ Ղուկիոս III Պապի գահակալութիւնը (1181–1185): Արդեօք յարաբերութիւնների մի ընդհատում է եղել, թէ՞ վաւերաթղթերի պակաս կայ, դժուար է կռահել: Այնուամենայնիւ այն հանգամանքը, որ Հայոց Եկեղեցին այս ժամանակամիջոցում ամբողջապէս դաւուլուած է եղել Յոյն Եկեղեցու հետ բանակցութիւններ վարելով, դուցէ մասամբ կարողանայ բացատրել այս ժամանակաւոր լուրթիւնը:

Սակայն ոչ պաշտօնական յարաբերութիւնները շարունակուած էին ոչ միայն Կիլիկիայում, այլ նաեւ Արեւմուտքում: Այսպէս 1154 թուին Սարգիս վարդապետ Շնորհալիի շարադրած Կաթողիկոսական թղթերի մեկնութիւնը անմիջապէս թարգմանուել է եւ տարուել է Հռոմ՝ «խելամիտ եւ հանճարեղ ազգին փրանկաց», ինչպէս մեզ վկայում է նոյն տարուայ մի ձեռագիր:

<sup>1</sup> Տէր-Միքելեան Ա., Միջին դարերի կաթողիկոսների ձգտումներն եկեղեցական խաղաղութեան համար, «Արարատ», 26, 1893, էջ 133–138:

<sup>2</sup> Ալիշան Հ. Ղ., նշ. աշխ., էջ 183:

<sup>3</sup> Frisigensis Otto, Chronicon, I, VII, 32, a. 1145, Nov. 18, ed. R. Wilms, in "MGH", Scriptorum t. XX, Hannover, 1868, p. 265.

<sup>4</sup> Չամչեանց Մ., նշ. աշխ., էջ 54: Ալիշան Հ. Ղ., նշ. աշխ., էջ 173:

1183 թուի վերջերին կամ 1184-ի սկզբին Շնորհալու յաջորդ՝ Գրիգոր IV Տղան (1173–1193) մի նամակ է ուղարկում Ղուկիոս III-ին, Ֆիլիպէի եպիսկոպոս Գրիգորի միջոցով՝ ղրդուած յոյների վտանգից՝ ինչպէս վկայում է վարդան Պատմիչը<sup>1</sup>։ Պատուիրակութիւնը Պապին հանդիպում է Վերոնայում։ Մեզ է հասել Պապի պատասխանը՝ Ներսէս Լամբրոնացու թարգմանութեամբ։ Պապը նամակի հետ ուղարկում է նաեւ նուէրներ՝ հռոմէական եկեղեցական պատարագի զգեստ, դաւազան եւ խոյր<sup>2</sup>։

Ղուկիոս III-ի նամակին հետեւում են Կղեմէս III-ի (1187–1191) նամակներն՝ ուղղուած Կաթողիկոսին եւ Կիլիկիոյ իշխան Լեւոն II-ին՝ նրանցից խնդրելով հայերի օգնութիւնը նոր խաչակրութեան համար<sup>3</sup>։ Կարող ենք ասել, որ այս թուականից սկսած հայկական Կիլիկիայի յարաբերութիւնները Արեւմուտքի հետ միշտ աւելի յաճախակի են դառնում, եւ Կիլիկիան արդէն խաչակրաց պատմութեան մաս է կազմում։

## II. Եկեղեցիներ, համայնքներ եւ վանական հասարակութիւններ

Հռոմ. - Մինչ շարունակում է ուխտագնացութիւնների աւանդոյթը դէպի Հռոմ եւ Արեւմուտքի տարրեր սրբավայրեր, Գրիգոր Տղայի ժամանակներում, կամ քիչ աւելի վաղ, յիշատակում է Գէորդ Աչիկայ անունով մի վանական։

Նա մի ուխտաւորի հետ այցելելով Երուսաղէմ՝ գնում է մինչեւ Հռոմ։ Ապա երկար ու արկածախնդիր մի ճամփորդութիւնից յետոյ, ճանապարհը կորցնելով, միաժամանակ կանգ է առնում Հունդարիայում<sup>4</sup>։

XII դարի ընթացքում, երբ շարունակում են այս բնական յարաբերութիւնները, Իտալիայում ականատես ենք լինում շատ խորհրդանշական մի երեւոյթի՝ հայերի կողմից կառուցուած կամ հայերի կողմից սրբագործուած եկեղեցիների արագ բազմանալուն։ Դարի երկրորդ կէսին Հայր Ալիշանը Իտալիայի 9 քաղաքներում հաշւում է տասից աւելի հայկական եկեղեցիներ։ Սա խօսում է այն մասին, որ դարի առաջին կէսը այն վճռական ժամանակաշրջանն է, որը նախորդում է Իտալիայի հայկական գաղթօջախների ձեւաւորմանը։

<sup>1</sup> Վարդան Պատմիչ, Հասարկում պատմութեան, Վենետիկ, 1862, LXXIX, էջ 133։

<sup>2</sup> Չամչեանց Մ., նշ. աշխ., էջ 142–144։

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 155–156, Ալիշան Հ. Ղ., Սիսուան, էջ 467։

<sup>4</sup> Վարդան Պատմիչ, նշ. աշխ., LXXV, էջ 129։ Չամչեանց Մ., նշ. աշխ., էջ 145–146։

Հռոմում, Վատիկանում, յիշուել է Ս. Յակոբ եկեղեցին, որի հետ նաեւ մի վանք ու կացարան կար: Ալիշանը «Միսուլան»ում խօսում է նաեւ Ս. Մարիամ եւ Ս. Գրիգոր եկեղեցիների մասին<sup>1</sup>: Արդ, Արմելլինիի վկայութեամբ, Վատիկանի մօտ, միւսների հետ միասին, կային Սանկտա Մարիա դէ Վիրգարիիս եւ Սան Գրեգորիոյ դել Պորտիկոյ եկեղեցիները, որոնք սխալմամբ նոյնացուել են Մարտինելլի կողմից: Ս. Գրիգոր եկեղեցին, ըստ Գրիմալդիի, կոչուում էր նաեւ Հայկական՝ Հայերի Թաղամասում գտնուելու պատճառով: Այն յայտնի էր նաեւ որպէս Սան Գրեգորիոյ դէ Պալատիոյ<sup>2</sup>: Մեզ թւում է սակայն, որ Ալիշանի կողմից յիշուող եկեղեցին սրանցից եւ ոչ մէկի հետ պէտք չէ շփոթել, այլ հարկ է նոյնացնել Ս. Յակոբի հետ: Իրոք, սա յայտնի էր նաեւ Սինեորիլիի ձեռագիր մատեանում՝ որպէս Բէատա Մարիա դէ Արմենիս ուլտրա Պոնտեմ: Սա հաստատուում է նաեւ Հայկական աղբիւրներում, որոնք շատ յաճախ խօսում են Վատիկանում Աստուածամօրը ընծայուած Հայոց եկեղեցու եւ կացարանի մասին. ըստ 1239, 1240, 1242, 1310 թթ. ձեռագրերի, եւ մի այլ ձեռագրի, որ յիշուում է Ուղուրեանի կողմից՝ առանց թուականի նշումի<sup>3</sup>: Ձեռագիրը յիշում է նաեւ Ս. Գրիգորի կոչումը: Այսպիսով Իտալիայի Հայկական Համայնքների մէջ նկատում ենք եկեղեցիներ, որոնք ունեն տարբեր կոչումներ, որոնցից առաջինը Սուրբ Կոյսի կամ Ս. Հոգու անունով է:

Վատիկանի կացարանում Թորինոցի Անանունի ժամանակ (XIV դար) ապրում էին 12 քահանաներ, ամուսնացած, ինչպէս յայտնում է հեղինակը՝ «ըստ Հայկական ծէսի, ունէին կանայք և որդիներ»: Եկեղեցին գտնուում էր Ս. Պետրոսի դարպասների մօտ, որտեղ կանգնած էր Պենիթենցիարիա Վետուսը: Այս պատճառով դարպասի մի մասը ուամիկի կողմից կոչուեց Հայերի դարպաս: Աւելին, ողջ տարածքը կոչուում էր Հայերի անունով<sup>4</sup>: Այն քանդուեց չըջակայքի միւս եկեղեցիների հետ միասին՝ Պիոս IV պապի գահակալութեան ժամանակ՝ հրապարակը լայնացնելու նպատակով:

<sup>1</sup> Ալիշան Հ. Ղ, Միսուլան, էջ 372:

<sup>2</sup> Armellini M., Le chiese di Roma dal secolo IV al XIX, 2 ed., Roma, 1891, pp. 762, 779; Martinelli F., Roma ex ethnica sacra, Romae, 1668, pp. 360, 375.

<sup>3</sup> Armellini, op. cit., p. 768.

<sup>4</sup> Armellini, op. cit., pp. 762, 769-770, 779.

Վատիկանից բացի, Ալիշանը ցոյց է տալիս նաև մի կացարան Տրէ Ծոնտանէում (Երեք աղբիւրներ), անշուշտ հիմնաւորելով հայ վանականների ներկայութիւնն այնտեղ<sup>1</sup>:

Հոռմում հայերը ունեցել են նաև Սան Լորենցոյ եկեղեցին, որ կոչուում էր դէ Կաւալլուչչի կամ դէ Կարելութիս, նաև դէ Կաւալլինի, դէ Կապալլիս, Պետրի Լէոնիս, դէ Ֆլումինէ: Այս եկեղեցին 1562 թ. հայերին է շնորհել Պիոս IV-ը՝ Միքայէլ տեղապահ Կաթողիկոսի՝ Աբդար Եւդոկիացու (որին նաև Սաֆար կամ Սեֆեր էին կոչում) Հոռմ վալու առիթով: Նա եկել էր իր որդու՝ Սուլթանշահի եւ Աղեքսանդր անունով մի քահանայի ուղեկցութեամբ:

Սակայն, երբ յիշեալ եկեղեցին Պիոս V-ի օրոք ներառուեց Հրեաների թաղամասում, վերջինս 1572 թ. հայերին տուեց Սանտա Մարիա Էլիցիակա (Ս. Մարիամ Եգիպտացի) եկեղեցին, որն ունէր նաև հիւրատուն կամ հոգետուն: Դարի պահանջներին համընթաց, սա անբաւարար նկատելով, Գրիգորիոս XVI Պապը հայերի ուխտատեղին փոխադրեց Սան Բիաջոյ դէ Կանտու Սեկուտա (գելլա Պանետտա) եկեղեցին, որը գտնուում է Ջուլիա փողոցի ծայրում, մինչ օրս պատկանում է Կիլիկիոյ հայ կաթողիկէ Պատրիարքութեանը: Հայերին է պատկանում նաև Սան Նիկողոյ դա Տոլենտինոյ եկեղեցին: Լեւոն XIII Պապը 1883 թ. նրա կողքին կառուցել տուեց Հայկական Քահանայապետական Վարժարանը, ծանօթ նաև Լեւոնեան Վարժարան անունով:

Հոռմն իր հայկական եկեղեցիներով, կրօնաւորական հաստատութիւններով, հոգետուներով, ոչ միայն ուխտավայր էր, այլ նաև մշակութային կենտրոն էր: Այնտեղ արտագրուել են բաղմաթիւ մատենաներ, որոնցից կարելի է յիշել «Նարեկ» աղօթադիրքը (1226–1227 թթ., Վատիկանի մատենադ. N 4), մի Աւետարան (1240 թ., Երեւանի մատենադ. N 218), մի այլ Աւետարան (1254 թ., Մխիթարեան Միաբանութեան մատենադ. N 90), եւս մի Նոր Կտակարան (1262 թ., Նոր Ջուղայի մատենադ. N 30), Նոր Կտակարան (1310 թ., Նոր Ջուղայի մատենադ. N 39), «Պատմութիւն Մեծն Աղեքսանդրի»՝ ընդօրինակուած բանաստեղծ Խաչատուր Կեչաւեցիի կողմից (XIII–XIV դդ.):

Ճլորենցիա. – Արդէն խօսել ենք Բարսեղեան հայ վանականների վանքերի ու եկեղեցիների մասին: Նրանք Խտալիայում հաստատուել էին շատ վաղ ժամանակներից: 1321 թ. Ջենովայից եկած հայ

<sup>1</sup> Ալիշան Հ. Ղ, նշ. աշխ., էջ 76–78:

վանականների մի նոր խումբ սկսում է վերակառուցել Ս. Բարսեղ Հին եկեղեցին եւ նրան կցում է մի գերեզմանոց՝ Ս. Աթոռի եւ Ճլորենցիայի բարեկամների օգնութեամբ ղիմակայելով տեղական կղերի սաստիկ գայրոյթը: Այստեղ նրանք մնում են մինչեւ 1491 թ., երբ նրանց վերջին ներկայացուցիչը՝ եղբայր Եակոբոյ Մարտինիանին Միլանից, որն արդէն Հայ չէր, երկու ոչ քահանայ ուխտակիցների հետ մեկնում է քաղաքից: Մենաստանն իր ամբողջ գոյքով մնում է Ս. Հոգւոյ Քահանաների Միաբանութեանը: Այնուամենայնիւ, նրանք երկար ժամանակ կարող էին պահպանել իրենց ինքնութիւնը Հայերէն կատարելով ժամերգութիւնները և Ս. Պատարազը: 1356 թ. Իտալիայում Հայ Բարսեղեան տարբեր տների միացումից յետոյ, 1409, 1463, 1476, 1483 թուականներին Ճլորենցիայում գումարուեցին Ուխտի ընդհանրական ժողովները: Ճլորենցիայի այս վանատան անդամներից Հայր Անտոնիոյ Մալակոտտին միաբանութեան մեծաւոր դարձաւ 1463–1472 թթ.:

**Ռիմինի.** – Ռաւեննա քաղաքը, որ անցած դարերում Հայ պաշտօնեաների եւ զինուորականների մեծ Համայնք էր, բիւզանդական իշխանութեան անկումից յետոյ շատ բան կորցրեց իր նախկին փառքից: Դէպի Արեւելք, որպէս բաց դուռ եւ որպէս առեւտրական եւ մշակութային կենտրոն, նրան փոխարինեց Վենետիկը, բայց սկզբնական շրջանում նրա Հիմնական մրցակիցը Ռիմինին էր: 1254 թ. արտագրուած մի ձեռագրում յատկապէս յիշատակում են Հայկական մի եկեղեցի, մի հոգեւորն եւ մի մենաստան՝ Յովհաննէս եւ Մատթէոս աւետարանիչների անունով: Այնտեղ յիշում է նաեւ Յովհաննէս անունով մի Հայ եպիսկոպոս<sup>1</sup>: Ալիշանը հետեւելով Տոնինիին Հաւանական է գտնում, որ սա Ռիմինիի 1215 թ. յիշուած նոյն սուրբ Յովհաննէս առաջին հոգեւորնն է: Յետագայում անդրադառնալով հայերի ձեռքով Երուսաղէմից Ռիմինի բերուած մասունքների մասին աւանդութեանը, նա ենթադրում է, որ այն կարելի է կապել 1188-ին Սալահդդինի կողմից Երուսաղէմի դրամման հետ<sup>2</sup>:

Աղեքսանդր IV-ը (1254–1261) իր հովանաւորութեան տակ առաւ այս Հայկական տունը, ինչպէս կարողում ենք նիկողայոս IV-ի նամակում, ուղղուած Ռիմինիի Հայ վանականներին: Սակայն 1265 թ. Կղեմէս IV-ի կարգադրութեամբ հայերը թողնում են եկեղեցին եւ

<sup>1</sup> Փարիզի Ազգային գրադարան, Arm. N 112, fol. 91v., fol. 293. Ալիշան Հ. Ղ, Սիսական, էջ 454:

<sup>2</sup> Ալիշան Հ. Ղ, նշ. աշխ.:

իրենց գոյքը «Սուրբ Հոգի» հիւանդանոցին: Թւում է սակայն, որ սա եղել է ժամանակաւոր կարգադրութիւն, քանի որ 1291-ին Ս. Յովհաննէսում նորից տեսնում ենք Հայ կրօնաւորների Հասարակութիւն<sup>1</sup>:

1296 թ. եկեղեցին ու Հոգետունը վերանորոգւում եւ վերակառուցւում են ոմն վարպետ Թովմասի կողմից, որ կարող էր նաեւ լինել եպիսկոպոս: Այս վկայութիւնը մեզ է հասել երկու անձերի կողմից, ինչպէս նաեւ Հայկական արձանագրութիւններից, որ դեռ անցած դարում պահպանւում էին Ս. Յովհաննէս Մկրտչի դիւանատան պատի վրայ, որտեղ տեղափոխուել էին կողքի Սան Զիրուամոյի պարտէզից: Հայ վանականները յիշուում են քաղաքային դիւաններում դեռ 1311 թուականին<sup>2</sup>:

Յայտնի չէ նրանց մեկնումի թուականը Ռիմինիից, սակայն 1442 թ. նրանց տեղը հաստատուում են Հերոնիմեան վանականներ, այնտեղ կանչուած Եւզինիոս IV Պապի կողմից:

Անկոնա. - Բարսեղեան Հայ վանականները այստեղ յիշուում են 1261 թուականից Սուրբ Հոգի եկեղեցում, որը քանդուել է 1799 թ. պաշարման ընթացքում, սակայն նրանք այստեղ հաստատուած պէտք է լինեն շատ աւելի վաղ: Ի դէպ 1261 թ. Ուրբանոս III-ը մեղքերի քառասնօրեայ ներողութիւն էր շնորհում «Հայերի այս» փըլ-ուող եկեղեցին վերակառուցելու համար հանգանակութիւն հաւաքելու նպատակով<sup>3</sup>: 1248 թ. Իննովկենտիոս IV-ի մի կոնդակով Սուրբ Հոգետան հայերին, որ անկասկած Ս. Բարսեղի վանականներ էին, ազատում է Թեմի առաջնորդին տրուելիք աշխարհիկ հարկերից: 1304 թ. Բենեդիկտոս III-ը հաստատում եւ ընդլայնում է Իննովկենտիոս IV-ի կողմից թոյլատրուած առանձնաշնորհները, գրելով նաեւ Անկոնայի Եպիսկոպոսին, խիստ միջոցներ ձեռք առնել նրանց անհաճատացնողների դէմ<sup>4</sup>: 1461-ին եկեղեցին եւ վանքը նուիրուում են Սերվիտներին՝ ինչ-որ մէկի կողմից, որը դրանք գնել էր Բարսեղեանների աբբաճօրից<sup>5</sup>: Բայց երեք տարի յետոյ Պօղոս II-ի կողմից տրուում են Փրանկիսկեանների միաբանութեանը:

<sup>1</sup> Garampi, Vita della Beata Chiara da Rimini, p. 531. Ալիշան Է. Ղ, նշ. աշխ.:

<sup>2</sup> Ալիշան Է. Ղ, նշ. աշխ.:

<sup>3</sup> Leoni A., Istoria d'Ancona, vol. III, 1812, p. 104

<sup>4</sup> Fontes, serie III, vol. IX, Acta Clementis Pp. 174, Vatican, 1960, pp. 123-124; Ibid., vol. IV, t. I, Acta Innocentii Pp. IV, Romae, 1962, p. 119; Ibid., vol. II, pp. V, t. II, pp. 258-259.

<sup>5</sup> Leoni A., Ancona illustrata, p. 227.

XVI դարի վերջերին, ըստ Ալիշանի՝ 1580 թ., յիշուում է Հայերի կողմից օգտագործուած Սրբուհի Անաստասիա եկեղեցին: Նրանք XVII դարի վերջին տեղափոխուում են Ս. Զիրուումոյ եկեղեցին՝ Մայր Տաճարի մօտ եւ նրա անունը փոխելով անուանում են Ս. Գրիգոր Լուսաւորիչ: Տեղափոխութեան ժամանակ տանում են նաեւ այնտեղ գտնուող Հին արձանագրութիւնները<sup>1</sup>:

XV եւ մանաւանդ XVI դարերում Հայ վաճառականների մեծ Հոսք եղաւ դէպի Անկոնա, որոնց մէջ յատկապէս ակնառու էր Գէորգ Մուրատը: Սա միաժամանակ եղաւ զեղարուեստի եռանդուն քաջաւերող եւ Անկոնա կանչելով Պելլեգրինոյին (Պելլեգրինի կամ Տիբալդի), իր ծախսով նրան պատուիրեց Սուրբ Օգոստինոս, Սուրբ Կիրակոս եւ Սուրբ Դոմինիկոս եկեղեցիների համար իւղաներկ սրբապատկերներ եւ որմնանկարներ<sup>2</sup>:

1539 թ. մայիսի 6-ով թուագրուած ու Անկոնայի առաքելական կառավարիչ Անտոնիոս Բեներիոս Զարբիչիոսի կողմից ստորագրուած մի հրամանագրով Մուրատին թոյլատրուում էր ունենալ այն բոլոր իրաւունքներն ու արտօնութիւնները, որոնցից օգտուում էին Անկոնայի վաճառականները<sup>3</sup>:

Վերջում պէտք է յիշենք Անկոնայում Հռիփսիմեանց Հայ կրօնաւորուհիների Միաբանութիւնը, Սրբուհի Հռիփսիմէի անունով: Միաբանութիւնը հիմնադրուել էր երեք երիտասարդ Հայուհիների կողմից, որոնք կրօնական հանդերձ ընդունելով Զմիւռնիայում, 1766-ին մեկնեցին Անկոնայ: Նրանց միացան ուրիշներ Անկիւրիա/Անկարայից: Յետագայում նրանք անցան Լորետոյ եւ այնտեղ մնացին շուրջ 20 տարի: Սակայն խանգարուելով Լորետոյ ուխտի եկող ազգակիցների յաճախակի այցելութիւններից, որոնք նրանցից ապաստան էին պահանջում, 1787 թ. տեղափոխուեցին Կաստիլիա-զարդոյ: Վերջում կրկին Անկոնայ վերադարձան 1838 թ.: Այստեղ նրանց յանձնուեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, որը հետագայում թողնելով Հաստատուեցին Ս. Բարթոլղիմէոս վանքում՝ նոյնանուն եկեղեցու կողքին: Եկեղեցուն փոխանցեցին Ս. Գրիգոր Լուսաւորչի անունը: Այն կոչուեց Ս. Բարթոլղիմէոս եւ Ս. Գրիգոր Լուսա-

<sup>1</sup> Leoni A., Istoria d'Ancona, vol. III, 1812, p. 33. Ալիշան Հ. Ղ., Միսական, էջ 453:

<sup>2</sup> Vasari, Vite de' più eccellenti pittori, scultori, architetti, vol. XIV, Milano, 1811, p. 413 s., vol. XIII. Milano, 1811, p. 379.

<sup>3</sup> Ալիշան Հ. Ղ., Եջ. աշխ.: Այս հրամանագրի պատճենը պահուում է Ս. Ղազարի դիւանում:

ւորիչ: Վանքը սակայն կրեց Հռիփսիմեանց կոյսերի անուհը: Սա նրանց վերջին բնակարանն էր մինչև և անցեալ դարի երկրորդ կէսը՝ այնտեղ մնացած սակաւաթիւ կրօնաւորուհիների Հռոմ տեղափոխուելուց առաջ (1859 թ.)<sup>1</sup>:

**Պերուջա.** - Իտալիայի Հայկական դաղթօջախների մէջ ամենահներից եւ այս երկրորդ շրջանում ամենաաշխոյժն էր Պերուջան: Իրօք, մի քանի կարեւոր Հայերէն գրքեր (ձեռագրեր) են արտադրուել, եւ մի քանիսն էլ տրուել են Համայնքին, իրենց աղակիցիների կողմից: 1301 թ. այնտեղ արտագրուեց Գործք Առաքելոցը (Վատիկանի մատենադ. N 10 ձեռագիր): Թւում է, նոյն շրջանին է պատկանում եւ նոյն ծագումն ունի մի ուրիշ մատեան, որը պարունակում է Ս. Պողոսի նամակները, եւ որն այսօր պահպանւում է Պերուջայում<sup>2</sup>:

1302 թ. արտագրուել է երուսաղէմեան մի Ճաշոց, որն այժմ գտնւում է Հռոմի Լեոնեան Հայկական Վարժարանի գրադարանում, մատեան N 3/70)<sup>3</sup>: Այս սուեականից առաջ՝ 1279-ին, Կիլիկիոյ թագաւոր Լեւոն III-ը (1271) Պերուջայի Հայկական եկեղեցու քահանայ Տէր Յովհաննէսի խնդրանքով նուէր է ուղարկել մի դասամատեան կազմուած ըստ Հայկական եւ յունական օրացոյցների<sup>4</sup>:

Տէր Յովհաննէս քահանայի կողմից գրուած խնդրագիրը Հաւանաբար մի նոր, դեռ երիտասարդ Հասարակութեան մասին է: Եկեղեցին ընծայուած էր Մատթէոս եւ Բառնաբաս Առաքելներին՝ Կղեմէս V-ի կողմից օծուած 100 օրուայ ներողութեամբ 1308-ին<sup>5</sup>: Վատիկանի N 10 ձեռագիր մատեանի եւ Լեոնեան Վարժարանի N 4-ի յիշատակարանները վկայում են նաեւ մի վանական Հասարակութեան գոյութեան մասին դեռ 1277-ից առաջ, որովհետեւ նոյն տարուայ յունիսի 30-ին Պերուջայի ընդհանուր խորհուրդը Հրամայում է օգնել վանականներին իրենց եկեղեցին կառուցելու Համար: 1385 թ. Պերուջայում է վախճանուել Թովմաս եպիսկոպոսը եւ թաղուել եկեղեցում: Շիրիմի վրայ՝ սալայատակին Հայերէն և լատիներէն մի արձանագրութիւն կար, ուր կարդացւում է «Եղբայր Թովմաս արքեպիսկոպոս Հայերի»: Արձանագրութիւնը, որ արդէն շատ էր վնա-

<sup>1</sup> Ալիշան Հ. Ղ., նշ. աշխ., էջ 453:

<sup>2</sup> Zanotti A., Catalogo del Museo dell'Opera del Duomo di Perugia, Perugia, 1923, p. 7.

<sup>3</sup> Ալիսեան Ն., Յուցակ հայերէն ձեռագրաց Հռոմի Հայ Հիւրանոցի ի Ս. Վլաս եւ Քահ. Լեոնեան Հայ Վարժարանի, Վիեննա, 1961, էջ 52: Պողարեան Ն., Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. IV, Երուսաղէմ, 1967, էջ 469-471:

<sup>4</sup> Ալիսեան Ն., նշ. աշխ., N 4 (71), էջ 54:

<sup>5</sup> Fontes, serie III. vol. VII, Acta Clementis Pp. V, Vatican, 1955, p. 63 s.

սուած ԺԹ դարի սկզբին, յետագայում տեղափոխուեց Կարդինալի ամառանոց: 1448 թ. վանական Հասարակութիւնը դեռ յիշուած է, բայց արդէն գոյութիւն չունէր 1528-ին, երբ վանքը յատկացուեց քաղաքային անկեղանոցին՝ վարակիչ հիւանդների համար:

**Օրվիետոյ եւ Վիտերբոյ.** - Օրուիետոյում 1288-ին Յրանչեսկոյ եպիսկոպոսը հանդիսաւոր կերպով «սուրբ Հոգու» նուիրուած մի հայկական եկեղեցու եւ նրա հոգեւտան հիմնաքարն է դնում, որը յանձնուած է հայ վանականներին: Եկեղեցին կառուցուած էր քաղաքում<sup>1</sup>: Համայնքը յիշուած է 1341-ին Վենետիկի հայկական կտակներին մէկուտ, որին կցուած էր մէկ դուկատ<sup>2</sup>: 1349 թ. Կղեմէս VI-ը վանահօրը եպիսկոպոս է օծել<sup>3</sup>:

Վիտերբոյում 1333 թ. յիշատակուած են մի եկեղեցի եւ հիւանդանոց՝ Սիմէոն եւ Յուդա Առաքեալների անուանով, որոնք նոյն տարին տրուած են Ս. Փրանկիսկոսի Երրորդ Կարգի Քոյրերին, քանի որ երկար ժամանակ լքուած էին հայերի կողմից: Կապելլինին այնտեղ եկեղեցու բարաւորի վրայ յիշուած է մաշուած ու անընթեռնելի հայերէն մի արձանագրութիւն<sup>4</sup>:

**Սիենա.** - Այստեղ քաղաքապետարանի հրամանագրերի մէջ 1263 թ. սկսած նշուած է հայ վանականների Ս. Խաչ եկեղեցին: 1462 թ. այս վանքի առաջնորդը պիտի դառնայ ողջ Տոսկանայի հայ վանականների ընդհանուր վանահայրը: Հնարաւոր է, որ նոյն եկեղեցին կոչուած լինի նաեւ Ս. Սիմէոն, Ս. Թադէոս, նաեւ Ս. Աստուածածին, քանի որ Ալիշանը 1270 թ. գտնուած է մի վանք եւ եկեղեցի այս սրբերի անուանով, որոնք նշուած են նաեւ Սիենայի Խորհրդատետրի ձեռագրում, եւ այլ վկայութիւն չկայ Սիենայում տարբեր հայկական եկեղեցիների գոյութեան մասին<sup>5</sup>:

Սիենայում 1371 թ. գումարուեց Բարսեղեան հայ վանականների ընդհանուր ժողովը<sup>6</sup>, նրանց 1356-ի միաւորումից յետոյ:

Հայերի մի ուրիշ վանք գտնուած էր Սան Զիմինիանոյ բերդաւանի մօտակայքում: Վանքը եւ իր կալուածքները յետագայում անցան Օլիվետանների միաբանութեանը: Սիենայում հայերը ունէին

<sup>1</sup> Van Den Oudenrjin M. A., *Linguae Haicanae*, p. 269.

<sup>2</sup> Ալիշան Հ. Ղ., Հայ-Վենետ, մաս II, էջ 479:

<sup>3</sup> Van Den Oudenrjin M. A., *op. cit.*, p. 269.

<sup>4</sup> Ալիշան Հ. Ղ., Սիւնտան, էջ 372: Van Den Oudenrjin M. A., *op. cit.*, p. 250.

<sup>5</sup> Ալիշան Հ. Ղ., *նշ. աշխ.*:

<sup>6</sup> Van Den Oudenrjin M. A., *op. cit.*, p. 269; *Fontes, serie III, vol. IX. Lett. 11 Gen.*, 1348, pp. 202-204.

նաեւ իրենց գերեզմանոցը՝ յիշուած դեռեւս 1462-ին, Հաւանաբար Ս. Խաչ եկեղեցու մօտ: 1887-ին Գերպ. Ուղղորդեանը Սիենայում գրտնուելու ընթացքում թէ՛ Ս. Խաչ եկեղեցին եւ թէ՛ գերեզմանոցը դտաւ փակ եւ ամայի վիճակում:

Սալեռնոյ, Կափա, Ամալֆի. - Իջնելով դէպի Հարաւ Սալերնոյ, 1283 թ. այնտեղ արտագրուած մի ձեռագրից տեղեկանում ենք Սուրբ Մատթէոս Առաքեալի անունով Հայկական մի եկեղեցու եւ մի Հոգետան մասին<sup>1</sup>: Մատեանը պարունակում է Ս. Հայրերի եւ Հին վանականների ասոյթների մի Հաւաքածու, արտագրողը եւս մի վանական է: Կարելի է եզրակացնել, ուրեմն, որ նաեւ Սալերնոյում պիտի լինէր Հայկական կրօնաւորական Հասարակութիւն, որը վստահաբար պիտի ունենար նաեւ իր աղօթատեղին:

1327-ին ձեռագիր «Նարեկ»-ը (Երեւանի Մատենադ. N 1562) արտագրում է Սալերնոյի Ս. Յովհաննէս Մկրտիչ անապատում: Յաջորդ տարի Յովհաննէս XXII-ի օգոստոսի 1-ի կոնդակով մեղքերի Հարիւր օրուայ ներողութիւն է շնորհւում, այդ թւում նաեւ Սան Զովաննի Բատրիստա/Ս. Յովհաննէս Մկրտիչ դէ Վալլէ եկեղեցուն եւ օգնում է վանականներին<sup>2</sup>: Սալերնոյից ոչ հեռու, Կափայի Սան Պիետրոյ տի Սիեպի ծխում կար Հայրերի Ս. Խաչ անապատը, որն ըստ Ալիշանի աւելի նոր ժամանակներում էր Հիմնուել<sup>3</sup>: Այնուամենայնիւ այն վերանորոգուել է ճգնաւոր Երդոտենց Յովհաննէս Զուղայեցու կողմից (†1699 թ.), իսկ մինչ այդ, ամենայն Հաւանականութեամբ, վանականներ են մնացել այնտեղ: Վերջին ճգնաւորը, որ յիշուում է՝ Յովհան Մանուկը՝ մահացել է 1819 թ. շատ յառաջացած տարիքում, քանի որ նրա մասին արդէն յիշում էին 1758 թ.: Այսպիսին է Իտալիայի Հայ վանականութեան երկար աւանդութեան վերջին մոհիկանների պատմութիւնը, վանականութիւն, որի արմատները թաղուած էին դարերի մթութեան մէջ՝ նախքան Միխիթարի բարենորոգումը:

Ալիշանը յայտնում է նաեւ, որ շրջանի բնակիչների մէջ դեռ կենդանի էր յոյն եւ Հայ վանականների աւանդութիւնը Վիետրիի ծովափնեայ շրջաններում:

Միւս կողմից, Հայ վանականների ներկայութիւնը Իտալիոյ նաեւ այս կողմերում ճշմարտութիւնից հեռու չպէտք է լինի, եթէ

<sup>1</sup> Ալիշան Հ. Ղ., Սիսական, էջ 455: Van Den Oudenrjin M. A., op. cit., p. 268.

<sup>2</sup> Fontes, serie III, vol. VII, t. II, Acta Iohannis XXII (1317-1334), 1952, p. 198.

<sup>3</sup> Ալիշան Հ. Ղ., Սիսուան, էջ 372:

նկատի առնենք, որ այդ շրջանների գլխավոր քաղաքներից Ամալ-  
Ֆին Իտալիայի ու Արեւելքի միջեւ առեւտրի առաջին կենտրոններից  
մէկն էր եւ արաբ, պարսիկ եւ հայ վաճառականներ թանկագին ապ-  
րանքներով լի իրենց խանութներն ունէին<sup>1</sup>:

Նէպոլ. - Հարաւային Իտալիայի այս մետրոպոլիսում արդէն  
տեսանք մի հայկական համայնքի առկայութեան նշանները, վաղ  
միջնադարից ի վեր: Նէպոլում կայ Ս. Գրիգոր Հայի (Սան Գրեգոր-  
րիոյ Արմենոյ) եկեղեցին (ժողովրդական լեզուի մէջ՝ Սան Լիգորիոյ),  
Նախապէս Ս. Պանտալէոն, որը IX դարում տրուեց արեւելցի կրօնա-  
ւորուհիների մի հասարակութեան, որոնք, ըստ աւանդութեան,  
պատկերամարտութեան հալածանքներից փախած հայ կրօնաւորու-  
հիներ էին<sup>2</sup>: Նրանք իրենց հետ բերել էին Ս. Գրիգոր Լուսաւորչի  
մասունքները: Այնուամենայնիւ, անկախ այս աւանդութեան հա-  
ւաստիութիւնից, կասկածից դուրս է հայկական համայնքի առկա-  
յութիւնը:

Յետագայ ժամանակներում Ս. Գրիգորը հռչակուեց Նէպոլի,  
ինչպէս նաեւ նախապէս նշուած մօտիկ Նարդոյի պաշտպան Սուրբ:  
Ս. Աթոռի կողմից նոյնիսկ հաստատուած էր մի ժամերգութիւն, որը  
կատարում էին Սուրբի անունը կրող վանքի մայրապետները:

Նէպոլում մի հայկական եկեղեցու գոյութեան մասին վկայու-  
թիւններ կան XIV դարի առաջին կէսին: Եկեղեցին ընծայուած էր Ս.  
Հոգուն ու հաստատուած էր Յովհաննէս XXII-ի 1328 թ. օգոստոսի 1-ի  
կոնդակով՝ Սալեռնոյի համայնքի հետ միասին: Այս կոնդակով Պա-  
պը հայ վանականներին արտօնում էր զանգ ունենալ իրենց մատ-  
ուան մէջ, որ սկսել էին կառուցել<sup>3</sup>: Համայնքը յիշուած է նաեւ Գրի-  
գոր XI-ի 1377 թ. յունիսի 8-ի կոնդակում, որով մեծաւորին նշանա-  
կել է Պապական ժամբէջ<sup>4</sup>: Համայնքն այստեղ գոյատեւել է մինչեւ  
1448 թ.<sup>5</sup>:

Սուրբ Ստեփանոս եկեղեցու մասին զբառումը Ալիշանը գտնում  
է մի հին մատեանի ձեռագրում, որի մէջ ջնջուած էին տեղի եւ թուա-

<sup>1</sup> Ալիշան Հ. Ղ., Սիսական, էջ 455:

<sup>2</sup> Summonte G. A., Istoria della città e Regno di Napoli, t. II, pp. 54, 221; Metafraste S., Vita e miracoli di S. Gregorio Arcivescovo e Primate d'Armenia, Napoli, 1630, pp. 121-157, 179-188.

<sup>3</sup> Fontes, serie III, vol. VII, t. II, p. 197; Van Den Oudenrjin M. A., Linguac Haicanae, pp. 262-263.

<sup>4</sup> Fontes, serie III, vol. XII, Acta Gregorii Pp. XI (1370-1378) Vat., 1966, p. 433.

<sup>5</sup> Van Den Oudenrjin M. A., op. cit..

կանի ցուցումները<sup>1</sup>: Նրա կարծիքով, այն իտալիայում ամենահին Հայկական եկեղեցիներից մէկն է եւ ամենայն հաւանականութեամբ կառուցուել է XIII կամ XIV դարի սկզբներին:

**Ձեռնովա.** - Բարթոլղիմեան վանականներ: Մտնելով XIV դար, պէտք է կանգ առնել մի եղելութեան վրայ, որ յետագայում կարեւոր նշանակութիւն ձեռք բերեց Հայկական Համայնքների պատմութեան եւ մանաւանդ Հայկական եկեղեցիների պատմութեան Համար:

Այս եղելութիւնը Մուլթեղոյի շրջանում Ձեռնովայի Բարսեղեան Հայկական միաբանութեան Հիմնումն էր, որ շուտով, միջնադարի միաբանութիւնների օրինակով, պիտի ունենար բաւական ամուր եւ կենտրոնացուած մի կազմակերպութիւն:

Այս նոր Հիմնարկէքը կարճ ժամանակում ապշեցուցիչ զարգացում է արձանագրում եւ տարածում է իտալիայի շատ քաղաքներում: Նրա Հիմնադիրներն են մի քանի Բարսեղեան Հայ կրօնաւորներ Կիլիկիոյ Սեւ լեռից, որոնք Արեւմուտք էին եկել կրօնական Հաւածանքների պատճառով<sup>2</sup>: Նրանց Հիմնադրութեան վկայական կարելի է Համարել Կղեմէս V-ի 1307 թ. փետրուարի 20-ի կոնդակը, որը նրանց տալիս էր Ձեռնովայում եկեղեցի կառուցելու Հնարաւորութիւն<sup>3</sup>: Եկեղեցին ընծայուած է աւանդութեան Համաձայն Հայաստանում իր առաքելութիւնն իրագործած Ս. Բարդուղիմէոսին: Այս պատճառով նոր Հեղինակների մօտ այս կրօնաւորները յաճախ յիշուում են Բարդուղիմեաններ անունով: Սկզբում նրանք, դեռ չունենալով կենտրոնացուած կազմակերպութիւն, Հետեւում էին Ս. Բարսեղի կանոնադրութեանը: Հազնում էին արեւելեան տարազ՝ մուգ կապոյտ գոյնով՝ վրայից կրելով փիլոն եւ սեւ ուրար՝ վեղարով: Նրանց արագ զարգացումը եւ տարածումը իտալիայում մեր կարծիքով իր բացատրութիւնն է գտնում երկրում բազմաթիւ Հայկական ծաղկուն կրօնաւորական Հասարակութիւնների առկայութեամբ, որ դեռեւս նախորդ դարում Հայ վանականութեանը ճանաչել տուեց իտալիայում: Ինքնին Ձեռնովայում Հայկական վանքի Հիմնումը ինչ-որ եզակի կարեւորութիւն չէր ունենալու եւ պիտի Համալրէր նախապէս Հիմնուած վանքերի շարքը, եթէ այն մի նոր մղում, նոր կենսունակութիւն չՀաղորդէր Հայ վանականութեանն իտալիայում, որը

<sup>1</sup> Ալիշան Հ. Ղ., Սիսուան, էջ 372:

<sup>2</sup> Եարտըմեան Տ., Զեսունի Կարմիր Վանքը, «Բազմավեպ», 133 (1975), էջ 137-146: Ալիշան Հ. Ղ., Սիսուան, էջ 405-411:

<sup>3</sup> Fontes, serie III, vol. VII, t. I, p. 19.

1356 թ. յանգեցրեց նրանց միաւորմանը՝ մի ընդհանուր մեծաւորի կամ վանահօր առաջնորդութեան ներքոյ:

Վանահայր ընտրելու իրենց նախաձեռնութեամբ կատարած մի առաջին փորձից յետոյ, որը Ս. Աթոռը չի հաստատել<sup>1</sup>, Հայ վանականները, կարգապահական պատճառներից դրդուած, դիմում ներկայացրին Ս. Աթոռին: Այս անգամ Իննովկենտիոս VI Պապը ընդառաջեց նրանց ցանկութեանը, եւ ինքն անձամբ նշանակեց Վանահօրը՝ խտլացի դոմինիկեան մի կրօնաւորի: Խնդրագիրը ներկայացուած էր Հռոմի, Միլանի, Սալեռնոյի, Անկոնայի, Ջենովայի, Բոլոնիայի, Պադովայի, Սիենայի, Պերուջայի, Ռիմինիի, Վենետիկ Կաստելլոյի տների վանահայրերի կողմից<sup>2</sup>: Այնտեղ պակասում էին Ֆլորենցիայի եւ Ուրբեկետայի (Սիենայ) տների վանահայրերը, որոնք ութ տարի առաջ Կղեմէս VI-ին բողոքել էին մի քանի վանքերի կողմից առանց Ս. Աթոռի թոյլատրութեան կատարուած ընդհանուր Մեծաւորի ընտրութեան դէմ:

Այնուամենայնիւ Ֆլորենցիայի տունը յետագայում յարում է միաւորմանը, որովհետեւ, ինչպէս ասացինք, այնտեղ գումարուում են տարբեր ընդհանրական ժողովներ:

Միաւորումը իրագործելու համար հարկ էր, որ հայերը հրաժարուէին Բարսեղի Կանոնից եւ որդեգրէին Ս. Օգոստինոսինը՝ Դոմինիկեանների սահմանադրութեան հետ, քանի որ հայոց վանական ականդութիւնը չէր ճանաչում կենտրոնացուած կազմակերպութիւնը, ինչպէս այն չէր ճանաչում նաեւ Ս. Բենեդիկտոսի Արեւմտեան վանականութիւնը:

Սակայն նրանք շարունակեցին իրենց համարել Բարսեղեաններ, նաեւ հայերէնը պահպանեցին արարողութիւններում, ինչպէս տեսանք Ֆլորենցիայում, XIV եւ գուցէ XV դարերի ամբողջ ընթացքում: Սակայն սրանից սկսեալ, խտլական անունները պիտի դառնան աւելի յաճախակի, եւ միաբանութիւնը գործնականում պիտի լինի իտալացած՝ մինչեւ վերջ պահպանելով «Հայ վանականներ» անուանումը: Միւրթար Աբբասօրն անշուշտ ծանօթ էր այս հոգեւորականների պատմութիւնը, երբ իր կարգի ընդունման համար որպէս անհրաժեշտ պայման էր դնում իր թեկնածուների հայտնութիւնը:

<sup>1</sup> Fontes, serie III, vol. IX, Acta Clementis Pp. VI (1342–1352), lett. 12 Marzo, 1348, pp. 204–206.

<sup>2</sup> Fontes, serie III, vol. X, Acta Innocentii Pp. IV, Vaticanis, 1961, lett. 20 Febbr.. 1335, pp. 109–110, lett. 30 Giugno, 1356, pp. 140–141, lett. 7 Luglio, 1356, pp. 142–144.

Հայ վանականների կարգը, որի առաւելագոյն ծաղկման շրջանը XIV դարի երկրորդ կէսն էր, կամաց կամաց ընթացաւ դէպի անկում, նաեւ ներքին երկպառակութիւնների ու վէճերի պատճառով:

Իննովկենտրոս X-ի 1650 թ. հոկտեմբերի 29-ի կոնդակով Միաբանութեան լուծարման պահին հաշոււմ էին հազիւ 40 կրօնաւորներ՝ այդ ժամանակների համար շատ փոքր թիւ՝ սիռուած Զենովայի, Պոնտեկուերոնէի (Ս. Պետրոս), Միլանի (Ս. Կոսմայ, Ս. Դամիանոյ) եւ Պաւիայի (Ս. Կարոլոս, Ս. Զուստինոյ) վանքերում<sup>1</sup>:

Ս. Բարդուղիմէոսի վանքը եւ եկեղեցին Զենովայի Սերենիսսիմայի (Զենովայի և Վենետիկի Հասարակասլետութիւններին տրուած կոչումը, որի բառային նշանակութիւնն է՝ Անդորրաւէտ Տէրութիւն) 1655 թ. յունուարի 1-ի հրովարտակով տրոււմ են Բառնաբիտներին: Հայ վանականների իտալացումից (ձուլումից) յետոյ էլ, մինչեւ XVIII դար, Զենովան մնում է Հայ վաճառականների առեւտրական գլխաւոր կենտրոններից մէկը:

Բոլոնիա եւ շրջակայք. - Էմիլիա նահանգի այս կենտրոնական քաղաքը Իտալիայում հայկական գաղթօջախների պատմութեան մէջ յիշուում է XIV դարի սկզբից: Ալիշանը 1303 թ. վկայութիւններ է գտնում Ս. Հոգու, Ս. Աստուածածնի, Ս. Յովհաննէս Մկրտչի անուններով, որոնք պատկանում էին նոյն եկեղեցուն<sup>2</sup>: Այսպէս, 1381 թ. մի ձեռագրում միացած ենք տեսնում Ս. Հոգու եւ Ս. Կոյսի անունները, բացի այդ, այնտեղ ոչ մի տեղեկութիւն չկայ երեք տարբեր եկեղեցիների կամ Ս. Մկրտչի անունով եկեղեցու մասին: Բոլոնիայում են արտադրուել Երեւանի Մատենադարանի N 4553 Աստուածաշունչը (1324 թ.) եւ Երեւանի Մատենադարանի N 2705 Աստուածաշունչը (1368 թ.): Այստեղ 1324 թ. հանդիպում ենք Թովմաս անունով մի եպիսկոպոսի, որն օծում է Զաքարիա քահանային եւ նրան առաջարկում սպասարկել վանքն ու եկեղեցին:

Նոյն եպիսկոպոսը տարիներ առաջ՝ 1311 թ., յիշուում է մի շուռապրում: Նա Վենետիկից վերութիւն էր ուղարկել Կոստանդնուպոլիսի (Կոստանդին III Կեսարացի, 1307–1323): Այս շուռապրում Թովմասը կոչուած է Իտալիայի եպիսկոպոս: Սրանից Ալիշանը հետեւութիւն է անում, որ Իտալիայի հայերը այն ժամանակներում

<sup>1</sup> Magnum Bullarium Romanum, ed. Laertii Cherubini, tom. V, Luxemburgi, 1727, pp. 477–478.

<sup>2</sup> Ալիշան Հ. Ղ., Սիսուան, էջ 372:

ունէին սեփական նուիրապետութիւն<sup>1</sup>: Իրօք, մեծաւոր առաջադրելը իրաւական գործընթաց է, եւ Իտալիայի եպիսկոպոսի տիտղոսը այլ հանգամանքներում բաւարար բացատրութիւն չէր գտնի: Յետագայում, 1341 թուի մի վաւերաթղթում, հանդիպում ենք «Հայերի Արքեպիսկոպոս» արտայայտութիւնը, որ թւում է՝ արժեւորում է այս ենթագրութիւնը<sup>2</sup>, մի տիտղոս, որ տեսանք արդէն Պերուջայում 1385 թուին վախճանուած Թովմաս եպիսկոպոսի շիրմի վրայ<sup>3</sup>:

Ալիշանը մի եկեղեցի է նշում նաեւ Ֆերրարայում, 1302–1342 թուականների միջեւ՝ նուիրուած Սրբուհի Աննային<sup>4</sup>: Մի այլ եկեղեցի նա յիշում է Օզիմոյում՝ նուիրուած Կարմեղոսի Աստուածամօրը եւ Ս. Բարսեղին, որից 1496 թ. մի վկայութիւն է մնացել<sup>5</sup>:

Հայատների եւ եկեղեցիների մասին անորոշ եւ անթուակիր նշումներ են գտնուում նաեւ Իմոլայում, Ֆորլիում, Պեզարոյում (թէ Պեսկարա<sup>6</sup>): Չեն յիշում նոյնիսկ եկեղեցիների եւ վանքերի անունները: Մի աղօտ վկայութիւն ենք գտնում միայն Ֆորլիի եկեղեցու մասին՝ նուիրուած Սրբուհի Աննային եւ Սուրբ Բենեդիկտոսին<sup>7</sup>:

Մինչդեռ Ֆաւենցայի համար ունենք աւելի ճշգրիտ տուեալներ: Կապելլետտին գրում է. «Երկու տարի անց, (1374) յուլիսի 14-ին, Բարսեղեան երկու հայ վանականներ քաղաքում իրենց համար մի եկեղեցի եւ մի վանք կառուցելու թոյլտուութիւն ստացան Եպիսկոպոսից եւ հոգեւոր խորհրդից, որոնք ներգրաւուած են այժմ դոյութիւն չունեցող Սուրբ Էռտրոպիոյ ծխում, պայմանով որ ամէն տարի Ս. Պետրոսի տօնին, մէկ լիպրա մոմ եպիսկոպոսին եւ մէկ լիպրա՝ հոգեւոր խորհրդին տալով՝ ցոյց տան իրենց օժանդակութիւնը»<sup>7</sup>:

Գուբբիոյ, Ֆարրիանոյ. – Գուբբիոյում հայ վանականներն ընդունուեցին Ֆրանչեսկոյ II եպիսկոպոսի կողմից (1312–1326), որը նրանց արտօնագիր տուեց իրենց համար մի եկեղեցի եւ մի վանք կառուցելու համար եւ խստօրէն կարգադրեց, որ լատինական ծէսով առաջնորդուող կամ իտալացի ոչ մի անձ այնտեղ որեւէ իրաւունք

<sup>1</sup> Ալիշան Հ. Ղ, Հայ-Վենետ, մաս I, էջ 75:

<sup>2</sup> Ալիշան Հ. Ղ, նշ. աշխ., մաս II, էջ 212–213:

<sup>3</sup> Van Den Oudenrjin M. A., Linguae Haicanae, pp. 271–272.

<sup>4</sup> Ալիշան Հ. Ղ, Միտում, էջ 372:

<sup>5</sup> Նոյն տեղում:

<sup>6</sup> Նոյն տեղում:

<sup>7</sup> Cappelletti G., Le Chiese d'Italia dalle loro origini sino ai nostri jorni, vol. II, Venezia, 1844, p. 276.

չունենայ: Եկեղեցին անուանուեց Սանտ'Անջելոյ դելլա Տոչէ<sup>1</sup>: Եւ Համարեա նրան ժամանակակից, Ս. Հոգուն նուիրուած Հարեւան Ֆարրիանոյի կացարանը յիշատակուեմ է 1319-ին արտագրուած մի ձեռագրում<sup>2</sup>:

Ճագիոլի (Մանֆրեդոնիա), Մատերա. - Նորից իջնելով դեպի Հարաւ, Ճագիոլիում ակնատես եմք լինում մի Հետաքրքիր եղելութեան: Այն յայտնուեմ է 1312 թ. օգոստոսի 1-ին Կղեմէս V-ի մի նամակի շնորհիւ: Հարցը այդ ժամանակ եկեղեցական պատմութեան Համար բաւական կարեւոր մի գրութեան մասին է. Պապը գրուեմ է Նէպոլիի եւ Բրինդիզիի եպիսկոպոսներին (լատիներէն, էջ 23, պարբերութիւն II, սող 5-14):

Յաջորդաբար, Կղեմէս V-ը պատուիրուեմ է Նէպոլիի եւ Բրինդիզիի եպիսկոպոսներին մի Հարցաքննութիւն կատարել եւ խստորէն պատժել ինկվիզիտորին, եթէ Հաստատուէր Հայերի ուղղափառութիւնը: Պապն իր նամակը եղրափակուեմ է խստիւ պատուիրելով, որ Հայ կրօնաւորները լրիւ ազատ լինեն իրենց գործողութիւններում՝ ըստ իրենց ծէսի կարգ ու կանոնին<sup>3</sup>:

Այս նամակին անդրադարձանք երկու պատճառով. մի կողմից, քանի որ փաստուեմ է միջավայրի որոշակի փակ մտայնութիւնը, որ ճիշտ այդ ժամանակներում, ինչպէս կը տեսնենք, պիտի թափանցէր նաեւ Հայաստան: Միւս կողմից, այն ժամանակուայ Հռոմէական Աթոռի Հաւասարախոհութեան եւ լայնամտութեան գեղեցիկ վկայութիւնն է: Դժբախտաբար յետագայ ժամանակներում պապական Հոգաբարձութիւնը չկարողացաւ միեւնոյն կորովով և վճռականութեամբ դիմադրել յետադիմական Հոսանքների ոտնձգութիւններին, որոնք յաճախակի էին և յաճախ յաղթեցին:

Կարեւոր է այն հանգամանքը, որ Հայ եւ Հռոմէական Եկեղեցիների յարաբերութիւնների մէջ վերջինս լայն եւ ըմբռնող վերաբերմունք ցուցաբերեց առաւել սկզբնական ժամանակաշրջանում, քան յետագայ դարերում:

Կղեմէս V-ի նամակից հետեւում է, որ Ճագիոլիի եկեղեցին դուրսէն ունէր 1312 թուականից առաջ:

Համարեա նոյն տարիների կտակներից մէկում նշուած է Մատերայում Հայերի Ս. Մարիամ եկեղեցին, Սանկտա Մարիա դէ Արմե-

<sup>1</sup> Ibid., vol. V, Venezia, 1846, pp. 425 s.

<sup>2</sup> Ալիշան Է. Ղ., Սիսուան, էջ 372:

<sup>3</sup> Fontes, serie III, vol. VII, t. I, pp. 102, 102 s.

նիխ, որպէս Բենեդիկտեանների եկեղեցի<sup>1</sup>: Հետեւաբար կարելի է մտածել, որ այն հայերին պատկանած լինի աւելի վաղ ժամանակներում: Իրոք, նրա մասին տեղեկութիւններ կան XI դարից: Ուստի դա պէտք է Խտալիայում հայկական հնագոյն եկեղեցիներից լինի: Այն օտտուած էր Ուրբանոս II-ի շնորհած (1088–1099) մի յատուկ կոնդակով, որն այստեղ էր այցելել մի բացառիկ հանդիսութեան առիթով՝ Ս. Զատիկուայ ութօրէքին: Եկեղեցին յիշուում է նաեւ յետագայ վաւերաթղթերում, XIV, ինչպէս նաեւ XV դարերում: 1864-ին վանքը փակուեց, և եկեղեցին միացուեց թեմի Ժառանգաւորանոցին, որովհետեւ վանքը երկար ժամանակ վանականներ չէր ունեցել:

Յիշենք վերջապէս, որ թերակղզու հարաւարեւելեան այս անկիւնում, յատկապէս Փուլիէում, եղել են բազմաթիւ հայ եւ արեւելեան վանքեր, որոնք նկարագրուած են Վինչենցոյ Գալլոյի կողմից նրա «Թեբայիդէ իտալիանոյ» (Իտալական Թեբայիդէ) երկասիրութեան մէջ (Նէպոլ, Ալբինա 1925):

Պաղտվա. - Վերադառնալով հիւսիս, Վենետոյի հողերում՝ Պաղտվայում Ալիշանը գտնում է հայ վանականների կողմից 1308 թուին կառուցուած Նազարէթի Ս. Աստուածածին եկեղեցին, որը 1326 թ. յիշատակուում է Յովհաննէս XII-ի կողմից<sup>2</sup>: Այն կոչուում էր նաեւ Սանտա Մարիա Արմենիորում եւ գտնուում էր Օնեիսանտի արուարձանում (այսօր Բուրանոյ փողոց): 1520 թ., երբ այդտեղ փոխադրուեցին Ֆրանցիսկեան քոյրերը, եկեղեցին անուանուեց Սանտա Էլենա Էնսելմինի:

Հայ վանականների վայելած ժողովրդականութիւնը Օսպիտալիերի դի Սան Զովաննի դի Զերուզալեմմէի միաբանութեան վանականների նախանձն էր շարժում, որոնք ուզում էին հայերին արդիւել հասարակաց պատարագ մատուցել եւ հաւատացեալներին պաշտամունքի հրաւիրել: Իր յիշեալ նամակում Յովհաննէս XII-ը ստանձնում է հայերի պաշտպանութիւնը<sup>3</sup>:

Թւում է, թէ 1348 թ. հայերն իրենց տեղը գիշում են Օլիվեթաններին: Այնուամենայնիւ 1406 թ. Պաղտվայում յիշատակուում է ոմն Ֆրանչեսկոյ դէ Պերուզիոյ՝ որպէս հայ վանականների վանահայր,

<sup>1</sup> Այս մասին տես Tommaselli M., La chiesa di santa Maria de Armeniis a Matera. RAA, N 10.

<sup>2</sup> Ալիշան Հ. Ղ., Միսուան, էջ 372: Fontes. serie III, vol. VII, t. II, Lett. al vescovo di Padova, 14 Ott., 1326, pp. 177–179.

<sup>3</sup> Fontes, ibid.

ապա 1420-ի մի վաւերաթղթում յիշուում է նրանց եկեղեցիներից մէկը՝ Ս. Բարսեղի անուանով<sup>1</sup>:

1326 թ. Պաղովայում հանդիպում ենք Պետրոս Նազարէթի եպիսկոպոսին, որը, ինչպէս ցոյց է տալիս եկեղեցու արտաքին դռան յուշատախտակը, մասնակցել է Ս. Լորենցոյ եկեղեցու օծման արարողութեանը:

Վենետիկ. - Վենետիկում հայկական եկեղեցու մասին առաջին յիշատակութիւնը 1348 թուականին է՝ բաւական ուշ, եթէ նկատի ունենանք, որ «Ազրիականի թաղուհին» վաղ միջնադարից ի վեր Արեւելքի հետ առեւտրի գլխաւոր կենտրոններից մէկն էր, եւ Կիլիկիոյ հայերի եւ վենետիկեցիների յարաբերութիւնները XIV դարի կէսերից դեռ շատ աւելի վաղ են հաստատուել<sup>2</sup>:

Եւ իրօք, արդէն XIII դարի առաջին կէսին հայէրը Վենետիկում ունէին Մարկոյ Ձիանիի կողմից նուիրաբերուած իրենց տունը: Աւելին, ըստ տարբեր վկայութիւնների, վերջինիս հայրը՝ Դոժ Սեբաստիան Ձիանին (1172–1179) էր այն նուիրել, իսկ յետագայում՝ 1253 թ. նուիրատուութիւնը վերահաստատուել էր որդու կողմից<sup>3</sup>: Ուստի տրամաբանական է ենթադրել, որ այդ տարիներին Վենետիկում էլ լինէր մի մատուռ, ինչպէս տեսանք միւս քաղաքներում: Թւում է՝ այս ենթադրութիւնը հաստատուում է նաեւ մի քանի պատմական վաւերաթղթերում՝ մի ծեր հայի կտակում, որը մի որոշ գումար էր յատկացրել ազգակիցներին՝ մի փոքր եկեղեցի կառուցելու նպատակով: Սա կատարուել էր Ձիանիի կտակից քիչ աւելի վաղ կամ յետոյ:

1348 թուի եւս մի կտակում յիշուում է հայ վանականների Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին:

1434 թ. ենք ունենում Ս. Խաչ եկեղեցու մասին առաջին յիշատակութիւնը Լանտենէ փողոցում, որ յետագայում վերանուանուեց «Հայերի փողոց»: Այն վերանորոգուեց եւ ընդարձակուեց 1496, 1510, 1520, 1689 թուականներին<sup>4</sup>: Ս. Խաչը միջնադարի միակ եկեղեցին է, որտեղ հայկական ծէսով պաշտամունքային արարողութիւն էր կատարուում:

<sup>1</sup> Մարգսեան Պ. Գ., Հայ հին նշմարներ Պաղոայի մէջ, «Բազմավէպ», 85 (1928), էջ 338:

<sup>2</sup> Ալիշան Հ. Ղ., Հայ-Վենետ, մաս I, էջ 12: Նոյնի, Սիսուան, էջ 358: Langlois V., Cartulaire, pp. 85 s., 109 ss.

<sup>3</sup> Ալիշան Հ. Ղ., Հայ-Վենետ, մաս I, էջ 67:

<sup>4</sup> Նոյն տեղում, էջ 68, 78: Ալիշան Հ. Ղ., Հայ-Վենետ, մաս II, էջ 180–181: Խաչիկեան Լ., XV դարի հայերեւմտեան ժողովրդի յիշատակարաններ, մաս I, Երեւան, 1955, էջ 435:

Վենետիկում հայերն ունէին նաեւ իրենց գերեզմանոցը՝ Ս. Գէորգ կղզում, որի համար 1675 թ. պաշտպանեցին իրենց սեփակա-նութեան իրաւունքները, որ ձեռք էին բերել դեռ 400 տարի առաջ: Նշելով այս հանգամանքը, Ալիշանը հարց է տալիս ինքն իրեն. «Իսկ հանգուցեալների շիրմաքարն՞րը» եւ պատմաբանի իր շնչով աւելացնում է. «Աւա՛ղ, մեծ մասամբ դրանք պէտք է փնտրել այդ հիանալի եկեղեցւոյ փառաւոր զանգակատան ներկայ հիմքի տակ», եւ, իրոք, կղզում կատարուած վերանորոգումները յետպատերազմեան շրջանին իրաւունք էին տալիս նրան այդպէս ասել, քանի որ այդ ընթացքում յայտնաբերուեց 1570 թուականի մի շիրմաքար<sup>1</sup>:

Վենետիկի համայնքն իր առեւտրական եւ մշակութային գործունէութեամբ ամենաերկարակեացներից մէկը եղաւ Իտալիայի համայնքների մէջ: Սրան կանդրադառնանք քիչ յետոյ: Ինչ վերաբերուած է Մխիթարեան հայրերին եւ Ս. Ղազար վանքին, արդէն ասացինք, որ այն սկիզբ է դրել հայ-իտալական յարաբերութիւնների նոր ժամանակաշրջանին: Յիշենք միայն, որ Ս. Ղազար կղզու սեփականաշնորհումից առաջ Մխիթարը եւ իր վանականները երկու տարի բնակուել են Սան Մարտինոյ եկեղեցուն կից մի տան մէջ և ժամերգել ու պատարագել նոյն եկեղեցում:

**Մանտովա.** - Արդէն խօսել ենք Մանտովայում Սան Սիմէոնէ Արմէնոյի մեծարման մասին Պոլիբոնէի Բենեդիկտեան եկեղեցում. նրա գերեզմանը դէպի իրեն էր ձգում հայ ուխտաւորներին: Աւետարանի XIV դարի ձեռագրերից մէկում յիշուած է, որ այնտեղ կացարան էլ է եղել<sup>2</sup>:

**Միլանո, Պավիա, Պոնտեկոլոնէ.** - Միլանում հայկական վանքի յիշատակութիւնը փորձուած ենք գտնել 1344 թ. Կղեմէս VI-ին ներկայացուած մի խնդրագրի մէջ<sup>3</sup>: Սա յետագայում երեւում է վանքերի այն շարքում, որոնց համար Իննովկենտիոս VI-ին խնդրում են հիմնել իրենց մենաստանը: Այնտեղ միաբանական ընդհանուր ժողովներ եղան 1482, 1496, 1501, 1507, 1518 թուականներին<sup>4</sup>: Մենաստանը իր եկեղեցու հետ միասին կրում էր Ս. Կոզմաս եւ Դամիանոս

<sup>1</sup> Ալիշան Հ. Ղ., Հայ-Վենետ, մաս I, էջ 71:

<sup>2</sup> Լալաբան Ե., Յուցակ Վասպուրականի հայերէն ձեռագրաց, Թիֆլիս, 1915, Կտուց Անապատի հաւ. N 117 (234), 251-254: Խաչիկեան Լ., XIV դարի յիշատակարաններ, էջ 272:

<sup>3</sup> Fontes, serie III, vol. IX, p. 62 s.

<sup>4</sup> Van Den Oudenrjin M. A., Linguae Haicanae, p. 262.

անունը եւ ինչպէս տեսանք, այն, Ձեռնովայի վանքի հետ միասին, ամէնից երկարակեաց վանքը եղաւ:

1657 թ. այն տրուեց Օրոստինեանների միաբանութեանը եւ ապա անցաւ Յիսուսեաններին:

Վանքի պատմութեան կարեւոր իրադարձութիւնների շարքում յիշենք անուանի կարդինալ Գրեգորիոյ Բարբարիկոյի այցելութիւնը 1583 թ., որ կատարուեց Գրիգոր XIII-ի հրամանով: Այցելութեան պահին, բացի վանահօրից, այնտեղ եօթ վանական քահանաներ, մէկ կիսասարկաւաք, մէկ ուխտեալ, երկու նորընծաներ եւ երկու աշխարհական եղբայրներ կային<sup>1</sup>:

Պաւիայի (1613) եւ Պոնտեկոլոռնէի (Տորտոնայի թեմ, Պիեմոնտէ նահանգում) վանքերը, որոնք յիշուում են իննովկենտրոս X-ի փակման կոնդակի մէջ<sup>2</sup>, պատկանում են միաբանութեան վերջին ժամանակաշրջանին եւ, արդէն երկար ժամանակ, գործնականում իտալացած լինելով, չեն արտացոլուած Ալիշանի ցուցակում: Պաւիայի Համալսարանի գրադարանում հայերէն մի ձեռագիր է պահուում (N 346), որ «Պատրիս Սապիենտիա» (Հօր իմաստութիւն) անունով ծանօթ միջնադարեան լատիներէն պոէմի թարգմանութիւնն է<sup>3</sup>:

Պարմա. - Հայ վանականների՝ Պարմայում երեւալու առաջին յիշատակութիւնները պատկանում են 1319 թ.: Նրանք այնտեղ՝ Սան Բագիլիոյ թեմին պատկանող Կամպոյ դի Պոնտեում, մի տուն են գնում, Վալլամբրոզիանայի Բենեդիկտեանների վանքի մօտ կառուցում իրենց սեփական եկեղեցին եւ ընծայում Ս. Բարսեղին: Իննովկենտրոս VI-ին ուղղուած վանքերի միաւորման մասին խնդրագրում ցուցակագրուած վանքերի շարքում այս վանքի ստորագրութիւնը չի երեւում<sup>4</sup>:

Պիստոյա. - Պիստոյայում Հայ վանականները հաստատուում 14 1340 թ. կամ գուցէ եւ աւելի վաղ՝ Ս. Օնովրիոսի շատ հին աղօթարանում, որին աւելացրին Ս. Բարսեղինը: Նրանք այնտեղ մնացին Համարեա մինչեւ XV դարի եօթանասունականները, երբ լքեցին Պիս-

<sup>1</sup> Lettera di Gregorio XIII al Card. Carlo Borromeo, 12 Ott., 1580, արտատպում էt Giulini, Memorie storiche, I, pp. 470-471. Փաստաթղթի պատճենը պահուում է Ս. Ղազարում՝ Հ. Ղ Ալիշանի անձնական դիվանում:

<sup>2</sup> Romualdo P. Maria, Flavia Pavia Sacra, parte I, Pavia, 1699, p. 76.

<sup>3</sup> Van Den Oudenrijn M. A., Eine armenische Fassung der "Patris Sapientia", «Հանդէս Ամսօրեայ», 64 (1950), էջ 472-476:

<sup>4</sup> Uluhogian G., Il Fondo armeno della Biblioteca Palatina di Parma, in Primo Simposio internazionale di arte Armena, Venezia, 1975, pp. 747-761.

տոյայի, ինչպէս նաեւ Բոլոնիայի, Պադովայի եւ իրենց պատկանող միւս վանքերը:

Յետագայում այնտեղ հաստատուեց Ս. Պետրոնիոսի անունը կրող աշխարհական մի Ընկերութիւն, որը կոչուում էր նաեւ Հայերի ընկերութիւն: 1614 թ. Ալեսսանդրոյ Կաչչա եպիսկոպոսի կողմից այստեղ ընդունուեցին Սան Ֆրանչեսկոյ դի Պաոլայի, Յրատի Մինիմի վանականները, որոնք վերանորոգութիւններ կատարեցին եւ նկարագարդեցին եկեղեցին<sup>1</sup>: Պիստոյայում գոյութիւն ունի նաեւ Հայերի անունով մի փողոց, որը Սան Մարկոյի արուարձանից դուրս է գալիս դէպի Սան Լորենցոյի հրապարակը:

Լուկկա. - Ս. Դաւինոյ Արմենոյի գերեզմանը իրեն էր ձգում շատ հայ ուխտաւորներ: Նրանց մէջ կային նաեւ շատ նշանաւոր անձնաւորութիւններ, ինչպէս նշում են Սուրբ Միքայէլ եկեղեցու դիւանատան նիւթերը: Նրանցից նշենք Խոջա Սաֆարին, որը 1610 թ. Պարսկաստանի Շահի դեսպանն էր, եւ այլ Հայերի հետ միասին մեկնեց Հռոմ: Ուղուրլեանը յիշում է նաեւ Լուկկայի աղքատ տան աղքատ սենեակը, որն ունէր մի փոքրիկ խորան, պատի վրայ խաչերէն կարճ արձանագրութիւն կար, որը նշում էր Սուրբ Դաւինոյի մահուան տեղը<sup>2</sup>:

Վեզա. - Պիզայի վանքի հիմնադրումը հասնում է մինչեւ 1320 թ.: Վանքը գտնւում է քաղաքի արեւմտեան ծայրամասում՝ Անոյի աջ ափին: Այն Հայերի սեփականութիւնն էր հարիւր տարուց աւելի, ինչպէս վկայում է 1427 թ. մի տապանաքար: Մի քանի տարի յետոյ անցնում է «Մարիամի ծառաներ»ի միաբանութեանը<sup>3</sup>: Ընծայուելով Ս. Անտոն Աբբային, XV դարի երկրորդ կէսերին դառնում է զբաղւած մի ծաղկուն գործունէութեան կենտրոն: Դրա մէջ իր մասն ունէր նաեւ հայ արքեպիսկոպոս Գրիգորը: Այստեղ նա ունէր իր մշտական թնակարանը (1353-1372): Ինքն անձամբ ձեռագրեր էր արտագրում: Մեզ են հասել այս վանքում արտագրուած ձեռագրեր, որ պահպանւում են Վիեննայի Ազգային գրադարանում, Միլանի Ամբրոզիանայում եւ Ֆլորենցիայի Լորենցիանայում: Գրիգոր արքեպիսկոպոսի՝ Ամբրոզիանայում գտնուող ձեռագրերից մէկը մեզ տեղեկացնում է մի երիտասարդ վանականի՝ Աւետիս էրզրումեցու մասին, որ յետա-

<sup>1</sup> Fioravanti J. M., Memorie storiche della città di Pistoia, Lucca, 1758, cap. IV, pp. 75, 76.

<sup>2</sup> Ուղարկւան Հ. Մ., նշ. աշխ., էջ 238-239:

<sup>3</sup> Matthaejus P. M. A., Ecclesiae Pisanae Historia, t. II, Licae, 1772, p. 92.

գայում քարոզիչներին միաբանութեան մէջ համբաւ պիտի ձեռք բերի որպէս աստուածաբան եւ բանաստեղծ<sup>1</sup>:

Պիզայի հայ համայնքի պատմութեան մէջ կայ նաեւ յիշարժան մի այլ իրադարձութիւն. դա Չերթոզայի, այսինքն՝ Կարթուսեան վանքի հիմնադրումն է 1366 թ. մի հայ վաճառականի նուիրատուութեան շնորհիւ: Նրա անունը լատինացուած ձեւով Պետրուս Միրանտիս է, այսինքն՝ Պետրոս Միհրանի (Միհրանի որդի):

Նա յիշատակուած է Պիզայի դիւաններում որպէս Պիզայի քաղաքայի 1282 թուից: Նրա հայրը՝ Ուզոլինոյ Ուզոլինոն՝ ձեւափոխուած հայանուամբ գուցէ Յարութիւն, որ յաճախ հնչում էր Արութին կամ Արթին: Իրօք Պետրոյի հայութիւնը դիւանական փաստաթղթերից զատ փաստարկուած է նաեւ իր նկարի արձանագրութեան շնորհիւ, որը պահուած է յիշեալ վանքում<sup>2</sup>:

Այս ամբողջը պարզապէս փաստուած է, որ հայ վանականներից շատ առաջ Պիզայում արդէն գոյութիւն ունէր մի բարգաւաճ հայկական համայնք, որի հետքերը դեռ կարելի էր յայտնաբերել XVІІ դարի վերջին:

Լիւոռնոյ. - Իտալիայի բոլոր հայկական համայնքների մէջ Լիւոռնոն Վենետիկի հետ միասին բախտ ունեցաւ լաւագոյնս ուսումնասիրուելու մեր կողմից բազմիցս յիշուած Գերպ. Մեսրոպ Ուզուրլեանի կողմից<sup>3</sup>: Այն միաժամանակ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում ամենանոր կազմաւորուած համայնքն էր: Հայերը այնտեղ սկսում են ոտք դնել XVІ դարի երկրորդ կէսից եւ 1591-ին է, որ Տոսկանայի Մեծ Դուքսը՝ Ճերզիմանդ 1-ը (1587-1609), տալիս է այն նշանաւոր հրովարտակը, որով այլ ազգութիւնների հետ միասին հայերին եւս հրաւիրում է հաստատուելու Լիւոռնոյում՝ քաղաքի առեւտրական կեանքն աշխուժացնելու նպատակով<sup>4</sup>: XVІІ դարի սկզբին հայերը քաղաքում համարեա 120 առեւտրական կէտեր (կրպակներ) ունէին<sup>5</sup>:

1714 թ. յունուարի 1-ին տեղի ունեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորչին նուիրուած հայերի նոր եկեղեցու հանդիսաւոր օծումը: Մինչեւ Երկ-

<sup>1</sup> Ալիմեան Հ. Ն., Ֆրա Օգոստինոս Աւտիք, «Հանդէս Ամսօրեայ», 35 (1921), էջ 638-640:

<sup>2</sup> Պէջիքեան Ե., Պետրոս Սիրանդեան հայ վաճառականը յիմնադրող Պիզայի քարտուգեանց վանքին (1366), «Բազմավէպ», XC, 1932, էջ 322-326, ժ.Պ-417:

<sup>3</sup> Ուրբախեան Հ. Մ., Եկեղեցիին հայոց ի՛ Լիվոռնոյ, «Յանդէս Ամսօրեայ», IV (1890), էջ 14-18:

<sup>4</sup> Vivoli G., Annali di Livorno..., tom III, Livorno, 1844, pp. 189-196.

<sup>5</sup> Ուրբախեան Հ. Մ., նշ. հոդուածը, էջ 46:

րորդ Համաշխարհային պատերազմին նախորդող տարիները եկեղեցին սպասարկում էր մի հայ քահանայ:

Այսպէս Տիրերիսի ակերին, իր մեկնակէտի մօտ Հռոմում վերջանում է շրջանը, որ կատարեցինք մեծ թերակողում, դարերի ընթացքում, փնտրելով այն Համայնքների հետքերը եւ գործունէութիւնը, որոնք իրենց յամառ մասնակցութիւնը բերեցին Իտալիայի շատ քաղաքների կեանքում: Սակայն այս հետքերը կարելի է գտնել նաեւ Իտալիան շրջապատող կղզիներում:

**Մալթա.** - Այստեղ XV դարի երկրորդ կէսին հանդիպում ենք ոմն Պիետրոյ դէ Արմենիային՝ որպէս Մալթայի Ծովակալ Զովաննի դի Նավայի եռաշար ցոկանաւի նաւապետ: Պետրոսը աչքի է ընկնում իր քաջ բնաւորութեամբ 1470 թուից սկսած եւ 1508-ին Կաթոլիկ յորջորջուած Ֆերդինանդ II-ի կողմից նշանակւում է քաղաքային դարպասների պահապան: Բայց նա, իր պաշտօնը ստանձնելուց առաջ, զոհւում է մի ծովամարտում: Այն ժամանակ արքան նրա որդի Անտոնիոյին է վերապահում հօրը տրուած բոլոր առանձնաշնորհումները: Աւելին, դեռ 1527 թ. Կարոլոս V-ը Անտոնիոյին պատիւ է անում նրան յանձնարարելով Սիկիլիայի փոխարքային՝ նկատի ունենալով նրա հօր մատուցած նշանակալի ծառայութիւնները Ֆերդինանդ թագաւորին<sup>1</sup>:

Նշանաւոր էր նաեւ Մաստէոյ (Մատթէոս) դէ Արմենիան՝ վերաչիշեալ Պետրոսի եղբայրը կամ որդին, որը հռչակուեց Ֆերդինանդ II-ի ծովային ուժերի մէջ եւ մեծարուեց նրա կողմից: 1647 թ. Անտոնիոյի, Պետրոսի եւ Յովհաննէսի ծոռները դեռ ողջ էին<sup>2</sup>: Ընտանիքն ունէր իր դինանշանը:

Հայկական եկեղեցի պէտք է լինէր նաեւ Մալթայում: Իրօք, XVII դ. առաջին կէսին յիշուում է յոյների Ս. Ղազար եկեղեցին: Նրա արտաքին պատերից մէկի վրայ նշմարւում են Հայաստան փորագրութեամբ քարեր:

**Սիկիլիա.** - Ինչպէս տեսանք, հայերի առկայութիւնը Սիկիլիայում հասնում է մինչեւ բիւզանդական տիրապետութեան առաջին շրջանը եւ շարունակւում ամբողջ այդ ժամանակաշրջանում:

Կիլիկիոյ թագաւորութեան շրջանում Կիլիկիոյ թագաւորները սերտ կապեր են հաստատում Սիկիլիոյ թագաւորութեան հետ: Այս-

<sup>1</sup> Abela F., Della descrizione di Malta, isola nel mare Siciliano, con sue antichità ed altre notizie, Malta, 1647, I, IV, notizia III. pp. 454 s.

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 455-456:

պէս հինգ տարուայ կարճ միջոցում (1278—1283) երեք պատուիրակութիւն է գալիս Կիլիկիայից Սիկիլիա<sup>1</sup>: Բագմաթիւ սիկիլիացիներ էլ Կիլիկիայում առեւտրական առանձնաշնորհ էին վայելում:

Յարաբերութիւններն առաւել սերտացան յաջորդ տասնամեակների ընթացքում, երբ Կիլիկիայի արքաներ Օշինը (1308—1320) եւ Լեւոն IV-ը (1321—1342) ամուսնացան սիկիլիացի իշխանուհիների հետ<sup>2</sup>:

Յաջորդ դարերում Մեսինայում յիշուում են մեծ մասամբ վաճառականների հայ ընտանիքներ<sup>3</sup>: Աւելի նոր ժամանակներում, XVIII դարում նաեւ Պալերմոյում կային հայեր: 1753 թ. Պալերմոյի պաշտպան Սուրբ է հռչակուում, ըստ Ալիշանի վկայութեան, Ս. Գրիգոր Լուսաւորիչը, եւ այնտեղ են տեղափոխուում նրա մասունքներից մի քանիսը<sup>4</sup>: Թէպէտեւ ցարդ հնարաւոր չեղաւ ստուգել այս վկայութեան սկզբնաղբիւրը ո՛չ Ալիշանի դիւանից, ո՛չ էլ այլ աղբիւրներից, չենք կասկածում սակայն, որ այս պարագային եւս, Ալիշան բացարձակապէս վստահելի վկայ է, ինչպէս հաւաստիօրէն կարողացիլ ենք հաստատել, իտալիոյ գաղութների առնչութեամբ, համեմատելով մէկ առ մէկ Ալիշանի բոլոր վկայութիւնները՝ իր արխիւային թղթածրարներում, իր իսկ ձեռքով խնամքով նշուած սկզբնաղբիւրների հետ:

Ալիշանը ենթադրում է, որ Կատանիայում եւ Տրապանիում եւս պէտք է գտնուէին հայերի հետքեր:

**Հայ հոգեւոր առաջնորդներ իտալական թեմերում եւ վանքերում**

XIV դարում հանդիպում ենք հայ հոգեւոր առաջնորդների, որոնց վստահուում է լատինական եւ իտալա-յունական տարբեր վանքերի հոգատարութիւնը: Այսպէս, Վոնիփատիոս (Բոնիֆատիոս) VIII-ը 1301 թ. հինգ տարի շարունակ մի հայ հոգեւորականի՝ Երուսաղէմի նախկին արքեպիսկոպոս Բարսեղին է վստահում հարաւային իտալիայի Բենեւենտոյ քաղաքի թելեղէ աւանում Սան Սալվատորէի Բենեդիկտեան վանքի առաջնորդութիւնը<sup>5</sup>: 1334 թ. Յովհաննէս XII-ը Նիկոպոլիսի արքեպիսկոպոս Ապոստոլին (Առա-

<sup>1</sup> Ալիշան Հ. Ղ., Սիսուան, էջ 363:

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 337:

<sup>3</sup> Ալիշան Հ. Ղ., Սիսական, էջ 455:

<sup>4</sup> Նոյն տեղում:

<sup>5</sup> Bonifacii A. A. VIII, ed. cit., pp. 217-218: Lett. 8 Genn., 1301.

քել) վստահում է Բրինդիզիի մօտ, Սանթայ Մարիայ դէ Ֆուրբելլա յունական վանքի առաջնորդութիւնը<sup>1</sup>:

Այս ժամանակներում բազմաթիւ են նաեւ Հայ եպիսկոպոսներ, որոնք օժուում են Հռոմում՝ մեկնելու համար իրենց թեմերը, լինեն դրանք Հայաստանում կամ գաղթօջախներում: Յիշենք Աղեքսանդր Բերացուն՝ Կ.Պոլսից, Յովհաննէս Դաւիթ Եղեւիացուն, Գէորգ Նորեղէս Կիպրացուն, Զաքարիա Ծործորեցուն Ս. Թադէի թեմի առաջնորդ (Մակուի մօտերքը, Պարսկաստան), Տաթևի թեմի առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոս Ապամէացուն, նախապէս Նէպոլի Բարսեղեան վանական և ապա Կեֆալոնիայի և Զանտէի եպիսկոպոս Մանուէլին, Թովմաս Թաւրիզեցուն, Թովմաս Նախիջիւանցուն և վերջապէս Գրիգոր Սիսկոյ Բերացուն:

Ինչպէս երեւում է Ալիշանի «Հայ-Վենետ» ուսումնասիրութեան մէջ, բարձրաստիճան հոգևորականների հոսքը դէպի Իտալիա շարունակւում է յաջորդ դարերում եւս<sup>2</sup>: Նրանցից յիշում ենք երզնկացի եպիսկոպոս Մարտիրոսին՝ իր արկածախնդիր ճամփորդութեան համար (1488–1491): Նա շրջում է Եւրոպայի մեծ մասը՝ ներկայանալով Պապերին և մեծագոյն արքունիքներին, ի միջի այլոց, նաև Սեւիլիայի Իզաբելլային: Երզնկայից, Պոլսոյ միջով, Վենետիկ, Անկոնա, Հռոմ, Կոստանցա, Յրիբուրգ, Ստրազբուրգ, Կէօլն, Փարիզ, Փուլթիէ, Գասկոնիա, Սան Սեբաստիան, Գետարիա, Կադիքս, Սեւիլիա, Գրանադա, Բարսելոնայ, Պրովանս, Զենովա, Օրվիետոյ և նորից Հռոմ և Պոլիս եղել են նրա երկար և յոգնեցուցիչ ուղևորութեան գլխաւոր հանգրուանները<sup>3</sup>: Դեռ Մխիթար Աբրահօր օրոք, ինչպէս երեւում է նրա թղթակցութիւններից, Իտալիայում նշանակւում են բազմաթիւ Հայ եպիսկոպոսներ և արքեպիսկոպոսներ: Սրանք յաճախ աքսորեալներ կամ իրենց աթոռից հեռացուածներ էին:

Հանդիպում ենք նաև արկածախնդիրների տիպարներ, որ կարգալոյծ եղած կամ հեռացուած իրենց մեծաւորների կողմից, դիրք և բախտ էին փնտրում Հռոմում և կամ Աւինեոնում, ինչպէս նշանաւոր Ներսէս Բալենցը<sup>4</sup>:

Կայ նաև խիստ բազմաթիւ Հայ պատուիրականների շարք թէ՛ Հռոմի աթոռի և թէ՛ Եւրոպայի մեծագոյն արքունիքների մօտ:

<sup>1</sup> Iohannis A. A. XXII, ed. cit., pp. 264–265: Lett. I Marzo, 1334.

<sup>2</sup> Ալիշան Հ. Ղ., Հայ-Վենետ, մաս II, էջ 335–349:

<sup>3</sup> Cod. Arm. di Parigi, Anc. fonds, No. 65; Ալիշան Հ. Ղ., նշ. աշխ., էջ 194–197:

<sup>4</sup> Benedicti A. A. XII, ed. cit., pp. 64 s.

Սրանցից մի քանիսի՝ յատկապէս XII դարում գործունէութիւնն ծաւալածների մասին արդէն խօսել ենք: Այսպիսիք յետագայում՝ 1200-ից մինչև 1700-ի առաջին տասնամեակները, Հայոց մեծ պատմութեան մաս են կազմում:

Այս յարաբերութիւնների մէջ եզակի կարեւորութեան մի պահ եղաւ անշուշտ՝ Ֆլորենցիայի ժողովը, որը Հռոմի Եկեղեցին նկատում է որպէս տիեզերական: Սաի կաթողիկոս Կոնստանդին Վահկացին (1430—1439) պաշտօնապէս հրաւիրուած էր արդէն 1433 թ. Բագրիւայի ժողովին: Բայց զանազան պատճառներով Կաթողիկոսի պատուիրակութիւնը կարողացաւ հասնել միայն նոյն թուի օգոստոսին, երբ ժողովն արդէն տեղափոխուել էր Ֆլորենցիա եւ եզրափակուելով վրայ էր: Յոյների հետ միութիւնը կատարուել էր նոյն տարուայ յուլիսի 6-ին: Հետեւաբար Հայոց Եկեղեցու հետ հարցերը քննուեցին յատուկ նիստերում, որոնք եզրափակուեցին Հայերի համար յատուկ Վճռագրի հրապարակումով՝ 1439 թ. նոյեմբերի 22-ին<sup>1</sup>:

### ԱՌԵՆՈՒՐ

Իտալիայում Հայ համայնքների պատկերը, որ ուրուագծեցինք իր ընդհանուր գծերով, արտացոլում է երկրորդ հազարամեակում՝ Իտալիայում Հայերի աշխարհագրական առաւելագոյն տարածման ժամանակաշրջանը: Ժամանակաշրջան, որ պարփակում է համարեայ երեք դար՝ 1200-ից 1500 թթ., իր դազաթնակէտին հասնելով 1300-ի կէսերին: Աշխարհագրական առաւելագոյն տարածման այս ժամանակաշրջանը եղաւ նաեւ ամենամեծ ծաղկման դարաշրջանը՝ համայնքային, ազգային եւ կրօնական ասպարէզում: Բազմաթիւ Հայ տուններ կամ հոգեւտուներ, այսինքն՝ կացարանները, որոնք վկայում են ուխտաւորների եւ վաճառականների աշխոյժ երթեւեկութեան մասին, նոյնքան վանքեր, իրենց մշակութային եւ գրական ակնառու գործունէութեամբ, որոնք փաստում են համայնքային, յեղաշրջուած եւ գիտակից կազմակերպութեան իրողութիւնը: Այս կազմակերպութեանը XIV դարում եւ դուրսէ նաեւ սուղ հասնում է սեփական նուիրագետութիւն ունենալու աստիճանի՝ մի եպիսկոպոսի գլխաւորութեամբ: Սակայն այն երկար չի տևում, որովհետեւ այս իրադրութեան անկիւնաքարերը, այսինքն՝ վանքե-

<sup>1</sup> Hofmann G., S. I., Documenta Concilii Florentiner Union der polnischen Armenier und ihr Bischofskatalog, in "Or. Chr. Anal.", 96, Roma, 1934; Petrowicz G., La Chiesa Armena in Polonia, Roma, 1971, pp. 51—61.

րը, կամաց-կամաց ձուլւում են միջավայրի հետ: Դժուար է նաեւ ենթադրութիւններ անել, թէ նրանք ինչքան պիտի կարողանային կանգուն մնալ, լինելով այնքան բազմաքանակ, եթէ չբացուէին իտալական տարրի առջեւ: Կար նաեւ մի ուրիշ դժուարութիւն՝ կտրուած լինել սեփական միջավայրից եւ սեփական հողից: Տեսնում ենք, որ նրանցից շատերը իրենց գոյութիւնը եզրափակում են արդէն 1400-ին:

Հայկական համայնքները շարունակում են ապրել 1500-ին: Աւելին, դեռ ապրում են ծաղկման ժամանակաշրջաններ, ինչպէս Ջենովայում, Հռոմում եւ մանաւանդ Վենետիկում, եւ սրանք մասամբ մեզ բացատրում են պատճառները, թէ ինչո՞ւ միւս համայնքները աւելի կարճատեւ են եղել: Հռոմը հոգեւոր այն մեծ կենտրոնն է, որտեղ ուղղութիւն էին վերցնում վաճառականները: Նրանք այնտեղ դառնում էին բարեպաշտ ուխտաւորներ եւ իւրաքանչիւր հոգեւորական կամ աշխարհական, ինչպես նաեւ ներկայացուցիչներն ու դեսպանները ինչ-որ շնորհ էին փնտրում: Հռոմը նաեւ կրօնական մշակոյթի մեծ կենտրոնն էր, որտեղ ձգտում էին զարգանալու համար եկեղեցական կարգերի երիտասարդ թեկնածուները: Մինչդեռ Ջենովայի եւ Վենետիկի համայնքները իրենց վերապրումը բացատրում են շնորհիւ այս քաղաքների առեւտրական ուժեղ հմայքի: Ջենովային խափանողը պիտի լինի նրա առաւել երիտասարդ, աշխարհագրական տեսակէտից առաւել նպաստաւոր պայմաններում գտնուող մրցակիցը՝ Լիվոռնոն, որն աւելի մօտիկ էր Վենետիկին, քան Հռոմին: Աւելին, ինչպէս տեսանք, Լիվոռնոյի համայնքը իր իսկ գոյութիւնը մեծ մասամբ պարտական էր տնտեսական քաղաքականութեանը:

Ինչպէս յաճախ պատահում է առեւտրի մէջ, շահերը փոխադարձ են նաեւ իտալահայերի պարագայում: Սակայն նաեւ հիւրընկալող երկիրն է օգտւում նրանց ներկայութիւնից: Նոյնիսկ այս փոխադարձ յարաբերութիւնների մէջ առկայ են որոշակի դործօններ, որոնք գերազանցում են տնտեսական շահերը: Փոխադարձ յարգանքի զգացումներ, երախտագիտութեան, ինչպէս նաեւ մշակութային եւ հոգեւոր շահեր: Մեր ասածն իմաստաւորելու համար անդրադառնանք Վենետիկի հայ համայնքի պատմութեանը: Կրետէի սլաօնաբան ընթացքում, XVI դարում, Վենետիկի տնտեսութիւնը մեծ մասամբ կախուած էր հայերի կատարած ներմուծումներից եւ արտահանումներից: Սա հաստատուած է Սերենիսսիմայի հինգ իմաստունների կողմից ծերակոյտին ներկայացուած տեղեկութեան մէջ: Ծերա-

կոյտը 1648 թ. օգոստոսի 8-ի իր հրովարտակով հաստատում է իմաստունների ցուցմունքը, հայ ազգին որակելով որպէս «միշտ արժանաւոր մեր պետութեան մէջ»:

1710 եւ 1764 թթ. այլ հրովարտակներում խօսւում է «բազմարժան եւ նախասիրեալ ազգի» մասին: Դեռ 1640-ից առաջ ձերակոյտը որոշում էր «ամէն դիւրութիւն ստեղծել այս արժանաւոր ազգի համար, որը շրջանառութեան մէջ է դնում դրամական ակնառու գումարներ»<sup>1</sup>:

Բացի առեւտրից, հայերը յայտնի են եղել նաեւ ուրիշ մասնագիտական ասպարէզներում, մասնաւանդ բժշկութեան մէջ: Դեռ Վենետիկում յիշուում է ոմն Անտոն Սուրեան, կոչուած նաեւ Արմենոյ, որ 1575 թ. ժանտախտի ժամանակ շնորհիւ իր հնարած դեղամիջոցի «չատ վիրաւորներ ազատեց եւ ազնուականների շատ ընտանիքներ բուժեց»: Աւելին, ինչպէս Դոմին գրում էր նրա որդին, «անհամար ծախսեր կատարեց իր կողմից, առանց որեւէ հատուցում ստանալու»<sup>2</sup>: Նաեւ այլ ասպարէզում՝ մեքենագործութեան մէջ, նոյն Անտոնը ապացուցեց իր տաղանդը, հնարելով մի մեքենայ, որով յաջողուեց նաւաշինարանի յատակից դուրս հանել մի մեծ մարտանաւ՝ իր բոլոր զէնքերով եւ ռազմամթերքով. յաջողուեց նաեւ յատակը մաքրել դարաւոր մնացորդներից:

1200–1700 թթ. հայ-խոտալական առեւտրական յարաբերութիւնների մէջ մօտաւորապէս երեք ժամանակաշրջան կարելի է առանձնացնել: Այս զանազանումը կատարւում է մասնաւանդ նկատի ունենալով Արեւելքում հայ-խոտալական առեւտրի ծանրութեան տարբեր կենտրոնները:

Առաջին ժամանակաշրջանը Կիլիկիոյ թագաւորութեան շրջանն է, քանի որ նա է պահում իր ձեռքերում այս մեծ առեւտրի դեկը:

Երկրորդը՝ հայ-խոտալական առեւտրի զրիմեան շրջանն է, երբ այդ առեւտրի առաւել գործունեայ ներկայացուցիչները եղել են զրիմահայերը՝ Կաֆայի համայնքից: Նրանք արդէն ասպարէզ են իջնում XIV դարում եւ գերիշխում են յաջորդ երկու դարերում: Նրանց առեւտուրը կենտրոնացուած է Զենովայի ուղղութեամբ: Նրանք նաեւ իրենց բաժինն ունեցան Ֆլորենցիայի ժողովում հայե-

<sup>1</sup> Alishan P. L., Geonomia Armena, p. 4, n. 1, 3; Ալիշան Հ. Ղ., Հայ-Վենետ, մաս II, էջ 363–505:

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 259–261, 505: Dr. Torkomian V., Les anciens médecins Arméniens diplômés des Universités d'Italie (1700–1840), Paris, 1903.

րի մասնակցութեան մէջ, որը համընկնում էր իրենց առեւտրի առաւելագոյն ծաղկման ժամանակաշրջանի հետ:

Երրորդ շրջանում՝ այսինքն XVII–XVIII դարերում եւ յետոյ, ի յայտ են գալիս մանաւանդ Շահ Աբբասի կողմից հիմնուած Նոր Զուղայի երիտասարդ համայնքի հայերը: Սրանց կողքին 1700-ին երեւում են նաեւ Հնդկաստանի եւ Օսմանեան կայսրութեան գլխաւոր ծովահինեայ քաղաքների հայերը՝ Ձմիւռնիայից ու Պոլսից:

Կարելի է ենթադրութիւններ անել տարբեր համայնքների քանակական կազմի մասին: Աւելի հին դարերում դժուար է նոյնիսկ մօտաւոր ենթադրութիւն անել: Բայց կարծում ենք, որ սկզբունքօրէն կարելի է բոլորի, կամ նրանցից շատերի համար կիրառել Ալիշանի՝ Վենետիկի համար ասած խօսքերը: Այսինքն, եթէ քիչ չէին Վենետիկում հաստատուող հայերը, ապա անհամար աւելի շատ էին ճամփորդները, որոնցից շատերն այնտեղ մնում էին ամիսներ ու տարիներ, եւ վերադառնում էին մէկից աւելի անգամներ:

Առաւել մօտ ժամանակներում տեսանք օրինակ, որ XVII դարակզբին Լիվոռնոյում հաշւում էին 120 հայկական խանութներ (կրպակներ), ուրիշ տուեալների համաձայն այդ քաղաքում նոյն ժամանակաշրջանում կային 200 հայեր: Եթէ այս թիւն ընդունենք որպէս ընտանիքի գլխաւորների թիւ, պիտի ունենանք 200 տներ, այսինքն՝ շուրջ 800–1000 անձ: Թւում է, որ դարի ընթացքում այս թիւը բաւական նուազած պիտի լինէր, որովհետեւ Նուրիխանն իր «Միխթարի Վարքում» հաստատում է, որ 1730-ական թուականներին Լիվոռնոյում կային 130 հայեր<sup>1</sup>: Այնուամենայնիւ, նոյնիսկ սա չպէտք է ընդունուի որպէս անկարելոր թիւ, եթէ հաշուի առնենք մի կողմից միջնադարի յատուկ ազգագրական, սոցիալ-տնտեսական պատճառները, որոնց մասին խօսեցինք վերելում՝ որ յարատեւում էին այդ տարիներին, եւ միւս կողմից համայնքի ներքին կազմակերպութիւնը իր սեփական եկեղեցիով, սեփական հովիտով եւ գուցէ դեռ ոչ լիարժէք ու գործող, բայց սեփական տպարանով:

Չուլման բաւարար գործօններից էին ազգամիջեան ամուսնութիւնները: Վենետիկի եկեղեցական դիւաններում Ալիշանը կարողացաւ հաշուել այսպիսի ամուսնութիւնների աւելի քան 200 դէպք XVI–XVIII դարերում<sup>2</sup>:

<sup>1</sup> Nurikhan P. M., Il servo di Dio Abate Mechitar. Fondatore dei PP. Mechitaristi di Venezia, di Vienna, Sua Vita e Suoi Tempi, Venezia, 1914, p. 236.

<sup>2</sup> Ալիշան Հ. Ղ., Հայ-Վենետ, մաս II, էջ 390, 175, Alishan P. L., Geonomia Armena, p. 45.

## Իտալիայում Հայերի ներգաղթի գործոններն ու պատճառները

Եղելութիւնների վերլուծումից երեւան է գալիս գործոնների եւ պատճառների հարուստ գանազանութիւն, որոնք մրցում են բացատրելու համար հայերի դէպի Իտալիա հոսքի այս բարդ եւ բաղմարժէք երեւոյթը: Առաջին հազարամեակում այս հոսքը մեծ մասամբ կատարւում է Բիւզանդիայի միջոցով, այնտեղ պէտք է փնտրել հարցի արմատը, այսինքն՝ գործոնների այն ամբողջութեան մէջ, որ որոշում են հայերի հոսքը եւ տարածումը Բիւզանդական կայսրութեան մէջ:

Ընդհանուր համայնապատկերում, ուր ջանացինք ուրուագծել հայերի առկայութիւնն Իտալիայում Բիւզանդական կայսրութեան միջով, գործոնների երկու խմբեր են առանձնանում՝ ռազմաքաղաքական եւ կրօնական:

Իրականում այն հայերը, որ Իտալիա են գալիս այս ճանապարհով, կամ կայսրութեան ներկայացուցիչներ են՝ ինչպէս նրա պաշտօնեաները կամ զինուորները, կամ նրանցից հալածուածներն են՝ ինչպէս Կոնստանդին V-ի կողմից Սիկիլիա վտարուած զինուորները եւ կամ նէապոլ փախած հաւատաւոր կոյսերը (ըստ աւանդութեան), առաջինները՝ քաղաքական պատճառներով, միւսներն՝ առաւելապէս կրօնական պատճառներով: Սակայն իրադարձութիւնների առաւել ուշադիր քննութիւնը ցոյց է տալիս քաղաքական ու կրօնական գործոնների յաճախ մի մեծ խառնաշփոթ: Պաւլիկեանների պարագայում նրանք խորթ վերաբերմունք են վայելում, նոյնիսկ յաճախ հալածուած են կայսերական պետութեան կողմից: Այս պատճառով նաեւ տեղահանուած են իրենց կալուածքներից: Բայց տեղահանման այս գործողութիւնը ոչ միայն Պաւլիկեանների համար, այլ առհասարակ հայերի համար հետապնդում է բացայայտ քաղաքական նպատակներ: Միեւնոյն ժամանակ Պաւլիկեանները ցրուելով կայսրութեան մէջ եւ Եւրոպայում՝ պարտադրուած կամ տարբեր կարգի գործնական կարիքներից դրդուած, ձգտում են նաեւ կրօնական նպատակների իրականացմանը, երբ ջանում են հաստատել եւ տարածել իրենց վարդապետութիւնը: Սրանում յաճախ փոքր չէ քաղաքական եւ կրօնական գործոնների ուժգնօրէն իրար հետ շողկապուող և իրար լրացնող դերը: Այնուամենայնիւ հայերի ներկայութեան որոշ ձեւերի մէջ երեւում է անկախ կրօնական պատճառների և շարժառիթների դերակայումը: Այս ձեւերը համայնքային դրսեւորում են ստանում վանականութեան եւ անհատական դրսեւորումներ՝ ուխտադնացութեան աւանդոյթի մէջ:

Գլխաւոր տարբերութիւնը, որ բաժանում է մեր ուսումնասիրութեան երկրորդ շրջանը առաջինից, գուցէ կայանում է նրանում, որ տնտեսական-առեւտրական գործօնները, որոնք դեռ սաղմնային վիճակում են քաղաքական եւ երբեմն նաեւ կրօնական գործօնների մէջ, այժմ բացայայտ են դառնում ոչ միայն պետական մակարդակում, այլ նաեւ համայնքային, անհատական, նոյնիսկ ընտանեկան մակարդակներում: Այսպէս ստեղծւում է այն նոր իրավիճակը, որի մասին արդէն խօսել ենք, այսինքն այս ժամանակաշրջանի աշխարհական դերակատարներն այլեւս ոչ թէ զինուորականներն են, այլ վաճառականները: Այս նոր իրավիճակից բխած հաղորդակցութեան գործնական պահանջները որոշ չափով պայմանաւորում են բաղմաթիւ կացարանների հիմնումը թիրակղզու ներքին մասերում: Ենթադրաբար սրանք որպէս փարոսներ էին ծառայում խոչորագոյն առեւտրական ափերի միջեւ:

Մինչդեռ կրօնական գործօնը ապացուցում է այս ժամանակաշրջանի յատուկ կարեւորութիւնը բաղմաթիւ վանքերի տարածումով եւ տարբեր ծէսերի եկեղեցիների միջեւ յաճախակի յարաբերութիւններով, ինչպէս հոռմէական եւ հայկական եկեղեցիներն էին:

Պէտք է վերջապէս մոռանալ մշակութային գործօնը: Մշակութի եւ առաջադիմութեան ծարաւ բաղմաթիւ լուսաւորեայ մտքեր 1500-ական թուականներից յետոյ ուղղուեցին դէպի Իտալիա:

Առաջադիմութեան այս ծարաւի ամենապերճախօս օրինակն անկասկած հայ տպագրութեան վաստակաշատ ռահվիրաներն էին: Այս փաստը մեզ ստիպում է մի հակիրճ ակնարկ նետել հայկական համայնքների մշակութային դործունէութեան վրայ:

### Հայկական համայնքների մշակութային դերը

Խօսելով առաջին ժամանակաշրջանի հայ-իտալական յարաբերութիւնների մասին, ենթադրելի է, որ յարաբերութիւնների տարբեր մակարդակները կարողացել են որոշ չափով ապահովել նաեւ մշակութային գործիչները կամ դոնէ ստանձնել են միջնորդների դերը: Պարզ է նաեւ, որ նման միջնորդութեան արդիւնքում նրանց շարժումը պիտի տարածուէր Արեւելքից դէպի Արեւմուտք: Իրոք, այդ դաշաշրջանի հայկական մշակոյթը կարելի է ասել շատ տեսակէտներից գտնւում էր առաւել առաջադէմ դիրքերում, քան արեւմտեանը: Գրականութեան մէջ Հայաստանում արդէն Գրիգոր Նարեկացի կար,

մինչդեռ նորալատին գրականութիւնները գտնուում էին հազիւ սաղմնային վիճակում:

Ձուգահեռաբար, հայկական ճարտարապետական յուշարձաններն արդէն VII դարում բացայայտում են այնպիսի կատարեալ կառուցողական տրամաբանութիւն, որ նմանը հանդիպելու համար Արեւմուտքում յարկ պիտի լինի սպասել ռոմանական ճարտարապետութեան լիակատար զարգացմանը, այսինքն՝ XII դարին:

Հոգեւոր մարզում եւս Հայաստանը XII դարում տալիս է առաջին կարգի դէմքեր, ինչպիսիք են Շնորհալին կամ Լամբրոնացին, որոնք Եկեղեցիների միաւորման իրենց ըմբռնումով եւ էկոմենական գործունէութեամբ գերազանցում են ոչ միայն իրենց սերնդակիցներին, այլեւ, բառի բուն իմաստով, նախորդում են վերջին երկու դարերի էկոմենիզմի մեծ ախոյեաններին<sup>1</sup>: Այս հակաճառութեան մէջ պէտք չէ զանց առնել Պաւլիկեան շարժումը: Ճիշտ է, որ ուղղափառ քրիստոնէութեան տեսակէտից, աղանդը չի կարելի գրական երեւոյթ համարել, սակայն պէտք է այնուամենայնիւ ընդունել, որ այս տարածաշրջանում Եկեղեցու հեղինակութիւնը գործնականապէս յաւակնում էր լինել մարդկային իմացութեան միակ առաջնորդողը: Ալբիգեանների, Պաւլիկեանների յաջորդների միջոցով էր, որ առաջին անգամ եւ մեծ չափերով Եւրոպայում տարածւում էր ազատամտութեան շարժումը: Այս ոգին արգելքների ու պայքարի բովով դարերի ընթացքում անկասկած մշակութային կարեւոր երեւոյթ է՝ անկախ առաջադրուած դադափարների բովանդակութիւնից եւ կրօնական արժէքից:

XIV դարից սկսած, կամաց կամաց մի փոփոխութիւն է նկատւում հայ-իտալական մշակութային յարաբերութիւնների մէջ: Մշակոյթի ճրագը այժմուանից պիտի ճառագայթի առաւելապէս Արեւմուտքից Արեւելք: Իրոք Սիկիլիայի թագաւորութեան անկումով՝ Հայաստանի համար սկսւում է տագնապի՝ եթէ ոչ մշակութաբան անկման մի ժամանակաշրջան:

Մինչդեռ միւս կողմից, Իտալիան XIII դարում Դանթէով ու Ջոտտոյով իր առաջին վերածնունդն է ապրում: Նախորդ դարերի ահադին մշակութային ժառանգութեանն աւելացնենք միայն տպագրութիւնը, որ հայ մտքի մեծագոյն ազդակը դարձաւ: Սա, ինչպէս Արեւմտեան Եւրոպայում, այնպէս էլ Իտալիայում, նպաստաւոր

<sup>1</sup> Ananian P., Narsete IV Klajetzi, col. 748-753.

պայմաններ ստեղծեց արագ ու բեղմնաւոր զարգացման համար: Հետեւաբար բնական է ակնկալել, որ Իտալիոյ Հայկական Համայնքները լոյսի մի քանի ճառագայթներ հասցրած լինեն մշակոյթի այս օջախից: Դրանք իրոք հասան, եւ դրանցից ամենափայլունը, կարծում ենք, եղել է հայերի մէջ տպագրական մշակոյթի արագ տարածումը: Եթէ նկատի ունենանք, որ հայերը դրատպութեամբ էին զբաղուում իրենց շրջապատող մեծ տէրութիւններից առաջ, ապա ի թիւս այլ գործօնների՝ կարելի է արժեքաւորել այս մղումի կարեւորութիւնը: Իտալիայի հայկական համայնքների այս դրական օժանդակութիւնը ապացուցում է, որ նրանք տեւական շփման մէջ էին հայրենիքի հետ: Այլ խօսքով, այդ համայնքները Արեւելքից դէպի Արեւմուտք բացուած պատուհաններ էին: Առանց այս կենդանի շփման, կ'ունենայինք մի կողմից թերեւս շատ դանդաղ վերածնունդ, սակայն ներփակ մի երկիր, իսկ միւս կողմից՝ ամբողջովին ձուլուած գաղութներ:

Իտալիայում հայկական տպարանների արագ թուարկումը բաւական պիտի լինի ցոյց տալու համար այս գործունէութեան ողջ ծաւալն ու չափերը, որը յետագայում տարածուեց Եւրոպայի այլ նշանաւոր կենտրոններում՝ Մարսելում, Փարիզում, Ամստերդամում, նաեւ Արեւելքում՝ Պոլսում, Իդմիրում, Նոր Զուղայում, Մադրասում: Ահա ժամանակագրական կարգով այն քաղաքները, որոնց մէջ գտնում ենք հայկական տպարաններ: Յաջորդ տարիները ցոյց են տալիս ամէն մի քաղաքի համար մի նոր տպարանի կամ մի նոր հրատարակչի երեւան գալը: Վենետիկ (1512, 1565, 1587, 1642, 1660, 1671, 1685, 1687, 1695, 1714, 1715, 1729, 1748, 1750, 1760, 1772, 1784, 1726, 1784), Ֆերրարա (1539), Պաւիա (1539), Լոմ (1584, 1586, 1623, 1630, 1674, 1650), Միլան (1621), Լիւռնոյ (1644, 1670, 1698, 1699), Պագովա (1539, 1690), Մալթա (1828):

Այս տպարաններից շատերը կարճ կեանք ունեցան, ինչպէս Մալթայինը, մինչդեռ ուրիշները ունեցան գործունէութեան երկար ժամանակաշրջան, ինչպէս Անտոնիոյ Բորտոլիի (Անտօնիօ Պորթոլի) տպարանը Վենետիկում: Անմիջապէս նշմարուում է նաեւ, որ հայկական տպարանների եւ հրատարակիչների բազմութիւնը ուղիղ համեմատական է տեղի հայկական համայնքի կենսունակութեան հետ:

Այսպէս Վենետիկի ծաղկուն ու երկարակեաց համայնքը ստանձնում է նաեւ հրատարակչական գործունէութեան շքեղութիւն-

նը՝ Մխիթարի գալուց առաջ եւ յետոյ՝ մինչեւ XVIII դարի վերջին քառորդը:

Իտալահայ Համայնքների այս կարեւոր մղումի կողքին հարկ է հաշուի առնել նաեւ հայ-իտալական, եւ ընդհանրապէս, հայ եւ արեւմտեան մշակոյթների միջեւ այս ժամանակաշրջանում եղած կապերի գործօնը: Այս գործօնն է հայ ժողովրդի մէջ պարբերական եւ միշտ աւելի խոր ազդեցութիւն գործել: Ներթափանցումը մեծ մասամբ իտալացի լատին միսիոներների միջոցով էր կատարուում: Սկզբում ընդհանրապէս Դոմինիկեան եւ Փրանկլիսկեան կրօնաւորներն էին գալիս, ապա նրանց շարքերը համալրում են Թէաթինեանները, Յիսուսեանները եւ ուրիշներ: Այս միսիոնարների երեւալը Կիլիկիայում, շուտով նաեւ Մեծ Հայքում, նոյն պատմական գործօնների եւ յատկապէս Խաչակրութիւնների արդիւնքն էին, որոնք հայերի դէպի Արեւմուտք դաղթի պատճառ հանդիսացան: Մանրամասնօրէն չանդրադառնալով միսիոնարական այս շարժման պատմութեանը, այնուամենայնիւ նշենք, որ միսիոնարական գործունէութիւնը, ընդհանուր առմամբ, բարերար ազդեցութիւն չունեցաւ հայ մշակոյթի վրայ: Եկեղեցիների միութեան պատրուակը զուտ տեսական հանգրուան էր միսիոնարների Հայաստան ներթափանցման նպատակը արդարացնելու համար: Նրանք որդեգրել էին լատինացման մի քաղաքականութիւն, որին շուտով յարեց հայ եկեղեցականների մի ստուար մասը, ինչպէս նաեւ ազդեցիկ աշխարհականներ՝ սկսած Կիլիկիոյ Թադաւորութեան ժամանակաշրջանից: Այս հայերը լատինացման իրենց եռանդի մէջ այնքան ծայրայեղութիւնների հասան, որոնցից հեռու էին մնում նոյնիսկ իրենց լատին ուսուցիչները: Ինչպէս նկատել է երիտասարդ աստուածաբան Գարեգին Վրդ. Սարգիսեանը՝ «Նրանք աւելի շատ հակուած էին փոխել գոյնը, քան սիրտերը»:

Այս հոսանքն իր ամենաաշխոյժ ժամանակաշրջանն ապրեց XVI եւ XVII դարերում, երբ նաեւ հայոց լեզուն ուղեցին ձեւել լատինական քերականութեան վրայ՝ այսպիսով սկիզբ դնելով հայերէնի լատինացման, այսինքն՝ լատինաբան հայերէնի: Այնուամենայնիւ, չնայած այս ծայրայեղութիւններին, որոնք լիովին արդարացնում են միսիոնարական շարժման նկատմամբ առաւելաբար բացասական կարծիքը, չի կարելի ժխտել նաեւ նրանց որոշ դրական արդիւնքները: Ամէնից առաջ միսիոնարներն իրենց հետ բերեցին որոշ փիլիսոփայական մտածողութիւն՝ միջնադարի արեւմտեան սխոլաստիկական: XV–XVII դդ. Արեւելեան Հայաստանի վանական մեծ կենտրոններ

րում այն ուղղակիորէն կամ առաւելապէս հակազդեցութեան շնորհիւ, խթանեց գրական, փիլիսոփայական եւ աստուածաբանական ուսմունքների լուրջ զարթօնքը:

Ճիշտ է, նոր եւ ինքնատիպ մտածողութիւն ստեղծելու ուղղութեամբ մեծ ազդեցութիւն չունեցաւ, սակայն այնուամենայնիւ ինքնին եղելութիւնը դրական էր: Հայկական սխոլաստիկայի կարեւոր դէմքերը, նաեւ նրանք, որոնք անընդհատ պայքարում էին միսիոնարների դէմ, ինչպէս Գրիգոր Տաթեւացին (1340–1411), խորապէս զգացին սխոլաստիկական մտածելակերպի ազդեցութիւնը:

Բացի սրանից, միսիոնարական շարժումը որոշ կառուցողական գործունէութիւն ունեցաւ շնորհիւ երկուստէք լաւ մտքով ու բարի կամքով օժտուած անձերի միջեւ ստեղծուած բարեկամութեան: Այն հայ եկեղեցականների մօտ, որոնք ո՛չ լատինամոլութեան եւ ո՛չ էլ ազգայնամոլութեան ծայրահեղականութեան մէջ չէին ընկնում, բարի յարաբերութիւնների այդ կապերը արեւմտեան մշակոյթի լոյսից օգտուելու անկեղծ ցանկութիւն ստեղծեցին: Միեւնոյն ժամանակ օժանդակեցին աւելի բաց տրամադրութիւն ստեղծելու եկեղեցական հաղորդակցութեան ասպարէզում: Այս եկեղեցապատմական յարաբերութիւնները ներառում են հայ Կաթողիկոսների բազմաթիւ պատուիրակութիւններ Պապի մօտ եւ մանաւանդ նրանցից մի քանիսի կատարած անձնական այցելութիւնները Հռոմ, ինչպէս Ստեփանոս Սալմաստեցին (1543–1552), Թադէոս II-ը (1575–1584): Սրանց եւ սրանց նման հաւասարակշռուած մտքերի առաջ տարած կրօնամշակութային զարթօնքի ջանքերը գնալով ուժեղացան յաջորդ դարերում մեծ Կաթողիկոսների առաջնորդութեամբ՝ ինչպէս Մովսէս III Տաթեւացին (1629–1632), Փիլիպպոս I Աղբակեցին (1633–1655) եւ մանաւանդ Յակոբ IV Ջուղայեցին (1655–1680): Վերջինս Եւրոպա պիտի ուղարկի հայկական տպագրութեան ամենաարժանաւորներից մէկին՝ Ոսկան վարդապետ Երեւանցուն, որ տպագրական աշխոյժ գործունէութիւն պիտի ծաւալի Իտալիայում, Ֆրանսիայում եւ Հոլանդիայում: Նա 1665 թ. Ամստերդամում աւարտին կը հասցնի Աստուածաշնչի առաջին հրատարակութիւնը, որն իրաւունք ստացաւ լաւագոյնս գնահատուելու դարաշրջանի հայկական տպագրութեան պատմութեան մէջ:

Իսկ Վենետիկում հայերէն առաջին տպագրութիւնն իրականացել էր արդէն 1512-ին կամ դուցէ մի քանի տարի առաջ: XV դարի վերջերին Վենետիկը դարձել էր եւրոպական տպագրութեան մեծա-

գոյն կենտրոններից մէկը: Դէպի այդ քաղաք էին հոսում ժամանակի մտաւորականներն ու հրատարակիչները Եւրոպայի ամէն կողմից: Հետեւաբար եթէ Վենետիկը հայկական տպագրութեան օրրանը եղաւ, դա չի կարելի վերագրել զուտ պատահականութեան: Հայր Տէր-Ներսէսեանը իրաւացի էր, երբ դրում էր. «Մեր իմաստուն տպագրիչը (Յակոբ Մեղապարտ) դիտցեր է դիմել ո՛չ միայն վաճառականութեան կենդրոն մը, այլ նաեւ իր օրերուն Եւրոպայի ամէնէն ծաղկնալ քաղաքը տպագրութեան արուեստին մէջ՝ Վենետիկ, ուր անշուշտ խորհրդակցելով տպագրութեան այս մեծ վարպետներուն հետ և անոնց օժանդակութեամբ ու օրինակով կրցած է ստեղծել հայ տպագրութիւնը»<sup>1</sup>:

### Հայերը իտալական մշակոյթում

Չնայած Արեւմուտքի այս ուժեղ ազդեցութեանը, հարկ է այնուամենայնիւ աւելացնել, որ հայերը չլիքնացան մի համեստ օժանդակութիւն բերել նաեւ տեղական մշակոյթին: 1557 թ. Վենետիկում Միքելէ Տրամեցցինոյ հրատարակչի կողմից խորհրդաւոր մի գրքոյկ լոյս տեսաւ՝ Բրիտոֆորոյ Արմենոյ/Բրիտափոր Հայի դրչից «Սերենդիպպոյի Թագաւորի երեք երիտասարդ զաւակների ուղեգնացութիւնը»՝ պարսկերէնից իտալերէն թարգմանութեամբ: Գիրքը ձօնուած էր դատախազ Ջիրոլամոյ Ջուստինիանիի որդուն՝ ձերակուտական Մարիոյ Անտոնիոյ Ջուստինիանիին:

Յետագայում այս ստեղծագործութիւնը պիտի ունենայ եօթ կամ ութ հրատարակութիւն եւ պիտի թարգմանուի ֆրանսերէն, անգլերէն, դերմաներէն, հոլանդերէն եւ դանիերէն: Բովանդակութիւնը արեւելեան ֆոնի վրայ անեկդոտների մի հաւաքածու էր: Ոմանք արդէն խորագրի մէջ կեղծամ փնտրեցին: Արդէն Ալիշանը ինքն իրեն հարց էր տալիս, թէ արդեօք թարգմանիչը հէնց ինքը հեղինակը չէ՞<sup>2</sup>:

Ուրիշները այս ստեղծագործութեան մէջ ուզեցին տեսնել բուն իսկ հրատարակիչ Տրամեցցինոյի գործը՝ ենթադրելով, որ Բրիտոֆորոն կեղծ անձնաւորութիւն է: Բացառուած չէ, որ հեղինակը իսաւրացի եղած լինի: Թէկուզ այսպէս, որպէս կեղծանուն՝ Հայի ածուան ընտրութիւնը իմաստից գուրկ չպիտի լինէր: Եւ սա ոչ միայն ընդ-

<sup>1</sup> Ամասունի Կ., Ոսկան Վրդ. Երեսնցի եւ իր ժամանակը, Վենետիկ, 1975, էջ 356:

<sup>2</sup> Ալիշան Հ. Ղ., Հայ-Վենետ, մաս II, էջ 222-227:

Հանուր Հանգամանքների բերումով, այլ սոյն գործի բովանդակու-  
թեանն առնչուող որոշակի պատճառներով: Իրոք, Արեւմուտքին քա-  
ջածանօթ էր Կոռիկոս բերդի իշխան Հեթումի պատմութիւնը (XIII  
դար): Արեւելեան միջավայրի եւ տարազների կենդանի նկարագրու-  
թիւններով այս պատմութիւնը մեծ ազդեցութիւն էր գործել Արեւ-  
մուտքի վրայ եւ թարգմանուած էր շատ լեզուներով: Սա երեւում էր  
նաեւ Մարկոյ Պոլոյի պատմութիւնների կողքին՝ «Նաւարկութիւն-  
նելու եւ ճանապարհորդութիւններ» հաւաքածուի մէջ, որ Ռոմուզլոն  
հրատարակում էր Վենետիկում XVI դարի կէսերին<sup>1</sup>: Ինչ վերաբե-  
րում է վիպակաների գրական արժէքին, Թէոդոր Բենֆեյի գերմաներէն  
թարգմանութեան հրատարակիչները այս գործը գերադասում են ժա-  
մանակի արձակ վիպակաների բազմաթիւ այլ հաւաքածուներին:

Դժբախտաբար մոռացութեան է մատնուած գրող Զաքարիա  
Սերիմանի (1708–1784) գործունէութիւնը, որը Նոր Զուղայի նշանա-  
ւոր Հայ Շեհրիմանեան ընտանիքից էր: Այս գերդաստանի մի ճիւղը  
1600-ականների վերջերից հաստատուած էր Վենետիկում<sup>2</sup>:

Շեհրիմանի գրական գործունէութեան մեծ մասը հրատարակու-  
եց անառն եւ իր ամենամեծ գործը՝ «Ճանապարհորդութիւնները»,  
նա գրեց Հենրիկ Վանթոն անգլիական կեղծանուան տակ: Սա կա-  
պիկների երկրում Վանթոնի կատարած ճանապարհորդութիւնների  
երեւակայական նկարագրութիւնն է: Բացայայտ է երկի երգիծական  
բնոյթը, որը որպէս թիրախ է ընտրում ԺԸ դարի Վենետիկի բարձր  
դասակարգի ընկերութեան բարքերը: Անցած դարի առաջին կէսին  
«Ճանապարհորդութիւնները» սիրուած գործ էր: Գամբան այսպէս է  
որակում այն. «Գուցէ իտալերէն բնագիրը ճանաչում գտած բարո-  
յաքննադատական ամենալաւ վէպն է»: Սակայն յետագայում այն  
մոռացուեց, մինչեւ իսկ Օրտոլանիի նման մի շրջահայեաց քննադա-  
տի կողմից<sup>3</sup>: Նրա համար տեղ չէր գտնուում իտալական գրականու-  
թեան մէջ: Իտալական մեծագոյն հանրագիտարանը՝ Տրեկկանին, բա-  
ւարարւում էր Շեհրիմանեան/Սերիմանիի յատկացնելով հազիւ մի  
քանի տող՝ «Ճանապարհորդութիւնները» որակելով որպէս միօրի-  
նակ եւ տափակ մի պատմուածք: Նրանով անցած դարավերջին զբա-  
ղուել է Ալիշանը: «Հայ-Վենետիկ» երկրորդ մասի վերջին էջերում

<sup>1</sup> Ramusio G. B., Navigazioni et Viaggi, vol II, Venezia, 1583, pp. 65, 58–64.

<sup>2</sup> Maxwell White, Zaccaria Scimian Tho Viaggi di Enrico Wanton. Manchester Univ. Press, 1961, pp. 15–16.

<sup>3</sup> Ortolani G., Voci e visioni del Settecento Veneziano, Bologna, 1926, p. 113.

(Հայերէն հրատարակութիւն) նրան յատկացնում է մի քանի տող՝ խոստանալով առաւել հանգամանօրէն անդրադառնալ երրորդ մասում, որ դժբախտաբար ժամանակ չունեցաւ կազմելու:

Համեմատաբար վերջին ժամանակաշրջանում մի շատ վաւերական մենագրութեան մէջ այս ստեղծագործութեանն անդրադարձաւ անգլիացի քննադատ Մաքսուել Հուայտը: Այնուամենայնիւ նրա ուսումնասիրութիւնը վերաբերում է միայն գրողի միջավայրին, կեանքին եւ մեծագոյն գործին: Սակայն նրա փոքր գործերը պակաս շահեկան չեն՝ մանաւանդ ժամանակակից հասարակութեան եւ իր կեանքի փիլիսոփայութեան ըմբռնման համար: Ներկայ յօդուածի հիմքը կազմող 1978-ի մեր իտալերէն բնագրային ուսումնասիրութեան մէջ կը գրէինք՝ թէ ժամանակն է, որ իտալական գրական քննադատութիւնը հետաքրքրուի իտալական լուսաւորութեան այս մոռացուած դէմքով՝ իտալական գրականութեան պատմութեան մէջ ըստ արժանւոյն նրան դնահատելու համար: Գրեթէ այդ նոյն օրերին այս մաղթանքը մասամբ գոնէ իրականութիւն էր դառնում՝ Կա Ֆոսկարի համալսարանի իտալական գրականութեան դասախօս, ծանօթ գրաքննադատ Զիլբերտոյ Պիցցամիլիոն «Ճանապարհորդութիւններ»ի գիտական վերահրատարակութեամբ (1977), որ արժարժեց հետաքրքրութիւն: Յետագային Պիցցամիլիոն ընդարձակ գեկոյցով հանդէս եկաւ Զաքարիայի մասին՝ Շեհրիմանեանների՝ Վենետիկ հաստատուելու երեքհարիւրամեակին նուիրուած գիտաժողովին (2001), որը կազմակերպել էր Գիտութիւնների, Գրականութեան և Արուեստների Վենետեան Ակադեմիան (գործերը հրատարակուած՝ 2004-ին):

Ժամանակագրական կարգով եւ գրական կարեւորութեամբ Սերիմանի յաջորդը բանաստեղծուհի Վիկտորիա Աղանուրն է:

Այս սակաւաթիւ օրինակները, եթէ մի կողմից ապացուցում են թէկուզ համեստ որեւէ մասնակցութիւն իտալական գրականութեան մէջ, կարծում ենք, որ առաւելապէս իմաստալից են նրա համար, որ ապացուցում են հայոց մասնակցութիւնը իտալիայի մշակութային կեանքին: Մասնակցութիւն, որ որոշ դէպքերում հասնում է մինչեւ գրական ստեղծագործութեան մակարդակի: Այս մասնակցութիւնը թէպէտեւ չի կարող համեմատուել հայ համայնքի առեւտրատնտեսական գործունէութեան հետ, այնուամենայնիւ իր մշակութային եւ մտաւոր կարեւորութեամբ արժեքաւոր երեւոյթ է:

Հորիզոնի այս կարճ շրջանը, որ կատարեցինք դարերի ընթացքի հետ, ի յայտ բերեց, որ հայ-իտալական յարաբերութիւնների պատմու-

թիւնը սկիզբ է առնում բոլոր մակարդակների եւ տարբեր ասպարէզների փոխադարձ կապերի բազմադարեան ժառանգութիւնից: Կարծում ենք՝ հարկ է ենթադրել, որ պատմական շարունակականութեան այս փաստի մէջ XVIII դարի առաջին կէսին Վենետիկը դառնում է նոր զարաշրջանի հայ մշակոյթի վերածննդի մեծագոյն կենտրոնը: Երիտասարդ Մխիթարը, հմայուած Իտալիայի եւ մանաւանդ Հռոմի համբաւով, մեծ ցանկութիւն է ունենում այնտեղ գնալ եւ յետոյ վերադառնալ իր երկիրը՝ բարձր գաղափարներով եւ առաքելութեամբ: Սակայն տարբեր էին նախախնամութեան ծրագրերը իր մասին:

Միայն տարիներ յետոյ իրադարձութիւնների անխուսափելի ճակատագիրը իրեն պիտի բերի Իտալիա, բայց այս անգամ վերջնականապէս հաստատուելու համար Վենետիկի Լագունայում (ծովածոցում): Խօսեցինք Յակոբ Մեղապարտի Վենետիկ գալու մասին, որ հրատարակչի իր նրազանքն իրականացնելու միջոցներ փնտրելու համար հաստատուել էր այստեղ: Ինչպէս ասացինք, սա ամենեւին պատահական չէր: Պատահական չէր նաեւ Մխիթարի Վենետիկում հաստատուելը: Բայց այստեղ հայ-իտալական մշակութային յարաբերութիւնների պատմութեան մի նոր էջ է բացոււմ, որ կարիք ունի յատուկ գնահատման:

### III. Մխիթարը եւ Մխիթարեանները.

#### Վենետիկը, Ս. Ղազարը եւ XVIII դ. հայկական վերածնունդը

Ծաւի՛ Վենետիկ, փառապա՛նծ Տիկին,  
Ջոր Իտալիան գինիով սընոյց,  
Եւ Արեւելքն իր զարդերով անգին,  
Պրճնեց վեհ ճակատդ ու ոտքերդ լոյծ:  
Կը հեղու երկինքն, իբրեւ սիրահար,  
Աստղե՛ր գըրկի՛դ մէջ, աստղե՛ր մագերուդ,  
Ծովն առջեւդ սըփոռէ՛ր է գորդ ու գոհար,  
Ջոյգ կապոյտի մէջ Երա՛զ մեծ կապոյտ:

...  
Պիտի քընարս իմ քեզ յիշէ յաւէտ,  
Քու փառքըդ մուրճի, փառքըդ վըրճինի.  
Պիտի յիշէ ե՛ւ խուցն այն տըխրաւէտ  
Կանանչ ջրանցքին վրայ սուրբ Գարմինիի:  
(Դ. Վարուժան, «Վենետիկ», 1913 թ.):

Դանիէլ Վարուժանի եւ ընդհանրապէս հայ մտաւորականութեան համար Վենետիկը միայն իր պերճաշքութեան մէջ թաղուած

առանձնապատուկ քաղաք է, լուկ ուսմանտիկ զեփիւռնների եւ իւրայատուկ կենսոլորտի ու յիշատակների փոխանցողը է, ուր ներքին անօրինակ ցոլացումներ են հասունանում: Նա միայն անցած ու թռչած փառքերի մասին պատմող գրուցակից է՝ ժամանակաշրջանի համեմատ հաճելի կամ ոչ: Նա ոչ միայն սփիւռքի, այլեւ Հայաստանի մշակութային, մտաւոր եւ հոգեւոր կեանքում այնուամենայնիւ աշխոյժ ու արդիւնաւէտ դործօն է: Բազմաթիւ պատմաբաններ միակարծիք են, որ Մխիթար Աբրահայր հրաշալիօրէն բարեբեր մշակութային գործունէութեան շնորհիւ Վենետիկից է տարածուել մշակութային վերածննդի ալիքը, որը նշանաւորեց XVIII դ. հայ իրականութիւնը՝ օտարերկրեայ իշխանութեան ծանր ու տառապալից քաղաքականութեան ներքոյ համարեա երկհարիւրամնայ ապարդիւն ճիւղերից յետոյ<sup>1</sup>:

Անիմաստ է պնդել վենետիկեան մշակութային աշխարհի հանդէպ Մխիթարի եւ իր աշակերտների պարտքի մասին: Այդուհանդերձ, առանց հռետորական շեշտադրութեան, կարելի է հարց տալ, ինչպիսի՞ն կը լինէր նման գործունէութեան ճակատագիրը, եթէ այն ստիպուած լինէր մեկուսացած մնալ Մոսկայի մոռացուած անկիւնում՝ Մեթոնի միջնաբերդում, ուր Մխիթարն օթիււանեց սկզբնական շրջանում՝ խոսսափելով օսմանեան մայրաքաղաքում բորբոքուած դաւանաբանական հալածանքներից: Մենք ամբողջութեամբ կիսում ենք Մխիթարեան միաբաններից Հ. Քրպարեանի կարծիքը. «Վենետիկը Մխիթարի համար ամէն տեսակէտից իսկական յայտնութիւն եղած է» («Մխիթար Սեբաստացի եւ Վենետիկ», Բազմավէպ, 1968, էջ 359): Այնուամենայնիւ ի՞նչը դրդեց անակնկալների հանդէպ այնքան քիչ հակուած այս անդորրաւէտ Հասարակապետութեանը խախտել նորահաստատ օրէնքը, որով արգելոււմ էր քաղաքում նոր հոգևոր կառոյցների հիմնումը եւ հիւրընկալել օտարազգի վանականների մի փոքրիկ խմբի, որոնք առաջին հայեացքից աւելի շարժնորապաշտ բախտախնդիրների երեւոյթ ունէին, քան իրատե՛ հոգևորականների: Կասկածից վեր է այն իրողութիւնը, որ Միջոնում Մխիթարի հիւսած յարաբերութիւնները վենետիկեան երեւելի անձնաւորութիւնների հետ, յանձինս Ալվիզէ Սեբաստիոս Մոչենիգոյի՝ ապագայ դոփի (1722–1732), եւ Մոսկայի կաթաւարիչ Անջելոյ

<sup>1</sup> Առաւել հանգամանալից տեղեկութիւնների համար անս Zekiyan B. L., "Il monachismo mechtarista a San Lazzaro e la rinascita armena del Settecento", La Chiesa di Venezia nel Settecento, sous la direction de B. Bertoli, pp. 221–248.

էմոյի, ազդեցին նրա որոշման վրայ: Այդուհանդերձ, այդ յարաբերութիւնները բաւարար չէին կարող լինել՝ նկատի ունենալով ցոյց տրուած հիւրընկալութեան բացառիկ բնոյթն ու նրանց շնորհուած ինքնավարութեան իրաւունքը: Մեր կարծիքով Սերենիսսիմայի ընտրութեան տրամաբանութիւնն ամբողջապէս կարելի է հասկանալ միմիայն այն դիտարկելով երկու ազգերի միջեւ տեւական, նպաստաւոր եւ փոխադարձ կապերի երկարատեւ աւանդոյթի շրջանակում: Յանձին այս գաղթական երիտասարդ հոգեւորականի՝ Վենետիկը ճանաչեց իրեն հարազատ ժողովրդի գաւակին, ժողովուրդ, որի հետ կիսել էր բազմադարեան մի պատմութիւն, որի համար եւ որի նկատմամբ դեռեւս չէր հասցրել մոռանալ յարգանքի, համակրանքի եւ յատկապէս երախտագիտութեան ամենախիսկական զգացումները: Երբ Վենետիկը տնտեսական անկում էր ապրում, քաղաքին տրուած հայերի ֆինանսական նպաստը աւելի ու աւելի մեծ նշանակութիւն «կսեց ստանալ: Դեռ միջնադարում միջազգային առեւտրի հարուստ աւանդոյթ ունեցող հայ վաճառականների առեւտրական յարաբերութիւնները իտալական ծովափնեայ հասարակապետութիւնների եւ Սիկիլիայի թագաւորութեան հետ շատ սերտ էին եւ հեռու էին թուլանալու, դրանք նոյնիսկ ծաղկում ապրեցին այն ժամանակուայ շատ հարուստ այնպիսի հայկական գաղթօջախների շնորհիւ, ինչպիսիք էին Ղւհմի, Սպահանի գաղթօջախները: XVII դ. ընթացքում, եւ յատկապէս անդիայի պատերազմի խաւար տարիներին (1645–1669), հայ վաճառականների ապրանքները վենետիկեան թուլացած տնտեսութեան գրեթէ միակ եկամտոյի աղբիւրն էին<sup>1</sup>: Մխիթարի ջերմ ընդունելութիւնն ու արդիւնաւէտ գործունէութիւնը Վենետիկում, որն այս հարուստ պատմական յարաբերութիւնների մասն է կազմում, առիթ է տալիս մի հակիրճ ակնարկով անդրադառնալ Մխիթարի գալուց առաջ այդ քաղաքում հայկական վանական համայնքի ներկայութեանը:

<sup>1</sup> Alishan P. L., Geonomia armena col rapporto alla Mostra Veneto-Armena nell' occasione del Terzo Congresso Geografico internazionale, San Lazzaro, Venezia, 1881, p. 4; Zekiyani B. L., "Xoça Safar ambasciatore di Shāh 'Abbās a Venezia", "Oriente Moderno", 1978, p. 359 (տե՛ս նաև հայերէն՝ Չեքիյան Ա. Լ., Խոջա Սաֆար՝ Շահ Աբբասի դեսպան Վենետիկի մէջ, «Պատմա-բանասիրական հանդէս», 1983, թիւ 1, էջ 105–116):

## Հայ վանականութեան եւ հոգեւոր ներկայութեան առկայութիւնը Վենետիկում Մխիթարից առաջ

Վենետիկի եւ հայերի միջեւ յարաբերութիւնների պատմութիւնը հասնում է մինչեւ Աղբիականի թագուհու պատմութեան առաջին հանգրուանները: Մխիթարից դեռ շատ առաջ Վենետիկում հայ վանականութեան աւանդոյթ է եղել, որի մասին դժբախտաբար չունենք այնպիսի հանգամանալից տեղեկութիւններ, ինչպիսիք XI—XII դարերից սկսած առկայ են բազմաթիւ իտալական քաղաքներում<sup>1</sup>: 1348 թ. գտնում ենք «Ս. Յովհաննէս Մկրտչի եղբայրներին»<sup>2</sup>, որոնք որպէս մասնակի ժառանգներ յիշատակուած են Վենետիկում ոմն Զաննինի դի Սկալայի կտակի մէջ: Խօսքը Բարսեղեան աւանդոյթին պատկանող հայկական վանական մի հասարակութեան մասին է, որոնք մեծ տարածում գտան Իտալիայում, յատկապէս սկզբնական շրջանում, երբ բաւական ինքնավարութիւն ունէին: Նրանցից շատերը դարձան գրական աշխոյժ գործունէութեան շատագովներ. այս դարերի ընթացքում որոշ թուով հայկական ձեռագրեր են արտագրուել թերակղզում, դրանցից ոմանք՝ հրաշալի մանրանկարներով<sup>3</sup>: Հնարաւոր է, որ Վենետիկում ժամանակին եղել են երկու եկեղեցիներ: Միակ վկայութիւնը գտնում ենք իտալահայ վանքերի և ունիթորական շարժումի լաւագոյն մասնագէտ Մ. Ա. Ուդենոայնի մօտ, որը նշում է, որ 1348 թ. յիշուած վանքը երբեք չընդունեց 1356 թ. Իտալիայի հայ Բարսեղեանների միջեւ հաստատուած ընդհանուր միութիւնը, մինչդեռ Կաստելլոյի վանքը, որը յարում էր քարսեղեան շարժանը մասնաւոր դիտարկմամբ յիշատակում է Իննովկենտոս IV-ի հաւանութեան կոնդակում:

Հայոց Սուրբ Խաչ եկեղեցու առաջին յիշատակութիւնը 1434 թուականից է: Այն, իրեն կից հիւրատնով, այսինքն՝ հայերին հիւրընկալող հոգեւոր գտնուում է Կանթեղների նրբանցքում (Կալլէ դելլէ Լանտեռնէ)՝ յետագայում Հայոց Նրբանցք (Կալլէ դէ Արմէ-

<sup>1</sup> Zekiyan B. L., "Le colonie armene del Medio Evo in Italia e le relazioni culturali italo-armene (Materiale per la storia degli Armeni in Italia)", Primo Simposio Internazionale di Arte Armena (Bergamo 1975), Atti, San Lazzaro, Venezia, 1978.

<sup>2</sup> Ալիշան Հ. Ղ., Հայ-Վենետ, Ս. Ղազար, Վենետիկ, 1893, էջ 70:

<sup>3</sup> Измайлова Т. А., Армянская Рукопись, написанная в Генуе в 1325 г., и её оклад 1347 г., Византийский временник. Т. XX, М., 1961, с. 243-258; Корхмазян Э. М. Армянские рукописи, иллюстрированные в Италии. «Պատմա-քանաքրատիկան համրէտ», 1971, քի 3, էջ 247-255; Ieni G., "I codici miniati", Gli Armeni in Italia, Roma, 1990, pp. 90-92.

նի)<sup>1</sup>: Ընդարձակուելով եւ նորոգուելով 1496, 1510–1520, 1689 թուականներին եւ 1976 ու 1982 թթ. ենթարկուելով մանրակրկիտ վերանորոգութեան, այն Իտալիայի միակ միջնադարեան հայկական եկեղեցին է, ուր այսօր էլ հայկական աւանդական պատարագ է մատուցուում: Սուրբ Խաչը գտնուում է Մխիթարեան միաբանութեան խնամակալութեան ներքոյ, որին պաշտօնապէս տրամադրուել է հայկական գաղթօջախի կողմից, Մխիթարի կենդանութեան օրոք՝ նրա վերջին ժողովրդապետ Խաչատուր Էրզրումեցի Առաքելեան վարդապետի վախճանումից յետոյ: Վենետիկում հայերն իրենց սեփական գերեզմանատունն ունէին Սան Ջորջոյ Մաջիորէ կղզում, որի մասին առաջին յիշատակութիւնը հասնում է դեռեւս 1341 թ.<sup>2</sup>: 1675-ին հայկական համայնքը դեռ պայքարում էր չորսհարիւրամեայ հնութիւն ունեցող իր տարածքի սեփականութեան իրաւունքը պահպանելու համար: Երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ Սան Ջորջոյ Մաջիորէ տաճարի նորոգութեան ընթացքում, որը յետագայում կառուցուել էր անմիջականօրէն հայկական գերեզմանատան տարածքի վրայ, յայտնաբերուեց 1570 թ. հայկական արձանագրութեամբ մի տապանաքար: Անդրադառնալով եկեղեցական հնագոյն հետքերին՝ պէտք է մոռանալ Արարատի տաս հազար մարտիրոսներին վերագրուող մասունքների մասին, որոնք պահպանուում էին այսօր արդէն անհետացած Սանտա Մարիայ դելլայ Չելեստիա եկեղեցում, եւ որոնց մեծ ծաւալում գտած թեմատիկան արծարծուած է Վենետիկի Ակադեմիայի Պատկերասրահում պահուող Կարպաչչիոյի հանճարեղ կտաւում<sup>3</sup>:

### **Վենետիկը՝ հայ տպագրութեան օրրան**

1512 թ. Վենետիկը դարձաւ Հայաստանի մշակոյթի պատմութեան համար չափազանց նշանակալից կենտրոն. այնտեղ հրատարակուեց հայ առաջին տպագիր գիրքը: Տպագրիչ-հրատարակիչը Յակոբ անունով մի հայ է, որն անծանօթ է բոլորին, եւ իր թողած միակ յիշատակարանում որպէս «Մեղապարտ» է ներկայանում: Այս դէպքը յիշարժան է այնքանով, որքանով արեւելեան լեզուներով հրատարակող առաջին տպագրիչների մէջ «մայրենի լեզուով» հրա-

<sup>1</sup> Gianighian G., "La chiesa di Santa Croce e l'ospizio degli armeni a Venezia", Gli Armeni in Italia, Roma, 1990, pp. 50–52.

<sup>2</sup> Ալիշան Հ. Ղ, Հայ-Վենետ, էջ 73–76, 212–214:

<sup>3</sup> Zorzi A., Venezia scomparsa, II, Milano, 1972, pp. 347–348.

տարակիչներ բաւական հազուադէպ էին հանդիպում: Սակայն սա աւելի քան «բնական» էր հայ իրականութեան համար, քանի որ տեղացի հրատարակիչը միայն տեխնիկական միջոցներն էր տրամադրում, մինչդեռ հայ հրատարակիչը մնում էր նախաձեռնութեան հեղինակը<sup>1</sup>:

Այս իմաստուն՝ համարեայ անյայտ հայի կողմից իր երազանքն իրագործելու համար Վենետիկ քաղաքի ընտրութիւնը պատահական էր: Բացի այն իրողութիւնից, որ ժամանակին Վենետիկը Եւրոպայի ամենակարեւոր տպագրական (հրատարակչական) կենտրոններից մէկն էր, նկատի առնելով հայերի ու Վենետիկի միջեւ եղած սերտ յարաբերութիւնները, այն հեշտութեամբ դարձաւ նաեւ Մովսիսորշում առաջին հայկական տպարանի ծննդավայրը: Այդ ժամանակից սկսած աւելի քան 20 տպագրիչներ շուրջ 250 անուն հայերէն գիրք են հրատարակել այստեղ, մինչեւ 1789 թ., երբ Սուրբ Ղազար կղզում ի վերջոյ հիմնադրուեց Մխիթարեան հայրերի բազմալեզու տպարանը: Այն գործեց շուրջ երկու հարիւր տարի՝ մինչեւ 1989 թ., չնայած Մխիթարեան հրատարակչատունը մինչ այսօր էլ շարունակում է իր գործունէութիւնը: Այս երկու դարերի ընթացքում Սուրբ Ղազարի միաբաններին յաջողուել է հրատարակել երեսունվեց լեզուներով եւ տաս տարբեր այբուբեններով՝ ստանալով բազմաթիւ միջազգային մրցանակներ: Այսպիսով, ի շարս հայ տպագրութեան միւս մեծ կենտրոնների՝ Հոռմի, Միլանի, Լիւոռնոյի, Մարսելի, Փարիզի, Ամստերդամի, Նոր Զուղայի, Մադրասի, Թիֆլիսի, Չմիւռնիայի, Կ. Պոլսի, Վենետիկը պահպանեց որոշակի առաւելութիւն, որի հետ միայն Կ. Պոլիսը կարող էր մրցակցել XVIII—XIX դդ. ընթացքում:

#### Մխիթարեան միաբանութեան արմատները Կ. Պոլսում

Մխիթարը՝ աւագանի անունով Մանուկ՝ ծնուել է 1676 թ. Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքում, որն օսմանեան տիրապետութեան շրջանում առեւտրական մեծ կենտրոն էր: Տասնհինգ տարեկանում մտնում է Ս. Նշան վանքը: Միաբանութիւնում վերցնում է ՔԹ պապի անունը՝ Մխիթար: XVI դարից սկսած՝ Հայոց վանքեր: «րկարածամկէտ ճգնաժամ էին ապրում, սահմանափակուեցւ լազգային ժառանգութեան պահպանումով եւ աստիճանաբար՝ զորցնելով զար-

<sup>1</sup> Sivasliyan B., "Venezia per l'Oriente; La Nascita del libro armeno", Armeni, Ebrei, Greci, Stampatori a Venezia, S. Lazaro, Venezia, 1989, pp. 23-29. Id., "La Nascita dei primi libri a stampa armeni nel cuore della Serenissima", Gli Armeni in Italia, cit., p. 94.

գացման միտումը: Իդէալիստ պատանուն չէր բաւարարում այդ վիճակը: Այսպէս սկսւում են նրա հեռաւոր ճամփորդութիւնները պատմական Հայաստանի անծայրածիր տարածքներով՝ Սեբաստիայից էրզրում, մինչև Էջմիածին: Այդուհանդերձ նրա սպասումները չեն բաւարարուում: 1691 թ. Մխիթարը հաստատուում է էրզրումում, ուր իր առաջին շփումներն է ունենում արեւմտեան քրիստոնէութեան հետ՝ յանձին յիսուսեան մի վարդապետի՝ գուցէ յայտնի բանասէր եւ փիլիսոփայ Ժաք Վիյետտի: Վերջինս մեծ ապաւորութիւն է գործում իր երիտասարդ զրուցակցի վրայ, եւ հաւանաբար հէնց նա՝ է ոգեւորել պատանուն Արեւմուտք գնալ, համեմատաբար լաւ պայմաններում փնտրելու իր սպասումների պատասխանը:

Դեռ քսան տարեկանում հայրենի Սեբաստիայում քահանայ ձեռնադրուելով՝ Մխիթարը նոր միաբանութիւն հիմնելու միտքը սկսեց փայփայել: Այս երազանքով ոգեւորուած Մխիթարը եկաւ օսմանեան մայրաքաղաք Կ. Պոլիս, ուր իր նպատակների մասին պատմեց ժամանակի ամենայայտնի վարդապետներից մէկին՝ վերոյիշեալ Խաչատուր Առաքելեանին, որը Հաւատասփիւռի Ուրբանեան վարժարանի նախկին աշակերտ էր եւ Մելքիսեդեկ Պատրիարքի փոխանորդը: Մխիթարը նրան խնդրեց նախաձեռնութեան պատասխանատուութիւնը վերցնել իր վրայ: Վարդապետը ազնուօրէն հրաժարուեց առաջարկից՝ գտնելով, որ այն անիրականանալի է: Մխիթարն ամենեւին չյուսահատուեց եւ, իր շուրջը հաւաքելով մէկ տասնեակ երիտասարդների, 1700 թ. Կ. Պոլսի Բերա թաղամասի մի համեստ բնակարանում նրանց հետ սկսեց միաբանական կեանքով ապրել եւ քարոզչական առաքելութեամբ զբաղուել: 1701 թ. սեպտեմբերի 8-ին՝ Ս. Աստուածածնի Ծննդեան տօնին, փոքրաթիւ խումբը հանդիսաւորապէս ուխտեց իր նուիրագործումը Աստծուն՝ Ս. Կոյսի մայրական հովանաւորութեան ներքոյ:

Մխիթարը Կարճ ժամանակ կարողացաւ մնալ Կ. Պոլսում: Հռոմի Եկեղեցու հետ հաղորդութիւն հաստատած հայերի դէմ հալածանքների արդիւնքում նա Բօփպուած եղաւ գաղտնաբար լքել օսմանեան տարածքը՝ օթեւանելու հաջար Մոռէայի Մեթոնում (Պելոպոնէս), որը վենետիկեան տիրապետութեան տակ էր գտնուում: Դժբախտաբար կամ բարեբախտաբար՝ նայած ո՛ր տեսանկիւնից ենք դիտում, Օսմանեան կայսրութեան կողմից թերակղզու նուաճումը 1715 թ. նրան նորից ստիպեց վերցնել գաղթականի ցուպը: Սակայն այս անգամ նա պէտք է յայտնագործէր իր երկրորդ հայրենիքը՝ Վենետիկը:

## Մխիթարը եւ Հայոց եկեղեցին

Ընկալելու համար Մխիթարի կեանքի եւ գործունէութեան իրար յաջորդող շրջանները, հարկ է, հնարաւորինս հակիրճ, լուսաբանել Հայոց եկեղեցու դիրքերը թէ՛ աստուածաբանական եւ թէ՛ եկեղեցական տեսանկիւնից: Հայոց եկեղեցին նախաքաղքեղոնական եկեղեցիների թուին է պատկանում՝ Քաղքեղոնի ժողովի եզրակացութիւնները չընդունելու պատճառով: Այս պայմաններում Հայ եկեղեցու պաշտօնական քրիստոսաբանութիւնը հիմնականում և մշտապէս մնացել է ուղղափառութեան սահմաններում՝ թէկուզ դաւանական բանաձեւում իր իւրայատուկ աւանդութեամբ: Աւելի ուշ, XI դ. սկսած, երբ հայերը ուղղակի շփումների մէջ էին Հռոմի եկեղեցու հետ, երկու եկեղեցիները հաստատեցին փոխադարձ յարգանքի եւ վստահութեան վրայ հիմնուած ջերմ յարաբերութիւններ: Դժբախտաբար, ժամանակի հետ Հայոց հաւատոյ հանդանակի, ծէսի ու եկեղեցական կանոնների նկատմամբ Հռոմը եւս զարդացրեց բարձրավիզ եւ նուաստացուցիչ կեցուածք, ինչպիսին Բիւզանդիայինն էր:

Այս շրջանում հայերի մօտ չորս հիմնական ուղղութիւններ են ձեւաւորուել եկեղեցաբանական ոլորտում. ա. «ազգայնական» թեւը, որոնց համար հաճելի էր եկեղեցիների ամբողջական անկախութիւնը. բ. արմատական «լատինամոլ» թեւը, ներկայացուած «Ունիթոններից» կամ «Միաբանող Եղբայրներից», որը որդեգրել էր լատին ծէսը՝ այն հայերէն թարգմանելով. գ. առաւել մեղմ լատինամէտ թեւը, որը, բացի Հռոմի հետ միութիւնից, գտնում էր, որ պէտք է «սրբագրել» հայ ծէսը. դ. ի վերջոյ այն թեւը, որը պիտի տարբերուէր իր «էկումենական» մօտեցմամբ՝ ընդունելով Հռոմի հետ միութիւնը, սակայն սկզբունքայնօրէն որեւէ ձեւով չհրաժարուելով սեփական եկեղեցական աւանդոյթից: Այս տարբեր հոսանքները մինչեւ XVIII դարի սկիզբը համատեղ դոյատեւում կամ դիմագրաւում էին իրար: «էկումենական» միտումը, որն աւելի թոյլ էր, քան միւսները, իր շարքերում յայտնի ներկայացուցիչներ ունէր՝ նոյնիսկ հայ-ց եկեղեցական նուիրապետութեան բարձունքներում: Մխիթա՛ւր ժամանակակիցներից կարող ենք նշել Կ. Պոլսի Մեկքիսեղեկ Պատրիարք՝ Նրա քարտուղար Խաչատուր Առաքելեանը բարձրա՛յայտօրէն Կ.Պ.Մ. էր Հռոմի հետ միութեան իրականացմանը՝ ա՛յլայն «էկումենական» միտումով, եւ նոյնիսկ Էջմիածնի կաթողիկէս Նահապետ Ի Եղեսացին Մխիթարի այցելութեան ընթացքում Հռոմի համար բաց լինելու պատճառով կարճ ժամանակով իշխանութիւնից քաշուել էր: Սակայն

ի վերջոյ, ընդհանուր ցանկութեանն ընդառաջելով, որի շահերի ներկայացուցիչն էր, նա վերադարձաւ իր աթոռին: Այսպիսով, Հայոց Եկեղեցու ներսում հոսանքների նշանակալից ելեւէջներ կային նոյնիսկ ամենաբարձր մակարդակներում: Մխիթարն ինքը եւս հաստատում էր, որ իր ժամանակի հայ եպիսկոպոսների ընդհանուր թուի կէսը քիչ թէ շատ իր նման էր մտածում: Նա պատշաճ չէր գտնում Հռոմին հաղորդ առանձին հայ պատրիարքութիւն հիմնելը, քանի որ նման կառույցը վերջնականապէս կը սահմանազատէր եւ կ'առաջացնէր երկպառակութիւն, որն էլ իրականում կատարուեց 1742 թ. Մխիթարի կենդանութեան օրօք, երբ Կիլիկիայի կաթողիկէ հայ պատրիարքութիւն հիմնուեց Ջմառում (ներկայումս Լիբանան): Սրանից յետոյ միութիւն հաստատելու բազմաթիւ փորձեր եղան «էկլումենական» ոգիով և սկզբունքներով համաձայնութեան գալու իմաստով՝ յատկապէս ոգեւորուելով Վենետիկի Մխիթարեանների ներշնչումով ու փորձով: Սակայն այդ ժամանակի երկու թեւերի ամենածայրայեղական խաւերին յաջողուեց խափանել այս ծրագիրը: 1829 թ. Կ. Պոլսում հայ կաթողիկէ համայնքի համար գահերէց արքեպիսկոպոսական աթոռի ստեղծմամբ, որը 1867 թ. իր վրայ վերցրեց նաեւ Կիլիկիայի պատրիարքական աթոռի իրաւասութիւնը, այլեւս միութեան փորձեր օրակարգի նիւթ չդարձան, եւ դաւանաբանական-եկեղեցաբանական սահմանագծերը վերջնականապէս տաքանջատուեցին: Տեսնում ենք, թէ ինչ ոգեւորութեամբ եւ ինչ բառերով է Կ. Պոլսի պատրիարք Յովհաննէս Կոլոսը (1715–1741) իր բարձր աթոռից արտայայտուում Մխիթարի գրչին պատկանող «Մեկնութիւն Սրբոյ Աւետարանի Տեառն մերոյ ՅՔ որ ըստ Մտթէոսի» (1737) հազար էջից աւելի հրատարակութեան մասին, որպէս քրիստոնէական հաւատամքի մեկնողական ժանրի իրական «բովանդակութիւն», եւ բացականչում. «լոյս մեծ ծագեաց այսօր եկեղեցւոյս Հայոց, գանձ տուաւ յԱստուծոյ գիրքս այս»<sup>1</sup>: Սակայն արիստոսանքով պիտի նկատենք, որ պատմութեան անիւր այլ ընթացք ստացաւ մի քանի տարի անց:

### **Մխիթարի Միաբանութեան բնոյթն ու նպատակը**

Մխիթարն իր Միաբանութեան հիմնական ծրագիրը, Հռոմի հաւանութեանն արժանանալու նպատակով, առաջին անգամ բանաձե-

<sup>1</sup> Չամչեանց Հ. Մ., Պատմութիւն Հայոց, հ. Գ, Ս. Ղազար, Վենետիկ, 1786, էջ 775: Կիլիկեւրեան Բ., Յովի. Կոլոս Պատրիարք, Վիեննա, 1904, էջ 49:

ւեց ու ներկայացրեց Մեթոնում Կղեմէս XI-ին (1705 թ.)։ «Մեր սահմանադրութեան սկզբունքներն այսպիսին են. ամէնից առաջ պահպանել վանականութեան ձեւը, որ վերցրել ենք հայերից, այնպէս ինչպէս պահպանում են հայ վանականները, առանց մոռանալու այն երեք ուխտերը որոնք հիմնականն են կրօնաւորական վիճակում»<sup>1</sup>։ Այս վերջին ընդգծումը բացատրւում է նրանով, որ հայոց գործելակերպի մէջ՝ հայոց Հնադոյն կրօնական աւանդոյթի համաձայն, ուխտերը չեն արտասանուած բացայայտօրէն. այս հանգամանքը ժամանակի ընթացքում առաջացրել էր որոշ թուլութիւն՝ մանաւանդ ազբատութեան եւ հնազանդութեան ոլորտում։ Հէնց այս կէտում է, որ Մխիթարն ուղեց վերատեսնել հայոց սովորական դարձած գործելակերպը, երբ Միաբանութեան հիմնադրման օրն իսկ իր ընկերներին եւ աշակերտներին ասաց, որ նրանց չի համախմբել, որպէսզի, վարդապետական գաւազանն ընդունելուց հետոյ, իւրաքանչիւրն իր սեփական առաքելութեամբ ապրի, ինչպէս իրենց ազգի միւս վարդապետները, այլ որպէսզի իրենց բովանդակ կեանքի ընթացքում մնան միահամուռ՝ մէկ մեծաւորի գլխաւորութեամբ՝ միասին յողթահարելու համար իրենց առջեւ դրուած նպատակները։ Առաքելութեան «չորրորդ ուխտը»՝ «մինչեւ ցհեղումն արեան», որ Մխիթարը վճռակամօրէն ուղեց ներդնել իր կանոնների մէջ, ուժգնօրէն ընդգծում է իր վանականութեան առաքելական բնոյթը։

Առաջին իսկ շփումներից, Մխիթարի հաստատութիւնը Հռոմին ներկայացաւ որպէս Ս. Անտոն Աբբայի հայ վանականների վերանորոգուած միաբանութիւն։ Հայ վանականութեան աւանդոյթը երկու գլխաւոր կանոններ էր ճանաչում՝ մէկը Ս. Անտոնինը, միւսը՝ Ս. Բարսեղինը։ Ս. Նշան վանքը պատկանում էր Ս. Անտոնի աւանդոյթին։ Մխիթարը շատ էր կապուած անտոնեան արձատներին եւ, հաւանօրէն, սրանով է բացատրւում նրա կողմից Ս. Բենեդիկտոսի կանոններն ընդունելը, այլ ոչ Ս. Բարսեղինը, քանի որ Հռոմը բաւարարուած չլինելով հայկական անտոնեան աւանդոյթի «բանաւոր» բնոյթից, նրանից պահանջում էր ընտրել իր կողմից ճանաչուած չորս մեծ կանոններից մէկը։ Ի վերջոյ Միաբանութեան յատուկ եւ հիմնական սկզբունքներից մէկն էլ այն էր, որ նրա բոլոր անդամները հայ պէտք է լինէին՝ գոնէ հօր կողմից։ Խնկացի որոշում էր, այն

<sup>1</sup> Ամատունի Կ. Վրդ., Մխիթարը որպէս հայ վանականութեան բարեփոխիչ, «Բազմավէպ», Բացառիկ, 1949, քիւ 7, էջ 180-181։

առուժով, որ նպատակ ունէր հնարաւորինս պահպանել ազգային, ծիսական եւ մշակութային ինքնութիւնը: Անհնար էր հաշուի չառնել Իտալիայի միջնադարեան ծաղկուն հայ վանականութեան ձուլման բազմաթիւ օրինակները:

### **Վենետիկից Վիեննա. Մխիթարեան երկու ճիւղաւորումները**

Մխիթարին, որը վախճանուեց 1749 թ. ապրիլի 27-ին, յաջորդեց երիտասարդ վանական Ն. Ստեփանոս Մելքոնեանը (1750—1800): Նրան սպասող առաջնահերթ պարտականութիւններից մէկն էր Միաբանութեան սահմանադրութեանն իր վերջնական ձեւը տալ: Առաջ եկան անհամաձայնութիւններ, որոնք 1773 թ. յանգնցրին երկպառակութեան, եւ որոշ թուով վանականներ լքեցին Ս. Ղազարի վանքը՝ Տրիեստում հաստատուելու նպատակով: Լաւ ընդունելութիւն գտնելով Աւստրիայի կայսեր կողմից, նրանք 1881 թ. վերջնականապէս հաստատուեցին Վիեննայում: Այդ ժամանակուանից սկսած Մխիթարեան երկու ճիւղերը գովելիօրէն մրցակցեցին միմեանց հետ կրթական, մշակութային եւ հոգեւոր բնագաւառներում հայ ժողովրդին արժանի ծառայութիւն մատուցելու համար: Այսուհանդերձ դժուար չէ տարբերակել իւրաքանչիւրի մասնաւոր մօտեցումը Հայոց Եկեղեցու հանդէպ: Տրիեստեան-վիեննական դպրոցը սկզբից եւեթ ցոյց տուեց, որ առաւելապէս յարում է Լոմֆական Հոգաբարձութեան եւ Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան աստուածաբանական եւ կանոնական ուղղութեանը:

### **Մխիթարը՝ էկլումենականութեան մեծ ռահվիրայ**

Եթէ վերանանք «էկլումենիզմ» հասկացութեան յաճախակի ու անյարիր գործածութիւններից, Վատիկանեան Բ. ժողովի "unitatis redintegratio" արտայայտութիւնը, ըստ ինքեան, արտայայտում է այս շարժումի բուն իմաստը, որ է «միութեան վերահաստատումը», այսինքն՝ այն միութեան որ եղել է սկզբնաբար քրիստոնեաների միջեւ և որ, դարերի ընթացքին, տակաւին պառակտել է: Ուստի, այս յղացքի կիրառումը այլակրօն հաւաքականութիւնների նկատմամբ դիպուկ չէ, քանի որ չկայ այս պարագային մի կորած միութիւն, որը պէտք լինի վերահաստատել: Այս հիմնական և հիմնարար նկատողութեանն աւելացնենք ոչ նուազ էական մի այլ նկատողութիւն, որ էկլումենական շարժումը չի բնորոշում միայն քրիստոնեաների կորած միութեան վերահաստատման որոնումով, այլ միանգամայն իր

իւրայատուկ ըմբռնումով այդ միութեան բնոյթի և պայմանների, ինչպէս նաեւ այն իրականացնելու իր մասնաւոր մեթոդաբանութեամբ:

Չենք կարող ասել, որ քրիստոնէութիւնն ընդհանրապէս կարող է պարծենալ էկլումենիկ դէմքերով Հարուստ պատմութեամբ: Հակառակ դրան, Հայոց Եկեղեցին համեմատաբար աւելի մօտ է եղել էկլումենական ներշնչումներին ու տեսականներին և տուել է դէմքեր, որոնք այս տեսակէտից պարծանքը կարող են լինել համայն քրիստոնէութեան: Սրանց միջեւ առանձնանում է Ս. Ներսէս Շնորհալին (1102—1173), որը հաստատապէս քրիստոնէական տիեզերական մշակոյթի բարձրակէտում է գտնուում: Ըստ յայտնի կենսագիրների վկայութիւնների, Մխիթարը դեռեւս պատանեկութեան շրջանում հայ վարդապետների ու հոգեւոր հայրերի ջանասէր ընթերցողն էր՝ նպատակ ունենալով հասկանալ ու պարզաբանել քրիստոսաբանական եւ եկեղեցաբանական եզրերն ու բանաձևերը: Անկասկած նա շատ լաւ էր ճանաչում Շնորհալու աշխատութիւնները եւ ոգեւորւում էր դրանցով՝ խորացնելով այն աւանդոյթը, որը գուցէ եւ ելեւէջներով, սակայն դարերի ընթացքում պահպանուեց:

Մխիթարը յարմարեցրեց եւ ստեղծագործաբար ներդրեց Շնորհալու սկզբունքները իր ժամանակի իրականութեան մէջ: Դեռ երիտասարդ քահանայ, նա աշխատում էր այդ ուղղութեամբ՝ միասնութիւն, սէր, եղբայրութիւն քարոզելով հակառակորդ Հայ խմբաւորումների մէջ, եւ աշխատելով միջնորդ լինել ոչ միայն նրանց, այլեւ վերջիններիս ու լատին աշխարհի միջեւ, որն ուղղակիօրէն միջամտում էր ներքին ընդհարումներին եւ որոշ առումով պատմաբանատու էր իրավիճակի համար: Մխիթարը խօսում եւ գործում էր որոշակի դիտաւորութեամբ. ա) արմատախիլ անել մոլորաւորութեան խաւարը, բ) ընդգծել այն, ինչը միացնում է, փոխանակ պնդելու այն ամէնը, ինչը բաժանարարի դեր է խաղում, գ) տեսանլի անհամաձայնութիւնների խորքի վրայ բացայայտել հնարաւոր հակասութիւնները, դ) ցոյց տալ միաբանելու կարեւորութիւնն այն բոլոր հարցերում, որոնք անխուսափելի են հաւատքի միութեան համար: Մխիթարի համար «հաւատափոխութեան» հարց չէր դրւած: Նա խորապէս համոզուած էր, որ Հայոց Եկեղեցու հնագուստ հաւատքը, չնայած բանաձևային որոշ տարբերութիւններին, հիմնաւորապէս ուղղափառ է: Միաժամանակ նա համուած էր, որ չէր կարելի խօսել Հայոց Եկեղեցու և Հռոմի Եկեղեցւոյ միջեւ իսկական բաժան-

ման մասին: Այս պատճառով էլ նա բացասական էր գնահատում լատինամեթոդների դիրքորոշումը, ոչ միայն որովհետև այն վնասում էր հայկական ինքնութեանը, բայց նաև ձգտում էր ստեղծել առանձին մի համայնք իր սեփական նուիրապետութեամբ, որը, նրա կարծիքով, միասնութեան ճանապարհը կ'արգելափակէր, ինչն էլ իրականում տեղի ունեցաւ:

### Մխիթարեանների գործունէութիւնը

Ձնայած բաժանման առաջացրած վրդովումներին, այն ժամանակաշրջանը, երբ ընդհանրական արբահայր Մելքոնեանը գլխաւորում էր միաբանութիւնը, Ս. Ղազարի համար եղաւ իր գրական-գիտական գործունէութեան ամենաբեղուն շրջանի առաջին հանդրուանը: Մելքոնեան Արբահայրը վճռականօրէն զարկ տուեց միաբանութեան վանական, հոգեւոր, առաքելական, մշակութային եւ գիտական գործունէութեանը, որոնք հզօր ազդեցութիւն ունեցան հայ հասարակութեան վրայ, ինչպէս Հայաստանի պատմական տարածքի, այնպէս էլ աշխարհասփիւռ գաղթօջախների մէջ՝ մինչեւ հեռուոր հնդկահայ գաղթօջախ: Ծշմարտութեանը յազուրդ տալով՝ կարող ենք ընդունել, որ սա Միաբանութեան պատմութեան ոսկեդարն էր՝ Գագաթնակէտ ունենալով 1780—1850 թթ. ժամանակաշրջանը: Այս թուականների ընթացքում է հրատարակուում Հ. Միքայէլ Չամչեանի «Պատմութիւն Հայոց ի սկզբանէ մինչեւ յամ 1784» եռհատորեակը, նոյն հեղինակի «Մեկնութիւն Սաղմոսաց»ը՝ տաս հատորով, Հ. Գաբրիէլ Աետիքեանի բազմահատոր աստուածաբանական աշխատութիւնները, որին «սարսափելի աստուածաբան» մականունն էին տալիս իտալացիները, վկայաբանութեան եւ հայրախօսութեան բազմաթիւ հատորների հեղինակ Հ. Մկրտիչ Աւգերեանի աշխատութիւնները, հանրայայտ «Բառգիրք Հայկազեան Լեզուի» կոթողային աշխատանքը կամ աւելի պարզօրէն «Հայկազեան» բառարանը, որը համարուում է հայ բանասիրութեան ամենանշանակալից եւ իր այժմէականութիւնը պահպանող աշխատութիւններից մէկը: Նոյն ժամանակաշրջանը նշանակալից էր նաև ա) Հայ ժողովրդի երկու թեւերի, այսինքն՝ Հոռմի հետ հաղորդութեան յարողների Մայր Եկեղեցու հետ միացման երկու փորձերով (1809, 1820), որոնք թիկնած էին էկումենական օրինակելի հիմքի վրայ, բ) հայ բնակչութեան մէջ դպրոցների և կրթարանների ցանցի տարածմամբ, գ) պարբերական մամուլի արմատաւորման և ծաւալման համակարգօրէն հետապնդու-

մով, որը պսակուեց Ն. Գաբրիէլ Այվազովսկու կողմից 1843 թ. «Բազմավէպ» Հանդէսի Հիմնադրամբ, սկզբնաբար երկշարթաթերթ, որը դեռեւս մեր օրերում հրատարակուող հայկական ամենահին հանդէսն է եւ համաշխարհային մակարդակով չորրորդ ամենահինը: Հանդէսի էջերում մշտապէս տեղ են դտել գիտական, աստուածաբանական, գեղարուեստական, հայադիտական, պատմական, լեզուաբանական, Հայ եկեղեցու պատմութեանը նուիրուած նւթեր: Մինչեւ այսօր էլ անգնահատելի են Հանդէսի ծառայութիւնները եւրոպական մշակոյթը հայոց կեանք ներմերելու ասպարէզում: Եւ հակառակը՝ օտար լեզուներով տպագրուած յօդուածները եւրոպացիներին ծանօթացնում էին մեր ազգի մշակոյթին եւ գիտական մակարդակին: Հանդէսի էջերում բազմիցս կարելի է հանդիպել նշանաւոր հայ եւ օտարազգի գիտնականների արժեքաւոր յօդուածներին, գիտական քննարկումներին, որոնք այն դարձնում էին հայագիտական մտքի զարգացման անփոխարինելի ասպարէզ:

Դարի երկրորդ կէսին վիեննական աւելի երիտասարդ դպրոցը մի նոր վաստակ աւելացրեց վենետիկեան աւանդին, ինչպիսիք էին՝ Ն. Գաթրճեանի, Տաշեանի, Յովնանեանի, Սիբիլեանի աշխատութիւնները՝ ներշնչուած դերմանական բանասիրութեան ամենախիստ սկզբունքներով: Այստեղ եւս 1887 թ. սկսեց հրատարակուել «Հանդէս Ամսօրեայ» հայագիտական հանդէսը: Այս տասնամեակների ընթացքում Վենետիկում հասունանում էր հայագիտական աշխարհի ամէնէն երեւելի անձնաւորութիւններից մէկը՝ Ն. Ալիշանը, որի մասին կարող ենք կրկնել, առանց չսփաղանցութեան վարանումի, սովետահայ բանասիրութեան որակումը, թէ նա ինքնին մի ողջ ակադեմիա էր: Դրանից բացի նա այն Մխիթարեան վարդապետն էր, որ լաւագոյնս բացայայտեց և զարգացրեց իր Միաբանութեան ակադեմիական արժանիքները, որոնք XIX դարասկզբին Նապոլէոնին զրդեցին «ազատ» յայտարարել Ս. Ղազարի վանքը կայսերական բռնադրաման օրէնքից, որին հնթարկուեցին Հիւսիսային Իտալիայի բոլոր վանքերը: 1810 թ. օգոստոսի 17-ի հրովարտակով Ս. Ղազարի հայկական Միաբանութիւնը ճանաչուեց որպէս «Հայկական ակադեմիա»: Վերջինս Հիւսիսային Իտալիայի անվնաս մնացած միակ հոգեւոր հաստատութիւնն էր: Ընդհանրապէս Միաբանութիւնը լայնօրէն ճանաչուած էր Եւրոպայում, որպէս գիտական, մշակութային կենտրոն: Այստեղ որպէս այցելու եւ որպէս ուսումնասիրող տարբեր

ժամանակներում եղել են Ջորջ Բայրոնը, Վալթեր Աքոթը, Ժորժ Սանդը եւ Ալֆրեդ դը Միւսէն, Ժաք Օֆենբախը եւ այլք:

Եթէ հոգեւոր ասպարէզում «էկումենութեան ռահվիրայ» արտայայտութիւնը լաւագոյն ձեւով է որակում Մխիթարեանների ըմբռնումը և գործը, մշակութային բնագաւառում ամենալաւ սահմանումը կը լինէր «քրիստոնէական հումանիզմը»: Մխիթարեանների գործունէութիւնը յինուում էր մարդու վրայ՝ նրա ամբողջութեան եւ նրա գերագոյն ու մնայուն չափերի համակողմանի բազմութեան մէջ: Միաբանութեան հետաքրքրութիւնների շրջանակները չափազանց մեծ են՝ հայագիտական ուսումնասիրութիւնների ամենատարբեր բնագաւառներից մինչեւ արեւմտեան դասականների՝ Հոմերոսից մինչեւ Մոնտալէի գլուխգործոցների՝ յաճախ անհամեմատելի որակով թարգմանութիւնները, մինչեւ հոգեւոր, պատմական, մանկավարժական, մեղուապահական, թուչնապահական, շերամապահական, հաշուապահական, նաւազնացութեան եւ գիւղատնտեսական դասագրքեր ու աշխատութիւններ եւ այլն:

Մխիթարեանների յանձնառութիւնը ինչպէս հոգեւոր, այնպէս էլ մարդասիրական բնագաւառներում չէր արտայայտում միայն աշխատութիւնների խմբագրմամբ եւ հրատարակմամբ, այլեւ նոյն ուժով նաեւ հասարակութեան հետ աշխոյժ շփումով, որն իր առարկայական տեսքն էր ստանում միաբանութեան բազմաթիւ եւ հեղինակութիւն վայելող դպրոցական հաստատութիւններով: Վենետիկի Մխիթարեանների կողմից հիմնուած քսանինը հաստատութիւններից՝ սկսած 1746 թ. Եղիսաբեթոպոլսում եւ վերջացրած 1956-ին Բուենոս-Այրեսում, եւ Վիեննայի Մխիթարեանների կողմից հիմնուած տասնմէկ դպրոցներից՝ սկսած 1774-ին Տրիեստում եւ աւարտուած 1979-ին Լոս Անջելոսում, յատուկ պէտք է նշել Վենետիկի Մուրատ-Ռափայէլէան վարժարանը՝ հնդկահայ վաճառականներ Մուրատի եւ Ռափայէլի կտակի համաձայն, որը նախ հիմնուել էր Պադուայում, ապա Վենետիկում եւ Փարիզում: Ուսման տեւողութիւնն այստեղ հինգ տարի էր: Ընդունւում էին 14 տարին լրացրած ուշիմ հայ պատանիներ: Լաւագոյն շրջանաւարտներին շնորհւում էին Իտալիայի կրթութեան նախարարութեան կողմից վաւերացուած վկայականներ, որոնցով նրանք կարող էին առանց քննութիւնների ընդունուել Եւրոպայի ամենաբարձրակարգ բուհերը: Վարժարանը մշտապէս հետեւել է Մխիթարեան հայրերի աւանդոյթներին, այն է՝ օտար ակերբում պահպանել հայոց լեզուն եւ մշակոյթը, զարգացնել

Հայադիտութիւնը եւ փոխանցել այն սերնդէ սերունդ: Մուրադ-Ռափայէլեան վարժարանում դասաւանդել են բանասէր, պատմաբան Հ. Ղեւոնդ Ալիշանը, ազգագրագէտ Հ. Վարդան Հացունին, մատենագէտ, թարգմանիչ Հ. Արսէն Ղազրիկեանը, Փրանսիացի, անգլլիացի, իտալացի ուսուցիչներ: Դպրոցի ամենայայտնի շրջանաւարտներից կարելի է յիշատակել Մկրտիչ Պեշիկթաշլեանին, Դանիէլ Վարուժանին, Թովմաս Թերզեանին, Արփիար Արփիարեանին, Վահրամ Փափազեանին, Զարեհ Մութաֆեանին: Յատկապէս Մեծ Եղեռնի դժնդակ ճանապարհներին իրենց ծնողներին կորցրած որբերի սերունդները, որոնք դաստիարակուեցին Մխիթարեան վարժարանների և որբանոցների մէջ, յետագայում համալրեցին Հայ մտաւորականութեան շարքերը: Շատերից յիշենք Ահարոն Տատուրեանին, Արամայիս Արապեանին, Զուէն Սիւրմէլեանին, Յակոբ Անասեանին, Արբուն Տայեանին: Սերունդների դաստիարակութեան գործում իր մեծ լուծան ունեցաւ նաեւ Կ. Պոլսի «Վիեննական լիսնես»: Այս հաստատութեան եզակի հոգեւոր, մշակութային եւ մարդասիրական յատկութիւններին մէկն էլ ի սպաս Հայ ժողովրդի այն էր, որ Մխիթարեան Հայրերը մեծ սիրով ու խնամքով հաւաքել ու պահպանել են Հայոց քաղաքակրթութեան հոգեւոր ու մշակութային արժէքները՝ ձեռագրեր, հին դրամներ ու կնիքներ, վանական իրեր, ամէն տեսակի մասունքներ, մասնագիտացուած դրագարաններ: Այս բոլորը արժանապատուութեամբ ցուցադրուում են այցելուներին եւ շնորհալիօրէն տրամադրուում են գիտնականներին թէ՛ Վենետիկում, թէ՛ Վիեննայում:

Մխիթարեան Միաբանութեան մատենադարանը հիմնադրուել է դեռեւս Մխիթար Սեբաստացու ջանքերով՝ նրա անձնական գրադարանի հիմքի վրայ: Սկզբնական շրջանում համալրուել է նուիրատուութիւններով՝ յետագայում նաեւ ղեւումներով: Այս հարցում անդնահատելի է եղել Հ. Ղ. Ալիշանի դերը: XIX դ. կէսին կառուցուել է գրադարանի նոր շէնքը՝ երկու դրապահոցներով, որտեղ պահուում <sup>1</sup> արժեքաւոր ձեռագիր մատուցաններ, Հայ եւ օտարալեզու հնագիտական իրեր և պարբերականներ, ինչպէս նաեւ տպագիր հրատարակութիւններ, որոնցից շատերը՝ նայնիսկ օտար տպագրութիւնները՝ հազուադէպ օրինակներ են: Վենետիկի եւ Վիեննայի ներկայիս տպագիր ֆոնդերը շուրջ 200.000 միւսուր են (հայերէ՛, ֆրանսերէ՛ն, յունարէ՛ն, իտալերէ՛ն, չինարէ՛ն եւ այլ լեզուներով), իսկ ձեռագիր ֆոնդը միասնաբար աւելի քան 4 հազար: Պարբերականների հայ-

կական ամէնից ամբողջական հաւաքածուով կարող է հպարտանալ Վիեննայի Միխիթարեան գրադարանը:

Գրող, գիտնական, հասարակական գործիչ Արշակ Չօբանեանի խօսքերով՝ «Ազգ մը որ Միխիթարի պէս նկարագիր մը արտադրած է, իրաւունք չունի ինքնիրմէ յուսահատելու»: Չնայած ամէն տեսակի նշանակալից դժուարութիւններին, Եւրոպայի եւ քրիստոնէութեան քաղաքակրթութեան սրտում ազուցուած Վենետիկի եւ Վիեննայի Միխիթարեան վանքերը դեռ այսօր էլ հազարամեակների բովից անցած և հազարազանձ մշակոյթ կերտած հայ ժողովրդի համար յոյսի մի շող են:

## ՀՈՒՆ ԳԱՐԻԱ ԵՎ ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱ

Հունգարահայ գաղութը հազարամյա պատմություն ունի: Կարծիքներ կան, որ 9-րդ դ. վերջին հայերն ականատես են եղել հունգարական ցեղերի ներթափանցմանը Կարպատներ և տարածքի նվաճմանը (honfoglalas, 896 թ.):

Պատմական հավաստի աղբյուրները վկայում են, որ հայերի առանձին խմբեր այդ տարածք են եկել Հունգարիայի պետական կազմավորման արշալույսին՝ 10-րդ դարում, Գեյզա իշխանի տիրապետություն ժամանակ (971–997 թթ.): Շիմոն Կեյդայու 1282–1285 թթ. տարեգրության մեջ հիշատակվում է. «Ինչպես Գեյզա (Գեյզա) իշխանի, Ս. Իշտվան թագավորի (997–1038 թթ.), այնպես էլ մյուս թագավորների օրոք Հունգարիա են եկել չեխեր, լեհեր, հույներ, պեչենեգներ, հայեր և համարյա բոլոր ազգերի ներկայացուցիչներ»<sup>1</sup>: Արպազների թագավորության վաղ շրջանում Հունգարիա եկած հայ եկվորների մասին հիշատակվում է նաև մեկ այլ կարևոր պատմական աղբյուրում՝ Յանոշ Տուրոցիի (1435–1489 թթ.) «Ժամանակագրություն» մեջ<sup>2</sup>:

Հայերի Հունգարիա ներթափանցման մասին տարբեր վարկածներ են քննարկվել հունգարացի հայապետ էդմոն Շյուցի կողմից, որոնք առնչվում են ինչպես հունգարա-բյուզանդական առնչություններին, այնպես էլ ավելի վաղ՝ հունգարա-խաղարական կապերին, երբ թե՛ պատերազմի հետևանքով, թե՛ խաղաղ ճանապարհով ինքարիայում ապաստանած հայերը կարող էին կապեր հաստատել հարևանությունը կամ խաղարների գերիշխանություն տակ ապրող հունգարների հետ<sup>3</sup>: Հայ-հունգարա-խաղարական առնչություններին է անդրադարձել նաև հունգարահայ պատմադիր Քրիշտոֆ Լուքաչին (Խաչիկ Ղուկասյան, 1804–1876 թթ.), մեծբերելով տվյալներ, ըստ որոնց 8-րդ դարի սկզբին խաղարական բանակում բազմաթիվ

<sup>1</sup> "M. Gesta Hunnorum et Hungarorum", Scriptores Rerum Hungaricarum (SRH), I, Szentpetery Imre szerk., Bp, 1937, 192 o.

<sup>2</sup> Thuroczy Janos: "A magyarok Kronikaja" (ford. latinbol Horvath Janos), Helikon Konvnykiado, Budapest, 1986.

<sup>3</sup> Շյուց Է., Հայերի արտագաղթի գլխավոր ուղղությունները միջին դարերում և Եստերգոմի հայ գաղութը, «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից», Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1983, էջ 12–13:

հայ զինվորներ կային, որոնք փառաբանվում էին իրենց քաջության համար, և եզրակացնում է, որ Հունգարիա ներգաղթած խաղաղապան ցեղերի հետ Հունգարիա են եկել նաև հայեր<sup>1</sup>։

IX–XIII դդ. դարերում հունգարա-բյուզանդական շփումների արդյունքում հնարավոր էր հայ բնակչության գաղթը Հունգարիա, ինչպես Բյուզանդիայի արևելյան նահանգներից՝ Բալկանների վրայով, այնպես էլ՝ հենց Բալկաններից, որտեղ աքսորվել էին պավլիկյան աղանդավորական շարժման հազարավոր հետևորդներ<sup>2</sup>։ Այս հարցի մասին Արշակ Ալպոյաճյանն իր «Պատմութիւն հայ գաղթականութեան» գրքում նշել է. «Հետաքրքրական է, որ Հայք այս կողմերը կերևին։ 984 թ. մաճառներու քրիստոնեություն հարելեն անմիջապես հետո, որ կարելի է մղուիլ խորհելու, թե հոս ալ Պավլիկյան քարոզիչներ են թերևս, որ կուգային նոր քրիստոնյա դարձած երկրին մեջ իրենց դավանանքը զորացնել, ինչպես փորձած էին նորաստեղծ Պուլկարիո մեջ»<sup>3</sup>։

Ոչ միայն հայերի, այլև այլ օտար զանգվածների ներհուսքը Հունգարիա իր հերթին պայմանավորված է եղել Արևմուտք և Արևելք միջառևտրատնտեսական կապերի աշխուժացմամբ, ինչպես նաև Հունգարական իշխանների ցանկությամբ՝ Հունգար ժողովրդի շրջանում քրիստոնեությունը տարածելու նպատակով երկիրը բնակեցնել քրիստոնյա տարրով, այդ թվում նաև՝ օտար զինվորականներով։

1045 թ. Բագրատունյաց թագավորության անկումը, սելջուկների կողմից 1064 թ. Անիի գրավումն ու հիմնահատակ ավերումը սկիզբ են դրել հայերի աննախընթաց արտագաղթին դեպի Կիլիկիա, Բալկաններ, մերձդանուբյան տարածքներ, Ղրիմ, հետագայում նաև՝ Մոլդովա, Արևմտյան Ուկրաինա, Հունգարիա և Տրանսիլվանիա։

Հայերի ներկայությունը Արպաղների գահակալության շրջանում, մասնավորապես այն ժամանակվա մայրաքաղաք Էստերգոմում, հայտնի է դառնում մի շարք ուշագրավ փաստաթղթերի շնորհիվ։ Բելա IV-ի կողմից 1243 թ. մարտի 31-ին Էստերգոմի հայերին շնորհված արտոնագրով վերահաստատվում են իր նախորդների կող-

<sup>1</sup> Lukacsy Kristof, Historia Armenorum Transylvaniae, Viennae, 1859, 9 o.

<sup>2</sup> Շյուց Է., նշվ. աշխ., էջ 31։

<sup>3</sup> Ալպոյաճյան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Ա, Գահիրե, 1941, էջ 336–337։

մից նրանց տրված արտոնությունները<sup>1</sup>: Հայերի ապրած բնակավայրն այդպես էլ կոչվել է՝ "Terra Armenorum", որն ավելի ուշ Հասլո Կուռն թագավորի 1281 թ. մարտի 1-ի հրամանագրով հատկացվել է ավգուստինյան միաբանության մենակյացներին: Այդ տեղում կառուցվել է միաբանության Սուրբ Աննա վանքը, որի տարածքն ընդարձակելու նպատակով, ընդառաջելով միաբանության խնդրանքին, Անդրաշ III թագավորն իր 1290 թ. հրամանագրով միաբանությանն է նվիրել «Հայկական բնակավայրի» մի նոր հատված<sup>2</sup>:

Բացի էստերգոմի գաղութից, ամենայն հավանականությամբ այլ վայրերում ևս ապրել են Հայեր: Այդ մասին վկայում են մի շարք հունգարական տեղանուններ, որոնց արմատը կամ «էորմեն» (հայ) բառն է, կամ նրա ձևափոխությունը, ինչպես՝ "Ormenyes", "Szaszormenyés", "Ormenyszek"<sup>3</sup>:

Հայ-հունգարական քաղաքական հարաբերությունների վաղ շրջանի ամենաուշագրավ դրվագը 1218 թ. Հունգարիայի Անդրաշ թագավորի (1205–1235 թթ.) և կրիկյան Հայոց թագավոր Լևոն II-ի (1187–1219 թթ.) միջև փոխօգնության դաշնագրի կնքումն է, երբ ինչպիսիք 5-րդ արշավանքին մասնակցելուց հետո Հունգարիայի թագավորը տունդարձի ճանապարհին այցելում է Կրիկիայի հայկական պետություն և Տարսոն քաղաքում հատուկ ընդունելության է արժանանում Հայոց թագավորի կողմից, կնքում փոխօգնության դաշինք, որն էլ վավերացվում է Ջաբել արքայադստի և հունգար թագաժառանգի նշանադրությունը<sup>4</sup>: Ցավոք, ամուսնությունը խափանվում Հայոց թագավորի մահով և դահլի հավակնորդների տարբեր խմբավորումների միջև պայքարի պատճառով<sup>5</sup>: Անդրաշ թագավորն իր հետ Հունգարիա է բերում Հայ պատվիրակություն, որոնց մի մա-

<sup>1</sup> Monumenta Ecclesiae Strigoniensis, F. Knauz, Strigonii I, 1881, 345–346. Dr. Simay Janos, "A Magyarhoni Ormeny Gyarmatok". "Armenia", Magyar-Ormeny Havi Szemle, 1887, no. 3, 92 o.; Եյուց Է., նշվ. աշխ., էջ 37:

<sup>2</sup> Monumenta ..., Strigonii II, 142–143 (no. 112); Եյուց Է., նշվ. աշխ., էջ 38:

<sup>3</sup> "Ormeny helysegnevek Magyarországon". "Armenia", Magyar-Ormeny Havi Szemle, 1888, no. 3, 92 o.

<sup>4</sup> Մմբատայ սպարապետի Տարեգիրք, հրատ. Ս. Վ. Իպոլյանի, Վենետիկ, 1956, էջ 223; Scriptores Rerum Hungaricarum (SRH), I, Szent-Éry Imre szerk., Bp, 1937, 465–466 o.

<sup>5</sup> Պինգվրյան Գ., Հայկական աղբյուրները իտալացիների և հայ-հունգարական կապերի մասին (XIII–XVII դդ.), «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից», Երևան, ՀՍՍՀ Գ.Մ. 1983, էջ 61–62:

սը մնում է այդ երկրում: Նրանցից են սերվում երկրին զորավարներ, թեմականներ շնորհած Մորե և Մօրիկ ընտանիքները<sup>1</sup>:

XIV–XV դդ. Հայերի հոսքը Հունգարիա փոքր-ինչ նվազել է, սակայն պահպանվել են Հայերի մասին ուշագրավ տեղեկություններ: Այսպես, 1343 թվակիր մի կնիքից երևում է, որ Տրանսիլվանիայի Տոլմաչ (այժմ՝ Միբիու) բնակավայրի մոտ գործել է «Տոլմաչի Հայ եպիսկոպոս Մարտինը»: 1399 թ. Տրանսիլվանիայի Բրաշով քաղաքում ևս Հայեր են հիշատակվում, որոնք ոչ կաթոլիկ տարբեր ազգութայն բնակիչների հետ ունեցել են մեկ ընդհանուր եկեղեցի<sup>2</sup>: Իսկ Հայոց Թեոդորոս կաթողիկոսի 1388 թ. օգոստոսի 18-ի, ինչպես նաև Հակոբ կաթողիկոսի 1410 թ. հունիսի 26-ի կոնդակներում եվրոպայի կարևոր Հայկական կենտրոնների թվում հիշատակվում է Պոլտի բնակավայրը, որն ամենայն Հավանականությունը Բուդա քաղաքի անվանումն է՝ արևմտահայ տառադարձությունը<sup>3</sup>:

Հունգարացի ազգագրագետ Լասլո Ռետին (1851–1914 թթ.) իր «Հունգարահայերը» հոդվածում<sup>4</sup> Հայերի մասին այլ ուշագրավ փաստեր է ներկայացնում: 1415 թ. Բուդայի բնակիչ Մարտոն անունով հայը 600 ֆորինտով ոմն Յակարից տուն է գնել: 1432 թ. Պեշտի քաղաքային վարչութայն անդամներից մեկը կոչվում էր Էդեդեմ Էորմեն (Նյուինքն՝ Էդեդեմ Հայ), իսկ Մատյաշ Կորվին (1443–1490 թթ.) թագավորի օրոք Բուդա ամրոցի բերդապետը եղել է Իշովան Էորմենը (Ստեփանոս Հայը): Վերջինս Շալամոն Ֆերենցի «Բուդապեշտի պատմությունը» գրքում հիշատակվում է որպես թագավորի պալատական դատավոր<sup>5</sup>:

Հայերի թիվը XV դ. վերջին և XVI–XVII դդ. դարձյալ սկսում է աճել, որին հիմնականում նպաստել է 1497 թ. Լեհաստանի Ալբերտ թագավորի արչավանքի հետևանքով Մոլդովայի մայրաքաղաք Սուչավայից 700 ընտանիքի տեղաշարժը դեպի Հունգարիա, Տրանսիլվանիա և Գալիցիա, իսկ 1551 թ. Մոլդովայի իշխան Շտեֆան Ռարե-

<sup>1</sup> Դոմոկոչ Կորբույ, Հայերը Հունգարիոյ մեջ, քարգմ. Ա. Ֆոկոյանի, «Բազմալեպ», 1969, հ. 1–3, էջ 48:

<sup>2</sup> Զոլանցյան Ս., Հունգարիայի և Տրանսիլվանիայի գաղթօջախները, «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1972, հ. 4, էջ 387:

<sup>3</sup> Զոլանցյան Ս., Ուրվագծեր հայ-հունգարական հազարամյա բարեկամության պատմությունից, Երևան, 1980 (անտիպ):

<sup>4</sup> Rethy Laszlo, A Magyar Ormenyek. "Armenia", Magyar-Ormeny Havi Szemle, 1890, no. 5, 129–134 o.

<sup>5</sup> Ferenc Salamon, Budapest tortenete, 1885, 3 kot.

չի կողմից Հայերի նկատմամբ գործադրված Հալածանքները պատճառ են դարձել նրանց դեպի Տրանսիլվանիա արտագաղթին<sup>1</sup>: Ավելի ուշ Մոլդովայից որոշ թվով Հայեր փոխադրվել են այս անգամ՝ Զուրջով (1654 թ.), Բաշտբալով (1658 թ.), Զիկ Շոմլեո<sup>2</sup>: Այդ երկրամասը քաջածանոթ էր Հայերին, որի արևելյան մարզերում նրանք աշխույժ առևտրական գործունեություն էին ծավալել մինչ այդ, սերտ կապեր Հաստատել տեղի իշխանների հետ, նույնիսկ որոշ դիվանագիտական հանձնարարություններ իրականացրել<sup>3</sup>: XVII դ. բազմաթիվ Հայ առևտրականներ և արհեստավորներ են հիշատակվում նաև Բեստերցեյում և Բուդապոստում: Նոր երկրում ազնիվ ծառայությունները շատ ընտանիքներ ստացել են սղնջավականական տիրոջոսներ: 1609, 1628 և 1649 թթ. Հունգար ազնվականական ցուցակներում, որոնք Հայտնաբերվել են Դյուլաֆեհերվարի, Կապիտուլիի և Կոլոժմոնոշտորի կոնվենտի դիվաններում, հանդիպում ենք բազմաթիվ Հայ ազնվականների անուններ<sup>4</sup>:

XVII դ. առաջին կեսին Տրանսիլվանիայում Հայերի գոյությունը մասին ուշագրավ վկայություն է 1647 թ. Վաչարհեյում (Հունգարերեն՝ առևտրական վայր) գրիչ ինչի կաֆայեցու ընդօրինակած ձեռագիրը տեղի Հայ վաճառական Օհան Զուդայեցուն հանձնիլու փաստը: Սա վկայում է, որ ժամանակի նշանավոր այդ առևտրական կենտրոնը բնակեցված է եղել Հայերով: Այդ ձեռագիրն այսօր պահվում է Երևանի Մատենադարանում<sup>5</sup>:

Հայերն ակտիվ մասնակցություն են ունեցել թուրքական լծի դեմ Հունգարացիների մղած պայքարում, մասնավորապես՝ Բուդապոստի ազատագրման գործում: XVI դ. 20-ական թթ. մինչև XVII դ. 70-ական թթ.՝ մոտ 150 տարի, Հունգարիան գտնվել է Օսմանյան կայսրության տիրապետության տակ: 1541 թ. թուրքերը զրավում են երկրի մայրաքաղաքը՝ Բուդան: 1543 թ. Սուլեյման I-ի 6-րդ արշավանքի ժամանակ զրավում են Վալպոն, Պեչը, Շիկլոշը, էստերգո-

<sup>1</sup> Քլամցյան Ս., նշվ. աշխ., 1972, էջ 387:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Szilagyı Sandor, Erdely es az eszak-keleti haboru. Bp. 1890, Ikot., 54, 152, 530 o. Վլադիսլավ Ա., Հունգարիայի հայ հասարակությունը ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից», Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1983, էջ 128:

<sup>4</sup> Rethy Laszlo, A Magyar Ormenyek. "Armenia", Magyar-Ormeny Havi Szemle, 1890, no. 5, 129-134 o.

<sup>5</sup> Մատենադարան, ձեռագիր 3519:

մը, Տատուն, Սեյկեշֆեհեյրվարը, իսկ 1552 թ. արշավանքի ժամանակ՝ Սոլոնկը, Էգեբը, Հոլոկը, Սեչենյը, նաև Տրանսիլվանիայի հարավը՝ այդ վայրերը դարձնելով վարչական և ուղղակի կենտրոններ: Ստեղծվում են Բուդաբի (1541 թ.) և Տեմեշվարի (1552 թ.) վիլայեթները<sup>1</sup>: Եվրոպական երկրների ժողովուրդները, աստիճանաբար հասկանալով թուրքերի դեմ միասնական ճակատով գործելու անհրաժեշտությունը, ստեղծել են Սրբազան Լիգա, որի մեջ մտել են Ավստրիան, Լեհաստանը, Ռուսաստանը, Վենետիկը: Վերջիններս փորձում էին հակաթուրքական միասնական ճակատ ներգրավել Պարսկաստանի, ինչպես նաև Արևելքի փոքր ժողովուրդներին, այդ թվում՝ հայերին ու վրացիներին: Այդ դժվար գործում իրենց ակտիվ ներդրումն են ունեցել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում բնակվող հայերը: Հիշատակելի են Մոլդովայի իշխան Պետրու Ռարեշի (1527–1538 թթ. և 1541–1546 թթ.) ամենամեծ խորհրդականներից և զորահրամանատարներից Պետրու Վարդիկը, Վալաքիայի նշանավոր իշխան Միհայ Վիտեսագուլի (1593–1601 թթ.) դիվանագետներից ու զորավարներից Պետրու Գրիգորովիչը, նրա կղբայր Հովսեփ Գրիգորովիչը, Սեֆեր Մուրատովիչը և ուրիշներ<sup>2</sup>: Առանձնակի հիշատակության են արժանի հայտնի դիվանագետ Պետրոս Ապետիքի կյանքն ու գործունեությունը: Նա անմնացորդ նվիրվել էր օսմանյան լծի տակ հեծող ժողովուրդների ազատագրման գործին: Նա մուտք ուներ եվրոպական և ասիական արքունիքներ, ջանք չէր խնայում և ամեն կերպ աջակցում էր հակաօսմանյան ճակատ ստեղծելու գործին: Բայց հատկապես ցավում էր հայ և հունգար ժողովուրդների ճակատագրերի համար, որոնք իր կարծիքով այդ ժամանակաշրջանի ամենից ավելի տառապած ժողովուրդներն էին: Նա հունգար ժողովրդի ջերմ բարեկամն էր, սերտ կապերի մեջ էր հունգար ականավոր գործիչների հետ, երազում էր Հունգարիան տեսնել ազատագրված: 1680 թ. Ապետիքը հաստատվում է Հունգարիայում: Որպես վարձատրություն իր մեծ ծառայությունների, 1684 թ. նա Ավստրիայի կայսր և Հունգարիայի թագավոր Լեոպոլդ Ա-ի շնոր-

<sup>1</sup> История Венгрии, том I, Москва, Издательство “Наука”, 1971, стр. 329–330, 335–336.

<sup>2</sup> Քոլանջյան Ս., Հայերի մասնակցությունը հակաթուրքական լիգայի ստեղծման և Հունգարիայի ազատագրման գործում (XIII–XVII դդ.), «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից», Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1983, էջ 105–107:

Հագրով ստացել է Հևեշ գավառի Պատայի կալվածքը, ինչպես նաև՝ «Հունգարիայի կոմս» տիտղոսը կրելու իրավունքը<sup>1</sup>:

Արևելյան Եվրոպայի հայերը հանդես են եկել ոչ միայն որպես Հմուտ դիվանագետներ, քաղաքական գործիչներ, այլև՝ որպես քաղաքի գլխավորներ: Ռազմական պատմութան նշանակալից էջերից մեկը Բուդայի ազատագրումն էր օսմանյան տիրապետութունից, որտեղ իր խիզախությամբ աչքի է ընկել հայագգի Գաբրիելը: Նրա կենսագրության հավաստի աղբյուրը նրա իսկ ինքնագիր մատյանն է՝ Բուդայից գրված 6 գաղտնագիր նամակները, որոնք առաջին անգամ ցուցադրվել են 1886 թ. Բուդապեշտում Բուդայի ազատագրման 200-ամյակին նվիրված ցուցահանդեսի ժամանակ: Այդ նամակները, որոնք հուշեց կարևոր ռազմական տվյալներ էին պարունակում Բուդայում թուրքերի քանակի, զենքի, հունգարական ղեկիների մասին, մեծ դժվարությամբ փոխանցվել են Վիեննայում գտնվող իր ընկերոջը՝ Դիոդատո Հային (Diodato Armeno)<sup>2</sup>: Նամակներում գրվել է բերդի ներսում ականների դասավորության, բերդի վառոդի պաշարները ներսից պայթեցնելու, բերդի ջրի արգելափակման մասին, որոնք պետք է հեշտացնեին բերդի գրավումը: Վերոհիշյալ վեց նամակներից բացի, Գաբրիելը գրել է ևս ինը նամակ, որոնցից 7-րդում նշել է, որ Բուդայի բերդի առումն իրագործվելու է ջրի կամ էլ ականի պայթեցման միջոցով: Ինչպես հայտնի է, պայթեցրին Բուդայի վառոդի պաշարները, որը և հեշտացրեց բերդի ազատագրումը<sup>3</sup>: Բուդայի ազատագրման գործում անուրանալի են Գաբրիելի ցուցաբերած խիզախութունն ու անձնվիրութունը:

Բուդայի ազատագրմանն ու օսմանյան լծից Հունգարիայի թոթափմանն իրենց լուծման են ներգրել նաև այլ հայեր՝ վերոհիշյալ Դիոդատո Հայը, նորջուղայեցի բժիշկ Գալուստ Շահինը, Ներսես վարդապետ Երևանցին: Տրանսիլվանիայում ապրող հայերը նույնպես ակտիվ մասնակցել են թուրքերի դեմ պայքարին: Այսպես, երբ 1697 թ. թուրքերն արշավել են Ռադնայի կիրճ, հայերն իրենց

<sup>1</sup> Avedik Grof Csodalatos ete. Irtak: Dr. Kalos Lajos es Dr. Kerekes-Hazi Jozsef, Dr. Baro Nyari Pal Tanulmanyaval, Fovarosi Nyomda, R.T.; Ապետիք կոմսի գարնամալի կյանքը (հունգ. քարոմ. Ա. Ֆոկոյանի), «Բազմավեպ», Վենետիկ, 1955, էջ 140:

<sup>2</sup> Molnar Antal, Ormenyek Buda visszafoglalasarol, "Armenia", Magyar-Ormeny Havi Szemle, 1887, 1, 348 o. IIIou Э., Новые данные о Габриеле Тохатеци, "Известия" АН Арм. ССР, 1961, Но. 1, с. 103-106.

<sup>3</sup> Զոլանջյան Ս., նշվ. աշխ., 1983, էջ 116-117:

հոգևոր առաջնորդ Օգսենտիուս վարդապետ վրրգարյանի առաջնորդութեամբ հակահարված են տվել թուրքերին: 1699 թ. Օգսենտիուսը գերի է ընկել և Կատովիցի հաշտութեան դաշնագրով ազատվել<sup>1</sup>: Մեկ այլ տեղեկութեան համաձայն, թուրքերի դեմ դիմադրութիւնն ցույց տալիս գերեվարվել է Չիկսեյովիզի հայերից շուրջ 148 հոգի<sup>2</sup>:

Հունգարահայերը, անձնվիրաբար մարտնչելով հյուրընկալ երկիրը թուրք զավթիչներից ազատագրելու համար, միաժամանակ երազում էին տեսնել իրենց իսկ հայրենիքը թուրքական լծից ազատագրված: Եվրոպայում տեղի ունեցող հակասոսմանյան պատերազմների և Հունգարիայի ազատագրման մասին հայկական աղբյուրներում առկա հիշատակութիւնները հստակ վկայում են հայ ժողովրդի անթաքույց հետաքրքրութեան մասին Եվրոպայում ծավալվող իրադարձութիւնների հանդեպ:

Հայերի գանգվածային արտահոսքը Տրանսիլվանիա տեղի է ունեցել XVII դ. երկրորդ կեսին Մոլդովայից՝ այնտեղ ստեղծված անտանելի տնտեսական և քաղաքական պայմանների հետևանքով: 1672 թ. 3000 հայ ընտանիք Մինաս եպիսկոպոսի գլխավորութեամբ տեղափոխվել է Տրանսիլվանիա և ապաստան խնդրել տեղի իշխան Միհայ I Ապաֆիից:

Սակայն երկար ժամանակ հայերը չեն կողմնորոշվել Տրանսիլվանիայում մշտապես հաստատվելու հարցում: Գյուղացիական հուզումները, թուրքական, թաթարական և գերմանական բանակների անընդմեջ ասպատակութիւնները քայքայել էին Տրանսիլվանիայի իշխանութեան քաղաքական և տնտեսական դիրքերը, հյուսիս նրա միջոցները: 1689 թ. մինչ այդ անկախ Տրանսիլվանիան ընկել էր Հաբսբուրգների տիրապետութեան տակ: Նրա տնտեսութիւնն էլ ավելի է քայքայվել Ռակոցիի ղեկավարած ազատագրական պայքարի (1703–1711 թթ.) հետևանքով: Չնայած մոտ կես դար տևած փոթորկալից իրադարձութիւններին, խաղաղութեան հաստատումից հետո երկրում ստեղծվել են այնպիսի պայմաններ, որոնք հայերին հնարավորութիւն են տվել հաստատվելու Տրանսիլվանիայում՝ հիմնելով գաղթօջախներ հիմնականում Մոլդովայի հետ սահմանի եր-

<sup>1</sup> Հրանդ Մարգիս Ռշտունի, Ակնարկ մը Հունգարիոյ Հայոց անցեալին վրայ: Թրանսիլվանիոյ հայ գաղութը, «Արևմուտք», Փարիզ, 1947, մարտի 23, թիվ 18:

<sup>2</sup> Բժշկյանց Մ., Ճամապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի հայկականց՝ սերելոց ի մայսնեաց Անի քաղաքին, Վենետիկ, 1830, էջ 201:

կայնքով՝ Բեստերցե (Բիստրիցա), Դյերդոյոսենտմիկլոշ (Ջուրջով), Չիկսեյավիդ (այժմ՝ Չրումոսսա), Գյորգենսենտիմրե, Կեյզիվաշարհեյ և այլ բնակավայրերում: Տրանսիլվանիայի խորքում գտնվող էքեչֆալվայում հետագայում՝ 1703 թ., հիմնադրվել է երկրորդ հայաքաղաքը՝ Եղիսարեթուպոլիսը (այժմ՝ Դումբրովեն):

Սակայն տեղի բնակչութունը միշտ էլ, որ հաշտ աչքով է նայել հայերին: Բեստերցեի բնակչութունը սկսել է հալածել հայերին և հրամանագիր է ձեռք բերել, որի համաձայն հայերը, թողնելով իրենց կայքն ու ունեցվածքը, 24 ժամվա ընթացքում պետք է հեռանային քաղաքից: Նորից տեղահանվելով՝ հայերը հաստատվում են Գեուլա գյուղի մերձակայքում: Նրանք, Ավստրիայի Լեոպոլդ Ա արքային (1657–1705 թթ.) վճարելով 25 հազար ֆորինտ, գնել են այդ հողերը և 1700 թ. հիմնել Սամոշուլվար (Գեուլա) հայաքաղաքը, որը հետագայում դարձել է տրանսիլվանահայերի «մայրաքաղաքը» նրանց պատմական և մշակութային կենտրոնը:

Ապաֆին և նրա հաջորդները հայերի մեջ տեսել են տնտեսապես օգտակար ուժ և ամեն կերպ պաշտպանել նրանց նախաձեռնութունները: «Խելամիտ Ապաֆի իշխանը շուտով հասկացել է, որ հանձինս «ջանասեր» հայերի, հատկապես թուրքական ավերածութուններից հետո, երկիրն իր համար ոչ միայն օգտակար, այլև անհրաժեշտ տարր է ձեռք բերել»<sup>1</sup>: Հայերը հստակ դիտակցում էին, որ Վիեննան, հայերին սատարելով, տնտեսական նույն շահն էր հետապնդում, ինչ Ապաֆի Միհայ իշխանը, որ ժամանակին հայերին ապաստանել էր Տրանսիլվանիայում: Եվ այդ կապերն ամրապնդելու և իրենց անվտանգութունն ապահովելու նպատակով հայերը դիմել են Ունիային միանալու քայլին: Սա բնավ Տրանսիլվանիայի իշխանութունների կողմից կրոնական հալածանքի արդյունք էլի, այլ հայերի կողմից կամավոր քայլ, որն, ըստ նրանց, անհրաժեշտ էր ավստրո-հունգարական միապետների բարյացակամ վերաբերմունքը շահելու համար<sup>2</sup>: Ունիայի մոլեռանդ պաշտպանները եղել են արանսիլվանահայերի հոգևոր առաջնորդ Մինաս Եպիզոպոսը և նրա հետնորդ Օգսենտուս Վրրգարյանը, որը, իր կրթութունն ստանալով

<sup>1</sup> Szongott Kristof, Szamosujvar szab.kir.varos Monografiaja, 1700–1900, I, Szamosujvar, 1901, 98 o.

<sup>2</sup> Վյոռոշ Ա., Հունգարիայի հայ հասարակությունը ֆեոդալիզմի ժամանակաշրջանում (1672–1848), «Հայ-իտալական պատմական և մշակութային կապերի պատմությունից», Երևան, ՀՍՄՀ Գ.Ա. 1983, էջ 135:

Լեմբերգի (այժմ՝ Լվով) աստվածաբանական ճեմարանում, ուսումը շարունակել է Հոռմում: Ուժեղ բնավորության տեր այդ հոգևորականը եղել է նաև հայերի քաղաքական առաջնորդը, սակայն նրա մահից հետո՝ 1715 թվականից ի վեր, հայ եպիսկոպոսական աթոռը թափուր է մնացել և ի վերջո վերացվել է հայերի ներքին անհամաձայնությունների պատճառով: Հունգարահայության ղեկը ստանձնել են աշխարհականները՝ Գեռլայի և Եղիսաբեթուպոլսի դատավորներն ու խորհրդականները, իսկ հունգարահայերն անցել են Տրանսիլվանիայի կաթոլիկ եպիսկոպոսի գերիշխանության տակ: «Թեև կրոնական, բայց այդ հաստատության վերացումը զրկեց հայերին ներքին ինքնավարության վերջին օղակից և արագացրեց նրանց ձուլման գործընթացը»<sup>1</sup>: Հունգարահայերի հոգևոր և մշակութային զարթոնքի տարիներին՝ XIX դ. վերջին և XX դ. սկզբին, հունգարահայերի կաթոլիկացման հետևանքները քննարկվում և Տրանսիլվանիայի հայոց եպիսկոպոսական թեմի վերականգնման հարցն անընդհատ խմորվում էր հունգարահայ հասարակական մտքի կողմից «Արմենիա» հայագիտական ամսագրի և Հունգարիայի այլ պարբերականների էջերում<sup>2</sup>:

Հայերը, տարիների ընթացքում բազմիցս հաստատելով իրենց հավատարմությունը նոր երկրին, ինչպես նաև նշանակալի եկամուտ ապահովելով կայսերական գանձարանին, շուտով ստացել են ինքնավարություն և ազատ առևտրով զբաղվելու իրավունք: 1726 թ. Գեռլան, իսկ 1733 թ. Եղիսաբեթուպոլիսը ստացել են արտոնության հրովարտակներ, իսկ 1786 թ. հայաքաղաքներին շնորհվել է ազատ թագավորական քաղաքների կարգավիճակ<sup>3</sup>: Գեռլան և Եղիսաբեթուպոլիսը որպես ազատ թագավորական քաղաքներ իրենց ներկայացուցիչներն ունեին Հունգարիայի պետական ժողովում:

Հունգարահայերը, ինքնավարություն և ազատ առևտրի իրավունք ստանալով, զբաղվել են աշխույժ առևտրական գործունեությամբ: Օգտագործելով իրենց կապերը Արևելքի և Արևմուտքի վաճառականական կենտրոնների հետ՝ նրանք զբաղվել են խոշոր եղջերա-

<sup>1</sup> Գևորգյան-Բազի Է., Հայ-հունգարական գրական առնչությունները և «Արմենիա» ամսագիրը, Երևան, 1979, էջ 30:

<sup>2</sup> "Armenia", Magyar-Ormeny Havi Szemle, 1888, no. 2, 3, 4; 1890, no. 9; 1896, no. 5. "Az ormeny puspokseg", "Szamosujvari Naplo", 1910, nov. 4, no. 35.

<sup>3</sup> Տրեչանի Ժ., Տրանսիլվանիայի հայերի իրավական կացությունը Լեոպոլդյան հրովարտակի շրջանում (1690-1848 թթ.), «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից», Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1983, էջ 234:

վոր անասունների և բրդի առևտրով: Միայն XVIII դ. կեսերին հունգարահայ վաճառականներն արտասահման են արտահանել տարեկան 40.000 խոշոր եղջերավոր անասուն՝ 4.5 մլն ֆլորին ընդհանուր արժողութեամբ<sup>1</sup>: Հունգարահայերը զարգացրել են արհեստները՝ մորթու վերամշակում, մուշտակագործություն, ջուլհակություն, պայուսակագործություն: Բայց առավել զարգացում է ապրել կաշեգործությունը, ստեղծվել է կաշեգործների համքարություն: Երկար ժամանակ դաղտնի է պահվել կաշվի վերամշակման եղանակը: Հունգարահայերն արտադրել են բարձր որակի կարմիր ու սև կաշի, որից հունգար ազնվականները կարում էին իրենց կոշիկները<sup>2</sup>: Սակայն հայ կաշեգործներն ու մուշտակագործները, ինչպես նաև կաշվի ու մորթու առևտրով զբաղվողները, մշտապես մրցակցություն մեջ են եղել տեղացի՝ առաջին հերթին սաքսոն արհեստավորների և վաճառականների հետ:

**Հայերի մասնակցությունը 1848–1849 թթ. Հունգարիայի ազատագրական պայքարին**

Ինչպես հայտնի է, Մոհաչի ճակատամարտից (1526 թ.) և թուրքերի կողմից Բուդայի գրավումից (1541 թ.) հետո Հունգարիան բաժանվել էր երեք մասի. երկրի միջին մասը դրավել էին թուրքերը, արևմտյան մասն ընկել էր Հաբսբուրգների տիրապետության տակ, իսկ Տրանսիլվանիան ինքնաբերաբար ձեռք էր բերել քաղաքական ինքնավարություն: Վերջինս մոտ 150 տարի թեպետ իրավական առումով ենթարկվում էր Օսմանյան կայսրությանը, սակայն արթուն էր պահում հունգարական պետականության և անկախության գաղափարն ու ոգին: XVII դ. Օսմանյան կայսրության թուլացման հետ ավելի են ուժեղանում Տրանսիլվանիայի հանդեպ հաբսբուրգյան արքունիքի նկրտումները: Հունգարիայի տարածքի մեծ մասը թուրքերի լծից կայսերական զորքերի ազատագրումից հետո, ինչպես նաև երկու կողմերի ուժերի հավասարակշռության խախտման հետևանքով Տրանսիլվանիան կորցրել է իր անկախությունը և ընկել Հաբսբուրգների տիրապետության տակ, բայց ո՛չ որպես Հունգարիայի մաս, այլ՝ որպես առանձին նահանգ: XVIII դ. առաջին կեսին այստեղ ձևավորվել են Ավստրո-Հունգարական կայսրության վարչական և այլ մարմիններ: Դրանցից էր դանձարանը՝ թագավորական

<sup>1</sup> Szongott Kristof, Գշվ. աշխ., էջ 130:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 39–42:

Հարկերն ու եկամուտները կարգավորելու համար, Կառավարչությունը՝ որպես վարչական և արդարադատության բարձրագույն ատյան, ավելի ուշ՝ Տրանսիլվանիայի գործերի գլխավոր հրամանատարությունը: Դրան զուգահեռ նվազել է Տրանսիլվանիայի աշխարհաժողովի նշանակությունը, որը և հանդես էր գրավանսիական կախության թուլացմանը<sup>1</sup>:

1840-ական թվականներից եվրոպայում ծայր առած ազգային-ազատագրական շարժումները նոր լիցք են հաղորդել Հունգարիայում և բազմազգ Տրանսիլվանիայում ապրող հունգարացիների և այլ ազգերի՝ Հաբսբուրգների դեմ ծավալած ազատագրական պայքարին: Դրան իրենց ակտիվ մասնակցությունն են բերել նաև հունգարահայերը: Նրանք ոչ միայն նյութական մեծ օգնություն են ցույց տվել հեղափոխական բանակին, այլև՝ զենք ու սննդամթերք հայթայթել բանակի համար, աշխատել որպես բանբերներ, թարգմաններ, գլխավոր քուլթուր, հիմնել հիվանդանոց, պատուպարել հունգարացի զինվորներին: Հայաքաղաքներ Գեուլան և Եղիսաբեթուպոլիսը դարձել էին ազատագրական պայքարին աջակից կենտրոններ, քաղաքներում ծածանվում էին հունգարական ազգային հեղափոխական դրոշները, հավաքագրվում էին կամավորական խմբեր: Հեղափոխական պարտությունից հետո հայաքաղաքները ծանր գին են վճարել այդ աջակցության համար՝ ենթարկվելով ուղղակի ծանր տուգանքների, իսկ Եղիսաբեթուպոլիսը երկու անգամ թալանվել է կայսերական զորքերի կողմից:

Բացի նյութական ու բարոյական օգնությունից, հունգարահայերը տվել են ակնավոր ուսումնական գործիչներ, այդ թվում երեք փառաբանված գորավարներ՝ գեներալ-լեյտենանտ Էռնյո Կիշլը, որը երկու անգամ՝ 1848 թ. ապրիլին և հուլիսին ժամանակավորապես կատարել է ուսումնական նախարարի պարտականությունները, գնդապետ Վիլմոշ Լազարը (1815–1849 թթ.) և Յանոշ Յեցը (1822–1904 թթ.), որը Տրանսիլվանիայի բանակի ընդհանուր հրամանատար, փառապանծ գորավար Բեմի աջ բազուկն էր և հավատարիմ զինակիցը: 1849 թ. ապրիլ-մայիս ամիսներին նրան էր վստահված Տրանսիլվանիայի բանակի ընդհանուր հրամանատարի պաշտոնը: Ազատագրական պայքարը արյան մեջ խեղդելուց հետո առաջին երկուսը մահա-

<sup>1</sup> Բոնա Գ., Հայ զինվորականների մասնակցությունը 1848–1849 թթ. Հունգարիայի ազատագրական պայքարին, «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից», Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1983, էջ 360–361:

պատժի ենթարկվեցին Արադի մոտ 1849 թ. հոկտեմբերի 6-ին հունգարական ազատագրական բանակի մյուս 11 զորավարների հետ միասին, իսկ Յանոշ Ցեցին հաջողվել է ազատվել և ապաստանել Արգենտինայում, որտեղ հետագայում դարձել է այդ երկրի ռազմական ակադեմիայի հիմնադիրը:

Հունգարական բանակում ծառայել են մոտ 70 հայազգի սպաներ և 100-ից ավելի զինվորներ, որոնցից հիշատակելի են գնդապետ Դենեշ Լուկաչը, փոխգնդապետներ Իշտվան Բենյոն, Անտալ Բոգդանֆին, մայորներ Հուբերտ Բոգդանովիչը, Դյորդ Դեակը, Անտալ Գորովեն, Դյորդյ Հանկովիչը, Անտալ Կիշը և Գերգեյ Տոմպոչը, ինչպես նաև՝ Նովակ, Լուկաչի, Անտալֆի, Մարտոնֆի, Պատրոբանյ, Գայգազո, Իշեկուց, Կարաչոնյ, Կյովեր, Նուրիջան, Շիմայի գերդաստաններից սերված սպաներ ու զինվորներ: Հեղափոխության մասնակից հունգարացի գնդապետ Շանդոր Տելեկին հայերի մասին գրել է. «Բոլոր աղգուլթյուններից միայն հայն է, որ ապրում է մեզ հետ և մեռնում է մեզ համար...»<sup>1</sup>:

XIX դ. երկրում տնտեսական հարաբերությունների զարգացումը խոր փոփոխություններ է առաջացրել նաև դադուլթի հասարակական-քաղաքական կյանքում: Շատ հայեր, կրթություն ստանալով, լքում էին հարազատ վայրերը, տեղափոխվում Հունգարիայի և Տրանսիլվանիայի խոշոր քաղաքներ: Տրանսիլվանահայերի տեղական Արտիալի բարբառը հետզհետե գործածությունից դուրս էր մղվել՝ տեղը զիջելով հունգարերենին: Առկա էր հայերի լիակատար ձուլում: Այսպես, 1893 թ., ելույթ ունենալով խորհրդարանում, Տրանսիլվանիայի քաղաքական գործիչներից մեկն այդպես էլ հայտարարել է. «Մենք ձուլեցինք կուններին, հայերին, շատ գերմանացիների, հուսով եմ, որ կարճ ժամանակում կձուլենք նաև հրեաներին»<sup>2</sup>:

Եվ, այնուամենայնիվ, XIX դ. երկրորդ կեսին դեռևս պահպանվում էր հունգարահայ մտավորականության մի զանգված, որը, հասկանալով ազգային ինքնագիտակցության վերջնական կորստի իրական վտանգը, հզոր շարժում է սկսել նրա պահպանման համար: Հայ մտավորականության այդ ձգտումներն իրենց արտացոլում են գտել հունգարահայ հասարակական մտքի փայլուն ներխույզողիչ-

<sup>1</sup> Avetik Felix, A magyar ormenyseg multja es torteneti jelentosege. Budapest, 1921, 8 o.

<sup>2</sup> Iratok a nemzetisegikerdes tortenetehez Magyarorszagon a dualizmus koraban. Osszegyujtotte es jegyzetekkel ellata Kemeny G. Gabor. Bp., II. Kot. (1892-1900), 1956, 148 o.

ներ Զաքարիա Գաբրուշի (1794–1870 թթ.) և Քրիշտոֆ (Խաչիկ) Լուքաչիի (1804–1876 թթ.) աշխատություններում:

Մեծ է Զաքարիա Գաբրուշի դերը Հունգարիայում հայագիտության սկզբնավորման գործում: Նրա 32 հատոր անտիպ գործերը պահվում են Գեոլոգի պատմության թանգարանում (ձեռագիր 62–93), որոնց ուսումնասիրությունամբ այսօր զբաղվում է նոր գիտական ասպարեզ մուտք գործող հունգարացի հայագետ Բալինտ Կովաչը: Առանձնակի ուշադրություն է արժանի 1834 թ. Վիեննայում լույս տեսած Գաբրուշի հունգարերեն-հայերեն բառարանը, որը նախատեսվել էր Տրանսիլվանիայի հայկական դպրոցների համար<sup>1</sup>:

Հունգարահայ պատմագիտական մտքի առաջին ներկայացուցիչը կարելի է համարել Խաչիկ Լուքաչիին, որն առաջին անգամ միջազգային ասպարեզ հանեց հարազատ գաղթօջախի կյանքը՝ լատիներեն լեզվով ներկայացնելով հունգարահայոց պատմությունը: Այսօր գիտական մեծ արժեք են ներկայացնում նաև հայ-հունգարերեն-լատիներեն բառարանը և նրա մյուս անտիպ գործերը<sup>2</sup>:

Գաբրուշի և Լուքաչիի բացած հայագիտական ուղին շարունակել են Լուքաչ Ավետիքը, Գրիգոր Գովրիկյանը, Խաչիկ Սոնգոտյանը, Անտալ Մոլնարյանը, Անտալ Հերմանը, Դյուլա Մերգայանը, Լավո Գոպչան, էլեմեր Բանյաին և ուրիշներ: Հայագիտության զարգացման հետ լույս են տեսել Գեոլոգի և Եղիսաբեթուպոլսի մասին մենագրություններ, ուսումնասիրվել են հունգարահայերի ծագումնաբանությունն ու ազգագրությունը: Բայց և այնպես XIX դ. երկրորդ կեսի մշակութային ամենանշանակալի իրադարձությունը "Armenia" ամսագրի (1887–1907 թթ.) լույսընծայումն էր, որը հունգարահայ չաղուծի հասարակական-մշակութային կյանքի ամենաարժեքավոր ձեռքբերումը կարելի է համարել:

**Պարբերական մամուլը. "Armenia" ամսագիրը և գաղութահայ կյանքը**

Գեոլոգում հրատարակվող հունգարալեզու "Armenia" ամսագրի հիմնադիրը, խմբագիրն ու հրատարակիչը Խաչիկ Սոնգոտյանն

<sup>1</sup> Gabrus Zachar, Magyar-Ormeny ABC, Becs, 1834.

<sup>2</sup> Lukatsi Chr., Historia Armenorum Transilvaniae, Vienna, 1859; Lukaesy Kristof: Emlékezetek az erdelyi ormenyek tortnetehoz, Kolozsvár, 1867; Lukaesy Kristof, A Magyar oscelei, hajdankori nevei es lakhelyei, eredeti ormeny kutfok utan. Kolozsvár, 1870; Vilagosito Szent Gergely clete; Ormeny-magyar latin szotar (kezirat).

էր (1843–1907 թթ.) հունգարահայ մշակույթի ամենալառ անհատականություններից մեկը: Նախնական կրթությունը ստանալով Գեոլայում՝ 1863 թ. ավարտել է Դյուլաֆենհերվարի բարձրագույն գիմնազիան, հետո վերադարձել հարազատ քաղաք, որտեղ ընտրվել է տեղի հայկական պրոգիմնազիան՝ որպես ուսուցիչ ծառայելով շուրջ 40 տարի: Անգնահատելի են նրա ծառայությունները նաև հունգարահայ պատմական մտքի զարգացման գործում: Շարունակելով Լուքաչիի ավանդույթները՝ Սոնգոտյանն առաջին անգամ հարուստ աղբյուրների և արխիվային նյութերի հիման վրա գրել է երեքհատորանոց մենագրութուն Գեոլա քաղաքի, ինչպես նաև՝ շատ արժեքավոր աշխատություններ հունգարահայերի ծագումնաբանության և ազգագրության մասին<sup>1</sup>: Բայց և այնպես, նրա անունն անմահացել է "Armenia" ամսագրի շնորհիվ: «Եթե Սոնկոդեան չուներ արամենեին ուրիշ արդիւնք մը, այս բավական էր յուր ազգն իրեն շնորհապարտ ընելու, զինք հիշատակի արժանի անձ մը ընելու»<sup>2</sup>:

Ամսագրի հրատարակման առաջին իսկ տարում Սոնգոտյանին հաջողվել է իր շուրջը համախմբել հունգարահայ մտավորականների լայն շրջանակ: Աշխատակիցների թիվը հասել է 50-ի: Նրանցից շատերը՝ էլեմեր Բանյաին, Անտալ Հերմանը, Անտալ Մոլնարյանը, Գուսսավ Պապսը, Հակոբ Գոպչան, Բոգդան Պապսը, Ղուկաս Պատրուքանյանը, հետագայում դարձել են Բուդապեշտում, Գեոլայում, Եդիսաբեթուպոլսում, Կոլոժվարում լույս տեսնող թերթերի և ամսագրի խմբագիրներ: Սոնգոտյանի ու նրա համախոհների անձնվեր աշխատանքի շնորհիվ "Armenia" ամսագիրը կարճ ժամանակում դարձել է հունգարահայ գիտական, հասարակական և մշակութային մտքի կենտրոն:

"Armenia"-ի առաջին համարը լույս է տեսել 1887 թ. հունվարին, որտեղ խմբագրական հոդվածում ներկայացվել է նոր ամսագրի նպատակն ու խնդիրները: Ի սկզբանս "Armenia"-ն հանրամատչելի հրատարակութուն էր լինելու, որի Հայաստանի նպատակն էր «հնարավորինս բազմակողմանի ներկայացնել հայ մշակույթի նվա-

<sup>1</sup> Szongott Kristof: "Armenia Kepes Naptara", Szamosujvar, 1893; "Szamosujvar a magyar ormeny metropolis", Szamosujvar, 1893; "A magyarhony orment csaloak genealogiaja", Szamosujvar, 1898; "Szamosujvar szab.kir.varos monografaja, 1700–1900", I–IV kot., Szamosujvar, 1901–1903; "A magyarorszagi ormenyek ethnographiaja", Szamosujvar, 1903; "A magyarok eredete es oslaka", Szamosujvar, 1905.

<sup>2</sup> «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1895, հ. 1, էջ 11:

ճուճները հուճար հասարակությանը և միաժամանակ դառնալ հայ և հուճար գրականությունների միջև կապող օղակ»<sup>1</sup>: Մակայն հուճարահայոց շրջանում ամսագրի խնդիրները փոքր-ինչ այլ էին: "Armenia"-ն հրատարակվում էր գաղթօջախի հասարակական և մշակութային կյանքի համընդհանուր վերելքի շրջանում և փաստորեն ազգային ինքնագիտակցության զարթոնքի արտահայտություններից մեկն էր: Ամսագրի հիմնադիրներն իրենց «մանկանք» դիտում էին որպես գաղութի ազգային ինքնության պահպանման և ձուլման ահազանացող վտանգի դեմ պայքարի կարևորագույն միջոց: "Armenia"-ն ձգտում էր հայ ժողովրդի պատմության և մշակութի հանդեպ հետաքրքրություն արթնացնել հատկապես երիտասարդ սերնդի շրջանում, նրանց հաղորդակից դարձնել իրենց արմատներին: "Armenia"-ն նախատեսվում էր նաև որպես գիտական ամսագիր, որի հիմնական բնագավառը պետք է լիներ հայագիտությունը: Դա նշանակում էր «հոգվածներ տպագրել Հայաստան աշխարհի, հայ ծագվորդի և հուճարահայության անցյալի ու ներկայի մասին... պարբերաբար գիտական հաղորդումներ տալ հնագիտության, վիպաբանության, լեզվագիտության, եկեղեցու պատմության, ժողովրդական բանահյուսության և այլ բնագավառների վերաբերյալ»<sup>2</sup>:

Ժամանակակից հուճարական մամուլն անմիջապես արձագանքել է նոր ամսագրի լույսընծայմանը: Հուճարական մի շարք թերթեր և ամսագրեր իրենց համարներում միաժայն ողջունել են նորաստեղծ ամսագրի մուտքը, թեպետ կային նաև թերահավատներ<sup>3</sup>: Սոնդոտյանը հիանալի հասկանում էր, որ հենց հուճարիայում, որտեղ ազգային հարցը մնում էր խճճված ու չլուծված, այնպիսի նախաձեռնություն, ինչպիսին էր ազգային փոքրամասնության ամսագրի հրատարակումը, չէր կարող ինչ-որ տեղ հակառակ արձագանք չուճենալ: Այդ պատճառով նա հենց առաջին համարում նորից ու նորից ընդգծում էր, որ հուճարահայոց հանդեսի երևան գալը ոչ մի դեպքում չպետք է դիտվի իբրև ընդվզում հուճար ժողովրդի ու պետության դեմ: Պատմական անցյալից վերցրած օրինակներով նա հաստատում էր, որ հուճարահայերը միշտ էլ տերություն հարազատ գավակներն են եղել: "Armenia"-ն պետք է դառ-

<sup>1</sup> Govrik Gergely, Szongott Krisztf, Eloffizetesi felhivas, Armenia, 1887, I., 1. o.

<sup>2</sup> Ս օ.

<sup>3</sup> Hazai lapok nyilatkozatai az "Armenia"-rol. Armenia, 1887, no. 6; 1888, no. 3.

նար միջնորդ Հայ և հունգար ժողովուրդների միջև, նպաստեր նրանց փոխըմբռնմանն ու բարեկամությանը: «Այն պիտի ծառայի հունգար լեզվին... դառնալով բարի օրինակ երկրի մյուս ժողովուրդների համար»<sup>1</sup>:

Ամսագրի հեղինակները ձգտում էին այն հանրաճանաչ դարձնել նաև հայկական շրջանակներում: Դեռևս ամսագրի հրատարակումից առաջ նրա ապագա հիմնադիրներից Գրիգոր Գովրիկյանը 1886 թ. հոկտեմբերի 21-ի թվագրված նամակով Գեռլայից դիմել է Մոսկվայի Լազարյան ճեմարանի հայագիտության ամբիոնի վարիչ Մկրտիչ Համիրին՝ խնդրելով համագործակցել. «Արդ՝ քաջ ճանաչելով զմեծ տաղանդ, զխորին հմտութիւն և զբարձր հանճար ազնուամեծար Տէրութեանդ, խնդրեմք զձեռնտուութիւն Ձեր ի մասինս այսմիկ: Այսինքն՝ զի բարեհաճեսցիք օգնական լինել մեզ միայն հանճարով մտաց և գրչի Ձերոյ, առաքելով ընդ ժամանակս ժամանակս»<sup>2</sup>:

Համագործակցության համանման հրավերներ ուղարկվել էին Գ. Խալաթյանցին, Լ. Մսերյանին, Վս. Մյուլլերին: Բայց գոյություն ունեն լեզվական խոչընդոտ, որը "Armenia"-ի հեղինակները հաղթահարում էին՝ ամսագրի բովանդակությունը թարգմանելով հայերեն: "Armenia"-ի նյութերը թարգմանաբար երկար տարիներ տպագրվել են Վիեննայի Մխիթարյանների «Հանդէս ամսօրեայ» պարբերականում<sup>3</sup>: Բացի այդ, Սոնգոտյանն ու իր ընկերները մտադիր էին ամսագրի յուրաքանչյուր համարի հետ լույս ընծայել նրա հայերեն հավելվածը, որտեղ կարող էին տպագրվել նաև արևմտահայ հայտնի հեղինակները: Բայց այդ օգտաշատ նախաձեռնությունը չիրականացավ Ֆիննանսական դժվարությունների և փոքրաթիվ բաժանորդների պատճառով: «Երբ որ միայն 15 բաժանորդ խնդրիլ է զ'«Արմենիա»-ին հայերեն թարգմանութիւնը, կարող չեղայ հրատարակել զայն բնագրի հետ», - գրում էր Սոնգոտյանը Լևոն Մսերյանին 1893 թ. դեկտեմբերի 4-ին Գեռլայից: Մեկ այլ նամակում (1891 թ., փետրվարի 20) խնդրում է նրան համագործակցել. «Անցեք իմ գործակիցներուս շարքը: Թերթս քաղաքական հոդվածներ չի հրատարակի, հա-

<sup>1</sup> Szongott Kristof: Az Armenia, a magyar-ormeny es az Erdelyreszi magyar kozmuvelodesi egyesulet. Armenia, 1887, I., 11-15 o.

<sup>2</sup> Ազնավուրյան Գ., Հունգարալեզու «Արմենիա» ամսագրի խմբագիրների նամակագրությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, հ. 1, էջ 132:

<sup>3</sup> Տես «Հանդես ամսօրեայ», 1887-1900 թթ.:

պա միայն գրիտական և միայն հայերու վերաբերող հոդվածներ կհրատարակե»<sup>1</sup>:

"Armenia"-ն սերտ կապերի մեջ էր բազմաթիվ հայ պարբերականների հետ, ինչպես՝ «Մուրճը», «Մշակը» (Թիֆլիս), «Արևելքը» (Կ. Պոլիս), «Հանդէս ամսօրեան» (Վիեննա), "L'Arménie" (Լոնդոն-Փարիզ), «Արա» (Կալկաթա) և այլն: "Armenia"-ն դրանցից արտատպել է հոդվածներ, վարել հայագիտական խնդիրների շուրջ բանավեճեր: "Armenia"-ն հրատարակվել է մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ նկատվել էր անգլերեն և ֆրանսերեն լեզուներով հայ պարբերականների ձևավորման գործընթաց Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Բուլղարիայում, Հնդկաստանում, ԱՄՆ-ում: Օտարալեզու հայ թերթերի և ամսագրերի ի հայտ գալն առաջին հերթին պայմանավորված էր հայոց կյանքում տեղի ունեցող քաղաքական փոփոխություններով, ինչպես նաև՝ միջազգային ասպարեզում հայկական հարցի քննարկումներով:

Հունգարալեզու "Armenia" ամսագիրն առաջին հերթին նախատեսված էր հունգարահայերի համար, որոնք հունգարախոս էին: Վերը հիշատակված առաջնորդող հոդվածում խմբագիրներն ընդգծում էին, որ ամսագրից քաղաքականությունը լիովին հանված է, և դա համարում էին ամսագրի անարգել հրատարակության հիմնական նախապայմանը: Նման դիրքը կարելի էր բացատրել հենց Ավստրո-Հունգարական կայսրությունում տիրող բավական բարդ և անկայուն քաղաքական իրավիճակով: Բայց, ինչպես նշում է "Armenia" ամսագիրն ուսումնասիրող էվա Բագի-Գևորգյանը, «խմբագրություն հավաստիացումը, թե քաղաքականությունը ընավ չպիտի տեղ գտնի ամսագրի էջերում, դառնում էր լոկ քող... «Արմենիան», որ երբեք չէր հակադրվել պետության պաշտոնական քաղաքականությանը, չէր կարող կուրորեն հետևել Ավստրո-Հունգարական ինքնակալության դիրքորոշմանը Թուրքիային վերաբերող խնդիրներում»<sup>2</sup>: Իր զայրույթն ամսագիրն արտահայտել է հայկական հարցին նվիրված հոդվածներում:

<sup>1</sup> Ազնավուրյան Գ., նշվ. աշխ., էջ 138:

<sup>2</sup> Գևորգյան-Բագի Է., Հայ-հունգարական գրական առնչությունները և «Արմենիա» ամսագիրը, Երևան, 1979, էջ 46:

1896 թ. հուլիսին "Armenia"-ն հրատարակել է կայսրութեան արտաքին գործերի նախարար կոմս Գոլուխովսկու հայտարարութիւնը, որից պարզ էր դառնում Ավստրո-Հունգարիայի դիրքորոշումը Հայկական հարցում: Կայսրութիւնը, որպես Բալկաններում և Եվրոպայում մշտական խաղաղութիւն հաստատելու հետևողական կողմնակից, կարևորում էր Հայկական հարցում եվրոպական տերութիւնների միասնական տեսակետ ունենալու անհրաժեշտութիւնը: Մինչդեռ Ավստրո-Հունգարիան բռնել էր սպասողական դիրք և չէր ուզում խառնվել Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի գործողութիւններին, քանի որ գտնում էր, որ խաղաղութեան երաշխիքը մեծ տերութիւնների կողմից Օսմանյան կայսրութեան ներքին գործերին չմիջամտելն է, որը պահանջում է զոհեր: Իսկ խաղաղութեան զոհերը ներկա դեպքում «ահալոր վիճակում գտնվող հայերն են»<sup>1</sup>:

Արևմտյան Հայաստանից եկող լուրերն արտասովորում էին օտար պարբերականներից, ինչպիսիք էին՝ "Autorite", "Temps", "Revue de Paris", "La Justice", "Saturday Globe", "The Boston Herald", "Daily News", "Magyar Allam", "Tiszantul", "Fovarosi Lapok", "Budapesti Hirlap":

Այդ տարիներին "Armenia"-ն հանդես էր գալիս սովյալ հայերին դրամական օգնութիւն ցուլց տալու կոչերով, քննարկում հայ փախստականներին ապաստան տալու խնդիրը: Այդ առաջարկութիւնները մեծ արձագանք էին գտնում հունգարահայերի շրջանում:

Հնարավորութեան դեպքում "Armenia"-ն անդրադառնում էր հայ և հունգար ժողովուրդների հերոսական անցյալին, 1848-1849 թթ. ազատագրական պայքարին հայերի մասնակցութեանը, ներկայացնում հունգարական բանակի հայազգի զորավարների՝ գեներալ-լեյտենանտ Էռնյո Քիչի, գնդապետներ Լազար Վիլմոշի և Դենեշ Լուքաչի կյանքը, որոնք նահատակվել էին հունգար ժողովրդի ազատութեան համար: Իսկ Արգենտինայում ապաստանած գեներալ Յանոշ Յեցը մինչև իր կյանքի վերջը պահպանել է կապը հունգարիայի հետ և դարձել "Armenia" ամսագրի ամենաակտիվ թղթակիցներից մեկը:

"Armenia"-ն խմբագրական հոգովածում նշել էր իր հիմնական խնդիրը՝ «ներկայացնել հայագիտութիւնն իր բոլոր բնագավառներ-

<sup>1</sup> Kulugyminiszterunk eloterjesztese az ormeny kerdesben. Armenia, 1896, no. 7.

րով»<sup>1</sup>: Ամսագրի էջերում բավական հանգամանալից ներկայացված էր հայ հին և միջնադարյան պատմագրութունը: Բարեբախտաբար, "Armenia"-ի հոդվածագիրներին մի քանիսը դեռ չէին մոռացել հայերենը և անհրաժեշտության դեպքում ու հնարավորության սահմաններում դիմում էին հայ պատմական ու պատմագիտական աղբյուրներին՝ որպես Արևելքի և Արևմուտքի երկրների պատմության վաղ շրջանի ամենահավաստի սկզբնաղբյուրները: Ուշագրության են արժանի ինչպիսիք Սոնգոտյանի, Գրիգոր Գովրիկյանի, Անտալ Մոլնարյանի հոդվածները վաղ միջնադարի հայ պատմագիրների մասին<sup>2</sup>: Ամենից շատ նրանց գրվում էր Պատմահայր Մովսես Խորենացու կերպարը<sup>3</sup>, իսկ նրա հիմնարար «Հայոց պատմութուն» աշխատության հունգարերեն թարգմանությունը կարելի է համարել երևույթ ոչ միայն հունգարահայոց կյանքում, այլև հայ իրականության մեջ<sup>4</sup>: "Armenia"-ն տպագրել է նաև Ղուկաս Պատրուբանյանի հոդվածները V-X դ.դ. հայ պատմագրության մասին: Դրանք այն դասախոսություններն էին, որ նա կարդում էր Բուդապեշտի համալսարանում 1900-ական թթ., որտեղ դասավանդում էր հայ գրականություն և հայոց պատմություն<sup>5</sup>:

Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում հունգարահայ գաղութի պատմությանը նվիրված հենց հունգարահայ հեղինակների աշխատությունները: Բացի ինչպիսիք Սոնգոտյանի վերոհիշյալ աշխատություններից, երեք տարի շարունակ տպագրվել է Յանոշ Տեմեշվարիի «Հունգարահայ ազնվական ընտանիքների արտոնագրերը» աշխատությունը, որն անչափ արժեքավոր է առաջին հերթին որպես հազվագյուտ արխիվային նյութ<sup>6</sup>: Եղիսաբեթուպոլիս քաղաքի պատմության էր նվիրված քաղաքի պրոգրամագիայի ուսուցիչ

<sup>1</sup> Govrik Gergely, Szongott Kristof: Elofizetesi felhivas, Armenia, 1887, I., 1. o.

<sup>2</sup> Szongott Kristof: Az V. századbeli negy ormeny tortenclem megirasanak ideje, 1887, no. 2; Govrik Gergely: Agathangelos tortenclemiro, 1888, no. 1; Molnar Antal: Az ormeny torteneti irodalom, 1901, 10–11 o.; Molnar Antal: Agathangelos tortenclemiro, 1891, no. 4–9.

<sup>3</sup> Govrik Gergely: Chorenei Mozes, Armenia, 1887, no. 1, 24–26 o.; Armenia, 1887, no. 2, 50–54 o.; Szongott Kristoff: Katinai Mar Abasz es Chorenei Mozes. Szamosujvari gimm. 1881/82. evi Tudositvanya.

<sup>4</sup> Chorenei Mozes: Nagy Ormenyország (ford. Szongott Kristof), Szamosujvar, 1892.

<sup>5</sup> Armenia, 1900, no. 1–11.

<sup>6</sup> Temesvari Janos: A magyar-ormeny nemes családok czimerlevelei, Armenia, 1893, no. 12; 1894, no. 1–12; 1895, no. 1–3, 5–12; 1896, no. 2–4.

Ղուկաս Ավետիքյանի մենագրությունը,<sup>1</sup> որից որոշ հատվածներ տպագրվել էին "Armenia"-ի էջերում մինչև մենագրության լույս տեսնելը<sup>2</sup>:

Ամսագրում մեծ տեղ էր տրվում հունգարահայ ազգագրությանը, հայ գեղարվեստական դրականությանն ու հայ ժողովրդի պատմությանը: Հունգար բանաստեղծ Դյուլա Ռուդնյանսկու և հունգարահայ Գերգեյ Շիմայիի թարգմանությամբ "Armenia"-ի էջերում տպագրվել են Բաֆֆու, Ռ. Պատկանյանի, Պ. Դուրյանի, Ե. Շահագիրզի, Մ. Պեշիկիթաշյանի ստեղծագործությունները: Հաճելի անակրնկալներից մեկը հայոց առասպելներից մեկի՝ «Արա Գեղեցիկ» ողբերգության հունգարերեն լույսընծայումն էր եղիսարեթուպուսի գիմնազիայի ուսուցիչ Դավիթ Մարտոնի թարգմանությամբ, որը շուտով տպագրվեց նաև առանձին գրքուկով<sup>3</sup>: Ամսագրում տպագրվել են նաև հունգարահայերի, հիմնականում՝ գրասերների դրական ստեղծագործությունները, ինչպես նաև հայկական ծագումով հունգարացի պրոզաների՝ Գերգեյ Չիկիի (1842–1891 թթ.), Իշտվան Պետելեի (1852–1910 թթ.), Էլեմեր Բանյայի (Ջուբոյ, 1875–1915 թթ.) գործերը: Ամսագրում մեծ տեղ էր տրված հայ գրականությանը նվիրված հոդվածներին, որոնց զգալի մասը պատկանում էր Անտալ Մոլնարյանի գրչին: Նրա հոդվածաշարը ներկայացնում էր հայ գրականության անցած ուղին հեթանոսական ժամանակներից՝ մինչև նոր դրականություն՝ առաջին պլան մղելով հնագույն հարուստ բանահյուսությունը, առասպելներն ու լեգենդները<sup>4</sup>: Հայ միջնադարյան գրականությունն ուսումնասիրել են Գուստավ Պապլը, Լասլո էստեգարը, Անտալ Վոյթը, Հակոբ Չիլինգարյանը և այլք<sup>5</sup>:

Հայաստանի բնաշխարհը ներկայացվել է եվրոպացի բնախույզների, գիտնականների ու ճանապարհորդների ուղիգրական երկերի տպագրությամբ, որոնք մեծ մասամբ հունգարերեն էր թարգմանում

<sup>1</sup> Avedik Lukacs: *Erzsebetvaros monografiája, Szamosujvar. Szerzo kiadasa.* 1896, 322 o. Ismertetes: Armenia, 1897, no. 1, 27 o..

<sup>2</sup> Armenia, 1891, no. 6, 169–174 o.; no. 11, 336–338 o.; no. 12, 374–376 o..

<sup>3</sup> Marton David: *Szep Ara tragedia ot felvonasban.* Armenia, 1896, no. 9–12; 1897, no. 1–7.

<sup>4</sup> Dr. Molnar Antal, *Az ormeny irodalom,* Armenia, 1887, no. 9–11; 1888, no. 4–8; 1891, no. 1; 1898, no. 3–8.

<sup>5</sup> Voith Antal: Armenia, 1895, no. 3; 1903, no. 9; Papp Gusztav: Armenia, 1899, no. 4; Esztegar Laszlo, Armenia, 1899, no. 3; Selingarian Jakab: Armenia, 1901, no. 6; stb.

Անտալ Մոլնարյանը<sup>1</sup>: Նրա թարգմանությունը տպագրվել են նաև հատվածներ Ղևոնդ Ալիշանի «Տեղագիր Հայոց Մեծաց» աշխատություններից<sup>2</sup>:

Հայագիտության հիմնական բնագավառներից մեկը, որին անդրադառնում էր ամսագիրը, լեզվաբանությունն էր: Գեյզա Կուլնի, Ղուկաս Պատրուբանյանի, Անտալ Մոլնարյանի հոդվածներում քննարկվում էին Հայոց լեզվի ծագումնաբանության, հայերենի և հունդաբերենի փոխազդեցությունների հարցերը<sup>3</sup>: Պակաս հետաքրքրություն չէր ներկայացնում տրանսիլվանահայերի տեղական Առտիալի բարբառը, որը մեր օրերում ուսումնասիրվել է Հայ մեծանուն լեզվաբան Հրաչյա Աճառյանի կողմից<sup>4</sup>:

Իր գոյություն ընթացքում "Armenia"-ն նախանձելի ճանաչում է ձեռք բերել: Միայն Հունգարիայում այն առաքվում էր 85 բնակավայրեր, սերտ կապեր էր պահպանում այլ հայկական գաղթօջախների հետ, ուներ ավելի քան 150 թղթակից ու աշխատակիցներ: Սակայն ամսագրի գոյատևման հարցն ավելի հաճախակի սկսել է քննարկվել 1900-ականների սկզբից, երբ նկատվում է ամսագրի ընդհանուր մակարդակի անկում, թղթակիցների խանդավառության նվազում: Իսկ 1907 թ. Սոնգոտյանի մահից հետո, "Armenia"-ն դադարեցրել է իր գործունեությունը: Հայտարարվել է, որ ամսագիրը վերափոխվում է «Հայ թանգարանային ընկերության տարեգրքի»<sup>5</sup> թանգարանի տնօրեն Յանոշ Տեմեշվարիի խմբագրությունը<sup>6</sup>, բայց այդ մտահղացումը չի իրագործվել: Սակայն Անտալ Հերմանը հետևողական էր վերականգնել "Armenia"-ն, ինչը երևում էր 1909 թ. «Սամոզվյոլդ» թերթում տպագրված նրա հոդվածներից. «Երկու տասնամյակ շարունակ «Արմենիան» հունգարահայ մտքի հավաքատեղին և ջերմատունն էր, այնտեղից էին դուրս գալիս բոլոր հայկական նախաձեռնությունները... Մենք երբեք ամսագրի կարիքը այդքան չենք զգացել, ինչպես հիմա»<sup>6</sup>: "Armenia"-ի վերականգնման շարժումը նկատելի աշխուժություն է առաջացրել հունգարահայերի

<sup>1</sup> Armenia, 1891, no. 10-12.; 1892, no. 6-10.; 1894, no. 1-2.; 1899, no. 6-10.

<sup>2</sup> Alisan Leo, Nagy Ormenyország foldje, Armenia, 1890, no. 3-5.

<sup>3</sup> Patrubany Lukacs: Armenia, 1887, no. 1; 1891, no. 10; 1892, no. 10-12. Grof Kuun Geza, 1890, no. 4; 1891, no. 4; Molnar Antal, 1893, no. 5; 1894, no. 6-9.

<sup>4</sup> Աճառյան Հրաչյա, Քննություն Առտիալի բարբառի, Երևան, 1953:

<sup>5</sup> Szamosvolgy, 1908, no. 1.

<sup>6</sup> Dr. Hermann Antal: "Armenia" felcsztese. Szamosvolgy. 1909, 20 sz.; 1909, 23 sz.

չրջանում, ինչը վկայել է նաև տեղական մամուլը: Այսպես, 1910 թ. սեպտեմբերին «Սամոշուվարի նապլոն» հայտնում է, որ Անտալ Հերմանը տպարան է գնել Վացում և 1911 թվականից սկսել է "Armenia"-ի վերահրատարակումը: Թերթի միջոցով Հերմանը դիմում է Հունգարահայերին՝ խնդրելով աջակցություն<sup>1</sup>: Բայց, ինչպես հայտնի է, ծրագիրը լիովին իրականացնել չի հաջողվել: 1913 թ. Անտալ Հերմանը ազգազրագես Գուստավ Պապպի հետ լույս է ընծայել միացյալ գրքույկ, որից հետո "Armenia"-ն անցել է պատմության դիր-կը՝ իր սեղը զիջելով Հունգարահայ գաղթօջախի շաբաթաթերթերին:

Գեոլայում, ինչպես նաև Տրանսիլվանիայի այլ քաղաքներում, քաղաքային շաբաթական մամուլի հայտնվելը պատահական և անսպասելի երևույթ չէր, այն առաջին հերթին պայմանավորված էր երկրի քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի արագ զարգացմամբ: Հունգարական հասարակության տնտեսական վերափոխումն ու ուրբանիզացիան փոփոխություններ են առաջացրել նաև հասարակական մտքի և մամուլի զարգացման բնագավառում: Միայն Բուդապեշտում դարասկզբին լույս էր տեսնում 39 թերթ: Դրան ավելացնենք նաև դավառային մամուլը, երբ մեծ քաղաքներում հրատարակվում էին 2-3 խոշոր թերթեր, իսկ փոքր քաղաքներում՝ նաև շաբաթաթերթեր:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին Գեոլայում և Եղիսաբեթուպոլսում լույս են տեսել մոտ մեկ տասնյակ շաբաթաթերթեր, որոնցից և ոչ մեկն էլ երկար կյանք չի ունեցել և հերթափոխել են մեկը մյուսին: Հունգարական դավառային մամուլի համակարգում դիտարկելով՝ կարելի է դրանք բաժանել երկու խմբի՝ քաղաքական և հասարակական-կրթական:

Այդ շաբաթաթերթերը տիպիկ քաղաքային թերթեր են, որոնք արտացոլում և համախմբում էին տվյալ քաղաքի կամ շրջանի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքը: Երկրի կամ արտասահմանի իրադարձությունների արտացոլմամբ նրանք չէին տարբերվում մամուլի այլ օրգաններից: Բայց միևնույն ժամանակ նրանք անընդհատ անդրադառնում էին Հայկաբան թեմային՝ Հունգարահայ գաղթօջախի պատմությանը, կրոնին, Հունգարահայ միությունների գործունեությանը, ազգային լրթությանը, գաղու-

<sup>1</sup> Szamosujvari Naplo, 1910, 27 sz.

Թահայուցիյան առօրյային, Արևմտյան Հայաստանում ծավալվող իրադարձութիւններին և Հայկական Հարցին:

Թերթերի խմբագիրներն ու հրատարակիչները հունգարահայ մտավորականութեան լավագուշտ ներկայացուցիչներն էին, որոնք հրաշալի գիտեին գաղթօջախի ցավերն ու խնդիրները: Շատերը եղել էին նաչիկ Լուքաչիի և նաչիկ Սոնգոտյանի աշակերտները, ստացել էին խոր հայրենասիրական դաստիարակութիւն: Նրանցից ոչ բոլորն էին լրագրողներ. նրանց մեջ կային իրավաբաններ, բժիշկներ, գիտնականներ: Նրանք համատեղում էի իրենց հիմնական զբաղմունքը լրագրողի գործունեութեան հետ, որն էլ հաճախ թերթերի ոչ կանոնավոր լույսընծայման պատճառ էր դառնում:

Այդ շարժաթերթերը հրատարակվում էին հունգարերեն: Հունգարահայ գաղթօջախում մայրենի լեզվի կորստի մասին բազմիցս խոսվել է "Armenia" ամսագրի էջերում: Զուլման գործընթացն ավելի է խորացել XX դ. սկզբին: «Սամոշուլար իշ վիդեյկե» թերթը դառնորեն նշել է, որ հայ երիտասարդ սերնդից 100 մարդուց հազիվ երկու հոգի գիտեն մայրենին, այն էլ՝ սիրողական մակարդակով<sup>1</sup>:

Ուեշնչվելով "Armenia" ամսագրի հրատարակութեան հաջողութիւնից՝ նաչիկ Սոնգոտյանը և Յանոշ Շիմային, որոնք հայոց լեզվին տիրապետող սակավաթիվ հունգարահայերից էին, որոշում են հրատարակել «Հունգարիա» անունով հայերեն ամսաթերթ, որը, ի տարբերութիւն "Armenia"-ի, նպատակ ուներ աշխարհով մեկ սփռված հայութեանը ճշմարիտ տեղեկութիւններ հաղորդել Հունգարիայի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի մասին<sup>2</sup>: Բաժանորդների կոչով վերոհիշյալ հունգարահայերը դիմել են արտասահմանի հայութեանը, բայց նրանց կոչը, հավանաբար, պատշաճ արձագանք չի ստացել:

Հունգարահայ մամուլում ազգային խնդիրներից ամենից հրատապը կրոնի հարցն էր: Հունգարահայերն արդեն նրկրորդ հարյուրամյակն էր, որ պայքարում էին Տրանսիլվանիայում հայոց նպիսկուպոսական թեմի վերականգնման համար: 1910 թ. հոկտեմբերին հունգարահայերի 33 հոգուց բաղկացած պատվիրակութիւնը Հունգարիայի կրթութեան և կրոնի նախարար Յանոշ Զիչիին է ներկայացրել այդ հարցի շուրջ խնդրագիր: Սակայն նախարարի պատաս-

<sup>1</sup> A Szamosujvan ormenyscg jovore, Szamosujvar es Videke, 1907, 52 sz.

<sup>2</sup> Szamosujvari Kozlony, 1903, 12 sz.

խանը բացասական էր: XVIII դ. կաթոլիկացված հունգարահայերի ազգային ինքնության պահպանման համար պայքարը ձախողվել է:

1915 թ. Հայոց ցեղասպանությունից և Առաջին համաշխարհային պատերազմից հետո շատ Հայ գաղթականներ տապաստան են գտել Բուդապեշտում, իսկ 1919 թ. հիմնել են «Մասիս» բարեգործական ընկերությունը և սկսել հրատարակել «Նոր դար» ամսաթերթը, որի խմբագիրն էր Սարգիս Ռշտունին: Ցավոք, լույս են տեսել ամսաթերթի միայն երկու համարները: Հավանաբար «Նոր դարի» հրատարակության բարդությունը կապված էր ոչ միայն տպագրական դժվարությունների, այլև առաջին հերթին գաղթօջախի ոչ բավարար կազմակերպվածության հետ: Շուտով ստեղծվել է «Հունգարահայերի միությունը» (1920 թ.), որը երկու տարվա ընթացքում Բուդապեշտում հրատարակել է դրքույկներ՝ «Հունգարահայերի միության հրատարակությունները» մատենաշարով: Այդ դրքույկները փաստորեն ընկերության տարեգրքերն էին, հայագիտական հոգևածների ժողովածուներ: Այդտեղ տպագրվել են Անտալ Հերմանի, Ֆելիքս Ավետիքի, Եղիա Հովհաննիսյանի, Լասլո Գոպչայի, Դյուլա Մերզայանի, Գրիգոր Շիմայու հոգևածները:

### Հունգարահայ հասարակական-քաղաքական կյանքը

Հունգարահայ գաղութի պատմության ուսումնասիրությունը, բացի հասարակական կյանքի և մշակութային երևույթների արժեւորումից, ենթադրում է նաև գաղութի քաղաքական կյանքի ձևավորման ու զարգացման հարցերի պարզաբանում, գաղութահայության և երկրի կառավարող շրջանների միջև փոխհարաբերությունների գնահատման անհրաժեշտություն, որոնք ցավոք դեռևս հատուկ ուսումնասիրության կարիք ունեն: Կարևոր է նաև XIX դ. վերջին և XX դ. սկզբին Հունգարիայի քաղաքական կյանքում մեծ դեր խաղացած հայազգի քաղաքական ու պետական գործիչների կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը:

XIX դ. վերջին քառորդը և XX դ. սկզբը Հունգարիայի պատմության մեջ ընդունված է անվանել կոմպրոմիսների ժամանակաշրջան: Ավստրիական միապետության անկալուն միջազգային դրությունն ավստրո-պրուսական պատերազմում կրած պարտությունից հետո, ներքին չլուծված ազգային խնդիրները ստիպել են Հաբսբուրգներին փոխել ժամանակահատվածում Հունգարիայի իշխող վերնախավի հետ և 1867 թ. ստեղծել Ավստրո-Հունգարական միապետությունը:

Աճել է ավատրիական և արտասահմանյան կապիտալի ներհոսքը Հունգարիա, ստեղծվել են բանկեր, այդ թվում՝ Համընդհանուր վարկային բանկը: Սակայն արդեն XIX դ. վերջին քաղաքական կյանքում նկատվում են դուսալիզմի ճգնաժամի նշաններ, որը 1890 թ. Հանգեցնում է իշխող քաղաքական ուժի՝ Լիբերալ կուսակցության առաջնորդ Կալման Տիսայի կառավարության տապալման, իսկ ճգնաժամն ավարտվում է ընդդիմադիր կուսակցությունների ճնշման տակ 1906 թ. կոալիցիոն կառավարության ստեղծմամբ: 1910 թ. իշխանությունն իր ձեռքն է վերցնում նորաստեղծ Ալխատանքի ազգային կուսակցությունը Կալման Տիսայի որդու՝ Իշտվան Տիսայի գլխավորութայամբ, որն էլ մինչև 1917 թ. մնում է որպես Հունգարիայի պրեմիեր-մինիստր:

Ահա այդ բարդ ու հակասական քաղաքական մթնոլորտում է ձևավորվել Հունգարահայ քաղաքական և հասարակական միտքը, որն իր արտացոլումն է գտել "Armenia"-ի և վերոհիշյալ մյուս Հունգարահայ պարբերականների էջերում: Սակայն հարկ է նշել, որ XIX դ. վերջին և XX դ. սկզբին Հունգարահայ գաղութն ապրում էր ոչ այնքան քաղաքական, որքան ազգային և հոգևոր զարթոնքի գաղափարներով: Դա էր պատճառը, որ այդ պարբերականներից շատերը, այդ թվում՝ "Armenia"-ն, իրենց հուշակել էին հասարակական պարբերականներ, բայց դա միայն առերես քող էր, քանի որ, արտացոլելով երկրի ներքին կյանքը, նրանք այս կամ այն կերպ արտահայտում էին իրենց վերաբերմունքը դրա հանդեպ: Մինչդեռ օրակարգում կար մի խնդիր՝ Հայկական հարցը և արևմտահայությունն նկատմամբ գործադրվող ոճրագործությունը: Այսպես, 1913-1914 թթ. հրատարակվող «Սամոչուլյարի կյոզուն» թերթը, իր էջերում բացելով «Արմենիա» խորագիրը, պարբերաբար տեղեկություններ է հաղորդել Արևմտյան Հայաստանում ծավալվող իրադարձությունների, դիվանագիտական շրջանակներում ծանրացած Հայկական հարցի լուծման ուղիների մասին:

1910 թ. Ալխատանքի ազգային կուսակցության ստեղծման հետ Գեուլյում սկսում է լույս տեսնել «Սամոչուլյարի նապլո» թերթը, որի խմբագիրը հայազգի Մարտոն Մարտոնֆիին էր: Նա Գեուլա քաղաքից ընտրված հիշյալ կուսակցության ներկայացուցիչն էր Հունգարիայի պառլամենտում: Տրանսիլվանիայի երկու հայաքաղաքները՝ Գեուլան և Եղիսաբեթուպոլիսը, որոնք ազատ թագավորական քաղաքների տիտղոս էին ստացել դեռևս XVIII դ. սկզբին, ունե-

ցել են իրենց մշտական ներկայացուցիչները Հունգարիայի խորհրդարանում: 1910 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքներն ամփոփելիս «Սամոշույվարի նապլո» թերթը «Պաուլամենտի հայ դեպուտատները» հոդվածում գրել է. «Այսօր Հունգարական խորհրդարանում կա 14 հունգարահայ պատգամավոր, 10 Աշխատանքի, 2 Յուշտի, 1 Կշուտի, 1 48 թվի կուսակցությունից»<sup>1</sup>: Հունգարահայերի շրջանում Աշխատանքի կուսակցության նման հանրաճանաչությունը կարելի է բացատրել կոալիցիայի մեջ ճգնաժամային երևույթների խորացմամբ, Անկախության կուսակցության պառակտմամբ, լայն խավերի շրջանում նրա հեղինակության անկմամբ և կոալիցիոն ռեժիմի փլուզմամբ:

Բացի խորհրդարանից, շատ հայազգի պետական գործիչներ մասնակցել են երկրի կառավարմանը, զբաղեցրել բարձր պաշտոններ տարբեր կառավարությունների օրոք: Հունգարահայերի քաղաքական ասպարեզ դուրս գալը կապված էր դադարվում XIX դ. երկրորդ կեսին նկատվող որակական փոփոխությունների հետ: Այդ ժամանակի հայտ է եկել Հունգարահայ մտավորականության մի սերունդ, որի ներկայացուցիչները ստացել են առաջնակարգ կրթություն Բուդապեշտում և եվրոպական այլ քաղաքներում: Նրանք երևելի դեմքեր են դարձել իրավադիտության, բժշկության, բնական դիտությունների, գրականության, արվեստի և երաժշտության բնագավառներում: Տարբեր ժամանակներում պետական բարձր պաշտոններ են զբաղեցրել Իշտվան Գորովեն՝ առևտրի, ապա՝ հալոդակցության նախարար, Էռնեստ Դանիելը՝ առևտրի նախարար, Բելա Լուքաչը՝ Պետական քարտուղար, Շալամոն Դայզագոն՝ Ֆինանսների նախարար, Դյորդյ Լուքաչը՝ ներքին գործերի նախարարի պետական քարտուղար և այլք:

Հայազգի պետական-քաղաքական դեմքերից առավել հայտնի է Լալո Լուքաչը, որին Կալման Տիսան հրավիրել է աշխատելու Ֆինանսների նախարարությունում՝ որպես պետական խորհրդական-փորձագետ: Այդ տարիներից սկսած՝ նա քաղաքական կարիերայի վերընթաց է ապրել. 1895–1905 թթ. նրան վստահվել է Ֆինանսների նախարարի պորտֆելը երեք վարչապետերի՝ Կալման Սեյլի, Կուեն Հեդերվարիի և Իշտվան Տիսայի օրոք: Կոալիցիոն կառավարության

<sup>1</sup> Ormeny kepviselek, Szamosujvari Naplo, 1910, 31 sz.

ժամանակ Լուքաչը թողել է պաշտոնը, սակայն 1910 թ. ֆինանսների նախարարի պորտֆելը կրկին հանձնվել է նրան:

Լուքաչի քաղաքական գործունեությունը գագաթնակետը երկրի վարչապետի պաշտոնն էր (1912–1913 թթ.)՝ Կոեն Նեդերվարիի կաբինետի ցրվելուց հետո: Նույն կաբինետում երեսփոխանական պալատի նախագահ է ընտրվել Իշտվան Տիսան: Այս փոփոխությունները հավանություն են արժանացել ավստրո-հունգարական արքունիքի կողմից: «Հունգարիայի ամենահանճարեղ ֆինանսիստը»՝ այդպես էին բնութագրում ժամանակակիցները հայազգի Լուքաչին: Ինչպես նշում է Եղիա Հովհաննիսյանն իր "Armenia Nepe" գրքում, Լասլո Լուքաչի վարչապետ լինելու ընթացքում Հունգարիայի պետական բյուջեի ընդհանուր գումարը կրկնապատկվել է: Լասլո Լուքաչը հնարավորության սահմաններում հետաքրքրվում էր հայերի ճակատագրով: «Շանթ»-ի թղթակից Ահարոն Տամատը, «Նամակներ Հունգարիայից» թղթակցության մեջ նկարագրելով իր հանդիպումը Հունգարիայի հայազգի վարչապետի հետ, մեջբերել է նրա խոսքերը. «Հայերեն գրեթե չգիտեմ, բայց չեմ ուրանա, թե հայ եմ, կինս էլ հայ է, քարտուղարս ալ, Մերուժանոֆ, ոչ ձեզի պես, անշուշտ, դուք ավելի ազգասեր ու ազգին համար սիխատող եք, քան մենք: Մենք ծնանք՝ հոս տեսանք և հոս պիտի գործենք, իբր պատվավոր և հավատարիմ քաղաքացիներ հոս ալ մեռնելու համար»<sup>1</sup>:

Լուքաչի խոսքերը սպառնիչ բնութագրել են ավելի քան 800 տարի Կարպատներում հանգրվանած հունգարահային՝ իր կեցությամբ և հոգեբանական իրավիճակով: Այն նույնքան արդիական է նաև այսօր՝ Հունգարիայում ապրող, լեզուն կորցրած, բայց իրենց արմատները զգացող և մշակութային-պատմական արժեքները պահպանող մոտ 10 հազար հունգարահայերի պարագայում:

<sup>1</sup> «Շանթ», 1912, թիվ 30, սեպտեմբեր 15/28, էջ 97:

## ԱՆՔԼԻԱ

Բրիտանական կղզիները դեռևս վաղ միջնադարում հայերին ծանոթ լինելու հարցը մինչև այժմ էլ բավարար ուսումնասիրված չէ: Մի շարք հեղինակներ (Ռ. Կյուլպինկյան, Ա. Ալպոյաճյան, Ա. Աբրահամյան, Ֆ. Հենրի և այլք) վկայակոչում են որոշ փաստեր, ըստ որի այդ ժամանակաշրջանում հայերի և կղզիների բնակիչների միջև որոշ շփումներ են եղել: Սակայն այդ փաստերը խիստ հակասական են: Հարկ է քննարկել ոչ միայն այն սակավաթիվ հիշատակութունները, որոնք վկայում են հայերի՝ Բրիտանական կղզիներում գտնվելու մասին, այլ նաև լուսաբանել Իռլանդիայի և Հայաստանի վաղմիջնադարյան ճարտարապետական հուշարձանների և մանրանկարչության որոշ կողմերի առնչութունները: Այդ համադրումը հնարավորութուն կտա առավել ստույգ որոշելու դրանց միջև գոյություն ունեցած պատմական առնչութունների ժամանակաշրջանը:

Արևմտյան Եվրոպայում հայերը հիշատակվում են VII դարից՝ ֆրանսիական ժողովրդական վիպերգություններում, որտեղ նրանք ներկայանում են որպես Ֆրանսիայով, Իսպանիայով շրջադայող վաճառականներ<sup>1</sup>: Մինչդեռ վերջիններս պետք է, որ ավելի վաղ իրենց ուշադրութունը դարձրած լինեին Բրիտանական կղզիների վրա, քանի որ դրանից շատ ավելի վաղ Իռլանդիան հայտնի էր որպես Եվրոպայի կարևորագույն ոսկի արտահանող երկիր: Իսկ 650 թ. սկսած ներկայիս Լոնդոնի տարածքում ծաղկում էր Լանդենուկ քաղաքը:

Կարելի է ենթադրել, որ VII դ. և դրանից առաջ հայ վաճառականների այցելութունների արդյունքում է Անանիա Շիրակացին իր նշանավոր «Աշխարհացույց» աշխատության մեջ արտացոլել Բրիտանական կղզիների աշխարհագրական տվյալները: Նա գրում է. «Բրիտանիան երկու կղզիներ են, որոնք գտնվում են Հյուսիսային՝ օվկիանոսում, Իսպանիայից վերև: Արևմտյան կղզու անունն է *ուլբաունիա* (*Heberina*): Նա ունի ճյուղավորված գարեհատի չափ: Այդ տեղ կան 16 խոշոր գետեր և բազմաթիվ ժողովուրդներ: Իսկ արևելյան կղզու անունն է Ալվիոն (*Albion*), որն ավելի մեծ է, քան առաջինը: Նա ունի բազմաճյուղ տղրուկի ձև: Կա՝ այնտեղ 25 խոշոր գե-

<sup>1</sup> «Էրեբունի», Լոնդոն, 38, Նոյեմբեր, 1983, էջ 7:

տեր և խիտ անտառներ: Այս կղզու շուրջը կան քառասունմեկ մանր կղզիներ, ինչպես և Թունիս մեծ կղզին»<sup>1</sup>:

Կարելի է ենթադրել, որ հայ վաճառականների այցելությունները և «սրբերի ու զիտնականների կղզու» մասին շրջիկ հայ վանականների հաղորդած տեղեկությունները ևս իրենց դերն են ունեցել այս տեղեկության համար: Իուլանդիայում քրիստոնեությունը քարոզող հայ վանականների մասին հիշատակություն կա իուլանդական հնագույն աղոթքներից մեկում: «Իուլանդական սրբերի աղոթքում» հիշատակվում են Կորկախ Մոռի 717 եպիսկոպոսների և քահանաների անունները: Սել Աշիդի եպիսկոպոսներն էին «Սենհիլլի՝ բրետոնացիները Բրիտանիայից, Հերուկմը՝ Արմենիայից»<sup>2</sup>: Այս աղոթքի լատիներեն բնագիրը վերցված է VII դ. ձեռագիր «Լեինստերի գրքից»:

Յ. Հենրին, ապա նաև Հ. Խանամիրյանը, VII–VIII դարերում հայ վանականների ներկայությունը Իուլանդիայում կապում են վերջնիված Սել Աշիդի վանքի հետ: Ըստ Յ. Հենրու, դա մի հայկական վանք էր, որն իր հոգևոր նշանակությամբ երկրում զբաղեցնում էր ևրրորդ տեղը<sup>3</sup>:

VII դ. հետո հայերը Եվրոպայում հիշատակվում են ոչ միայն իբրև վաճառականներ, այլ նաև իբրև զինվորներ: Այսպես, օրինակ «Ռուլանդի ելուը» ֆրանսիական հերոսական վիպերգության մեջ (XI–XII դդ.), յուր պատմում է 778 թ. տեղի ունեցած իրադարձությունների մասին, հայերին անվանել են «խիզախ մարտիկներ»:

Պետք է ենթադրել, որ հայերի, մասնավորապես հայ վանականների ակտիվ գործունակության հետևանքով է, որ Արմենիա անվանումը հիշատակվում է «Մնչլիական ժողովրդի եկեղեցական պատմության» մեջ: Դա առաջին անգամ հայտնաբերվել է անգլիական պատմագրության մեջ, չըր կազմել է անգլո-սաքսոն վանական Բեդա Հարդարթանը և թվագրվում է 731 թվականով: Ժամանակագիրը, պատմելով Բրիտանիա կղզի բնակեցնող հինգ ժողովուրդների մասին, գրում է, որ «առաջին անգամ հայերն էին բրիտոնացիներն»:

<sup>1</sup> Արքանաճյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 2, Երևան, 1967, էջ 179:

<sup>2</sup> "Massis", London, vol. VI, N 49, March-April, p. 42.

<sup>3</sup> Ալաջայան Ա., Պատմություն հայ գաղթակյանության, մաս Բ, Գահիրե, 1955, էջ 624:

րը, որոնք գաղթել էին Արմենիայից»<sup>1</sup>: Նույնատիպ տեղեկություններ կան նաև ավելի ուշ՝ IX դարի վերջի «Անդլո-սաքսոնական ժամանակագրություն» մեջ: Այդ աշխատությունը կազմվել է Ալֆրեդ Մեծ թագավորի օրոք (871–900-ական թթ.): Գիտնականները վերոհիշյալ փաստը բացատրում են անվանման մեջ ձեռագիրն արտագրողների թույլ տված սխալով, որոնք Արմորիկայի փոխարեն դրել էին Արմենիա:

Արդեն VIII դ. Հայերը Եվրոպայում Հայասնի էին որպես զինվորներ: Այդ Հանգամանքը պայմանավորված էր նրանով, որ ընդհուպ մինչև X դ. երկրորդ կես նրանք կարևոր դեր էին կատարում բյուզանդական բանակում: Ռազմական ասպարեզում ևս Հայերն առընչվել են անդլո-սաքսոնների ու իռլանդացիների հետ, երբ վերջիններս, իբրև վարձկաններ, փոխարինել են Հայերը:

Նման շփումների շնորհիվ Հայ վանականներ Պետրոսը, Աբրահամը և Ստեփանոսը XI դ. 20–30-ական թվականներին Հասել են մինչև Իսլանդիա և այնտեղ քրիստոնեություն քարոզել: Մի փոքր ավելի վաղ Եվրոպայում մեծ հռչակ վայելող երեք Հայ եպիսկոպոսներից Սիմեոնը Երուսաղեմից եկել է Եվրոպա և, քրիստոնեություն քարոզելով, այցելել Բրիտանական կղզիներ: Իտալիա վերադառնալուց հետո վախճանվել է 1016 թ. և սրբացվել Բենեդիկտոս VIII-րդ Պապի կողմից<sup>2</sup>:

Հայաստանի և Իռլանդիայի վաղմիջնադարյան մանրանկարչության և մեմորիալ հուշարձանների որոշակի նմանություն հարցն անշուշտ հետաքրքրություն է ներկայացնում մեզ համար: Այդ խնդրին վերաբերող տվյալները մեզ կօգնեն ոչ միայն առաջ քաշել նոր վարկածներ, այլև պարզել Բրիտանական կղզիներում Հայերի Հայտնվելու ստույգ ժամանակաշրջանը: Ուստի սրան անդրադառնանք մի փոքր հանգամանորեն:

Հայաստանի վաղմիջնադարյան մանրանկարչության ուսումնասիրությունը ղեկավարություններ է հարուցում, քանի որ պարսկական, ապա արաբական նվաճումների հետևանքով բազմաթիվ նմուշներ ոչնչացել են: Համեմատաբար լավ են պահպանվել Հեռարաբական, մասնավորապես՝ IX–XI դդ. Հայկական մանրանկարները, որոնք հանդամանորեն ուսումնասիրվել են Տ. Ա. Իդմայլովայի կողմից: Հարկ է նշել, որ այսպես կոչված «Իռլանդական մանրանկար-

<sup>1</sup> "Ararat", New York, vol. N 4, 1960, p. 52.

<sup>2</sup> Ալֆոյաճեան Ա., նշվ. աշխ., մաս Ա, Գահիրե, 1941, էջ 340:

չուլթյունն իր ուրույն տեղն ունի համաշխարհային մշակույթի դան-  
ձարանում: Նրա առանձնահատկուլթյուններն են. ... երկրաչափա-  
կան ձևերը և Ֆիգուրները գծա-մակերեսային մեկնաբանումը, ինչը  
տարածվել է նաև մարդու պատկերման ձևերի վրա»<sup>1</sup>:

«Կարմիր ավետարանի»<sup>2</sup> մասին Տ. Ա. Իզմայլովյան գրում է.  
«Մանրանկարը առանձնանում է հազվագյուտ պատկերադրական  
տիպի ծայրահեղ հնաոճուլթյամբ: Դարչնագույն եզրագծով մագա-  
ղաթի վրա նկարված գրաֆիկական Ֆիգուրները զուրկ են որևէ ծա-  
վալից:

... Աստվածամոր կերպարը վերածված է բուսական զարդապատ-  
կերի: Ոճական ծայրահեղ զարդարանքը ստիպում է մտաբերել իռ-  
լանդական մանրանկարը»<sup>3</sup>:

Վաղմիջնադարյան ինչպես հայ, այնպես էլ իռլանդական ման-  
րանկարչուլթյան համար հատկանշական է խորհրդանիշ-սկզբնատա-  
ռերի (զարդատառեր) օգտագործումը, որոնց մասին պատկերացումն  
ի հայտ է եկել դեռևս III—IV դդ.: Իռլանդական մանրանկարչուլթյան  
հետ իր գուգահեռներով առավել աչքի ընկնողը 1053 թ. Ավետա-  
րանն է: «1053 թ. Ավետարանի Մարկոս և Ղուկաս ավետարանիչնե-  
րի պատկերադրական մեկնաբանուլթյան ամենից մոտ զուգահեռներ  
կազելի է գտնել միմիայն անգլո-իռլանդական, մինչև իսկ մի շարք  
կառույինգյան ձևագրերում»<sup>4</sup>:

Այսպիսով, վաղքրիստոնեական հայկական և իռլանդական  
մանրանկարների հատկանիշների հատկապես արևելյան զարդանկա-  
րի, ծավալից զուրկ պատկերների, գծանկարչուլթյան և զարդանկար-  
չուլթյան, կիսաչրջանաձև խորանների ու խորհրդանիշ սկզբնատա-  
ռերի, ավետարանիչների պատկերադրական մեկնաբանուլթյան զու-  
գահեռների առկաուլթյունը վկայում է այդ դարոցների համանմա-  
նուլթյան մասին:

Վերոհիշյալ մանրանկարչական բոլոր ձևերն օգտագործվել են  
Հայաստանում քրիստոնեուլթյան ընդունման առաջին դարերի ըն-  
թացքում, և դրանց մեծագույն մասը հատկանշական չէ XI դարի  
հայ մանրանկարչուլթյանը: Այստեղ կարևոր դեր է խաղում Արևմտ-  
յան Եվրոպայի մանրանկարչուլթյան վաղ նմուշների ուսումնասի-

<sup>1</sup> Всеобщая история искусства, кн. 1, Москва, 1960, с. 212.

<sup>2</sup> Հիսուսի ծնունդը պատկերող 909 թ. մանրանկարը:

<sup>3</sup> Измайлова Т. А., Армянская миниатюра XI века, Москва, 1979, с. 12.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 117:

րությունը, որոնք, հակառակ հայկականի, առավել լավ են պահպանվել: XX դարի սկզբին Ի. Ստրժիգովսկին այդ մասին գրել է. «Կառուրինգյան ձեռագրերի արեւելյան զուգահեռները շարունակում են բազմանալ... Ինձ համար ավելի պարզ է, որ արեւմտյան մանրանկարները կարող են օգտակար լինել վերականգնելու այն ամենն, ինչը կորստի է մատնված Արեւելքի քրիստոնեական արվեստում»<sup>1</sup>:

Ի. Ստրժիգովսկին սուաջինն է արտահայտել այն տեսակետը, որ Իռլանդիայի վաղմիջնադարյան ճարտարապետական հուշարձանները, այսպես կոչված «քարե խաչերը», իրենց ծագումը ստանում են Արեւելքի վաղքրիստոնեական եկեղեցիներից (Եգիպտոս, Սիրիա, Հայաստան): Այդ հուշարձանները կոչվում են նաև «կելտական խաչեր», որոնք թևերի միացման հատվածում օղակ ունեն: Հուշարձանների դիմային կողմերը, ինչպես նաև պատվանդանները պլաստիկ ու երկրաչափական զարդարանք ունեն<sup>2</sup>: «Կելտական խաչերի» արևելյան ծագման թեզը ծնվել է իրենց զարդաքանդակի արևելյան լինելու փաստի ճանաչման հիմքի վրա: Մի շարք դիտնականներ անդրադարձել են այդ հարցին՝ մերժելով կամ ընդունելով իռլանդական հուշարձանների հայկական ծագումը<sup>3</sup>: Մասնավորապես Յ. Հենրին եկել է այն եզրակացության, որ VII դարի իռլանդացի ճարտարապետները և փորագրիչները պետք է, որ շատ լավ ընկալած լինեին քրիստոնյա Արեւելքի և մասնավորապես Հայաստանի արվեստը:

Հավանական է, որ հիշյալ տարածայնությունները կապված են երկու երկրների վաղմիջնադարյան հուշարձանների ոչ սխտեմատիկ ուսումնասիրության հետ: Ա. Մնացականյանն իր աշխատության մեջ հիմնավորել է մի թեզ, որի համաձայն Հայաստանում IV–VII դդ. պոլյություն է ունեցել փոքր մեմորիալի ինքնուրույն մի ձև՝ «կռնավոր խաչ»: Այդպիսի խաչարձաններն ունեին երկու մետր բարձրություն և սկզբնական շրջանում պատրաստվում էին փայտից<sup>4</sup>: Հետագայում IV–VII դարերի թևավոր խաչերի ճարտարապետական և դեկորատիվ պլաստիկ լուծումով հիմք է դրվել IX դ. հանդես եկած խաչքարին, որը Հայաստանում տարածվել է IX–XVIII դդ.: Թևավոր խաչերը դրվում էին խորանարդաձև հիմքերի վրա, որին

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Documents of Armenian Architecture Khatchkar (the Stone Crosses), Milano, 1970, p. 61.

<sup>3</sup> Khatchkar, Armenian Cross-Stones, Venezia, 1981, p. 19.

<sup>4</sup> Մնացականյան Ա., Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները, Երևան, 1982, էջ 41–42:

ամրացվում էին «ատամի» միջոցով, ինչպես հուշարձանները հին Հայաստանում:

Ինչպես և «կելտական խաչը», Հայաստանի հուշարձանները ևս ունեին դիմախի կողմ: Դրանք զուրկ են դարդաքանդակից, ինչով օժտված էին սյուները և կրկնում էին իուլանդականներին, որտեղ նույնպես առկա են երկրաչափական ու բուսական զարդեր: Նույնատիպ զարդաքանդակ է ի հայտ գալիս խաչը ծաղկած վիճակում պատկերման մեջ, ինչը պարզ երևում է Կարնդոնում գտնվող «կելտական խաչի» վրա (VIII դ.): Զարդաքանդակը կազմված է երեք մասերից և հիշեցնում է Արևելքում քաջ ծանոթ «կյանքի ծառը»<sup>1</sup>: Մեծ տարածում է գտել խաղողի վազի թեման: Երկու երկրների մեմորիալ հուշարձանների և մասնավորապես խաչարձանների վերոհիշյալ բնութագրերը մատնացույց են անում այդ հուշարձանների ընդհանրությունը:

Վերը նշված փաստերը թույլ են տալիս համաձայնվել Տ. Ա. Իգմայլովայի այն ենթադրության հետ, ըստ որի հայկական և իուլանդական մանրանկարչության մեջ զուգահեռներ կարող էին ծագել միմիայն միսիոներների, մասնավորապես հայ վանականների շնորհիվ, որոնք հայկական մանրանկարչության նմուշներ էին բերել Իռլանդիա: Պետք է ընդունել այն փաստը, որ դա կատարվել է այն ժամանակաշրջանում, երբ ձևավորվում էր իուլանդական մանրանկարչական դպրոցը: Նույնը պետք է ասել նաև խաչարձանների մասին: Իուլանդական վաղմիջնադարյան մշակույթն ընդգրկում է VI–VIII դդ., և այդ նույն ժամանակահատվածում հայ վանականները ներկա էին կղզում<sup>2</sup>:

Հայերի առնչությունը Բրիտանական կղզիների ժողովուրդներին, մասնավորապես անգլիացիներին հետ, շարունակվել է արդեն XI դարում, որն ի հայտ է եկել կապված ցամաքային Եւրոպայում հայ առաքելական եկեղեցու սրբերի պաշտամունքի հետ: Այդ դարաշրջանի Իտալիայում, այնուհետև Արևմտյան Եւրոպայի մի շարք երկրներում, լայն տարածում է դտել Ս. Մինասի, Ս. Սերվատիոսի, Ս. Մակարիոսի և այլ հայ հոգևորականների պաշտամունքը, որոնք սրբադասվել էին Հռոմի պապերի կողմից: Այդ շրջանում հվրոպացիների ուխտատեղիներից մեկը Պորտուգալիայում Ս. Հակոբ եկեղեցին էր

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 169:

<sup>2</sup> Նույն տեղում:

Սանտիագո դե Կոմպոստելյաում: Ս. Հակոբի առաքելությանը նվիրված գրքում, որը գրի է առնվել 1139–1173 թթ., այլ ժողովուրդների ներկայացուցիչների հետ միասին հիշատակվել են նաև Հայաստանից և Անգլիայից եկած ուխտավորներ<sup>1</sup>:

Թեև Անգլիան ակտիվ մասնակցություն չի ունեցել իսաղարաց առաջին երկու արշավանքներին, սակայն անգլիացիների փոքրաթիվ ջոկատներ միացել են խաչակիրների զորքին: Այսպես օրինակ, 1098–1099 թթ. իսաղարաց առաջին արշավանքի ժամանակ էդգար Աթելինգի գլխավորությամբ Բյուզանդիա է եկել անգլո-սաքսոնների մի ջոկատ<sup>2</sup>: իսաղարացիները Կիլիկիայի տարածքով շարժվել են դեպի Պաղեստին: Այնտեղ նրանք մեծապես օգտվել են հայ բնակչության և իշխանությունների օժանդակությունից: Մատթեոս Եդեսացու վկայությամբ, նրանց պարենով օգնել են Օշին, Կոնստանդին և Բագրատ իշխանները<sup>3</sup>:

Անգլիայի թագավոր Ռիչարդ Առաջին Առյուծասիրտն իր մասնակցությունն է բերել իսաղարաց երրորդ արշավանքին և, 1191 թ. մայիսին գլխավորելով անգլիական ռազմական նավերը, ժամանել Կիպրոսի Լիմասոլ նավահանգիստ: Մի քանի օր անց այդտեղ են հավաքվել Միջերկրական ծովի արևելյան գոտու քրիստոնյա պետությունների տիրակալները: Վերջիններին միացել է նաև Կիլիկիայի արքա Լևոն Բ-ն, որպես պատվավոր հյուր ներկա գտնվելու Ռիչարդ Ա թագավորի և Նավարրայի արքայազուստր Բերլինգարիայի հարսանիքին: Այդ փաստը հիշատակում են Ռիչարդ Ա արքայի (1189–1199 թթ.) ժամանակագիրներ Ժոֆրեյ դը Վինսոֆը (Վինսոսավո)<sup>4</sup> և Պատերաբրոյի արբահայր Բենեդիկտոսը: Անգլիայի և Կիլիկիայի միջև քաղաքական հարաբերությունները, որոնք անմիջականորեն իրենց դրոշմն են դրել նաև XIII–XIV դարերի մշակութային կապերի վրա, սկիզբ են առել երկու իշխանների հանդիպումից:

Եվրոպայի և Ասիայի միջև XIII–XIV դդ. առևտրական գլխավոր միջնորդներն էին Վենետիկը և Ջենովան: Վերջիններս իրենց գործունեությունը ուղորտը տարածել են նաև Կիլիկիայում: 1200–1201 թթ. իտալական քաղաքները Կիլիկիայի թագավորության հետ կնքել են

<sup>1</sup> Կոպլենդիան Ռ., Հայ-պորտուգալական հարաբերությունները, Սրևան, 1986, էջ 33:

<sup>2</sup> Finlay G., History of the Byzantine and Greek Empires, vol. II, Edinburgh, 1854–1856, p. 135.

<sup>3</sup> Микаелян Г., История Киликийского Армянского государства, Ереван, 1952, с. 91.

<sup>4</sup> Yoinville Y., Chronicles of the Crusades, London, 1903, p. III.

առևտրական պայմանագրեր, որի համաձայն Այաս նավահանգիստը կարևոր դեր էր կատարելու այդ առևտրում<sup>1</sup>:

Այդ նույն ժամանակ զարգացում է ապրել Անգլիայի արտաքին առևտուրը, որի հիմնական ոլորտը բրդի արտահանումն էր: Այդ առևտրի մենաշնորհը սկզբնական շրջանում իտալական և ֆլամանդական վաճառականների ձեռքում էր գտնվում:

Միայն վերոհիշյալ վաճառականների ակտիվ մասնակցությամբ, Անգլիայի ներքին և արտաքին առևտրի և Յորքշիրի բրդի մատակարարողների հետ ունեցած անմիջական կապերով կարելի է բացատրել Անգլիայում Հայ եկեղեցու Ս. Բարսեղի պաշտամունքի տարածման փաստը: Հայ առաքելական եկեղեցու եպիսկոպոս և մարտիրոս Ս. Բարսեղը դարձել է Անգլիայում մեծարվող սրբերից մեկը, որն այդտեղ ստացել է Բլազիոս անունը, թեև Օքսֆորդի եկեղեցական ժողովը 1222 թ. արգելել էր եկեղեցիներում ժամերգություններ կատարել ի պատիվ այդ սրբի: Այդուհանդերձ, աղոթագրքում փետրրվարի 3-ը հաստատվել է որպես այդ սրբի անվանակոչության օր: Ս. Բարսեղի պաշտամունքը կապված էր բրդագործական արհեստի հետ: Նրան հատկապես պաշտում էին Յորքշիրում, որտեղ նրա անվան հետ էին կապում բուրդ գգելու հայտնագործությունը<sup>2</sup>:

Անգլիայում հայերն առաջին անգամ հիշատակվել են XIII դարում 1228 թ., երբ այդ երկիր է եկել մի Հայ եպիսկոպոս, որը հարկադրված էր լքել Հայաստանը մոնղոլների ավերիչ արշավանքների պատճառով: Մի փոքր ավելի ուշ՝ 1252 թ., Հենրիկոս III-րդ (1216–1272 թթ.) արքայի հետ նամակագրական կապ է հաստատել Կիլիկիայի թագավոր Հեթում Առաջինը<sup>3</sup>: Վերջինս Կիլիկիայի առաջին թագավորն էր, որը դիմել է անգլիական իշխանություններին՝ օգնություն հայցելով ընդդեմ նոր զավթիչների՝ եգիպտական մամլուլուքների: Մոնղոլների ռազմական ուժի թուլացումով XIV դարի սկզբին Հայ թագավորներն իրենց հույսը կապել են եվրոպական տերությունների հետ: Այստեղ կարևոր դեր են խաղացել Կիլիկյան թագավորության բանակցությունները եվրոպական արքունիքների և Հռոմի պապերի հետ, ինչը տևել է իսաղարաց 7-րդ արշավանքի ժամանակաշրջանից (1270 թ.) մինչև Կիպրոսի Պիեռ արքայի մահը (1369 թ.):

<sup>1</sup> Կյոպչեմկյան Ռ., նշվ. աշխ., էջ 22–23:

<sup>2</sup> Dowling E. A., The Armenian Church, London, 1910, p. 98.

<sup>3</sup> Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., մաս Բ, էջ 623:

Հեթում Բ արքայի (1289–1296 և 1299–1305 թթ.) իշխանութ-  
յան առաջին տարիները համընկնում են մամլուքների արշավանք-  
ների հետ: Ակրայի անկումից հետո (1291 թ.) նա իր պատվիրակի մի-  
ջոցով անգլիական թագավորին է ուղարկել մի նամակ, որտեղ տեղե-  
կացրել է քաղաքի անկման և Կիլիկիայի վրա կախված վտանգի մա-  
սին<sup>1</sup>: 1298 թ. Հեթում Բ արքայի եղբայրը՝ Թորոսը, դեսպաններ է  
ուղարկել Հռոմի պապի և Անգլիայի էդուարդ Ա արքայի մոտ և  
հայտնել մամլուքների կողմից աճող վտանգի մասին:

Հատուկ մի պատվիրակություն, որի կազմում էին Կոնստանդին  
Մեծի թոռ Բողոկինը, Դրազարկ վանքի ավագերեց Թորոսը և այլք,  
1307 թ. ճանապարհ է ընկել Անգլիայի էդուարդ Ա արքայի մոտ:  
Սակայն մինչ պատվիրակությունը կհասնեն Անգլիա, էդվարդ ար-  
քան վախճանվել է, իսկ նրա հաջորդը 1308 թ. մարտին ուղարկած իր  
պատասխանում մերժել է օգնություն խնդրանքը՝ պատճառաբանելով  
անհետաձգելի գործերը:

Ջոն Մանթեիլը 1322 թ. սկսել է իր երկարատև և հեռավոր  
ճամփորդությունները: Շուրջ 34 տարի նա շրջագայել է Արևելքի  
երկրներում: Վերադառնալով Անգլիա՝ նա դրի է առել իր «Զարմա-  
նալի արկածախնդրությունները», որտեղ համառոտ նկարագրել է  
նաև Հայաստանում իր անցկացրած օրերը՝ ինչպես Փոքր, այնպես էլ՝  
Մեծ Հայքում<sup>2</sup>: Հերեֆորդի Մայր տաճարում պահպանվող XIV դարի  
քարտեզը մի անգամ ևս վկայում է այն մասին, որ անգլիացիներն  
այդ ժամանակ արդեն քաջատեղյակ էին Հայաստան երկրի մասին:

1321 թ. սկսած թուրքերի ու մամլուքների պարբերաբար  
կրկնվող ասպատակությունների պատճառով Հայկական Կիլիկիայի  
դրությունը դարձել էր օրհասական: Այդ պայմաններում XIV դ. 30–  
40-ական թթ. Կիլիկիայի և եվրոպական տերությունների միջև լայնա-  
ծավալ դիվանագիտական բանակցություններ են իրականացվել:

1332 թ. Լևոն Ե թագավորը (1320–1342 թթ.) բանակցություն-  
ներ վարելու նպատակով Եվրոպա է ուղարկել Ստեփանոս եպիսկո-  
պոսին: Լոնդոնի Պետական դիվանում պահպանվել է 1335 թ. դեկ-  
տեմբերի 12-ին թվագրված մի փաստաթուղթ, որտեղ էդուարդ Գ

<sup>1</sup> "Ararat", London, vol. IV, N 44, February, 1917, p. 369.

<sup>2</sup> «Նոր կեանք», Լոնդոն, 18, 15 Սեպտեմբեր, 1898, էջ 284:

Թագավորը հրամայել է Լոնդոնի առաջին դատավորին դրամ տրամադրել հայազգի պատվիրակ Գևորգին<sup>1</sup>:

Հաջորդ օրը էդուարդ Գ արքան մի նամակ է դրել Կիլիկիայի Լևոն Ե Թագավորին, որտեղ հետևյալ վերտառությունն ենք գտնում. «Սիրելի բարեկամ էդուարդի կողմից»: Մեկ ուրիշ նամակում, որը գրված է 1342 թ. սեպտեմբերի 1-ին, էդուարդ Գ արքան փորձում է հուսադրել Լևոն Ե Թագավորին:

Լուսինյան հարստության օրոք Փրանսիական և անգլիական արքունիքների հետ բանակցություններն ավելի լայն բնույթ են կրել: Այսպես, Գվիդոն Լուսինյանը (1342–1345 թթ.) իր Թագադրվելուց անմիջապես հետո Կոնստանդինիս ուղարկել է Անգլիա: Այդ է վկայում 1343 թ. մարտի 8-ի թվագրությամբ պահպանված հավատարմագիրը: Նույն թվականի աշնանը Գվիդոն արքան Անգլիայի Թագավորից հուսադրող նամակ է ստացել<sup>2</sup>: Անգլիական արքունիքի հետ բանակցությունները շարունակվել են նաև Կոնստանդին Թագավորի (1345–1363 թթ.) օրոք, երբ 1349 թ. Լոնդոն է եկել Կոնստանդին գորավարը:

Կիլիկյան պետության դրությունն ավելի է վատթարացել, երբ 1360 թ. Հալեպի էմիրությունը գրավել է Դաշտային Կիլիկիան: Նույն թվականի գարնանը Անգլիա են մեկնել Ստեփանոս և Հակոբ վանականները: 1360 թ. ապրիլի 28-ին Անգլիայի Թագավորը նրանց հրովարտականք է շնորհել, որոնցով թույլատրել է շրջադայել Անգլիայում և միջոցներ հավաքել իրենց վանքի վերականգնման համար: Պետք է ենթադրել, որը վերոհիշյալ վանականները միջոցներ հանգանակելու համար պատահական չէին ընտրել Անգլիան: Նրանց վանքը պատկանում էր Ս. Բարսեղի միաբանությանը, և նրանք հավանական է, որ քաջ տեղյակ էին Անգլիայում այդ սրբի պաշտամունքի փաստին:

Փամանակագիր Թոմաս Ուոլսինհեմի Հաղորդման Համաձայն՝ 1362 թ. Լոնդոնի Սմիթ Ֆիլդ հրապարակում տեղի է ունեցել մի ասպետական զինախաղ, որին իրենց մասնակցությունն են բերել նաև Հայ Հեծյալները, որոնք հմուտ ձիավարությամբ իրենց վրա են գրավել խաղերին ներկա գտնվող Թագավորի ու Թագուհու ուշադ-

<sup>1</sup> «Հայաստան», Լոնդոն, 15 Յունիս, 1891, էջ 4:

<sup>2</sup> "Armenia", Boston, vol. 1, April, 1905, p. 6.

րությունը<sup>1</sup>: Անգլիայի թագուհի Ֆիլիպպայի ժամանակագիր ժան Ֆրուասարը նշել է, որ 1362 թ. Լոնդոն է ժամանել Կիպրոսի արքան<sup>2</sup>: Պետք է ենթադրել, որ հայ ասպետները նրա շքախմբի հետ են ժամանել Անգլիա:

Հակոբ վանականի հետ 1364 թ. սկզբին Անգլիա է եկել Ս. Գևորգ վանքի վանահայր Ներսես եպիսկոպոսը: Նույն թվականի փետրվարի 7-ին էդուարդ Գ արքան նրանց հանձնարարական նամակներ է տվել թուլյատրելով մեկ տարվա ընթացքում ողջ երկրի տարածքում ուխտեզնացութուն կատարել: Այդ նամակներում նա իր հպատակներին կոչ է արել լավ ընդունելութուն ցույց տալ հայերին՝ նշելով այն արհավիրքները, որոնց ենթարկվել է նրանց երկիրը:

Անգլիայում XIV դ. 60-ական թվականներին գործունեության բոլոր ոլորտներում սկսել է տարածվել անգլիկանացման գործընթացը, մասնավորապես սկսել է անգլիերեն լեզվով կատարվել խորհրդարանի ու դատարանի ողջ գործունեությունը: Հավանաբար, այդ գործընթացով պայմանավորված, XIV–XV դդ. լատիներենից անգլիերեն է թարգմանվել կիլիկյան պետական գործիչ, զորավար և ժամանակագիր Հեթումի «Արեւելքի պատմություն» աշխատությունը<sup>3</sup>:

Առավել սերտ կապեր են հաստատվել Անգլիայի արքա Ռիչարդ Բ-ի (1377–1399 թթ.) և հայոց Լևոն Զ Լուսինյանի (1374–1375 թթ.) միջև: Վերջինիս գերության ժամանակ հաջողվել է թարգմանչին՝ Մանուելին ուղարկել Եվրոպա, որտեղ նա եվրոպական արքունիքներում իր արքային գերությունից ազատելու անհաջող փորձեր է կատարել<sup>4</sup>:

1382 թ., գերությունից ազատվելով, Լևոն Զ արքան 1384 թ. ամռանը բնակություն է հաստատել Փարիզում: Այնտեղ նա իր ծառայություններն է առաջարկել Ֆրանսիայի թագավորին՝ Անգլիայի հետ խաղաղության պայմանագիր կնքելու հարցում: Համաձայնություն ստանալով՝ Լևոն Զ-ն կապ է հաստատել Ռիչարդ Բ-ի հետ: Վերջինս նրան պահպանագիր է ուղարկել՝ Անգլիա այցելելու համար: Գալով Անգլիա (1385 թ. վերջ)՝ հայոց արքան ջերմ ընդունելություն է գտել Լոնդոնում: Այդ մասին է վկայել ժամանակագիր Ֆրուասարը, իսկ, ըստ Ուոլտեր Բեսանի, նրա տրամադրության տակ

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Froissart Sir John, Chronicles of England, France, Spain..., New York & London, 1901, p. 77.

<sup>3</sup> «Ներքունի», Լոնդոն, 30–31, Մարտ–Ապրիլ, 1983, էջ 5:

<sup>4</sup> Բասմաջեան Ա., Լեոն Ե Լուսինեան, վերջին քաղաքը հայոց, 1908, Փարիզ, էջ 63:

էր դրվել թառեւերը<sup>1</sup>, որն այդ ժամանակ բարձրաստիճան հյուրերի համար որպէս հյուրատուն էր ծառայում:

Ժամանելուց չորս օր անց Լեոն արքան ելույթ է ունեցել Վեստմինստերում հավաքված թագավորական խորհրդում, որտեղ կոչ է արել անգլիացիներին բանակցութիւններ սկսել Ֆրանսիայի հետ՝ խաղաղութիւն հաստատելու նպատակով: Դա հնարավորութիւն կընձեռեւր համատեղ ուժերն ուղղորդել կիլիկյան հայկական պետութեան վերականգնմանը:

Ի պատասխան այդ կոչին, 1386 թ. հունվարի 22-ին Ռիչարդ Բ արքան հրամայել է ստեղծել Ֆրանսիայի հետ բանակցելու դեսպանութիւն, որի միջնորդ և նախագահող է նշանակվել Լեոն Զ-ն: Փաստաթղթերը վկայում են, որ մինչև 1386 թ. մայիս վերջինս Լոնդոնում է գտնվել:

Պահպանված երկու հրովարտակների համաձայն՝ Լեոն Զ արքան պատրաստվել էր այցելել Անգլիա նաև 1392 թ. վերջին, սակայն այդ երկրորդ այցի մասին վկայութիւններ չեն պահպանվել: Ա. Ալպոյաճյանը, անդրադառնալով Լեոն Զ արքայի՝ Անգլիա կատարած այցի պատմութեանը, նշել է, որ հայոց արքայի՝ Լոնդոնում գտնվելը համընկել է այն արարողութեան հետ, երբ Լոնդոնի քաղաքապետին (լորդ մայորին) ներկայացրել են թագավորին: Այդ արարողութեանը մասնակցել են քաղաքում գտնվող բոլոր օտարազգի իշխանները, նրանց թվում նաև՝ հայոց արքան: Մեր օրերում ևս ամեն տարի նոյեմբեր ամսվա երկրորդ շաբաթ օրը կատարվող Լոնդոնի լորդ մայորի տոնախմբութեան շքերթի ընթացքում մասնակիցները միջնադարյան զգեստներով անցնում են փողոցներով: Նրանց մեջ է լինում նաև Լեոն արքային ներկայացնող կերպարը<sup>2</sup>:

Հայ-անգլիական հարաբերութիւնները խիստ թուլացել են կիլիկյան պետութեան անկումից հետո: XV—XVI դդ. այդ կապերի մասին տեղեկութիւններ չեն պահպանվել, թեև դրանք պետք է որ եղած լինեին: Հայտնի է, որ XVI դ. առաջին կեսից սկսած հայ վաճառականները հաստատվել են Հոլանդիայում և իրենց առևտրական գործունեութեան մեջ, հավանական է, առնչվել են Անգլիայի հետ: Արդեն XVI դարի վերջին այդ կապերը զարգացել են Ամստերդամի հայ գաղութի միջոցով: 1580 թ. հետո, երբ կնքվել է անգլո-թուրքա-

<sup>1</sup> Gregory S. M., The Land of Ararat, London, 1920, p. 121.

<sup>2</sup> Ալպոյաճյան Ա., նշվ. աշխ., մաս Բ, էջ 623:

կան առևտրային պայմանագիրը, Հոլանդական նավերն անգլիական դրոշի ներքո սկսել են ուղևորվել Օսմանյան կայսրություն: XVI դ. վերջին Եվրոպայի և Առաջավոր Ասիայի միջև կանոնավոր առևտրական հարաբերությունների հաստատումը չի հանգեցրել անգլիահայ գաղթածախի ստեղծմանը, ինչպես դա տեղի է ունեցել Իտալիայում, Ֆրանսիայում և Հոլանդիայում: Այդ հանդամանքը Ա. Սարուխանը բացատրել է անգլիական առևտրային նավազնացությունը հոլանդականի համեմատությամբ ավելի ուշ հիմնադրվելու փաստով<sup>1</sup>:

Անգլո-թուրքական առևտրային պայմանագիրը հիմք է ծառայել Հայ-անգլիական կապերի մասնակի վերականգնման և հետագա ընդլայնման համար: Անգլիացի ճանապարհորդներն ավելի հաճախ են սկսել Հայտնվել ասիական երկրներում, ինչպես նաև՝ Հայաստանում: 1581 թ. իր ճանապարհորդական նոթերը գրի առած Նիպերին համարվում է Հայաստան այցելած առաջին անգլիացի ճանապարհորդը:

Լոնդոնում 1611 թ. լույս է տեսել Ջոն Քարթրայդի ուղեգրությունը<sup>2</sup>. «Քարտգրչների ճամփորդությունները դեպի Արևելյան Հնդկաստանի սահմանները, Սիրիա, Միջագետք, Հայաստան, Մեդիա, Հիբրանիա եւ Պարթևստան մեծ երկրներով, որտեղ գրի է առնվել այս ճշմարիտ օրագիրը»: Քարթրայդի օրագիրը Հայաստանի մասին Անգլիայում լույս տեսած առաջին տպագիր գիրքն է: Իր ուղեգրության մեջ հեղինակը, խոսելով 1600 թ. Արևելք կատարած ճանապարհորդության մասին, նշել է, թե, Հայաստան հասնելով, նկատել է, որ «երկրի գյուղերի մեծամասնությունը բնակեցված էին բացարձակապես հայերով ... մի ժողովուրդ, որը շատ աշխատասեր է աշխատանքի բոլոր ոլորտներում»<sup>3</sup>: Ջոն Քարթրայդի աշխատությունը կարևոր նշանակություն ունի նաև այն առումով, որ պատկերում է Հայ ժողովրդի կենցաղը XVII դ. սկզբին: Այստեղ հեղինակը տալիս է Վան, Էջմիածին և հայկական առևտրական քաղաք Զուղայի նկարագրությունը, որը, ցավոք, մի քանի տարի անց պիտի ամայանալու ավերվեր բնակչության բռնադաշտի հետևանքով:

<sup>1</sup> Սարուխան Ա., Հոլանդիան եւ հայերը ԺՁ-ԺԹ դարերում, Վիեննա, 1926, էջ 39:

<sup>2</sup> Cartwright John, The Preachers travels to the confines of the East Indies, through Syria, Mesopotamia, Armenia, Media, Hircania and Parthia, etc.; a relation of sir Ant. Sherley's Entertainment in the court of the king of Persia; description of the Persian Gulf commodious for the East-India merchant of England. London, 1611, pp. in.-4.

<sup>3</sup> "Massis", London, vol. N° 5, March, 1930, p. 103.

XVII դարի սկզբին Հայ-անգլիական կապերը սկսել են զարգանալ Հոլանդիայի, Պարսկաստանի, Հնդկաստանի Հայ գաղթօջախների միջոցով: Հնդկաստանի Հայ գաղթօջախի պատմության մասին արժեքավոր ուսումնասիրության հեղինակ Մ. Սեթը վկայել է, որ անգլիացիները Հնդկաստանի գաղութացման սկզբնական շրջանում գիտակցել են տեղացի Հայերի հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու անհրաժեշտությունը և բավական երկար ժամանակ վարել են հայամետ քաղաքականություն<sup>1</sup>: Այն իր անմիջական արտացոլումն է գտել XVII—XVIII դդ. Հայ-անգլիական կապերի զարգացման գործում:

Պարսկաստանի և հատկապես Նոր Զուղայի Հայ վաճառականները, XVII դ. սկզբին ստանալով շահի հովանավորությունը, առևտրական մեծ գործունեություն են ծավալել եվրոպական երկրների հետ: Առևտուրն իրականացվել է ոչ միայն պարսկական, այլև եվրոպական ապրանքներով: Այսպես օրինակ, Հայ վաճառական Բաբա Նաչատուրը 1647 թ. Անգլիա է բերել մի շարք ապրանքներ, այդ թվում՝ վենետիկյան ապակեղենն ու Հայելիներ<sup>2</sup>:

Ամստերդամի Հայ գաղթօջախն իր վերջնական ձևավորումն է ստացել 1660 թ.: Սակայն որոշ տվյալների համաձայն, ավելի վաղ ոսկերչությունը զբաղվող Հայերի մի փոքրաթիվ խումբ Ամստերդամից գաղթել է Անգլիա և հաստատվել Պլիմուտ քաղաքում: Նրանք բնակվել են առանձին թաղամասում, որտեղ հիմնել են Հայերեն արձանագրության մի աղբյուր: Ավանդույթի համաձայն, Անգլիական բուրժուական հեղափոխության ընթացքում Օլիվեր Կրոմվելը, անցնելով հայկական թաղամասով, հետաքրքրվել է, թե ում են պաշտպանում Հայերը: Որպես պատասխան լսելով Աստվածաչնչից մի հմաստալից արտահայտություն՝ դժգոհել է և պահանջել, որ վերադարձին առավել ստույգ պատասխան տան: Հայերը, խուսափելով թե՛ Կրոմվելի և թե՛ ռոյալիստների զայրույթից, շուտափույթ լքել են Անգլիան և վերադարձել Հոլանդիա<sup>3</sup>:

Արևելահնդկական ընկերության ակտիվ առևտուրը Հնդկաստանի և Պարսկաստանի հետ սկսվել է XVII դարի կեսից: 1664 թ. Հնդկաստանի Միլապուր քաղաքի Հայ կառավարիչ Մարկ Երիզադը նվերներ ու նամակ է ուղարկել Կառլոս Բ թագավորին (1660—1685

<sup>1</sup> Seth M. Y., Armenians in India, Calcutta, 1937, pp. 228—229.

<sup>2</sup> Ալաօյաճեան Ա., նշվ. աշխ., մաս Ա, էջ 175:

<sup>3</sup> Աբրահամյան Ա. Գ., նշվ. աշխ., հ. 2, էջ 181:

թիւ), որում խնդրել է իրեն մի նալ նվիրել, որպեսզի կարողանա թա-  
ղաւորի համար պերճանքի արևելյան առարկաներ գնել: 1667 թ.  
դեկտեմբերին Արևելահնդկական ընկերութեան տնօրենների խոր-  
հուրդը հայ վաճառական խոջա Կիրակոսին թույլ է տվել ընկերութե-  
ան նալով շահի անձնական օգտագործման համար հոլանդական  
ապրանքներ տեղափոխել: Բացի այդ, տնօրենների խորհուրդը հիշ-  
յալ խոջայի գործունեութեան կարևորութունը մատնանշող մի նա-  
մակ է ուղարկել Սուրաթի իր վարչութեանն ու նախագահին<sup>1</sup>:

Հայ վաճառականների ակտիվ մասնակցութունը Պարսկաստա-  
նի և Հնդկաստանի առևտրին անդլիացիներին հանգեցրել է այն եզ-  
րակացութեան, որ անհրաժեշտ է ուսումնասիրել հայ առևտրական-  
ների գործունեութեան մեթոդները: 1669 թ. Ե. Կաստելուսը Լոնդո-  
նում հրատարակել է մի բառարան, որը ներառել է բազմաթիվ հայե-  
րեն բառեր: Այդ շրջանում աճել է նաև հայ գաղթօջախների քաղա-  
քական նշանակութունը: Սա կապված էր Արևելահնդկական ընկե-  
րութեան և Եթովպիայի միջև դիվանագիտական հարաբերութուննե-  
րի հաստատման փաստի հետ, այն բանից հետո, երբ Եթովպիայի հա-  
յազգի դեսպան Մուրադը պայմանագիր կնքելու նպատակով 1673 թ.  
եկել էր Բաթավիա<sup>2</sup>:

Մեծ հետաքրքրութուն է ներկայացնում Հակոբ Գրիգորենցի  
«Գովք Պրիթանիո» ստեղծագործութունը, որտեղ հեղինակը նկա-  
րագրել է 1674 թ. Անգլիա կատարած իր ճամփորդութունը: Հիաց-  
մունք արտահայտելով այդ երկրի նկատմամբ՝ նա անդրադարձել է  
անգլիացիների կյանքի զանազան կողմերին: Այդ աշխատութունը  
Անգլիայի մասին հայոց լեզվով գրված առաջին գործն է:

Անգլիացիները XVII դարի վերջին ձգտում էին ամբողջութեամբ  
տիրապետել հնդկական շուկային, ուստի անհրաժեշտ էր սահմանա-  
փակել հայ վաճառականների գործունեութունը և նրանց ներգրա-  
վել Արևելահնդկական ընկերութեան հովանու ներքո: «Ընկերութե-  
ան» և հայ վաճառականների միջև պայմանագիր կնքելու նպատա-  
կով Փ. Քալանթարը և նրա բարեկամ Ի. Սարհադը 1688 թ. եկել են  
Լոնդոն: Նույն թվականի հունիսին կնքվել է պայմանագիր կամ  
խարտիա, որում նշված էր, որ «...նրանք (անգլիացիները), ելնելով  
հայ ժողովրդի շահերից, ներկայացրին (Փ. Քալանթարին) մի շարք

<sup>1</sup> Seth M. Y., Ըշվ. աշխ., 1937, էջ 246:

<sup>2</sup> Կյոպպենհայն Ռ., Ըշվ. աշխ., էջ 46:

մանրամասներ, որպեսզի հայկական առեւտրի մեծագույն մասը, որն ուղղվում էր դեպի Հնդկաստան, Պարսկաստան եւ այնտեղից Եւրոպա, կատարվի Անգլիայի միջոցով, ինչը կնպաստի Զերդ Գերազանցության մաքսատուրքերի գանձմանը եւ անգլիական ծովագնացության աճին»<sup>1</sup>:

Խարտիան կազմված էր մի շարք կետերից, որտեղ մասնավորապես նշվում էր, որ «...հայերն այսուհետ եւ բոլոր ժամանակներում պետք է ունենան հավասար շահ այս ընկերության ներկայիս եւ ապագայում շնորհվելիք բոլոր արտոնություններից, որոնցից օգրտվում են ընկերության բոլոր անգլիացի վաճառականները»<sup>2</sup>: Բացի այդ, ընկերության տնօրենների խորհուրդը 1692–1693 թթ. սկսել է կազմակերպել հայ վաճառականների փորձի ուսումնասիրություն և հանձնարարել իր՝ Պարսկաստանի գործակալին գտնել մի քանի անգլիացի երիտասարդներ, որոնք կսովորեն պարսկերեն ու հայերեն և այդ երկրում կգրադվեն առևտրային գործունեությամբ:

Նշված ժամանակաշրջանում զարգացում են ապրել նաև հայանգլիական մշակութային կապերը: Թովմաս Վանանդեցին, որը XVII դարի վերջին վերականգնել էր Ամստերդամի հայկական տպարանը, Ղուկաս Նուրիջանյանի հետ 1707 թ. եկել է Լոնդոն: Նույն թվականի մարտի 26-ին նրանց ներկայացրել են Անգլիայի թագուհի Աննա Սթյուարտին: Յորքի արքեպիսկոպոս Զոն Շարփի հանձնարարականով Թովմաս Վանանդեցուն շնորհվել է աստվածաբանության դոկտորի պատվավոր կոչում: Այդ կապակցութամբ վերջինս Ամստերդամում տպագրված գրքերի մի ողջ ժողովածու է նվիրել Օքսֆորդի համալսարանի Բոդլեան գրադարանին<sup>3</sup>:

Հնդկաստանի հարուստ հայ ընտանիքները XVIII դարի սկզբից սկսել են հրավիրել անգլիացիներին որպես տնային ուսուցիչներ: Անգլիացի Գուլելմոս Վիստոնի (Ադափիրյանների տան ուսուցիչը Մադրասում) որդիները՝ Ուիլյամը և Զորջը, բավական լավ տիրապետելով հայոց լեզվին, գրաբարից լատիներեն են թարգմանել Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», որն Անանիա Շիրակացու «Աշխարհացույցի» և մի շարք այլ սկզբնաղբյուրների հետ միասին 1736 թ. հրատարակվել է Լոնդոնում:

<sup>1</sup> Seth M. Y., History of the Armenians in India, Calcutta, 1895, p. 49.

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Nersessian V., Early Armenian Printing (1512–1800), London, 1980, p. 3.

Անգլիացիների գիտատեխնիկական զարգացումը մեծ հետաքրքրություն է առաջացրել Հնդկահայերի շրջանում: Ահա ինչ է գրել այդ մասին Հայ ժողովրդի ազատագրական շարժման ճանաչված դեմքերից մեկը՝ Լուվսնի Էմինը, որը հետևյալ կերպ էր բացատրել իր՝ Լոնդոն դալու փաստը. «Ես տեսա եւրոպացիների ամրոցը, զինվորների զորավարժությունները եւ առևտրական նավատորմը, ինչպես նաեւ այն, թե որքան ճարպիկ ու անբասիր են նրանք բոլոր գործերում ... Ես պետք է մեկնեմ Եւրոպա, որպեսզի սովորեմ ռազմական արվեստը եւ այլ գիտություններ, որոնք նպաստում են այդ արվեստին: Համոզված եմ, որ եթե Հայաստան դամ որպես եւրոպական սպա, ի վիճակի կլինեմ թեկուզ եւ փոքր չափով օգտակար լինել իմ երկրին»<sup>1</sup>:

Հ. Էմինը (1726–1809 թթ.) իր ընկերոջ՝ Լարություն Մասսեհի հետ Լոնդոն է եկել 1751 թ.<sup>2</sup>: Այստեղ 18 ամիս մասնավոր դպրոց հաճախելուց հետո՝ 1753–1755 թթ., Լոնդոնի Սենթ Ջեյմս Փարքում հետևել է նաև անգլիական ռազմական դասընթացներին:

Կոմս Հյու Սմիթսոնի հետ պատահական ծանոթությունից հետո նա բազմաթիվ բարեկամներ է ձեռք բերել Լոնդոնի բարձրաշխարհիկ հասարակության մեջ: Մասնավորապես դուքս Կամբուլենդը օգնել է նրան ընդունվել Վուլվիչի Արքայական զինվորական ուսումնարան: Յոթնամյա պատերազմին մասնակցելուց հետո նա վերադարձել է Լոնդոն XVIII դ. 50-ական թվականներին և, մեկնելով Հայաստան, վերադարձել է միայն 1761 թ.: Ապա մեկնել է Ռուսաստան՝ ընդմիջտ լքելով Անգլիան: Նույն դարի 80-ականներին իր մտերիմ բարեկամ սրբ Ու. Ջոնսի պնդմամբ Էմինը գրի է առել իր հուշերը, որոնք լույս են տեսել Լոնդոնում 1792 թ.:

Հնդկահայ վաճառականների դրուժյունը վատթարացել է Յոթնամյա պատերազմում Մեծ Բրիտանիայի տարած հաղթանակի հետևանքով: Արևելահնդկական Ընկերությունն այլևս չի ջանկացել նրանց հետ գործակցել: Աղգեցիկ հայ վաճառականներն առաջինս են նվազեցրել 1768 թ. սկիզբ առած հալածանքներին: Նրանցից երկուսը՝ Նոր Ջուղայի առևտրական տների ներկայացուցիչներ, Հովհաննես Ռաֆայելը և Գրիգոր Խոջամալ Խալաթրյանը, եկել են Լոն-

<sup>1</sup> Emin Joseph, Life and Adventures of Joseph Emin. 1726–1809, Calcutta, 1918, vol. 1, pp. 58–59.

<sup>2</sup> Иоаннисян А. П., Иосиф Эмин. Ереван, 1945, с. 15.

դոն և 1769 թ. բողոք ներկայացրել Ընկերության տնօրենների խորհրդին, սակայն՝ ապարդյուն<sup>1</sup>:

Այդ վաճառականները Լոնդոնում մնացել են բավական երկար ժամանակ: Մասնավորապես Գ. Խալդարյանը ապրել է Լոնդոնում շուրջ 10 տարի, որտեղ ոչ միայն իր Ֆինանսական գործերով է զբաղվել, այլև հիմնել է հայկական տպարան: Իր մտադրությունն իրականացնելու գլխավոր բարդությունը մայրատուների պատրաստումն էր: Երկարատև և ապարդյուն որոնումներից հետո վերջապես 1780 թ. անգլիացի մի արհեստավորի օգնությամբ նրան հաջողվել է հայերեն տառատեսակներ պատրաստել: Նույն թվականին տպագրվել է առաջին գիրքը, որը Վիստոն եղբայրների հրատարակությունից հետո Լոնդոնում տպագրված երկրորդ հայերեն գիրքն էր:

Այդ գրքում տեղ են գտել Ներսես Շնորհալու «Հավատով խոստովանիմ» ստեղծագործության հայերեն, լատիներեն, ֆրանսերեն և անգլերեն տարբերակները<sup>2</sup>: Սակայն Անգլիայում հայերենով լույս տեսած գրքերի սլահանջարկի բացակայության պայմաններում 1781 թ. Խալդարյանը տեղափոխվել է Ս. Պետերբուրգ, որտեղ և շարունակել է գրատպության գործը:

Հայ-անգլիական կապերի նոր շրջանը, որն աչքի է ընկել Հնդկահայերի և անգլիացիների միջև գիտական ու մշակութային կապերի բուռն զարգացմամբ, սկսվել է XVIII դ. վերջին տասնամյակներին: Դա կապված էր այն հանգամանքի հետ, որ հայերի մի զգալի մասն ակտիվ գործունեություն է ծավալել բժշկության և իրավագիտության ասպարեզում: Դարավերջին հայերը Հնդկաստանում հիմնել են առաջին անգլիական դպրոցը, իսկ XIX դարի կեսերին դրանց թիվը հասել է հինգի:

Նշված ժամանակաշրջանում կրթություն ստանալու նպատակով Անգլիա են ժամանել առաջին հայերը: XVIII դ. 80-ական թթ. Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի հիմնադիրներից է Ռ. Քարամյանն իր երկու որդիներին ուղարկել է Լոնդոն ուսանելու: Նրա ավագ որդին Ալեքսանդր Ռաֆայելյանը, հաստատվելով Անգլիայում, 1829 թ. նշանակվել է Լոնդոն քաղաքի շերիֆ, այսինքն՝ կառավարության գլխավոր ներկայացուցիչներից էր: Նա նաև առաջին հայն էր, որն ընտրվել է Անգլիայի խորհրդարանի համայնքների

<sup>1</sup> Seth M. Y., Գշվ. աշխ., 1895, էջ 89:

<sup>2</sup> Nersessian V., Գշվ. աշխ., էջ 4:

պալատի անդամ: Ա. Ռաֆայելյանը սերտ կապեր է ունեցել Վենետիկի Միլիթարյանների հետ և առանձնապես օգնել է նրանց հրատարակչական գործունեության ասպարեզում<sup>1</sup>:

Հայ մտավորականության ի հայտ գալը հանգեցրել է Հայ-անգլիական գրական առնչությունների հաստատմանը, մանավանդ, երբ XVIII դ. վերջերին Հայ ազատագրական շարժումը սկսել է նոր վերելք ապրել: Վ. Փարթամյանը, որն անդրադարձել է Հայ-անգլիական գրական կապերին, նշել է, որ Հայ պարբերական մամուլի անդրանիվ ամսագիր «Ազդարարը», որը լույս էր տեսնում Մադրասում 1794—1796 թթ., մեծավ մասամբ կազմված էր անգլիական ամսագրերից արտատպումներով<sup>2</sup>:

Անգլերենից հայերեն առաջին գրական թարգմանությունը կատարվել է Մադրասում 1783 թ.: Այստեղ լույս է տեսել Հանուեյ Անգլիացու «Պատմութիւն վարուցն և գործոց Նադիր շահ թագաւորին պարսից» ստեղծագործության հայերեն թարգմանությունը Պողոս Միրզայան Ամիրացու աշխատասիրությունը:

Հովհաննես Ավզալյանն իր գրական գործունեության համար ընտրվել է «Բենգալիայի Ասիական ընկերության» անդամ այդ ընկերության ստեղծման իսկ օրից, որի միջոցով անգլիացիները նորանոր տեղեկություններ են ստացել հայերի ու Հայաստանի մասին: Դրա վառ ապացույցն է 1774 թ. Լոնդոնում լույս տեսած «Նոր աշխարհագրական, պատմական և առեւտրային ներածություն և մի շարք թագավորությունների ժամանակակից վիճակը» վերնագրով աշխատությունը, ուր հանգամանալից անդրադարձ կա թուրքիայում բնակվող քրիստոնյաների անտանելի դրության մասին<sup>3</sup>:

Ինչպես տեսանք, Հայ-անգլիական կապերն ունեն դարավոր արմատներ: Սակայն հայկական գաղութի ձևավորումը տեղի է ունեցել շատ ավելի ուշ` XIX դարի 30-ական թվականների կեսերից, երբ Պոլսից, Զմյուռնիայից և այլ վայրերից հայ վաճառականներ են բնակություն հաստատել Լոնդոնում, Լիվերպոլում, Մանչեստրում: XIX դարի կեսին այդ համայնքները բաղկացած էին մի քանի տաս-

<sup>1</sup> Basil A., Armenian Settlements in India, West Bengal, 1969, p. 50.

<sup>2</sup> Փարթամեան Վ. Հ., Հայ-անգլիական գրական առնչություններ, Սրբեան, 1975, էջ 36:

<sup>3</sup> Tonapetian P., Turkey and Her British Friends, London, 1919, p. 2.

նյակ հայերից, որոնց հիմնական մասը (չուրջ 30 հոգի) բնակվել է Լիվերպուլում և Մանչեստրում<sup>1</sup>:

Համայնքի աստիճանաբար ստվարացմանը զուգընթաց առաջ է եկել նաև այն կանոնակարգելու անհրաժեշտություն: 1866 թ. սեպտեմբերի 6-ին Մանչեստրի հայ համայնքն իր ազգային և եկեղեցական կյանքի կարգավորման համար գումարել է ընդհանուր ժողով և ընտրել համայնքային խորհուրդ, ապա նաև՝ համայնքի Կանոնադրություն, որի համաձայն մանչեստրահայերը լիակատար իրավունք են ունեցել ընտրելու իրենց քահանային<sup>2</sup>: 1870 թ. քաղաքի հայ համայնքի միջոցներով Սպեր Բրուկ փողոցի վրա, քիչ հեռու այն վայրից, որտեղ հիմնականում ապրում էին հայերը, կառուցվել է Սուրբ Երրորդություն եկեղեցին<sup>3</sup>: 1876 թ. ընդունվել է համայնքի ներքին կանոնների նոր ժողովածու՝ «Կանոնագիր», որտեղ ավելի հստակեցվել է համայնքի պաշտոնատար անձանց գործունեության ոլորտը, սահմանվել են նրանց իրավասությունները<sup>4</sup>:

1877 թ. Մանչեստրում ապրում էին 80–90 հայեր, որոնց մեծ մասը եկել էին Օսմանյան կայսրությունից (Կ. Պոլիս, Ջմյուռնիա) և աննշան չափով Ռուսական կայսրությունից (Թիֆլիս)<sup>5</sup>:

1870-ական թվականների կեսերին ձևավորվել է նաև լոնդոնահայ համայնքը: Հայերն այնտեղ առևտրական գրասենյակներ ունեին: Բացի արևմտահայերից, Լոնդոնում հաստատվել են նաև որոշ թվով հնդկահայեր՝ առևտրով զբաղվելու, մասամբ նաև անդլիական համալսարաններում ու Լոնդոնի դպրոցներում իրենց երեսխաների ուսումնառությունը կազմակերպելու նպատակով<sup>6</sup>:

XIX դարի 90-ական թվականներին Մանչեստրի հայերի առևտրում որոշ փոփոխություններ են կատարվել: Մինչ այդ Անգլիայում հայկական ֆիրմաները զբաղված էին առավելապես չթի առևտրով, որն աստիճանաբար կորցրել էր իր առաջատար նշանակությունը: Միևնույն ժամանակ հայերը հուլյաների հետ միասին շարունակել են առաջատար դիրք զբաղեցնել Անգլիայի և Օսմանյան կայսրութ-

<sup>1</sup> Մ[ոմբեն] Յ., Թուրքահայոց հին վաճառականութիւնն և վաճառականք. 1740–1890, Կ. Պոլիս, 1908, էջ 47–50:

<sup>2</sup> Մուշեղ եպիսկոպոս, Մանչեստրի հայ գաղութը, Պոստոն, 1911, էջ 178:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 232:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 181:

<sup>5</sup> «Արարատ», Էջմիածին, Դեկտեմբեր, 1877, էջ 465:

<sup>6</sup> Նույն տեղում, Դեկտեմբեր, 1875, էջ 369:

միջև տեղի ունեցող առևտրում: Կոստանդնուպոլսում անգլիական փոխհյուպատոսի՝ 1893–1897 թթ. հաշվետվության մեջ նշված էր, որ անգլիական ապրանքների ներմուծումը Օսմանյան կայսրություն լիովին գտնվել է հայերի և հույների, իսկ բամբակյա ապրանքների՝ միայն հայերի ձեռքում<sup>1</sup>: XIX դարի վերջերից ընդհուպ մինչև XX դարի 20-ական թթ. Մանչեստրի հայկական առևտրական տները հիմնականում զբաղվում էին թեթև արդյունաբերական ապրանքների առևտրով, իսկ Լոնդոնի հայերի գործունեության գլխավոր ոլորտը հայկական գորգերի արտադրությունն ու վաճառքն էր:

XIX դարի 90-ական թթ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայերի զանգվածային շարժերը պատճառ են դարձել Անգլիայում հայերի թվաքանակի ստվարացմանը: Որոշ տվյալներով 1896 թ. Լոնդոնում հաստատված հայերի թիվը հասնում էր 500-ի: 1899 թ. նրանք հիմնականում բանվորներ և ուսանողներ էին: Արդյունքում 1898 թ. ստեղծվել է «Լոնդոնի հայ բանվորների և ուսանողների միությունը»: Մանչեստրի հայերի ընդհանուր ժողովը 1901 թ. ընդունել է տեղի հայկական Սբ. Երրորդություն եկեղեցու Կանոնադրությունը, որտեղ հատկապես շեշտվել է հոգևոր և պաշտոնատար անձանց ընտրելու գործում տեղի հայ համայնքի անկախ վիճակը<sup>2</sup>:

Թեև Լոնդոնահայերի համայնքային առաջին կազմակերպությունը ստեղծվել էր դեռևս 1898 թ., իսկ դրանից շատ առաջ դործել են նաև համայնքի մշակութային կենտրոններ, սակայն այն ավարտուն ձևավորում է ստացել 1912 թ., երբ տեղի է ունեցել «Լոնդոնի միացյալ հայ ընկերակցություն» վերակազմավորումը:

1918 թ. ամռանը Անգլիայում բնակվող հայերի թիվը կրկին աճել է Բաքվից գաղթած 900 հայ փախստականների հաշվին: Լոսդերի պալատի որոշմամբ նրանց տրվել են թուրքահայաստակ հայերին վերապահված նույնպիսի իրավունքներ, այդ թվում նաև՝ Մեծ Բրիտանիայի ցանկացած շրջանում բնակվելու հավաստադրեր: Նույն թվականին Կ. Թումայանի նախաձեռնությամբ Լոնդոնի առևտրական պալատին առընթեր հիմնվել է «Անգլո-հայկական տնտեսական ընկերակցությունը»<sup>3</sup>: Սրան հաջորդել է 1920 թ. ապրիլին բրիտանա-

<sup>1</sup> «Նոր Կեսնք», Լոնդոն, N 14, 15 Յունիս, 1899, էջ 218:

<sup>2</sup> Մուշեղ եպիսկոպոս, Գշվ. աշխ., էջ 186:

<sup>3</sup> "Ararat", London. vol. VI, N 63, January-February, 1919, p. 309.

Հայկական առևտրական պալատի ստեղծումը, որը պետք է նպաստեր բրիտանա-հայկական տնտեսական կապերի զարգացմանը:

*XIX դարի 60-ական թթ. Մանչեստրում Հայ գաղութի կազմավորմանը զուգընթաց աշխուժացել է նաև մշակութային և կրոնական կյանքը: 1875 թ. Մանչեստրի Հայերի ընդհանուր ժողովի որոշմամբ քաղաքում բացվել է ընթերցարան<sup>1</sup>: 1894 թ. ընթերցարան են բացել նաև լոնդոնահայերը:*

*1895 թ. մշտական բնակության համար Լոնդոն է տեղափոխվել նաև Բաֆֆու ընտանիքը՝ Աննա Բաֆֆին երկու որդիների՝ Արամի (1876–1919) և Արշակի (1879–1946) հետ:*

*Հնչակյան կուսակցության կենտրոնը Լոնդոն փոխադրվելուն զուգընթաց, կուսակցության մի շարք անդամներ մասնակից են դարձել նաև քաղաքի հայության ազգային կյանքին: Միաժամանակ, 1898 թվականից սկսած, անգլիահայոց, մասնավորապես Լոնդոնի հայերի կյանքում սկսել է նշանակալից դեր խաղալ «Նոր կեանք» հանդեսը, որը խմբագրել են Լ. Բաշալյանն ու Արփ. Արփիարյանը:*

*XX դ. սկզբներին «Հայ բանվորների և ուսանողների միությունը» և հայոց ընթերցարանը միավորվելով՝ իրենց գոյությունը շարունակել են «Միացյալ ընկերություն» անունով<sup>2</sup>:*

*1909 թ. Մանչեստրում հիմնադրվել է «Առաջադիմական միություն» ընկերությունը, որի շնորհիվ քաղաքի հայ գաղութը վերջապես կարողացել է ընտրել տեղի եկեղեցու հոգաբարձուների նոր խորհուրդ: Արդյունաբերող Մ. Բակրջյանի ղեկավարությամբ տեղի հայ երիտասարդները 1911 թ. ստեղծել են «Երիտասարդ Հայերի ակումբ» ազգային լուսավորական ընկերությունը, որը հետագայում վերանվանվել է «Երիտասարդ Հայերի ընկերակցություն»<sup>3</sup>:*

*Օսմանահպատակ Հայերը Անգլիայում 1915 թ. ստացել են քաղաքացիական ազատության իրավունք: Մանչեստրում և Լոնդոնում ստեղծվել են ներկայացուցիչների Հայկական կոմիտեներ, որոնց իրավունք է վերապահվել դիմող Հայերին տալ ազգային պատկանելության հավաստագրեր<sup>4</sup>:*

*1916–1918 թթ. Անգլիայում վերջնական ձևավորում է ստացել նաև Սաուպորտի Հայկական Համայնքը (Մանչեստրի մոտ): Տակա-*

<sup>1</sup> Մուշեղ եպիսկոպոս, Գշվ. աշխ., էջ 57:

<sup>2</sup> «Պատանի», Լոնդոն, 1902, N 3, Մարտ, էջ 43:

<sup>3</sup> "Massis", London, vol. III, N 4, February, 1931, p. 83.

<sup>4</sup> "Ararat", London, vol. II, N 19, 1915, p. 237.

վին 1917 թ. այդտեղ բացվել է Մանչեստրի «Հայ տիկնանց ընկերակցութեան» Սառուպորտի բաժանմունքը, իսկ Հաջորդ տարի Հիմնվել է «Սառուպորտի Հայ աղջիկների ընկերակցութունը», որը բարեգործութեան հետ միասին զբաղվել է նաև տեղի համայնքի մշակութային կյանքի խնդիրներով:

1918 թ. կազմակերպված բնույթ է ստացել նաև գաղութի եկեղեցական կյանքը: Հայ առաքելական եկեղեցու ժամասացութունը կատարվել է Սառուպորտի անգլիկան եկեղեցում: Առաջին աշխարհամարտից հետո, երբ Հայերի նշանակալի մասը հեռացել էր Մանչեստրից, 1920-ական թթ. Սառուպորտի Հայ գաղութը շարունակել է գոյատևել: Լոնդոնի անգլիալեզու «Մասիս» թերթի տվյալներով 1931 թ. Մանչեստրում և Սառուպորտում ապրում էին շուրջ 1000 հայեր: Իսկ Լոնդոնի հայերի թիվն այդ ժամանակ հասել էր 300-ի<sup>1</sup>:

Ինչպես Հայկական մյուս գաղթօջախները, Անգլիայի Հայերը ևս մշտական կապ են պահպանել Հայրենիքի հետ ու ամեն կերպ ջանացել են օգնել իրենց արևմտահայ Հայրենակիցներին: 1874 թ. Վանի ու Մուշի շրջաններում բռնկված սովի պատճառով Կ. Պոլսի Հայոց պատրիարքն ու համապատասխան հանձնաժողովը դիմել են Մանչեստրի Հայ համայնքին՝ սովյալներին օգնութուն ցույց տալու խնդրանքով: Բաղաքի Հայերը հիմնել են «Սովելոց հանձնաժողով», որը շուտով իր բաժանմունքն է բացել Լոնդոնում, ինչպես նաև՝ անգլիացիներին ուղղված կոչով խնդրել օգնել Հայ սովյալներին<sup>2</sup>: 1874—1875 թթ. ձմռանը հանձնաժողովը Կ. Պոլսի Հայոց պատրիարքին է ուղարկել 1.000 անգլիական ոսկի: 1880 թ. Մանչեստրի հայերի ընդհանուր ժողովի որոշմամբ Արևմտյան Հայաստանում բռնկված սովի առիթով հավաքվել է 1800 ֆունտ սթեռլինգ և ուղարկվել սովյալներին:

1894—1896 թթ. Օսմանյան կայսրութունում մոլեզնած հայկական կոտորածների ժամանակ Անգլիայի Հայերն օգնութեան են հասել փախստական դարձած իրենց բազմաթիվ Հայրենակիցներին՝ այրի կանանց և որբ երեխաներին: Մեծ հայրենասեր Կ. Թումայանը 1897 թ. հիմնել է Անգլիայում առաջին հայկական դպրոց-որբանոցը:

Օգնութեան գործը Մանչեստրում ընդունել է համազգային բնույթ և դրա շնորհիվ էլ ավելի շոշափելի արդյունքների հասել:

<sup>1</sup> "Massis", London, vol. III, N 4, February, 1931, p. 83.

<sup>2</sup> Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 56:

1895 թ. Կ. Ա. Զորյանը այդտեղ հիմնել է փախստականներին օգնող ընկերություն, որը գործնականում օգնություն էր ցույց տալիս ոչ միայն հայ, այլև հույն և ասորի փախստականներին, որոնք հարկադրված էին հեռանալ Օսմանյան կայսրությունից<sup>1</sup>: 1897 թ. Մանչեստրի հայերի մի մասն էլ ստեղծել է հայրենիքում գտնվող որբերին օգնող կոմիտե: Նրա անդամներն իրենց վրա էին վերցրել երեք որբանոցների պահպանությունը Այնթապում և Զմյուռնիայում<sup>2</sup>: 1903 թ. Լոնդոնում շարունակել է գործել Հայ փախստականների օգնության ընկերությունը, որի հիմնադիր ու նախագահ Ս. Սահունին Լոնդոն էր եկել Անդրկովկասից բարեգործական ընկերություն հիմնելու նպատակով<sup>3</sup>:

1907 թ. Մանչեստրի հայերի ընդհանուր ժողովում որոշվել է տեղում հիմնել «Հայ բարեգործական ընկերության» բաժանմունք. այն բացվել է հաջորդ տարի: Բաժանմունքի նախագահներ են ընտրվել Ա. Ժամկոչյանը և Մ. Իպլիկչյանը: 1910 թ. «Հայ բարեգործական ընկերության» Մանչեստրի բաժանմունքն արդեն ուներ 112 անդամ և իր վրա էր վերցրել Ադանայի կոտորածից հետո որբացած հայ երեխաների խնամքը<sup>4</sup>:

1908 թվականից սկսած՝ կարիքավոր հայերին օգնություն ցույց տալու գործում նկատելի էր Վ. Չակիրյանի գլխավորած Մանչեստրի «Հայ տիկնանց ընկերակցության» դերը<sup>5</sup>: 1913 թ. նոյեմբերին հիմնվել է «Լոնդոնի Հայ տիկնանց միություն» բարեգործական ընկերությունը, որի նպատակն էր միջոցներ հանգանակել Արևմտյան Հայաստանում ապրող որբերին օգնելու համար<sup>6</sup>:

1915 թ. հունվարին Լոնդոնի «Միացյալ ընկերակցությունը» հիմնել է հայ փախստականների օգնության հիմնադրամ, որն իր հավաքած միջոցները գլխավորապես փոխանցել է էջմիածին՝ Ամենայն հայոց կաթողիկոսի հիմնադրամին:

Երբ Անգլիա են հասել Օսմանյան կայսրությունում իրականացված հայերի ցեղասպանության մասին լուրերը, երկրում առավել ակտիվացել է հայ գաղութի մարդասիրական գործունեությունը:

<sup>1</sup> "Ararat", London, vol. V, N 55, January, 1918, p. 290.

<sup>2</sup> «Արարատ», Էջմիածին, 1898, N 6, էջ 261:

<sup>3</sup> «Մշակ», Թիֆլիս, 1903, N 232:

<sup>4</sup> Մուշեղ նախկոպոս, նշվ. աշխ., էջ 176–177:

<sup>5</sup> "Massis", London, vol. III, N 4, February, 1931, p. 83.

<sup>6</sup> "Ararat", London, vol. I, N 10, April, 1914, p. 335.

Լոնդոնի Համայնքի «Փախստականների օգնութեան Հայկական Հիմնադրամը» արդեն 1915 թ. նոյեմբերին Հավաքել էր 10.000 Ֆունտ սթեռլինգ: Այդ օրերին «Լոնդոնի Հայ տիկնանց միութիւնը» Կարմիր խաչի բրիտանական Հիմնադրամին էր Հանձնել Հավաքված տաք Հագուստը՝ Հերոսական ինքնապաշտպանութիւնից Հետո Պրոտ Սաիդ անցած մուսալեռացիներին Հասցնելու նպատակով:

1916 թ. Անգլիայում բացվել է «Որբերի Հատուկ Հիմնադրամ»: Դրան նպաստել է «Մշակի» խմբագիր Ա. Առաքելյանի՝ Անգլիայի Հայերին ուղղված նամակը: Այդ Հիմնադրամի դրամագլուխը Հասել է 78.800 Ֆունտ սթեռլինգի:

Լոնդոնի Հայ եկեղեցական խորհուրդը և «Միացյալ ընկերակցութեան» գլխավոր խորհուրդը որոշել են ստեղծել Հատուկ Հիմնադրամ, որի միջոցների մեծ մասը տրամադրվելու էր սիրիական անպատներում, Միջագետքում և Իրանում ապաստանած Հայ որբերին: Նոր Հիմնադրամը կոչվել է «Հայ ընդհանուր Հիմնադրամ»: 1918 թ. վերջին նրա տրամադրութեան տակ գտնվող 5000 Ֆունտ սթեռլինգը 80 Հայերի նվիրատուութիւնն էր:

Անգլիայի Հայոց քաղաքական գործունեութիւնը սկսվել է XIX դարի 60-ական թթ. կեսերից՝ Մանչեստրի Հայ գաղութի վերջնական ձևավորումից Հետո: Ըստ Կանոնագրի, այդ գաղութի ղեկավար մարմինը Ընդհանուր ժողովն էր, որը զբաղվում էր նաև արտաքին Հարցերով: 1874 թ. Լոնդոնում մշտական բնակութիւն է Հաստատել բողոքական քարոզիչ Կարապետ Հակոբյանը<sup>1</sup>, որը դարձել է Հայկական Հայրենասիրական շարժման առաջատար գործիչներից մեկը Անգլիայում և մինչև XX դարի սկիզբը անմիջական մասնակցութիւն է ունեցել այդ երկրում Հայկական Հարցի ձևավորման ու զարգացման բոլոր իրադարձութիւններին:

Լոնդոնում ճանաչված Հայրենասեր գործիչ էր Ա. Սեթ Աբգարը, որն իր Հաճախակի հրապարակումների միջոցով ջանացել է անգլիացիներին ծանոթացնել Հայ ժողովրդի պատմութեանն ու մշակույթին և Համակրանք սերմանել Հայերի նկատմամբ: Այդ նպատակը Հնարավորինս իրագործելու Համար նա մտադրվել էր հրատարակչատուն բացել: 1876 թ. նոյեմբերի 21-ին Մանչեստրի Հայ Համայնքի ժողովը որոշել է նշված գործի իրականացման Համար կազմակերպել միջոցների Հանգանակութիւն: Դեռևս 1875 թ. Ա. Սեթի Հայրենասիր-

<sup>1</sup> «Արարատ», Էջմիածին, 1875, դեկտեմբեր, էջ 470:

րական գործունեությունը դրավել է «Արարատ» հանդեսի ուշադրությունը: Լոնդոնում հայրենասիրական շարժման կազմակերպիչն ու ոգեշնչողը Զմյուռնիայից եկած Գ. Փափազյանն էր, որի աջակիցներից էր Զեյմա Բրայսը: Գ. Փափազյանն էր իրագործում Անգլիայի հայերի հետ կապը: Պատմաբան Ա. Պեյլերյանը Զ. Բրայսի մահվան 67-ամյակի առթիվ Անգլիայում երեք նշանավոր հայ գործիչների մասին գրել է, որ Զմյուռնիայի հայերից Գարեգին Փափազյանը, հնդկահայերից Սեթ Աբգարը՝ երկուսն էլ առևտրականներ, իսկ Կոստանդնուպոլսի հայերից՝ բողոքական քարոզիչ Կարապետ Հակոբյանը սկզբից եթե նշանակալի դեր են խաղացել Հայկական հարցի միջազգային ճանաչման գործում<sup>1</sup>:

1877 թ. հայ հայրենասեր մի շարք գործիչներ (Ա. Սեթ Աբգարը, Գ. Ս. Պարոնյանը, Պ. Գ. Սորգուկը և այլք) միավորվել են հասարակական-քաղաքական մի կազմակերպություն մեջ, որը ստացել է «Արևելյան հարցի ընկերություն» անվանումը:

Ընդհանրապես անգլիահայ գաղութի հասարակական-քաղաքական գործունեությունն անհնար է առանձնացնել գաղութի ներքին՝ հայապահպանման համար մղվող ազգային-գաղափարական և մշակութային բազմաշերտ գործունեությունից: Այդ առումով մեծ նշանակություն են ձեռք բերում գաղութի տարբեր շրջաններում իրականացված հրատարակությունները:

Անգլիահայություն առաջին պարբերականը «Երկրագունդն» էր, որը հրատարակվել է Մանչեստրում Կարապետ Շահնազարյանի խմբագրությամբ և 1863–1864 թթ. քննարկել է առավելապես տնտեսական, ներգաղութային և քաղաքական խնդիրներ:

Հետագա տարիների ընթացքում անգլիահայերն ունեցել են շուրջ երկու տասնյակ բազմալեզու պարբերականներ: Դրանց մեծ մասը հասարակական-քաղաքական բնույթի էին:

1888 թվականից Փարիզից Լոնդոն տեղափոխված Հովհաննես Գրուսալյանը (Ժան Պոլսալի), Միհրան Սվազյանը (Մ. Սվազլը) և Ա. Մելքոնյանը (Զեյմա Մալքոլմ) հրատարակել են «Հայաստան» հայերեն-ֆրանսերեն երկշաբաթյա պարբերականը, որի տպագրանակը 1000-ի է հասել: Նրա որոշ համարներ արգելված էին Օսմանյան կայսրությունում: 1893–1894 թթ. Մ. Սվազլըն անգլերեն լեզվով հրատարակել է նաև «Անգլո-հայկական լրագիրը»:

<sup>1</sup> «Ձարթօնք», Պէյրոս, 1969, N 92:

1889 թ. Լոնդոն է տեղափոխվել նաև Մինաս Չերազը, որն իր հայրենասիրական բուռն գործունեությունը զուգորդել է նաև «Լ'Արմենի» օտարալեզու ամսաթերթը հրատարակելով: Թերթն անդրադարձել է նաև հայոց պատմությանը, քննարկել գրական ուղղություններ, հրատարակել հայրենի և գաղութահայ ընթացիկ լուրեր: Ամսաթերթը խմբագրի Փարիզ մեկնելուց հետո իր հրատարակությունը շարունակել է Ֆրանսիայում:

Հաշվի առնելով այն հանդամանքը, որ 1894 թվականից Հնչակյան կուսակցության կենտրոնը միառժամանակ հաստատվել էր Լոնդոնում, որտեղ և տեղափոխել էր տպարանը, հետևաբար այստեղ են հրատարակվել կուսակցության երեք պաշտոնաթերթերը՝ «Հնչակ» (1894, 1901–1903 թթ.) երկշաբաթյա լրագիրը, «Գաղափար» հանդեսը (խմբ.՝ Ավետիս և Մարո Նազարբեկյաններ), ինչպես նաև «Ապտակ» երգիծական հանդեսը, ուր իր գծանկարներով աչքի է ընկել լոնդոնահայ նկարիչ Չ. Կորմիկը: 1896 թ. «Հնչակը» խմբագրել է Արփիար Արփիարյանը:

1898 թ. Լ. Բաշայանի խմբագրությունամբ Լոնդոնում լույս է տեսել «Նոր կեանք» քաղաքական-հասարակական հանդեսը, որին համագործակցել են Միհրան և Մարի Սվազլյանները, Կ. Բասմաջյանը, Ե. Օտյանը և այլք:

1900–1902 թթ. ընթացքում հրատարակվել է նաև կրոնակեղեցական բնույթի «Եկեղեցի Հայաստանայց» ամենամսյա հանդեսը, որը հետագայում լույս է տեսել «Հայ եկեղեցի» վերտառությամբ: Այն հրատարակվել է Մանչեստրի հայոց հովիվ Թորոս Ջուղայեցու ջանքերով: Լոնդոնի դպրոց-որբանոցի ուսուցչական կազմի ջանքերով հրատարակվել է նաև «Պատանի» ամենամսյա հանդեսը:

1913–1917 թթ. լույս է տեսել «Հայաստանի բարեկամը» անգլիայեղու հանդեսը, որը «Հայաստանի բարեկամները» անգլիական ընկերության պաշտոնաթերթն էր: Այն անդրադարձել է հիվանդանոցներում, որբանոցներում, դպրոցներում բարեգործակա՞ն ու միսիոներական գործունեությունը:

«Լոնդոնի հայոց միացյալ ընկերակցության» 1913–1920 թթ. պաշտոնական հանդեսն էր «Արարատը», որի հրատարակումը Ընկերակցության ղեկավարներից Արամ Բաֆֆին էր՝ Նեժ վիպասանի որդին: Պարբերականը լայնորեն լուսաբանել էր Անգլիայում Հայկական հարցի մասին եղած բոլոր կարևոր քաղաքական իրադարձությունները և դրանց արձագանքները: Հարգեսի մշտական ենթագրով:

ներն անդրադարձել են անգլիահաշոյց ազգային կյանքին, նրանց հասարակական-քաղաքական և մշակութային միջոցառումներին: 1914 թվականից «Արարատը» խմբագրել է «Ընկերակցութեան» նախագահ Ա. Մ. Գրեգորին: Նշենք, որ այդ հանդեսի բաժանորդների թվում էին նաև Կալկաթայի, Ռանգունի, Սինգապուրի, Բիրմայի և հարավարևելյան Ասիայի հայ համայնքների վեց տասնյակից ավելի ներկայացուցիչներ:

Իսկ Արամ Բաֆֆին եղբոր՝ Արշակի հետ միասին 1918 թվականից սկսած գործունեություն է ծավալել «Հայկական տեղեկատվական բյուրոյի» շրջանակներում, ուր, բացի Հայաստանի մասին տեղեկատվությունների փոխանակումից, գրքուկների ձևով հրատարակվել են բրիտանացի նշանավոր հայագետների ու քաղաքական գործիչների ելույթներն ու դասախոսությունները Հայաստանի ու Հայկական հարցի վերաբերյալ<sup>1</sup>:

Բրիտանացի մտավորականները նշանակալի դեր են ունեցել հայոց պատմությունն ու Հայաստանի քաղաքական դրությունը անգլիացի հասարակությանը հասու դարձնելու գործում (Ջեյմս Բրայս, Առնոլդ Թոյնբի, Բաքստոն եղբայրներ, Էմիլի Ռոբինզոն, Ու. Ուիլիամ, Լինչ):

Անգլիահաշոյց մշակութային գործունեությունը ևս բազմազան էր: Այդ առարկեզում իրենց գործունեությամբ աչքի են ընկել մտավորականության այնպիսի դեմքեր, ինչպիսիք էին Թարգմանիչ և արվեստագետ Գ. Ֆրնտրգլյանը, Մ. Չերազը, Թարգմանչուհի, նկարչուհի և գրականագետ Ջ. Բոյաջյանը, հրատարակիչ Կ. Թումայանը, նկարիչ էդ. Շահինը, երաժշտագետ Կ. Գալֆայանը և այլք:

Անգլիահայ մտավորականության մեծաթիվ ներկայացուցիչներն իրենց ուսումնառությունն են անցել Անգլիայի բարձրագույն քոլեջներում և համալսարաններում: Դրանց մեծ մասը Հնդկաստանից, Պարսկաստանից և Օսմանյան կայսրությունից եկած երիտասարդներ էին, որոնք մասնազրկացել էին բժշկագիտության և իրավագիտության ոլորտներում: Մադրասաբնակ Ջ. Մ. Ջոզեֆը, իր բժշկական կրթությունը ստանալով Լոնդոնում, ապա՝ Դաղգոյում, 1860 թ. ընտրվել է Լոնդոնի բժիշկների արքայական քոլեջի անդամ:

Մինաս Չերազը 1890 թ. Լոնդոնի համալսարանի Քինգս քոլեջի պրոֆեսոր էր, հայոց լեզվի ամբիոնի վարիչ՝ Ս. Պարոնյանը, Դյուր-

<sup>1</sup> "Ararat", London, vol. VI. N 63, 1919, p. 307.

Հեյմի Համալսարանում աստվածաբանութեան դոկտորի աստիճան էր ստացել 1896 թ., իսկ Ա. Ստեփանյանը՝ վիրաբուժութեան դոկտորի աստիճան՝ Վիրաբույժների և բժիշկների արքայական քոլեջում:

Հայ մատենագիտութեան և հայկական ձեռագրերի մշակման ապարեզում նշանակալի դեր է կատարել Ս. Պարոնյանը՝ սկիզբ դնելով Բրիտանական թանգարանի և Բողլեյան գրադարանի հայերեն ձեռագրացուցակների պատրաստմանն ու ղասակարգմանը:



սարակինոսների արշավանքներից փախած մի խումբ հայեր պատրասարվել են այս քաղաքում՝ վայելելով հասարակության խնամքն ու հոգատարությունը<sup>1</sup>:

Ֆլանդրիայի գլխավոր նավահանգիստ Բրյուզգելի աշխարհագրական կարևորությունը գիտակցելով՝ քաղաքային իշխանությունները ծովահայաց պատվարներ էին կառուցել ջրի հնարավոր ներխուժումներից քաղաքն ապահովելու և օտար վաճառականներին առավել մեծ վատահոլթյուն ներշնչելու նպատակով, որ այն ժամանակների համար հրաշքին համարվում<sup>2</sup>: Ըստ հետազոտողների՝ հիշյալ ժամանակաշրջանում օտարազգի վաճառականները, հաճախ, մի քանի անգամ գերազանցում էին քաղաքային բնակչության թիվը: Անգլիայից բողոքներ էր բերվում, Հունգարիայից ու Բոհեմիայից՝ մետաղներ, Ռուսաստանից՝ մորթիներ, Իսպանիայից՝ զանազան յուղեր և այլն<sup>3</sup>:

Բրյուզգեում հայկական և արևելյան գորգերի, համեմունքների և ներկերի առևտրով զբաղվելու զանազան արտոնություններ՝ ստացած առաջին հայ առևտրականները հիշվում են արդեն 1340 թ.: Սակայն նրանք երկար չեն մնացել այդտեղ: Տեղի առևտրական պայմանագրերում վաճառական հայերի ավելի մեծ խմբեր պարբերաբար հանդիպում են 1358–1360-ական թթ. սկսած:

Ինչպես իտալական քաղաքներում (Վենետիկ, Ջենովա և այլն), հայ վաճառականները Բրյուզգեում ևս ունեին իրենց նախնական հանգրվանը՝ «օթյակը» կամ «հայտունը»: Հայ վաճառականների անուններին հաճախ հանդիպում ենք Բրյուզգելի քաղաքացիների հետ կնքված առևտրական միջնորդային պայմանագրերում: Նրանք եվրոպական զանազան իրեր ու հատկապես գործվածքներ էին արտահանում Այաս կամ այլ երկրներում գտնվող իրենց գործընկերներին<sup>4</sup>:

---

նուսահանգիստ մի» Լայացցո, որ Կիլիկիայի Այաս քաղաքն է, որտեղից իջալեն «ի գիրս մի վիպասանից Փոսանկաց ասի, լամբակ եւ այլ պէսպէս հասնեմաք ի Հայոց գամ Պրիւս եւ յերկիրն Ֆլանդրայ»:

<sup>1</sup> Ալիշան Հ. Ղ., նշվ. աշխ., էջ 461: Մարության Ա., Հոլլանդիա՞ն և հայերը ԺԶ–ԺԹ դդ., Վիեննա, 1926, էջ 44:

<sup>2</sup> Bruyssel, Ernest Jean van. Histoire du commerce et de la marine en Belgique, Bruxelles, t. I, 1861, p. 164–165.

<sup>3</sup> Bruyssel Ernest Jean van, նշվ. աշխ., էջ 205: Մարության Ա., նշվ. աշխ., 1926, էջ 116:

<sup>4</sup> Ալիշան Հ. Ղ., նշվ. աշխ., էջ 460–461: Մարության Ա., նշվ. աշխ., 1926, էջ 43–45: Նույնի, Բեդլիս և հայերը, Վիեննա, 1937, էջ 117–118:

Ֆլամանդացի Հետազոտողներից էմիլ Վանդեն Բյուսքեն, հենվելով Հատկապես 1589 թ. նոտարական փաստաթղթերի վրա, եզրակացնում է, որ XIV դարի սկզբին Ֆլամանդացիները Մերձավոր Արևելքի հետ իրենց առևտուրն իրականացնում էին արևելցիների, այդ թվում նաև Հայերի միջոցով: XV դ. Ֆլամանդացիները Մերձավոր Արևելքի երկրներում սեփական վաճառատները Հաստատելու անհաջող փորձերից հետո ստիպված էին բավարարվել Բրյուզզեում արևելցիների հետ միջնորդավորված առևտրի եկամուտներով<sup>1</sup>:

«Լեւանտացիների» (այդ թվում՝ Հայերի) և Բրյուզզեի քաղաքացիների անհամաձայնության պատճառով 1354–1358 թթ. ընթացքում արևելցիները լքել են քաղաքը և բնակություն Հաստատել մոտակա Հոլանդական Դոտրելխտ (Ուտրեխտ) քաղաքում: Սակայն ի վերջո վերադարձել և գոթական ոճով մի փառահեղ տուն են կանգնեցրել Բրյուզզեում 1478 թ., որի չորս անկյուններում աշտարակներ են վեր խոյացել: Այս գեղեցիկ կառույցը կանգուն է եղել մինչև XVII դ.:

XV դարում Արևելքից եկած վաճառականների թվում քիչ չէին նաև մահմեդականները (թուրքեր, արաբներ, մարոկացիներ), որոնք սակայն չեն կարողացել երկար դիմանալ Ֆլամանդացիների կրոնական մոլեռանդությանը և շուտով լքել են Բրյուզզեն, թեև թե՛ քաղաքապետարանը և թե՛ կղերը հավասար արտոնություններով էին օժտել նրանց և մյուս արևելցիներին:

Վապերազրերը վկայում են, որ Ֆլիխյ Գեղեցիկի թաղավորության ընթացքում (1482–1506 թթ.) Բրյուզզեում արդեն Հայեր և ընդհանրապես արևելցիներ չկային:

Այնուամենայնիվ փաստաթղթային աղբյուրները թույլ են տալիս Վանդեն Բյուսքեին և Հ. Ղ. Ալիշանին Բրյուզզեի Ս. Բավոն մայր եկեղեցու հյուրատան կառուցումը թվագրել 1346 թ.: Եկեղեցու ծխամսուտյանի 1386 թ. արձանագրության մեջ կարդում ենք. «Այն ժամանակ կային բազմաթիւ աղքատ սուպետներ, ինչպէս նաեւ թափառականներ, նոյնպէս եւ եղիպտացիներ եւ օտարականներ, որոնք

<sup>1</sup> Մարտիաս Ա., Բեյզիա եւ հայերը, Վիեննա, 1937, էջ 120–121. Bussche Emil Vanden, Une question d'orient au Moyen âge, documents inédits et notes pour servir à l'histoire du commerce de la Flandre, particulièrement de la ville de Bruges - avec le Levant, Bruges, 1878.

գալիս էին Հայաստանից եւ Ասիայից: Նրանք փախչում էին սարահինոսներից եւ մեծ թուով գալիս էին այս երկիրը»<sup>1</sup>:

Անկասկած առանձին հայերի հետքեր կան նաև Դամմ և Էլլյուզ նավահանգիստների ելից ու մտից մատյաններում՝ զանազան գործարքների, բերվող ու տարվող ապրանքների չափի ու արժեքների, հաճախ որոշ կարիքավոր հայերին տրված նպաստների մասին և այլն:

Ժամանակի ընթացքում Բրյուզգեն, ինչպես նաև Ֆլանդրիայի մյուս քաղաքները, կորցնում են իրենց թե՛ աշխարհադրական և թե՛ առևտրական նշանակությունը: Նախ Բրյուզգեի ծովախորշը լցվում է ավազով, և դնալով դժվարանում է նավերի մոտենալը ցամաքին: Նրան փոխարինող Անտվերպեն քաղաքի աստեղային ժամն էլ երկար չի տևում, քանի որ քաղաքականապես ու տնտեսապես բուռն զարգացում ապրող Հոլանդիան ամեն միջոց ձեռք է առնում միջագային առևտուրը դեպի իրեն գրավելու և Հյուսիսային Վենետիկի՝ Բրյուզգեի համբավը յուրացնելու ուղղությունը: Նա փակում է Էսկո դետի գետաբերանը՝ Անտվերպենը կտրելով ծովի հետ հաղորդակցությունը ունենալու հնարավորությունից, և ընդհանրապես, տարածաշրջանի ողջ երթևեկությունն ու անցուղարձը հսկվում էին Հոլանդացիների կողմից: Կամաց-կամաց սկսում է կարևորվել Ամստերդամի դերը:

Ազգային անկախության համար մղվող պատերազմներից ու 1566 թ. բուրժուական հեղափոխությունից հետո Հոլանդիան դարձել էր ոչ միայն տնտեսական, այլև հասարակական-քաղաքական, դիտական ու մշակութային ամենաբարձր զարգացում ունեցող երկրներից մեկը: Ամստերդամը, որ համաշխարհային շուկայի, մշակութային կյանքի կենտրոնն էր, այդ դարերում իրավամբ վայելում էր «Եւրոպայի կայսրուհու» համբավը: Եվրոպայի բոլոր կենտրոններից այդտեղ են փոխադրվում համարյա բոլոր մեծ առևտրական տներն ու ընկերությունները: Սրան մեծապես նպաստում էին նաև հոլանդական հզոր նավատորմը և միջմայրցամաքային առևտուր կազմակերպելու գործում այն ժամանակվա համար բավական մեծ հնարավորությունները: Ինչպես բոլոր առևտրականները, հայ վաճառականը ևս Ամստերդամում կարող էր առնչվել ոչ միայն հոլանդացի, այլև ուրիշ երկրներից և նույնիսկ այլ մայրցամաքներից եկած իր

<sup>1</sup> Սարուխան Ա., նշվ. աշխ., 1937, էջ 120-123, 126:

այլազգի գործակիցների հետ: Նա կարող էր եկամտաբեր առևտրական պայմանագրեր կնքել, տեական առևտուր կազմակերպել և այլն: Հիմնվում են առաջին հայկական առևտրական տները: Հոլանդացի պատմաբան Հերինգայի հաշվումներով 1660 թ. Ամստերդամում կային 70-ից ավելի ասիական առևտրական տներ, որոնցից շատերը պատկանում էին պարսկահայ կամ թրքահայ վաճառականներին<sup>1</sup>:

Հայ-հոլանդական առևտրական կայուն հարաբերությունների մասին կարելի է խոսել XVII դարից սկսած: Ամստերդամում հայերի հաստատմանը մեծապես նպաստել է 1612 թ. Օսմանյան կայսրութ-յան և Հոլանդիայի Միացյալ Նահանգների միջև կնքված առաջին առևտրատնտեսական դաշնագիրը<sup>2</sup>, ինչպես նաև 1626 թ. դեսպա-նությունների փոխանակումը Հոլանդիայի և Պարսկաստանի միջև<sup>3</sup>, որը գուցեև այնքան էլ մեծ հաջողություն չունեցավ, սակայն խրա-խուսեց հոլանդացիների մուտքը Պարսկաստան: Զուղահայ վաճա-ռականները հոլանդացիների հետ առևտրական առնչություններ ունեին նաև Հնդկաստանում՝ Արևելահնդկական ընկերության միջո-ցով: Ամստերդամը նրանց համար միջանկյալ կապող օղակ էր իրենց առևտուրը Հնդկաստանի և Արևելքի այլ երկրների հետ իրականաց-նելու գործում: Հոլանդական նավերն ավելի հաճախ էին բռնվում հայ առևտրականների ապրանքներով՝ Հոլանդիա տանելով մետաքս, արևելյան համեմունքներ, յուղեր ու թանկարժեք քարեր, իսկ եվրո-պայից Արևելք էին բերում կերպասներ, տնային կահավորման, խո-հանոցային իրեր և այլն:

Եթե առաջին հայ մարզարտավաճառներն ու ադամանդավա-ճառները Ամստերդամում հիշատակվում են 1560–1565 թթ., սպա հայ-հոլանդական կանոնավոր առևտրական հարաբերությունների մասին կարելի է խոսել միայն XVII դ. սկզբից: XVIII դ. հոլանդացի պատմագիր Ս. վան Էմդերեն նկատում է, որ հայերի առաջին հոսքը դեպի Հոլանդիա կատարվեց Շահ Աբասի կողմից Հին Զուղայի բռնագաղթեցումից (1605 թ.) հետո<sup>4</sup>: Հայ վաճառականների երթևեկը

<sup>1</sup> Heeringa W. Gs., *Kopij en druk in de Nederlanden, Atlas bij de geschiedenis van de Nederlandse typografie*. Amsterdam, 1962, p. 149.

<sup>2</sup> Մարտիասն Ա, նշվ. աշխ., 1926, էջ 12:

<sup>3</sup> M. A. Meilink-Roelofs. *The Earliest Relations between Persia and the Netherlands, Persica. Jearboek van het genootscha Nederland-Iran stichting voor culturele betrekkingen*, n. VI, 1972–1974, pp. 1–50.

<sup>4</sup> Մարտիասն Ա, նշվ. աշխ., 1926, էջ 46 (Emdre S. Van, *Historisch Berigt van alle de Gezindheden, Utrecht, 1784*, p. 65).

դեպի Ամստերդամ պայմանավորված էր Շահ Աբասի կողմից նրանց տրված հում մետաքսի առևտրի մենաշնորհով և այդ առևտուրը հաջողութեամբ կազմակերպելու այլ արտոնութիւններով: Հայերի առևտրի առարկան, հում մետաքսի կողքին արևելյան համեմունքներն էին, ներկերը, թանկարժեք քարերը, սուրճը, դինին, հաճախ նաև օպիումը:

Հոլանդացի ժամանակակից հետազոտող Ռ. Բեկիուսի կարծիքով ևս Պարսկաստանից դեպի Ամստերդամ հայ վաճառականների երթևեկը քաղաքական կամ կրոնական ճնշումների հետևանք չէր, այլ առավելապես առևտրատնտեսական ուղղվածութիւն ուներ<sup>1</sup>:

1600–1800 թթ. ընթացքում Ամստերդամ եկած և առևտրական գործունեութիւն ծախյալած բոլոր հայերի թիվը Հոլանդացի գիտնականներ Ռ. Բեկիուսի և Ս. վան Ռոյի կողմից հավաքված հարյուրավոր արխիվային վավերագրերի հիման վրա<sup>2</sup> մոտենում է 800-ի: Նկատենք, որ ժամանակին նոտարական արձանագրութիւններն ու գործարքները կնքվում էին միայն արական սեռի ներկայացուցիչների միջոցով:

Անդրադառնալով հայերի ներգաղթի ալիքներին՝ տեսնում ենք, որ հայերի զգալի մասը Հոլանդիա է ժամանել 1640–1650 թթ.: Դրանից հետո ևս հայերի թիվը շարունակել է աճել, իսկ XVII դ. վերջերին՝ որոշ չափով նվազել: XVIII դարի սկզբին դաղթակաշնների աշխուժութիւն է նկատվել, ինչն իր դադարակետին է հասել XVIII դ. առաջին քառորդին, ապա՝ կրկին նվազել:

1760 թ. մինչև XIX դարի սկիզբ հայերի հոսքը Հոլանդիա դալի նվազել է: 1800-ականներին Ամստերդամում արդեն հայեր չկային<sup>3</sup>:

<sup>1</sup> Bekius R. A., The Armenian community in Amsterdam in the 17th and 18th centuries. Integration and disintegration. Paper presented at the 1 st Conference of the Association Internationale des Etudes Armeniennes. Amsterdam, August 1983, p. 3. Bekius R. A., A global enterprise: Armenian merchants in the textile trade in the XVII and XVIII cc. Carpets and Textiles in the Iranian World. 1400-1700. Proceed. of the conference held at the Ashmolean Museum, Univ. of Oxford, 2003, pp. 276-230.

<sup>2</sup> Rooy S. van, Armenian merchant habits as mirrored in 17-18th century Amsterdam documents. - Revue des Etudes Arméniennes. Paris, t. III, 1966, p. 349. R. A. Bekius, A global enterprise..., p. 226. Ըստ նրա հաշվարկների, 1651–60 թթ.՝ 14, 1661–70 թթ.՝ 35, 1671–80 թթ.՝ 38, 1681–90 թթ.՝ 30, 1691–1700 թթ.՝ 36, 1701–10 թթ.՝ 41, 1711–20 թթ.՝ 41, 1721–30 թթ.՝ 25, 1731–40 թթ.՝ 26, 1741–50 թթ.՝ 27, 1751–60 թթ.՝ 33, 1761–70 թթ.՝ 25, 1771–80 թթ.՝ 20, 1781–90 թթ.՝ 20, 1791–1800 թթ.՝ 14 հայ է բնակվել Ամստերդամում:

<sup>3</sup> R. A. Bekius, A global enterprise, քիվ 1 աղյուսակ, էջ 226:

Պարսկաստանից և Արևելքի այլ երկրներից եկող Հայ վաճառականների խմբերի միջև որոշակի տարբերություններ կային: Մինչև XVIII դ. առաջին քառորդը մեծամասնություն է կազմել հատկապես պարսկահայերի թիվը, իսկ 1715 թվականից որոշակի ավելացել է նաև արևմտահայերի թիվը: Հայերի ներհոսքի վերջին ալիքը Հոլանդիա եղել է 1750-ականներին Մոսկվայով<sup>1</sup>:

Հայ վաճառականները վայելում էին Հոլանդացիների համակրանքը: «Հայ գաղութը Ամստերդամի հասարակության ցանկալի մասնիկն էր, - գրում է Ռ. Բեկիուսը, - եւ մեծ մասամբ միաձուլված էր նրա մեջ: Հայերն այս հասարակության համար շատ ավելի վաղ էին ընդունելի դարձել (չնայած իրենց սեփական եկեղեցին ունեին), քան հռոմեացի կաթոլիկներն ու հրեաները»<sup>2</sup>: Նա նույնիսկ թվարկում է այն նկարիչներին ու քանդակագործներին, որոնք նրանք անդրադարձել են Հայերին ու նրանց կենցաղին (Յան Բիրստրատեն, վան Ուլֆտ, Բերկհեյդե և այլք): Նշանակալից է նաև այն հանգամանքը, որ քաղաքային բիրժայի դահլիճի պատերին այլազգի վաճառականների, դրամափոխների հետ միասին պատկերված են նաև Հայ վաճառականները՝ զանազան գործարքներ կատարելիս<sup>3</sup>:

Խոսելով հայկական գաղութի մասին՝ "Le Amsterdammer" շաբաթաթերթը գրում է: «Հայկական գաղութի պատմությունը մի ոսկե էջ է Ամստերդամ քաղաքի պատմության մեջ»<sup>4</sup>:

Հայկական համայնքի ստվարացման ու կազմակերպվածություն, տարիներ անց նաև եկեղեցի ունենալու փաստը: Հայազգի վաճառականների մասին Հոլանդացիներն այն կարծիքին էին, որ նրանք կաթոլիկներ են, բայց չեն ենթարկվում հռոմեական եկեղեցուն, ուստի չէին կաշկանդում նրանց կրոնական ձգտումներն ու գործունեությունը:

<sup>1</sup> R. A. Bekius, De Armeense kolonie in Amsterdam in de 17e en 18e eeuw. Immigratie-integratie-achteruitgang. Scriptie MO-11 Geschiedenis Nutsseminarium a/d Universiteit van Amsterdam. Augustus, 1983, թիվ 4 աղյուսակ:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 6:

<sup>3</sup> Նույն տեղում: Հեղինակը նշում է այս նկարիչների ու քանդակագործների՝ քաղաքային քանգարանում (Municipal Museum) պահվող համապատասխան աշխատանքների քանգարանային գույքահամարները (Յան Բիրստրատեն՝ c-6658, Բերկհեյդե՝ c-26900, վան Ուլֆտ՝ առանց նեգատիվային համադրի):

<sup>4</sup> "Le Amsterdammer", 1887, օգոստոսի 14:

Շուրջ մեկ դար Ամստերդամի Հայկական Համայնքն իր կրոնական ծեսերը կատարելու համար Հավաքվում էր որևէ մեկի տանը կամ վարձու աղոթարանում, որը հետագայում մատուռի կարգավիճակ ստացավ: Այն կրում էր «Ս. Կարապետ» անունը, և նրա առաջին հոգևոր առաջնորդը Կարապետ վարդապետ Աղբիանացին էր<sup>1</sup>:

1713 թ. «ավագագոյն» Հայ վաճառականներ Պապաջան Սուլթանյանի ու Նիկողայոս Թեոդորյանի կողմից քաղաքում Հայկական պատշաճ եկեղեցի կառուցելու վերաբերյալ խնդրագիր է ներկայացվում Ամստերդամի քաղաքապետին: Քաղաքային իշխանությունների նույն թվականի հոկտեմբերի 26-ի համապատասխան որոշմամբ վաճառականների դիմումը բավարարվում է<sup>2</sup>: Նույն վաճառականների նյութական միջոցներով Ամստերդամի կենտրոնական փողոցներից մեկի վրա մի շինություն է գնվում, որը հիմնահատակ քանդակում կառուցվում է եկեղեցին: Հիմնարկեքի արարողությանը ներկա են եղել նաև քաղաքային իշխանությունները: Նկատենք, որ եկեղեցու կառուցմանը, նրա ներքին հարդարանքին և արժեքավոր սպասքի ձեռքբերմանը մասնակցել են Համայնքի համարյա բոլոր անդամները, հատկապես վաճառականական խավը՝ Վանանդեցիների անմիջական աջակցությամբ: Եկեղեցու օժման իրավունք ստանալու համար գաղթօջախի ներկայացուցիչների անունից 1715 թ. սեպտեմբերի 20 թվակիր աղերսագրով դիմում է արվել էջմիածնի Մայր Աթոռին՝ «Հաւանութեամբ ստորանիշ վաճառականացն յօրինեցաւ այս տոմսիկս բանահիւսութեամբս և տպիւք Ղուկասու դպրի Վանադեցույ»<sup>3</sup>:

<sup>1</sup> Մարտիաս Ա., նշվ. աշխ., 1926, էջ 148: Դավիթ Չուղայեցու (Շարարի որդի) «արդեամբ» (1663 թ.) գնված «Ս. Կարապետ» մատուռի Վեմ քարը Ոսկան Երեսնցու Մարսել փոխադրվելուց հետո եղել է իր հետ եւ վերջինիս մահից հետո մնացել է քաղաքային իշխանությունների մոտ: 1970 թ. մայիսին Վազգեն Ա-ի Մարսել կատարած ուղեւորության ընթացքում Մարսելի քաղաքագլուխ պրն Դեֆերը հանդիսավորությամբ Վեհափառին է հանձնել այն: Վեմ քարը, որը Ոսկանից հետո հանգրվանել էր "Notre Dame de la Garde" եկեղեցու ավագ խորանի վրա, այնուհետեւ Մարսելի հնագիտական, ապա Բորելի քանգարաններում, Վեհափառ Հայրապետի կամոք ներկայումս խմամբով պահվում է Մարսելի հայոց Ս. Սահակ-Մեսրոպ Պրաղոյի եկեղեցում (տե՛ս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի իններորդ ուղեւորությունը, Սք. Էջմիածին, 1971, էջ 188–189):

<sup>2</sup> Regering en Oud-Burgemeesteren van Amsterdam, fol. 35, verso. Մարտիաս Ա., նշվ. աշխ., 1926, էջ 149:

<sup>3</sup> Աղերսագրի պատճենը, ինչպես եւ ջուղահայերի մասնակցությամբ յուրաքանչյուր հայամպաստ միջոցառման մասին տեղեկություն, ուղարկվել է Նոր Ջուղայի առաջնորդին: «Ի վաղուց հետև էւ ցայսօր ժամանակի իսկ պահի սովորութեան ի մէջ

Ամստերդամի կենտրոնում<sup>1</sup> Boomsloot փողոցում գտնվող եկեղեցու շինարարությունն ավարտվում և օծվում է 1715 թ. «Սուրբ Հոգի» անունով: Նորաշեն հայկական եկեղեցին դառնում է գաղութահայ կյանքի կենտրոն, ազգային լեզվի, սովորույթների ու ավանդույթների պահպանման օջախ: Նյութական ծախսերը հողալու նպատակով որոշվում է, որ տեղաբնակ և նույնիսկ ժամանակավորապես Ամստերդամում գտնվող բոլոր հայերը տարեկան որոշ գումար պետք է հատկացնեն եկեղեցուն: 1733 թ. եկեղեցու առաջնորդությունը ստանձնում է Հովհաննես Ամասիացի վարդապետը, որը 1749 թ. հարուստ վաճառական Առաքել Տեր Առաքելենցի հետ միասին նախաձեռնում է եկեղեցու վերանորոգությունն ու ընդարձակումը, համաձայն եկեղեցու արտաքին և ներքին մուտքերի վրա փորագրված արձանագրությունների<sup>1</sup>:

Տեր Առաքելենցի վախճանից հետո (1774 թ.) եկեղեցին լուրջ նյութական խնդիրների առջև է կանգնում, մասնավանդ որ համայնքն այլևս նախկին աշխուժությունը չուներ, վաճառականական խավն ու ծխականները հետզհետե նվազել էին: Այս թվականին եկեղեցու սպասավորությունը ստանձնած Տեր Դանիել քահանան 1806 թ., նյութական միջոցներ չունենալու պատճառով, հեռացել էր՝ փակելով եկեղեցին:

1835 թ. վախճանված Ամստերդամի վերջին հայ բնակիչը՝ գմյուռնիացի Ստեփան Գաբրիելյանը, որ ապրում էր եկեղեցում, այն որպես սեփականութուն կտակում է իր հուանդացի կնոջը: Զանազան դատական ու իրավական գործարքներից, բազմաթիվ խնամակալների ձեռքով անցնելուց հետո, ի վերջո, ռուսական կառավարության միջնորդությամբ 1873 թ. եկեղեցու տնօրինությունը հանձնվում է էջմիածնի Մայր Աթոռին: 1874 թ. հայկական եկեղեցու շենքը վաճառվում է և վերածվում կաթուղի իգական դպրոցի, որը գործում է մինչև XX դ. կեսերը<sup>2</sup>:

---

գերամեծար Հնդկահայոց, զի մինչ սակս ազգային ինչ իրողութեանց հասարակապես առնեն թոթակցութիւն ինչ ընդ սրբոյ Աթոռայն Էջմիածնի, գաղափար այնր առաքիւն ի վանքն Ամենափրկչի ընդ որոյ իրաւատութեամբն գտանին ինքեանք, ի տեղեկութիւն Առաջնորդի այնր վանաց» («Արշալոյս Արարատեան», Չմիտմիա, 1861, Յունիս 3):

<sup>1</sup> Արձանագրությունները տես Սարուխան Ա., նշվ. աշխ., 1926:

<sup>2</sup> Ամստերդամի հայկական եկեղեցու պատմությանը հանգամանորեն անդրադարձել է Ա. Սարուխանն իր վերոհիշյալ աշխատության մեջ՝ օգտագործելով Ամստերդամի դիվանների արձանագրությունները (էջ 146-173):

Հողանդահայ ժամանակակից ստվարացած Հայ Համայնքի ջանքերի շնորհիվ պատմական մեծ արժեք ունեցող Հայկական եկեղեցու շենքը 1980-ական թթ. կեսերին Ամենայն Հայոց Կաթողիկոս Վաղգեն Ա-ի շնորհիվ վերադնվել է<sup>1</sup>:

Ամստերդամի Հայ գաղթօջախը Հայոց պատմութան մեջ բացառիկ է Հայ մշակույթին մասնավորապես Հայ գրատպութան ոլորտում իր մատուցած ծառայութուններով:

1512–1800 թթ. տպագրական տեխնոլոգիաների յուրացմամբ Հայկական տպարաններ հիմնվեցին և տարբեր հաճախականությամբ գործեցին Եվրոպայի և Ասիայի մոտ 19 քաղաքներում: Կարող ենք վստահորեն արձանագրել, որ Եվրոպայում Հայ տպագրութան սկզբնավորման և այնուհետև զարգացման գործում Ամստերդամի Հայ տպագրութունը դարաշրջանային դեր կատարեց: Այստեղ XVII դ. 60-ականներին սկզբնավորված Հայ տպագրութունը շարունակվեց մոտ կես դար՝ իր կազմում կրելով 4 տպարանների պատմություն, մոտ 48 անուն կարևորագույն գրքերի հրատարակությամբ, մոտ 50 հազար հատոր տպագիր ծառանգությամբ<sup>2</sup>: Այսօր ամբողջ աշխարհի տպագիր գրքի շտեմարաններում, մեր հաշվումներով, պահպանվել է ամստերդամյան Հայ հնատիպ գրքի մոտ 1000 հատոր<sup>3</sup>:

Ամստերդամում 1660–1718 թթ. գործած 4 Հայկական տպարանները ղեկավարեցին 7 Հայ գրահրատարակիչ-տպարանատերեր՝

Մատթեոս Ծարեցի (1658–1660) - «Ս. Էջմիածին եւ Ս. Սարգիս»,

Ավետիս Ղլիճենց Երևանցի (1660–1666) - «Ս. Էջմիածին եւ Ս.

Սարգիս»,

Կարապետ Աղրխանացի (1662–1668) - «Ս. Էջմիածին եւ Ս. Սարգիս»,

Ոսկան վրդ. Երևանցի (1664–1669) - «Ս. Էջմիածին եւ Ս. Սարգիս»,

<sup>1</sup> Տե՛ս Մելքոնյան Ե., Ամստերդամի հայկական եկեղեցու վերագնումը, Էջմիածին, 1986, N Բ, էջ 35–38: Ամստերդամի քաղաքային իշխանությունները, կարևորելով եկեղեցու պատմական արժեքը, 2012 թ. վերանորոգեցին շենքի արտաքին ճակատը:

<sup>2</sup> Ամստերդամի հայկական տպարանի հիմնադրման, նրա գործունեության եւ հրատարակությունների ուսումնասիրմանն են անդրադարձել Գ. Չարբիսանյանը, Լեոն, Գ. Լեոնյանը, Ա. Սարուխանը, Ռ. Իշխանյանը, Մ. Գրիգորյանը, Կ. Ամատունին եւ այլք:

<sup>3</sup> Այստեղ եւ ստորեւ հաշվարկները կատարված են ըստ՝ Հայ գիրքը 1512–1800 թթ., իմբ. Ոսկանյան Ն., Կորկոտյան Բ., Սավայան Ա., Երևան, 1988:

Մատթեոս Վանանդեցի (1685–1705) - «Ս. Խաչ եւ Մարիամ Աստուածածին»,

Թովմաս Վանանդեցի (1695–1705) - «Թովմաս Վանանդեցի»,

Ղուկաս Վանանդեցի (1711–1718) - «Ղուկաս Վանանդեցի»:

Հարկ է նշել, որ Ամստերդամում հայ տպագրութեան կազմակերպման նախաձեռնութեան առաջնայնութիւնն ու իրագործումը պատկանում էին հայ հոգեւոր դասին: Հայ եկեղեցու ավագանու կողմից Արեւմուտք գործող ված հոգեւոր դասի լավագույն զավակները (կաթողիկոսական նուտար Մատթեոս Ծարեցի, Ոսկան վարդապետ Երեւանցի, Վանանդեցիներ և այլք) անհնարին արեցին իրենց առաջադրանքի հաջող կատարման համար:

XVII դարի սկզբից հստակ նշմարվում է հայոց երկու հոգեւոր և աշխարհիկ վերնախավի («սպասաւորք Բանին») մտահոգութիւնը տպագրական տեխնոլոգիաների յուրացման և հայ տպագրութեան անընդհատականութեան ապահովման ուղղութեամբ: Հայոց հոգեւոր ավագանուց հատկապես նշանակալի են Սրապիոն Ուռհայեցի, Մովսես Տաթևացի և Հակոբ Զուղայեցի կաթողիկոսների ջանքերն այդ ուղղութեամբ, որի լավագույն ապացույցը ստորև բերվող հիշատակարաններն են:

Հովհաննես Անկյուրիացու, հայտնի Մովսէս անունով, 1643 թ. հիշատակարաններում հստակ նշմարվում է այդ շարունակականութիւնը. «Եղի ի մտի զտպագրութեան ... եւ պատճառ աշխատանաց մերոց այս էր. զի յՈւրհայեցի Սրապիոն կաթողիկոսն բազում փափաք ունէր վասն տպագրութեան արհեստիս եւ ոչ եղեւ հասու: Եւ ետ պատուէր աշակերտին իւրոյ տէր Գրիգոր քաջ ընդունապետին Կեսարիոյ լինի եթէ դու կարողանաս տպագրութեան արհեստի եւ նայ եւս ոչ կարողացաւ: Իսկ նա ինձ մեղաւորիս եւ անարժանիս իբր հարկս ի վերայ եղեալ պատուիրէր ինձ հանապազ եթէ լինի դու կարողանաս, վասնզի իմ ծանօթութիւն կայր ընդ ազգիս Քուսկաց եթէ կարդալով եւ եթէ լեզաւ. այսպէս յանձին կալեալ ջան եղի աղօթիւք նոցա»<sup>1</sup>:

Նույն հեղինակի 1642 թ. մի այլ հիշատակարանում հաղորդվում է. «... ես նուստտ յոգի Յովհաննէս Անկիւրացիս տեսանէի զպակասութիւն գրեանց ազգիս հայոց եւ վարանէի ի մտի եթէ զինչ լինի հնար բազմանալոյ հին եւ նոր կտակարանաց. քանզի պատճառ

<sup>1</sup> Տե՛ս Ներսէս Ընդրեալի, Յիսուս Որդի, Վեցետիկ, տպ. Սալիզաքաուի, 1643:

նուագութեան այս էր զի բազում ծախիւք եւ դժուարութեամբ հազիւ կարէ ոք ըստանալ ա [1]. գիրք. կամ բ[2]ս կամ երիս, թող թէ պիտոյանայ բազում»<sup>1</sup>:

Ամստերդամում հայկական առաջին տպարանի հիմնադիր Մատթեոս Ծարեցին տեղեկացնելով, որ. «...հրամանաւն տեառն հայոց Յակոբ կաթողիկոսի յիզմիրու ելեալ դիմեցի յարեւմուտս, յերկիրն Իտալացւոց սակս դործոյ տպագրութեանս»<sup>2</sup>, 1661 թ. Սաղմոսարանի առաջաբանում շարունակում է. «... զԾարեցի Մատթէոս սարկաւազն, որ էր նօտար Փիլիպպոսի կաթողիկոսի... բազում ջանիւք եւ երկամբք քանդանել ետ եւ նորակերտաց, զագնիւ եւ զպատուական գիրս զայս, հրամանաւ եւ կամօք երիցս երանեալ կաթողիկոսին Յակօբայ: Իսկ զկերպ եւ զօրինակ տառին առեալ էր յերջանիկ բարունապետէն Մօսիսէ [իմա՝ Մովսես կաթողիկոս Տաթեւացի - է. թ.], նաեւ զգաղափար Սաղմոսարանիս...»<sup>3</sup>:

Հայ կղերի ջանքերին սերտորեն աջակից եղան Ամստերդամում գործող Հայ վաճառականները, որոնց թիվը երբեք չհասավ Հարյուրի: Վաճառականները հաճախ մասնակից էին ինչպես տպագրական տեխնոլոգիաների հայթայթմանը (տպագրական հաստոց, տպագրական մայրատառերի, փորագրապատկերների պատրաստում, թղթի և ներկերի ձեռքբերում, կազմարարական ծախսեր և այլն)<sup>4</sup>, այնպես էլ, ինչն առավելապես հասկանալի է, նրա տարածմանն ու վաճառքին: Գործնականում չկա մի հրատարակիչ, եթե բացառենք Թովմա Վանանդեցուն, որ չի օգտվել վաճառականների շնորհներէրէր:

Ամստերդամի Հայ տպագրութեան պարագայում բացառիկ է առևտրական կապիտալի նորջուղայեցի ներկայացուցիչների խաղացած դերը, որոնք անկասկած մեծամասնութուն էին Ամստերդամում, իսկ մյուս կողմից՝ մի շարք թելերով ավելի՛ էին կապւած Նոր Զուղայից կամ Արևելյան Հայաստանից եկած հրատարակիչների հետ: Այդ մասին են վկայում հետևյալ հիշատակագրական հատվածները.

<sup>1</sup> Յովհաննես Անկիրիացի, Սուղճոսարան, Վենետիկ, 1642:

<sup>2</sup> Ներսես Ենոքիայի, Յիսուս Որդի, Ամստերդամ. տպագր. Մատթեոս Ծարեցու և Ավետիս Դիմեցի, տպ. Ս. Էջմիածնի և Ս. Մարգարի. 1660-1661:

<sup>3</sup> Սաղմոսարան, Ամստերդամ, տպագր. Ավետիս Դիմեցի և Կարապետ Անդրիանացու. տպ. Ս. Էջմիածնի և Ս. Մարգարի, 1661-1662:

<sup>4</sup> 1664 թ. Շամբեցի մահտեսի Արդուպահն իր ունեցվածքը կտակեց Ամստերդամի տպարանին (տես Սաղմոսարանի հիշատակարանը, 1664 թ.):

«...զ Պարոն Պետրոսն Զուղայեցի ... զի ի խնդրոյ՝ եւ ծախիւք իւրով տպեցաւ այս ժողովածու փոքրիկ գրքուկս ...» [«Գանձ չափոյ կշռոյ...» (1699)]:

«...ի լոյս ածեալ Հարցմամբ խնդրոյ եւ ծախիւք Զուղայեցի ... խոճայ Քանանի որդւոյ Թարխանին, Աւետքին եւ Սարհադին ընկերացն Աւետքի որդւոյ Ղազարիոսին» [«Հայելի ... - Հին կտակարանին» (1713)]:

«...Նուիրեալ եւ տեառնագրեալ Զուղայեցի Գիլանէնց ... - Սարգսի որդւոյ Պետրոսին» [«Պատկերասէր Պատկերատեաց» (1716)]:

Նրանք, իրենց առևտրին նպաստող զանազան ձեռնարկներ պատվիրելուց եւ նյութական ծախսերը հոգալուց զատ, հովանավորում էին շատ ուրիշ հրատարակություններ ևս, որոնք մեծ կարևորություն ունեին Հայ ժողովրդի, նրա ազատագրական մտքի պատմութեան համար: Նրանց դերը փոքր չէր նաև հրատարակված գրքերը Հայաշատ կենտրոններ և Հայրենիք տեղափոխելու և Հայ գրավաճառներին հանձնելու գործում: Այս մեկնասանների մասին մանրամասն տեղեկություններ կարելի է քաղել հրատարակված գրքերի հիշատակարաններում<sup>1</sup>:

Եվրոպայի Հայ տպագրիչների համար լրացուցիչ բարդություն էր գիրքը Ֆոքը Ասիայում տարածելը: Դա արվում էր Վենետիկի, Հալեպի, Ջմյուռնիայի, Նոր Զուղայի վաճառականների միջոցով: Գրքերը հիմնականում առևտրանավերով գալիս էին XVI–XVII դարերի տպագիր գրքի տարանցիկ կենտրոն՝ Ջմյուռնիա: Այդ քաղաքն ամենաշքաթյա քաջավանդերով կապված էր Պոլսի՝ շուրջ 40 հազար Հայերով բնակեցված շուկայի հետ: Դեռևս Սիմեոն Լևհացին հիշում էր Կ. Պոլսում գրավաճառական նշանավոր շուկայի՝ «Բիթապխանայի» առկայությունը: Նվազ թվով ցամաքային քարավաններ ուղղվում էին դեպի Պարսկաստան՝ 15 հազար Հայերով բնակեցուած Նոր Զուղա:

Հայտնի օրինակները վկայում են գրքի մեծաքանակ տեղափոխման մասին.

-1663 թ. Ավետիս Ղլիճենցը Լիվոռնոյում բեռնաթափում է 3900 հատոր գիրք՝ դրանք Ջմյուռնիայում վաճառելու համար<sup>2</sup>:

<sup>1</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Kévorkian R. H., Catalogue des «Incunables» arméniens (1511–1695) ou chronique de l'imprimerie arménienne, Genève, 1986, pp. 11–12.

<sup>2</sup> Ամատունի Հ. Կ., Ոսկան Երեսնացին եւ իր ժամանակը, Վենետիկ, 1975, էջ 147:

-1688 թ. Մատթեոս Վանանդեցու ծանոթ վաճառականը 6000 գիրք է բերում Ամստերդամից Ջոյուռնիա<sup>1</sup>:

Ամստերդամի հայ համայնքի մի այլ խավի՝ հայկական գրքի հրատարակության նկատմամբ ունեցած սրտացավ վերաբերմունքի լավագույն արտահայտությունն է 1685 թվականին հրատարակված «Շարակնոցի» հիշատակարանում պահպանված փաստը: «Արդ երես անկեալ սղաչեմ զընթերցողսդ,- գրում է հրատարակիչ Մատթեոս Վանանդեցին,- յիշել զերեւանցի պարոն Ուղուրլուի որդի զտէր յՕ-հան սրբանուէր քահանայն, եւ զհանգուցեալ ծնողսն զհայրն իւր զպարոն Ուղուրլուն եւ զմայր նորին զՄասում Փաշայն, եւ զկողակիցն իւր Եղիսաբեթն՝ եւ յնղբարս նորին զպարոն Աւետիքն եւ զպարոն Կարապետն՝ եւ քորք իւրեանց զԽաթունն զԲէկին զՄարիամն եւ զԿատարինէն, եւ զայլ արեան առու մերձաւորսն, քանզի աշխատեցան ՚ի սրբագրութիւն շարակնոցին եւ զթուղթ չորացնելն եւ զայլ աշխատանս»<sup>2</sup>:

Միջնադարյան արհեստանոցներ հիշեցնող հայկական տպարաններում գլխավոր գործող անձն անկասկած տպարանատեր-հրատարակիչն էր, որի ուսերին էր ընկած տպագրելիք բուն բովանդակության ընտրութիւնը կամ կազմումը, հաճախ՝ շարումն ու սրբագրութիւնը: Փոքր ռեսուրսներ ունեցող այդ աշխատանոցներում ամեն մեկի վրա դրված էին բազում պարտականութիւններ: Հատկանշական է Ոսկանի «Աստուածաշնչի» հիշատակարանում իր իսկ «ձեռնաստուն աշակերտ զՅօհան սարկաւազ Երեւանցուն» տրված բնութագրերը՝ աշխատանքային գործունեության նկարագրութեամբ. «[1]. զառաջնորդ փորձըն միշտ ընթերցաւ ընդ իս եւ ընդ վարդապետին եւ [2]. աշխատեցաւ ի սփռելն զթուղթն եւ [3]. ի ժողովելն, եւ [4]. ի կապելն եւ [5]. զտնտեստան հոգան եւ [6]. զամենայն զարտաւրին գործս հոգաց եւ [7] անփորձ. ծառայեաց մտերմաբար»:

Մարդկային ուժի և նյութական միջոցների սղության պատճառով գրաշարության և սրբագրութեան գործը (լրբ ավելի նվազ մասնագիտական գիտելիքներ պահանջող գործ), հաճախ հանձնարարվում էր տեղացի օտար կամ հայազգի 12-13 տարեկան պատանիներին: Հայ տպագրութեան մասնակից տեղացիներից հիշում են «Եան Եանէս Բիքլիմանը, «Ֆլամանկ Յօհաննիսը», որոնք հրատարակիչները հայերեն էին սովորեցրել: Այդ փորձը շարունակվեց նաև հետա-

<sup>1</sup> Մարտիան Ա., նշվ. աշխ., 1926, էջ 101:

<sup>2</sup> «Շարակնոց, երաժշտական երգեցմունք հոգեսրականք», Ամստերդամ, 1685, էջ 779:

գայում հայկական այլ գաղթօջախներում: Օրինակ՝ Մադրասում հայոց ապագա սահմանադրական մտքի հուշարձանի՝ «Որոգայթ փառացի» (1773 թ.) տեքստը սրբագրում էին Շահամիրյանի ընտանիքում ծառայող երկու սիամցի եղբայրներ<sup>1</sup>:

Հուանդահայ գաղութի տարբեր խավերի ներկայացուցիչները, յուրաքանչյուրն, անշուշտ, ունենալով իր սեփական շահերն ու գործունեության ոլորտը, միաժամանակ չէին կարող անտարբեր հայացքով նայել Ամստերդամի հայկական տպարանի ծավալած ազգանվեր գործունեությանը, մանավանդ որ այստեղ աշխատել ու ստեղծագործել են հայ դպրության այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպես Ոսկան Երևանցին, Թովմաս, Ղուկաս և Մատթեոս Վանանդեցիները: Նրանք իրենց հեղինակությամբ պատկառանք էին ներշնչում ոչ միայն հայրենակիցներին, այլև օտարներին:

Հրատարակիչները հաճախ ստիպված են եղել եւ սրբագրիչի, եւ գրաշարի աշխատանք կատարել՝ հաճախ առանց նյութական վարձատրության որևէ ակնկալության: «...Ես նուաստս յամենից Մատթեոս դպիրս եկի ծառայելով ընդ արևնակից վարդապետին իմոյ եւ վարձուց կողմանէ ոչինչ ընկալայ քանզի եւ տէր Յակոբ Կաթողիկոսն գրեաց առ իս 'ի Մարտիրիայ թէ ընկալայ զհամբաւ 'ի քէն զբարուք ուսանիլն զարհեստիդ. վասն որոյ եւ զփոքր նամակս օրհնութեան առաքեցի առ հոգեւոր որդեակդ իմ Մատթէոս զի բարուք ծառայիցես տեսարն Ոսկանայ արհի եպիսկոպոսի աշակերտի իմոյ, եւ զկնի վախճանի նորա մի ումեք կարօտասցիս՝ այնպես համարեա՛ թէ ինձ ես աշարեալ, որպէս ասէ տէրն: Եւ ևս զքո վարձն հատուցանելոց եմ, եւ եթէ մահ հասարակաց հանդիպի՝ զհետնամնաց նրստող սրբոյն աթոռոյն պարտին հատուցանել»<sup>2</sup>: Ինչպես տեսնում ենք, նրանցից բավական մեծ ջանքեր էին պահանջվում տպարանի աշխատանքները չկասեցնելու և իրենց հիմնական նսլատակների իրագործմանը նպաստող աշխատութիւններ հրատարակելու համար:

Ամստերդամի հայկական դրահրատարակչութիւնն ունեցել է գործունեության երկու շրջան: Առաջին՝ 1660–1669 թթ. ընկած շրջանը կապվում է հայ գրքի տպագրության նահապետ Ոսկան Երևանցու անվան հետ: Ծնված լինելով Սպահանում՝ ծնունդով երևանցի ծնողներից, նա իր ժամանակի կրթված մտավորականներից

<sup>1</sup> Տես «Գիրք անուանեալ Որոգայթ փառաց, վասն կալանատրելոյ ամենայն գործ անկարգութեան», Մադրաս, 1773 (հիշատակարանը):

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 777:

էր, Ուշի վանքի վանահայրը<sup>1</sup>, որին Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը 1662 թ. Եվրոպա ուղարկեց Աստվածաշունչ հրատարակելու նպատակով: Սակայն Ոսկան Երևանցու՝ Եվրոպայում ծախլած տպագրական գործունեութունը շատ ավելի լայն սահմաններ ու կարևոր կողմեր ունեւր Հայ ժողովրդի մշակութային պատմութեան զարգացման, կրթութեան ու լուսավորութեան տարածման համար, քան սուկ հողևոր գրականութեան հրատարակութեանը, թեև սա ևս անկարևոր էր այդ ժամանակաշրջանում օտար բունակալների լծի տակ հեծող Հայ ժողովրդի մեջ իր դիրքն ու գրականութեանը, իր հավատը մշտապես վառ պահելու և դրանով իսկ ազգային ինքնադիտակցութեան արթնացնելու համար:

Տպարանի գործունեութեան երկրորդ շրջանը՝ 1685-1717 թթ., կապված է հրատարակիչ Վանանդեցիների գործունեութեան հետ: Նրանք ազգականներ էին և սերում էին Նախիջևանի Գողթան գավառի Վանանդ գյուղից: Նախ՝ Մատթեոս Վանանդեցին էր եկել Եվրոպա՝ Ոսկան Երևանցու տպարանում գրաշարութեան արհեստ սովորելու: Նա ժամանակի լավագույն գրաշարներից մեկն էր համարվում<sup>2</sup>:

Ամստերդամեան հրատարակիչներին ոչ մեկը մասնադիտորեն նախկինում էր առնչվել գրատպութեան գործին և անվարժ ու ան-

---

<sup>1</sup> Ոսկան Երեւանցու կենսագրությունն առաջին անգամ հրատարակվել է 1669 թ. իր իսկ կողմից, Ամստերդամում, Առ. Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» երկի Ծէ գլխում (մանրամասն տես Միրզոյան Հ., Առ. Դավրիժեցու «Պատմութեան» առաջին հրատարակութեան մասին, «Բանբեր Երեւանի համալսարանի», 1971, N 2, էջ 190-197: Դանեղյան Լ., Առաքել Դավրիժեցու երկը, որպէս Սեֆյան Պարսկաստանի XVII դարի պատմութեան սկզբնաղբյուր, Երեւան, 1978, էջ 32-33): Պետք է նշել, որ Ոսկան Երեւանցու ինքնակենսագրությունը, հանվելով ևետագա հրատարակություններից, շուրջ երեք հարյուր տարի չի արժանացել լիակատար քննական ուսումնասիրութեան, չնայած որ իրենց երկերում նրա գործունեութեան անդրադարձել են Մ. Չամչյանը, Գ. Չարքահանայանը, Մ. Օրմանյանը, Ղ. Ալիշանը, Ա. Ղազիկյանը, Լեոն, Ա. Սարուխանը և ուրիշներ: Ոսկանի ինքնակենսագրությունը 1966 թ. վերահրատարակվել է «Հասկ» եւ «Միոն» ամսագրերում (N 2-4)՝ Աստվածաշնչի հրատարակութեան 300-ամյա հոբելյանին նվիրված բացառիկ համարներում: Նման բացառիկ համարներ են հրատարակել նաեւ «Հանդէս ամսօրեան», «Բազմավէպը» եւ «Էջմիածինը»: Ոսկան Երեւանցուն նվիրված ուսումնասիրություններ են կատարել նաեւ Ռ. Իշխանյանը, Պ. Անանյանը, Կ. Ամատունին, Ս. Ճանճեմյանը, Ա. Գալայճյանը, Մ. Տեր-Ներսեսյանը, Ս. Քոյանջյանը եւ այլք:

<sup>2</sup> Չամչյանց Մ., Հայոց պատմութիւն, հ. Գ, Երեւան, 1984, էջ 661-662, Ալիշան Հ. Ղ., նշվ. աշխ., էջ 340, Միրզոյան Հ., XVII դարի հայ վիճիստփայական մտքի քննական վերլուծություն, Երեւան 1983, էջ 17-18:

փորձ էր: Բացառություն էր կազմում Հայոց կաթողիկոս Յակոբ Զուղայեցուց Ոսկանի գործը շարունակելու հանձնարարություն ստացած Թովմա Վանանդեցին: Նա 14 տարի աշխատանքային գործունեություն է ծավալել գրատպություն ասպարեզում Ոսկան Երևանցու՝ Ամստերդամի և Մարսելի տպարաններում և հանդգնել է իրեն կոչել «գմիակ Բուն Տպագիրն Հայոց»<sup>1</sup>: Ոսկան Երևանցու վախճանից հետո տպարանը փաստորեն նա՝ էր տնօրինում՝ ամեն ջանք գործադրելով նրա գործունեությունը շարունակելու համար: Ղևոնդ Ալիշանը, խոսելով նրա մասին, բարձր է գնահատում վերջինիս հմտությունները գրատպության բնագավառում. «...յոյժ ճարտար եւ աջողակ գտաւ յարուեստին, վարժեալ նախ 14 ամ առ Ոսկանայ, եւ իրաւամբք կոչի «յոգներախտ եւ միակ բուն տպագիր Հայոց»»<sup>2</sup>:

Ղուկաս Վանանդեցին, ուսանելով Հռոմում, հմտացել էր զանազան լեզուների, փիլիսոփայության, աստվածաբանության, աշխարհագրության, տոմարագիտության, քարտեզագրության և բնական այլ գիտությունների ասպարեզում և Ամստերդամ էր եկել որպես ժամանակի զարգացած ու առաջադեմ Հայացքներով օժտված անձնավորություն: Հայտնի է XVII դարի փիլիսոփա, մաթեմատիկոս Լայբնիցի հետ ունեցած նրա նամակագրական կապը<sup>3</sup>: Ղուկասի պատրաստած աստրոլյագիան նախկինում պահվում էր Բյուրականի աստղագիտարանում: Նրան վերագրվող մեկ այլ օրինակ վերջերս հայտնաբերվեց Հայաստանի պատմության թանգարանում: Ղուկաս Վանանդեցին Ամստերդամի հայկական տպարանի գիտական ոգին էր, նրա ամենաարժեքավոր հրատարակություններից շատերի հեղինակը:

Տպարանի գործունեության երկրորդ շրջանը ղեկավարում էր Թովմա Վանանդեցին: Նա Գողթան գավառի Սուրբ Խաչ վանքի եպիսկոպոսն էր, ուսյալ, առաջադիմական, լուսավորական հայացքներով տոգորված, հայրենասեր մի անձնավորություն, որը, բազմիցս լինելով տարբեր երկրներում, նրանց ազդեցիկ միապետներին ու հոգևոր գործիչներին ծանոթացրել է իր հայրենիքի անմխիթար վիճակին և իր ազատագրական ու լուսավորական ծրագրերին, կարողացել

<sup>1</sup> Վանանդեցի Ղ, Բանալի Համատարածի Աշխարհացուցից, Ամստերդամ, տպ. Թովմա Վանանդեցու, 1696:

<sup>2</sup> Ալիշան Հ. Ղ., նշվ. աշխ., էջ 340:

<sup>3</sup> Շրենտեր Յ., Արամեան լեզուին գանձ, Ամստերդամ, 1711, էջ 357, Ալիշան Հ. Ղ., նշվ. աշխ., էջ 340, հմմտ. Միրզայան Հ., XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Երեւան 1983, էջ 17-18:

է ստանալ շատերի բարոյական, հաճախ նաև՝ նյութական օգնութ-  
յունը<sup>1</sup>: Նրան դուր չէին կոչուած «աստուածազգեստ բարունի եւ  
առաքելագործ եպիսկոպոս Սրբոյ Խաչին»<sup>2</sup>:

Ամստերդամի հայկական տպարանի գործունեութեան առաջին  
արժեքավոր նվաճումը 1666 թվականին Ոսկան Երևանցու լույս ըն-  
ծայած Աստվածաշունչն էր՝ «Թարգմանությունների թագուհու»  
չքեղ, նկարագարող, դասանաբանական ու տպագրական անօրինակ  
դժվարությունների ու ջանքերի գնով գլուխ բերված այդ հրատարա-  
կությունը: Ոսկան Երևանցին, իրագործելով Հակոբ Զուղայեցի կա-  
թողիկոսի կամքը, համոզված էր, որ Աստվածաշունչի բազմաթիվ օրի-  
նակներ միայն եկեղեցական ծիսակատարություններին չեն ծառայե-  
լու, որ դրանք կտարածվեն ժողովրդի մեջ, և օտար բռնակալութեան  
տակ հեծող իր հայրենակիցներն իրենց ընտանեկան օջախներում ու  
դպրոցներում մեկ անգամ ևս առիթ կունենան շփվելու հայ գրին ու  
գրքին<sup>3</sup>:

Ամստերդամյան հրատարակությունների մեջ կային նաև այն-  
պիսիները, որոնց տպագրութեամբ, եթե չասենք կորստից փրկվեցին,  
ապա լայն տարածում գտան և ժողովրդի համար մատչելի դարձան  
հայ մշակութի գանձերից շատերը: Խոսքը վերաբերում է «Շարակ-  
նոցներին», որոնց լույսընծայումը մեծ բարդություն է ներկայաց-  
նում այն իմաստով, որ, բացի հայկական տառատեսակների բազ-  
մությունից, Ամստերդամում պատրաստվեցին առաջին տպագիր  
խազերը: Ահա թե ինչպես է բնութագրում այդ հրատարակություն-  
ները երաժշտագետ Ն. Թահմիզյանը. «...Համարձակորեն կարող ենք  
պնդել, - գրում է նա, - թե նրանով (տվյալ դեպքում խոսքը ոսկանյան  
1665 թվականին հրատարակված «Շարակնոցի» մասին է) առհասա-  
րակ մեր շարականի խազագրությունը տպագիր գրքին անցել է, եթե

<sup>1</sup> Տե՛ս Գրիգորյան Մ., Նոր Գիրքեր եւ Ղիտողոսիմներ հրատարակիչ Վանանդեցոց  
մասին, Վիեննա, 1969, փաստաթղթեր Ա, Գ, Զ, Է, ԺԲ, ԺԳ, ԺԴ, ԺԵ, ԺԶ, ԺԷ:

<sup>2</sup> Տե՛ս Ալիշան Հ. Ղ, նշվ. աշխ., էջ 340:

<sup>3</sup> Հայտնի է, որ ոսկանյան Աստվածաշունչի համար որպէս բնօրինակ է ծառայել  
Հեթում Բ (1289-1301 թթ.) քազակորի պատվերով 1295 թ. Կիլիկիայում գրված  
Աստվածաշունչը: Նկատենք, որ ոսկանյան Աստվածաշունչի բնօրինակի խնդիրը  
երկար ժամանակ ճշգրտված չի եղել եւ հայագետների կողմից տարակարծու-  
թյունների առիթ է տվել (այս մասին մանրամասն տես Բաղանջյան Մ., Հեթում Բ-ի  
ձեռագիր Աստվածաշունչը եւ ոսկանյան հրատարակությունը, «Էջմիածին», 1966,  
N ԺԱ-ԺԲ): Մրան հատկապէս նպաստում է այն հանգամանքը, որ ոսկանյան  
հրատարակությունը փոքր-ինչ տարբերվում է Հեթում Բ-ի գրչագիր օրինակից, այն  
տնատված է, այսինքն՝ բաժանված է գլուխների, ըստ լատինական Վուլգատայի:

կարելի է ասել, նվազագույն կորուստներով...: Ոսկան վարդապետը տպագիր առաջին շարակնոցին կցել է նրա օգտագործումը դյուրացնող մի շարք օժանդակ նյութեր ևս, որ և ավանդույթ է դարձել նրանից հետո»<sup>1</sup>: Ցանկանալով հնարավորին չափ ժողովրդին մատչելի դարձնել շարականի արվեստը, Ոսկան վարդապետը նպատակ է հետապնդել ցույց տալ նրան իր հոգևոր մշակույթի հարստությունները և դրանով իսկ հայ մշակույթի, տվյալ դեպքում՝ հայ հոգևոր երգի գեղեցկությունը արմատավորել նրա մեջ:

Պետք է նկատել, որ ամստերդամյան հրատարակությունների 57 տոկոսը հոգևոր գրականություն է, մնացածը՝ աշխարհիկ: Հաշվի առնելով կրոնի ու դավանանքի կարևորությունը՝ միջնադարի համար հայոց աշխարհիկ գրականության ծավալը կարելի է համարել վիթխարի:

Սաղմոսարանները, ժամագրքերը, օրացույցները, քերականությունները, այբբենարանները միտված էին ժողովրդական խավերի մշակութային բարեփոխմանը: Բացի հոգևոր տեքստերից, հայկական տպարանները հրատարակում էին պատմական, աշխարհագրական և գիտական գրքեր: Ոսկանի և ապա Վանանդեցիների տպարաններին ենք պարտական խորենացուն վերագրվող «Աշխարհագրություն», «Պատմության», Այգեկցու առակների, Դավրիժեցու «Պատմութեան» հրատարակությունները:

1668 թվականին Ոսկան Երևանցին հրատարակում է «Գիրք աշխարհաց և առասպելաբանութեանց որ է Աղուեսագիրք» երկը: Սա մի փոքրադիր գրքույկ է, որի մեջ ամփոփված են Անանիա Շիրակացուն վերագրվող «Աշխարհացույցը» և Վարդան Այգեկցու «Աղուեսագիրքը»:

«Աշխարհացույցի» հեղինակը, որն օգտվել է անտիկ շրջանի աշխարհագրական ավանդույթներից, ճշգրտելով ու նորացնելով ընդունված սահմանները, առավել հանգամանորեն է անդրադառնում Մեծ ու Փոքր Հայքերի, հարևան երկրների պատմաքաղաքական սահմաններին, աշխարհագրական ու բնակլիմայական առանձնահատկություններին, բուսական ու կենդանական աշխարհին: Այս գիրքը ճանաչողական մեծ նշանակություն է ունեցել պատմական Հայաստանն ուսումնասիրելու առումով: Գրքի հրատարակությունը,

<sup>1</sup> Թանիզյան Ն., Ոսկան վարդապետն ու խազագրության արվեստը, Էջմիածին, 1966, N ԺԱ-ԺԲ, էջ 163:

որպես հայ մատենագրական հուշարձանի տպագրութեան առաջին փորձ, նշանակալից էր ու կարևոր:

Վարդան Այգեկցու «Աղուեսագիրքը» ժողովրդական առակների, լեգենդների, խրատական գրույցների մի գողտրիկ հավաքածու է, որը մինչև օրս չի կորցրել իր բարոյախրատական, դաստիարակչական նշանակութունը: Նկատենք, որ Ոսկանը Այգեկցու «Աղուեսագրքի» առաջին հրատարակիչն է եղել<sup>1</sup>:

1669 թվականին Ոսկան Երևանցին Ֆրանսիացի ուսումնասիրող Լահրուայի օգնությամբ գրաբարից լատիներեն է թարգմանել Կորյունի «Վարք Մաշտոցի» երկասիրութունը: Այս թարգմանութեամբ (ի դեպ, այն «Վարքի» համառոտ, խմբագրված օրինակի թարգմանութունն է)<sup>2</sup> Ոսկանն օտար ընթերցողին ծանոթացնում էր Վ դարի Հայաստանում կատարվող քաղաքական ու մշակութային անցքերին և, մանավանդ, Կորյունի լեզվով ներկայացնում հարուստ պատմական անցյալ ունեցող իր ժողովրդին, իր ազգին՝ որպես հնագույն քաղաքակրթության ու բազմադարյան մշակույթի կրողի:

Նույն տարին հրատարակվում է Առաքել Դավրիժեցու «Գիրք Պատմութեանց» աշխատութունը: Հայ մատենագրութեան մեջ սա առաջին երկն էր, որ տպագրվում էր հեղինակի կենդանության օրոք: Այն ընդգրկում է 1602-1662 թվականների պատմական իրադարձութունները: Դավրիժեցին արժեքավոր տեղեկութուններ է հաղորդում Հայաստանում XVII դարի առաջին կեսին թուրք-պարսկական երկարատև պատերազմների հետևանք հանդիսացող կոտորածների ու ավերածութունների մասին, անդրադառնում Շահ Աբասի կազմակերպած բռնազաղթին, այդ ժամանակաշրջանում հայերի տնտեսական ու սոցիալական ծանր վիճակին: Աշխատութունը կարևորագույն սկզբնաղբյուր է ոչ միայն Հայաստանի, այլև կայսրութեան, Սեֆյան Պարսկաստանի, Շիրվանի, Վրաստանի XVII դարի առաջին կեսի պատմության: Դավրիժեցու «Պատմութունը» ցարդիական էր և ճանաչողական մեծ նշանակութուն ուներ:

<sup>1</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Մարր Н., Сборник притч Вардана. Материалы для истории средневековой армянской литературы. СПб, ч. 1, 1867, § 91, с. 98-100.

<sup>2</sup> Լատիներեն թարգմանությունը պահվում է Փարիզի Վգգային գրադարանում՝ Nouv. Acq. lat., 2083 (Supl. Arm. 85): Այս մասին մանրամասն տե՛ս Անանյան Հ. Պ., Ոսկան վարդապետի լատիներեն թարգմանությունը «որինի» «Լարք Ս. Սեբրուպայ» համառոտ պատմության, «Բազմավեպ», 1966, N ~10, էջ 273-274:

Ոսկանի կողմից տպագրության պատրաստված Առաքել Դավրիժեցու ձեռագիրը<sup>1</sup> վկայում է հրատարակչի կատարած հսկայական խմբագրական և գրաքննական աշխատանքի մասին: Բացի այն, որ Ոսկանը բազմաթիվ վերնագրեր է փոփոխության ենթարկել, էջագրումն է փոխել, կա նաև մի այլ հետաքրքրական հանգամանք, որ խոսում է հրատարակչի կողմից Դավրիժեցու պատմական երկը ներքին գրաքննության ենթարկելու փաստի մասին: Նա Դավրիժեցու տեքստից դուրս է թողել Օսմանյան կայսրության հին և իր օրերի պատմության որոշ էջեր: Ոսկանի հրատարակության մեջ բացակայում է Դավրիժեցու կողմից սուլթաններին վիշապօձերի տեսքով պատկերող ծաղրանկարը: Հոլանդիայի և Օսմանյան կայսրության միջև 1612 թ. կնքված առևտրական պայմանագիրը մեծ նշանակություն ուներ երկրի տնտեսական կյանքում: Ուստի նման հրատարակությունը կարող էր լրջորեն վտանգել մեծ ջանքերի գնով տպագրական գործունեություն իրագործող հայ մշակների գործը, գուցե նույնիսկ տպարանի գոյությունը<sup>2</sup>:

1666 թվականին Ոսկան Երևանցու կողմից հրատարակվում է «Այբբենարան եւ Քրիստոնէականի գիրքը» «...յաղագա նորեկ տղայոց եւ մանկանց անկրթից ... նաեւ արանց դեռ եւս ոչ ուսելոց, զրոց լիցի օժանդակ հասանիլ ի կատարումն կրթութեան եւ ի վարժումն ճահապէս ընթերցողութեան...»: Նույն տարում հրատարակվել է «Քերականութեան գիրքը», որը Սիմեոն Ջուղայեցու եւ Կղեմես Գալանոսի (1645 թ.) քերականական երկերից հետո հարստացրեց մեզ լեզվի ուսումնասիրության շրջանակները եւս մեկ տպագիր ձեռնարկով: (Նշենք, որ Ջուղայեցու «Քերականութիւնը» ձեռագիր վիճակում էր: Այն գրվել է 1637 թվականին եւ հրատարակվել միայն 1725 թվականին Կոստանդնուպոլսում)<sup>3</sup>: Բավական է անդրադառնալ քերականության մասին Ոսկանի սահմանմանը, իմանալու համար, թե ինչպիսի գիտական մոտեցում է ցույց տալիս նա այդ բնագավառին. «Քերականութիւն է հմտութիւն գործիական մարդկայնոյ քաղաքականութեան, բանականաբար ասելոյ, որեւ գրելոյ՝ զոր ինչ

<sup>1</sup> Վիեննայի Մխիթարեան Մատենադարան, ձեռ. քիւ 137:

<sup>2</sup> Այս մասին տես Միրզոյան Հ., Մի ցկարի պատմություն, «Էջմիածին», 1999, N 2, էջ 190-197:

<sup>3</sup> Այս մասին մանրամասն տես Միրզոյան Հ., Միմեոն Ջուղայեցի, Երեւան, 1971, էջ 37-46: Միրզոյան Հ., Միմեոն Ջուղայեցի եւ Ոսկան Երեւանցի, «Բանբեր Երեւանի համալսարանի», Երեւան, 1978, N 3:

մտօք առնուձք պարզապէս իւրաքանչիւրոյ իրի ծանօթութիւնս: ...Ենթակայ քերականութեան է. ասացման եւ գրման պատշաճութիւն եւ յարմարաւորութիւն»<sup>1</sup>:

Ոսկանի «Քերականութեան դիրքը» որոշ հայագետներին ու լեզվաբաններին շրջանում լուրջ վեճերի առիթ է տվել որպէս լատինաբան քերականութիւն<sup>2</sup>: Ոսկանն իր գրքի հիշատակարանում նշում է, որ քերականութիւնը ոչ թե իր ստեղծագործութիւնն է, այլ, ժամանակակից տերմինով (եզրույթ) եթե ասենք, «կաղապարված» է լատինական քերականութիւնից. «...աշխատեալ թարգմանեցի ի բարբառոյ դաղմատացւոցն ի հայս...»: Սակայն պետք է նշել, որ Ոսկանն այս քերականութիւնի մեջ առաջ է քաշել հայերենին հատուկ մի շարք սահմանումների նոր ընկալումներ, որոնք առավել հետաքրքիր են դարձնում երկը, որպէս XVII դարի կիրառական լեզվաբանութիւնի նմուշ<sup>3</sup>:

Նշենք նաև, որ վերոհիշյալ երկու հրատարակութիւններով Ոսկան Երեանցին սկիզբ դրեց հայ աշխարհիկ գրականութիւնի պարբերական տպագրութիւնը:

1695 թ. Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» հրատարակութիւնը է սկսում իր ամստերգամյան դործունեութիւնը Թովմաս Վանանդեցին: Հրատարակութիւն «Առ համայն ընթերցողս Հայաստանեայց» հատվածում նա գրում է. «Քաջավարժից եւ հմտագունից, հարց եւ եզրարց ուսումնասիրաց բացայայտութիւն սակաւուք, սակս առաջիկացելոյ գրոյս, Առնս մեծի Մօսէսի Խորենացւոյ. զորոյ զգտանելն, ամենուրեք սուղ՝ եւ պակաս, որպէս պարզագոյն է բանասէր տեսողաց: Ուստի եւ իմ նայելով յայսպիսի աղէտ անբերելի, բարևք վարկայ տպագրել թուովք նուազիւք, վասն անձեռնտու գոյոյ տեղւոյս. քանզի յարուցմունք պատերազմաց՝ եւ հեղմունք անբաւից արեանց. սասանեցուցին զբնաւ՝ եւ զբոլոր կալուածս Եւրօպայոյ, որք միշտ հնչեն՝ եւ դոչեն յունկն լսողաց ամենեցուն: Ուստի ես անպիտան, ունայն, եւ թափուր յամենից լաւաց՝ եւ օգտակարաց, Թօմաս ծառայ ծառայից Աստուծոյ. ՚ի վայելուչ քաղաքէ Վանանդու Գողթնեաց, ձեռնամուխ եղեալ տպեցի զչքնաղավէպ՝ եւ

<sup>1</sup> Ոսկան Երեանցի, Քերականութեան գիրք, Ամստերդամ, 1666, էջ 3:

<sup>2</sup> Այս մասին մանրամասն տես Տեր-Ներսիսյան Ն., Ոսկան վարդապետի քերականական ըմբռումները, «Բագմամպէս», 1966, N 9-10, էջ 310-321:

<sup>3</sup> Այս մասին մանրամասն տես Մխիթարյան Հ., Ոսկան Երեանցին իրեն քերականագետ, «Էջմիածին», 1966, N ԺԱ-ԺԲ, էջ 210-216:

զգեղեցկաչար Պատմութիւնս, նախնեաց մերոց, եւ Հայկազունեաց տոհմի, համեղ՝ եւ ախորժալուր ոճիւ»:

Վանանդեցին, անշուշտ, գիտակցում էր հատկապես Խորենացու երկի տպագրութեան կարևորութիւնն իր ժողովրդի համար ե՛ւ որպէս հայ մատենագիտութեան կոթողային արժեք, ե՛ւ որպէս հայոց պատմութեանը վերաբերող գիտաքննական առավել արժեքավոր աշխատութիւն, ե՛ւ վերջապէս, որպէս ազգի անցյալն ուսումնասիրելու լիակատար ուսումնական ձեռնարկ: Վանանդեցին նպատակ ունէր հայ ժողովրդին ցույց տալ իր տեղը համաշխարհային պատմութեան քառուղիներում, նշել, թե որտեղից է ինքը սերում և ինչ է ներկայացնում իրենից թե՛ քաղաքական և թե՛ մշակութային տեսակետից, և որքանով է արդարացւում նրա պայքարն իր գոյութիւնը պահպանելու ուղղութեամբ: Ինչպէս Մ. Գրիգորյանն է նշում. «Թողմաս տպագրահայրը կը խորհէր ազգային ոգիով ու հպարտութեամբ ջրդեղել գիտակցութիւնը իւր հայրենակիցներուն, որոնք կը տառապէին տգիտութեան ու բռնակալութեան ներքեւ»<sup>1</sup>:

Ամստերդամի հայկական տպարանի ծավալած գործունեութեան մյուս ոլորտը նոր սերնդի կրթութեան, ժողովրդի մեջ լուսավորութեան տարածման նպատակի իրագործումն էր: Ե՛ւ Ոսկան վարդապետը, ե՛ւ Վանանդեցիներն այս խնդրին մոտեցել են ամենայն պատասխանատվութեամբ և ամեն ջանք գործ են դրել այն իրենց ապրած ժամանակին համապատասխան մակարդակով իրագործելու համար: Նրանք քաջ գիտակցում էին, որ այս նպատակի իրագործման համար անհրաժեշտ է ունենալ գիտաքաղաքական լուրջ պատրաստվածութիւն:

Այս կապակցութեամբ Ա. Հովհաննիսյանը գրում է. «Մի հայտնի չափով տպագիր գիրքը պիտի գիննր ընթերցողին մտավոր այն միջոցներով, որոնք անհրաժեշտ էին նրանց գիտակցութիւնը կաշկանդող խավարը ցրելու եւ նրանց ազատութիւնը ճնշող բռնակալութեան լուծը խորտակելու համար: Ինչպէս առաջներում՝ Որոտնեցու եւ Տաթևացու ժամանակ, Հիմա եւս հայադավան եկեղեցու առաջավոր մարդիկ ձգտում էին տիրանալ գիտութեան եւ ուսուցման գեներելին՝ եկեղեցու եւ ազգի հարատեւութիւնն ապահովելու նպատակով»<sup>2</sup>:

<sup>1</sup> Գրիգորյան Մ., նշվ. աշխ., էջ 26:

<sup>2</sup> Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, Երևան, 1959, էջ 171, 172:

Թովմա Վանանդեցու թղթերի մեջ գտնում ենք նրա գերագույն նպատակն արտահայտող հետևյալ խոսքերը. «Իմ պատանեկութունից սկսած ես միտք եմ ունեցած իմ թեմում մի լատինահայկական դպրոց հիմնել: Այս նպատակով Պարսկահայաստանից Եվրոպա բերել տուի իմ ազգական երեք պատանի (խոսքը Մատթեոս, Ղուկաս եւ Միքայել Վանանդեցիների մասին է — է. Թ.), որպեսզի նրանցից երկուսը ընտիր ուսումով եւ բարքով կրթուին, իսկ միւսը տպագրական արուեստին հմտանայ: Տպարանը անհրաժեշտ էր իմ ծրագրած դպրոցին զրեանք հասցնելու համար: Այս երիտասարդներն եկան եւ լիովին իրականացրին իմ սպասածը: Այժմ մնում է, որ նրանք էլ հնարավորութիւն ունենան կրթել մեր այն թշուառ քրիստոնեաներին, որոնք գտնւում են խավարի մեջ եւ ապրում են բռնակալական լուծի տակ»<sup>1</sup>:

Այն հանգամանքը, որ հայկական տպարանները շուրջ կես դար գործել են ժամանակի տնտեսական, դիտամշակութային ու լուսավորական այնպիսի մի կարևոր կենտրոնում, ինչպես Հոլանդիայի մայրաքաղաքն էր, մեծ չափով նպաստել է ե՛ւ Ռսկան Երևանցու, ե՛ւ Վանանդեցիների լուսավորական, հասարակական-քաղաքական հայացքների, գիտական-փիլիսոփայական ըմբռնումների ձևավորմանը:

Կրթական-լուսավորական բնույթի կարևորագույն հրատարակութուններից էր նաև «Համատարած Աշխարհացոյցը», որը նախատեսված էր Թովմաս Վանանդեցու կողմից Հայաստանում հիմնվելիք կրթօջախներում սովորող երիտասարդների համար: Հաջորդ, 1696-ին հրատարակված «Բանալի համատարածի աշխարհացոյցին մերոյ նորածնի» աշխատության «Առ Հայկասեռ ընթերցողս» գլխում հեղինակը նշում է. «Եկեղեցականաց, ոչ քնափից՝ ասեմ, ոչ թուլամտից՝ կամ, ուսումնատէից. այլ՝ քաջամտաց, ուսումնասիրաց՝ արթուն, Իզուարթուն արանց, որքան օգտակար, եւ ձեռնտու իցէ՝ ծանօթութիւն այսր արնուականի Գիտութեան՝ վասն դիտահասութեան՝ Սուրբ, եւ Արտաքին Գրոց, նոցին ինքեանց ուշիմութեանն թողցուք՝ դատել՝ եւ դարակել»<sup>2</sup>:

<sup>1</sup> Բարձրագույն ուսումնարանի ստեղծման Թ. Վանանդեցու թղթի հրատարակությունը (լատիներեն) տես Գրիգորյան Մ., նշվ. աշխ., փ. 1-րդ, 106-107 Մենք օգտագործել ենք փաստաթղթի համառոտ քարտեզային տես Մարտիան Ա., Բելգիա եւ հայերը, Վիեննա, 1937, էջ 145-146: Այս մասին տես նաև Vanerius J., Note sur une imprimerie Arménienne établie a Amsterdam en 1695, Kévue des bibliothèques et archives de Belgique, fasc. 4 Bruxelles, 1906, p. 313-314.

<sup>2</sup> Վանանդեցի Ղ., Բանալի համատարածի աշխարհացոյցին մերոյ նորածնի, Ամստերդամ, 1696, էջ 2:

Չսփազանց մեծ էր նաև «Աշխարհացոյցի» կիրառական նշանակութիւնը: Այն աշխարհագրական իր ստույգ ճշգրտութեամբ լավ նվեր էր հայ վաճառականներին: «Բայց՝ եւս քան զեւս՝ առավելապէս պիտանանայ վաճառականաց՝ մանաւանդ հայկազարմից, որք ի մէջ Ասիական՝ եւ Արեւելական ազգաց, այսու գոնեա անուամբ փառաւորք՝ եւ հնարագէտք երեւին, զի յամենայն ազգաց ընդունելիք, եւ յոչ սակաւուց սիրելիք. ընդ ամենայն աշխարհ զանքոյթ երթեւեկութիւն ունելով՝ զամենայն երկիր առ ոտն հարելով յաճախեն: Վասն որոյ՝ ոչ ընդվայր աշխատիմք, ի շահ՝ յօգուտ մերազնեացդ. ի լոյս ածելով զՀամատարած Աշխարհացոյցն՝ հայկական տառիւ եւ բառիւ սուլեցեալ»<sup>1</sup>:

Վասնառեցիները, ձեռնարկելով «Համատարած Աշխարհացոյց» հրատարակելու գործը, դրան մոտենում էին ամենայն պատասխանատվութեամբ: Հայ վաճառականների գործունեութիւնն այնպիսի ծավալուն չափեր էր ընդունել XVII դարում եւ ընդգրկում էր այնպիսի հեռավոր երկրներ, որ նրանց համար առաջին անհրաժեշտութեան առարկա էր ձեռքի տակ ունենալ առավել նոր, հանգամանալից ու ճշգրիտ քարտեզ, որտեղ անսխալ նշված լինեին հեռավոր ու մոտիկ երկրների սահմանները, ծովային ու ցամաքային ճանապարհները և այլն:

«Համատարած Աշխարհացոյցը», որի հեղինակը Ղուկաս Վասնառեցին էր, հակառակ ժամանակին ընդունված կարգի, ոչ թե մի այլ քարտեզի պարզ արտատպութիւնն էր, այլ արդյունք էր ժամանակի Բամաշխարհային գիտութեանը հայտնի համեմատաբար ճշգրիտ բազմաթիվ քարտեզների, նույնիսկ դեռևս գիտական շրջանառութեան մեջ չգրված աշխարհագրական ամենաթարմ նյութերի գիտական, քննական խստապահանջ համադրութեան<sup>2</sup>: Այն տասնամ-

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Այս մասին մանրամաս տես Խաչատրյան Մ., Հայ եւ ռուս քարտեզագրության կապերը 17-րդ դարում, «Պատմա-քանասիրական հանդես», 1966, N 2, էջ 188: Rooy S. van, Oldest printed Armenian World Map appeared in Amsterdam in 1695, "New Orient", Prague, 1968. N 1, «Բանբեր Երեսօճ համալսարանի», 1971, N 1, էջ 187-192:

Պետք է նշել նաև, որ համարյա հոյն տարիներին Սկոնբերկ եղբայրների մոտ, որտեղ փոյագրվել են «Համատարած Աշխարհացոյցի» տախտակները, փորագրության սրվեստի մեջ հմտանալու նպատակով սովորել է նաև Պետրոս Առաջինը: Նրա նախածոնությամբ 1699 թ. Ամստերդամում հրատարակվում է կիսագնդերի քավական ծավալուն մի քարտեզ՝ «Աշխարհի զորութի պատկերացոյց» վերնագրով, որը, ըստ Մ. Խաչատրյանի իրավացի եզրակացության, որպես նախատիպ

յակներ շարունակ ծառայել է որպես ուսումնական ձեռնարկ և կրթել բազմաթիվ սերունդներ: Նրանով աշխարհագրություն են սովորել ոչ միայն Հայ ուսանողները, այլև օտարազգիները, քանի որ իր հրատարակութունից բավական հետո էլ «Աշխարհացույցը» շարունակում էր արտատպվել օտարալեզու ձեռնարկներում<sup>1</sup>:

Միանգամայն իրավացի էր Լևոն, երբ գրում էր. «...Միայն այս մեծագործութունը բավական էր թովմաս Վանանդեցու և և նրա ընկերների անունները երախտապարտութեան և անմոռաց հիշատակութեան արժանացնելու, միայն այսքանը բավական է, որ Նուրիջանեանների տոհմը Ոսկան վարդապետի ետեւից դասեր լուսաւորինչների թւում»<sup>2</sup>:

Ուշագրաւ է Ս. վան Ռոյի նկատառումն այն մասին, որ «...եթե Հայ ժողովրդի ազատագրութեան ծրագրի իրականացման քաղաքական-գիւլանագիտական բեռն իր ուսերին էր կրում Խարայել Օրին, ապա մշակութային մասն իրականացնում էր թովմաս Վանանդեցին իր համախոհ-գործակիցներով»<sup>3</sup>:

Հաջորդ տարի՝ 1696 թ., հրատարակվում է «Բանալի համատարածի աշխարհացուցին մերոյ նորածնի» աշխատությունը, որը Հանրահայտ քարտեզի տրամաբանական շարունակությունն էր, նրա հանգամանալից բացատրագիրը: Առանձին գլուխներով մանրամասն ու գիտական բարձր մակարդակով Ղուկաս Վանանդեցին սահմանում ու բացատրում է այնպիսի աշխարհագրական հասկացություններ, ինչպիսիք են հասարակածը, միջօրեականը, արևադարձը, բեռները, կլիմայափոխությունը, աշխարհագրական լայնությունն ու երկարությունը: Գրքում զետեղված է աշխարհի մայրաքաղաքների ու առավել նշանավոր քաղաքների (հատկապես առևտրական մեծ կենտրոնների) ամբողջ մի ցուցակ: Այստեղ ֆրանսիական, իտալական արևելյան քաղաքների կողքին բավական հանդամանոր<sup>4</sup> տրվում են Մոսկվայի, Աստրախանի, Կազանի, Արխանգելսկի՝ աշխարհագրական դիրքերը:

---

ունեցել է Վանանդեցիների հրատարակած «Աշխարհացույց» (նշվ. հոդվածը, էջ 190-192): Այս մասին տե՛ս նաև Կարինյան Ա., Ակնար՝ մի եայ պարբերական մամուլի պատմության, Երևան, 1956, էջ 464-465:

<sup>1</sup> Պապեսեան Հ., Աշխարհի ամենագեղեցիկ քարտեզայրերն լեզուով, «Յոսաբեր», Գահիրե, 1944, 9 դեկտեմբերի:

<sup>2</sup> Լեոն, Հայկական տպագրություն, Երկերի ժողովածու, հ. V, Երևան, 1986, էջ 297:

<sup>3</sup> Rooy S. van, նշվ. աշխ.:

«Համատարած աշխարհացույցը» և նրա «Բանալին» բարձր են գնահատվել նաև ժամանակին: Իրա վառ ապացույցն այն է, որ «Աշխարհացույցի» գիտական արժեքների համար 1699 թվականին Ղուկաս Վանանդեցին պարգևատրվել է Հոլանդիայի աշխարհագրական ընկերության հատուկ պատվոգրով<sup>1</sup>: Իսկ 1707 թվականին Անգլիայում նրան շնորհվել է Արվեստների Մագիստրոսի պատվավոր կոչումը<sup>2</sup>:

Առհասարակ, բնական գիտություններին վերաբերող Վանանդեցիների հրատարակություններն առաջնակարգ ուսումնական ձեռնարկներ էին հայ ուսանողության համար: Թվե՞նք դրանցից մի քանիսը:

1698 թ. հրատարակված «Համաձայնութիւն Հնգետեսակ ամսոց Հռոմայեցոց, Ազարիայի, Հայոց, Հրէից եւ Տաճկաց» գիրքը նախ և առաջ տոմարագիտական ձեռնարկ է, այստեղ Ղուկաս Վանանդեցին հրատարակում է 1616 թ. Ազարիա Ջուղայեցու կողմից ստեղծված և հայկական գաղթօջախներում (նոր Ջուղա, Հնդկաստան և այլն) լայն տարածում գտած հայկական տոմարը՝ համեմատելով այն չորս այլ տոմարների հետ: Ղուկաս Վանանդեցու կազմած տոմարագիտական տախտակները XVII դարի հայ տոմարագիտության անհերքելի նվաճումն են և զուր չէ, որ որոշ փոփոխություններով դրանք հետագայում բազմիցս հրատարակվել են:

Հաջորդ՝ 1699 թ. հրատարակվում է նշանավոր «Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ և դրամից բոլոր աշխարհի» աշխատությունը, որը, բազմաթիվ հետաքրքրական տեղեկություններ հաղորդելով XVII դարի առևտրական հարաբերությունների, տարբեր երկրների չափալին, կշռալին և դրամական միավորների ու նրանց հարաբերակցության մասին, բավական ուսանելի նյութ է պարունակում նաև մի շարք ժողովուրդների էթնիկական ինքնագիտակցության, սովորությունների, ազգային լեզուների, կրոնների վերաբերյալ:

Այդ փոքրածավալ աշխատությունը, որ վաղուց ի վեր գրավել է Համաշխարհային տնտեսական հարաբերությունների պատմության մասնագետների ուշադրությունը, նրանց իսկ բնորոշմամբ

<sup>1</sup> Խաչատրյան Մ., Հայ և ռուս քարտեզագրության կապերը 17-րդ դարում, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, N 2, էջ 188: Հմմտ. Хачатрян М., Карта мира Гукаса Ванандеци, "Вестник Ереванского Университета," 1971, N 1(13), с. 187-192.

<sup>2</sup> Գրիգորյան Մ., նշվ. աշխ., էջ 74:

«ակնհայտ է դարձնում Հայ վաճառականների դործունեության հաղթարշավը»<sup>1</sup>:

Դրանով Ղուկաս Վանանդեցին նպաստում ու դյուրացնում էր Հայ վաճառականների ելումուտը Եվրոպայի ու Արևելքի երկրներ: Գրքում նշվում էին այն շուկաները, որտեղ Հայ վաճառականները եկամտաբեր առևտուր կարող էին անել և որտեղ մեծ պահանջարկ ունեին Պարսկաստանից կամ Օսմանյան կայսրությունից բերված ապրանքները և այլն<sup>2</sup>:

Ինչպես ֆրանսիացի ճանաչված պատմաբան Ֆերնան Բրոդելն է նշում. «Տեղեկատվության այս ահռելի ծավալի մեջ, որն արժանի է ավելի հանգամանալից վերլուծության հե առավել մանրակրկիտ ուսումնասիրության, ամենահետաքրքրականը ամենատարբեր եւրոպական քաղաքների կյանքի ինքնարժեքի համեմատական ուսումնասիրությունն է, ինչպես նաև զանազան հանելուկներով լի Աֆրիկայի նկարագրությունը՝ Եգիպտոսից մինչև Անգոլա, Մոնոմոտապից մինչև Չանգիբար: Հայերի առևտրական աշխարհի մասին այդ փոքրիկ գրքուկը դեռևս նրանց հեքիաթային հաջողությունների բացատրությունը չի տալիս»: Սակայն, ինչպես նկատում է Ֆ. Բրոդելը, պատկերացում է տալիս նրանց առևտրական համաշխարհային ցանցի վերաբերյալ և այն ճանապարհների, որոնցով Հայ քարավանբաշխների գլխավորությամբ ուղտերի քարավանները իրար էին կապում և իրենց ձեռքում էին պահում «երկու հսկայական արենաները՝ ոչ ավել, ոչ պակաս՝ Արևելքն ու Արևմուտքը»<sup>3</sup>: Գրքի վերջում զետեղված է թվաբանական խնդիրների մի փոքրիկ հավաքածու՝

<sup>1</sup> Бродель Ф., Материальная цивилизация, экономика и капитализм, XV–XVIII вв. т. 2, Игры обмена, М., 2007, с. 141–143. Տե՛ս նաև Kévonian K., Marchand Arméniens au XVII siècle, «Cahier du monde russe et soviétique», 1975. Հմմտ. Les Arméniens dans le commerce asiatique au début de l'ère moderne, (sous la direction de Chaudhury S. et Kévonian K.), Paris, 2007.

<sup>2</sup> Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս աշխատությունը գրելիս Ղ Վանանդեցին օգտվել է XVII դարի հեղինակ Կոստանդ Ջուդայեցու «Աշխարհաօղորվից» (1687 թ.): Այս մասին տե՛ս Խաչիկյան Լ., Le registre d'un marchand Arménien en Perse, en Inde et au Tibet (1682–1693), Annales, Economies, Societes, Civilisations (Extrait du N 2, Mars, Avril), Paris, 1967, p. 266. Սիրզոյան Հ., Եզվ. աշխ., էջ 64, Թաշիրյան Է., Ղ Վանանդեցու «Գանձ չափոյ, կշոյ, թոտյ, եւ դրամից բոլոր աշխարհի» աշխատության հայկական աղբյուրների հարցի շուրջ, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների 19-րդ նստաշրջանի գեկուցումների թեզիսներ, Երևան, 1985, էջ 6–7:

<sup>3</sup> Бродель Ф., Եզվ. աշխ., էջ 144:

վաճառականների մտավոր կարողութունները մարզելու նպատակով:

1700 թ. հրատարակված «Ոսկեայ դուռն դպրատան» աշխատությունը, որը նախատեսված էր ցածր տարիքի աշակերտության համար, ուսուցանում էր հայկական այբուբենը, տարրական հնչյունաբանությունը ու քերականական կանոնները, խոսքի մասերը, սովորեցնում էր թվաբանական գործողությունները, հարց ու պատասխանի միջոցով լուծում զանազան խնդիրներ ու վարժություններ: Երեխաները ծանոթանում են բարոյական հասկացության տարրական նորմերին:

«Բնաբանութիւն իմաստասիրական կամ տարերաբանութիւն» (1702 թ.) ուսումնասիրության մեջ Ղուկաս և Մատթեոս Վանանդեցիներն իրենց «բանասէր» եղբայրներին և ուսումնաստնչ հայրենակիցներին հանգամանորեն ծանոթացնում են ֆիզիկայի, քիմիայի, երկրաբանության բնագավառներում եվրոպական դիտնականների ձեռք բերած նվաճումներին:

Եվրոպայում բախվելով հայկական մայրատառերի ստեղծման բարդ խնդրին՝ տպագրական հարուստ ինդուստրիայով հայտնի բոլոր հայ գրահրատարակիչները հայկական հրատարակչական գործընթաց ներգրավեցին հանրահայտ տառաստեղծ և փորագրիչ մասնագետների՝ Քրիստոֆել վան Դիյկին (Էլզեվիրների դպրոցի հանրահայտ տառաստեղծը) («Փունտիկ Քրիստոֆլու ... ազգավ ալաման»), Նիկոլայուս կամ Միկլոշ Կիշին (հունգար. - Մատթեոս Վանանդեցու տպարանի տառաստեղծը)<sup>1</sup>, Քրիստոֆել վան Զիխեմին, Ադրիան Սկոնեբեկին, որոնց զարդափորագրությունները հսկայական դեր ունեցան հայ գրահրատարակչական հետագա գեղարվեստական ոճավորման վրա:

Հետաքրքիր է նշել նաև ամստերդամյան որոշ հրատարակությունների (որոնց մասին նշվում է հիշատակարաններում) տպագրականները:

1. 5000 օրինակ (°) - «Աստուածաշունչ» (1666-1668),
2. 3000 օրինակ - «Ժամագիրք» (1662-1663),
3. 2700 օրինակ - «Սաղմոսարան» (1661-1662),
4. 1500 օրինակ - «Սաղմոսարան» (1714-1715),

<sup>1</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Шуй Одон, Заслуги знаменитого венгерского гравёра перед армянской культурой в конце XVII в., «ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1957, N 3, էջ 119-120:

5. 1200 օրինակ - Ներսես Շնորհալի, «Յիսուս Որդի» (1660-1661):

Տպագրանակների վրա, ամենայն հավանականությամբ, մեծ ազդեցություն են թողել ժամանակի քաղաքական անցողարձը, տնտեսական ճգնաժամերը: Ակնառու է Թովմաս Վանանդեցու հիշատակությունը 1695-ին. «...բարևոք վարկայ տպագրեալ թուովք նուազիւք, վասն անձեռնտու գոլոյ տեղւոյս, քանզի յարուցմունք պատերազմաց՝ եւ Հեղմունք անբաւից արեանց, սասանեցուցին զբնաւ՝ եւ զբոլոր կալուածս եւրոպայու» [Մովսէս Խորենացի, «Պատմութիւն Հայոց» (1695)]:

Համեմատության համար նշենք, որ 500–800 տպագրանակը հիմնականն էր Նոր Նախիջևանի Խալդարյան տպարանում<sup>1</sup>:

Նոր ձևավորվող հայկական գրավաճառական շուկայի սլոտենցիալ թիրախային սեգմենտները մոտավորապես հետևյալ կառուցվածքն ունեին՝

1. Դասագրքեր և այլ հոգեչափ հրատարակություններ՝ հասցեագրված մանուկ սերնդին, առանձին դեպքերում նաև չափահաս ոչ ուսյալ տղամարդկանց.

– «Տանս Հայոց վասն մանկացն, որ օրհնեն ըզՅիսուս միշտ անունն նորայ ցնծութեան» [Շնորհալի, «Յիսուս Որդի» (1660–1661)]:

– «Վասն վարժման մանկանց տղայոց եւ կուսից աղջկանց, այլ եւ արանց եւ կանանց առ հասարակ, ընթերցման եւ ուսման սիրողաց եւ հետեւողաց...» [Կարապետ Ազրիանացի, «Այբբենարան» (1662)]:

– «Յաղազս նորեկ տղայոց՝ եւ մանկանց անկրթից. նաեւ արանց դեռեւս ոչ ուսելոց: ...Յաղազս վարժութեան տհասից» [«Այբբենարան եւ քրիստոնէական» (1666)]:

– «Յաղազս մանկանց եւ նորավարժից կրթութեան» [«Բերականութիւն» (1666)]:

– «...Վասն նորեկ դեռակիրթ եւ խակավարժ մանկանց Հայկազունեաց» [«Ոսկեայ դուռն դպրատան» (1699–1700)]:

2. Հոգևոր գրականություն՝ հոգևորականների և հասարակության ավելի լայն շերտերի համար.

– «...քանզի ... Հայելով ի նուազութիւն Աստուածայնոց կտակարանաց որ ի մէջ ազգիս Հայոց... մանաւանդ վարդա-

<sup>1</sup> Բարխուդարյան Վ. Բ., Ռուսահայերի առաջին տպարանը, «Պատմա-քանասիրական հանդես», 1967, N 4:

պետաց՝ եւ վանականաց՝ եւ գրոց աշակերտաց» [«Աստուածաշունչ» (1666–1668)]:

– «...ի պէտս եկեղեցեաց Հայաստանեայց» [«Ժամագիրք» (1686)]:

– «...ի ընթերցումն Աստուածասիրաց. արանց եւ կանանց» [«Սաղմոսարան» (1661–1662)]:

– «...վասն հանուրց հասարակաց հայազանց սեռից եւ լուսաւորչական հօտից» [«Ժամագիրք» (1662–1663)]:

**3. Մասնագիտական գրականութիւնն՝ նախատեսված սոցիալական առավել նեղ շերտերի համար.**

– «ի յօգուտ մերազնեայ Բանասէր վաճառական Եղբարց, որք սիրեն եւ կամին իմանալ զանազան քաղա՝ դրամս՝ եւ զայլ ինչ՝ որ վաճառականութեան հետեւի թէ՛ ի Ֆրանկստան՝ թէ՛ ի Հնդուստան՝ թէ՛ յԱջամստան եւ թէ՛ Հոռոմստան» [«Գանձ չափոյ կշռոյ...» (1699)]:

– «ի պէտս մերազնեայ Բանասէր եղբարց: Առ Բանասէր Թորգոմազնեայ ընթերցողս» [«Բնաբանութիւն իմաստասիրական» (1702)]:

Վանանդեցիներն ապրում ու ստեղծագործում էին իրենց ժամանակի ոչ միայն տնտեսական, այլև հասարակական-քաղաքական բարձր զարգացում ունեցող երկրներից մեկում: Սոցիալական մեծ տեղաշարժեր, հին ֆեոդալական հասարակարգի խարխլում, բուրժուական հեղափոխութիւններ, նոր բուրժուական հարաբերութիւնների սաղմնավորում, ազգային անկախության համար մղվող պատերազմներ, այս ամենը տեղի էր ունենում նրանց աչքի առջև: Բնականաբար, նրանք չէին կարող անտարբեր լինել հասարակական-քաղաքական նշանակալից այդ իրադարձութիւնների նկատմամբ և ակամա իրենց հայացքն ուղղում էին դեպի հայրենիք:

Վանանդեցիների ազատագրական հայացքներով տարբեր ժամանակներում զբաղվել են բազմաթիվ մասնագետներ: Այս խնդիրներին մեր կողմից նշված աշխատութիւններում անդրադարձել են Լեոն, Ա. Հովհաննիսյանը, Մ. Գրիգորյանը, Հ. Միրզոյանը:

Նախ, բնականաբար նրանք չեն կարող չըջանցել պատերազմների կործանարար ազդեցութիւնը ժողովրդի վրա, որոնց ընթացքում «... Թագաւորք, եւ Իշխանքդ իցեն հարկս ծանուես ի վերայ

ժողովրդեանն, զի կատարեսցեն զարարս անիրաւս»<sup>1</sup>: Ուշադրութիւն զարձնենք Ղուկաս Վանանդեցու այն տեսակետի վրա, ըստ որի երկու տեսակի գերութիւն գոյութիւն ունի՝ անտեսանելի եւ տեսանելի: Եթե խաղաղ տարիներին առանձնապէս չեն նշմարվում ժողովրդի թշվառ վիճակը, նրա գերութիւնը, ապա պատերազմների ժամանակ «տեսանի անտես գերութիւն մարդոց»<sup>2</sup>: Ուստի, շատ հաճախ, չդիմանալով այս ճնշմանը «...ի պատճառէ կռուից մարդիկ անձկանան եւ սրտնեղին յիւրեանց թագաւորէն... ռամկական ժողովուրդն ամբոխիցի ... բանտք բռնութեամբ բացեալ լինին, եւ բազումք 'ի բանտարդեւացն ելանիցէն» եւ նույնիսկ լինի «անհնազանդութիւն ռամկաց առ թագաւորն, եւ կորուստ թագաւորութեան իմեքե, ուստի իշխաններն ու մեծավորները «...ինքեանք անկցին 'ի նոյն գուբն, զոր այլոց փորեցին»<sup>3</sup>: Ահա թե ինչպիսի ընդհանրացումներ կարող է անել XVII դ. հայ մտավորականն իր ժողովրդին ցույց տալով, որ երբեք էլ ուշ չէ ճնշողների ու հարստահարողների դեմ պայքարելը: Ղուկաս Վանանդեցին ժողովրդական մասսաների պայքարն իր իրավունքներն ու հայրենիքը պաշտպանելու համար «օրինազանցութիւն» չի համարում: Այստեղից էլ բխում է նրա տեսակետն արդարացի եւ անարդարացի պատերազմների մասին: Անդրադառնալով հայկական իրականութեանը՝ նա բացահայտում է իր նվիրական ցանկութիւններից մեկը՝ «տաճկաց թագաւորն սաստկապէս նեղիցի յիւր թշնամեացն, եւ գուցէ 'ի նոցանէ առցէ զմահն՝ հանդերձ արիւնահեղ կոտորուածովք զինուորացն»<sup>4</sup>:

Ամփոփելու համար կարող ենք արձանագրել, որ հայ գրատպութեան ամստերդամյան դպրոցը իր ժամանակի համար զարգացած տեխնոլոգիական մակարդակով վճռական դեր խաղաց հայ գրավոր մշակութի ուսումնասիրման եւ հաջորդ սերունդներին փոխանցման գործում: Բացի այդ նրա դերն աննախադեպ էր հայ ինքնութեան պահպանման, միաժամանակ նաև արևմտաւերոպական մշակութի հետ կապերի ամրապնդման գործում: Եւ վերջապէս հայ գրատպութեան ամստերդամյան դպրոցը զարգարեց գոյութիւն ունենալ, երբ աստիճանաբար գրատպութիւնը թեւաւորեց զարգացման այլ

<sup>1</sup> Վանանդեցի Ղ, Համաձայնութիւն հնգետեսակ ամսոց Հոսմայնոց, Ագարիայի, Հայոց, Հրէից եւ Տաճկաց, Ամստերդամ, 1698, էջ 62:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 68:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 62-65, 74-76:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 69:

առավել կատարելագործված փուլ: Այն վերածվեց մասնագիտական  
ինդուստրիայի: Այդ է վկայում Կ.Պոլսի տպարաններում տպված  
գրքերի նոր ու նեղ եզրաբանութունը՝ «մրահար», «տպագարկ» և  
այլն:

Հայ գրատպության ամստերդամյան դպրոցը, ինչպես նաև հո-  
լանդահայ գաղթօջախը դադարեցրին իրենց գործունեութունը՝  
ազդված քաղաքական ու տնտեսական այն խոչորագույն անցու-  
դարձերից, որոնք վտանգեցին իրենց գլխավոր սնող օջախը՝ Նոր  
Զուղան:

Այսպիսով, ելուժուտ ունենալով Եվրոպայի առաջադեմ երկր-  
ներ, հատկապես բուրժուական հարաբերությունների զարգացում  
պարող Հոլանդիա, հայ վաճառականներն ու մտավորականութունը  
հայրենիք էին բերում ոչ միայն ժողովրդի ազգային ինքնագիտակ-  
ցությունը բորբոքող գաղափարներ ու զրականութուն, ոչ միայն  
եվրոպական սլատերաղմները ու հեղափոխությունների փորձը, այլև  
եվրոպական առաջադեմ մտավոր արժեքների ու բարձր տեխնոլո-  
գիաների ավանդույթը:

## ՅՐԱՆՍԻԱ

Յրանսիայի Հայ Համայնքի արմատներն առավելապես նոր են, թեպետ առաջին վկայությունը պահպանվել է դեռ վաղ միջնադարից: Հիշատակելի են Օդո լը Մեսինին, որը IX դարի սկզբին աշխատում էր Շառլմանյի մոտ էքս-լա-Շապելում, ինչպես նաև հոգևորականներ, որոնք որպես ճանապարհորդ կամ հատուկ առաքելությունք մեկնել են Յրանսիա. օրինակ՝ Գրիգոր դը Պիթիվիենն (X դ.) կամ պրելատները, որոնք XIV դ. հաճախակի ելումուտ ունեին Ավինյոնի պապական արքունիքը: Զմոռանանք նաև Հայաստանի վերջին թագավոր Լևոն V Լուսինյանի՝ Յրանսիայում անցկացրած 15 տարիները: Թեպետ այս ամենը ավելի շատ վկայում է Հայ-Ֆրանսիական կապերի, քան թե Հայ գաղթօջախի գոյություն մասին:

Իրականում Յրանսիան հայերի համար բացահայտվել է Յրանսուռա I-ի և Մեծ Թուրքի միջև կնքված դաշնագրից հետո միայն: Յրանկո-օսմանյան կապերն իրականում ի Հայտ են եկել Կ. Պոլսում Ֆրանսիական մշտական դեսպանության հաստատումով, կաթոլիկ միսիոներներին Օսմանյան կայսրությունն ուղարկելով և, մանավանդ, երկու պետությունների միջև առևտրական կապերի զարգացմամբ, որից և օգտվել են Հայ վաճառականները Յրանսիայում իրենց գործունեությունը սկսելու համար:

**Հայերը Մարսելում ու Փարիզում և միջազգային առևտուրը XVII–XVIII դդ.**

Միջերկրական ծովի վրա բացված Մարսելը այն պատուհանն էր, որ հրապուրել է Հայ վաճառականներին դեպի այդ երկիր: Համաձայն դեպարտամենտի արխիվների, ինչպես նաև Մարսելի առևտրի պալատում պահպանվող փաստաթղթերի, հայերը Յրանսիայում հայտնվել են 1600-ական թթ.: Այստեղ կարելի է գտնել Զմյուռնիայի և Հալեպի Հայ վաճառականների հետքերը, որոնք XVI դ. վերջի առևտուր են արել Մարսելի և Լիոնի տոնավաճառներում<sup>2</sup>: Առհերոս ընթացքը, որ բնակություն է հաստատել այստեղ նախք.

<sup>1</sup> C. D. Tékéian, Marseille, la Provence et les Arméniens, Marseille, 1904, pp. 12–13, 24: Այստեղ խոսվում է 1595 թ. Մարսելում հաստատված ոմն Նիկա... մասին:

<sup>2</sup> Arch. Du Départ, Des Bouches-du Rhone, IXB 272. J. Billon, Histoire du commerce de Marseille, t. III, Paris, 1951, p. 539 գրքից:

Ջուղայի բազմաթիվ վաճառականների գալուստը, Հայտնի է Արմենի անուհով<sup>1</sup>: Ընտանիքի նախահայրը՝ Անտուանը, 1612 թ. բնակություն է հաստատել Մարսելում, որտեղ գործընկեր է դարձել տեղացի ամենահայտնի վաճառականներից մեկին՝ Լյուդովիկոս Ֆրեժյուսին՝ նպատակ ունենալով հսկել Հայերի միջոցով Արևելքից բերվող մետաքսեղենի առևտուրը: Լյուդովիկոս XIII-ի պետական կնիքը կրող նամակով երկու գործընկերները նույնիսկ ստացել են հետևյալ արտոնությունները. «Մենք մեր պաշտպանությունն ու Հատուկ թույլտվությունն ենք տալիս Պարսկաստանի թագավորի կողմից հանձնարարված բոլոր պարսիկ և Հայ վաճառականների ու ազարականների գործունեությանը, ինչպես նաև՝ բոլոր նրանց գործակիցներին ու առաքողներին, որոնք կներկայանան մեր Մարսել քաղաքը, ինչպես նաև՝ Պրովանսի կամ մեր երկրի այլ նավահանգիստները, և մենք ձեզ հրամայում ենք, որ դուք նրանց թույլ տաք իրենց առևտուրն անել ամենայն ազատությանը»<sup>2</sup>:

Հիշյալ «Անտուանը, Արմենիների ազգից՝ Ագեթի եւ Մարթայի «դիսն», 1622 թ. փետրվարի 5-ին ամուսնացել է Պրովանսից մի աղջկա հետ և հաստատվել Բիրժայի թաղում, որի հրապարակներից և փողոցներից մեկը մինչև XIX դ. կեսերը կրել է Արմենիի անունը<sup>3</sup>:

Սակայն Մարսելի հայկական առևտուրը, որը հիմնված էր մետաքսի ներմուծման վրա, տեղի վաճառականների ճնշման ներքո արգելվել է Մարսելի հյուսիսային կողմից, որոնք քաղաքային խորհրդի 1621 թ. նոյեմբերի 27-ի որոշմամբ նավապետներին արգելել են «հայ կամ պարսիկ վաճառականներին ապրանք տեղափոխել Մարսել»: Հակառակ դեպքում նրանք կենթարկվեին 3000 լիվր տուգանքի, և կբռնադատվեին նրանց ողջ ունեցվածքը, տեղում եղած կամ ճանապարհին գտնվող շարժական գույքը, ինչպես նաև տները<sup>4</sup>: Այս միջոցառումները որոշակիորեն սահմանափակել են մարսելյան նավերով Արևելքից եկող եկամուտները և Պրովանսի պառլա-

<sup>1</sup> C. D. Tékéian, «La famille Arméay de Marseille et les rues qui empruntèrent son nom», Mémoires de l'Institut Historique de Provence, 1933, pp. 1-7.

<sup>2</sup> Arch. du Départ, Des Bouches-Du Rhône, B 100, f. 389.

<sup>3</sup> C. D. Tékéian, նշվ. աշխ., էջ 2-3:

<sup>4</sup> St u ցանե հետևյալ հոդվածում տպագրված փաստաթղթերը՝ F. Macler, Notices de manuscrits arméniens ou relatifs aux Arméniens vus dans quelques bibliothèques de la Péninsule ibérique et du sud-est de la France հոդվածում (REArm, II, 1922, pp. 9-20), հրատարակված Archives de la Chambre de commerce de Marseille (Série HH1). C. D. Tékéian, նշվ. աշխ., էջ 14-15:

մենտին ստիպել 1622 թ. դեկտեմբերի 10-ին նոր որոշումներ ընդունել: Այսուհետև հայերին չի արգելվում վերադառնալ Լեւանտ՝ «ոսկով, արծաթով և մուրհակներով» և «չի արգելվել օգտվել նաև որևէ մուրհակից կամ դրամ փոխադրել, որոնք մինչ այդ ենթակա էին բռնագրավման: Արգելվել է տեղի առևտրականներին, վաճառականներին եւ այլոց խանգարել հայերից մետաքս գները եւ մուրհակներ փոխանակելը Լիոնի կամ այլ նավահանգիստները հետ ... արգելվել է նաև բոլոր նավապետներին... գործարարներին եւ ծովայիններին հայերի նկատմամբ արդեւքներ հարուցել երկրից դուրս գալու համար, եթե նրանք ունեն համապատասխան արտոնագրեր...»<sup>1</sup>:

Չնայած այդ արտոնութձյուններին և պրովանսացիները անվան տակ իրենց գործունեության ծավալման հնարավորությանը՝ հայ վաճառականները գերադասել են հաստատվել Լիվոռնոյում՝ Մեդիչիների կողմից արտոնութձյուններ ստանալով մետաքսի առևտրի իրականացման համար: Այդ կապակցությամբ 1635 թ. հունիսի 24-ին կարգինալ դը Ռիշելյոն, ընդառաջելով հայերի խնդրանքին, հրովարտակ է ներկայացրել<sup>2</sup>, որով մաքսային արգելքները զգալիորեն թեթևացվել են, և հայերն անցել են արքայի հովանավորության ներքո:

«Քանի որ ջուդայացի հայ եւ պարսիկ վաճառականները մեզ հայտնեցին,՝ դրու է նա,՝ որ իրենք ցանկանում են շարունակել մետաքսի եւ այլ ապրանքների առևտուրը, որ բերել են տալիս իրենց երկրից, պայմանով, որ իրենք կունենան ազատութձյուն, վատահութձյուն եւ հովանավորութձյուն, այնպիս, ինչպես ունեն օտարերկրյա մյուս վաճառականները, որոնք առևտուր են անում այս տերութձյան մեջ, ուստի, նկատի ունենալով վերոհիշյալ հանգամանքները, ինչպես նաև նորին պայծառափայլութձյան կողմից մեզ տրված իշխանութձյունը, որի հիման վրա թույլատրում ենք բոլոր հայ, ջուդայացի եւ պարսիկ վաճառականներին ազատորեն ու վստահորեն բերել տալ ու ներմուծել իրենց հիշյալ երկրներից Պրովանսի և տերութձյան մյուս նավահանգիստներ ու նավամատույցներ, այն քանակութձյամբ մետաքս եւ այլ ապրանքներ, որքան իրենք կցանկանան այստեղ վաճառել՝ վճարելով սույն արտոնութձյան համապատասխան հարկերը նորին Պայծառափայլութձյանը, թույլատրելով նաև բոլոր նավապետներին, ինչպես նաև քառակուսի առագաստներով թե՛ նավերին,

<sup>1</sup> Archives de la Chambre de commerce de Marseille, J. 1585, pi-ce 3, 4ff. Տեքստի ամբողջական հրատարակութձյունը տես F. Macler, նշվ. աշխ., էջ 17-20:

<sup>2</sup> F. Macler, նշվ. աշխ., էջ 21-22: C. D. Tékéian, նշվ. աշխ., էջ 16-17.

թե՛ նավակներին, որոնք նավարկում են արևելյան ծովերում, իրենց երկրից Ֆրանսիա հասցնել վերոհիշյալ վաճառականներին՝ իրենց մետաքսով և ապրանքներով... և որպեսզի առավել ևս դյուրացվի և ապահով լինի նրանց առևտուրը, մենք նրանց վերցրինք թաղավորի, ինչպես նաև մեր հովանավորութայան ու պաշտպանութայան ներքո. և մենք կպաշտպանենք նրանց որևէ մեկից, որը կխանգարի կամ կնեղի նրանց, լինի դա ծովում, կամ՝ Ֆրանսիա ելումուտ անելիս...»:

Ինչպես նշում է Կ. Դ. Թեքեյանը. «Ռիչելյոյի մահից հետո, 1642 թ., ռեակցիան հարցականի տակ առավ կենտրոնական իշխանութայան կողմից ընդունված առևտրական ազատութայան վերաբերյալ միջոցառումները, եւ Քաղաքային խորհուրդը առանց այլևայլի վերադարձավ իր ինքնագլուխ քաղաքականութայանը»<sup>1</sup>: Մեղմ ասած, դա նշանակում էր, որ հայ վաճառականների նկատմամբ կրկին արգելքներ էին դրվում՝ օտարերկրացիների համեմատությամբ 5%-ով բարձրացնելով հարկերը: Դրան ավելացվել էին նաև տեղական իշխանութայունների պատճառած նեղութայունները, որոնք նրանց ստիպում էին հեռանալ նավահանգստից, կամ էլ դիմել այլ միջոցների գործը գլուխ բերելու համար: 1658 թ. ապրիլի 10-ին<sup>2</sup> Հովհաննես Մատթեոս Դյուպուլին Մարսելի իր վաճառական ընկերոջը գրած նամակում տեղեկացրել է, թե ինքն իրազեկ է այն մասին, որ «Ձեր քաղաքի պարոնները ձեզ ուղարկել են այդ քաղաք (Լիոն) բողոքարկման դատարան ներկայանալու՝ մետաքսի առևտրի կապակցությամբ հայերի կողմից պատճառված անհանգստությունները վերացնելու համար... Բայց, որպես իմ բարեկամ, ձեզնից ես ոչինչ չպետք է թաքցնեմ, դուք հաջողութայուն չեք ունենա ձեր ձեռնարկի մեջ, քանի որ պետք է իմանաք, որ վերոհիշյալ հայերը ոչինչ չեն ներմուծում իրենց անվան տակ: Լիվոռնոյի վաճառականներն են իրենց անունով ամեն ինչ ուղարկում այդ քաղաքի որոշ մարդկանց, որոնք չնչին վարձատրությամբ ընդունում են ապրանքը, պահ են տալիս հայերին՝ նրանց տրամադրութայան տակ դնելով խանութներ, այնպես որ, երբ դատարանում խոսք լինի 20% հարկման մասին՝ այն կընդունվի: Այդ հարկմանն անշուշտ կենթարկվեն ընդհանրապես բոլորը, բայց ինչ խոսք, դա վերաբերվում է հատկապես հայերին, և վերջիններս, ինչպես վերևում ասվեց, ամեն

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 17:

<sup>2</sup> F. Macler, նշվ. աշխ., էջ 40–41:

ինչ կանեն միջնորդների կամ քիչ վաստակ պահանջող մարդկանց միջոցով...»:

Նամակի շարունակութունից պարզ է դառնում, որ հայերը «բավական հետապնդվում են, և չեմ կարծում, որ երկար ժամանակ իրանք իրենց հաշվին մետաքս բերեն, քանզի պիտի դժվարանան այն վաճառել և ստիպված են լինելու ցածր գներով այն գիջել...»:

Իրոք, բացի մաքսային արգելքներից, հայ վաճառականները ենթարկվել են նաև ծովահենային հարձակումների, ինչպես նաև ապրանքների բռնագրավման, որոնք էլ նպաստել են ֆրանսիացիների հետ նրանց հարաբերութունների վատթարացմանը:

Ծովահենային հարձակումներից ամենահայտնին տեղի է ունեցել 1650 թ., երբ հայերին պատկանող մի նավ՝ "Mercanto Armeno"-ն, որը սակայն նավարկել է «Անդլիայի խորհրդարանական» դրոշի ներքո, ստուգման է ենթարկվել Հանրի դ'Անգլյուր դը Բուրլըմոնի կողմից, որն անգլիական թագավորական նավի նավապետն էր, և ապա՝ նրան ուղղութուն ցույց տվել դեպի Թուլոն: Ապա թագավորին համախոհ նավապետը ճանաչվել է որպես գրավված նավի օրինական տեր: Նավի վրա գտնվող վեց հայ վաճառականներն իրենց 243 կտոր ապրանքով խստագույնս բողոքարկել են՝ ներկայացնելով իրենց ապահովագրական արտոնագրերը և Ձմյուռնիայի ֆրանսիական հյուպատոսի կողմից տրված վկայագրերը: Նրանք հաստատել են նաև, որ նավը պատկանել է ոմն «Անտոնիո Չելեպին»<sup>1</sup>, որը ոչ այլ ոք էր, քան հայտնի նավապետ Անտոն Չելեպին: Ուստի և նրանք պահանջում էին վերադարձնել իրենց պատկանող ապրանքները: Ֆրանսիական կողմը թերահավատ էր, որ «վերոհիշյալ նավը պատկանում է Բիթինիայում գտնվող Բրուսայի [Բուրսա] քաղաքացի Անտոնիո Պողոսին, որ կարելի է հերքել հավատալ, որ նշված երկրներում ապրող եւ այդպիսի հնարավորութուններ ունեցող Պողոս անունով անձնավորութունը ... նավ ձեռք բերել Լիվոռնո

<sup>1</sup> Անտոնը ծնվել էր Ձմյուռնիայում և այնտեղից էլ դեկավարել է իր առեւտրական գործունեությունը: Նա Լիվոռնոյում, Վենետիկում, Ամստերդամում եւս ուներ առեւտրական տներ: Իր եղբոր սպանությունից հետո, որը Օսմանյան կայսրության Մեծ մաքսապետն էր, ստիպված լքել է այդ երկիրը և հաստատվել Լիվոռնոյի բարձունքներում՝ իր կառուցած դղյակում: Տե՛ս նաև Հալեպում Ֆրանսիայի հյուպատոս ասպետ Լորան դը Արվյոյի վկայությունը՝ Mémoires du chevalier d'Arvieux..., t. I, Paris, 1735, p. 92-99:

ուղևորվելու համար...»<sup>1</sup>: Հայ վաճառականները մինչև վերջ պաշտպանել են իրենց իրավունքները արքայական խորհրդի առջև՝ հետ ստանալու համար իրենց ապրանքը: «Հայերի անվան տակ, - ասում է խորհրդի խոսնակը, - նրանք Փարիզի մեջ խարդավանքներ կազմակերպեցին՝ մինչև եսկ պատերին գրելով եւ պամֆլետներ տարածելով, որոնցով նրանք վարկաբեկում էին պետության նախարարների հեղինակությունը...»: Նրանց ընկերակցում էր «ոմն Բաբա, որն այդ քաղաքում [Փարիզում] հայտնվեց սրի հարվածի սպիով, որ ստացել էր այլոց հետ զինվորություն անելիս՝ իր երկիրը պաշտպանելու ժամանակ...»: Ողջ Փարիզն իմացավ այդ գործի մասին, և մեծ աղմուկ բարձրացավ՝ շահելով ամբոխի համակրանքը տարաշխարհիկ Արևելքի փոքրիկ հայ ժողովրդի նկատմամբ: Երկու տարվա բանակցություններին հետո դատավարությունն ավարտվեց, և հայ վաճառականներին վերստին շնորհվեցին իրենց իրավունքները: Այդ որոշումը հաստատվել էր 1652 թ. փետրվարի 16-ի՝ Լյուդովիկոս XIV-ի մի նամակով<sup>2</sup>:

Սույն դրվագը, որը որոշակիորեն Ֆրանսիայում հայերի նկատմամբ առկա ոտնձգությունների ապացույց է, լուծում է ստացել ոմն Կոլբերի՝ գործի զլուխն անցնելով: 1669 թ. մարտին նա հրապարակել է Մարսելի նավահանգստին ազատություն շնորհելու որոշումը, որով վերացվել են մարսելցի վաճառականների ճնշման ներքո մտցված բոլոր տեսակի մաքսային արգելքները՝ «հրավիրելով օտարազգիներին նավահանգստային Մարսել, նույնիսկ այնտեղ բնակություն հաստատելու հեռանկարով: Մեզ համար կարեւոր է եւ ցանկալի, որ այդ օտար վաճառականները մուտք գործեն այնտեղ ծովի ճանապարհով, բեռնեն ու բեռնաթափեն իրենց ապրանքները, դուրս բերեն դրանք՝ չվճարելով ոչ մի հարկ անկախ այն բանից, թե նրանք ինչքան են մնացել այդտեղ, չվճարեն նաև ոչ մի տուրք բնակություն իրավունք ստանալու համար և չդիտվեն որպես օտարականներ»: Արդյունքում մեծ թվով հայեր վերա-

<sup>1</sup> Այս գործին վերաբերող բոլոր փաստաթղթերը պահվում են Ֆրանսիայի Ազգային գրադարանում (BNF)՝ ձեռ. 18592, ք. 338-358v\* ; 1650 ք. հունիսի 30-ի Թագավորական խորհրդի որոշումով կատեցվել էր Մոնթե-Զրիստոյի տարածքներում հայտնված անգլիական մի նավի մուտքը (Archives Nationales, E. 1695, ff. 137-139):

<sup>2</sup> Նույն տեղում, ք. 347v:

<sup>3</sup> Archives Nationales, E. 1697, ք. 17.

<sup>4</sup> Archives municipales de Marseille, CC 18. J. Mathorez, Les étrangers en France sous l'Ancien Régime, t. I, Paris, 1919, ք. 339 գրքից:

դառնում են Մարսելի նավահանգիստ ու հաստատվում այնտեղ: Այստեղ կային արդեն մեծ հեղինակություն վայելող վաճառականներ, ինչպես օրինակ՝ Նոր Զուղայի հայտնի խոջա Փանոսը (Ֆրանս. փաստաթղթերում՝ *coagi Panoux*), որը 1639 թ. մահացել է էքս ան Պրովանսում, և նրա հսկա կարողությունը մնացել է Ֆրանսիայի թագավորին<sup>1</sup>:

1680-ական թթ., երբ Մարսելում հայերի թվաքանակը հասել է 300—400-ի, նրանք որոշել են իրենց ներկայացուցիչն ունենալ Առևտրի պալատում՝ հնարավոր վեճերը կարգավորելու համար: Հիմնականում նրանք բոլորն էլ Պարսկաստանից էին, մասնավորապես՝ Սպահանից<sup>2</sup>: Մարսելի հայերի ղեկավարն էր Մելքոն դը Նազարը՝ հայտնի խոջա Նազարի որդին<sup>3</sup>: 1669 թ. կոչվելով այդ պաշտոնին՝ Մելքոն Նազարյանն այն ղեկավարել է ավելի քան երեսուն տարի՝ միաժամանակ դառնալով այդ փոքրիկ հայկական գաղութում տեղի ունեցող բոլոր մկրտությունների ու ամուսնությունների կնքահայրը: Այդ նույն ժամանակաշրջանի համար Մարսելի դիվանական փաստաթղթերը մեզ են հաղորդում այլ հայագրի բնակիչների անուններ ևս, ինչպես օրինակ՝ Գրեգուար դը Կարապետ, Պոլ դը Սերգիս կամ Պոլ դը Սալոմոն<sup>4</sup>:

Հայերի նկատմամբ Կոլբերի բարյացակամությունն արտահայտվել է նաև Ֆրանսիա եկած տպագրիչ Ոսկան Երևանցու նկատմամբ: Վերջինս հեշտությամբ ձեռք է բերել երկրում հաստատվելու իրավունք, իսկ 1669 թ. օգոստոսի 11-ին Լյուդովիկոս IV-ից ստացել է Մարսելում իր տպարանը հիմնելու թույլտվություն<sup>5</sup>: «Ես բացատրեցի, գրել է Ոսկան Երևանցին, իրողությունը ամենաքրիստոնյա արքային... եւ նա ինձ շնորհեց իր արքայական ղեկրետը, որն ինձ թույլատրում էր հաստատվել Ֆրանսիայում, մի բան, որ ես ցահանում էի... որով և ես միաժամանակ իրավունք էի ստանում Ձ տարի ժամկետով օգտվել արքայական ձուլարանների ծառայություններ-

<sup>1</sup> C. D. Tékéian, նշվ. աշխ., էջ 29:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 30:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> G. Rambert, Histoire du Commerce du Levant. t. IV, p. 504.

<sup>5</sup> BNF, collection Anisson-Dupperon, ms. 22071, f. 123. J.-L. Bory, Les origines de l'imprimerie de Marseille, Marseille, 1868, p. 85 գրքից:

րից...»<sup>1</sup>: Տպարանը, սակայն, չափազանց անկանոն գործունեություն ունեցավ եւ տպագրեց Հազրիվ 16 անուն գիրք՝ օգտվելով Մելքոն դը Նազարի առատաձեռնությունից: Վերջինս հատկացրել էր 1500 լիվր՝ տպագրատան կառուցման ծախսերի համար<sup>2</sup>: Ոսկան Երևանցու հանկարծակի վախճանից հետո՝ 1674 թ. փետրվարի 14-ին, Ս. էջմիածին և Ս. Սարգիս Զորավար տպարանն անցել է նրա Համեմատաբար անփորձ որդու՝ Սողոմոն Լեոնյանի ձեռքը (նա ամուսնացած էր Մարգարիտ Շավ անունով պրովանսացի մի աղջկա հետ), մինչդեռ տպարանի ղեկավարությունը մերժել է նրան վերջինիս հորեղբոր նախկին գործընկերոջ՝ Թադեոս Համազասպյանի միջոցով: Վերջինս նրան նույնիսկ ներքաշել էր մի դատավարության մեջ, որը տպարանի աշխատանքները կասեցրել էր 7 տարի շարունակ՝ մինչև 1683 թ.<sup>3</sup>: Իրականում Հռոմի գրաքննիչները, հատկապես հայր Թովմաս Հայրապետը, ինչպես նաև Մարսելում ժամանակավորապես նշանակված եպիսկոպոս Ֆիլիպ դը Բոսսեն հալածել են տպագրիչին: Ի վերջո, Մարսելի հայ վաճառականների միջամտությամբ և Սողոմոն Լեոնյանի կողմից Փարիզում նախաձեռնած գործողությունների շնորհիվ 1683 թ. Հունվարի 3-ին Լյուդովիկոս XIV-ը ընդունել էր մի որոշում՝ ուղղված Պրովանսի արդարադատության վերահսկիչ իշխանավորին՝ վերջինիս հրահանգելով հնարավորինս շուտ հեռացնել Հռոմի հավատաքննիչին և վերականգնել 1669 թ. շնորհված արտոնությունը<sup>4</sup>: Մեկ տարի անց Սողոմոն Լեոնյանը մահացել է, և նրա պրովանսացի այրին գործարքի մեջ է մտել մի հայ վաճառականի՝ ոմն «Սիմոն Գեորգիի» հետ, տպարանի աշխատանքներին նոր զարկ հաղորդելու համար, որն այսպես թե այնպես գործել է մինչև 1694 թ., ապա՝ փոխադրվել Կ. Պոլիս<sup>5</sup>:

<sup>1</sup> Ոսկան Երևանցու՝ Հոմից ուղարկված մամակի բովանդակությունը տես Կ. Անատմի, Ոսկան վարդապետ Երևանցի եւ իր ժամանակը, Վենետիկ, 1976, էջ 199–200:

<sup>2</sup> R. H. Kévorkian. Catalogue des incunables arméniens ou Chronique de l'imprimerie arménienne, Genève, 1986, pp. 41–43 եւ թիւ 37 ու 53 ծանոթագրությունները:

<sup>3</sup> BNF, Հայկական ձեռագրերի լատին, թիւ 310, որտեղ պահպանվում են դատավարությանը վերաբերող փաստաթղթերը (ff. 16–41), F. Macler. Mosaïque orientale, Paris, 1907, p. 99 գրքից:

<sup>4</sup> R. H. Kévorkian, նշվ. աշխ.:

<sup>5</sup> R. H. Kévorkian, «L'imprimerie Surb Ejmiacin et Surb Sargis Zoravar et le conflit entre Arméniens et catholiques à Constantinople (1695–1718)», - REArm, XV, (1981), pp. 401–411; Նույնի, «Du nouveau sur l'activité de l'imprimerie Surb Ejmiacin et Surb Sargis Zoravar à Marseille (après 1681)», - REArm, XX, (1986–1987), pp. 521–526, որտեղ հրատարակված են Մարսել քաղաքի արխիվային փաստաթղթերը ոմն «Մարգարա

Կարևոր է այն Հանգամանքը, որ Հայերին, որպես «պարսից արքայի ենթականեր», մեծ դյուրություններ են շնորհվել Ֆրանսիայի հետ առևտուր անելու համար, մինչդեռ Օսմանյան կայսրության մեջ պարող Հայերը ենթարկվում էին օտարազգիների կարգավիճակի մասին ֆրանկո-օսմանյան համաձայնագրերի կանոններին, ըստ որի նրանք բավական իրավազուրկ էին<sup>1</sup>:

Փոքր Ասիայում իրենց առևտրական գործունեությունը կազմակերպելու, ֆրանսիացի առևտրականներին՝ որպես օտարազգի վաճառականների, հարկումից զերծ պահելու նրանց ցանկությունը բավարարելու նպատակով իշխանությունները էրզրումում ֆրանսիական հյուպատոսարան են հիմնել: Առաջին հավատարմատարը Հայ էր: 1690 թ. հոկտեմբերի 26-ին ծովային նախարար մարկիզ Սենելին դրած իր նամակում Կ. Պոլսի դեսպան Կաստանիեր դը Շատոնեոֆը գեկուցել է. «Հիսուսյան Հայերը ինձ ներկայացրին մի Հայի՝ բավական հայտնի մի անձնավորության, էրզրումի հյուպատոսը լինելու համար, որին ես հանձնեցի ինձ ուղարկված արտոնագրերը: Այդ երկրի մասին նրանցից ստացած տեղեկությունից, դեռ պետք է տեսնեմ, թե ֆրանսիացիների համար նպատակահարմար է արդյոք շահավետ առևտուր հիմնել այդտեղ»<sup>2</sup>: Մի քանի տարի անց՝ 1719 թ., սահմանի մյուս կողմում՝ Թավրիզում, ֆրանսիական փոխհյուպատոսը ևս Հայ է նշանակվում<sup>3</sup>:

1715 թ. Մարսելում հաստատված Պարսկաստանի առաջին հյուպատոսը՝ ոմն Ակոլջեան դը Ռիչան (Հակոբյան Արխիջանենց), նորջուղայեցի Հայ էր, որը զբաղված էր Հայ վաճառականների՝ «Մեծ Սոֆիի հպատակների», շահերի պաշտպանությունը<sup>4</sup>:

Առևտրական հողի վրա ֆրանսիական իշխանությունները, հատկապես Կոլբերը, անմիջապես գիտակցեցին փորձառու Հայ վաճառականների հետ համագործակցելու շահավետությունը: 1666 թ. միջազգային համբավ ունեցող նորջուղայեցի մի Հայ վաճառական, որը ֆրանսիական արխիվային փաստաթղթերում հայտնի է Մարգա-

---

ղը Ղարբյանի» կողմից Մարգարիտ Շավի և Սիմոն Գեորգիի դեմ հարուցված դատավարության և հանգուցյալ Ա. Լեոնյանի ժառանգության մասով:

<sup>1</sup> C. D. Tékéian, նշվ. աշխ., էջ 56-60:

<sup>2</sup> Archives Nationales, Affaires étrangères, B1 380, ff. 366v-367.

<sup>3</sup> Archives du Ministère des Affaires Étrangères, correspondance politique, Perse, vol. V, ff. 184-205.

<sup>4</sup> C. D. Tékéian, նշվ. աշխ., էջ 57-58: Archives Nationales, Marine, B1 1, ff. 98 եւ հետագա, 309-317, B1 3, ff. 26, 138, 191, 399.

րա Ավանշինց անունով, գալիս է Փարիզ և Կոլբերի խնդրանքով մտնում Հնդկաստանի ընկերության մեջ՝ 1667 թ. դառնալով «Հնդկաստանի, Պարսկաստանի և Հարավային երկրների բոլոր առևտրական տների տնօրեն»: Հրաշալի իմանալով այդ երկրները և մոտիկ կանգնած լինելով տեղական իշխանություններին՝ նա, այնուամենայնիվ, կասկածի տակ է առնվում ընկերության տնօրենի՝ ոմն Քառոնի կողմից, որն առանց վարանելու բանտարկել է տալիս նրան: 1674 թ. փոխադրվելով Փրանսիա՝ նա դատի է տալիս ընկերությանը և մեծ ուշացումով Հատուցում ստանում<sup>1</sup>:

Յրկին խոսելով տնտեսական կամ առևտրական հեռանկարների մասին՝ կարելի է նշել ոմն Խաչատուրի անունը, որը 1714–1715 թթ. արքայի կողմից ուղարկվել է Մարտինիկյան կղզիներ՝ այնտեղ շերամաբուծությունը զարգացնելու նպատակով: Պրովանսի տեղապահին ուղղված նամակում ծովային նախարարը տեղեկացել է, որ «Նորին գերազանցությունը ցանկանում է, որ Դուք Քաչադյուր Հային առաջին իսկ նավով Հասցնեք Մարտինիկա, որպեսզի Մարսելից Ամերիկա ուղեւորվի: Այդ երկրում նրա ապրուստն ու կյանքը երաշխավորված կլինի արքայի կողմից նրան շնորհված թոշակով...»<sup>2</sup>:

Բացի վաճառականական շրջանակներից, որոնք Հատկապես Մարսելում էին հաստատված, XVII-րդ դ. սկսած Փարիզում ևս կային փոքրաթիվ հայեր: Ընդհատված տվյալներով, առաջին հայը, որը հաստատվել է Փարիզում, ոմն Պիեռ Դիպին է՝ ծնունդով Հալեպից: Փարիզում գտնվելու իր 39 տարիների ընթացքում նա Թազավորական քոլեջում (ապագայում՝ Քոլեժ դը Փրանս) միաժամանակ արաբերենի և ասորերենի ուսուցիչ էր, արևելյան լեզուների դժով թագավորի թարգմանիչ-քարտուղարը, ինչպես նաև՝ Հնավաճառ: Նա Փրանսիական քաղաքացիություն էր ստացել 1688 թ.<sup>3</sup>: Վերջինս հաճախ է հիշատակվել այն ղեկուցագրերի մեջ, որոնք վկայում են Արև-արքայի (Փրանսիայի) Հանդիպումների մասին արևելյան դեսպանների հետ, և կամ նրա ձեռքով թարգմանված պաշտոնական փաստաթղթերում: Հավանաբար նրա որդին ևս շարունակել է հոր գործը:

<sup>1</sup> G. Rantoandro, «Un marchand arménien au service de la Compagnie française des Indes, Marcara Avanchinz», Archipel, 17 (1979), pp. 99–114.

<sup>2</sup> Archives Nationales, Marine, B7 93, ff. 188r.

<sup>3</sup> J. Mathorez. «Les Arméniens en France du XIIe au XVII siècles», Revue Historique CXXVIII, 1918. pp. 8–9.

Ըստ ժ. Մաթորեզի, Փարիզում հայտնված մյուս հայերն էին՝ 1670–1680 թթ. ադամանդավաճառ և մարգարտավաճառ Ռաֆայել Ռուպլին, 1686 թ. քաղաքացիություն ստացած վաճառական Հովհաննես Գրեգուարը և հալեպցի եղբայրներ Ստեփաննոս և Հովհաննես Ճաքսինները, Դիարբեքիրում ծնված Հայ Սիրիա Կազազուրը, որը Պալե Ռոյալի ոսկերիչն էր և քաղաքացիություն էր ստացել 1712 թ.<sup>1</sup>: Ամենահայտնիների մեջ պետք է նշել նաև Հանրահայտ Պասկալին, որը 1672 թ. Սեն ժերմենի տոնավաճառի մոտ հիմնել էր փարիզյան առաջին սրճարանը, ապա՝ հիմնել "quai de l'École"-ում, որտեղ մեկ բաժակ սուրճը վաճառում էր երկու սոլ և վեց դենին արժողությամբ: Նրան շուտով հետևել է իր հայրենակիցներից ոմն Մալիբանը, որն արևելյան խմիչքների իր վաճառքը հիմնել է Բյուսի փողոցում՝ Սեն ժերմեն արքայության շրջակայքում<sup>2</sup>:

Փարիզի վերջին հայ «քաղաքացին», որը 1709 թ. բանտարկված էր Բաստիլում, մոտ 4 տարի դադարի անցկացնելով Մոն-Սեն-Միչելի արքայության բանտախցերում, ոչ այլ ոք էր, քան Ավետիք Եվզոկացին՝ Կ. Պոլսի և Երուսաղեմի նախկին պատրիարքը, որը և 1706 թ. Կ. Պոլսի Ֆրանսիական դեսպանի հրահանգների հիման վրա ձերբակալվել և մնացել է Ֆրանսիայում մինչև իր մահը՝ 1711 թ.: Նրան մեղադրել են օսմանյան մայրաքաղաքում կաթոլիկ հայերի նկատմամբ բռնությունների կազմակերպելու մեջ: Հետագայում Ավետիքը արքա Ռենոդոյի համար արտագրել է հազվագյուտ տեքստեր և միաժամանակ օգնել արքայի թարգման Պետի դե լա Կրուային<sup>3</sup>: Արկածասեր նորջուղայեցի Ֆիլիպ դը Ջազլին 1669 թվականից սկսած երկար տարիներ ապրել է Փարիզում և իր կնքահոր՝ Լյուդովիկոս 14-ի եղբայր Օռլեանի դքսի միջոցով ներգրավվել հրացանակիրների կազմի մեջ: Նանտի հրովարտակի չեղյալ հայտարարվելուց հետո՝ 1685 թ., նա անմիջապես աքսոր է մեկնում իր հուղենոտ կնոջ մետ՝ Շվեյցարիա: Դրանից հետո նրան հանդիպում ենք Շվեդիայում, Լեհաստանում, Կոլոլանդիայում, Լիվոնիայում, Մոսկվայում, Կ. Պոլսում և Պարս-

<sup>1</sup> J. Mathorez «Les Arméniens...», pp. 8–9. J. Mathores. Les étrangers en France sous l'Ancien Régime, t. I, Paris, 1919, pp. 336–337; J. Mathorez «Notules sur quelques Arméniens ayant vécu en France avant 1789».- REArm, II, 1922, pp. 85–90.

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 87–88:

<sup>3</sup> R. H. Kevorkian, ցվ. աշխ., (n. 25): «Documents d'archives français sur le Patriarcat arménien de Constantinople (1701–1714)», REArm XIX (1985), pp. 333–371.

կաստանում, որտեղ զբաղվել է նորջուղայեցի իր հայրենակից-վաճառականների համար առևտրական պայմանագրեր կնքելով<sup>1</sup>:

Ըստ Լեյբնիցի, որը Փարիզում էր գտնվում 1672–1676 թթ., հայկական շրջանակներում արտահայտվելու համար մի տեսակ «էսպերանտո» էր գործածվում: Համենայնդեպս նա դա նկատել էր մի հայ դոմինիկյանի հետ հանդիպման ընթացքում, որի անունը չի տալիս, բայց, ամենայն հավանականությամբ, նա շահ Սուլեյմանի երկու դեսպաններից մեկն էր՝ Ազարիա Ջահեցին կամ Անտոն Ապրակունեցին, որոնք նույնպես Փարիզում էին գտնվում<sup>2</sup>: «Այն, գրում է նա, կամ ինքն էր ստեղծագործել, կամ էլ իր նմաններից սովորել, մի տեսակ, *lingua franca*, որը վերցված էր լատիներենից և, ըստ ինձ, բավական հասկանալի էր, չնայած որ այնտեղ չէիր գտնի ո՛չ հոլով, ո՛չ ժամանակ, ո՛չ խոնարհում, ու նա բավական վարժ էր արտահայտվում, քանզի ընտելացել էր դրան»<sup>3</sup>:

Լուռթյան չի կարելի մատնել նաև «Լեզվի երիտասարդների»<sup>4</sup> պարագան ևս, որոնց մեծ մասը հայեր էին և կրթութուն ստանալուց հետո արևելյան երկրների դեսպանատներում ու հյուպատոսարաններում աշխատում էին որպես թարգմանիչներ: Այդ տիպի առաջին դպրոցը հիմնվել է 1669 թ. Կ. Պոլսում Լյուդովիկոս XIV-ի կողմից՝ Սուրբ Լյուդովիկոսյան վանքի վեղարավորների մոտ: Նախատեսվում էր այդտեղ ընդունել Արևելքում հաստատված պրովանսացի առևտրականների երեխաներին: Դա դժգոհության առիթ է տվել ֆրանսիական դեսպանատան շրջանակներին, որի աշխատակիցներից մեկը՝ դե լա Հաագը, 1670 թ. սեպտեմբերի 24-ին Կոլբերին գրել է. «Զգիտեմ որտեղից է գալիս այն կարգադրութունը, որով նրանք [երեխաները] դրվեցին նրանց [վեղարավորների] տնօրինության տակ, այլ ոչ թե դեսպանի, որը նրանց կտրամադրեր երկրի լավագույն ուսուցիչներին և կամ կտաներ ազնիվ հայերի մոտ, որոնք

<sup>1</sup> R. Gulbenkian, «Philippe de Zagly, marchand arménien de Julfa et l'établissement du commerce persan en Courlande en 1696», - REArm, VII (1970), pp. 361–378; Archives du Ministère des Affaires étrangères, correspondance politique, vol. 31, f. 15, lettre de l'ambassadeur à Constantinople, Castagnères de Cîteauneuf à Louis XIV, datée du 3 juillet 1697.

<sup>2</sup> Ա. Հովհաննիսյան, Նոր մյուսեր հայ-ունիթրուական պատմագրությունից, «Արարատ», 4 (1915), էջ 65–66:

<sup>3</sup> J. Mathorez, «Notules sur quelques Arméniens...», art. cit. [n 40], p. 89.

<sup>4</sup> H. Dehéraïn, Jeunes de langue et interprètes français en Orient au XVIII siècle. Alger 1922, pp. 1–10.

նրանց մեկ տարում ավելին կսովորեցնեին, քան իրենք կսովորեին տասը տարվա ընթացքում որևէ ֆրանսախոս տան մեջ...»<sup>1</sup>: Ի վերջո նման խոհեմ քայլերի դիմելը համարվել է ճիշտ, և Լյուդովիկոս XIV-ը որոշել է 1700 թ. լուծարել Կ. Պոլսի հաստատությունը և Լյուդովիկոս Մեծի Բուլեծում ստեղծել արևելյան բաժանմունք, որը կարող էր ընդունել 12 թոշակառու ուսանողներ<sup>2</sup>: Նրանք «կծառայեն կամ կրոնին որպես միախոններ, կամ պետութայանը որպես թարգմանիչներ»: 12—19 տարեկան առաջին երեխաները Փարիզ եկան 1700 թ. հունիսի 16-ին և Վերսալում արժանացան իրենց բարերար Լյուդովիկոս XIV-ի ընդունելութայնը: Այդ երիտասարդ հայերը ընտրված էին Լևանտի երկրների առևտրական կենտրոնների ունևոր ընտանիքներից, և հիսուսյանները նրանց դասական կրթություն էին հաղորդում՝ նախքան աստվածաբանության, իրավագիտության կամ բժշկագիտության մեջ կատարելագործվելու ուղարկվելը: Սակայն, 1724 թ. Կ. Պոլսում Յրանսիայի դեսպանը գտնում էր, որ ուսուցման այդ ձևը դատապարտված է ձախողման, քանի որ «այդ երիտասարդներից շատերը ուսուցման ժամկետն ավարտելուց հետո ... իրենց գիտելիքներն օգտագործել են կամ առեւտրի մեջ, կամ ուրիշ ազգերի մոտ որպես թարգմանիչ աշխատելով...»<sup>3</sup>: Մինչև XIX դ. վերջը Լուի լե Գրանում գտնվող այն կացարանները, որտեղ ապրում էին այդ երիտասարդները, հայտնի էին «Հայերի տուն» անունով, նույնիսկ եթե այնտեղ որոշ աշակերտներ հույն էին, կամ ասորի:

«Ամենաքրիստոնյա արքայի» Յրանսիան՝ «Արևելքի քրիստոնյաների պաշտպանը», դեպի իրեն էր ձգել բազմաթիվ արևելյան կրոնավորների, այդ թվում՝ նաև հայերի: Վերջիններս կասկածամտությամբ էին ընդունվում ֆրանսիացի եկեղեցականների կողմից, քանի որ նրանք չէին ընդունում հայ եկեղեցու անկախ լինելու իրավունքը և առիթի դեպքում նույնիսկ հալածանքների էին ենթարկում: Այդ մասին 1675 թ. փարիզյան մի շրջաբերականում հետևյալն է ասվում. «Որքանով որ ճիշտ է ձեռք մեկնել Արևելքի քրիստոնյաներին, որոնք ընդունում են իսկական կաթոլիկական կրոնը, նույնքան և խելոք կլինի ապահովված լինել նրանց խորամանկություն-

<sup>1</sup> Archives du Ministère des affaires Étrangères, correspondance politique, vol. 7, f. 279r.

<sup>2</sup> G. Dupont-Ferrier, «Les jeunes de la langues ou "Arménien" à Louis-le-Grand», REArm, III (1923), pp. 189—232.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 202—203:

ներից, որոնք կրոնափոխութեան պատրվակով Փարիզ են գալիս շնորհների ողորմութիւնն որոնելու: Հարկավոր է նկատի առնել երկու ճշմարտութիւններ՝ մեկը, որ այդ արեւելքցիները շատ խորամանկ են, նենգ ու շահամոլ, մյուսը՝ որ շատ հազվադեպ է, նրանք լավ կաթողիկ են, ինչու՞մ Հավատասփյուռ ժողովը համոզվել է՝ ելնելով երկարատեւ փորձից...»<sup>1</sup>:

Տնտեսական ճգնաժամը, որը XVIII-րդ դ. ծանր հարված հասցրեց Եվրոպային, ինչպես նաև քաղաքական վայրիվերումները, որոնց հետևանքով Պարսկաստանում տապալվեց Սեֆյան հարըստութիւնը, պատճառ դարձաւ Մարսելի հայերի առևտրի ծավալի և նրանց առևտրական մեծ տների մշտական ներկայութեան նվազմանը: Այդուհանդերձ, հիշատակվում են հայերի անուններ, որոնք մնացել էին Մարսելի նավահանգստում, որպես տոհմիկ արհեստավորներ, ինչպես Արմենիները, Թոմաջանները, Քաբաբները, Դիլբերները, Դերմանջիները, Գրիգոր Ագուլեցու, Ղալաթիացի Աստվածատուրի (sic) հետևորդները, որոնք բոլորն էլ ձուլվել են այդ քաղաքի հասարակութեան մեջ<sup>2</sup>:

Հետաքրքիր է ժան Ալթընի պարագան: Նա պարսկահպատակ հայ էր, ծնվել էր 1712 թ. Նախիջևանի Զահուկ վայրում: 1739–1740-ական թթ. հաստատվել էր Վոկլյուզում: Սկզբում նա պղնձի կլայեկման վարպետ էր Մարսելում: 1743 թ. ժան Ալթընը Լանգեդոկ տեղավայր է ներմուծել բամբակագործութիւնը, ապա՝ ստեղծել «բամբակ մաքրող մեքենա» (1753 թ.): Սակայն ամենից շատ նա հայտնի է տորոնի արտադրութեամբ (1756 թ.), որը Ֆրանսիայում անհայտ մի բույս էր, իսկ ժան Ալթընը դրանից ներկ է ստացել: Այդ գործում նրան օգնել է մարկիզ Կոմոնը՝ Վենեսին կոմսութեան տերը, որտեղ Պալլու կոչվող գյուղի մոտ, ներկի արտադրութեան առաջին փորձերն են արվել: Այդ վայրը նրա մահից հետո (1774 թ.) կոչվել է Ալթըն լե Պալլու անունով: Եթե դեռ նրա կենդանութեան օրոք Ավինյոնի շրջակայքում տորոնի մշակման դաշտերը մեծաթիվ չէին, ապա հաջորդ տասնամյակների ընթացքում մեծապես զարկ է տրվել դրա մշակութեանը: Արդեն 1836 թ. այդտեղ 55 ֆարրիկա և 450 աղաց էր աշխատում<sup>3</sup>:

<sup>1</sup> Archives Nationales, réserves, M.M. 529, f. 97r.

<sup>2</sup> C. D. Tékéian, նշվ. աշխ., էջ 60–62:

<sup>3</sup> C. D. Tékéian, նշվ. աշխ., էջ 62–67:

Հայկական ուսումնասիրությունները Ֆրանսիայում XVIII—XIX դդ.

Ֆրանսիայի ազգային գրադարանի Հայերեն ձեռագրերի և Հնատիպ գրքերի ֆոնդն անմիջականորեն կապված է Հայ-Ֆրանսիական Հարաբերությունների պատմության, որոշ իմաստով նաև՝ Ֆրանսիայում Հայկական ուսումնասիրությունների զարգացման հետ: Ըստ Վիլֆրոուս Արբայի (1690—1777 թթ.) Հաշվարկների՝ արքայական Հավաքածուի մեջ կար 6, իսկ Կոլլեբրի Հավաքածուում (Լյուդովիկոս 14-ի մահվան ժամանակ)<sup>1</sup> 2 Հայկական ձեռագիր<sup>1</sup>:

Հիմնականը, սակայն, արքա Սևենի՝ 1728 թ. օգոստոսից 1730 թ. ապրիլին ընկած ժամանակաշրջանում Արևելք կատարած առաջելությունն էր, որը ձեռագրերի ֆոնդին զգալի կշիռ է հաղորդել: Ընդամենը երկու տարվա ընթացքում նրա կողմից ձեռք է բերվել 134 միավոր ձեռագիր: Նախարար Մորըպայի և արքայի գրադարանավար արքա Բինյոնի հետ առկա նամակադրությունն ամբողջությամբ բացահայտում է այն Հանդամանքները, որով փնտրվել և ձեռք են բերվել այդ ձեռագրերը Կ. Պոլսում և այլուր: 1728 թ. դեկտեմբերի 22-ին Բոսֆորի ափեր հասնելուց անմիջապես հետո Սևենը Մորըպային գրած նամակում Հայկական ձեռագրերի մասին խոսելիս նշել է, որ «Եվրոպայում դրանք քիչ են, և այդ առումով շատ լավ արդյունք կարելի է ստանալ: Նեստորը, Դիոսկորը և մի քանի այլ Հայտնի Հեթանոսներ, ինչպես նաև տարբեր պատմական գործեր թարգմանվել են Հայերի ստեղծած լեզվով, և կարևոր է դրանք ձեռք բերել...»: Նույն նամակի հետգրության մեջ նա ավելացրել է. «Մինչ ես նամակս էի գրում, պարոն Ֆոնսեկան մի մասնավոր տան մեջ Հայտնաբերեց 160 Հայկական ձեռագիր, այսինքն այնքան, որքան չկա նույնիսկ Եվրոպայի բոլոր գրադարաններում միասին վերցրած և նույնիսկ ողջ Կ. Պոլսում: Այդ ձեռագրերը բաղկացած են Ս. Գրքի վերլուծություններից, Հայերի թարգմանություններից, աստվածաբանական և պատմական գրքերից, որոնցից ամենանշանավորը Հայոց պատմությունն է, որ մեզ Փարիզում մերժեցին 500 լիվրով տալ: Մեզ խոստացան դրան միացնել նաև Եսեբրիոսի կողմից գրված Պաղեստինի մաքտիրոսների պատմությունը, մի գործ, որը մեզանում հունարեն չունենք և որը մեծապես կլուսա-

<sup>1</sup> «Catalogue des manuscrits de la Bibliothèque du Roi, dressé en 1735, ... par l'abbé de Villefroy», Monfaucon, Bibliotheca bibliothecarum manuscriptorum. nova (1739), pp. 1015—1027.

բանի եկեղեցու առաջին երեք հարյուրամյակների պատմութիւնը: Մեկ լեզվով գրված այդքան ձեռագրերի ձեռքբերումը շատ կարևոր է, և դրանք գնելու համար վտանգավոր է ձեր թուլլտվութեանը սպասելը...»<sup>1</sup>:

Մի քանի ամիս անց՝ 1729 թ. ապրիլի 2-ին<sup>2</sup>, Սևենը տեղեկացնում է նախարարին թվարկված հայկական հատորները ձեռքբերելու ուղղութեամբ իր ջանքերի մասին. «Ես իմ վերջին նամակում խոսում էի հայկական 180 ձեռագրերի մասին: Դրանք պատկանել են մի ոսկերչի, որը շատ հարուստ ու հետաքրքրասեր մի մարդ էր, և որն իր կյանքի մի մասն անցկացրել էր դրանք հավաքելով... Հայկական ձեռագրերը եվրոպայում ծայրաստիճան հազվադէպում են: Միանգամայն իրավացի է, որ այդ լեզուն կարող էր ստեղծել մեծագույն հարստութիւններ: Մի քանիմասց մարդ վստահեցնում էր, որ հայերեն գրված ստեղծագործութիւնները 1500 հատորից ավելի են, և որ այդ գործերն ընդգրկում են գիտութեան բոլոր ճյուղերը՝ աստղագիտութիւն, աշխարհագրութիւն, մաթեմատիկա, աստվածաբանութիւն, պատմութիւն և այլն: Ինձ համար արդեն ամեն ինչ պարզ է, քանի որ սոսկ այդ թվարկումը որոշակիորեն ցույց է տալիս այդ գործերի ձեռքբերման անհրաժեշտութիւնը և այն օգուտը, որ գիտութիւնը կարող է ստանալ...»:

Դրան ի պատասխան արքայական գրադարանավար արքա Բինյոնը Ֆրանսիայի թագավորին հետևյալն է առաջարկել. «Եթե ես ձեր տեղը լինեի, արաբերեն, պարսկերեն կամ թուրքերեն շատ քիչ գրքեր կգնեի. դրանք ցանկութեան դեպքում միշտ էլ կարելի է գտնել... Բայց ինձ համար ավելի կարևոր է թվում ասորերեն եւ հայերեն ձեռագրերի ձեռքբերումը: Եվրոպայում դրանք այնքան քիչ են, որ այստեղ դուք համարյա ընտրութիւն չունեք: Դա մի նոր երկիր է, որտեղ ամեն մի չնչին հայտնագործութիւնը արժեքավոր է: Այս նամակը՝ ստանալուց հետո բարի եղեք գնումներ կատարել հայկական գրքերի այն ցուցակից, որ ձեզ կներկայացնի սիր Ֆոնսեկան...»<sup>3</sup>: Արքա Բինյոնը 1729 թ. հոկտեմբերի 21-ին Վիլնյովին գրած նամակում նկատել է. «Էջմիածնում բավական մեծ գրադարան կա և գրքեր, որոնց մասին համարյա ոչինչ չգիտենք: Պարոն Սեվենը գրում է, որ Պատրիարքը [կաթողիկոսը] առայժմ չի համաձայնվի:

<sup>1</sup> B.N., ms.n.acq. françaises 5384, ff. 71–73, Omont, op. cit., I, pp. 453–454.

<sup>2</sup> Նույն տեղում, ff. 74–79, pp. 461–462.

<sup>3</sup> B.N., ms. français 22234, ff. 255v–256v.

Սակայն այնքան նվաստացուցիչ պայմաններ են ստեղծվում խեղճ Հայերի համար, որ, օդափնջով իրավիճակից և չկարողանալով մերժել օգնութեան ձեռք մեկնողներին, նրանք թալանվում են՝ կորցնելով այն ամենը, ինչն իրենք երբևէ համարյա չեն օգտագործում...»<sup>1</sup>:

Այնուամենայնիվ, Փարիզում 1802 թ. Նապոլեոնի կողմից Արևելյան լեզուների դպրոցում հայկական բաժանմունքի ստեղծումով պաշտոնապես սկիզբ է դրվել հայկական ուսումնասիրութ-յուններին: Բաժանմունքի առաջին վարիչը՝ Ժակ Շահան Զրպետը (1772–1834 թթ.), Դիարբեքիրից էր: 1801 թ. նա շատ քիչ ուսում-նասիրել է հայոց լեզուն, ապա՝ 1812–1827 թթ., կյանքի վերջին տարիներն անց է կացրել Թիֆլիսում<sup>2</sup>: Այդ նույն ժամանակ նույն կերպ էր ուզում վարվել նաև Նապոլեոնի մամլյուկ ու համհարզ Ռուստամը, որը ծնվել էր Ղարաբաղում 1780 թ.: Նրան հաջորդել է հայագետների մի ամբողջ շարք, ինչպես՝ Պոլ էմիլ լը Վայան դը Ճլորիվալը (1827–1862 թթ.), Ժան Պոլ Դյուլորիեն (1862–1881 թթ.), Օդյուստ Կարիերը (1881–1902 թթ.), Անտուան Մեյեն (1866–1936 թթ.) և վերջապես մեզ հետաքրքրող ժամանակահատվածում Ֆրեդե-րիկ Մակլերը<sup>3</sup>: Այդ տաղանդավոր գիտնականների հետ և նրանց շուրջն է, որ հայկական ուսումնասիրությունները զարգացան Ֆրանսիայում ավելի, քան եվրոպական որևէ այլ երկրում: Նրանք, անշուշտ, շատ են պարտական Վենետիկի Մխիթարյան Հայրերին, որոնց հետ Ֆրանսիացի գիտնականներն անմիջական աշխատանքա-յին հարաբերությունների մեջ էին, հաճախ նրանցից ստանալով Մխիթարյան Հայրերի դրադարանի ամենահազվագյուտ ձեռագրերի կրկնօրինակները: Հայր Հովհաննես Զոհրապյանը 1816–1829 թթ. անձամբ կանոնավոր հաճախում էր կայսերական պրահարան՝ մշտապես աշխատակցելով ժամանակի մեծագույն արևելագիթա-կան հրատարակություններին<sup>4</sup>: XIX դարի երկրորդ կեսին նշվում է Հայ դրականութեան մեծ թվով գոհարների և Հայ մեծագույն պատ-միչների թարգմանությունների հրատարակութեան մասին, որոնք հաճախ ֆինանսավորվում էին Հայ մեկնասաների կողմից, ինչպի-

<sup>1</sup> B.N., ms. français 22234, ff. 294v–295.

<sup>2</sup> Georges Dumézil, «Arménien (1812)», Cent-cinquante ans de l'École des Langues orientales: Histoire, organisation et enseignements, Paris, 1948, pp. 65–66.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 66–69:

<sup>4</sup> BNF, ms. arménien 324. Հ. Չոխրապի նամակագրությունը (1816–1826 թթ.), 49 նամակ: Նա վախճանվել է Վերսալում 1829 թ.:

սիք էին Ա. Դադյանը կամ Եգիպտոսի վարչապետ Նուպար Փաշան: Հայ լեզվաբանական ուսումնասիրություններն առաջընթաց զարգացում են արձանագրել XIX դարի վերջին՝ Անտուան Մեյեի շնորհիվ:

Ֆրանսիացի արևելագետների եռանդուն գործունեությունը զուգընթաց Փարիզում աշխատում էին նաև մի շարք հայ գիտնականներ՝ Հայր Կարապետ Շահնազարյանը (1814–1865 թթ.)<sup>1</sup>, որը 1855/1862 թթ. իր փարիզյան տպարանում հրատարակել է հայ պատմիչների հրկերի մի ամբողջ շարք, պատմաբան Կարապետ Բասմաշյանը (1864–1942 թթ.), որը բազմաթիվ հայագիտական հոդվածներ է գրել Ֆրանսիական մասնագիտացում ունեցող ամսագրերում և հրատարակել հայագիտական «Բանասեր» ամսագիրը (1899–1907 թթ.), ինչպես նաև բազմաթիվ այլ աշխատանքներ՝ հայտնի «Լեոն Ե Լուսինյանը», Ամրուազ Գալֆան (1826–1906 թթ.), որը Կ. Բասմաշյանի հետ համահեղինակել է Ֆրանս-Հայերեն նշանավոր բառարանը (1901 թ.) և Վենետիկի իր նախկին ընկերների հետ միասին հիմնադրել է Փարիզի Հայկազյան քոլեջը և հրատարակել «Մասեաց աղաւնի» գիտական ամսագիրը (1855–1858 թթ.)<sup>2</sup>:

Այնուամենայնիվ, Ղևոնդ Ալիշանն էր, որ 10 տարիների ընթացքում՝ 1850–1860 թթ., հայ երիտասարդների մի ամբողջ սերունդ է աճեցրել Սամուել-Մուրադյան քոլեջում<sup>3</sup>, և որի ստեղծագործությունների շնորհիվ Ֆրանսիական համալսարանական շրջանակներում ձևավորվել է հարգալից վերաբերմունք հայկական պատմական ժառանգության նկատմամբ:

### Հայերը Ֆրանսիայում XIX դ. և XX դ. սկզբին

1846 թ. Փարիզի Սամուել-Մուրադ վարժարանի հիմնադրման համար պարտական ենք Մխիթարյանների հետևողականությունն ու հեռադաստիարակչանքը, ինչպես նաև հնդկահայ երկու բարերարներին, որոնց համար երեխաների ուսուցումը առաջնային էր<sup>4</sup>: Այսպիսով, Փարիզի հայկական վարժարանի, ինչպես նաև 1855–1958 թթ. գործած Հայկազյան վարժարանի շնորհիվ ձևավորվել է օսմանյան հա-

<sup>1</sup> Տե՛ս Կ. Կուստանեանց, Կարապետ Շահնազարեան, Թիֆլիս, 1910:

<sup>2</sup> Տե՛ս Սարգիս Վրդ. Թեոթորեան, Պատմութիւն Մուրադեան եւ Հայկազեան վարժարանաց, 4 հատորով, Փարիզ, 1866:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում:

յերի ընտրյալ խապի զգալի մասը, որը և հիմնական բարեփոխումներ պետք է իրականացնեն Կ. Պոլսի հասարակության ներսում: 1870 թ. ֆրանկո-գերմանական պատերազմը Մխիթարյաններին ստիպել է քոլեջը տեղափոխել Իտալիա<sup>1</sup>:

Այս կապակցութեամբ հետաքրքրական է Ստեփան Ոսկանյանի օրինակը, որը Ձմյուռնիայից էր և 1846 թ. ուսանելու նպատակով մեկնել է Փարիզ: Ազատական դադափարները նրան մղել են բարեկաղնիքի վրա պայքարի: Ապա նա հրատարակել է երկու ծայրահեղորեն ազատ ամսագիր՝ «Արեւելք» (1855–1856 թթ.) և «Արեւմուտք՝ Արձագանք Եվրոպայի լուսաւորութեան» (1859–1865 թթ.), որոնք Արեւելքում բարենպաստ հետևանքներ են ունեցել: Վերադառնալով Ձմյուռնիա՝ 1866 թ. Ստեփան Ոսկանը հրատարակել է «Ռեֆորմ» ֆրանսերեն ամսագիրը:

Փարիզում հանդիպում ենք նաև մի քանի պարսկահայերի, որոնց մեջ հայտնի է Միր Դաուդ-Մատուր Մելիք-Շահնազարյանը: Նա 1804 թ. Շահան Զրպետի կողմից ներկայացվել է Նապոլեոնին Պարսկաստանում դիվանագիտական առաքելություն իրականացնելու համար, ապա դարձել շահի դեսպանը Ֆրանսիայում (1806–1817 թթ.), ինչպես նաև՝ Նապոլեոնի կողմից եգիպտոսից բերված մի քանի տասնյակ կովկասցի «մամլյուկներ», որոնք մասնակցել են նապոլեոնյան բոլոր արշավանքներին, ապա վերապրելով հաստատվել Մարսելում տարօրինակ անուններով՝ «Ուանիս Հայ», «Ժոզեֆ Սալա՝ Շուշեցի», «Ազարիա Բրուս», «Մարիամ Հովհաննես», «Ժոզեֆ Հայ», «Հովհաննես Սերաֆ», «Ժորժ Հայ» և այլն: Ռուստամը մեկուսացել է Փարիզի մոտ՝ Դուրդանում, որտեղ և մահացել է 1845 թ. դեկտեմբերի 7-ին<sup>2</sup>:

XIX դարի երկրորդ կեսին նկատվում է Հայ առևտրականների վերահայտնությունը. այս անգամ խոսքը Ռուսական կայսրության հպատակների՝ ծնունդով կովկասցիների մասին է. ընդ որում ամենահին առևտրական տունը պատկանել է Շեհրիյանց ընտանիքին: 1860–1870-ական թթ. նկատելի է դառնում Բոգդանովներին, Գյանջենցովներին, Ահարոնյանցներին և այլոց պատկանող ընկերությունների առկայությունը: Օսմանյան կայսրությունից և Պարսկաստանից Հայերի հոսքը Ֆրանսիա տեղի է ունեցել ավելի ուշ՝ 1870-

<sup>1</sup> J. Mathorez, «Les Arméniens en France de 1789 à nos jours», REArm II (1922), pp. 298–302.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 294–296:

ականներին, ի դեմս Արգեյանի, Զարգարյանի, Ղյուրեկյանի, Գյուլբենկյանի, Սեւյանի, Թյուրապյանի, Միրզայանցի (Վերջինս հաստատվել է Սեն Ժակ փողոցում և 1894 թ. դարձել Պարսկաստանի Հյուպատոս) և Թեքեյանի: Մի քանի տասնյակ անդամներից բաղկացած այս նոր գաղթօջախը հիմնել է Մարսելի Սուրբ Հարություն եկեղեցին, որը կառուցվել է Օրմոն փողոցի վրա և օծվել 1882 թ. հունվարի 8-ին՝ իր առաջին սպասավոր Հայր Սահակ Ութուղյանի կողմից<sup>1</sup>:

Մի քանի տարի անց քաղաքական գործիչ, Վանի ուսուցչաց դպրոցի հիմնադիր Մկրտիչ Փորթուզալյանը (1848–1921 թթ.), որն իր եռանդուն գործունեության պատճառով հետախուզվում էր համիդյան ոստիկանության կողմից, գաղթել է Մարսել և այնտեղ հիմնել «Արմենիա» ամսագիրը: Վերջինս լույս է տեսել 1885–1923 թթ. անընդմեջ և աստիճանաբար դարձել Հայկական Հարցի, ինչպես նաև Ֆրանսիայում հաստատված հայրենակիցների պաշտոնաթերթը: Դա քաղաքական վտարանդիների ժամանակաշրջանն էր, երբ 1894–1896 թթ. Ջարդեբրի հետևանքով հարյուրավոր փախստականներ գաղթել են Մարսելի նավահանգիստ: Քաղաքապետարանի բարյացակամության շնորհիվ նրանց են տրամադրվել լուծարքի ենթարկված Վիեյ-Շարիտե նախկին հիվանդանոցի սենյակները, ինչը գտնվում էր հին նավահանգստի բարձունքներին: Նրանց օգնելու նպատակով հիմնվել է օգնության կոմիտե՝ Օժեն Ռոստանի նախագահությանը (էդմոն Ռոստանի հայրը): 1896 թ. սեպտեմբերին Հին նավահանգիստ են ափ իջել նաև Բանկ Օտոմանի զբաղմանը մասնակցած 17 հայերը, որոնց բանտարկել են Սուրբ Պետրոս բանտում, ապա վտարել Արգենտինա: Այնպես որ, Մարսելում կարելի էր հաշվել 300–400 հայ, և այդ թիվը գրեթե չի փոխվել մինչև 1914 թ.<sup>2</sup>:

Փարիզում, բացի մի քանի թանկարժեք քարերի վաճառականներից և մի քանի տասնյակ պոլսեցի ուսանողներից, կարելի է թվարկել նաև մի քանի հայտնի վտարանդիների, որոնցից էր նաև օսմանյան բարձրաստիճան պաշտոնյա, հայ ազգային սահմանադրության հայր Գրիգոր Օտյանը, որը Եվրոպայում բազմաթիվ հատուկ առաքելություններ է իրագործել:

<sup>1</sup> C. D. Tékéian, նշվ. աշխ., էջ 70:


<sup>2</sup> Նույն տեղում, էջ 70–71: E. Khayadjian, «La communauté arménien de Marseille», Marseille, n. 118, 3e tr. 1979, pp. 35–38.



Հռոմի Ս. Մարիամ Եփիատացի հայոց եկեղեցին և հայոց հյուրատունը  
(փորագրապատկեր)



Յակոբ Մեղապարտ «Ուրբաթագիրք» (1512 թ.)



Ս. Ղազար կղզին (փորագրապատկեր)

Ղևոնդ Ալիշան





«Սատվածաշնչի»  
Մխիթար Աբրահամյանի  
հրատարակության  
անվանաքերթը (1733 թ.)


Հարություն Ավգերյան






Մխիթար Մեքաստացու  
«Մատթեոսի Ավետարանի  
մեկնության» անվանաթերթը  
(Վենետիկ 1737 թ.)

«Բաղդիբ հայկազեան լեզուի»  
(անվանաթերթ 1749 թ.)





PALAZZO ZENOBIO SOPRA IL RIO DEL CARMINE

*Architetto e. Antonio Gaspary*

Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը (փորագրապատկեր)



Գեղայի Ս. Երրորդության  
մայր եկեղեցին



OXENDIUS VERZELLESCVS  
COLLEGI VRBANI DE  
ALV MANS EPISCOPIVS



ALN ENO-MOLDAVVS  
PROPAGANDA FIDE  
ALAD EN. ANN. D. MDCXCI

Օքսենտիուս Վրզաբյան

Զաբարիա Կապրուշյան






Գրիգոր Ցեցյան

Գրիգոր Գովրիկյանի  
«Դրանսիլուանիոյ հայոց  
Մետրոպոլիսը» (Վիեննա, 1896)  
մենագրության անվանաթերթը






*La Città d'AMSTERDAM Capitale della OLANDA*

Ամստերդամի համայնապատկերը



DE AMSTERDAMER KANAL IN 1793.


Ամստերդամի հայոց եկեղեցին



Մատթեոս Ծարեցի «Յիսուս Որդի» (1661 թ.)

Ոսկան Երևանցի  
«Աստուածաշունչ»  
(1666-1668 թթ.)






«Համառարած Աշխարհացոյց» (Ղ. Վանանդեցի, 1695 թ.)




Ռսկան Երևանցու Վեմ քարը (Մարտի)



Ամստերդամի հայոց 1714 թ. հունիսի 10-ի դիմումը Էջմիածնի կաթողիկոսին նորակառույց եկեղեցին օծելու թույլտվություն ստանալու համար: Տպագրությունը Ղ. Վանանդեցու (Մատենադարան, Մսերեանների դիվան, թղթ. 209, վավ. 2405)



Առ. Դավրիժեցու «Պատմության» ոսկանյան սրբագրություններից  
(Վիեննայի Սիիթարյան մատենադարան, ձեռ. 317)



Առ. Պողոսյան նորջուղայեցու ծանուցումը տպարանի հիմնադրման մասին (Ամստերդամ 1756)





Նորայր Բյուզանդացի



Ամերիկահայ ընտանիք (1908 թ. Բոստոն)



Ամերիկահայ կամավորներին մարզող «Հրայր» խումբը  
(1915 թ., Բոստոն)



Կալիֆորնիայի Նահանգի հայ գյուղատնտեսները (XX դ. սկիզբ)

Ադամանդավաճառներ ժողեֆ Իսկենդերը, Գարրիել Էզնայանը, ժորժ Էքմեքչյանը և բանկիր Լևոն Նյունքյարբհենդյանը 1883 թ. Փարիզում հիմնել են հայկական քաղաքական շարժումը՝ «Ֆրանս-հայկական հայրենասիրական ասոցիացիան», որի հիմնական նպատակն էր Հայաստանի ազատագրութունը:

Մինաս Չերազը Փարիզում ասպատանած ևս մի հայտնի քաղաքական վտարանդի էր<sup>1</sup>: Մասնակցելով Բեռլինի կոնգրեսում հայկական շահերը պաշտպանող հանձնախմբի գործունեությանը և դրանով իսկ փաստորեն Կ. Պոլսում *persona non grata* հայտարարվելով՝ նա ստիպված հաստատվել է Փարիզում, որտեղ հրատարակել է Ֆրանսերեն "L'Arménie" (1898–1906 թթ.) ամսագիրը<sup>2</sup>: 1908 թ. երիտթուրքերի կողմից իրագործված պետական հեղաշրջումից հետո նա վերադարձել է Կ. Պոլիս և ընտրվել Հայ ազգային երեսփոխանական ժողովի նախագահ:

Բայց և այնպես, մինչև իր վախճանը՝ 1954 թ., կես դարից ավելի Ֆրանսիայում Հայաստանի խորհրդանիշն է համարվել արձակագիր Արշակ Չոպանյանը, որն ասպատան էր դառել Փարիզում 1895 թ.: Նա մշտապես ներկա էր բոլոր այն գործողութուններին, որոնք մղվում էին համիդյան կեղեքումների, ինչպես նաև երիտթուրքերի կազմակերպած ոճրագործութունների դեմ: Նա մշտապես կապ է պաշտպանել Ֆրանսիացի հայամետ մտավորականների հետ, ցույցեր կազմակերպել ի պաշտպանութուն Օսմանյան կայսրության հայերի, հայրենասիրությամբ է համակել Անատոլ Ֆրանսին, ժորեսին, Կլեմանսոյին, Վիկտոր Բերարին, Ֆրանսիս դը Պրեսանսին, Շառլ Պեգիլին, Ալֆոնս Դոդեին, Էռնեստ Լավիսին, Ֆրեդերիկ Միստրալին, Պիեր Բիյարին, Ժան Լոնգեին և այլոց, որոնք և իրենց հերթին հրատարակել են "Pro Arménia" (1900–1914 թթ.) ամսագիրը: Արշակ Չոպանյանը 1899–1949 թթ. հրատարակել է «Անահիտ» ամսագիրը՝ որը վկայում է Հայկական հարցին ծառայելու նրա շոանդի մասին<sup>3</sup>:

<sup>1</sup> Արշակ Ալաոյանեան, Մինաս Չերազ. Կեանքը և գործը, Գուհրե, 1927. էջ 136 և հետագա:

<sup>2</sup> F. Macler, La France et l'Arménie à travers l'art et l'histoire, Paris, 1917. էջ. 22-24.

<sup>3</sup> E. Khayadjian, Archag Tchobanian et le mouvement arménophile en France. Marseille, n. 119, 4e tr. 1979, pp. 18-21.

1855–1920 թթ. ընթացքում երկար կամ կարճ տևողությամբ 45 անուն հայկական պարբերական է լույս տեսել Ֆրանսիայում<sup>1</sup>:

1870-ական թթ. Փարիզում 100-ի հասնող հայերի ջանքերով Բուլվար Մոնպարնասի առանձնատներից մեկում հիմնել է հայկական առաջին եկեղեցին, որտեղ որոշ ժամանակ ծառայություն է մատուցել եռանդուն քահանա Հովհաննես Հյունքիարբեհնդյանը: 1880 թ. հայերը եկեղեցին տեղափոխել են Վինն փողոցի վրա գտնվող բողոքական եկեղեցու շենքը, որը վարձվում էր գաղութի կողմից<sup>2</sup>: 1904 թ. հոկտեմբերին կովկասցի մեծահարուստ հայերից Ալեքսանդր Մանթաշովի նվիրատվությամբ ավարտվել է Փարիզի Սուրբ Հովհաննես-Մկրտիչ տաճարի շինարարությունը<sup>3</sup>: Նշենք նաև մի խումբ հայտնի հայ ազամանդավաճառուների, հատկապես Ռաֆայել Մարկոսյանին և Սերովբե Սվաճյանին, որոնք համագործակցել են Գարբիել էգնայանի հետ ազամանդների մշակման գործարան հիմնելու նպատակով: 1898 թ. Մարուք Ջիլինգերյանի և Հակոբ Օսկյանի (կամ՝ Օսգյան) կողմից հիմնվել է Փարիզի հայերի կենտրոնական միությունը, որի նպատակն էր Փարիզի ուսանողներին նյութական օժնություն ցույց տալ: Հավատարիմ մնալով իրենց արմատներին՝ հայերը 1893 թ. նոյեմբերի 26-ին Լևոն Ե Լուսինյան թագավորի մահվան 500-ամյա տարելիցի կապակցությամբ նույնիսկ ուխտագնացություն են կազմակերպել Սեն Դենի տաճար:

1900-ականներին Փարիզն օթևան է տվել շուրջ 3000 հայերի<sup>4</sup>, որոնցից շատերը Օսմանյան կայսրությունում ծնված հայ ուսանողներ էին, որոնք եկել էին իրենց ուսումնառն ավարտելու Ֆրանսիայում և սովորում էին ռժշկական, իրավագիտական ֆակուլտետներում, Փարիզի Կենտրոնական դպրոցում, Գրինյոնի Հողագիտության դպրոցում, Գեղեցիկ արվեստների դպրոցում և այլուր: Հիշատակելի են Պողոս Նուբարը, նախարար Գրիգոր Աղաթոնը, երեսփոխաններ Նազարեթ Տաղավարյանը և Գրիգոր Զոհրապը, նատյուրմորտի վարպետ Զաքար Զաքարյանը, ծավանկարիչ Արսեն Շաբանյանը, Տիգրան Փոլադը, քանդակագործ Տեր-Մարուխյանը, գծանկարիչ Էդդար

<sup>1</sup> Ա. Կիրակոսյան, Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794–1964), Երևան, 1970, էջ 554:

<sup>2</sup> F. Macler, La France et l'Arménie, p. 24.

<sup>3</sup> Ա. Մանթաշեանց, Աղեքսանդր Մանթաշեանց, Վիեննա, 1931:

<sup>4</sup> J. Mathorez, նշվ. աշխ., էջ 307:

Շահինը, բնանկարիչ Հովհաննես Ալհազյանը, դիմանկարիչ Ռաֆայել Շիշմանյանը և այլք:

Նրանցից առաջինը՝ Պողոս Նուբարը՝ Եդիպոսոսի վարչապետի որդին, 1912 թ. վերջերին հաստատվել էր Փարիզում, որպեսզի լավագույնս կատարի Հայոց Կաթողիկոսի հանձնարարությունը՝ Փարիզում հաստատել ազգային մի պատվիրակություն, որի գործունեությունը պետք է լիներ արևմտյան պետությունների օգնությունից Օսմանյան կայսրությունից բարեփոխումներ կորզել Փոքր Ասիայի հայկական գավառների համար: Պատգամավորության դիվանները, որոնք պահվում են Փարիզում և Երևանում, վկայում են, թե ինչպիսի մեծածավալ աշխատանք է կատարվել Պողոս Նուբար փաշայի ու նրա գործընկերների կողմից: Դրանք լույս են սփռում Փարիզում կազմակերպված հայամեծ մի կոնգրեսի աշխատանքների վրա, որտեղ իրենց մասնակցությունն են բերել խորհրդարանականներ Եվրոպայի բոլոր պետություններից<sup>1</sup>: Դա այն պատվիրակությունն էր, որը, վերսկսելով իր գործունեությունը 1916 թ., հրատարակել է «Հայաստանի ձայն» (1919–1920 թթ.) ամսագիրը և Հայաստանի Հանրապետության ներկայացուցչության հետ միասին ակտիվորեն մասնակցել զինադադարից հետո Փարիզում կայացած ազգային շահերի պաշտպանության կոնֆերանսներին:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Ֆրանսիայում ապրող հայերը շատ հաճախ որպես կամավոր զինվորագրվել են Ֆրանսիական բանակին: 3500 հայերից բաղկացած գաղութը տվել է մոտավորապես 400 զինվոր<sup>2</sup>: Մարտելը նաև հյուրընկալել է հազարավոր հայերի, որոնք, արձագանքելով Պողոս Նուբարի կոչին, աշխարհի տարբեր կողմերից եկել և կազմավորել են Արևելյան Հայկական լեգեոնը:

1920 թ. Սևրի պայմանագրի կիրառության մեջ չմտնելը պայմանավորեց հայ սփյուռքի ծնունդը և Ֆրանսիայում ուրույն հայկական գաղթօջախի ստեղծումը:

<sup>1</sup> ՀԲԸՄ Նուբարյան գրադարան, Հայ ազգային պատվիրակության դիվանը, 1912–1914 թթ.:

<sup>2</sup> J. Mathorez, Աշխ., էջ 312–314: Ըստ 1921 թ. մարդահամարի տվյալների՝ Փարիզում ապրում էր 2685 հայ, ընդ որում միայն Մարսելը 1922 թ. օրհանել է 522 հայի:

## ՍԿԱՆ ԴԻՆԱՎՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ

Սկանդինավյան երկրներում (Շվեդիա, Նորվեգիա, Դանիա, Ֆինլանդիա, Իսլանդիա) Հայկական գաղթօջախներ սկսել են ձևավորվել XX դարի 70–ական թթ.: Սակայն Հատուկնոտ Հայեր այդ երկրներում դիպվածաբար Հայտնվել են տակավին վաղ միջնադարում: Որոշ ուսումնասիրողներ մինչև անգամ առաջարկել են վարկածներ, ըստ որի Հայերը Սկանդինավյան թերակղզու տարածքում կարող էին Հայտնված լինել ավելի վաղ ժամանակաշրջաններում: Օրինակ, չվեզ ուսումնասիրող Բերթիլ Լյուենդմանը 1957 թ. հրատարակած մի ուսումնասիրության մեջ ցույց է տվել, որ Սկանդինավյան թերակղզու և Դանիայի որոշ շրջաններում հանդիպում է տեղական բնակչությանը ոչ բնորոշ մարդաբանական տիպ: Այդ տիպը, ինչպես նաև նրա արյան բաղադրությունը Հատկանշական է Փոքր Ասիա թերակղզուց դեպի Հյուսիսային ծովն ընկած մի շարք ծովափնյա շրջանների բնակչությանը, այդ թվում Հայերին, ինչը վկայում է հնագույն ժամանակներում Մերձավոր Արևելքից դեպի Արևմտյան Եվրոպա տեղի ունեցած էթնիկական տեղաշարժերի մասին: Ըստ Լյուենդմանի, այս «արմենոիդները» նախ հաստատվել են Կիպրոսում, որտեղից էլ ցրվել են Եվրոպայի զանազան անկյուններ, այդ թվում՝ Յուտլանդիա թերակղզի (Հարավային Դանիա): Այդ տեղաշարժերը Հավանաբար եղել են մ.թ.ա. երկրորդ հազարամյակի վերջին, և դա համարվել է ոչ թե բնակչության զանգվածային գաղթ, այլ ավելի գործնական նպատակ հետապնդող քայլ՝ մետաղամշակության, զարգացած արհեստների և առևտրի ավանդույթներ ունեցող ժողովրդի կողմից մետաղների պաշարներով հարուստ շրջանների գաղութացում: Այս տեսությունը մնում է որպես վարկած, որը, սակայն, ճիշտ չի լինի զսինց առնել<sup>1</sup>: Հօգուտ այս փաստի է խոսում նաև այն, որ դանիական երկաթի դարի վրա նկատելի է թրակիրական և անատոլիական զգալի ազդեցություն:

Վաղ միջնադարում Սկանդինավիայում Հայտնված Հայերը եղել են գերիներ կամ քարոզիչներ: Սկանդինավյան ժողովուրդների

<sup>1</sup> Bertil Lundman, The problem of ancient Oriental shipping on the North Sea, "Journal of Near Eastern Studies", vol. 16, 1957, p. 105–117. Տե՛ս Արամ Քսայան, Արմենոիդները Արևմտյան Եվրոպայում, «Իրան-համէ», Երևան, 1993, ք. 3, էջ 13:

նախնինները՝ նորմանները, վիկինգներն ու վարյազները, որոնք իրենց արշավանքների շնորհիվ կապեր են հաստատել Եվրոպայի և Մերձավոր Արևելքի ժողովուրդների հետ, նրբեմն գերեվարել և իրենց երկրներն են տարել տարբեր ազգերի ներկայացուցիչներին, նաև՝ հայերի: Ֆրանսիացի ուսումնասիրող Ժորժ Դյուլթյուկտը նշել է Ասիայից Եվրոպա մշակույթի փոխանցման երեք ազդակ, որոնցից առաջինը համարել է՝ «Շուեռտեն իջած գերման ցեղերն: ....Այս բարբարոսները ճոխապաճոյճ զարդարուած, ինչպէս ցոյց տալիս են Կլունիի գանձերն և Մետալիաներու հաւաքածոյն, իրենց ետևից ածուծ են (տանուծ են – Ա. Բ.) Հայեր, որոնց հանդիպելիս են լինում Կոստանդնուպոլսում կամ Փոքր Ասիայում»<sup>1</sup>: Այս հայերի միջոցով էլ վիկինգները հաղորդակից են դարձել մի շարք արհեստների: Ըստ շվեդահայ ճարտարապետ Պիեռ Տեր-Հակոբյանի՝ շվեդները հայերից են փոխառել գորգի, ասեղնագործության, բանվածքի, կշեռքի գործածության արհեստները<sup>2</sup>:

Երկու հին իսլանդական աղբյուր վկայում է XI դարի Իսլանդիայում երեք հայ կրոնավորների գործունեության մասին: XII դարի իսլանդացի պատմիչ Արի Ֆորդ Թորգիլսոնի «Գիրք իսլանդացիների մասին» աշխատությունում, որը գրվել է 1122–1133 թթ.<sup>3</sup>, հիշվում են Իսլանդիա ժամանած երեք "hermskir" (այսինքն՝ հայ) եպիսկոպոսների անուններ՝ Պետրոս, Աբրահամ և Ստեփանոս: Մոտավորապես 1020–1030 թթ. նրանք ժամանել են Իսլանդիա իրենց երկուցիրսկիր (հուլյն) ընկերների հետ և քարոզել քրիստոնեություն: Նրանց պատվիրանները նվազ խիստ են եղել, քան Իսլանդիայի եպիսկոպոս Իսլեիֆ Գիգուրարսոնինը, ուստիև շատ իսլանդացիներ հետևել են նրանց: Այնուհետև Նորվեգիայի Ադալբերտ արքեպիսկոպոսը հար-

<sup>1</sup> "Revue des arts asiatiques", Paris, 1925, N 1. Տե՛ս Գեորգ Դյաֆիլեո, Արեւելք եւ քրիստոնէական արուեստը, «Բազմավէպ», Վենետիկ, 1927, ք. 2, էջ 47:

<sup>2</sup> Հայերու ազդեցութիւնը շուեռացոց վրայ, «Յառաջ», Փոբիզ, 24.02.1966: Հայերի՝ որպէս միջմադարյան Ըվեդիայում արհեստներ սովորեցմելու իրողությունն արտացոլվել է նաև գեղարվեստական գրականության մէջ: Ժամանակակից շվեդ գրող Յան Գլյուսի «Ավարտված ճամփաների երկիքը» պատմավեպում (հայերեն կրատարակությունը՝ Երևան, 2005) առկա են հայ եղբայրներ Հակոբ և Մարկոս Վախտյանների կերպարները, ուրքեր վեպի գլխավոր հերոսի հետ Արևելքից մեկնում են Սկանդինավիա և այնտեղ իրենց արտեստագործական իմաստությունները ներդնում տեղացիների շրջանում:

<sup>3</sup> Տե՛ս ֆրանսերեն քարգմանությունը՝ Ari Thorgilsson, Le livre des Islandais, Brussels, 1898.

տուկ հրամանով արգելել է հայ կրոնավորների սրբազնագործումը: Ենթադրվում է, որ նրանց ճանաչել է իսլանդական լուսավորիչ, Իսլանդիայի գրականութայն հիմնադիր Ռուդոլֆ Եպիսկոպոսը: Մյուս կողմից իսլանդական հին օրենքների գրքում (*Grágás*) նշված է, որ իսլանդացիներին թույլ է տրվել մասնակցել ոչ լատիններեն քարոզող Եպիսկոպոսների կամ քահանաների ծիսակատարություններին՝ լինեն նրանք *hermskír* (հայ) կամ *gírskír* (հույն)<sup>1</sup>: Թերևս հետագայում այնպիսի ուշ, հայերը հասել են մինչև Ամերիկա մայրցամաքին հարող Գրենլանդիա կղզի, որը X դ. սկզբին պատկանել է Նորվեգիային, ապա՝ անցել Դանիայի տիրապետութայն տակ: XVII դ. սկզբին դանիացի հեղինակ Կլաուս Բրիստոֆերսեն Լիսբանդերը նշել է, որ մի խումբ հայեր փոթորկից հալածվել և ընկել են Հյուսիսային սառուցյալ օվկիանոս, հասել Գրենլանդիա, որտեղից վերադարձել են Նորվեգիա: Ըստ նրա, հայերը «տրամաբանություն և դատողություն էին ստացել, և իրենց ժողովրդին Հայաստանից դուրս են առաջնորդել՝ հին ժամանակներում այս հողերը (Գրենլանդիա – Ա. Բ.) գրավելու համար»<sup>2</sup>: Վաղ միջնադարում հայերի՝ Գրենլանդիան գրավելու ծրագիրը չափազանց արտառոց է թվում, ուստի և Լիսբանդերի սույն վկայությունը թերևս առասպելների շարքին պետք է դասել:

«Իսլանդական ժամանակագրություն մինչև 1578» ժողովածուում վկայություն կա այն մասին, թե ինչպես 1315 թ. Նորվեգիայի թագավոր Հաբոնի կյանքի վերջին տարիներին նրա մոտ է ժամանել Հայաստանից մի դեսպան՝ թանկարժեք նվիրներով<sup>3</sup>: Սույն թվականը վերաբերում է Կիլիկիայի հայկական թագավորութայն ժամանակաշրջանին, երբ գահակալում էր Օշին թագավորը (1308–1320 թթ.): Ցավոք, չկան լրացուցիչ տվյալներ, թե ով է եղել այդ դեսպանը, և ինչ առաքելութայն է նա հասել Եվրոպայի Հյուսիս:

Հայերի՝ սկանդինավյան երկրներում հայտնվելու հաջորդ փուլը վերաբերում է ուշ միջնադարին: Այդ ժամանակաշրջանում հիմնականում Շվեդիայում և Դանիայում հայտնվել են Եվրոպայի տարբեր երկրների հետ առևտրական լայն գործունեութայնը գրադվող

<sup>1</sup> Այդ մասին մանրամասն տես Yaroslav R. Dachknvitch, *Les Arméniens en Island (XIe siècle)*, "Revue des Études Arméniennes", no 20, (Paris) (1986–1987), p. 321–336.

<sup>2</sup> Claus Christoffersen Lyskander, *Det Grønlandske chronica*, Copenhagen, 1608, s. 21.

<sup>3</sup> *Islandske Annaler indtil 1578*, udgivne for det norske historiske Kildeskrikkfond, Christiania, 1888, s. 150: Տես նաև O. A. Øverland, *Illustreret Norges historie*, bind 3, Christiania, 1888, էջ 710:

նորջուղայեցի հայ վաճառականներ, որոնք, սակայն, մշտական բնակութուն չեն հաստատել:

Ժամանակադրական կարգով Շվեդիայում հաստատված առաջին հայը, որի անունը հասել է մեզ, XVII դարում ապրած լեհահայ ազնվական Ջակարիաշ Գամոցկին էր Լեմբերգ (Լվով) քաղաքից: Շվեդ-լեհական պատերազմի ժամանակ Գամոցկին գերեվարվել է Շվեդիայի Կառլ X թագավորի կողմից և, անցնելով շվեդների կողմը, ծառայել է որպես դիվանագիտ-թարգման<sup>1</sup>:

Առաջին հայերի խումբը, որը եկել և մնացել է Շվեդիայում, զինվորականներ էին Կոստանդնուպոլսից: Երբ 1709 թ. շվեդ-ռուսական պատերազմի ժամանակ Պոլտավայի ճակատամարտում Կառլ XII-ի զորքը պարտութուն է կրել ռուսներից, Շվեդիայի թագավորը մեկնել է Կոստանդնուպոլիս և օսմանյան սուլթանի հետ հակառուսական դաշինք կնքելու նպատակով մնացել այնտեղ հինգ տարի շարունակ: Այստեղ նա պարտքով գումար է վերցրել տեղի հայ դրամատերերից: 1714 թ. Կառլը վերադարձել է Շվեդիա, իսկ նրան հետևել է 60–70 հոգուց բաղկացած մի զորաբանակ: Այդ խումբը Շվեդիա է եկել կոմս Աքսել Սփարբեի ղեկավարությամբ և բաղկացած է եղել հայերից, հույներից, հրեաներից, արաբներից և թուրքերից<sup>2</sup>: Խմբի մի մասը հաստատվել է Շվեդիայում, ամուսնութուններ կնքել և ձուլվել շվեդական հասարակութայն մեջ<sup>3</sup>:

Օսմանյան մայրաքաղաքում Կառլ XII-ի երկարածամկետ մնալու անմիջական արդյունքը եղավ այն, որ Բարձր դռան հետ հաս-

<sup>1</sup> Elżbieta Świącicka, Zachariasz Gamocki, A Polish Nobelman in Swedish Service, Allvarlig debatt och rolig lek. En festskrift tillägnad Andrzej Nils Uggla, Uppsala Univesitet, 2000, p. 78–95. Ярослав Дашкевич, Захарий Гамоцький – вірменин з України, дворянин у Швеції, та його зустрічі з Богданом Хмельницьким (1655 р.), “Вірмени в Україні: дорогами тисячолить, збірник наукових праць”, Львів, “Логос”, 2012, с. 1160–1170.

<sup>2</sup> Walther Björkman, Die Schwedisch-Türkischen Beziehungen bis 1800, Festschrift Georg Jacob, Leipzig, 1932, S. 17.

<sup>3</sup> Շյովդեի Գարնիսոն քանգարանում պահվում է մի փաստաթուղթ, որտեղ նշված են 1682–1901 թթ. ապրած շվեդ զինվորականների անունները: Դրանց մեջ առկա են նաև Լարս Արմինյանի (ծնվ. 1686 թ.), Հինդրիխ Արմինյանի (ծնվ. 1692 թ.) և Անդերս Քուբեյյանի (ծնվ. 1693 թ.) անունները, որոնք հավանաբար եղել են այդ զինվորականների խմբից: Հայտնի է նաև այդ հայերից մեկի թոռնուհու՝ տիկին Ինգա Բրիթա Հեգի (1775–1842 թթ.) անունը, որը բնակվել է Յոնշյոփինգում, ունեցել չորս զավակ, զբաղվել տնտեսությամբ: Ժամանակակիցները հիշում են, որ այդ կինն օժտված է եղել շվեդներին ոչ բնորոշ սև աչքերով և մի փոքր անսովոր շվեդական առոգանությամբ:

տատվեցին դիվանագիտական հարաբերութիւններ: Զմյուռնիայի շվեդական հյուպատոսարանի առաջին թարգման Հովհաննես Մուրատճայանի (1721–1787 թթ.) որդին և թոռը կարևոր հետք են թողել Շվեդիայի դիվանագիտութեան պատմութեան մեջ: Իզնատիուս Մուրաջա դ'Օսսոնը (1740–1807 թթ.) 1780 թ. ստացել է շվեդական ազնւրկական ասպետի (բարոն) տիտղոս և անվանել իրեն դ'Օսսոն (շվեդական ասպետների համայնքում կրել է 2171 համարը): Նա 1763–1775 թթ. ծառայել է Կոստանդնուպոլսի շվեդական դիվանագիտական ներկայացուցչութիւնում որպէս առաջին և երկրորդ թարգման, հյուպատոսարանի քարտուղար, գործերի հավատարմատար (1795 թ.), արտակարգ և լիազոր ներկայացուցիչ, Կոստանդնուպոլսում շվեդական դեսպանորդ կամ դիվանագիտական առաքելութեան ղեկավար (1795–1799 թթ.): Իսկ վերջինիս որդին՝ դիվանագետ-արևելաբան Աբրահամ Կոստանտին դ'Օսսոնը (1789–1851 թթ.), 1798 թ. մեկ ուսումնական շրջան սովորել է Ուփսալայի համալսարանում՝ դառնալով այդտեղ առաջին հայազգի ուսանողը: Նրա շվեդական ուսումնառութիւնը, ի թիվս տարբեր առարկաների, ներառել է նաև Շվեդիայի պատմութիւնը, հյուսիս-եվրոպական դիցաբանութիւնը և պատմութիւնը, սկանդինավյան աշխարհագրութիւնը և շվեդական մշակույթը: 1805–1808 թթ. Ֆրանսիայում, Իսպանիայում և Պրուսիայում աշխատելուց հետո 1814–1816 թթ. եղել է Շվեդիայի թագաժառանգ արքայազնի գրասենյակի քարտուղարը, ապա՝ Շվեդիայի դեսպանորդը Հաագայում (1816–1834 թթ.) և Բեռլինում (1834–1850 թթ.): Այս դիվանագետ-պատմաբանը նաև հետաքրքրութիւններ է ունեցել կենսաբանութեան և քիմիայի նկատմամբ, աշխատել է շվեդ քիմիկոս Յոնս Յակոբ Բերցելիուսի (1779–1848 թթ.) տարրալուծարանում, գրել հետազոտութիւն, որը հրատարակվել է շվեդական ակադեմիայի դիտական աշխատութիւնների ժողովածուում: Բերցելիուսի օժանդակութեամբ դ'Օսսոնը 1817 թ. դարձել է Շվեդիայի գիտութիւնների ակադեմիայի անդամ, 1823 թ.՝ գրականութեան և արվեստի ակադեմիայի, 1828 թ.՝ գիտական ընկերութեան պատվավոր անդամ Ուփսալայում<sup>2</sup>: Ի դեպ, դ'Օսսոնի քույրը՝ Լյուսի Կլեր Մուրաջա դ'Օսսոնը (1778-? թթ.), 1798 թ. ամուսնացել է շվեդ

<sup>1</sup> C. d'Ohsson, Kort öfversigt af chemiens historia ifrån de äldsta tider. Tal, hållit vid præsidii nedläggande uti Kongl. Vetenskaps-academien, den 5 april 1826. Sthlm, P. A. Norstedt & söner, 1826.

<sup>2</sup> Svenskt biografisk lexikon, b. XI, Stockholm, 1945, s. 340–345.

դիվանագետ Նիլս Գուստավ Պալինի (1765–1842 թթ.) Հետ, որը 1805–1824 թթ. եղել է Շվեդիայի դեսպանը Կոստանդնուպոլսում: Ամուսնու մահից հետո տիկին Պալինը բնակվել է Ստոկհոլմում<sup>1</sup>: Հավանաբար նա եղել է Շվեդիայի մայրաքաղաքի առաջին հայազգի բնակիչը:

XIX դ. Շվեդիայում երկարատև կեցությամբ բնակվել են հատուկներ հայեր: 1867–1872 թթ. Ստոկհոլմում է բնակվել Շվեդիայի Կառլ XV թագավորի մտերիմ, եգիպտահայ ՕՀան Դեմիրճյանը (1836–1877 թթ.), որն ընդունել է շվեդական քաղաքացիություն և նշանակվել արքունի ախուռապետ: Ենթադրվում է, որ Ստոկհոլմից ոչ հեռու՝ Օվեր-Յարվա բնակավայրում գտնվող արևելյան ոճի մատուռը, որտեղ հանդիսություններ են կազմակերպվել թաղավորի համար, և որի վրա լուսն է հայ ճարտարապետութայն տարրեր, կառուցել է ՕՀան Դեմիրճյանը կամ նրա եղբայրներից մեկը: ՕՀան Դեմիրճյանը հրատարակել է երկու Ֆրանսերեն և մեկ շվեդերեն աշխատություն: Նա պարգևատրվել է մոտ մեկ տասնյակ շքանշաններով, այդ թվում՝ շվեդական «Վասա» շքանշանով:

1882–1903 թթ. Շվեդիայի մայրաքաղաքում է բնակվել հայ բանասիրութայն երախտավորներից մեկը՝ Նորայր Բյուզանդացին (Ստեփան Գազեղյան-Ճիզմեճյան, 1844–1916 թթ.), որն ամուսնացել էր շվեդական արքունի լուսանկարչուհի Սելմա Յակոբսոնի Հետ: Ստոկհոլմում 1887 թ. Բյուզանդացին հրատարակել է Սկանդինավիայում առաջին հայալեզու պարբերականը՝ «Քննասէր» խմորատիպ հանդեսը<sup>2</sup>, որի հրատարակումը երկրորդ պրակից հետո դադարեցրել է:

19-րդ դ. վերջին քառորդին Ստոկհոլմում է բնակվել նաև հայազգի տիկին Բառերը, ծնունդով պոլսահայ Տամատյան ընտանիքից, Շվեդիայում Ֆրանսիայի դեսպան Բառերի կինը, ինչպես նաև Պեյլեկճյան ազգանունով մի հայ: Այդ ժամանակաշրջանում Շվեդիայում հայտնվել են առաջին հայ ուսանողները: Բազմից Արշակ Թոմայանցն ուսանել է Ստոկհոլմի Արվեստական դպրոցում, իսկ շուշեցի Մարգար Տեր-Ասատրյանը՝ Քրիստինեհամնսի շվեդ բողոքականների դպրոցում (1886–1888 թթ.): Վերջինս հետագայում Կովկասից պարբերաբար թղթակցություններ և նամակներ է ուղարկել շվե-

<sup>1</sup> Ture J. Arne, Svenskarna och Österlandet, s. 79.

<sup>2</sup> Հննաստր. ինքնագրութիւն Նորայրի, պրակ 1, Ստոկհոլմ, տպարան Կառլսոնի, 1887, 64 էջ, պրակ 2, տպարան Գերմանդսի, 1887, 63 էջ:

դական «Ավենսքա մորոնբլադեթ» և «Միսիոնսֆորբյունդեթ» պարբերականներին: Բաքվից բժշկուհի, Հանրային գործիչ Մարգարիտ Օհանյանը որոշ ժամանակ բնակվել է Սկանդինավիայում, Շվեդիայում ուսանել է Ջուլհակություն. Հետագայում Թիֆլիսի «Մշակին» աշխատակցել է Ֆիննական կյանքի մասին հոդվածներով<sup>1</sup>: Այդ շրջանում հատուկենտ հայեր պիտի հաստատված լինեն նաև Նորվեգիայում<sup>2</sup>:

Օսմանյան կառուցվածքում 1894–1896 թթ. կազմակերպված Հայկական կոտորածների հետևանքով Հայ տարագիրները ցրվել են եվրոպայով մեկ՝ հասնելով մինչև հյուսիս, ընդհուպ մինչև Իսլանդիա կղզի<sup>3</sup>: 1902–1903 թթ. Շվեդիայի այլևայլ բնակավայրերում շրջել են Հայ գաղթականների խմբեր: Նրանք այնտեղ են հասել Ֆինլանդիայի, Դանիայի և Ռուսաստանի վրայով: Մեծ մասամբ եկել են Ուլմիայից, որտեղ գործել է գերմանա-հայկական որբանոց: Այդ հայերը չքավոր էին, երբեմն մուրում էին և պետությունից մշտական կեցության թուլյալություն խնդրում: Նրանցից ոմանց վզից կախված են եղել տարբեր մակագրություններով թղթեր. «Ես թուրքերի կողմից ավերված հայկական եկեղեցու քահանա եմ: Խնդրում եմ օգնել վերակառուցել այն» կամ «Խնդրում եմ օգնեք ազատել իմ քրոջը մահամեղական գերությունից»: Այդ հայ մուրացիկներից ոմանք բավականաչափ օգնություն են ստացել շվեդ հոգևորականներից և ժողովրդից: Սակայն, քանի որ նման գործունեությունն արգելված է եղել Շվեդիայում, կառավարությունը նրանց վտարել է երկրից: 1900–1914 թթ. Շվեդիան երկրի սահմաններից արտաքսել է ընդհանուր առմամբ 363 հայի<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Մշակ», 4.10.1909:

<sup>2</sup> Մույն ենթադրության համար եիմք է ծառայել Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վեպի մի հիշատակությունը: Հերոսը հիշում է Ֆրեզմոյում ապրող մի կարսեցի հայտու, «իբ ամուսնու եետ երկար տարիներ ապրած Նորվեգիայում և 1890–ին տեղափոխված Ամերիկա» (Խաչիկ Դաշտենցի, Ռանչպարների կանչը, Երևան, 1984, էջ 472):

<sup>3</sup> Այս մասին վկայություն կա իսլանդացի գրող Հալդոր Լաքսնեսի «Նապոլեոն Բոնապարտը» պատմվածքում: Գործող անձերից մեկը՝ մի գեղջկուհի, նկատում է մի շրջմուլիկի, որը «սկսեց ինչ-որ բան մոթմոթալ կինը չկարողացավ որևէ բան հասկանալ և հանկարծ մտածեց, որ նա այն հայերից է, որոնք այստեղ ապաստան էին փնտրում՝ փրկվելով թուրքերից» (Халдор Лакснес, Лияль, Москва. 1955, с. 31):

<sup>4</sup> Tomas Hammar, Sverige åt svenskarna: invandringspolitit, utlämningskontroll och asylrätt 1900–1932, Stockholm, 1964, s. 69–71.

XIX դ. վերջին, երբ Ֆինլանդիան Ռուսական կայսրութեան մաս էր կազմում, Պետերբուրգում և հարակից շրջաններում ուսանող և աշխատող հայերը հաճախ են այցելել Ֆինլանդիային պատկանող տարածքներ, ժամանակավորապես բնակվել այդտեղ, իսկ հետագայում այդտեղ են հաստատվել քաղաքական վտարանդիներ: 1889–1896 թթ. Հելսինկիում ընտանյոք բնակվել է բողոքական քահանա Աբրահամ Ամիրխանյանցը: 1893 թ. փետրվարին Հելսինկիի Աշխարհագրական ընկերակցութունում Ամիրխանյանցը դասախոսութուն է կարդացել Հայաստանի մասին և գիրք հրատարակել մահմեդականների մեջ քարոզչական գործունեություն մասին: 1906 թ. վերադարձել է Ֆինլանդիա, որտեղ գերմաններն, ռուսերեն և ֆինն թարգմանչի հետ առենախոսել է արևելյան խնդրի վերաբերյալ<sup>1</sup>: 1900–1902 թթ. Ֆինլանդիայում է բնակվել հայ հեղափոխական շարժման գործիչ Վահան Փափազյանը (Կոմս, 1876–1973 թթ.), ինչպես նաև գորգագործ Վարդան Չմշկյանը (1881–<sup>o</sup> թթ.), որն ընտանիքի հետ ֆիննական քաղաքացիություն է ստացել միայն 1938 թ.:

1911–1915 թթ. Իրանում զինվորական ծառայության մեջ են եղել 60 շվեդներ, որոնցից մի քանիսն ամուսնացել են տեղաբնակ հայուհիների հետ և նրանց իրենց հետ տարել Շվեդիա:

1917 թ. ռուսական հեղաշրջման և քաղաքացիական պատերազմների հետևանքով Ֆինլանդիա և Շվեդիա են ապաստանել սակավթիվ ռուսաստանաբնակ հայեր: Նրանցից ոմանք հաստատվել են երկրում, ոմանք էլ տեղափոխվել տարբեր երկրներ (ինչպես՝ Բաքվից մեծահարուստ Ստեփան Լիանոզովը, որը եղել է էստոնիայի ռուսական կառավարության ղեկավարը, հետագայում հաստատվել է Ֆրանսիայում): 1923 թ. շվեդական մի մարդասիրական ընկերություն ատաջարկ է ներկայացրել կառավարությունը՝ Շվեդիա 3000 հայ գաղթական ընդունելու համար, ինչը չի իրականացվել<sup>2</sup>:

Ի դեպ, ըստ ԱՄՆ-ի գաղութային գործավարություն լոյալների, 1899–1923 թթ. սկանդինավյան երկրներէջ Ամերիկա է գաղթել 18 հայ, որոնցից 13-ը՝ Նորվեգիայից, չորսը՝ Շվեդիայից և մեկը՝ Ֆինլանդիայից<sup>3</sup>:

<sup>1</sup> «Մշակ», Թիֆլիս, 1.06.1906:

<sup>2</sup> «Ասպարէզ», Յրեզնո, 4.12.1923:

<sup>3</sup> Մանյուսի Ն. Լ., Ամերիկահայ մարդահամարը. Թեոլիկ, «Ամենուն տարեցոյցը», Վենետիկ, 1926, էջ 586–587:

Այսպիսով, հայերի պատմութիւնը սկանդինավյան երկրներում մի քանի դար շարունակ առավելապես եղել է սակավաթիւ անհատների ներկայութիւն մշտական կամ ժամանակավոր. վաղ միջնադարում՝ քարոզիչներ կամ վիկինգների գերիներ, ուշ միջնադարում՝ ջուղայեցի առևտրականներ, XIX դ.՝ մտավորականներ և ուսանողներ, XX դ. սկզբին՝ չքավորներ և քաղաքական վտարանդիներ: Մի քանի տասնամյակ անց միայն հայերի պարբերական հոսքերի հետևանքով սկանդինավյան պետութիւններում կձևավորվեն առաջին գաղթօջախները՝ այդ տարածաշրջանում ստեղծելով հայերի քիչ թե շատ մշտական ներկայութիւն:

# ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԵԱՀԱՆԳՆԵՐ

Առաջին հայերը Նոր երկրում (XVII դ. սկիզբ – XVIII դ. առաջին կես)

Հայերն Ամերիկայի Միացյալ Նահանգներ են մեկնել անձնական, կրթական, տնտեսական, քաղաքական, մշակութային, կրոնական և այլ հանդամանքներից ելնելով:

Պատմական հավաստի փաստաթղթերից պարզ է դառնում, որ դեռևս XVII դ. սկզբից եվրոպայից դեպի Հյուսիսային Ամերիկա ուղևորված վերաբնակիչների թվում էին նաև առաջին սակավաթիվ անհատ հայերը: Այսպես, 1618 թ. ամերիկյան նորաստեղծ Վիրջինիայի գաղութ է ոտք դրել առաջին ամերիկահայը՝ պարսկահպատակ Ջոն Մարտինը, և զբաղվել ծխախոտագործությամբ, ապա 1653 թ. Ջոյուենիայից հրավիրվել են երկու հայեր՝ վերականգնելու անհաջողության մատնված Վիրջինիայի գաղութի շերամաբուծությունը և իրենց հմտությունները փոխանցելու տեղաբնիկներին: Նրանցից մեկը հիշատակվում է որպես Ջորջ Հայ:

Հետագա տարիներին Ամերիկա մեկնած հայերի մասին պահպանվել են շատ սակավ, հաճախ՝ ենթադրական տեղեկություններ: XVII–XVIII դդ. ընդգրկող այդ ժամանակաշրջանում հայերը հիմնականում գաղթել են Մեծ Բրիտանիայի հետ առավել գործուն հարաբերություններ ունեցող եվրոպական որոշ երկրներից (հատկապես՝ Հոլանդիայից), ինչպես նաև՝ Հնդկաստանից, և վերաբնակվել ամերիկյան նորաստեղծ տարբեր գաղութներում (Վիրջինիա, Մասսաչուսեթս, Հարավային Կարոլինա, Ջորջիա): Այսպես, 1682 թ. Մասսաչուսեթսում հաստատվել է առաջին հայը՝ ծագումով հունգարահայ գիտնական Ստեփան Ջադորին (հավանաբար՝ հայկական Ջադուրյան, Ասատուրյան կամ Աստվածատուրյան ազգանունների տարբերակը), 1719 թ. Հարավային Կարոլինայում՝ հոգևորական Փիթեր Թուսթյանը (հավանաբար՝ Պետրոս Դուստրյան) և նրա թեմի անդամ Ջեյթրը Սադուրին (հավանաբար՝ հայկական Հակոբ Սադուրյան, կամ Ասատուրյան, կամ Աստվածատուրյան ազգանուններից), 1738 թ. Ջորջիայում հիշատակվում է հողագործ Ստեփան Թարրյանը

(կամ՝ Թերյեն, Թարրյեն, Հավանաբար՝ Տերյան)<sup>1</sup>:

Այսպիսով, բրիտանական գաղութատիրության շրջանում Ամերիկա մեկնած առաջին սակավաթիվ անհատ Հայերի մասին մեզ Հասած կցկտուր տեղեկություններից պարզ է դառնում, որ նրանց մեծ մասը տնտեսական ու պատմական Հանգամանքների բերումով եվրոպական տարբեր երկրներում ցրված Հայերն էին կամ նրանց օտարացած սերունդները, որոնք, առևտրական և այլ Հանգամանքների բերումով առնչվելով Մեծ Բրիտանիայի Հետ, միմյանցից տարբեր, հիմնականում անհատական դրդապատճառներով անցել էին նոր վերաբնակվող գաղութ և ներգրավվել նրա տնտեսական ու հոգևոր կյանքի տարբեր բնագավառներ:

Բրիտանական գաղութատիրության տվյալ ժամանակահատվածում Ամերիկա մուտք գործած Հայերի ստույգ թիվը դժվար է որոշել, քանի որ ընդհուպ մինչև 1820 թ. նորեկների, այդ թվում նաև Հայերի, գրանցման վերաբերյալ փաստաթղթեր չեն պահպանվել:

Նշենք, որ պատմական տվյալ ժամանակաշրջանում Ամերիկա մուտք գործած վերոհիշյալ առաջին Հայերով չի պայմանավորվել Հետագա տարիներին Հայկական տարբեր տարածքներից դեպի ԱՄՆ նպատակառդղված տեղաշարժը. նրանք սոսկ գաղթականության հիմնական հոսքից դուրս գտնվող անհատներ էին<sup>2</sup>:

**Դեպի ԱՄՆ Հայերի պանդխտության և գաղթի պատմաքաղաքական դրդապատճառներն ու սոցիալական կազմը (1834–1924 թթ.)**

Հետագայում՝ XIX դ. առաջին կեսից սկսվել է Հայերի բուն հոսքը դեպի ԱՄՆ՝ ի հետևանս ամերիկյան բողոքական քարոզչների Օսմանյան կայսրությունում ծավալած կրթալուսավորչական գործունեության: Արտաքին Առաքելությունների Համամիսիոներական Ամերիկյան Խորհուրդը (*American Board of Commissioners for Foreign Missions*), որի նպատակն էր «Աևետարանը տարածել ի

<sup>1</sup> Malcom, V. M. The Armenians in America. Boston, Chicago, 1919, pp. 52, 56–57. Tashjian, J. H. The Armenians of the United States and Canada. Boston, 1947, pp. 3, 7–12. Wertsman, V. The Armenians in America. 1618–1976. A Chronology & Fact Book. New York, 1978, p. 1.

<sup>2</sup> Ավագյան Զ., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (սկզբնավորումից մինչև 1924 թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 17: Տես նաև՝ Նույնի, Ամերիկայի Միացյալ Նահանգներ (ԱՄՆ), «Հայ Սփյուռք Հանրագիտարան», Երևան, 2003, էջ 33–85 [համահեղ.՝ Ռ. Փիրումյան]:

սփիւռու աշխարհի»<sup>1</sup>, 1831 թ. Կ. Պոլսի Բերքբի թաղամասում հիմնած Հայկական Առաքելության միջոցով կառուցել է ավետարանական եկեղեցիներ, դպրոցներ, քոլեջներ, որտեղ եվրոպական և ամերիկյան կրթական մակարդակի դասընթացներ են իրականացվել: Հիշատակման են արժանի Ռոբերտ քոլեջը (1862 թ., Կ. Պոլիս), Ամերիկյան Համալսարանը (1864 թ., Բեյրութ), Կ. Պոլսի աղջկանց քոլեջը (1873 թ., Կ. Պոլիս), Կենտրոնական Թուրքիայի քոլեջը (1876 թ., Այնթապ), Եփրատ քոլեջը (1878 թ., Խարբերդ), Կենտրոնական Թուրքիայի աղջկանց քոլեջը (1882 թ., Մարաշ), Անատոլիա քոլեջը (1836 թ., Մարզվան), Սբ. Պողոսի Հաստատությունը (1888 թ., Տարսոն) և այլն<sup>2</sup>: Ամերիկյան գաղափարների «խաղաղ թափանցումին կերպը»<sup>3</sup> Հանդիսացող այդ Հաստատությունները նաև մեծապես նպաստել են Հայ ուսանողների արևմտամետ աշխարհայացքի ձևավորմանը:

Հայ բնակչության շրջանում հիմնականում դրական ընդունելություն գտած ամերիկյան քարոզիչների իրականացրած ավետարանական քարոզներն ու Հաղորդած գիտելիքները, ինչպես նաև Նոր աշխարհի վերաբերյալ ոգեշնչող գրույցները չէին կարող անտարբեր թողնել հոգևոր արթնացում ապրող ուսումնաստենչ Հայ երիտասարդությունը, որը, հաճախելով ամերիկյան դպրոցներ ու քոլեջներ, աստիճանաբար իր Հայացքը հառել է դեպի օվկիանոսից այն կողմ գտնվող ազատության և լայն հնարավորությունների երկիրը՝ տեղի բարձրագույն կրթարաններում ժամանակակից մասնագիտություններ (հիմնականում՝ աստվածաբանություն, բժշկություն, տեխնիկա) ուսանելու և վերադառնալով իր գիտելիքներն ի նպաստ ազգին ծառայեցնելու համար:

Ամերիկյան քարոզիչների ազդեցությունը 1834 թ. դեպի ԱՄՆ Հայ ուսանողների շարժման սկզբնավորողը Կ. Պոլսի միսիոներական դպրոցի սան տասնվեցամյա Խաչատուր Ոսկանյանն էր, որը... տեղով Նյու Յորքի Համալսարանը, դարձել էր ճանաչված... ամերիկյան և Հայ մամուլում: Նա, լինելով առաջին... անգլանն ԱՄՆ-ում և ծավալելով ազգանպաստ դոր... լրդը» գիրքը՝ ամերիկյան հրատարակել է «Սուլթանն ու իր ժող... ալոց պատմությունը» ուրիկյան Հասարակությունը ծանոթացնելով

<sup>1</sup> Ճիգմեճեան Մ. Գ., Խարբերդ եւ իր գաղափարները, Ֆրեզնո, 1955, էջ 103:

<sup>2</sup> Հակատագրական դեպքեր հայ պատմության մեջ, ա. տ., ա. ք., էջ 83:

<sup>3</sup> Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենտաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, Երևան, 1990, էջ 55:

մշակութիւն, նաև զբաղեցրել է բազմաթիւ պաշտոններ ամերիկյան տարրեր հաստատութիւններում (Նյու Յորքի մաքսատան գրագիր, Կոլումբիայի համալսարանի իրավագիտութեան զբաղարանի վարիչ, Նյու Յորքի Մամուլի ակումբի անդամ, ապա՝ նախագահ, Նյու Յորքում Օսմանյան կայսրութեան հյուպատոս)<sup>1</sup>:

Հետագա տարիներին գլխավորապէս ուսանելու նպատակով ԱՄՆ են մեկնել մի խումբ հայեր: Այսպէս, 1837 թ. Ամերիկա է ժամանել Կ. Պոլսի ավետարանական դպրոցի սան Սենեքերիմ Տեր-Մինասյանը, որը, երկու տարի Փրինսթոնի համալսարանում հետեւելով աստվածաբանութեան ճյուղին, ապա ուսանելով բժշկութիւն, վերադարձել է հայրենի երկիր՝ գործնականում կիրառելու բժշկութեան նորագույն ձեռքբերումները<sup>2</sup>:

Տվյալ ժամանակաշրջանում հայերն ԱՄՆ են մեկնել նաև որպէս բողոքական քարոզիչների սպասավորներ: Նրանցից էր, օրինակ, 1841 թ. քարոզիչ Հ. Դուայթի սպասավոր Թագևոսյանը, որը հետագայում սկսել է զբաղվել ռահաթ լոխումի արտադրութեամբ՝ այն նորովի կոչելով «թզի հալվա»: Նույն թվականին ԱՄՆ է ուղևորվել և Միութեան Աստվածաբանական դպրոց հաճախել հետագայում Կ. Պոլսում և Երուսաղեմում հայրապետի պաշտոններ ստանձնած Հարութիւն Վեհապետյանը: 1842 թ. այդ նույն դպրոցում, ապա Յելի և Էնդովերի համալսարաններում է ուսանել Օսմանյան կայսրութիւնում ամերիկյան քարոզիչների ազդեցութեամբ բողոքականութիւն ընդունած առաջին հայը՝ Հովհաննէս Տեր-Սահակյանը, որը նույնպէս վերադարձել է Կ. Պոլիս և վարել բողոքական քարոզչ. պաշտոն<sup>3</sup>:

.. 1843 թ. Եւանթ և քրիստոսի, բժշկութեան, դեղագործութեան և այլ բնագավառներում մասնագիտացած Քրիստափոր Տեր-Սերոբյանը ամերիկահայ առաջին գյուտարարն էր և կարևոր ծառայութիւն է մատուցել ամերիկյան պետութեանը՝ հայտնագործելով երկրի թղթաղբամի (դոլար) դրամանենգման չենթարկվող և մինչև օրս գործածվող յուրահատուկ սև և կանաչ ներկերը: Բ. Տեր-Սերոբյանի զյուտն ամերիկյան կառավարութեան կողմից դնահատվել է որպէս

<sup>1</sup> Ամադյան Բ., նշվ. աշխ., 2000, էջ 18: Tasjian, J. H., նշվ. աշխ., էջ 13-14: Մուշեղ Խախկոպոս, Ամերիկահայ տարեցոյցը, Ա տարի, Պոստոն, 1912, էջ 16-18:

<sup>2</sup> Մուշեղ Խախկոպոս, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 22:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 23: Arpee, L. A History of Armenian Christianity from the Beginning to Our Own Time. New York, 1946, p. 266.

«Աստվածային պարգև», քանի որ այն վերջ է դրել խոշոր չափերի հասած դրամանենգությանը, իսկ հայտնագործության հեղինակը պարգևատրվել է 6.000 դոլարով: Ք. Տեր-Սերոբյանը հետագայում վերադարձել է Օսմանյան կայսրություն և մինչև կյանքի վերջը պաշտոնավարել սուլթանական գանձարանում<sup>1</sup>:

Ամերիկա մուտք գործած առաջին հայերից էր նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության հայր Ղևոնդ Ալիշանի եղբայրը՝ Սերոբ Ալիշանը, որը 1845 թվականից որոշ ժամանակ բնակվել է Վաշինգտոնում, ապա՝ Բոստոնում: 1848–1850 թթ. ԱՄՆ է հասել և Բոստոնում ատամնաբուժություն ուսանել պոլսեցի Սարգիս Խաչատուրյանը, որը, հետագայում վերադառնալով իր ծննդավայր, Կ. Պոլսի Բերայի թաղամասում հիմնել է «Ս. Խաչատուրյան և լ չի» անունով ատամնաբուժարանը<sup>2</sup>:

Քանի որ ամերիկյան քարոզիչների սկզբնական գործունեությունը սահմանափակված էր Կ. Պոլսով և չըջակա տարածքներով, հետևաբար շուրջ քսան տարիների ընթացքում ԱՄՆ մեկնած մեկ տասնյակից ավելի վերոհիշյալ առաջին հայ ուսանողները պոլսեցիներ էին, որոնք հիմնականում մասնագիտացել էին աստվածաբանություն ու բժշկություն, ինչպես նաև՝ զիտություն տարբեր բնագավառներում: Նրանց համար ԱՄՆ-ը «կեանքի հանգրուան մը միայն եղած է, աշակերտութեան շրջան մը»<sup>3</sup>, որից հետո շատերը հիմնականում վերադարձել են հայրենի երկիր:

Ամերիկյան քարոզիչներն Օսմանյան կայսրությունում հայություն կրթական համակարգը ժամանակակից նոր հիմքերի վրա դնելուց բացի պակաս ջանք չեն գործադրել նաև արհեստավորների հմտությունները զարգացնելու և կատարելագործելու ուղղությունը՝ հիմնական նպատակ ունենալով բարենպաստ աշխատանքային պայմաններ ստեղծելու միջոցով արգելակել երկրից հայերի աստիճանաբար աճող արտահոսքը: Այդ խնդրում մեծ ու անգնահատելի դեր է կատարել հանրահայտ քարոզիչ, Ռոբերտ քուեջի հիմնադիր Միրոս Հեմլինը՝ դպրոցներին կից բացելով ժամանակակից արտադրություն մեթոդներն ուսուցանող տարբեր արհեստանոցներ: Նա դասում էր, որ «այս աշխատասէր ժողովուրդը իր երկրին մէջ պահէ՛ր միակ միջոցը արհեստ ուսանելն է, հետևաբար ուսման հետ արհեստն ալ սո-

<sup>1</sup> Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 23–24:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 24, 26, 31–43:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 30:

վորեցընելու է անոր»<sup>1</sup>:

Այնուամենայնիվ, հակառակ գործադրված միջոցներին, հայերի հոսքն Ամերիկա չի դադարել: Տնտեսական բարեկեցության հասնելու հեռանկարները, ինչպես նաև Նոր երկրում իրենց հայրենակիցների հուսադրող վիճակը ոգևորել են ոչ միայն հայ ուսանողներին, այլև, սկսած XIX դ. 50-ական թվականներից, նաև արհեստավորներին ու վաճառականներին: Նրանց մեծ մասը շուտով վերադարձել է իր ծննդավայրը, իսկ ոմանք, հանդիպելով բարենպաստ տնտեսական պայմանների, հաստատվել են այնտեղ և, չխզելով կապը հայրենի երկրի հետ, երբեմն առևտրական հարաբերություններ են հաստատել, նյութական ու բարոյական օժանդակություն ցուցաբերել հայրենակիցներին, ինչպես նաև նպաստել են իրենց բնօրրանների եկեղեցական, կրթական ու մշակութային կյանքի բարեկարգմանը<sup>2</sup>: Այդպիսին էին խասգյուղից վաճառական, ամերիկահայ առաջին բարեգործ Սարգիս Մինասյանը, ավելի ուշ տիգրանակերտցի մեծահարուստ Ասլան Սահակյանը և այլք: Հակոբ Մաթևոսյանը Կ. Պոլիս է ներմուծել նորագույն սարքավորումներով հագեցած Օսմանյան կայսրությունում ամենախոշոր տպարանը, իսկ Մինաս Կարապետյանը՝ կահույքագործության ժամանակակից մեթոդները<sup>3</sup>:

Նոր երկրում կրթություն ստացած և ապահովություն գտած առաջին սակավաթիվ հայերն իրենց մասնակցությունն են բերել նաև ԱՄՆ-ի միավորման համար մղված Քաղաքացիական պատերազմին (1861–1865 թթ.)՝ տրամադրելով Հյուսիսային Բանակում մարտնչող 30 կամավորներ և զորակոչված մեկ շարքային զինվոր: Իսկ Ֆիլադելֆիայի հիվանդանոցներում անձնվիրաբար իրենց ծառայությունն են մատուցել շտապ օգնության վիրաբույժներ Սիմոն Մինասյանը, Կարապետ Գալուստյանը, Պարոնիկ Մաթևոսյանը: Երկրի միամիտման ու խաղաղության համար մարտնչող երևելի ու ազդեցիկ հեռտորներից էր ամերիկյան հնագույն տոհմից սերված, ծագումով հունգարահայ փաստաբան ու քարոզիչ Թոմաս Քորվինը՝ Օհայոյի նահանգից, որը վարել է պետական բարձր պաշտոններ (ԱՄՆ-ի Պետական դանձաբանի քարտուղար, Օհայոյի նահանգապետ, երկար ժամանակ նույն նահանգի ներկայացուցիչը Կոնգրես-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 27:

<sup>2</sup> Ալլազյան Բ., նշվ. աշխ., 2000, էջ 20:

<sup>3</sup> Մուշեղ նախկոպոս, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 26, 28:

սում, 1861 թ.՝ Մեքսիկայում ԱՄՆ-ի դեսպան)<sup>1</sup>:

Այս շրջանում կրթություն ստանալու նպատակով Ամերիկա են մուտք գործել նաև իգական սեռի առաջին ներկայացուցիչները:

XIX դ. երկրորդ կեսին՝ Հատկապես Քաղաքացիական պատերազմից հետո, ամերիկյան տնտեսական, հասարակական ու քաղաքական կյանքում սկսված վերածնունդը նպաստել է այնտեղ ուղևորվող Հայերի թվի աճին: Այսպես, եթե 1850–1870 թթ. ԱՄՆ-ում կար ավելի քան 55 հայ, ապա 1870-ական թվականների սկզբին նրանց թիվը հասել էր 70-ի<sup>2</sup>:

1876 թ. Օսմանյան կայսրութունում սուլթան Աբդուլ Համիդ II-ի գահակալությամբ և 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Հայերի նկատմամբ սկսված հալածանքներն ու տնտեսական կյանքի անկումը, ինչպես նաև հայաբնակ խոշոր կենտրոններում ամերիկյան քարոզիչների հոգևոր, կրթական ու տնտեսական դործունեության ծավալումը խթանել են Հայերի հետագա արտահոսքը երկրի գրեթե բոլոր շրջաններից՝ ընդգրկելով ոչ միայն ռուսանոցների, արհեստավորների ու վաճառականների, այլև ծանր հարկերի տակ կթած գյուղացիների և ունեզրկված դործավորների: Նրանց մեծ մասը, մտադրութուն չունենալով հաստատվել այնտեղ, ձգտել է ժամանակավոր աշխատելուց և որոշ գումար վաստակելուց հետո վերադառնալ Հայրենի բնակավայրեր՝ բարելավելու իրենց ընտանիքների նյութական վիճակը: Սակայն այս նոր պանդուխտների առջև բացված աշխատանքային բարենպաստ պայմանները, երբ մեկ օրում վաստակում էին այնքան, որքան Օսմանյան կայսրութունում՝ մեկ ամսում կամ մեկ տարում, պատճառ են հանդիսացել, որ նրանցից շատերը նույնպես հաստատվեն այդտեղ:

Եթե մինչ այդ Հայութունն իր կյանքի պայմանները բարելավելու հույսով աշխատանք էր փնտրում հիմնականում Իզմիրում, Կ. Պոլսում, Ադանայում, ինչպես նաև կայսրության մերձակա երկրներում, ապա այժմ նա իր հայացքն ուղղել էր դեպի հեռավոր ափեր, որտեղ «Ամերիկան խոստանում էր ամեն ինչ ... Առասպելական պատմութուններն այստեղ կապակցված էին արագընթացության

<sup>1</sup> Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 12, 15, 55: Մուշեղ եպիսկոպոս, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 26, 28:

<sup>2</sup> Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 59: Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 15: Մուշեղ եպիսկոպոս, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 33: Buxton, N., Buxton, Rev. H. Travel and Politics in Armenia. London, 1914, p. 220.

հետ, որի շնորհիվ հարստութիւնն է ձեռք բերվում այնտեղ»<sup>1</sup>:

Հետեւապես տվյալ ժամանակաշրջանում դեպի ԱՄՆ հայերի հոսքը պայմանավորված էր ոչ այնքան քաղաքական իրավիճակով, որքան տնտեսական ծանր կացութեամբ:

Մինչ եվրոպական շուկաներում արդեն իսկ իրենց գործունեութիւնը ծավալած հայ հարուստ վաճառականները ձեռնպահ էին մնում ԱՄՆ ներթափանցելուց, «միջին կարգի» գործարարները հաջողութեամբ իրենց գործերը բացում էին Նոր երկրում: Օրինակ՝ Դիարբեքիից Փուշմանների ընտանիքը՝ Ջիկագոյում, Հակոբ Իսկյանն ու Սեմուել Դոնչյանը՝ Նյու Յորքում և ուրիշներ հիմնել էին արևելյան գորգի մեծ գործեր և այլն<sup>2</sup>:

XIX դ. 80-ական թվականներից Օսմանյան կայսրութեան դրեթե բոլոր խոշոր կենտրոններում ամերիկյան ավետարանական քարոզիչների կրթալուսավորչական գործունեութեան (եկեղեցիների, նախնական ու բարձրագույն դպրոցների, քոլեջների և մշակութային այլ օջախների ստեղծում) ծավալման ու խորացման հետեւանքով աճել է հայ, հիմնականում՝ ամուրի, երիտասարդների արտահոսքը երկրի դրեթե բոլոր շրջաններից, դերագանցապես ինարբերդից, քանի որ ինարբերդի հարթավայրը, որը կայսրութիւնում «ամենից հարուստ երկիրն էր և ամենից գրավիչ ու խոստումնալից քարոզչական տարածքը», 1852 թվականից սկսած դարձել էր արևելյան Թուրքիայում ամերիկյան քարոզիչների գործունեութեան կենտրոնատեղի, միաժամանակ այդտեղ էր գտնվում նաև 1878 թ. հիմնված հայերահայտ եփրատ քոլեջը, որը «լուսաւորութեան մեծ հաստատութիւն մը եղաւ տասնեակ տարիներով»<sup>3</sup>:

Քարոզիչները, մտահոգված 1880-ական թվականներին հեռացող հայերի աճող հոսքից, որոնցում քիչ թիվ չէր կազմում կրթված խավը, դառնութեամբ նշել են, որ հայ ուսանողներն ու երիտասարդները «աղմկահաշույց ընթացքով հեռանում էին դեպի ԱՄՆ-ի տարբեր շրջաններ, հատկապես Հարավային Կալիֆոռնիա, իրենց աշխատանքի դիմաց բարձր վարձատրվում, կարճ ժամանակ անց կարողութեան

<sup>1</sup> Աշճեան Ա. քննյ., Վիճակացոյց եւ պատմութիւն առաջնորդական թեմին Հայոց Ամերիկայի. 1948, Նիւ Եորք, 1949, էջ 17: Mirak, R. Tom Between Two Lands. Armenians in America, 1890 to World War I. Cambridge, 1983, pp. 36, 40, 41. Buxton, N., Buxton, Rev. H., նշվ. աշխ., էջ 220:

<sup>2</sup> «Կոչնակ», 4.2.1905, 6.10.1906, 27.3, 21.8.1909, 24.9.1910:

<sup>3</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 40: Մարտիրոսեան Լ., Ամերիկահայութիւնը երէկ եւ այսօր, Պէյրոս, 1973, էջ 8:

տեր դառնում և իրենց լավատեսական հաղորդումներով ոգևորում երիտասարդների նորանոր խմբերի՝ հետևելու իրենց օրինակին, որոնց անգլերենի իմացությունը միայն նպաստում էր այդ «անհաջող շարժմանը»։ Այդ կապակցութեամբ, աջակցելով ամերիկյան բարձրագույն հաստատություններում հայ ուսումնաստենչ երիտասարդութեան կրթական մակարդակի բարձրացմանը, բողոքական քարոզիչներին շատերը միաժամանակ նաև շահագրգռված ու մտահոգված էին նրանց՝ որպես Օսմանյան կայսրութեան հայաբնակ տարածքներում նորանոր սերունդներ լուսավորելու իրենց գործունեութեան հետևորդների, հայրենի երկիր վերադարձով։ Այդ է պատճառը, որ երբեմն քարոզիչներն իրենք էին խոչընդոտել այս կամ այն երիտասարդի Ամերիկա մեկնելը։ Օրինակ՝ XIX դ. երկրորդ կեսին եղել է մի պահ, երբ նույնիսկ որոշ քարոզիչներ հրաժարվել են իրենց ուսանողներին անգլերեն սովորեցնել՝ կանխելու համար նրանց արտահոսքը դեպի ԱՄՆ<sup>1</sup>։

1880-ական թվականների վերջից արդեն 1.500 հայ ունեցող ԱՄՆ-ը դարձել էր նաև քաղաքական ապաստան և գործունեութեան ազատ դաշտ հայ հեղափոխական կուսակցական (հնչակյան, ավելի ուշ՝ դաշնակցական) գործիչների համար, որոնք, այդտեղ հպատակադրվելով որպես ամերիկյան քաղաքացիներ, հետադառնում անարգել մուտք են գործել կայսրութուն և հեղափոխական գործունեութուն ծավալել հայերի շրջանում։ Ահա թե ինչու, թուրքական պետութունը, որը մինչ այդ որոշակի ընդգծված քաղաքականութուն չուներ ԱՄՆ մեկնող հայերի նկատմամբ, շուտով, յիսուսի ներթափանցող հեղափոխական վտանգից խուսափելու նպատակով, պարբերաբար սահմանափակումներ է մտցրել, իսկ երբեմն էլ՝ ընդհանրապես արգելակել հայերի գաղթն Ամերիկա։

Մինչև 1908 թ. Օսմանյան կայսրութունը պաշտոնապես չի ճանաչել իր հպատակների գաղթելու իրավունքը, ուստի խոչընդոտներ է հարուցել ոչ միայն անհատ հայ գաղթականներին, այլև՝ հետագայում նաև նրանց ընտանիքների դեպի ԱՄՆ ազատ ելքի նկատմամբ։ 1900 թ. սուլթանական թուրքիան, ամերիկյան կառավարութեան ճնշման տակ, հարկադրված է եղել ընդունել, իրականում սակայն՝ ձևականորեն, ընականացված՝ ամերիկյան քաղաքացիներ դարձած իր նախկին հպատակների հարադատների՝ կանանց, երեխա-

<sup>1</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 37, 42։

ների և այլոց, առանց արգելքի ԱՄՆ արտագաղթելու իրավունքը: Այդ համաձայնությունը երեք տարի շարունակ թուրքական պաշտոնյաների կողմից անտեսվելուց հետո, կիրառության մեջ է մտել 1903 թվականից, երբ ամերիկյան բարձրաստիճան ներկայացուցիչների կարգադրությամբ մի խումբ օգնության կարոտ հայ ընտանիքներ, ստանալով կայսրությունում ամերիկյան հյուպատոսարանի հովանավորությունը, թիկնապահների առաջնորդությամբ փոխադրվել են ԱՄՆ: Դրանով գործնականում վերացվել են հայրենիքում մնացած ամերիկահայերի ընտանիքների արտագաղթելու նկատմամբ բոլոր սահմանափակումները, թեև դժվարությունները պահպանվել են<sup>1</sup>:

Այսպիսով, XIX դ. 80-ական թվականներից մեծ չափերի է հասել հայերի արտահոսքը դեպի ԱՄՆ՝ Օսմանյան կայսրության գրեթե ողջ տարածքից՝ ընդգրկելով բազմաթիվ առևտրականների, արհեստավորների, գյուղացիների և ազատ աշխատանք որոնողների, ինչպես նաև ուսանողների ու քաղաքական փախստականների: Ընդ որում, «ամերիկյան տենդը» տարածվել էր գլխավորապես ամուրի երիտասարդության (95%)<sup>2</sup> շրջանում, որը, իր հարազատներին ու ողջ կարողությունը թողնելով հայրենիքում, մեկնել է օտար ափեր հաջողություն, հարստություն և ազատություն ձեռք բերելու հույսով, որպեսզի, 1—2 տարուց վերադառնալով հայրենի օջախներ, կարողանար վճարել պարտքերը, տուն, հող, անասուններ գներ ու մարդավայել կյանքով ապրեր:

ԱՄՆ մականած հայերի մեջ քիչ չէին նաև այնպիսիները, որոնք, արտագրություն և այլ բնագավառներում հասնելով հաջողությունների, հայրենի ջնակավայրեր վերադառնալիս իրենց հետ բերում էին ժամանակակից հաստոցներ, գործարաններ և այլ սարքավորումներ՝ տեղի հետամնաց սնտեսությունը զարգացնելու նպատակով:

Միաժամանակ, այդ նոր պանդուխտներից շատերը, ԱՄՆ-ում հանդիպելով տնտեսական, քաղաքական, մշակութային և կրոնական ազատության ու բարեկեցության, հաստատվել են Նոր երկրում՝ նվազեցնելով հայրենիք վերադարձողների թիվը, ինչպես նաև՝ իրենց հայրենակիցներին ուղարկած ոգևորիչ նամակներով և դրամական օգնությամբ նպաստել են գեպի Ամերիկա նորանոր հայերի տեղաշարժին: «...Առաջին հայը Ամերիկայէն երբ յիսուն ոսկիի չէք մը ղրկեց իր տունը, զայն տեսնող եւ լսող հայերուն սիրտերը թունդ

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 42, 43, 151:

<sup>2</sup> Մուշեղ Ապիսկոպոս, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 211:

ելան ... ու այնուհետեւ ամեն հայ փափաքեցաւ Ամերիկա դալ, իր քայքայուած տնտեսութիւնը վերականգնելու համար: Եւ, ահա այսպէս, երկրէն սկսեց արտագաղթը զէպի Ամերիկա: Այս օրերուն ամեն հայու բերնին ծամոց էր եղած ըսելու.-

Տէրտէր կայ նը՝ մեղքն ի՞նչ է.

Ամերիկա կայ նը՝ պարտքն ի՞նչ է ...

Եւ հետզհետէ երկրէն Ամերիկա եկողներուն համակրանքը ա՛յնքան բազմացաւ, որ Կ. Պօլսոյ Հայոց Պատրիարքարանը և Բ. Դուռը տեսնելով զանոնք սարսափեցա՛ն...»<sup>1</sup>:

Անցյալ դարավերջին «բախտ որոնելու եկած» պանդուխտ հայերը, մշտական բնակութիւնն հաստատելով ԱՄՆ-ում, աստիճանաբար երկրի հյուսիսարեւելյան նահանգներից տարածվել են դեպի միջին և արեւմտյան նահանգներ՝ արդեն XX դ. առաջին տասնամյակներին հայաբնակ դարձնելով լայնածավալ երկրի գրեթե յուրաքանչյուր տարածք: Ամերիկյան կյանքին ընտելացած հաջողակ, կրթված ու գործարար հայերը պայմաններ են նախապատրաստել հետագա տասնամյակներին պատմական ստիպողական հանգամանքների բերումով գաղթի դիմած հազարավոր հայրենակիցներին նյութական ու բարոյական աջակցութիւնն ցույց տալու, ինչպես նաև համախըմբվելու և որպես համայնք կազմակերպվելու ուղղութեամբ:

Մինչև 1899 թ. ԱՄՆ մեկնած հայերի ստույգ թիվը դժվար է որոշել, քանի որ 1820 թվականից մինչև 1898 թ. ԱՄՆ մուտք գործած բոլոր գաղթականները համապատասխան գրասենյակի կողմից գրանցվել են ոչ թե ըստ ազգային պատկանելութեան, այլ՝ ըստ աշխարհագրական ծագման բնակավայրերի, այսինքն՝ համաձայն իրենց գաղթած երկրների: Ընդ որում, Օսմանյան կայսրութիւնից գաղթածները մինչև 1868 թ. գրանցվել են որպես «Եվրոպական թուրքիայից», իսկ 1869 թվականից՝ նաև «Ասիական թուրքիայից» և «Հայաստանից» եկածներ: Հետևաբար, տվյալ ժամանակահատվածում Ամերիկա մուտք գործած հայերի թիվը խիստ հարաբերական է: Միայն 1899 թվականից է, որ գաղթականները սկսել են գրանցվել ըստ իրենց ազգային պատկանելութեան, դրանով իսկ որոշակի

<sup>1</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 13: Ասպարէզ: Յիսնամեակ. 1908–1958, Ֆրեզնո, ա. ք., էջ 393:

դարձնելով ԱՄՆ 4 յղթած հայերի թիվը<sup>1</sup>:

Ընդհանուր առմամբ, եթե 1880-ական թվականների սկզբին ԱՄՆ-ում կար շուրջ 500 հայ, ապա նույն տասնամյակի վերջին նրանց թիվը հասել էր շուրջ 1.500-ի (ընդ որում, 971-ը «Հայաստանից», իսկ 450-ը «Ասիական Թուրքիայից» և «Եվրոպական Թուրքիայից» մեկնածներն էին, որոնք կազմում էին կայսրութունից ժամանած 4.242 գաղթականների ընդհանուր թվի զգալի մասը): Միաժամանակ, ամերիկյան վիճակագրական տվյալների համաձայն, եկողները հիմնականում տղամարդիկ էին («Հայաստանից»՝ 92%, «Ասիական Թուրքիայից»՝ 85%)<sup>2</sup>:

Հայերի հոսքն ԱՄՆ առավել մեծ չափերի է հասել XIX դ. 90-ական թվականներից սկսած: Ի հետևանս Օսմանյան կայսրութունում հայերի նկատմամբ գործադրված բռնությունների ու կոտորածների՝ նախկինում դեպի ԱՄՆ հայերի իրականացրած անհատական արտահոսքը վեր է ածվել զանգվածային դաղթի: Ֆիզիկական բնաջնջման վտանգից խուսափող հայերի այդ տեղաշարժը, որում մեծ թիվ են կազմել հողամշակները, քաղաքների ու ավանների արհեստավորներն ու բանվորները, ներառել է կայսրության ողջ հայաբնակ շրջանները՝ Խարբերդ, Սվազ, Էրզրում, Տրապիզոն, Բիթլիս, Կիլիկիա և այլն: Նախորդ տարիների համեմատությամբ կրկին մեծ չափերի էր հասել խարբերդցիների հոսքը՝ կազմելով ամբողջ հայ գաղթականության մոտավորապես 40%-ը: «1884-էն 1895 ժամանակաշրջանին խարբերդի գաւառէն մոտաւորապէս ամէն տուն դարիպ մը ունէր Ամերիկայի մէջ»<sup>3</sup>:

Կարող, աշխատասեր ու բազմաշնորհ հայերից զրկվելու սպառնալիքից դրդված՝ Թուրքական կառավարութունը 1892 թ. խոչընդոտներ է հարուցել դեպի ԱՄՆ ընդհանրապես հայերի և հատկապես խարբերդցիների տեղաշարժը դադարեցնելու նպատակով: Այսպես օրինակ՝ Սև ծովից մինչև Կ. Պոլիս փոխադրությունները թույլատրվում էին միայն Թուրքական նավերով՝ դրանով իսկ նվազեցնե-

<sup>1</sup> Ավագյան Զ., նշվ. աշխ., 2000, էջ 24-25: Մանկունի Ն. Լ., Ամերիկահայ գաղութի պատմությունից, «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 1, Երևան, 1962, էջ 95: Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 288: Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 66:

<sup>2</sup> Չազմագճեան Յ. Յ., Ընդարձակ պատմութիւն հայոց սկիզբէն մինչեւ մեր օրերը, Պօսթքն, 1917, էջ 665: Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 44, 290:

<sup>3</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 46: Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., 1962, էջ 104: Ծիգմեճեան Մ. Գ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, (1890-1925), Ֆրեզնո, 1930, էջ 1:

լով Հայերի ապահով տեղափոխութունը և մեծացնելով կողոպուտի հնարավորութունները: Հայերն այլևս հնարավորութուն չունեին «Եւրոպական նաև մը նետել ինքզինքնին և Ամերիկայի ճամբան ձեռք առնել», քանի որ օտար նավերի դիմողները ձերբակալվում և Հալածվում էին: Հակառակ Օսմանյան կայսրութեան հարուցած արգելքներին. «մարդիկ ստոյգ մահը աչքերնին առած՝ դժոխքէն կը փախէին»<sup>1</sup>: Շուտով՝ 1894–1896 թթ. սուլթան Աբդուլ Համիդ II-ի կողմից Հայերի նկատմամբ իրականացված զանդվածային ջարդերի տարիներին, ընդհանրապես արգելվել է դաղթել երկրից, թեև շատերը կարողանում էին տարբեր ճանապարհներով դուրս պրծնել ու փրկվել: Այդուհանդերձ, հիմնականում Հայերի դաղթն առժամանակ նվազել է:

Այսպիսով, 1834–1894 թթ. ԱՄՆ են մեկնել շուրջ 4.000 Հայեր, որոնք կազմել են տվյալ ժամանակահատվածում Օսմանյան կայսրութունից ԱՄՆ մուտք գործած գաղթականների ընդհանուր թվի (9.472 մարդ) կեսից ավելին: Նշված թվից Հանելով այդ ընթացքում Հայրենի բնակավայրեր վերադարձած մոտավորապես 1.000 Հայերին, կստացվի, որ 1894 թ. ԱՄՆ-ում կար շուրջ 3.000 Հայ: Իսկ 1891–1895 թթ. ընկած ժամանակահատվածում Օսմանյան կայսրութունից ԱՄՆ էր գաղթել 5.500 Հայ, ընդ որում՝ 2.909-ը՝ «Հայաստանից», 2.668-ը՝ «Ասիական Թուրքիայից»: Դա կազմել է այդ երկրից մեկնած 11.000 գաղթականների ընդհանուր թվի 40%-ը<sup>2</sup>:

Ամերիկյան Գաղթականական Հանձնախմբի վիճակագրական տվյալների Համաձայն, եթե մինչև 1894 թ. «Ասիական Թուրքիայից» եկածների թիվը խիստ նվազել էր, ապա 1895–1898 թթ. այն կտրուկ աճել էր՝ կազմելով շուրջ 15.913 մարդ: Միաժամանակ, կասկածից վեր է, որ տվյալ ժամանակահատվածում նշված տարածքից մեկնած գաղթականների դերակշիռ մասը՝ ավելի քան 10.000 մարդ, Համիդյան ջարդերից ճողոպրած Հայերն էին: Իսկ արդեն 1900 թ. ԱՄՆ-ում կար 15.000-20.000 Հայ, որոշ տվյալների Համաձայն՝ նույնիսկ 25.000 Հայ: Եթե սրան ավելացնենք նաև XIX դ. 90-ական թվականների կոտորածների հետևանքով Սև և Միջերկրական ծովերով Ամերիկա գաղթող, Հայրենի բնակավայրեր վերադառնալու հնարավոր

<sup>1</sup> Չազմագճեան Յ. Յ., նշվ. աշխ., էջ 666: Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 46: Ասպարեզ: Յիսմամեակ, էջ 393:

<sup>2</sup> Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 61, 64, 76: Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 289: Ավագյան Զ., նշվ. աշխ., 2000, էջ 26:

ըռւթյունից զրկված ու Բալկաններում (Հունաստան, Բուլղարիա), Եգիպտոսում, ինչպես նաև Կովկասում, Ղրիմում և այլուր ապաստանած տասնյակ հազարավոր արևմտահայ փախստականներին, ապա մոտավոր հաշվարկներով 1902 թ. աշնանն ԱՄՆ-ում կար շուրջ 45.000 հայ<sup>1</sup>:

Թեև ամերիկացի, եվրոպացի և հայ բարերարները միջազգային Կարմիր խաչի հետ միասին կայսրութեան հայաբնակ շրջաններում մեծ չափերի հասնող նպաստամատույց գործունեութիւն էին ծավալել ջարդերի հետևանքով անտուն ու անօգնական մնացած հայերի նկատմամբ, այդուհանդերձ, շարունակվում էր մեծ թվով հայերի արտահոսքը երկրից՝ քաղաքական, տնտեսական ազատութիւնների բացակայութեան, ինչպես նաև՝ նոր կոտորածների սպառնալիքից դրդված:

Համիդյան ջարդերից ճողոպրած և ԱՄՆ-ում ապաստանած հայերը նույնպես արժանանում էին ամերիկյան հասարակութեան համակրանքին ու կարեկցանքին. եկեղեցական, բարեգործական և այլ հաստատութիւնների միջոցով ամեն տեսակի օգնութիւն էր տրամադրվում անտերութեան մատնված դաղթականներին՝ նրանց համար հայթայթելով սնունդ, հագուստ, բնակարան, աշխատանք և այլն<sup>2</sup>:

ԱՄՆ-ը հանգրվան է դարձել նաև Ռուսական կայսրութիւնից եկած բազմաթիվ հայերի համար, որոնք՝ նոր երկրի մասին տեղեկացել էին XIX դ. կրոնական հալածանքների հետևանքով Ռուսաստանից Կովկաս աքսորված և հատկապես Շիրակի դաշտավայրում բնակութիւն հաստատած դուխոբորներից ու մոլոկաններից: Վերջիններիցս շատերը, անցնելով Կանադայի Ռիննեիֆեզ, իսկ մյուսները՝ Միացյալ Նահանգների Լոս Անջելես քաղաքները, կովկասյան իրենց ընկերներին և հարևան հայերին ուղարկած ոգևորիչ նամակներով խրախուսել են նրանց մեկնելն այդ վայրեր:

Ժամանակի ընթացքում Կանադայում հաստատված մի խումբ արևելահայեր շարժվել են դեպի Լոս Անջելես՝ սկզբնավորելով Ռուսական կայսրութիւնից հայութեան արտահոսքը դեպի ԱՄՆ, որը

<sup>1</sup> Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 65, 66: Antreassian, J. The Armenians in America: A Personal Viewpoint (R. Hovannisian, ed. The Armenian Image in History and Literature. Malibu, 1981. p. 255). Մանկունի Ն. Լ., Ամերիկահայ մարդահամարը (Թոնդիկ, Ամենուն տարեցոյցը, 20-րդ տարի, Վենետիկ, 1926, էջ 585):

<sup>2</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 49: Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 77:

սկզբում շատ սակավաթիվ էր. մինչև 1898 թ. ԱՄՆ էր մեկնել ընդամենը 15 արևելահայ<sup>1</sup>:

Դարասկզբին դեպի ԱՄՆ արևելահայ պանդխտության նախակարգվածները Մուշեղյաններն էին Շիրակի դաշտավայրից, որոնք մեկնել էին 1904 թ. Համեմատաբար բարեկեցիկ բնակչություն ունեցող Կարսի Ղարաղլա գյուղից: Հետագա տարիներին նրանց օրինակին է հետևել գյուղի գրեթե ողջ բնակչությունը: Զդալի թվով հայեր են մեկնել նաև Ալեքսանդրապոլից և հարակից Դուզքենդ, Ղազարաբադ, Սիվանիբիլ, Աղզուլու և այլ գյուղերից: Ալեքսանդրապոլի այդ տարածքից առաջինն ԱՄՆ էր մեկնել և իսկ Անջելեսում հաստատվել Ղազարաբադ գյուղի երիտասարդ բնակիչ Բագրատ Հարությունյանը, որը Մուշեղյանների աղգականն էր: Նրանով էլ սկզբնավորվել է Շիրակի դաշտավայրի հայություն հոսքը դեպի Ամերիկա, որը սկզբում ներառել է 18-35 տարեկան երիտասարդներին, ապա նաև՝ բարձր տարիքի հայերի: Թողնելով իրենց ընտանիքները՝ նրանք 2-3 տարով հեռանում էին աշխատելու, որպեսզի որոշակի դրամ վաստակելուց հետո վերադառնային ու բարվոքեին իրենց և հարազատների տնտեսական վիճակը: Կովկասահայ պանդխտները շարքում չարքաշ աշխատավորների կողքին որոշ թիվ էին կազմում նաև կրթվածները<sup>2</sup>:

XX դ. սկզբին Ռուսական կայսրությունում և Կովկասում, տիրող տնտեսական ու քաղաքական ճգնաժամն ընդլայնել է արևելահայերի տեղաշարժը դեպի օտար ափեր՝ ներառելով նաև Իգդիրից, Կողբից, Թիֆլիսից, Ղարաբաղից, Երևանից և այլ վայրերից գաղթած հայերի: Նրանք բնակություն են հաստատել հիմնականում ԱՄՆ-ի արևմտյան ափին՝ Կալիֆոռնիայի նահանգի Լոս Անջելես քաղաքում: Արևելահայերի հոսքն Ամերիկա առավել մեծ չափերի է հասել հատկապես 1908 թվականից սկսած և նվազել՝ դապված Առաջին աշխարհամարտի սկսվելու հետ<sup>3</sup>:

Մեծ մասամբ աղքատ գյուղացիներից բաղկացած արևելահայերի այդ հոսքում շատ քչերն էին, որ ունեին իրենց ճանապարհածախսը վճարելու համար աճհրաժեշտ գումարը, մինչդեռ այն կազմել է մոտ 500 ուլբի: Հետևաբար, «ոմանք ծախում էին իրենց

<sup>1</sup> «Ասպարեզ», 20.27.6., 4.7.1913:

<sup>2</sup> Գալոեան Ս., Շիրակի հայերի գաղթը դեպի Ամերիկա, Լոս Անջելես, 1950, էջ 65, 70, 76, 77: «Ասպարեզ», 27.6.1913:

<sup>3</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 58: Գալոեան Ս., նշվ. աշխ., էջ 101:

անասունները, ոմանք տան կահ-կարասիները եւ իրենց զարդեղէնները: Մի մասը դրամի փոխառութիւն էին անում: Շատ քչերն էին, որ իրենց ունեցած միջոցներով էին ճամբորդում»: Արեւելահայ պանդուխտներն ԱՄՆ մեկնելու նպատակով շոգեկառքով հասնում էին սեծովյան Բաթում կամ Բալթիկ ծովի Ռիգա և Լիեպայա նավահանգստային քաղաքներ, որտեղ տեղավորվում էին Հատուկ Հատկացված պանդուխտներում՝ փոխադրվելու համար սպասելով ԱՄՆ-ի իրենց հարազատների ու բարեկամների օգնութեանը<sup>1</sup>:

Ականատեսի վկայութեամբ, «...ովքեր, որ դրամ ունեին, շատ չէին սպասում, մի քանի օրից անմիջապէս մեկնում էին, իսկ կային մարդիկ, որոնք սպասում էին Ամերիկայի իրենց բարեկամների օգնութեանը: Այդ օգնութիւնը ուշ էր հասնում: Նրանք շատ դժուարութիւնների էին հանդիպում, նոյն իսկ քաղցած էին մնում: Այդ ժամանակ մեր ազգային սէրն ու միաբանութիւնը գործի էինք դնում՝ օգնելով շատ շատերին, նոր երկրից եկողների միջոցով»<sup>2</sup>:

Ի հակադրութեան արեւմտահայերի, արեւելահայերի հոսքը դեպի ԱՄՆ մեծ չափերի չի հասել, ինչը բացատրվում էր Ռուսական կայսրութեանում առկա ազգային նվազ հալածանքներով ու տնտեսական համեմատաբար բարվոք վիճակով: Այսպես՝ 1900–1905 թթ. ԱՄՆ էր մեկնել 50, 1905–1910 թթ.՝ շուրջ 300, 1910–1913 թթ.՝ 1.200 արեւելահայ՝ մինչև Առաջին աշխարհամարտ ԱՄՆ մուտք գործած արեւելահայերի ամբողջ թիվը կազմելով ոչ ավելի, քան 2.500 սուրբ: Այդ հոսքը նվազել է պատերազմի տարիներին և չնչին չափով ավելացել ռուսական սեփականութեանում 1917 թ. ստեղծված քաղաքական Խառնաշփոթ իրավիճակի հետևանքով: Այսպես՝ արդեն 1920–1924 թթ. ԱՄՆ գաղթած ամբողջ 20.659 հայերից ընդամենը 168-ն էին եկել Խուսաստանից:

Ընդհանուր առմամբ, ԱՄՆ-ի Գաղթականութեան գրասենյակի տվյալներով, 1899–1924 թթ. Ռուսական կայսրութեանից ԱՄՆ էր մեկնել ավելի քան 3.500 հայ<sup>3</sup>:

Նախքան 1908 թ. երիտթուրքերի իրականացրած բարեփոխում-

<sup>1</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 60: Գալօտագ Ա., նշվ. աշխ., էջ 78, 79:

<sup>2</sup> Գալօտան Ա., նշվ. աշխ., էջ 80:

<sup>3</sup> «Ասպարտզ», 27.6.1913: Mirak, R. Armenians (S. Thernstrom, ed. Harvard Encyclopedia of American Ethnic Groups. Cambridge, London, 1981, p. 139). Minasian, Ed. The Armenian Immigrant Tide. From the Great War to the Great Depression (Recent Studies in Modern Armenian History. Cambridge, 1972. p. 111). Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., 1926, էջ 586:

ները, Օսմանյան կայսրությունից հեռանալը լուրջ դժվարություններին հետ էր կապվում, քանի որ մինչև 1896 թ. դաղթել հնարավոր էր բացառապես սուլթանի թույլատրությամբ, իսկ 1896 թ. հոկտեմբերից՝ թուրքական հպատակությունից հրաժարվելու, երկրի հետ խաղաղ հարաբերություններ պահպանելու ու այլևս երբեք չվերադառնալու երաշխավորագրի ստորագրումից և Հայոց պատրիարքի կողմից այն հաստատվելուց հետո միայն: Արդեն 1899 թ. սուլթան Աբդուլ Համիդ II-ը, չառարկելով գաղթելուն, իր պատրաստակամությունն է հայտնել նույնիսկ վճարել կարիքավոր հայերի ճանապարհածախսը, պայմանով, որ նրանք չպիտի վերադառնալին կայսրություն: Հետամտելով Պասմական Հայաստանը հայաթափելու քաղաքականությունը, միաժամանակ դրանով փորձ էր կատարվում երկիրը գերծ պահել ամերիկյան հպատակություն ստացած, հետևաբար և անձեռնմխելիությամբ օժտված հայ ազգային գործիչների ներթափանցումից<sup>1</sup>:

Հայերը ճանապարհորդելու անցադիրը շատ հաճախ ձեռք էին բերում կաշառքով՝ սովորական 2 դոլար գնի տասնապատիկը ու նույնիսկ ավելին վճարելով և կամ փաստաթղթերը կեղծելով: Գաղթականները թանկ էին վճարում նաև հրավերի (վիզա-visa) և շոգենավի տոմսի համար, որոնց միջին գինը կազմում էր 50–60 դոլար: Արհեստավորի երեք տարվա խնայողությունը կազմող այդ գումարը մեծ մասամբ անմատչելի էր արտագաղթողների գերակշիռ մասի համար, ուստի շատերը, կաշառելով եվրոպական շոգենավերի դեկավարներին, անօրին մուտք էին գործում այդտեղ, հաճախ թաքնվում ծխնելուղներում: Ոմանք էլ անհրաժեշտ գումարը հայթայթում էին՝ ճանապարհին մանր աշխատանքներ կատարելով. արդյունքում՝ ամիսներ էր ձգձգվում նրանց դադթը<sup>2</sup>:

1908 թ. Օսմանյան կայսրությունում երիտթուրքերի իշխանության դալով և նրանց կողմից «գեմոկրատական ազատությունների» հռչակումով նվազել, սակայն չի դադարել հայերի գաղթն ԱՄՆ: Միաժամանակ, արձագանքելով 1908 թ. երիտթուրքական Սահմանադրության հետ հույսեր կապող Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության մի խումբ գործիչների «Դեպի Երկիր» կոչին, հարյուրավոր ամերիկաբնակ հայեր, վաճառելով իրենց

<sup>1</sup> Mirak, R., Գշվ. աշխ., 1983, էջ 61:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 62:



Մինչև 1911 թ. Հայերն Օսմանյան կայսրությունից ԱՄՆ են մեկնել որոշակի շրջաններից. արևմտահայկական տարածքներից գաղթողները՝ Սև ծովի գլխավոր Մամսուն նավահանգստից, իսկ կիլիկյան տարածքից գաղթողները՝ միջերկրածովյան Ալեքսանդրեստ և Բեյրութ նավահանգստային քաղաքներից: Հետագա տարիներին Համեմատաբար թույլ ստուգման ենթակա այդ վերջին երկու կայաններով Ամերիկա են մեկնել նաև թուրքական ոստիկաններից փախուստ տվող շատ Հայեր: Գաղթական Հայերը դեպի այդ նավահանգիստներն են դիմում թե՛ ոտքով և թե՛ քարավանային կառաչարերով:

Ընդհանուր առմամբ, օտարազգի այլ գաղթականների նման Հայերը ևս ԱՄՆ են մուտք գործել Նյու Յորքի նավահանգստային Բեսթրլ Գարդըն կայանից, որը 1892 թվականից փոխարինվել է էլիս Այլենդի վրա կառուցված Հնօրյա ռազմանավի տեսք ունեցող մի անշուք շինությամբ: Տասնամյակներ շարունակ թշվառության մեջ Հեծող ռազմահազար Հայ գաղթականների երևակայության մեջ այդ կայանը նույնացվել է դեպի «Ավետյաց երկիր» տանող դարպասի հետ, որտեղով, սակայն, ոչ բոլորին էր բախտ վիճակվում անցնել: Այդտեղ նրանց դրանցել են, ենթարկել բժշկական քննության ու մանրակրկիտ Հարցաքննության: Ամերիկյան կառավարության սահանջի համաձայն, գաղթականն իր մոտ պետք է ունենար առնվազն 25 դոլար կամ էլ ամերիկաբնակ մերձավոր ազգականի երաշխավորությունը, Հակառակ դեպքում պարզաբանումների համար գաղթականներն օրերով սահմանվում էին կեղտոտ ու խոնավ սրահներում կամ էլ ընտանիքներից անջատվելով՝ հետ ուղարկվում: Ահա թե ինչու ներգաղթողները կղզին Հաճախ անվանում էին «Արցունքի կղզի»<sup>1</sup>:

1911–1912 թթ. իտալա-թուրքական և 1912–1913 թթ. բալկանյան պատերազմների և հատկապես դրանց հաջորդող Առաջին աշխարհամարտի (1914–1918 թթ.) տարիներին գաղթականության նկատմամբ Օսմանյան կայսրությունում վերականգնված քրեակալական հաստատություններից քիչ թվով Հայերի է հաջողվել արտագաղթել ԱՄՆ, որի արդյունքում մեծացել է որպես փախստական կամ ամերիկյան հպարտակոթյուն ունեցող ազգականների օգնությունը թի-

Cambridge, 1972, p. 120). Արշալոյս պատկերազարդ տարեկիրք, պատրաստեց Ա. Մալիբեան, Գ տարի, Ֆրեզնո, 1922, էջ 47:

<sup>1</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1972, էջ 60, 491: Մուշեղ Խախկոպոս, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 155, 156: Մանգիլեան Բ., Տոնական օրերու եւ այլալան նիւթերու պատմականը, Լոս Անճելոս, 1986, էջ 91:

վր: Ընդհանուր առմամբ, եթե միայն 1914 թ. ԱՄՆ էր գաղթել 7.785 հայ, ապա հետագա տարիներին նրանց թիվը կտրուկ նվազել է՝ 1915–1919 թթ. կազմելով 3.620 մարդ, որոնք հիմնականում Հայոց ցեղասպանության ժամանակից վերապրածներն էին՝ հարազատներին կորցրած, մասնատված ընտանիքներ, որքեր: Արդեն պատերազմի ավարտին ԱՄՆ-ում կար շուրջ 78.000 հայ<sup>1</sup>:

Առաջին աշխարհամարտի ավարտից և Մուզրոսի գինադադարից հետո (1918 թ.) Օսմանյան կայսրությունում սկսված քեմալական շարժման վերելքը, որն ուղեկցվում էր Թուրքիան քրիստոնյա ազգերից, այդ թվում նաև՝ Հայերից, մաքրագործելու նպատակով կազմակերպված շարունակական ջարդերով, ինչպես նաև Անդրկովկասում Հայաստանի Առաջին հանրապետության (1918–1920 թթ.) անկումը, նոր թափ են հաղորդել դեպի ԱՄՆ իրականացվող Հայության գաղթին՝ 1920 թ. կազմելով 2.762, իսկ 1921 թ.՝ արդեն 19.212 մարդ: Վերջինս ամենից բարձր ցուցանիշն էր նախորդ բոլոր տարիների համեմատությամբ<sup>2</sup>:

Եթե մինչև 1919 թ. ԱՄՆ գաղթած Հայերի զգալի մասը՝ շուրջ 76%-ը, տղամարդիկ էին և միայն 24%-ը՝ կանայք, ապա 1921 թվականից ընդհակառակը՝ աճել էր կանանց թիվը, որոնք մեծ մասամբ պալեերական ջարդերի հետևանքով այրիացածներն էին, և նվազել՝ սղառնադրական թիվը: Գաղթողները հիմնականում 16–45 տարեկան էին և բնակել էին ընտանիքների հետ վերամիավորվելու նպատակով: 45 տարեկանից բարձր տարիք ունեցող գաղթականների թիվը համեմատաբար փոքր տոկոս է կազմել, ինչը գաղթելու հետ կապված դժվարությունների հետևանք էր: Կանայք կազմել են 52%, տղամարդիկ՝ 27%, երեխաները՝ 21%: Նրանց թվում էին նաև հայկական և ամերիկյան բարեգործական կազմակերպությունների, ինչպես նաև արևմտյան քարոզիչների կողմից թուրքական հարեմներից, ոչ քրիստոնյա ընտանիքներից, ճամբարներից ու որբանոցներից հավաքագրված հայերը: 1917–1924 թթ. ԱՄՆ էր գաղթել պարբերական ջարդերի հետևանքով այրիացած 1.507 հայ<sup>3</sup>:

<sup>1</sup> The Armenians in Massachusetts, էջ 32. Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 65: Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., 1926, էջ 585:

<sup>2</sup> Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., 1926, էջ 585:

<sup>3</sup> Նույն ստեղծ: Minasian, Ed., նշվ. աշխ., էջ 111, 112: Mirak, R., նշվ. աշխ., 1981, էջ 139:

Արդեն 1920 թ. ԱՄՆ-ում բնակվում էր շուրջ 100.000 հայ<sup>1</sup>:

Առաջին աշխարհամարտի հետևանքով միջազգային ասպարեզում ստեղծված քաղաքական որակապես նոր հարաբերությունները պատճառ են դարձել ամերիկյան գաղթականական օրենքների պարբերաբար վերանայման, ինչը խիստ սահմանափակել է նաև հայերի գաղթը: Այսպես՝ 1921 թ. Առաջին Բվոտայի Օրենքով տարեկան Միացյալ Նահանգներ կարող էր գաղթել շուրջ 350.000 մարդ, ընդ որում՝ միայն 2.757 հայ: Դա կազմում էր 1910 թ. մարդահամարի համաձայն ԱՄՆ-ում բնակվող յուրաքանչյուր ազգի համար 3% բաժին: Միաժամանակ, որպես մարդասիրական նպատակներով կատարված բացառություն, Մերձավոր Արևելքում ղեզերող գաղթական հայերի համար Միացյալ Նահանգների իշխանությունների կողմից լրացուցիչ հատկացվել է որոշակի հավելյալ բաժին<sup>2</sup>:

Սահմանազծային էր 1924 թ. Ազգային Ծագումների Բվոտայի Օրենքը, որով նորից է կրճատվել ԱՄՆ մուտք գործել ցանկացողների թիվը՝ տարեկան կազմելով 150.000 մարդ, այսինքն՝ 1920 թ. մարդահամարի տվյալներով ԱՄՆ-ում բնակվող յուրաքանչյուր ազգի համար 2% բաժին: Ըստ այդ օրենքի՝ Հայաստանից տարեկան ԱՄՆ կարող էր գաղթել ընդամենը 124 հայ: Միաժամանակ, հայերը մեկնել են նաև իրենց բնակված երկրներին հատկացված բաժիններով: Վերաչգրվել էր հայ որբերին ու փախստականներին բացառություն կարգով մուտքի արտոնություն շնորհելու որոշումը: Այսուհետև նրանք գաղթելու էին Ազգերի լիգային պատկանող Նանսեյսյան անձնագրերով: 1914-1924 թթ. ԱՄՆ է գաղթել 32.064 հայ՝ 1924 թ. ԱՄՆ-ում բնակվող հայությունից ընդհանուր թիվը կազմելով ավելի քան 125.000<sup>3</sup>:

Ընդհանուր առմամբ, համաձայն Ն. Մանկունու և Ռ. Միրաքի հաշվարկների, նոր երկիր առաջին հայի ոտք դնելուց (1618 թ.) մինչև Ազգային Ծագումների Բվոտայի Օրենքը (1924 թ.), այսինքն՝ ավելի քան 300 տարիների ընթացքում, ԱՄՆ է մուտք գործել շուրջ 141.229 հայ, իսկ ամերիկյան բողոքական քարոզիչների

<sup>1</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ XVIII:

<sup>2</sup> Danilov, D. P. Immigrating to the USA. Canada, 1983, p. XVIII. Yeretzian, A. S. A History of Armenian Immigration to America with Special Reference to Conditions in Los Angeles. A Thesis. California. 1923, p. 18.

<sup>3</sup> Minasian, Ed., նշվ. աշխ., էջ 107-108: Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., 1926, էջ 585: Mirak, R., նշվ. աշխ., 1981, էջ 139:

ազդեցութեամբ դեպի ԱՄՆ սկզբնավորված հայերի պանդխտութեան ժամանակաշրջանից (1834—1924 թթ.), այսինքն՝ 90 տարիների ընթացքում, շուրջ 90.229 հայ<sup>1</sup>:

### Հայերի տեղաբաշխումը ԱՄՆ-ում

Տասնամյակների ընթացքում հայերը, մեկնելով Միացյալ Նահանգներ, տարածվել են ողջ երկրով մեկ և բնակություն հաստատել երկրի գրեթե բոլոր նահանգներում: Օբյեկտիվ (լիզվի չիմացություն, նոր բարքերին հարմարվելու դժվարություններ, աշխատանքային բարենպաստ պայմանների առկայություն), ինչպես նաև սուբյեկտիվ (ազգային նկարագիրը պահպանելու և ուծացումից զերծ մնալու ձգտում) հանգամանքներից ելնելով՝ հայ գաղթականների գերակշիռ մեծամասնությունը հակված է եղել հաստատվելու ազգային համախմբումներ ունեցող նահանգներում ու քաղաքներում:

Էլիս Այլենդի Գաղթականական գրասենյակում (Նյու Յորք) կատարված գրանցումները տեղեկություններ են հաղորդում այն մասին, թե ափ իջած նորեկ հայերն ԱՄՆ-ի առավելագույնս որ նահանգներում են մտադրություն հայտնել բնակվելու: Այդ տվյալները, թեև ոչ ստույգ, սակայն մոտավոր պատկերացում են տալիս յուրաքանչյուր նահանգի հայ բնակչության թվաքանակի մասին, քանի որ հայերի շրջանում մշտապես նկատվել է միգրացիա, հատկապես երկրի արևելյան շրջաններից դեպի արևմտյան շրջաններ՝ մասնավորապես Կալիֆոռնիայի նահանգ<sup>2</sup>:

Եթե սկզբնական շրջանում՝ շուրջ չորս տասնամյակ (1834—1874 թթ.), առավելագույնս ուսանելու նպատակով ԱՄՆ ժամանած հայերը կենտրոնացել էին գերազանցապես Նյու Յորքում և շրջակայքում, ապա հետագայում (հատկապես 1880-ական թվականներից), գաղթականության աճին զուգընթաց, ինչպես նաև աշխատանքային հանգամանքների բերումով, նրանք աստիճանաբար տարածվել են երկրի հյուսիսարևելյան, ապա՝ հյուսիսային ու արևելյան, միջին ու միջինարևմտյան տարածքներում՝ հիմնական նախապատվությունը տալով քաղաքային կյանքին: Ընդ որում, նրանց տեղաբաշխումն ու բնակեցումն ԱՄՆ-ում տեղի են ունեցել որոշակի օրինաչափություններով: Սկզբնապես Ամերիկա մեկնած ամուրի երիտասարդները կամ ընտանիքները հայրենիքում թողած տղամարդիկ հաստատվել են

<sup>1</sup> Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., 1926, էջ 589; Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 290:

<sup>2</sup> Ավագյան Զ., նշվ. աշխ., 2000, էջ 47—48:

երկրի հյուսիսային և արևելյան ասիերին գտնվող արդյունաբերական քաղաքներում (Ուստր, Նյու Յորք, Բոստոն, Ջերսի Սիթի, Ուեսթ Հորթոն, Ֆիլադելֆիա, Հարթֆորդ, Նյու Բրիթըն, Լոուրենս, Լինն, Ուոթերթաուն, Լոուել, Ուաշինգտոն, Թրոյ, Քեմբրիջ, Աթլըորո և այլն)։ Աստիճանաբար, պատմական հանդամանքների բերումով, ընտանիքների վերամիավորման նպատակով կանանց ու երեխաների ժամանումով և աշխատատեղերի նվազումով նրանք տեղաշարժվել են դեպի միջին արևմուտք և արևմուտք (Դետրոյտ, Հայլենդսիպ, Դիբորն, Ռոյալ Օք, Բեյսին, Սաութ Միլուոքի, Էվանսթոն, Չիկագո, Իսթ Սենթ Լուիս, Ուոքհեդըն, Բեյսին, Քլիվլենդ, Սութ Լեյք Սիթի, Ֆրեզնո, Ֆաուլեր, Եդեմ, Լոս Անջելես, Սան Ֆրանցիսկո, Փասադենա և այլն), որտեղ աշխատանքային նոր առավել բարենպաստ պայմաններ էին առկա<sup>1</sup>։

Իսկ արդեն 1923 թ. ամերիկահայերի 90%-ը տեղաբաշխված էր հետևյալ 10 նահանգներում՝ Նյու Յորքում, Մասսաչուսեթսում, Ռոդ Այլենդում, Իլինոյսում, Կալիֆոռնիայում, Միչիգանում, Փենսիլվանիայում, Նյու Ջերսիում, Կոնեկտիկուտում, Ուիսկոնսինում։ Այս նահանգների առավել հայաշատ քաղաքներն էին՝ Նյու Յորքը, Բոստոնը, Ֆրեզնոն, Դետրոյտը, Փրովիդենսը, Ուստրը, Ֆիլադելֆիան, Չիկագոն, Թրոյը<sup>2</sup>։

Ընդհանուր առմամբ, 1920-ական թվականների սկզբին ԱՄՆ-ի չորս տարածաշրջաններում տեղաբաշխված հայերի քանակական պատկերը հետևյալն էր.

1. Նոր Անգլիայի տարածաշրջան (Մասսաչուսեթս, Ռոդ Այլենդ, Կոնեկտիկուտ և այլ նահանգներ) - շուրջ 30.000 հայ։

2. Արևելյան տարածաշրջան (Նյու Յորք, Նյու Ջերսի, Փենսիլվանիա և այլ նահանգներ) - շուրջ 28.000 հայ։

3. Կենտրոնական տարածաշրջան (Իլինոյս, Օհայո, Միչիգան, Ուիսկոնսին, Միսսուրի, Մինեսոտա, Ինդիանա և այլ նահանգներ) - շուրջ 15.000 հայ։

4. Խաղաղականի տարածաշրջան (Կալիֆոռնիա և այլ նահանգներ) - շուրջ 19.000 հայ<sup>3</sup>։

XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայերը, տարածվելով ամերիկ-

<sup>1</sup> Հակոբյան Գ., Հայերի տեղաբաշխումն ԱՄՆ-ում (19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ). «Լրագրի հասարակական գիտությունների», թիվ 7, Երևան, 1987, էջ 15-16։

<sup>2</sup> Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., 1926, էջ 583։

<sup>3</sup> Yeretzian, A. S., նշվ. աշխ., էջ 20։

յան Նոր Անգլիայի, միջինատլանտյան, միջինարևմտյան շրջանները, ինչպես նաև՝ Կալիֆոռնիայի նահանգներում, ազգային կենտրոնացումներ են ստեղծել գործարաններ, ագարակներ և արտադրական ու գործարար բազմաբնույթ ոլորտներ ներառող երկրի տարբեր վայրերում:

**Հայերի զբաղմունքներն ու սոցիալ-տնտեսական վիճակը ԱՄՆ-ում**

ԱՄՆ մուտք գործած Հայերի զգալի մասը, հիմնականում զուրկ լինելով նյութական բավարար միջոցներից, դրա փոխարեն ունենալով սկզբնական շրջանում իր գոյուլթյունը պահպանելու համար անհրաժեշտ չնչին գումար, ի վիճակի չէր անմիջապես սեփական գործ բացել կամ ագարակ գնել: Այսպես՝ 1912 թ. ԱՄՆ ժամանած 5.222 Հայերի 90%-ը, ներառյալ 14 տարեկանից ցածր հրեխանները, ափ են իջել՝ իրենց մոտ ունենալով առավելագույնը մինչև 50 դոլարի չափ գումար<sup>1</sup>: Միաժամանակ, անձանոթ լինելով օտար երկրի լեզվին, կենցաղին ու բարքերին, նրանցից շատերը հարկադրված էին դիմել գործավորութայն (1919 թ. տվյալներով Ուստր, Փրոփիդենս, Թրոյ, Քլիվլենդ, Դետրոյտ քաղաքներում Հայերի 60–65%-ը աշխատում էր գործարաններում<sup>2</sup>), իսկ հետագայում, ընտելանալով օտար միջավայրին և բարելավելով իրենց տնտեսական վիճակն ու ֆինանսական պայմանները, ուղի հարթել տարբեր աստիճաններում:

Արդյունաբերական աշխատանքում ներգրավված Հայերը հիմնականում կենտրոնացած էին Հյուսիսարևելյան տարածքի Մասսաչուսեթս, Ռոպ Ալլենդ, Նյու Յորք, Նյու Ջերսի, Փենսիլվանիա, ինչպես նաև միջինարևմտյան Իլինոյս, Միչիգան, Օհայո նահանգներում<sup>3</sup>:

Մասսաչուսեթսի նահանգում, որտեղ բնակվում էր Հայ աշխատավորութայն զգալի մասը (1915 թ. նրանց թիվը շուրջ 4.239 էր, ընդ որում 2/3-ը զբաղված էր արդյունաբերական արտադրությունում), նրանք աշխատում էին Ուստրի, Բոստոնի, Ուոթերթաունի, Չելսիի, Լոուրենսի, Լիննի, Քեմբրիջի, Լոուելի, Նորթբրիջի, Միլֆորդի և այլ գործարաններում<sup>4</sup>: Ուստրը ամերիկահայ գործավորութայն առաջին կենտրոնատեղին էր: Այդտեղ էր գտնվում բողոքականներ

<sup>1</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 77:

<sup>2</sup> Wertsman, V., նշվ. աշխ., էջ 53:

<sup>3</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 79:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 78, 79: Mirak, R., նշվ. աշխ., 1981, էջ 141:

Ֆ. Մոնիի և Չ. Ուոչբերնի կողմից 1858 թ. հիմնված համեմատաբար բարձր վարձատրվող մետաղաթելի հսկա գործարանը, որտեղ աշխատում էին տարբեր ազգերի շուրջ 7.000 ներկայացուցիչներ՝ ամեն ամիս արտադրելով 7.000 տոննա մետաղաթել ու զսպանակ: Առաջին հայն այդտեղ աշխատանքի էր անցել դեռևս 1867 թ.՝ հանդիսանալով ամերիկահայ առաջին գործավորը: Հայ պանդուխտներին Ուստրի մետաղաթելի գործարանում աշխատելու հնարավորություն ստեղծելու նախաձեռնությունը պատկանել է Օսմանյան կայսրության հայաբնակ տարածքներում գործող ամերիկյան քարոզիչներին, որոնք գաղափարապես իրենց հարած հայերին օգնում էին աշխատանք գտնել վերոհիշյալ գործարաններում: Կարճ ժամանակում հայ աշխատավորների թիվը Ուստրի գործարանում ստվարացել է՝ 1888 թ. կազմելով 266 մարդ, հակառակ նրա, որ աշխատանքային պայմաններն այդտեղ սաստիկ անմարդկային էին, որի պատճառով գործարանը հայտնի էր նաև որպես «Ուստրի սպանդանոց»<sup>1</sup>:

Դեպի Ամերիկա Հայերի տարեցտարի աճող հոսքին զուգընթաց ավելացել է նաև աշխատավորների և գործարանատերերի միջև միջնորդի ու թարգմանի դեր կատարող, լեզվին տիրապետող ճարպիկ ու բանիմաց մարդկանց թիվը, որոնք բազմաթիվ Հայերի ապահովում էին բնակարաններով, օգնում հարմարվել նոր պայմաններին, իսկ երբեմն էլ լեզու սովորեցնում ցանկացողներին: Պատահում էին նաև Հայերի անօգնականությունը չարաչափողներ ու կեղեքողներ<sup>2</sup>:

Տասնամյակների ընթացքում ԱՄՆ-ում հայություն թվի աճին զուգընթաց տեղի է ունեցել նաև նրանց տարածումը երկրի տարբեր արդյունաբերական քաղաքներում՝ ներդրավվելով տեղի գործարաններում ու ֆարրիկաներում: Օրինակ՝ Մասսաչուսեթսի՝ նահանգի Բրոքթոն, Հեյվլըհիլ, Լինն, Բոստոն, Ամսթերի քաղաքներում հայերը հիմնականում աշխատում էին կոշիկի (Ուոթերթաունում էր գտնվում Հուդ Ռաբբրի ռետիների խոշոր ընկերությունը, որը հայ գաղթականության համար ամենից ծանր տարիներին աշխատանքով է ապահովել ավելի քան 500 մարդու), Լոուրենսում՝ բամբակե ու

<sup>1</sup> Մուշեղ եպիսկոպոս, Ամերիկահայ տարեցույց, Բ տարի, Պոստոն, 1913, էջ 40, 41: Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., 1926, էջ 102: Ոսկեմատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Արծաթեայ Յոբելեան. 1906–1931, Ի. Ա, Բարիզ, 1935, էջ 311 (այսուհետև՝ Ոսկեմատեան ՀԲԸՄ):

<sup>2</sup> Ծիզմեճեան Մ. Գ., նշվ. աշխ., 1955, էջ 199: Մուշեղ եպիսկոպոս, նշվ. աշխ., Բ տարի, 1913, էջ 44:

բրդե հյուսվածքների, Լոուելում՝ գործվածքեղենի ֆաբրիկաներում, Ուայթինսվիլում՝ ձուլարաններում, Ռոդ Ալլենդի նահանգի Փրովիդենս և Սենթրալ Ֆոլգ քաղաքներում՝ մետաքսի և ներկի, իսկ Փաուլթոքեթ և Քրենսթոն քաղաքներում՝ գործվածքեղենի ֆաբրիկաներում<sup>1</sup>։ Նյու Յորքի հայուկները հիմնականում կենտրոնացած էր Ջեներալ էլեքթրիքսի և Շքենեքթեդի գործարաններում, Նիազարա Ֆոլգ, Մենեսա քաղաքներինը՝ ալյումինի ու արևմտյան թրոյինը՝ երկաթի, ինչպես նաև թրոյինը՝ օձիքի և վերնաշապիկի արտադրություններում։ Նյու Ջերսիի նահանգի Փաթերսոն, Քեմդըն, Ուեսթ Լոքսբեն քաղաքներում հայերը զբաղված էին ածխարդյունաբերությամբ, Միչիգանի նահանգի Դետրոյտ, Պոնտիաք, Ֆլինթ քաղաքներում՝ ավտոմեքենաների, իսկ Գրենդ Բեյքիդսում և Ուիսկոնսինի նահանգի Բեսիս քաղաքում՝ կահույքի գործարաններում։ Իլինոյսի նահանգի Ուոքսգըն, Ուեսթ Փոլման, Գրենիթ Սիթի քաղաքներում հայերն աշխատում էին երկաթի ու պողպատի գործարաններում, ինչպես նաև՝ Ջիկագոյի սպանդանոցներում և այլուր։ Ներթափանցելով երկրի հեռավոր արևմտյան շրջաններ՝ հայերն աշխատանքի են անցել նաև Կանզասի, Արիզոնայի և այլ նահանգների արդյունաբերական արտադրություններում<sup>2</sup>։

Ռուսական կայսրությունից եկած հայ պանդուխտները հիմնականում կենտրոնացած էին Միսսուրիի նահանգի Իսթ Սենթ Լուիս քաղաքի պողպատի գործարաններում, Մինեսոտայի նահանգի Սենթ Փոլ քաղաքի երկաթուղաշինության բնագավառում, ինչպես նաև՝ Կալիֆոռնիայի նահանգի պահածոյի գործարաններում և Բիվերսայդի շաղախի արտադրություններում<sup>3</sup>։

Ընդհանուր առմամբ, Ուստր, Փրովիդենս, Թրոյ, Քլիվլենդ, Լոուել, Լոուրենս, Հեյվըրհիլ, Դետրոյտ և արդյունաբերական մի շարք այլ խոշոր քաղաքներում կենտրոնացած էր հայ բանվորների 60%-ը։ Համաձայն սմերիկյան Գաղթականական հանձնախմբի վիճակագրական տվյալների՝ 1899–1917 թթ. ԱՄՆ-ում կար շուրջ

<sup>1</sup> Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 27, 28: Yeretzian, A. S., նշվ. աշխ., էջ 21: Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 79, 80, 81: Պարսամեան Ա., Յուշարձան Ջերմուկի, Պոսքըն, 1969, էջ 110: The Armenians in Massachusetts, էջ 36:

<sup>2</sup> Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 84: Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 27: Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 79, 80:

<sup>3</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 79:

10.829 Հայ բանվոր<sup>1</sup>:

Նոր երկրում Հայ դաղթականության առջև ծառայած ամենօր-  
յա կարիքները գործարանային արտադրութայան մեջ են ներգրավել  
ոչ միայն տղամարդկանց, այլ նաև կանանց ու որոշակի տարիքի  
երեխաների:

Հայ գործավորներն աշխատում էին բավականին վտանգավոր  
պայմաններում, երբ ամեն վայրկյան առկա էր հաշմանդամ դառնա-  
լու կամ զոհ գնալու սպառնալիքը: Իսկ այդ բոլորով Հանդերձ,  
ԱՄՆ-ի մի շարք նահանգներում (օրինակ՝ Փենսիլվանիայի նահանգ)  
աշխատանքային դժբախտ պատահարների ժամանակ տուժած գոր-  
ծավորների ընտանիքներին (այդ թվում նաև՝ ԱՄՆ-ից դուրս գտնվող  
նրանց ընտանիքներին) նյութական հատուցում ցույց տալու մասին  
օրենք գոյություն չուներ<sup>2</sup>:

Այդ «սատանայական գործարաններում» Հայեր՝ օրական մի-  
ջին աշխատավարձը կազմել է 1 դոլար 62 սենթ, ինչը շատ չնչին էր  
ամերիկացու միջին 3 դոլար 60 սենթի համեմատությամբ: Հայ դաղ-  
թականը, շաբաթական միջին հաշվով վաստակելով 7-8 դոլար, հա-  
զիվ կարողանում էր խնայել 4 դոլար, այն էլ սննդի ու բնակարանի  
վարձի համար: Մինչդեռ տեղական լեզվին անտեղյակ Հայը չէր  
հանդիմանում գործարանատիրոջից աշխատավարձի հավելում պահան-  
ջել, քանի որ արդյունքում ունեցածն էլ կկորցներ: Այդուհանդերձ,  
Հայ աշխատավոր գաղթականների տարեկան միջին աշխատավարձը  
գաղթական այլ ազգերի ներկայացուցիչների աշխատավարձի համե-  
մատությամբ զգալի չափով ավելի բարձր էր, քանի որ, ի տարբե-  
րություն վերջիններիս, Հայերը սեզոնային բանվորներ չէին, այլ  
առանց հայրենիք վերադառնալու, աշխատում էին գրեթե ողջ տա-  
րին<sup>3</sup>:

Հայ պանդուխտ աշխատավորները, որոնք գալիս էին հիմնա-  
կանում միջին կարողության տեր ընտանիքներից և սկզբնական  
չրջանում մեծ մասամբ նպատակ չունեին մշտական բնակություն  
հաստատելու Նոր երկրում, այլ ձգտում էին որոշ ժամանակ աշխա-  
տելուց ու բավարար դրամ ձեռք բերելուց հետո վերադառնալ իրենց

<sup>1</sup> Minasian, Ed., նշվ. աշխ., էջ 110: Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 82:

<sup>2</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1981, էջ 141: Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 86: Մուշեղ Խալի-  
կոսյան, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 194:

<sup>3</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1981, էջ 141: Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 88, 85, 86:  
Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., 1962, էջ 101:

հայրենի օջախները, բնիկ ու այլազգի բանվորների համեմատութեամբ չեն դժգոհել աշխատանքային ծանր պայմաններից և ցածր աշխատավարձից, քանի որ հոգեբանորեն իրենց չեն համարել տեղացի բանվոր դասակարգի մի մասը: Հետևաբար, շատ հաճախ գոյութեան խնդրով առաջնորդվող հայ աշխատավորներից շատերը գործադուլների ժամանակ գործարանատերերին ցածր գներով առաջարկում էին իրենց ֆիզիկական ուժը՝ դրանով իսկ արժանանալով տեղացի բանվորների դժգոհութեանն ու թշնամանքին: Մինչդեռ հայ աշխատավորների դասակարգային գիտակցութեան բացակայութիւնն ուներ օբյեկտիվ (հայրենիքում բանվորութեան բացակայութիւնը) և սուբյեկտիվ (գործարանը որպէս ժամանակավոր աշխատատեղ դիտելը, նոր երկրի տնտեսական ու հասարակական կյանքին հարմարվելու առօրյա հոգսերը) զրդապատճառներ<sup>1</sup>:

ԱՄՆ-ում պարբերաբար կրկնվող տնտեսական ճգնաժամերն ու դրանց ուղեկցող գործազրկութիւնը խիստ բարդացրել են դժվարութեամբ աշխատանք գտած հարյուրավոր հայերի կյանքի պայմանները՝ նրանց մատնելով անորոշութեան, իսկ շատերը վերադարձել են իրենց բնօրրանները: Տնտեսական դժվարին ժամանակներում գտնվել են նաև այնպիսի ունևոր բարեգործ հայեր, որոնք իրենց վրա են վերցրել աշխատանքից ու ապրուստի միջոցներից զրկված հայրենակիցների հովանավորութեան հարցը: Այդպիսին էր Մովսես Գյուլեսայանը, որը Բոստոնի քիվի իր գործարանում ապաստան, ինչպէս նաև նյութական ու բարոյական աջակցութիւն է ցույց տվել կարիքի մեջ գտնվող բազմաթիվ հայերի: 1908 թ. Նյու Յորքի քաղաքապետարանի ջանքերով ստեղծվել է Հայկական աշխատանքային տեղեկատու բյուրո, Հայկական բարեգործական ընդհանուր միութեան (այսուհետև՝ ՀԲԼՄ) Բոստոնի կենտրոնը բացել է զբաղվածութեան գրասենյակ, իսկ 1913 թ. ստեղծվել է Հայկական գլխաւորական ընկերակցութեան զբաղվածութեան գրասենյակ: Դրանք կոչված էին բազմակողմանի օգնութիւն ցույց տալու ապրուստի միջոցներից զրկված գաղթական ու գործազուրկ հայրենակիցներին<sup>2</sup>:

Հայ գործավորները դրամ խնայելու նպատակով իրենց բանվորական կյանքի սկզբնական շրջանում ապրում էին կիսաթշվառ պայմաններում: Բնակարաններ էին վարձում էժան փողոցների վրա,

<sup>1</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 87: Մաշեղ Խախուպոս, նշվ. աշխ., Բ տարի, 1913, էջ 98:

<sup>2</sup> «Եփրատ», 17.2.1898: «Հայրենիք», 14.2.1914:

Հին ու կեղտոտ տներում, որտեղ ապրում էին մեկ սենյակում 8–10, երբեմն մինչև 20 հոգի և ավելի, միասին լամբված, «միևնոյն սենեակի մէջ եփելով, ուտելով, եւ պառկելով. իւրաքանչիւր գործաւոր ինքն իր ճաշը պիտի պատրաստէր, ամանները լուար, սենեակը մաքրէր, լուացքը ընէր, գոնէ շաբաթը անգամ մը»: «Ննջասենեակները ընկերովի կը գործածէին համաձայն գործածամի, մին կ'ըլլէր, միւսը կը պառկէր եւ երբեմն ալ մէկ անկողնի մէջ միասին կը պառկէին, երկու հոգի: Այսպիսի համակեցութեան մէջ, բոլոր ծախքերը հաւասարապէս կը բաժնէին ամէն մի անձի վրայ: ... Այսպիսի համակեցութիւնը Ղու մանիայ կը կոչէին»<sup>1</sup>:

Պանդխտութեան սկզբնական շրջանում հարկադրաբար բանվորական կյանքի ուղի ընտրած հայ գաղթականների զգալի մասը, տաժանակիր ու համառ աշխատանքի շնորհիվ, փոքրիշատե բարվոքելով իր տնտեսական վիճակը, հարմար պատեհութեան ի հայտ գալու դեպքում հեռացել է գործարանից և ներգրավվել իր կարողութեանն ու հմտութեանը համապատասխանող արհեստներում կամ փոքրիկ խնայողութեաններով սեփական գործ է հիմնել: Այնպես որ արդյունաբերական արտադրութեան մեջ ներգրավված բանվորներից բացի (1899–1917 թթ. ԱՄՆ-ում կար 10.829 հայ բանվոր), հայերի շրջանում զգալի թիվ են կազմել նաև որոշակի հմտութեանների տիրապետող արհեստավորներն ու մանր խանութպանները՝ կոշկակարները, դերձակները, հյուսները, ոստայնագործները, կրկաթագործներն ու պողպատագործները, վարսավիրները, հացթուխները, սրագիրներն ու հաշվապահները, որմնադիրները, մսագործները, գոհարագործները, մետաղագործներն ու թիթեղագործները, ապակեվաճառները, մեքենագործներն ու մեքենավարները, կաշեգործները, ժամագործները, ծխախոտագործները, նոսրավաճառները, տպագրիչները, ներկարարներն ու լվացարարները, գորգագործները, հագուստավաճառները, քաղցրավաճառները, ճաշարանատերերը, իջևանատերերը և այլք: Ընդհանուր առմամբ, 1899–1917 թթ. վերոհիշյալ հայերի թիվն ԱՄՆ-ում կազմել է 14.026<sup>2</sup>:

Գաղթականական հանձնախմբի վիճակագրական տվյալների համաձայն, ամերիկահայերի շրջանում մեծ թիվ են կազմել նաև

<sup>1</sup> Հնչակեան տարեգիրք (Ամերիկայի շրջանի), Բ տարի, Փրավիտենս, 1932, էջ 15: Ճիզմեճեան Մ.Գ., նշվ. աշխ., 1930, էջ 3: Մուշեղ եպիսկոպոս, նշվ. աշխ., Բ տարի, 1913, էջ 76: Տրդատեան Տ., Յաղթը եւ յաղթեցիւնները, Պոսքըն, 1959, էջ 118:

<sup>2</sup> Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 81–82:

գործարարները: Այսպես, 1899–1917 թթ. ԱՄՆ-ում կար հայազգի 1.117 առևտրական, 17 հյուրանոցի, 9 բանկի, 8 գործարանի սեփականատեր և այլն: Ընդ որում, առևտուրը, հատկապես մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը, առավելապես մենատիրաբար դրսևորվել է երկու հիմնական ասպարեզներում. երկրի արևելյան ափամերձ շրջանում՝ արևելյան գորգի (ներմուծման 70–80%-ը կատարվում էր հայերի կողմից), իսկ արևմտյան շրջանում՝ գյուղատնտեսական արտադրանքների վաճառահանությամբ<sup>1</sup>:

Բացի արևելյան գորգի մեծածախ առևտրից, հարյուրավոր գաղթական հայեր ներգրավված էին նաև համապատասխան գորգագործության, գորգի վերանորոգման, լվացման, ինչպես նաև համապատասխան դազգահների արտադրության բնագավառներում: Արդեն 1915 թ. ԱՄՆ-ում կային արևելյան գորգի հայկական 75 խոշոր ընկերութուններ և 200-ից ավելի վերանորոգման փոքր արհեստանոցներ<sup>2</sup>:

Եթե ԱՄՆ-ի արևելյան տարածաշրջանում բնակութունը հաստատած հայերն առանձնապես մեծ հաջողութունների էին հասել արևելյան գորգի ներմուծման, վաճառքի, արտադրության ու վերանորոգման ասպարեզներում, ինչպես նաև զբաղված էին համատեղ աշխատանք պահանջող գործարանային արտադրութուններում, ապա արևմտյան նահանգներում նրանք ներգրավված էին ազգային նկարագրի առավել հոգեհարազատ գյուղատնտեսական արտադրութունում, որտեղ գերակշռում էր անհատական աշխատանքը: Այդ առումով, նրանց գլխավոր կենտրոնաւոեղին երկրի արևմտյան ափին գտնվող Կալիֆոռնիայի տարածաշրջանն էր և հատկապես նահանգի սրտում գտնվող Սան Ուոգին հովիտը: Միաժամանակ, Կալիֆոռնիայում բնակութունը հաստատած հայերի զգալի մասը՝ 86%-ը, եկել էր ԱՄՆ-ի արևելյան և կենտրոնական արդյունաբերական շրջաններից<sup>3</sup>:

Դեռևս անցյալ դարավերջին Կալիֆոռնիայի նահանգի Սան Ուոգին հովիտն անապատ էր: Այն անապատից դրախտի վերածելու երկարամյա ու դժվարին գործում Կալիֆոռնիայի նահանգի սուռչին վերաբնակիչները շարքում իրենց անզնահատելի ավանդն են ներդրել նաև ամերիկահայ գաղթականները, որոնք, իրենց քրտինքը

<sup>1</sup> Նույն տեղում: Yeretzian, A. S., ցշվ աշխ., էջ 21:

<sup>2</sup> Mirak, R., ցշվ. աշխ., 1983, էջ 406

<sup>3</sup> Mirak, R., ցշվ. աշխ., 1981, էջ 141:

խառնելով գետերի Հետ, ոռոգելի ու մշակելի են դարձրել ամայի տարածությունները: Սկզբնապես հող ձևուք բերելը դժվարություն էր ներկայացնում. յուրաքանչյուր քաղաքացի կարող էր կառավարությունից անվճար վերցնել 160 ակր հող (1 ակրը = 4.060 մ<sup>2</sup>):

Տասներկու գավառներից բաղկացած Սան Ուոդին Հովտի կենտրոնը Ֆրեզնոն է, որը բարգավաճել է հիմնականում շնորհիվ այդտեղ մեծամասնություն կազմող հայերի քրտնաջան աշխատանքի: Բացի Ֆրեզնոյից, հայ երկրագործները հաստատվել են նաև Ֆատլիբում, Րիդլիում, Փարլիբում, Սենկլրում, Բինգզբուրգում, Տայնուպայում, Սելմայում, Թերլիում, Թուլարայում, Եդեմում, Օրոսայում, Սուլթանայում, Վայսիլիայում, ինչպես նաև՝ Լոս Անջելեսում, Ռեդլենդում, Իմփերիալ Վելիում և հարակից այլ շրջաններում<sup>2</sup>:

Երկրի արևելյան նահանգներից, ապա նաև աշխարհի հայաբնակ այլ վայրերից գյուղատնտեսական կալիֆոռնիա ժամանած սահմանափակ կարողության տեր և մինչ այդ հողագործական աշխատանքի փորձ չունեցող հայերը սկզբնական շրջանում բախվել են բազմաթիվ տնտեսական դժվարությունների: Նախապես զուրկ լինելով հողատարածքներ կամ այգիներ զնելու հնարավորությունից՝ հայերի մեծ մասն օրական միջին հաշվով 2 դոլարով վարձվել է որպես հողագործական աշխատավոր, մինչ մյուսները վարձակալել են զգալի չափով հողատարածքներ: Ֆրեզնոյում բազմաթիվ հայեր, հիմնականում՝ կանայք ու երեխաներ, ներգրավվել են գյուղատնտեսական ապրանքների փաթեթավորման և պահեստավորման աշխատանքներին՝ գերակշիռ թիվ կազմելով ամերիկաբնակ այլ ազգերի ներկայացուցիչների համեմատությամբ<sup>3</sup>:

Աստիճանաբար գյուղատնտեսության մեջ ներգրավված և օտարազգի այլ գաղթականների համեմատությամբ չափավոր ծախսեր կատարող հայ ընտանիքը համառ ու դժվարին աշխատանքի շնորհիվ դարձել է տան, անասունների, բանջարանոցի և այլնի սեփականատեր՝ վերածվելով ազատ ֆերմերության և նվազեցնելով վարձու աշխատանք կատարողների թիվը<sup>4</sup>:

Տարիների ընթացքում հայերն իրենց ձեռքն են վերցրել նահանգի լավագույն հողատարածքներն ու այգիները, որտեղ հիմա-

<sup>1</sup> Մուշեղ Եսլիսկոպոս, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 222:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 224:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 229, 231:

<sup>4</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 117, 120:

կան մշակությունը խաղողն էր: Այսպես, եթե դարասկզբին Ֆրեզնոյի և Թուլարայի հայերն ունեին ընդհանուր առմամբ 10.000 ակր հող՝ 2 մլն դոլար արժողությամբ, ապա արդեն 1922 թ. միայն Ֆրեզնոյում այն կազմել է 37.555 ակր՝ ավելի քան 30 մլն դոլար արժողությամբ, ընդ որում, յուրաքանչյուր հայ ընտանիք ուներ միջին հաշվով 20-40, երբ մն նաև՝ 80 ակր հողատարածք: Իսկ ողջ Սան Ուոդին հովտում 1908 թ. հայերի ձեռքում էր կենտրոնացած 25.000 ակր հողատարածք, այսինքն՝ ընդհանուրի 3/5 մասը<sup>1</sup>:

Կալիֆոռնիայի նահանգի հայերը, հիրավի, խոշոր ներդրում են ունեցել տեղի գյուղատնտեսության զարգացման գործում: Նրանց է պատկանում գյուղատնտեսական որոշ մշակություններ (ծնեբեկ, ձմերուկ, սպիտակ ադրիատիկ, զմյուռուհիական, քալիմիրնուկան, մսքեթ, Ֆեհրզագո և այլ տեսակների թուզ, պարսկական, կասսաբայի, դիարբեքիրի, թուրքական, հայկական և այլ տեսակների սեխ, ընկույզ, նուշ, պիստակ և այլն) առաջին անգամ նահանգ ներմուծելու, յուրատեսակ մեթոդներով աճեցնելու, ինչպես նաև վերամշակելով, դրանք չորացնելու ու մթերման համար փաթեթավորելու և արտահանելու պատիվը:

Ամերիկահայերի ձեռքում էր կենտրոնացած նաև Կալիֆոռնիայի խաղողի մշակությունը: 1891—1904 թթ. նրանք խաղողի մի շարք այգիներ էին գնել Ֆրեզնոյի տարածքում, սեփականացրել 10.000 ակր Սան Ուոդին հովտում, այսինքն՝ չամիչի և զինու արտադրության համար նախատեսված ամբողջ 94.600 ակր հողատարածքի 10,5%-ը: Ֆրեզնոյում չամիչ արտադրողների 1/4-ը կամ շուրջ 25%-ը հայեր էին: 1908 թ. խաղողի մշակության համար հայերի ձեռքում էր կենտրոնացած 16.000—20.000 ակր հողատարածք կամ՝ ողջ չամիչի արտադրության 1/6-ը: Ամերիկյան Գաղթականական հանձնախմբի տվյալներով հիշյալ բնագավառում հայերը շատ ավելի հաջողակ էին, քան նույնիսկ Կալիֆոռնիայի գյուղատնտեսական ասպարեզում մեծ համբավ ունեցող ճապոնացիները, քանի որ կարողացել են շատ արագ հարստանալ՝ շնորհիվ իրենց աշխատասիրության, գործարար ճարպկության և խելամիտ տնտեսելու կարողությունների: Թեև անսպասելի փոթորիկներն ու տեղատարափ անձրևները պատճառ են դարձել, որպեսզի առատ բերքը կրճատվի և փչանա, բայց

<sup>1</sup> Mahakian, Ch., նշվ. աշխ., էջ 20: Մուշեղ Խախիկոսյան, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 224—226: Արշալոյս պատկերագրող տարեգիրք, էջ 57: Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 119: Yeretzian, A. S., նշվ. աշխ., էջ 34:

և այնպես համբերատար հայ հողագործը լավագույն հեռանկարների հույսով հաղթահարել է դժվարությունները՝ ընդհուպ մինչև 1920-ական թվականների սկզբին վրա հասած տնտեսական ճգնաժամը, երբ շատ շատերը հարկադրված էին հեռանալ Ֆրեզնոյից<sup>1</sup>:

Կալիֆոռնիայի հայերը զբաղվել են նաև բլդուրի արտադրությամբ ու երկրով մեկ դրա վաճառքով, ինչպես նաև նարնջի, ծիրանի, ելակի, տարբեր տեսակի բանջարեղենների, հատապտուղների մշակությամբ, թռչնաբուծությամբ, ծխախոտագործությամբ, գինեգործությամբ և այլն: Գյուղատնտեսական աշխատանքներից բացի, նահանգի հայերը ներդրվել են նաև հանքագործության մեջ՝ մասնակցելով նավթի, արջասպի արդյունահանմանը և այլն, մյուսներն արհեստավորներ էին, արհեստավարժներ, խանութպաններ, գործարարներ: Այդուհանդերձ, գյուղատնտեսական և նատանքներում ընդգրկված հայերի թիվը զգալի չափով դեբազանցել է ոչ գյուղատնտեսական աշխատանքներում ընդգրկվածների թիվը<sup>2</sup>:

Լոսանջլեյսաբնակ հայերի շրջանում քիչ թվով հայեր են ներգրավվել գյուղատնտեսական աշխատանքներում (նյւանք քաղաքամերձ տարածքներում փոքր ագարակների, մրգատու այգիների սեփականատերեր էին), մեծ թիվ են կազմել հմուտ և արհեստավարժ մարդիկ, որոնց տոկոսային հարաբերությունը բարձր էր նույնիսկ հարավարևելյան Եվրոպայից և Օսմանյան կայսրությունից դաղթած ազգային այլ ներկայացուցիչների համեմատությամբ: Բազմաթիվ հայեր զբաղված էին նավաբեռնման կայաններում, աղյուսաշինական, փայտամշակման, երկաթի և այլ գործարաններում, տարբեր խանութներում, նպարեղենի ու մսավաճառի խանութների սեփականատերեր էին: Լոս Անջելեսի հայերը, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում արևելահայերը, ներգրավված էին նաև աղյուսավաճառման աշխատանքներում<sup>3</sup>:

Կալիֆոռնիայի և մասնավորապես լոսանջլեյսահայ իգական սեռի ներկայացուցիչներն իրենց ընտանիքների ապրուստը հոգալու նպատակով տնային պայմաններում զբաղվել են աղգայի<sup>4</sup> նկարագրին ու բնօրրաններին առավել հոգեհարազատ աշխատանքներով՝ ձեռագործով և ասեղնագործությամբ, որոնց վաճառքով, գեղեցիկ

<sup>1</sup> Mahakian, Ch., նշվ. աշխ., էջ 24, 25: Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 119–120: Yeretzian, A. S., նշվ. աշխ., էջ 34:

<sup>2</sup> Ավագյան Ք., նշվ. աշխ., 2000, էջ 69:

<sup>3</sup> Mahakian, Ch., նշվ. աշխ., էջ 40:

ստեղծագործությունները տարածվել են ողջ երկրով մեկ՝ արժանանալով օտարների համընդհանուր ճանաչմանը, հիացմունքին ու բարձր գնահատանքին: Հայ կանանց ձեռքի աշխատանքներում զգալի մաս են կա մեկ ասեղնագործված ժանյակավոր տարրեր տեսակի թաշկինակները, օձիքները, թլենոցները, գոտիները, հագուստները, գլխարկները, վզկապները, բարձերը, վարագույրները, սեղանի ծածկոցները, նախաճաշանոցները, թեյարանները և այլն: Կանայք աշխատել են նաև չորացրած մրգերի, թխվածքեղենի խանութներում, ճաշարաններում, ծաղկանոցներում և այլուր<sup>1</sup>:

Կալիֆոռնիայի հայերը նյութական շատ ավելի բարվոք վիճակում էին, քան երկրի արևելյան և միջինարևմտյան նահանգներում բնակվողները, քանի որ առաջիններն ազատ էին ձմեռվա վառելիքի և տաք հագուստեղենի համար անհրաժեշտ ծախսերից: Հետևաբար, վերոհիշյալ զբաղմունքների տեր հայերի ստացած աշխատավարձը բավարարել է նրանց կենցաղային պահանջները, թույլ տվել խնայողություն կատարել մինչև անզամ աշխատավարձի կեսի չափով, որի դեպքում նրանց հաջողվել է սեփական գործ հիմնել, ինչպես նաև օգնել հեռավոր երկրի իրենց հայրենակիցներին<sup>2</sup>:

### **Հայերի մասնագիտացումն ու կենսամակարդակը ԱՄՆ-ում**

Ամերիկաբնակ հայերի՝ ուսման նկատմամբ ունեցած սերն ու մասնագիտական կրթություն ձեռք բերելու անհուն ցանկությունը խթանել են նաև հարյուրավոր արհեստավարժ ամերիկահայերի ի հայտ գալը: Նրանց շարքում մեծ թիվ են կազմել ուսուցիչները, հոգևորականները, դրականագետները, հայալեզու և անգլիալեզու թերթերի խմբագիրները, դասախոսները, ինժեներները, գյուտարարները, ֆիզիկոսները, քիմիկոսները, բժիշկները, քանդակագործները, արվեստագետները, երաժիշտները, ճարտարագետները, իրավաբանները, ասպիտակարանի ընկերությունների կամ կալվածքների գործակալներն ու այլ մասնագիտությունների տեր մարդիկ (1899–1917 թթ. ԱՄՆ-ում կար 782 արհեստավարժ հայ): 1920 թ. տվյալներով ԱՄՆ-ն ուներ հայազգի շուրջ 100 հոգևորական, որոնցից 39-ը քարոզում էին ամերիկյան ժողովարաններում, ավելի քան 200 բժիշկ ու ատամնաբույժ և 15 իրավաբան, որոնց հաճախորդների մեծ մասը ամերիկացիներ էին, ինչը նրանց բարձր որակավորման վկայու-

<sup>1</sup> Yeretzian, A. S., նշվ. աշխ., էջ 65–66:

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 69, 70:

թյունն էր: Ամերիկյան առաջնակարգ քոլեջներում և Համալսարաններում դասավանդում էին մեկ տասնյակից ավելի Հայ դասախոսներ ու պրոֆեսորներ: Ամերիկյան բժշկութան մեծագույն ներկայացուցիչը ԱՄՆ-ում և Եվրոպայում մեծ հռչակ վայելող, դեմքի պլաստիկ վիրաբույժ Վարադգատ Ղազանչյանն էր: Հոգեբուժության ասպարեզում ճանաչված էր Նյու Յորքի Բելեվյու հիվանդանոցի դոկտոր, ամերիկյան հոգեբանական հաստատության ղեկավար Մինաս Գրեգորին: Ամերիկահայերի շրջանում եղել են մի շարք երևելի գյուտարարներ. Հանրահայտ էր ռենտգենյան ճառագայթների հայտնագործման ասպարեզում աշխարհում առաջնեկ Հանդիսացած և իր հայտնագործությունը զոհ գնացած բժշկագիտության դոկտոր Միհրան Գրիգոր Ղասաբյանը՝ Ֆիլադելֆիայից: Կալիֆոռնիայի Համալսարանի շրջանավարտ Մուշեղ Վայդունուն Հաջողվել էր բացահայտել խաղողի շաքարը գինեթթվի վերածելու սինթետիկ եղանակը: Ավազցի Ա. Բ. Դերբարը՝ Լիննից, իր ձևաբով կառուցել էր զարմանալիորեն թեթև (175–30 փաունդի դիմաց՝ 25–19 փաունդ կշռող [1 փաունդը = 453,6 գր]) Հեծանիվներ: Առաջին աշխարհամարտի տարիներին Ֆիզիկայի ասպարեզում Կարապետ Կիրակոսյանը հայտնագործել էր «էներգիայից ազատ շարժիչ», այսինքն՝ ազատ հզորության հզորությունն ստեղծելու սկզբունքը<sup>1</sup>:

Ամերիկյան Գաղթականական Հանձնախմբի վիճակագրական տվյալների համաձայն, 1899–1917 թթ. ԱՄՆ-ում կար առանց զբաղմունքի 12.453 Հայ, որոնց մեծ մասը կանայք էին և բարձր տարիքի երեխաներ<sup>2</sup>:

Ամերիկահայերն իրենց կենսամակարդակով ու ապրուստի միջոցներով գրեթե չեն տարբերվել ամերիկաբնակ այլ ազգերի ներկայացուցիչներից: Ունեորները, ինչպես նաև բարեկեցիկ կյանք ու միջին եկամուտ ունեցողները բնակվել են երկրի խոշոր և գլխավոր քաղաքների լավագույն ու հարուստ թաղամասերում՝ օգտվելով ամեն տեսակի բարիքներից, ճիտություններից և շոսյուլություններից: Նրանք հիմնականում սևիականացրել են իրենց տները, ունեցել լավագույն մակնիշի ավտոմեքենաներ, շքեղ կահկարասիներ, դամուր, արվեստի թանկարժեք դործեր, արևելյան գորգեր, շատերն անշարժ գույքի, խոշոր կալվածքների սեփականատերեր էին և այլն:

<sup>1</sup> Wertsman, V., նշվ. աշխ., էջ 57: Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 81–82, 96–97: Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 33: The Armenians in Massachusetts, էջ 38–40:

<sup>2</sup> Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 81–82:

Նրանց երեխաները հաճախել են լավագույն մասնավոր դպրոցներ, ուսանել քոլեջներում և համալսարաններում:

Մինչդեռ նոր եկած կամ ցածր վարձատրվող գաղթական հայերը, ինչպես նաև թոշակով ապրողները հարկազրկված են եղել բնակվել արդյունաբերական քաղաքների հետ ընկած ու աղքատ թաղամասերում՝ կենցաղային ու սանիտարական վատթար պայմաններում: Նրանք բնակվել են խիտ խմբված և չօդափոխվող սենյակներում՝ առանց էլեկտրական հոսանքի, լուսավորութայն համար օգտագործել են գազի լամպեր, իսկ կերակուրը պատրաստել են փայտի վառարանների վրա կամ դրսում: Ամենավատթար սոցիալ-տնտեսական պայմաններում էին ապրում լոսանջելեսաբնակ արևելահայ գաղթականները, որոնք, կատարելով ստորակարգ աշխատանքներ և վաստակելով ցածր աշխատավարձ, ստիպված էին բնակվել հետամնաց թաղամասերի էփան կացարաններում՝ երկու տասնյակ և ավելի հայրենակիցների հետ մի սենյակում խմբված: ԱՄՆ-ի Գաղթականական հանձնախմբի 1915–1916 թթ. հաղորդումներում խստորեն քննադատվել են հայերի կենցաղային հակասանիտարական պայմանները, վատ կառուցված ու կեղտոտ տները: Հաճախ հիշյալ անբարենպաստ ապրելաձևը լուրջ թշնամանքի տեղիք է տվել հայերի և այլազգի գաղթականների միջև՝ պատճառ դառնալով իրավունքների անհավասարութայն վրա հիմնված բազմաթիվ ընդհարումների, երբեմն՝ նույնիսկ խոչընդոտել հայերի ազատ տեղաշարժը դեպի բնակութայն համար առավել հարմարավետ ու պտովաբեր թաղամասեր: Այսուհանդերձ, հակառակ ունեցած սուղ միջոցներին, արդեն Առաջին աշխարհամարտի տարիներին հայ ընտանիքներն իրենց վարձած սենյակների քանակութայամբ և դրա համար վճարվող ամսական վարձով առաջ էին ամերիկաբնակ այլազգի գաղթականներից<sup>1</sup>:

Փաստացի հայերի շրջանում չնչին թիվ են կազմել նաև բարեխնամ օգնութայն կարոտ չքավորները: Այսպես՝ Ուստրի Ընկերակցված գլխասիրութուններ կազմակերպութայն հաղորդումների համաձայն, 1896–1900 թթ. քաղաքում չքավոր հայերի թիվը կազմել է ութ մարդ: Ամերիկյան «Բոստոն Իվնինգ Թրանսքրիպթ» թերթի համաձայն, 1893 թ. արդյունաբերական Բոստոն քաղաքում կար միայն մեկ չքավոր հայ, քանի որ «Հայը կնախընտրի աշխատել ամենուր, որտեղ կարող է, քան թե մուրալ կամ պարապ մնալ»: 1917

<sup>1</sup> Mirak, R., ցշվ. աշխ., 1983, էջ 132, 133:

թ. ՀԲԸՄ հաղորդած տվյալների համաձայն, Բոստոնում, Ուստրում, Ջիկադոյում, Փրովիդենսում, Ֆիլադելֆիայում, Նյու Յորքում և ամերիկյան այլ խոշոր քաղաքներում վերջիններիս թիվը կազմել է միջին հաշվով շուրջ հիսուն մարդ, այն էլ նրանց հոգածութայն հարցն իրենց վրա էին վերցրել հայկական բարեսիրական տարբեր կազմակերպությունները, ինչպես նաև՝ մի շարք անհատ ամերիկահայեր<sup>1</sup>։

Ամերիկահայերի սոցիալ-տնտեսական պայմաններից բխում էր նաև համապատասխան առողջական վիճակը, որը նույնպես քիչ էր տարբերվում ամերիկաբնակ այլ ազգերի առողջականից։ Հիվանդություններն ու մանուկների մահացությունն տոկոսն առավելապես բարձր էր ցածր կենսամակարդակ ունեցող, այսինքն՝ կենցաղային ու աշխատանքային վատթար պայմաններում ապրող ու աշխատող հայերի շրջանում։ Ամերիկահայ այդ խավերի մեջ լայն տարածում էին ստացել թոքախտը և թոքային այլ հիվանդությունները, որոնք հիմնականում հարվածում էին ծանր գործավորական աշխատանքներում ներգրավվածներին։ Հետևաբար երկրի արևելյան արդյունաբերական գործարաններում իրենց առողջությունը քայքայած շատ ու շատ գործավորներ, թե՛ բժիշկների խորհրդով և թե՛ անձնական նախաձեռնություններով, հետզհետե հեռանում էին դեպի արևմուտք՝ դեպի մեղմ ու բարեխառն կլիմա ունեցող Կալիֆոռնիայի նահանգ։

Ամերիկահայերի շրջանում բարձր էր նորածինների և հատկապես մինչև մեկ տարեկան երեխաների մահացությունն տոկոսը։ Դա հետևանք էր մոր և մանկան նկատմամբ նախաձեռնության և հետծննդյան բավարար խնամքի բացակայություն<sup>2</sup>։

### Ամերիկահայ ընտանիքը. կենցաղն ու բարքերը

Ամերիկահայ ընտանիքը՝ որպես սոցիալական միավոր, հատկապես իր գոյություն սկզբնական շրջանում փոքր թիվ է կազմել։ Աստիճանաբար նոր երկրի ապրելակերպին ընտելանալը, ինչպես նաև հայրենի երկրում առկա քաղաքական ու տնտեսական պայմանները պատճառ են դարձել վերադարձող հայերի ու նաև ամուրիների թվի նվազման՝ մեծացնելով ընտանիքներն ԱՄՆ փոխադրողների, ապա նաև ամբողջ ընտանիքներով գաղթողների թիվը։

Այլ էր ամուրի երիտասարդություն դրույթունը. նրանց ազգա-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 137, 138: Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 131–132:

<sup>2</sup> «Ասպարեզ», 1.1.1909:

յին նկարագրին հիմնականում խորթ էր օտար ամուսնուծյան դադարի, հետևաբար, մեծ մասը, մասնավանդ գաղթի սկզբնական շրջանում, երբ փոքր էր նաև իգական սեռի ներկայացուցիչների թիվն ԱՄՆ-ում, իր կյանքի ընկերոջն ընտրել է հեռու հեռվից՝ մասնավորապես դպրոցական, հարևանական, բարեկամական շրջապատից, քանի որ հարսնացու փնտրելու նպատակով հայրենիք վերադառնալն այնքան էլ խոհեմ չէր: Օսմանյան կայսրությունում մինչև 1908 թ. նրանց կարող էին մեղադրել որպես գաղտնի գործող հեղափոխականների, իսկ 1908 թվականից հետո՝ նաև ուղարկել զինվորական ծառայություն, եթե տվյալ անձը դեռ չէր հասցրել ստանալ ամերիկյան քաղաքացիություն: Ահա թե ինչու, շատ հաճախ երիտասարդի՝ հայրենիքում մնացած ծնողները, ազգականներն ու բարեկամներն իրենք են ընտրել հավանական թեկնածուին և ուղարկել ԱՄՆ: Նման դեպքերում զույգերի նախնական ծանոթությունն իրականացվել է լուսանկարների փոխանակման միջոցով, ինչը երբեմն թյուրիմացությունների և դժվարությունների տեղիք է տվել: Չէին բացառվում նաև միջամտություններն ու դրամական գործարքները: Այդուհանդերձ, ամուսնալուծությունների թիվը հայերի շրջանում ցածր էր, ինչը վկայում էր նրանց բարոյական ապրելակերպի բարձր հատկանիշների մասին<sup>1</sup>:

Փամանակի ընթացքում հայերի շրջանում նկատելի են դարձել նաև օտարների հետ (խլանդացի, շվեդ, ֆրանսիացի, անգլիացի, հրեա, բնիկ ամերիկացի և այլն) ամուսնուծյան դեպքեր, որոնք պատահել են մասնագիտական բարձրագույն կրթություն ստացածների (դասախոսներ, բժիշկներ, իրավաբաններ, ինժեներներ, քարոզիչներ և այլն) կամ հաջողակ և ունևոր գործարարների (վաճառականներ, գործարանատերեր, հալվածատերեր և այլն) շրջանում: Օտարների հետ հայերի ամուսնուծյունները սկզբնական շրջանում էական քանակ չէին կազմում, թեև տարեցտարի աճում էին (այլ ազգերի ներկայացուցիչների համեմատությամբ հայերի շրջանում օտար ամուսնուծյունների թիվը շատ ցածր տոկոս էր կազմում՝ 100 ամուսնուծյունից ընդամենը 9,63%)<sup>2</sup>:

Մինչև 1920-ական թվականների կեսը ամերիկահայ տղամարդկանց թվաքանակը գերակշռել է կանանց համեմատությամբ, ընդ որում շատ էին ամուսնիները (տղամարդկանց 40%-ը 20 տարեկան

<sup>1</sup> Ավագյան Զ., նշվ. աշխ., 2000, էջ 80:

<sup>2</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 155-157:

էր)<sup>1</sup>: Զգալի թիվ են կազմել նաև որբեայրիները: Օսմանյան կայսրութիւնում Հայերի նկատմամբ իրականացված պարբերական ջարդերի և ցեղասպանութիւնների հետևանքով ԱՄՆ դաղթածները շրջանում մեծացել է կանանց ու երեխաների, հատկապէս այրիների ու որբերի թիվը:

1920 թ. 53.740 ամերիկացի հայերի շրջանում կատարված ուսումնասիրութիւնները պարզել են, որ նրանցից 37.647-ը օտարածին հայեր էին, 16.093-ը տեղածին, ընդ որում 14.947-ը երկկողմանի հայ ծնողներ ունեին, իսկ 1.146-ը միակողմանի, այն էլ գլխավորապէս հայր<sup>2</sup>:

Ավելի ստույգ, ամերիկյան մարդահամարի տվյալները վկայել են, որ նույն 1920 թ. այդտեղ կար ԱՄՆ-ում ծնված 36.625 հայ երեխա, որոնց գերակշիռ մասը՝ ավելի քան 28.000-ը, ծնվել էր Նյու Ինգլենդի, միջինատլանտյան, հյուսիսային, կենտրոնական և արևելյան նահանգներում: Ծնելիութիւնն առանձնապէս բարձր էր Մասսաչուսեթսի, Կալիֆոռնիայի, Նյու Յորքի, Փենսիլվանիայի, Միչիգանի, Նյու Ջերսիի, Ռոդ Այլենդի, Իլինոյսի, Կոնեկտիկուտի նահանգներում<sup>3</sup>:

Ամերիկահայ ընտանիքը բազմաճառ էր. միջին հաշվով բաղկացած էր 4-6 անդամից: Ազգային ավանդական սովորութիւնների համաձայն, ինչպէս նաև նյութական միջոցներից ելնելով, ամուսնացած որդին, հատկապէս սկզբնական շրջանում, բնակվում էր ծնողների հետ: Ինչպէս բոլոր հայ ընտանիքներում, ամերիկահայ ընտանիքում ևս տղամարդու դերը գլխավոր էր: Հիմնականում նրա վրա էր ծանրացած ընտանիքի նյութականի ապահովման խնդիրը:

Նոր երկրի տնտեսական ու հասարակական պայմանները խթանել են նահապետական հայ կնոջ կերպարի էական փոփոխութիւնը: ԱՄՆ-ում նրանք աշխատում էին թե՛ տանը և թե՛ դրսում: Տնային տնտեսուհիները մեծ մասամբ պահպանել են ազգային կենցաղը, նիստուկացը, անգամ կերակրատեսակները: Ամերիկյան կերակուրների բազմազանութիւնը մեջ նրանք շարունակել են տնային պայմաններում պատրաստել լավաշ, բլղուր, մածուց, փլավ, դոլմա, յալանչի դոլմա, սարմա, շիշ քերաբ, թաս քերաբ, քեղարթմա, քուլու բաշ,

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 152:

<sup>2</sup> Հայ քաղաքացիական փորձադատը Միացեալ Նահանգաց Երջանային Դատարանին մէջ (Պաշտօնական ատենագրութիւն), ա. տ., 1925, էջ 99:

<sup>3</sup> Մանկունի Ն. Լ., նշվ. աշխ., 1926, էջ 588:

փառաբան, խառնամա, քյուլֆթա (կամ՝ դըյմա), հարիսա (կամ՝ քեչքեկ), լահմաջոլուն, բաստրմա, սուճուխ, թուրչու, փախլավա, խադախֆ և այլն<sup>1</sup>:

Ի հակադրություն նախկին վիճակի, այնտեղ՝ օտարություն մեջ, մեծացել է հայ կնոջ տեղն ու դերը ոչ միայն ընտանիքում, այլև աշխատանքում ու համայնքի կյանքում, քանի որ նա հոգում էր ընտանիքի ոչ միայն տնտեսական, այլ նաև հոգևոր կարիքները: Նրա ուսերին էր դրված ձուլման և օտարացման համայնակուլ միջավայրում զավակների հայեցի դաստիարակության դժվարին պարտականությունը: «...Հայ կինը ինչպես ամեն տեղ ու ժամանակ, այս տեղ ալ մեծ սատարն ու առանդապահը եղած է Հայ լեզուին մանաւանդ Հայ կրօնի պահպանմանը»<sup>2</sup>:

Ամերիկահայ կրտսեր սերունդը, ավագ սերնդից ժառանգելով պարկեշտություն ու ակնածանքի, արժանապատվության ու հպարտության, աշխատասիրության ու ցանկացած ձեռնարկած գործի նկատմամբ պատասխանատվության բարձր գիտակցության զգացում և առաքինի այլ հատկանիշներ, ոչ միայն դրանք կիրառել է կյանքում՝ հանդիսանալով օրինավոր քաղաքացիներ նոր որդեգրած երկրի համար, այլ նաև ավանդել հաջորդ սերունդներին՝ օտարության մեջ մշտապես անարատ պահելով ազգային նկարագիրը:

Այնուամենայնիվ, անհնար էր հեռու մնալ ամերիկյան գորեղ ազդեցությունից, ինչը տարեցտարի ավելի ու ավելի է նկատելի դարձել ամերիկահայերի մտածողության, ինչպես նաև կյանքի բոլոր ասպարեզներում՝ կենցաղում, նիստուկացում, վարք ու բարքում, ապրելակերպում, անձնական ու ընտանեկան հարաբերություններում և այլն<sup>3</sup>:

Աշխատասեր ու գործունյա ամերիկահայը ծանր, համառ, բայց նվիրված աշխատանքից հետո կարողացել է նաև լավագույնս կազմակերպել իր և իր ընտանիքի հանգիստը՝ ինչպես ըստ նախասիրությունների, նույնպես և հաճախելով ազգային տարբեր կուսակցությունների, կազմակերպությունների, ակումբների, հարսնամանական եկեղեցիների կողմից կազմակերպված հավաքներին, հանդի-

<sup>1</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 159:

<sup>2</sup> Մաշնդ եպիսկոպոս, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 217:

<sup>3</sup> Chandras, K. V. Arab, Armenian, Syrian, Lebanese, East Indian, Pakistani and Bangla Deshi Americans: A Study Guide and Source Book. San Francisco, 1977, p. 37. Ավագյան Բ., նշվ. աշխ., 2000, էջ 86–88:

սություններին, փիկնիկներին և այլն, որոնք ոչ միայն օտարութեան մեջ ազգապահպան դեր են կատարել, այլև հայրենանպաստ ձեռնարկներ (Հանդանակութիւններ և այլն) իրականացրել հօգուտ հեռավոր Մայր Հայրենիքի ու կարոտյալ ժողովրդի:

### Հասարակական-քաղաքական հարաբերութիւնները

Ամերիկյան հողում հայերի ստվարացմանը զուգընթաց, օտարութեան մեջ ազգային նկարագիրը, լեզուն, մշակույթը, սովորույթները մշտարթուն պահելու, մտալոր, բարոյական ու ֆիզիկական առումով առողջ ու բարեսեր քաղաքացիների սերունդ դաստիարակելու, ինչպես նաև հայրենի երկրի հետ կապն ամրապնդելու և հարատև դարձնելու նպատակով ամերիկահայերի գործուն ջանքերի շնորհիվ XIX դ. 80-ական թվականների երկրորդ կեսից սկսուած ԱՄՆ-ի արևելյան, ապա նաև արևմտյան ափին, աստիճանաբար ստեղծվել են բազմաթիվ ու բազմաբնույթ միութիւններ, կազմակերպութիւններ, ընկերութիւններ ու ակումբներ, իրենց մասնաճյուղերն են հիմնել Հայ քաղաքական կուսակցութիւնները: Ժամանակի անհրաժեշտ թելադրանքով ստեղծված այդ կազմակերպութիւններից շատերն ունեցել են երկարատև, մյուսները՝ կարճատև կյանք, շատերը՝ բուն ու հազնցած, մյուսները՝ մակընթացութիւններով ու տեղատվութիւններով լի, բայց և այնպես իրենց մատուցած ազգանպաստ ու հայրենանպաստ գործունեութեամբ դրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին և բոլորը միասին էական դեր են կատարել իրենց առջև դրված տարբեր նպատակների ու ծրագրերի իրականացման ուղղութեամբ:

Ամերիկայի հայկական կազմակերպութիւնները, միութիւնները, ընկերութիւններն ու ակումբները հիմնականում կրթասիրական, մարդասիրական ու հայրենասիրական բնույթի էին և կոչված էին ծառայելու ինչպես ի նպաստ իրենց մերձավոր ու հեռավոր հայրենակիցների, նույնպես և իրենց հյուրընկալած երկրի:

1886 թ. Նյու Յորքում հիմնվել է ԱՄՆ-ում հայկական առաջին կազմակերպութիւնը՝ Հայկական միութիւնը, որի խնդիրն էր «ամերիկաբնակ Հայոց մէջ միութեան կապ հաստատել, ազգային զգացումներ մշակել, և ազգօգուտ ձեռնարկներ ընել»<sup>1</sup>: Նշանակալից էր միութեան հայանպաստ ու ազգանպաստ գործունեութիւնը ինչ-

<sup>1</sup> Մուշեղ Եպիսկոպոս, 624. աշխ., Ա սարի, 1912, էջ 169-170, 174:

պես Նյու Յորքի, նույնպես և մերձակա Նյու Ջերսիի նահանգի Հայոսթյան կյանքում: Ամերիկահայոց այդ առաջին կազմակերպության շնորհիվ պանդուխտ Հայերը պատեհհուլթյուն են ունեցել միմյանց հետ ծանոթանալու, մայրենի լեզվով խոսելու և Հայրենի երկրի հոգսերով ապրելու: Մինչև անգամ բազմաթիվ թրքախոս Հայեր, միության ժողովներին հաճախելով, սկսել են Հայերեն խոսել, Հայոց պատմությանը վեր տերող գրքեր կարգալ, իսկ ոմանք էլ դարձել են ազգային եռանդուն գործիչներ: Հայկական միությունն ամերիկահայ առաջին կազմակերպությունն էր, որը վավերացվել էր ԱՄՆ-ի կառավարության կողմից: Շուտով միությունը հիմնել է ընթերցատուն, որտեղ ստացվում էին ԱՄՆ-ի և այլ երկրների հայկական թերթերի մեծ մասը ու մի շարք անգլիալեզու հանդեսներ: Այդտեղ էին անցկացվում լսարանական ժողովներ, գործում էր վարժարան, որտեղ շաբաթական 5 օր շուրջ 55 Հայ երկսեռ աշակերտներ սովորում էին ընթերցանություն, ուղղագրություն, արտասանություն, գրավարժություն, քերականություն, Հայոց պատմություն: Շատ շուտով հիմնվել է նաև գիշերային դպրոց, որտեղ շաբաթական երկու օր երիտասարդներին անգլիերեն էին ուսուցանում: «...Հայկական Միութիւնն եղաւ ո՛չ միայն վառարան՝ ազգային դպացմանց, այլ եւ միջոց զոհողութեան ոգին արթնացնելու պանդուխտ Հայերու մէջ»<sup>2</sup>: Միությունը ստեղծել էր «Կարոտելոց սնդուկ» դժբախտության մեջ Հայտնված, հիվանդ, անօգնական, անգործ ու կարիքավոր ամերիկահայերին օգնելու նպատակով: Այն իր հովանավորության տակ էր վերցրել նաև Հայրենիքում գտնվող երկու դպրոց, զգալի գումար հանգանակել ի նպաստ XIX դարի վերջին հրկիզված Զեյթունի, ինչպես նաև Կ. Պոլսի Սբ. Փրկիչ ազգային հիվանդանոցի և ազգային այլ հաստատությունների: Առաջին աշխարհամարտի նախօրեին միությունն արդեն ուներ ընդարձակ ու մաքուր շենք՝ ցրեկային ու գիշերային դպրոցներով, ընթերցարանով, լսարաններով, ննջարաններով, հյուրասրահներով և այլ հարմարություններով, որոնք կոչված էին հայ երիտասարդությանը հևու պահել «բաղձախաղի վայրերէ ու բարոյասպան տուներէ»<sup>3</sup>: Շուտով միությանը միացել է նաև 1887 թ. սկզբին Ջերսի Սիթիում հիմնված Համանուն

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 174-175:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 170:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 170-171, 175, 176:

կազմակերպությունը<sup>1</sup>:

1888 թ. Ուստրոլոմ Հիմնվել էր «Կաճառ Հայկական» անվանու-  
մը կրող կազմակերպությունը (ատենապետ՝ Մ. Թոփհանեյլյան)՝ ի  
հետևանս այդտեղ այցելած «Արմենիա» թերթի խմբագիր Մկրտիչ  
Փորթուզալյանի Հայաշունչ ելույթների, որոնցով նա օտարության  
մեջ խարխափող ամերիկահայությունը կոչ էր անում շուտափույթ  
լծվել ազգապահպանման համար անհրաժեշտ կառույցների՝ եկեղե-  
ցու, պարբերական մամուլի, դպրոցի և կազմակերպության հիմ-  
նադրման գործին, քանի որ առանց դրանց անհնար էր հասնել ազ-  
գային համախմբման ու ինքնակազմակերպման: Կազմակերպու-  
թյունը խնդիր էր դրել հիմնել առանձին աղոթատեղի, իսկ մինչ այդ  
ստանձնել էր ազգային եկեղեցուն փոխարինելու պարտականություն-  
ներ, ինչպես նաև հողացել համայնքի հողատեր, զբաղվել փողոցնե-  
րում օտար, գլխավորապես իուլանդացի ամբոխի կողմից հայերի  
նկատմամբ իրականացվող հարձակումների կառավարական միջա-  
մտություններ վերջ դնելու խնդրով և այլն<sup>2</sup>:

1888 և 1905 թվականներին ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում՝  
Ուստրոլոմ, Հոբոքենսում, Նյու Յորքում, Նյու Ջերսիում, Բոստոնում,  
Փրովիդենսում և այլուր Մ. Փորթուզալյանի ազգասիրական ոգե-  
շունչ ու կրակոտ ելույթները չէին կարող անտարբեր թողնել Հայրե-  
նակարոտ ամերիկահայերին, որոնք, հետզհետե գաղափարապես հա-  
մախմբվելով, ձեռնամուխ են եղել տեղերում ազգային տարաբնույթ  
կազմակերպությունների ստեղծմանը: Այդպիսիք էին՝ ամերիկահայ  
առաջին հեղափոխական կազմակերպությունը՝ Հայոց Հայրենասի-  
րական միությունը (1889 թ., Ջերսի Սիթի - 1893 թ., Նյու Յորք),  
ԱՄՆ-ի Հայ գաղթականության շրջանում ազգային ոգին ու զգա-  
ցումները, Հայրենի հրկրի նկատմամբ սերն ու մայրենի լեզուն ան-  
մոռաց պահելու կոչված Ամերիկայի Հայ գաղթականության (1889  
թ., Պետերսոն) և Հայ երիտասարդաց թանգարանի (1890 թ., Նյու  
Յորք) միությունները, Հայրենի հրկրի որբերին հոգևոր ու բարոյա-  
կան աջակցություն ցույց տալու նպատակով Նյու Ջերսիի նահանգի  
Պետերսոնի Որբախնամ (1889 թ.) և Ուեսթ Հոբոքենի Հայ տիկնանց  
որբախնամ (1892 թ.) ընկերությունները, հոգեպես ու ֆիզիկապես  
առողջ և ուժեղ սերունդ դաստիարակելու նպատակով հիմնված Հայ

<sup>1</sup> Մկրտիչ Ս., Ամիտայի արձագանքներ, Ուիտորյոն, 1950, էջ 340, 364:

<sup>2</sup> Մուշեղ եպիսկոպոս, նշվ. աշխ., Բ տարի, 1913, էջ 51, 52: Արամեան Մ. Գ., նշվ  
աշխ., 1955, էջ 210:

մարզական կաճառը (1889 թ., Ուեսթ Հորոքեն), Արարատյան գունդ կոչված զինվորական կազմակերպությունը (1890 թ., Նյու Յորք), ինչպես նաև տարբեր զինավարժական խմբեր<sup>1</sup>:

Հայերն ազգային միություններ են կազմակերպել ոչ միայն երկրի արևելյան, այլ նաև արևմտյան հատվածներում, որտեղ ընկերային կյանք ստեղծվու առաջին միջոցը 1880-ական թվականների վերջին ստեղծված Ֆրեզնոյի Հայ գաղթականաց միությունն էր: Ամերիկաբնակ հայերի քաղաքացիական ու քաղաքական իրավունքների պաշտպանություն, նոր երկրի իրավական համակարգին նրանց ծանոթացման ու ընտելացման, ինչպես նաև հայերի դեպի ԱՄՆ գաղթն անարգել կազմակերպելու և քաղաքացիության ձեռքբերմանն աջակցելու նպատակով 1889 թ. Ֆրեզնոյի հայերի ջանքերով հիմնվել է Հայ օտարների ակումբը (1889 թ., Ֆրեզնո, 1892 թ. այն վերանվանվել է Ֆրեզնոյի հայոց գրադարանային միության), ինչպես նաև Հայ քաղաքացիների ակումբը (1906 թ., Ֆրեզնո)<sup>2</sup>:

Առևտրական ու գործարար բնույթ ունեւ Հայոց խնայողական միությունը (1898 թ., Ուստր), իսկ Հայոց առաջադիմական ընկերությունը (1899 թ., Ֆիլադելֆիա), ի շարս բազմաթիվ այլ հայաշուկ գրադարան-ընթերցարանների, լսարանային միությունների, կոչված էր ազգային ոգուն և հոգևոր արժեքներին հավատարիմ դարգացած սերունդ կրթելու<sup>3</sup>:

Ժամանակի ընթացքում դեպի ԱՄՆ Հայ գաղթականության աճին ու ամբողջ երկրով մեկ նրանց տարածմանը զուգընթաց, հայաշատ գրեթե բոլոր վայրերում ստեղծվել են կրթական, մշակութային, բարեսիրական, հոգևոր, սոցիալական, քաղաքական ու այլ բնույթի մեծ ու փոքր ազգային միություններ ու կազմակերպություններ, որոնք կարևոր դեր են կատարել ամերիկահայության ազգահավաքման ու ազգապահպանման, ինչպես նաև հեռավոր հայրենիքի կրթական, եկեղեցական, որբախնամ և այլ օջախներին նյութապես ու բարոյապես սատարելու գործում: Այդպիսիներից էին համամարդկային արժեքների ջատագով Հայ ավետարանական միությունը

<sup>1</sup> Սլուոն Տ., Հայ կոերն Ամերիկայի մէջ, ԱՄՆ, 1945, էջ 66, 67, 116: Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 175: Սլուոն Տ., նշվ. աշխ., 1950, էջ 371:

<sup>2</sup> Մուշեղ Խախկուպու, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 215: Mahakian, Ch. History of Armenians in California. A Thesis. California, 1935, p. 73. Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 280:

<sup>3</sup> Մուշեղ Խախկուպու, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 180, 181:

(1902 թ.), հյուրընկալ ԱՄՆ-ի և հայկական համայնքի միջև քաղաքական ու մշակութային կապերի հաստատմանը կոչված Հայ-ամերիկյան քաղաքացիական ընկերությունը (1904 թ., Ուեսթ Հորքենոմ), ինչպես նաև բարեսիրական ու հայապահպանման ասպարեզում իրենց զնահատելի ավանդը ներդրած Նյու Բրիթնի Տիկնանց ընդհանուր որբախնամ ընկերությունը (1905 թ.), Հայ տիկնանց որբախնամը, Բոստոնի Եկեղեցասիրաց տիկնանց միությունը (1906 թ.)<sup>1</sup>:

Դարասկզբին մի խումբ ուսյալ, ինչպես նաև ունևոր ամերիկահայերի ջանքերի շնորհիվ հնարավոր է դարձել ԱՄՆ-ի տարբեր շրջաններում կազմակերպել ամերիկյան բարձրագույն կրթարաններում հայության ուսումնառությունը նյութապես ու բարոյապես աջակցող ընկերություններ ու միություններ, որոնք միաժամանակ օգնում էին նաև հայրենի երկրի կրթարաններին ու այնտեղ ուսանողներին: Այդպիսին էին դորգի հարուստ վաճառական Կարապետ Փուշմանի նախաձեռնությունը հիմնված Ամերիկահայ կրթասիրաց ընկերությունը (1906 թ., Ձիկագո), որը մեկ տասնամյա շարունակ 3.500-4.500 դոլարի նպաստ է տրամադրել 150 և 18.600 դոլարի պարզև 70 հայ ուսանողների, Ամերիկահայ ուսանողների միությունը (1910 թ., Նյու Յորք), որը կոչված էր առանց կրոնական, կուսակցական և այլ նկատառումների համախմբելու ԱՄՆ-ի ողջ հայ մտավորականությունը, դասախոսներին, ընթացավարտներին, ուսանողներին, խթանելու ամերիկահայ երիտասարդների կրթությունը, նրանց մտավոր կարողությունները զարգացնելու տեղի լավագույն բարձրագույն կրթարաններում, մշակելու ուսումնական դասընթացների ծրագրեր, հրատարակելու հայերեն նորագույն դասագրքեր և ամսագրեր<sup>2</sup>:

Մի խումբ բարեկեցիկ ամերիկահայերի ջանքերով 1909 թ. Նյու Յորքում ստեղծվել են նաև քաղաքացիական կազմակերպություններ՝ Հայկական գաղութային ընկերակցությունը և Հայ առաջադիմական ընդհանուր ընկերակցությունը, որոնք օգնել են նորեկ հայերին տեղավորվել, ուսում, աշխատանք գտնել, անվերեն սովորել,

<sup>1</sup> Թեոդիկ, Ամենուն տարեցոյցը, ԺԵ տարի, Կ. Պոլիս, 1921, էջ 218: Սկումբ Տ., նշվ. աշխ., 1950, էջ 516: Մուշեղ Կախկոպոս, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 182:

<sup>2</sup> Ամերիկահայ հասնրագիտակ տարեգիրք, կազմ. Յ. Խաչմանեան, Պոսքըն, 1925, էջ 470: Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 115-116: Yeretzian, A. S., նշվ. աշխ., էջ 23: Հայաստանի Հանրապետության Ազգային արխիվ (այսուհետև՝ ՀՀ ԱԱ), ֆ. 57, ց. 2, գ. 1889, ք. 1:

նոր երկրի բարքերին, օրենքներին ու սովորույթներին ընտելանալ<sup>1</sup>:

Արդեն դարասկզբին ԱՄՆ-ի հայաշատ խոշոր քաղաքներում (Բոստոն, Ուստր, Նյու Յորք, Փրովիդենս, Ֆրեզնո և այլն) գործել են մի շարք մշակութային միություններ՝ գրական ու գրադարանային ակումբներ ու միություններ, որոնք գաղութահայության շնորհիվ ժամանակի ընթացքում հարստացել են հայ և օտար գրականությամբ, դերասանական և երաժշտական խմբեր ու ակումբներ, որոնք հայկական ներկայացումներով և հայրենաշունչ երգերով խանդավառել են հայ պանդուխտներին: Արվեստի բնագավառում հիմնված վաղ շրջանի միություններից էր Նյու Բրիթընի Հին ավանդ դերասանական խումբը (1910 թ.), ինչպես նաև՝ ավելի ուշ Լոս Անջելեսում գործող տաղանդավոր արվեստագետներին խրախուսող Հայկական դաշնակցային արվեստների ընկերակցությունը<sup>2</sup>:

Ամերիկայի հայկական բազմաթիվ ու բազմաբնույթ ընկերությունների, միությունների ու կազմակերպությունների շարքում կարևոր դեր են կատարել ԱՄՆ-ում հաստատված հայկական ու հայաբնակ տարբեր տեղավայրերի հայրենակիցների կողմից հիմնված համախմբումները՝ հայրենակցական միությունները: Ամերիկյան հողի վրա դրանք սկսել են ի հայտ գալ տեղում հայության թվի սովորացմանը զուգընթաց, այսինքն՝ XIX դ. 80-ական թվականների վերջից, երբ մեծացել էր նաև Նոր երկրում ծնված հայրենակիցների թիվը: Այնպես որ ժամանակի ընթացքում ստեղծված հայրենակցական համախմբումներն աստիճանաբար ներառել են հայրենի գրեթե բոլոր քաղաքները, գյուղերն ու ավանները (Հուսեյնիկ, Բեսրիկ, Մորենիկ, Հոդե, Դատեմ, Փերչենճ, Բաղմաշեն, Հոկհի, Խոյլու-Թլկատին, Բալու-Պաղին, Վարդաթիլ, Եղեգի, Շենթիլ, Բաշաղակ, Բորբե, Չարսանճակ-Բերի, Իջմե, Աղնցիդ, Բղի, Չմչկածագ, Մովք, Ակն, Օձ, Հապուսի, Խարբերդ, Սեբաստիա, Արաբկիր, Հազարի, Մալաթիա, Կեսաբիա, Ադանա, Տիրքանակերտ, Եղեգի, Բալու-Սաքրաթ, Մարաշ, Էվերեկ, Չոմախլու, Ներխի, Կարին, Ֆենեսե, Թոմարզա, Չոր, Մուռնի, Տարոն-Տուրուբերան, Շապին-Գարահիսար, Հեֆքարե, Թոքատ, Ջերմուկ, Ուրֆա, Հաճըն, Այնթապ, Յոզղատ, Իզմիր և այլն): Միաժամանակ ամերիկաբնակ հայրենակիցների զգալի մասն անդամակցում

<sup>1</sup> Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 114-115: Մուշեղ Խախիկոսյան, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 183:

<sup>2</sup> Մուշեղ Խախիկոսյան, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 184: Boghosian, H. B. Highlights of Armenian History and Its Civilization. USA, 1957, p. 187.

կամ հարուստ էր հիշյալ միուլթյուններին, որոնք, ի դեպ, դերժ էին կուսակցական երանգավորումներին:

Հիշյալ հայրենակցական միուլթյունները լավ կազմակերպված և օրեցօր բազմամարդ դարձող ազգային միուլթյուններ էին, որոնք ղեկավարվում էին կենտրոնական գործադիր վարչուլթյունների կողմից և առաջնորդվում իրենց առջև դրված նպատակների ու խնդիրների հստակ ծրագիր-կանոնադրերով: Հայրենակցական միուլթյունները, ժամանակի ընթացքում ընդարձակվելով, իրենց մասնաճյուղերն են հիմնել լայնածավալ երկրի հայաշատ գրեթե բոլոր քաղաքներում: Մասնաճյուղերը ենթարկվել են կենտրոնին: Հայրենակցական միուլթյունների հասուլթը գոյացել է անդամավճարներից, բազմաթիվ ու բազմաբնուլթ հանգանակուլթյուններից ու նվիրատուլթյուններից, ինչպես նաև սեփական անշարժ գուլթի (հողատարածք, տարբեր շինուլթյուններ և այլն) վարձակալումից: Միուլթյունների տարեկան եկամուտը կազմել է հարյուրավոր դոլարներ, որոնք լիովին հատկացվել են հայրենանվեր ու ազգանվեր նպատակների իրականացմանը: Որոշ միուլթյուններ ունեցել են նաև իրենց հրատարակուլթյուններ<sup>1</sup>:

Սկզբնապես ամերիկահայ հայրենակցական միուլթյունները ստեղծվել են՝ հայրենի բնակավայրերում ուսումնական ու կրթական գործն առաջ մղելու, հայ երեխաներին նախնական ու բարձրագույն նորանոր գիտելիքներ հաղորդելու, տեղի հայկական դպրոցների տեխնիկական, ուսումնական, դասավանդման ու ուսուցչական մակարդակները բարձրացնելու նպատակով: Հետևաբար, այդ հայրենակցականները ստացել են կրթասիրաց, Ուսումնասիրաց, Դպրոցասիրաց անունները: «Ինչպես որ Հայաստանի եւ Կիլիկիոյ մէջ չէ մնացած քաղաք կամ գիւղ մը, որ իւր ներկայացուցիչները չունենայ Ամերիկայ, նոյնպէս Ամերիկայի մէջ չկան որեւէ քաղաքի կամ գիւղի 20 կամ աւելի հայրենակիցներ, որ չունենան իրենց ծննդավայրին մէջ դաստիարակուլթեան գործին նպաստելու համար մասնաւոր կազմակերպուլթիւն»<sup>2</sup>:

Ամերիկայի հայկական առաջին հայրենակցական կազմակերպուլթյունը Հոսեյնիկի (Խարբերդ) Ուսումնասիրաց ընկերուլթյունն էր (1888 թ., Ուստը): Դրան հաջորդել են հայաբնակ այլ վայրերի

<sup>1</sup> Ավագյան Զ., նշվ. աշխ., 2000, էջ 94-95:

<sup>2</sup> Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., Ա սարի, 1912, էջ 171:

Հայրենակիցների ջանքերով հիմնադրված կրթանպաստ բազմաթիվ (ավելի քան 70) ընկերութուններ: Դրանց շարքում գերակշռել են Խարբերդի նահանգի տարբեր շրջանները ներկայացնողները, ինչը պայմանավորված էր հայերի, հատկապես հիշյալ տարածքից դեպի ԱՄՆ առկա զգալի չափերի հասնող գաղթով: ԱՄՆ-ում Խարբերդի նահանգը ներկայացնող Ուսումնասիրաց ընկերութունների թիվն առանձնապես ստվարացել է 1890-ական թվականների Չարդերից հետո՝ հասնելով շուրջ չորս տասնյակի, որոնք ընդգրկել են նահանգի գրեթե բոլոր գյուղերն ու ավանները<sup>1</sup>:

Քանի որ Հայրենի դպրոցները մեծ մասամբ գտնվել են տեղի եկեղեցիների հովանավորութայն ներքո կամ դրանց կից, բնականաբար Հայրենակցականները ևս, մանավանդ իրենց գոյութայն սկզբնական փուլում, կրել են հարանվանական ընդգծված տարանջատման կնիքը, որն արտահայտվել է միևնույն Հայրենակցականի համար երկու թևերի՝ լուսավորչականի ու ավետարանականի առկայությամբ: Ժամանակի ընթացքում Ամերիկայի հայկական Հայրենակցական՝ Կրթասիրաց, Ուսումնասիրաց կամ Դպրոցասիրաց ընկերութունների ամրապնդման ու դրանց գործունեութայն ծավալման, Հայրենի բնակավայրերում նորանոր դպրոցներ հիմնելու և ազգանվեր այլ ծրագրերի իրականացման անհրաժեշտութունից ելնելով՝ աստիճանաբար վերացվել է Հայրենակցականների ներսում առկա հարանվանական տարանջատվածութունը՝ նպաստելով դրանց հետագա ամրապնդմանն ու հզորացմանը: Վերոհիշյալ Հայրենակցականների խնդիրն էր՝ բարձրացնել Հայրենի բնակավայրերի կրթական մակարդակը, հոգալ տեղի դպրոցների, ինչպես նաև ուսուցիչների ու աշակերտների կարիքները, կրթաթոշակ հատկացնել օգնութայն կարոտ երեխաներին, բանալ երկսեռ՝ արական և իգական դպրոցներ, երբեմն նաև՝ դպրոցները վերածել քոլեջների, հիմնել գրադարաններ և դրանք ապահովել անհրաժեշտ գրականությամբ, կազմակերպել թատերական ներկայացումներ և այլն: Կրթական հարցերից բացի, Հայրենակցական ընկերութունները զբաղվել են նաև Հայրենի քաղաքների, գյուղերի ու ավանների հոգևոր հարցերով, հոգացել տեղի եկեղեցիների կարիքները, իրագործել տնտեսական խնդիրներ, սեփականացրել ու վարձակալել անշարժ գույք՝ հողատարածք կամ տարբեր շինութուններ, որոնցից ստացված եկա-

<sup>1</sup> Աիզմէճեան Մ. Գ., նշվ. աշխ., 1955, էջ 254–255:

մտով իրականացվել են Հայրենանյութի ծրագրեր<sup>1</sup>:

XIX դ. 90-ական թվականների ջարդերը ժամանակավորապես խոչընդոտել, իսկ 1914 թ. սկսված Առաջին աշխարհամարտի ընդհանրապես արգելակել են Հայրենակցական՝ Կրթասիրաց, Ուսումնասիրաց, Դպրոցասիրաց ընկերությունների ծրագրերի հետագա իրականացումը Հայրենիքում՝ ստիպելով դրանց կամ դադարեցնել, կամ վերակազմել իրենց գործունեությունը՝ այն ծառայեցնելով զինական պահանջներին: Երբեմն Հայրենակցական ընկերությունները նույնիսկ վեր են ածվել երիտասարդների հեղափոխական, ինքնապաշտպանական ջոկատները համախմբող կենտրոնների, որոնց խնդիրն էր օգնել երիտթուրքական վայրագություններին զոհ դնացող իրենց Հայրենակիցներին: Արդեն 1914 թվականից նախկին Կրթասիրացները, Ուսումնասիրացներն ու Դպրոցասիրացները, ժամանակի ու պատմական նոր խնդիրներին համապատասխան վերակառուցելով իրենց գործունեությունը, վեր են ածվել Այրիախնամ, Որբախնամ, Որբասիրաց, Աղքատախնամ ու Նպաստամատուց ընկերությունների ու միությունների: Ընդ որում, սկզբնական շրջանում մինչև Առաջին աշխարհամարտը, դրանց մի մասը գործել է նախորդ Կրթասիրաց կամ Ուսումնասիրաց ընկերությունների հետ զուգակցված կամ դրանց անվան տակ: Իրենց Հայրենակիցներին սատարելու կոչված այդ նոր կազմակերպությունների կողքին, դրանց հետ համագործակցելով, պործել են նաև մի շարք Հայրենակցականների Տիկնանց որբախնամ և Հիվանդանոցային օժանդակ ընկերություններ, որոնք բոլորն էլ զգալի նյութական միջոցներ են հատկացրել տարագրված և հատկապես Դեր էլ Ջոր ու Արարական անապատի այլ տարածքներ քշված Հայրենակիցներին հայտնաբերելու ու նրանց բազմակողմանի օգնություն ցույց տալու նպատակով: Հիշյալ Հայրենակցական ընկերությունները զգալի ներդրում են ունեցել նաև 1916 թ. կովկասյան, ապա կիլիկյան կամավորական շարժումներին նյութապես ու բարոյապես, զինավորական ու ռազմական առումներով խթանելու ուղղությամբ, Սբ. Էջմիածնի և Կիլիկիայի կաթողիկոսարանների միջոցով դրամական օժանդակություն առաքել կարոտյալ Հայրենակիցներին, բոլոր միջոցներով աջակցել Մերձավոր Արևելքի նպաստամատուցի, ՀԲԸՄ և այլ կազմակերպությունների ազգօգուտ ջանքերին:

<sup>1</sup> Գիզմեճևան Մ. Գ., նշվ. աշխ., 1930, էջ 1:

Առաջին աշխարհամարտի ավարտին, երբ արդեն առկա էին երիտթուրքական կառավարութեան պարտութեան նշանները, ու դրանից հետո, երբ այդ պարտութեան արդեն իրականացված փաստ էր, հայութեան շրջանում ակտիվացել էր հայրենի քանդված օջախներ վերադառնալու և դրանք վերաշինելու նվիրական ցանկութեանը, որը, իհարկե, խարսխված էր եվրոպական տերութեաններին՝ Անգլիայի, Ֆրանսիայի ու նաև ԱՄՆ-ի կողմից կատարված պաշտոնական հավաստիացումների վրա՝ արձանագրված 1916 թ. մայիսի 16-ին Լոնդոնում կնքված Սայքս-Պիկոյի համաձայնագրով, 1920 թ. ապրիլի 19-26-ին՝ Սան Ռեմոյի և հատկապես նույն թվականի օգոստոսի 10-ին՝ Ալերի պայմանագրերով:

Հետպատերազմյան շրջանում հայրենի ավերված բնակավայրերը վերականգնելու և նախկին խաղաղ ու ստեղծագործ կյանքը վերադարձնելու դժվար՝ գործն ԱՄՆ-ում ստանձնել էին այդ նպատակով կազմակերպված Վերաշինաց, ինչպես նաև Հայրենակցական անունները կրող միութեանները: Դրանց խնդիրն էր օգնել տարագիր հայրենակիցներին վերադառնալ հարազատ բնակավայրեր, այնտեղ կառուցել հիվանդանոցներ, որբանոցներ, արհեստանոցներ, վերաշինել դպրոցներն ու եկեղեցիները, նյութական ու բարոյական օգնություն ցույց տալ որբացածներին ու այրիացածներին, թշվառներին, կարիքավորներին ու անաշխատներին և այլն: Հիշյալ միութեանները բազմիցս կազմակերպել են հանգանակիչ հավաքներ, ժողովներ, հանդիսություններ ու բազմաթիվ այլ միջոցառումներ, որոնց ընթացքում հավաքված հասույթը տրամադրվել է ի նպաստ Բեյրութում, Հալեպում, Բաղդադում, Շամում (այժմ՝ Դամասկոս), Աթենքում, Սալոնիկում, Մարսելում, Վլադիվոստոկում և այլուր գտնվող տարագիր հայրենակիցների՝ միաժամանակ այդ վայրերում ևս հիմնելով բժշկական, կրթական ու աշխատանքային կենտրոններ, որբանոցներ և այլն: Վերաշինաց ու Հայրենակցական միութեանները, հայրենակցական մակարդակի խնդիրներից բացի, ամենագործուն մասնակցությունն են ունեցել նաև համազգային կարևոր ձեռնարկների, այդ թվում նաև՝ հանգանակությունների իրականացմանը, ամեն կերպ աջակցել ՀԲԸՄ, Մերձավոր Արևելքի նպաստամատույցի և հայաստան այլ ընկերությունների ու կազմակերպությունների աշխատանքներին և այլն: Անժխտելի է Ամերիկայի հայկական հայրենակցական միութեանների ծավալած գործունեու-

թյան նշանակությունը նաև ԱՄՆ-ի հայ գաղթականների համար<sup>1</sup>:

Այսպիսով, հայրենակցական միությունների բոլորանվեր ջանքերի շնորհիվ հնարավոր էր դարձել հասնել սկզբում ամերիկահայ ցիրուցյան պանդուխտների ազգային համախմբմանն ու կազմակերպմանը, ապա նաև՝ Առաջին աշխարհամարտի ու դրան հաջորդող բախտորոշ ժամանակաշրջանում հրաշքով վերապրած հայու-թյան՝ ԱՄՆ գաղթած բեկորների վերականգնմանն ու ինքնահաստատմանը:

Ամերիկահայության ազգային, հասարակական-քաղաքական համախմբման գործում իրենց ուրույն դերն ունեն ԱՄՆ-ում հաստատված հայ քաղաքական կուսակցությունները: Պանդուխտ հայերի՝ Նոր երկրում հիմնավորվելուց կարճ ժամանակ անց նրանցում «...վառ մնացած հայրենիքի սէրը կուգար պատրաստելու հայ կուսակցութեան գոյութեան ու յարատեւութեան իրական գետինը»<sup>2</sup> նպաստելով սկզբում հնչակյան, ապա դաշնակցական կուսակցությունների մուտքն այդտեղ: Դրանք ԱՄՆ առաքված իրենց եռանդուն գործիչների ջանքերով, հայության տարածմանը զուգընթաց, իրենց մասնաճյուղերն են հիմնել երկրի գրեթե բոլոր հայաշատ կենտրոններում: Ազգային խնդիրների իրագործման ճանապարհին կուսակցություններից յուրաքանչյուրը, հետամտելով դրան հասնելու իր ուրույն սկզբունքները, ԱՄՆ-ը ի վերջո վեր է ածել հայ քաղաքական կուսակցությունների բուռն գործունեությունների կենտրոնատեղի:

Նոր երկրում ազգային կուսակցությունների ամերիկահայ մասնաճյուղի կորիզը կազմել են Արմենական կուսակցության գործիչ Մկրտիչ Փորթուգալյանի կողմից գեռևս 1880-ական թվականների վերջին և 90-ական թվականների սկզբին հիմնված Կաճառ Հայկականը (Ուստր), Հայոց հայրենասիրական միությունը (Ջերսի Աթթի), ինչպես նաև՝ Ծաղիկ Հայաստանին (1890 թ., Բոստոն), Արթիվ Հայաստանին (1893 թ., Մոլտըն) և Հայկական հարցը Ամերիկայի հայությանը ներկայացնելու կոչված նմանատիպ այլ խճախներ, որոնք բոլորն էլ, ժամանակի ընթացքում համախմբվելով, նախապատրաստել են 1890 թ. Մասսաչուսեթսի նահանգի Ուստր քաղաքում ամերիկահայ քաղաքական պատմության մեջ առաջին՝ Հնչակ-

<sup>1</sup> Ավագյան Զ., նշվ. աշխ., 2000, էջ 97-99:

<sup>2</sup> Մարտիրոսեան Լ., նշվ. աշխ., էջ 27:

յան կուսակցութեան առաջացումը<sup>1</sup>:

Հնչակյան կուսակցութեանը, Հանդիսանալով ԱՄՆ-ում ազգային-քաղաքական կառույց ստեղծած առաջին Հայկական կուսակցութեանը, ժամանակի ընթացքում իր մասնաճյուղերն է հիմնել Նյու Յորքում, Փրովիդենսում, Ուստրում, Բոստոնում, Լոուելում, Մոլտրենում, Չիկագոյում, Ֆիլադելֆիայում և արդյունաբերական Հայաշատ այլ քաղաքներում՝ ամենուրեք կազմակերպելով բազմամարդ ժողովներ, հրապարակային Հավաքներ ու ցույցեր<sup>2</sup>:

ԱՄՆ-ի Հնչակյան կուսակցութեան երեւի գործիչներից էին հիմնադիրներ Նշան Կարապետյանը (Ռուբեն Խան Ազատ), Կարապետ Փափազյանը, պատվելի Գարեգին Չիթչյանը, ինչպես նաև՝ Արսեն Տիրանը, Վարդան Վրույրը, Հրաչ Երվանդը, Սուրեն Պարթևյանը, Միհրան Սվազլյանը (Սվազլը), Ստեփան Սապահ-Գյուլյանը և ուրիշներ<sup>3</sup>: Ամերիկահայութեան շրջանում կազմակերպված Հնչակյան շարժման սկզբնավորողը «ազատ ամերիկացի վրայ» «Հայ յեղափոխութեան պերճաբան, հրաշունչ գաղափարախօս» խարբերոցի պատվելի Գ. Չիթչյանն էր, որը և «խաչի փրկագործութեան հետ» քարոզեց նաև ինքնապաշտպանութեան ու զէնքի ազատարար դերը...»<sup>4</sup>:

Ամերիկահայ Հնչակյանների վրա հատկապես մեծ էր սոցիալիստ-հնչակ Ավետիս Նազարբեկի գաղափարական ազդեցութեանը, որի կրողներից էր 1893 թ. ԱՄՆ ժամանած և Բոստոնում, Նյու Յորքում, Ֆիլադելֆիայում, Չիկագոյում ու Հայաշատ այլ վայրերում իր հեղափոխական ու ընկերվարական ելույթներով աչքի ընկած արևելահայ Նշան Կարապետյանը<sup>5</sup>:

Հնչակյան կուսակցութեան ներսում սոցիալ-դեմոկրատական և ազգային երկու հոսանքների առկայութեանը, որը 1896 թ. օգոստոսին Հանդեցրել էր կուսակցութեան լիակատար մասնատման, անդրադարձել էր նաև Հնչակյան ամերիկահայ մասնաճյուղի վրա, որի պառակտումն առավել խորացել էր 1898 թ.: Հավատարիմ մնալով արևմտահայոց հարցին, մերժելով ընկերվարականութեանը որպես

<sup>1</sup> Դիգմեճեան Մ. Գ., նշվ. աշխ., 1955, էջ 224, 226: Հայկ Վ., Խարբերոց և անոր ոսկեդէն դաշտը, Նիւ Եորք, 1959, էջ 990:

<sup>2</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 207, 329: Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 991:

<sup>3</sup> Դիգմեճեան Մ. Գ., նշվ. աշխ., 1955, էջ 224, 226, 227: Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 991, 992:

<sup>4</sup> Մեր գաղափարն ու գործը. Ռամկավար Ազատական Կուսակցութեան Սյուրբեան երեսնամեակին առիթով, Ֆրեզնոյ, 1952, էջ 22:

<sup>5</sup> Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 992:

անհամատեղելի, սովելորդ ու վնասակար գաղափարաբանություն կապիտալիստ-պրոլետար սոցիալական հարաբերություններից զերծ հայ իրականության համար, ինչպես նաև 1890-ական թվականներին հայերի նկատմամբ իրականացված համիդյան շարժերից հետո հրատարակելով «մասնակի ու ապարդյուն» ցույցերից և որդեգրելով հեղափոխական պայքարի խոհուն, հեռատես և անաղմուկ մեթոդները՝ Հնչակյան կուսակցության գերակշիռ մեծամասնությունը կազմող ազգայնական թևը վերակազմվելով ստեղծել էր նոր՝ Վերակազմյալ հնչակյան կուսակցություն (Կենտրոնական վարչության կազմում՝ Միհրան Սվադլը, Արփիար Արփիարյան, Կարապետ Փափազյան, Փ. Ադամյան)՝ «Զայն հայրենեաց» թերթով (1899 թ., Նյու Յորք, 1900 թ., Ուստր, խմբ.՝ Գ. Ջիթչյան), մինչդեռ Ալեխոյս Նազարբեկի սոցիալիստական կողմնորոշման հետևորդները՝ Հին Հնչակները, նախկին կուսակցության հիմքի վրա վերանվանվել են Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության՝ «Երիտասարդ Հայաստան» թերթով (1903 թ., Բոստոն, Նյու Յորք, խմբ.՝ Ս. Սապազ-Գյուլյան)՝:

ԱՄՆ-ում հնչակյան Հին ու նոր թևերի միջև առկա գաղափարական հակասություններն աստիճանաբար վեր են ածվել լուրջ ու անզիջում թշնամական պայքարի՝ դրանից բխող բոլոր ծանր հետևանքներով (հրապարակային փոխադարձ անհարկի վիրավորանքներ, հետապնդումներ, ահաբեկչություններ, եղբայրասպան կռիվներ), որոնք չեն վրիպել անդամ մամբրիկյան մամուլի ուղարկությունից՝ արժանանալով համընդհանուր դատապարտման:

Դարասկզբին Հնչակյան, մասնավորապես Վերակազմյալ հնչակյան կուսակցության շարքերում առկա հակասությունները նորից պատճառ են դարձել վերակազմության՝ 1907 թ. ստեղծելով այժմ արդեն Վերստին վերակազմված հնչակյան կուսակցություն՝ «Ազգ» թերթով (խմբ.՝ Ս. Պարթևյան)<sup>2</sup>:

1918 թ. վերջին վերակազմության է ենթարկվել նաև Հնչակյան կուսակցության Սոցիալ-դեմոկրատական հատվածը՝ բաժանվելով երկու թևերի՝ սապահականների և բողոքող հնչակյանների: Վերջիններս, ազդված ռուսական բոլշևիկյան հեղափոխությունից, գտնում էին, որ ժամանակն է հրաժարվել ազգային խնդիրների համար պայքարելուց և միանալ միջազգային կոմունիստական շարժմանն ու

<sup>1</sup> Ճիգմեճեան Մ. Գ., նշվ. աշխ., 1930, էջ 66, 87:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 120-121:

ազգային կոմկուսին<sup>1</sup>:

1895 թ. ԱՄՆ է մուտք գործել նաև Հայ Հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ) կուսակցությունը, որի եռանդուն գործիչներին հաջողվել է այն դարձնել «...գաղափարական և կազմակերպական տեսակէտից տիրական ոյժ ամերիկահայութեան մէջ»<sup>2</sup>: Աստիճանաբար վերջ դնելով քաղաքական ասպարեզում հնչակյանների դերիչխող վիճակին և ամուր հիմքեր հաստատելով Նոր երկրում, ՀՅԴ կուսակցությունն իր մասնաճյուղերն է հիմնել արդյունաբերական հայաշատ կենտրոններում՝ Լոուրենսում, Հեյվլըրհիլում, Փրովիդենսում, Ուատրում, Ուայթինսվիլում, Նյու Յորքում, Բոստոնում և այլուր: Ժողովները, հրապարակային հավաքներն ու ցույցերն անբաժանելի էին կուսակցութայն գործունեությունից, որը, Հնչակյան կուսակցութայն նման, նույնպես գերծ չէր նաև ահաբեկչական մեթոդներից: ԱՄՆ-ում Հայ Հեղափոխական դաշնակցություն կուսակցութայն հիմնադիրներն էին Սիմոն Շիւյանը (Սուրեն), Հովհաննես Յուսուֆյանը, Արշակ Վառմյանը, Արամ Աշոտը, Կ. Սեքլեմյանը, Խ. Գալուստյանը, Ատոմ Յարճանյանը (Սիամանթո) և ուրիշներ: Վերջինս հիմնել էր կուսակցութայն առաջին պաշտոնաթերթը՝ «Հայրենիքը» (1899 թ., Նյու Յորք, 1900 թ., Բոստոն, խմբ.՝ Թ. Չարչաֆճյան)<sup>3</sup>:

1908 թ. վերջին Արմենական և Վերակազմյալ հնչակյան կուսակցությունների վերամիավորումով ստեղծվել է Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը, որի նշանաբանն էր «Կուսակցութիւնը ժողովուրդն է», և որի հայտնի գործիչներից էին Սուրեն Պարթևյանը (Սիսակ Պարտիզպանյան), Լևոն Փափազյանը, Հակոբ Օղասապյանը և այլք: Նորաստեղծ կուսակցութայն պաշտոնաթերթն էր Վերստին վերակազմված հնչակյան կուսակցութայն Բոստոնում հրատարակվող «Ազգ» թերթը: Երիտթուրքական Սահմանադրութայն հետ հույսեր փայփայող հիշյալ կուսակցութայն գործիչներն ամերիկաբնակ աշխատասեր ու շնորհալի իրենց հայրենակիցներին

<sup>1</sup> ԹԵՂԻԿ, նշվ. աշխ., 1921, էջ 218: Ղարիբջանյան Ս. Գ., ԱՄՆ-ի կոմունիստական կուսակցության հայկական ֆեդերացիայի գործունեությունը 1919–1924 թթ., «Բանբեր Հայաստանի Արխիվների», թիվ 2, Երևան, 1977, էջ 51:

<sup>2</sup> Հ.Յ.Դ. վարսունամետկ (1890–1950), կազմեց Ս. Վրացեան, Պոսրքն, 1950, էջ Ը:

<sup>3</sup> Atamian, S. The Armenian Community. New York, 1955, p. 356. Հ.Յ.Դ. 60-ամեակ, նշվ. աշխ., էջ Է-Ը: Յուշապատում Հ.Յ.Դ.աշնակցութեան. 1890–1950, Բոստոն, 1950, էջ 429, 431, 449, 534, 536, 551–554: Մալխաս, Ապրումներ, Խ. Ա, Պոսրքն, 1931, էջ 18–19:

կոչ էին անուժ վերադառնալ՝ մասնակցելու Հայրենի երկրի վերակառուցմանը, գյուղատնտեսությունից ու արդյունաբերությունից զարգացմանը, երկաթուղիների կառուցմանը և այլ կարևոր ձեռնարկները<sup>1</sup>:

1921 թ. Արմենական, Վերակազմյալ Հնչակյան և Սահմանադրական-դեմոկրատական կուսակցությունների միաձուլումով ի հայտ է եկել Հայկական դեմոկրատական-լիբերալ (Ռամկավար-ազատական) կուսակցությունը (ՀԴԿ), որն իրեն հռչակել է որպես զուտ ազգային կուսակցություն՝ զերծ օտար ազդեցություններից ու արտաքին ճնշումներից: Կուսակցության ականավոր գործիչներից էին Մ. Անանիկյանը, Ս. Մալեմեզյանը, Կ. Փափազյանը, Լ. Կյուլեսերյանը, Հ. Ծովիկյանը և այլք: Կուսակցության պաշտոնաթերթերն էին ԱՄՆ-ի արևելյան հատվածում (Բոստոն)՝ «Ազգ-Պահակը» (1921-1922 թթ.), ապա՝ «Պայքարը» (1923 թ.), իսկ արևմտյան հատվածում (Ֆրեյնո)՝ «Նոր կեանք-Արօրը» (1921-1922 թթ.), ապա՝ «Նոր օրը» (1922 թ.)<sup>2</sup>:

Հայ քաղաքական երեք կուսակցությունների (Հնչակյան, Դաշնակցական, Ռամկավար) ամերիկյան մասնաճյուղերը կառուցվածքային առումով խիստ կազմակերպված միավորներ էին՝ բրգաձև և հիերարխիկ կառուցվածքով: Դրանցից յուրաքանչյուրը, ենթարկվելով իր կուսակցության ԱՄՆ-ից դուրս գտնվող համապատասխան կենտրոնական վարչությունը կամ կենտրոնական բյուրոյին,՝ միաժամանակ ուներ նաև իր՝ ամերիկյան կենտրոնական վարչությունը կամ կենտրոնական կոմիտեն, որին ենթարկվում էին երկրի հայաշատ գրեթե բոլոր քաղաքներում գործող համապատասխան կուսակցությունների մասնաճյուղերը: Ստեղծվելով ուսական հեղափոխական կուսակցությունների օրինակով՝ Հայ քաղաքական կուսակցություններն իրենց կառուցվածքով շատ նման էին վերջիններիս: Կուսակցությունների ամերիկահայ մասնաճյուղերը համապատասխան ֆինանսական ներդրումներ էին կատարում իրենց կենտրոններին, իսկ վերջիններս էլ՝ բյուրոներին: Ամերիկահայ ազգային կուսակցությունների նյութական կարողությունը գոյանում էր անդամավճարներից (վճարողի եկամտի 2-3%-ից ոչ ավելի), նվիրատվություններից և տարբեր առիթներով կազմակերպված հանգանակու-

<sup>1</sup> Ճիզմեճեան Մ. Գ., նշվ. աշխ., 1955, էջ 168-171: «Ազգ», 30.1.1909:

<sup>2</sup> Tashjian, J. H., նշվ. աշխ., էջ 39: Ճիզմեճեան Մ. Գ., նշվ. աշխ., 1930, էջ 489-491: Անդրեսեան Ա., Պատմություն Ռամկավար Ազատական Կուսակցության Ամերիկայի Արևմտեան շրջանակի, Լոս Անճելոս, 1981, էջ 10, 11:

թյուններից<sup>1</sup>:

Ամերիկահայուսթյան քաղաքական կյանքում սկզբնական շրջանում (1890-ական թվականներ) գերիշխող դերը պատկանել է Հնչակյան կուսակցությանը, ինչը շուտով (1900-ական թվականներ) փոխանցվել է Հայ Հեղափոխական դաշնակցության կուսակցությանը, որը մինչև Առաջին աշխարհամարտը ԱՄՆ-ի ամենից մեծաթիվ ու արագ աճող քաղաքական կուսակցությունն էր:

1921 թ. տվյալներով ԱՄՆ-ում հայ քաղաքական կուսակցություններին անդամակցածների ընդհանուր թիվը կազմել է շուրջ 13.000 մարդ: Ազգային գրեթե բոլոր կուսակցությունների կենտրոնները, ակումբներն ու պաշտոնաթերթերը կենտրոնացված էին երկրի արևելյան ափին գտնվող Հայաշատ Բոստոն քաղաքում, բացառությամբ Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցության, որը հաստատվել էր Չիկագոյում<sup>2</sup>:

Հայ քաղաքական կուսակցությունների գաղափարական հզոր գեները մամուլն էր: Այն ընթերցվել է ոչ միայն նրա կողմնակիցների ու համախոհների, այլ նաև հարազատ լեզվին, հայրենի լուրերին կարոտ, ոչ կուսակցական ուղղվածություն ունեցող բազմաթիվ տարագիր հայերի կողմից: Թերթերի համարները ձեռքից ձեռք են անցել, կարդացվել հարյուրավոր հայերի կողմից: Այսպես, 1908 թվականից Ճրեզնոյում լույս տեսնող դաշնակցական «Ասպարէզ» թերթի յուրաքանչյուր համար առնվազն 200 հայրենաբաղձ հայերի ձեռքով է անցել<sup>3</sup>:

Կուսակցություններն ԱՄՆ-ում ունեին նաև հասարակական-քաղաքական, մշակութային-կրթական հավաքատեղիներ ու հաստատություններ՝ ակումբներ, ընկերություններ, գրադարաններ, ընթերցարաններ և այլն, որոնք կարևոր ազգահավաք ու ազգանպաստ դեր են կատարել հայրենի եզերքներից հեռու գտնվող ամերիկահայուսթյան համար: Սկզբնական շրջանում կուսակցական հավաքների համար գործունեության կենտրոնատեղիներ էին իրենց թերթերի գրասենյակները: Ժամանակի ընթացքում կուսակցությունները վարձել կամ գնել են սենյակներ, որտեղ հաստատվել են նրանց ակումբները՝ «Դաշնակցական», «Հնչակյան», «Ռամկավար» անուններով: Այդ ակումբներում տեղի են ունեցել ազգային պարբերական

<sup>1</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 242, 243:

<sup>2</sup> Թեոդիկ, նշվ. աշխ., 1921, էջ 218:

<sup>3</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 253:

Հանդիպումներ:

Նախքան ազգային կրթօջախների ի հայտ գալը, կուսակցական ակումբները կատարել են նաև կրթական ու լուսավորչական յուրատեսակ դպրոց-կենտրոնների դեր՝ իրենց վրա վերցնելով համայնքի հայապահպանման ու ինքնահաստատման կարևորագույն գործը: Ակումբները մշտական գործող գրադարաններն ու ընթերցարաններն իրենց այցելուներին են տրամադրել հայոց լեզվին, գրականությանն ու պատմությանը վերաբերող նյութեր, այդ թեմաներով պարբերաբար անց են կացվել հայերեն ու անգլերեն ուսուցողական դասախոսություններ, կազմակերպվել հանդիպումներ համայնքի կրթված անդամների, ճանաչված մտավորականների, ազգային ու հեղափոխական գործիչների հետ<sup>1</sup>:

Հայ քաղաքական կուսակցություններն ԱՄՆ-ում ունեցել են նաև իրենց աջակցող երիտասարդական կազմակերպություններ: Դրանց թվում առավել գործունեն ու մեծաքանակը, տարածվածն ու ազդեցիկը ՀՅԴ Կրտսեր կազմակերպությունն էր, որը հայտնի էր Հայ երիտասարդական ֆեդերացիա անունով: Օրեցօր աճող այդ կազմակերպությունն իր գործունեությունը տարածել է դադութի ինչպես քաղաքական, այնպես էլ կրթական, մարզական ու հասարակական կյանքի ասպարեզներում:

Ազգային կուսակցություններն ԱՄՆ-ում կազմակերպել են նաև գիտվորական դպրոցներ, որտեղ մարդել են հայրենիքի ազատագրմանը նվիրված երիտասարդ կամավորներին: Այդպիսին էին Ուստրի և Փրովիդենսի Ջինվորական խմբերը (1891 թ.), Փրովիդենսի Ամերիկահայ առաջին կանոնավոր ռազմական դպրոցը (1899 թ.): Թեև ռազմական նմանատիպ դպրոցները պահանջում էին նյութական մեծ ծախսեր, այդուհանդերձ հայ քաղաքական կուսակցությունները, իրենց առջև դրված համազգային կարևոր խնդիրներին համապատասխան, դրամական խոշոր հատկացումներ են կատարել ի նպաստ համայնքի երիտասարդության գիտվորական պատրաստվածություն<sup>2</sup>:

Ազգային կուսակցություններից բացի, դարասկզբին ԱՄՆ-ում ձևավորվել են նաև քաղաքական մի շարք այլ կազմակերպություններ, որոնք ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական հարաբերությունների արդյունք էին: Այդպիսին էր բանվորներ Հայկ

<sup>1</sup> «Հայրենիք ամսագիր», Յունուար, 1924: Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 253:

<sup>2</sup> Ինքնագրան Մ. Գ., նշվ. աշխ., 1955, էջ 224: «Հայրենիք», 19.5., 19.10.1901:

Աղամյանի, Արամ Զարդարյանի և այլոց կողմից հիմնված ամերիկահայ սոցիալիստական կուսակցությունը, որը սկզբում (1906 թ.) խմբակների, ապա կազմակերպությունների ձևով հաստատվել ու տարածվել է Բոստոնում, Նյու Յորքում, Լիննոսում, Դետրոյտում, Չելսիում, Բրոքլինում և այլուր, որպես տեղական՝ ամերիկյան սոցիալ-բանվորական կուսակցության բաղկացուցիչ հայկական մասնաճյուղ<sup>1</sup>:

Ամերիկահայ փոքրաթիվ՝ 35-50 հազարի հասնող աշխատավորությունը, զուրկ լինելով իր սոցիալական պատկանելության ազգային ավանդույթներից, ինչպես նաև՝ իրեն բաժին ընկած պատմական ճակատագրի բերումով հեռու լինելով բանվորական շարժումներից, չունեն համապատասխան դասակարգային գիտակցություն, հետևաբար նրանց համախառն որոշակի դժվարություններ էր ենթադրում «Բոլոր երկիրներու գործաւորնե՛ր՝ միացէ՛ք» նշանաբանով առաջնորդվող սոցիալիստական գաղափարախոսությունից կողմնակիցների համար: Վերջիններս պայքարում էին գործավորների աշխատատեղի կրճատման, աշխատավարձի բարձրացման, աշխատանքային անվտանգության կանոնների պահպանման, աշխատանքային դժբախտ պատահարների կամ անգործության դեպքում նրանց կյանքի ապահովագրման և նման այլ պահանջների իրականացման համար: Ամերիկահայ սոցիալիստները հրատարակել են «Գործաւոր» (1916 թ., Դետրոյտ), «Նոր հոսանք» (1920 թ., Նյու Յորք), «Բանւոր» (1922 թ.) պարբերականները, իսկ արդեն 1924 թ. ԱՄՆ-ի բանվորական (կոմունիստական) կուսակցության հայկական հատվածի պաշտոնական ձուլումից հետո՝ «Պրոլետար» պաշտոնաթերթը<sup>2</sup>:

Ամերիկահայերի շրջանում գործել է նաև Հայ չեզոքների (ոչ կուսակցականներ) համազգային միությունը, որը, հիմնվելով 1919 թ. Նյու Յորքում, նպատակ է ունեցել յուրաքանչյուր Հայ քաղաքացու հասու դարձնել իր իրավունքներին ու պարտականություններին, ինչպես նաև՝ պայքարել դրանց պաշտպանության համար<sup>3</sup>:

Ամերիկահայ իրականության մեջ մշակութային, քաղաքական ու ներգաղութային կյանքի զանազան կողմերը ներառող ազգային

<sup>1</sup> Ղարիբջանյան Ս. Գ., նշվ. աշխ., էջ 46, 47:

<sup>2</sup> Մարտունի Ա. (Մյասնիկյան Ա.), Կուսակցությունները գաղութախայտության մեջ, Թիֆլիս, 1924, էջ 126: Ծրագիր Ամերիկայի Սոցիալիստ Հայ Կազմակերպության, Պոսթրն, 1907, էջ 13, 15: Ղարիբջանյան Ս. Գ., նշվ. աշխ., էջ 49-51, 57, 58:

<sup>3</sup> ՀՀ ԱԱ, ֆ. 408, ց. 1, գ. 140, ք. 1:

այլ ակումբների, կուսակցությունների, ընկերությունների, միութ-  
յունների, կազմակերպությունների կողքին իրենց արժանավոր տեղն  
ունեն բարեսիրական միությունները՝ Հայկական բարեգործական  
ընդհանուր միությունը (ՀԲԸՄ), Հայ կարմիր խաչը (ՀԿԽ) և այլն:  
Բնույթով համահայկական այդ կազմակերպությունները, որոնց ֆի-  
նանսները գոյանում են անդամավճարներից, անձնական նվիրատ-  
վություններից ու հանգանակություններից, իրենց ծավալած հսկա-  
յական մարդասիրական գործունեությամբ նյութապես ու բարոյա-  
պես սատարել են ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ հայրենի ու աշխարհով  
մեկ սփռված իրենց բազմահազար կարիքավոր հայրենակիցներին:

1906 թ. Կահիրեում հիմնված Հայկական բարեգործական ընդ-  
հանուր միություն ամերիկյան մասնաճյուղը կազմավորվել էր երկու  
տարի անց՝ 1908 թ. փետրվարի 24-ին Բոստոնում, Եգիպտոսից ժա-  
մանած ՀԲԸՄ ներկայացուցիչներ Վահան Բյուրքչյանի իրենց զգա-  
լի ավանդը ներգրած ավետարանական քարոզիչներ՝ վերապատվելի-  
ներ Կարապետ Մանավյանի, Խաչատուր Պեննեյանի, ինչպես նաև  
Մուշեղ եպս. Սերոբյանի, Բաբկեն եպս. Կյուլեսերյանի և այլոց ջան-  
քերով: Ազգային արժանապատվության զգացումը միությունը թե-  
լադրել է բարոյական այն սկզբունքը, համաձայն որի, «Հայը չպետք  
է իր ձեռքը երկարի օտարի առջև», ուստի «Միութիւնը գորութիւն  
է», «Եղբայր ենք մենք» կարգախոսներով կոչ է արել համայն աշ-  
խարհի և հատկապես փոքրիշատե բարեկեցիկ ԱՄՆ-ի հայությունը  
համախմբված ու զորեղ աջակցություն ցույց տալ բոլոր, ի մասնա-  
վորի Օսմանյան կայսրության և ցարական Ռուսաստանի իրենց կա-  
րոտյալ հայրենակիցներին: Միությունը Բոստոնում հրատարակել է  
իր պաշտոնաթերթերը՝ «Հայ» (1909-1910 թթ.), «Յուշարար» (1914  
թ.) պարբերականները: Կարճ ժամանակում ՀԲԸՄ ԱՄՆ-ի մասնա-  
ճյուղը դարձել է միություն հիմնական հենարանն ու առանցքային  
ուժը. 1921 թ. վեր է ածվել ինքնուրույն հատվածի, 1924 թ. 100  
մասնաճյուղով, 8000 անդամով, 1909-1924 թթ. 810.231 դուլարի հա-  
սույթով<sup>1</sup>:

Հսկայական էին ՀԲԸՄ ամերիկյան մասնաճյուղի ջանքերը  
Առաջին աշխարհամարտի տարիներին ու դրանից հետո: Այն իր վրա

<sup>1</sup> Ոսկեմատեան ՀԲԸՄ, էջ 57, 272: Armenian General Benevolent Union. Historic Outline. 1906-1946. New York, 1948, p. 55 (այսմատեան՝ AGBU): Mirak, R., նշվ. աշխ., 1981, էջ 144: Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 177: Yeretziyan, A. S., նշվ. աշխ., էջ 22:

էր վերցրել նաև որբախնամ առաքելություն (1920 թ. միայն երկու ամսվա ընթացքում Կալիֆոռնիայի նահանգային մասնաճյուղն իր հովանու ներքո կազմակերպել է ավելի քան 500 որբերի խնամքն ու կրթութիւնը), Մերձավոր Արևելքի նպաստամատուց ընկերության հետ հայրենի կարոտյալների համար հանգանակել 23.400 դոլար, մասնակցել «Ոսկե Կանոն» ազգային բարեսիրական, 1919 թ. Ջորավար Անգրանիկի կազմակերպած Ազգային փրկության, որբանոցներից արձակված և բախտի քմահաճույքին հանձնված չափահաս հայ որբերին աջակցելու կոչված Ինքնօգնության հանգանակություններին՝ տրամադրելով հարյուր հազարավոր դոլարներ<sup>1</sup>:

ԱՄՆ-ում կազմավորվել են նաև ՀԲԸՄ օժանդակ մարմիններ, օրինակ՝ Տիկնանց որբախնամը (1917 թ.), ինչպես նաև՝ ամերիկահայ Պործարար անհատների ջանքերով Նյու Յորքում հիմնված Գյուլբեկյան հիմնարկութիւնը (1920 թ.), Հովարդ Կարագլոդյան հիշատակի բնկերութիւնը (1921 թ.), որոնց նպատակն էր բոլոր միջոցներով սատարել Հունաստանում, Սիրիայում, Լիւանանում և հարակից այլ տարածքներում ապաստանած իրենց տարագիր հայրենակիցների ազգապահպանությանը, կրթութիւնը, զբաղվածութիւնն ու հոգևոր կյանքին՝ դրանով իսկ մեծապես աջակցելով Հայ փախստականների կոմիտեների գործունեութիւնը<sup>2</sup>:

Ամերիկահայ իրականության մեջ գնահատելի դեր են կատարել տիկնանց կազմակերպութիւնները: Հանդես գալով որպես տիկնանց միութիւններ, եկեղեցասեր տիկնանց կամ օրիորդաց առաջադիմական, հայուհայց որբախնամ ընկերութիւններ և այլ անվանումներով, սրանք հիմնականում ստեղծվել և գործել են համայնքի եկեղեցիներին կից ու նրանց հովանավորութեան ներքո: Կրթասիրաց, եկեղեցասիրաց, որբախնամ և նման այլ բնույթի այդ կազմակերպութիւններն օտարութեան մեջ զգալի հայապահպան աշխատանք են կատարել խթանելով համայնքի ներսում եկեղեցու ազգահավաք գործունեութեան առավել արդյունավետ իրականացումն ու ԱՄՆ-ի հայաշատ տարբեր վայրերում հոգևոր ու կրթական նորանոր կենտրոնների հիմնադրումը: Տիկնանց կազմակերպութիւնների ջանքերով ազգային եկեղեցիներին կից բացվել են կիրականօրյա դպրոցներ,

<sup>1</sup> AGBU, էջ 60, 61: Անդրեասեան Ա., Համազգային ատարելութիւն. 1906–1981, ԱՄՆ, 1981, էջ 22: Ամերիկահայ հանրագիտակ տարեգիրք, 1925, էջ 466–467:

<sup>2</sup> Անդրեասեան Ա., նշվ. աշխ., ԱՄՆ, 1981, էջ 53: Ամերիկահայ հանրագիտակ տարեգիրք, 1925, էջ 466–467: Wertsman, V., նշվ. աշխ., էջ 9:

որոնցում հիմնականում մի խումբ ուսյալ ու նվիրյալ տիկնանց ջանքերով հայոց լեզվի, հայոց պատմութեան և այլ դասընթացներ ու հավաքներ են իրականացվել<sup>1</sup>:

ՀՅԴ կուսակցութեան հովանու ներքո ԱՄՆ-ում հիմնվել է նաև համագաղութային մակարդակի բարեսեր տիկնանց Կարմիր խաչի հայկական ընկերութունը (1910 թ., Նյու Յորք): Այն շուտով վերանվանվել է ՀՅԴ Կարմիր խաչի, 1920 թ. Դստերք Հայաստանի, և ունեցել է երկրով մեկ տարածված 54 մասնաճյուղ: Կազմակերպված, կրթված և գործունյա տիկնանց ներառող Հայ կարմիր խաչն իր մասնակցութունն է ունեցել ինչպես հայրենի երկրի ազգային ու կրթական հաստատութիւնների սատարելուն, նույնպես և նպաստավոր պայմաններ ստեղծել նախկինում սոսկ ընտանեկան հոգսերով սահմանափակված իսկապետական հայ կնոջը հասարակական կյանքում ևս ներգրավելու և ինքնագրասեռովելու ուղղութեամբ<sup>2</sup>:

Ամերիկահայութեան ուշադրութեան կենտրոնում էին նաև ֆիզիկապես ու հոգեպես առողջ և ուժեղ իրիտասարդ սերունդ ունենալու հարցերը. արդյունքում 1921 թ. Նյու Յորքում հիմնվել է Հայ մարմնակրթական ընդհանուր միութունը (ՀՄԸՄ), որը «Բարձրացիր, բարձրացուր» նշանաբանով աստիճանաբար իր մասնաճյուղերն է ստեղծել երկրի հայաշատ վայրերում<sup>3</sup>:

Առաջին աշխարհամարտի տարիներին և հետո ամերիկահայերի շրջանում ստեղծվել են հասարակութեան տարբեր շերտերը ներառող բազմաբնույթ այլ կազմակերպութիւններ ևս: Այսպես՝ 1916 թ. ազգային որոշ գործիչների ջանքերով կազմակերպվել է մասոնական Հայկական օթյակը (1923-1924 թթ. Ռամկավար-ազատական կուսակցութեան ջանքերով Հայկական օթյակը վերակազմվել է Վարդանանց ասպետների եղբայրութեան), որի գաղափարական հիմքում ընկած են հայոց անցյալի պատմութեան քաջարի հերոսներ<sup>4</sup> հիշատակի ոգեկոչումն ու նրանց փառավոր օրինակով հայրենիքին նվիրյալ նոր սերնդի դաստիարակումը<sup>5</sup>:

ԱՄՆ-ի հայ ավետարանականների ջանքերով 1918 թ. հունիսի

<sup>1</sup> Ավագյան Զ., նշվ. աշխ., 2000, էջ 108:

<sup>2</sup> Ալպոս Հայ Կ. Խաչի. իր քառասնամեակին առթիւ. 1910-1930, Պոստոն, 1930, էջ 7: Mirak R., նշվ. աշխ., 1983, էջ 178, 179:

<sup>3</sup> Ամերիկահայ հանրաշխուակ տարեգիրք, 1925, էջ 467, 468: Բախտիկեան Ն. աքեղայ, Յուշամատեան Հ.Մ.Ը.Մ.-ի. 1918-1958, Պէրուք, 1958, էջ 119:

<sup>4</sup> Boghosian, H. B., նշվ. աշխ., էջ 187: Մարտիրոսեան Լ., նշվ. աշխ., էջ 65:

Դ-ին Ուստրում հիմնվել է Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցութունը, որը, ի շարս այլ խնդիրների, ծրագրել էր Մերձավոր Արևելքում կազմավորել աստվածաբանական հաստատություններ տեղի հայ ավետարանական եկեղեցիներին, դպրոցներին, որբանոցներին սատարելու նպատակով<sup>1</sup>:

1918 թ. ստեղծված Հայաստանի Առաջին Հանրապետությանը, ինչպես նաև Կիլիկիա, Մերձավոր Արևելք և այլ վայրեր տարագրված հայրենակիցներին մասնագիտական, նյութական և այլ բնույթի աջակցություն ցույց տալու նպատակով արհեստավարժ ամերիկահայերից ստեղծվել են մասնագիտացված ընկերություններ, որոնցից էին Ճարտարագետների միությունը, Բժշկական միությունը և այլն<sup>2</sup>:

1922 թ. ամերիկահայ «Կոչնակ» շաբաթաթերթի ջանքերով Նյու Յորքում հիմնվել է Հայկական հրատարակչական ընկերությունը, որը ծրագրել էր ազգային դպրոցների համար հայերենով հրատարակել առաջին դասարանի դասագրքեր, ինչպես նաև օտար ընթերցողների համար՝ հայ գրականություն լավագույն թարգմանություններ և այլն<sup>3</sup>:

Նույն թվականին հիմնվել է նաև Գաղթականության հայկական դեպարտամենտը, որը դադուլի Հայություն կրթական, սոցիալական հարցերին առնչվող խնդիրների հետ միասին զգալի ավանդ է ունեցել նաև ԱՄՆ ժամանած անպաշտպան գաղթականների առջև ծագած իրադական, քաղաքական, քաղաքացիական, հասարակական, տնտեսական, աշխատանքային, ֆինանսական և նման այլ հարցերը կարգավորելու, նոր երկրի պայմաններին նրանց ընտելացնելու և այլ կարևոր աջակցություն ցուցաբերելու գործում: Գաղթականների յուրահատուկ այդ տունը միայն 1922 թ. մասնավոր հարցերով օգնություն է ցույց տվել 2.400 գաղթականների, վարել 953 գաղթականների 368 գործ, այսինքն՝ յուրաքանչյուր երրորդ գաղթական հայն օգտվել է գաղթականական զբաղմունքային ծառայություններից<sup>4</sup>:

Այսպիսով, դեռևս անցյալ դարի 80-ական թվականներին վերջից ԱՄՆ-ում ստեղծվել և, հետագա տարիներին ստվարանալով, իրենց մասնաճյուղերն են հիմնել հասարակության գրեթե բոլոր խավերը ներառող հայ բազմաթիվ մեծ ու փոքր ընկերություններ, միու-

<sup>1</sup> Boghosian, H. B., նշվ. աշխ., էջ 187:

<sup>2</sup> Թեոդիկ, նշվ. աշխ., 1921, էջ 217:

<sup>3</sup> Yeretzian, A. S., նշվ. աշխ., էջ 23:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 27:

թյուններ, կազմակերպություններ ու կուսակցություններ: Հետամտած նպատակներով բազմարժեք այդ կազմակերպությունները (գաղթականական, քաղաքական, քաղաքացիական, հասարակական, տնտեսական, առևտրական, ռազմական, մարզական, հողեր, մշակութային, կրթական, բարեխրական, որբախնամ, հայրենակցական, հայրենասիրական, երիտասարդական, տիկնանց և այլ) իրենց կարծատե և կամ երկարատե գոյության ընթացքում ազդանպաստ ու հայրենանպաստ կարևոր դեր են կատարել՝ խթանելով օտար ափերում հայահավաքման ու հայասպահպանման դժվարին խնդիրների իրականացումը, ինչպես նաև՝ հեռավոր հայրենի երկրին ու ժողովրդին հնարավոր բոլոր միջոցներով (նյութական, մարդկային, բարոյական և այլն) սատարելը, Հայոց հարցը ամերիկյան և եվրոպական հասարակայնությանն ու կառավարող պաշտոնական շրջաններին ներկայացնելը և այլն:

### **Ամերիկահայերի կապը բնօրրանի հետ**

Առաջին աշխարհամարտի հենց սկզբից ամերիկահայ ազգային գործիչների ջանքերով հնարավոր է դարձել հայրենի երկրի ու ժողովրդի համար ճակատագրական պահին առանձին միավորումներով համախմբել ընդհանուր առմամբ միասնական գործելու պատրաստակամություն դրսևորած տեղի ազգային, հասարակական, քաղաքական կազմակերպությունների գործունեությունը՝ մասնակցելով ինչպես բնօրրանում ծավալված կամավորական շարժումներին, բազմահազար կարողյալ հայրենակիցներին ու գաղթականներին սատարելուն, այնպես էլ եվրոպայում և ԱՄՆ-ում Հայ Դատի պաշտպանությունը հետամտող քաղաքական, դիվանագիտական, ռազմական և այլ բնույթի ձեռնարկներին: Այդ նպատակով կազմակերպված ամերիկահայ միջկուսակցական և ազգային մարմիններից էին՝ Միջկուսակցական խորհրդածոլովը (1914 թ., նոյեմբեր, Բոստոն), որը շուտով վերանվանվել է Ազգային պաշտպանություն ամերիկահայ հանձնախմբի (ԱՊԱՀ), Ազգային շահերի պաշտպանություն միությունը (ԱՇՊՄ) (1915 թ., Նյու Յորք), և այդ երկուսի միավորումից կազմավորված Ազգային պաշտպանություն Ամերիկայի միությունը (ԱՊԱՄ) (1915 թ.), ԱՄՆ-ում Փարիզի Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցչական մարմինը՝ Ամերիկայի հայ ազգային միությունը (ԱՀԱՄ) (1917 թ., մարտ, Բոստոն, ատենապետ՝ Միհրան Սվազլյան), որը հիմնել է ինչպես Հայ ազգային միության Հանրա-

կանության դրասենյակը (1918 թ., Նյու Յորք, հետագայում վերանվանվել է Մամլո գրասենյակ), նույնպես և ավելի ուշ՝ Հանրականության կոմիտեն, որոնք նույնպես գործում էին Փարիզի ազգային պատվիրակության հետ համատեղ<sup>1</sup>:

Ամերիկահայերը գինվորական, զինական, ռազմամթերային և նյութական զգալի կարողությամբ իրենց անմնացորդ մասնակցությունն են ունեցել թե՛ Կովկասում և թե՛ Միլիտարում ու Կլիկիայում հայկական կամավորական զորամիավորումների ծավալած ռազմական գործողություններին: Այսպես, ամերիկահայությունը ռուսական ռազմական հրամանատարության ներքո գործող կովկասյան կամավորական շարժմանը 1915-1917 թթ. տրամադրել էր շուրջ 342.000 դոլար, ԱՄՆ-ի ՀՅԴ կուսակցությունը միայն երկու ամիսների ընթացքում Կովկաս էր առաքել 800 կամավոր, ֆրանսիական ռազմական հրամանատարության ներքո կազմված «Արևելյան Լեզեռնում» մարտնչելու համար 1917 թ. կամավորագրված 5.000 ամերիկահայերից անդամակցելու հնարավորություն էր ընձեռվել ընդամենը 1.172-ին<sup>2</sup>:

Ամերիկահայության գործուն ջանքերի շնորհիվ 1916 թ. հոկտեմբերի 21-22-ը ԱՄՆ-ի նախագահի ու Կոնգրեսի որոշմամբ երկրով մեկ հայտարարվել է «Հայոց օր», և, ի պաշտպանություն Հայ դատի, շուրջ 400 քաղաքներում կազմակերպվել են Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացվող բռնությունները դատապարտող հավաքներ, բողոքի ելույթներ ու ցույցեր, ինչպես նաև հայօգուտ բազմաթիվ միջոցառումներ, հանգանակություններ և այլն: Ամերիկյան ժողովուրդն իր սրտակցությունն ու համերաշխությունն է արտահայտել թուրքական բռնապետությունում հետապնդվող ու հալածվող քրիստոնյա սուգություններին և նրանց ի նպաստ նվիրաբերել ավելի քան 30 մլն դոլար: Շուտով կազմակերպվել է Հայաստանի ամերիկացի բարեկամների Հայաստան-Ամերիկա

<sup>1</sup> Ավագյան Բ., նշվ. աշխ., 2000, էջ 110-111: Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի. 1917-1921 թթ., Պոստոն, 1922, էջ 8-12: Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 994: The Armenians in Massachusetts. էջ 52: Թեոդիկ, Ամենուն տարեցոյցը, ԺՁ տարի, Կ. Պոլիս, 1922, էջ 283, 286: Ծիզմեճեան Մ. Գ., նշվ. աշխ., 1930, էջ 202: Սահմանադրութիւն եւ կանոնադրութիւն Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, Պոսթօն, 1917, էջ 2, 19, 20:

<sup>2</sup> Համառոտ տեղեկագիր Հ. Կ. Ազգային Բիւրօի գործունեութեան. 1915-1917 թթ., Թիֆլիս, ա. թ., էջ 7: Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (վաերագրեր), Գահիրէ, 1946, էջ 188: Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 27:

ընկերութիւնը (նախագահ՝ Ֆիլադելֆիայի հայտնի իրավաբան, հայասեր Ուոլթեր Ջորջ Սմիթ), որը հայկական հանձնախմբի խորհրդատուութեամբ, մինչև Լոզանի վեհաժողովը, ամերիկյան հասարակութեան և կառավարութեան շրջանում իրականացրել է Հայ դատին ի նպաստ ձեռնարկներ<sup>1</sup>:

Ամերիկայի հայ ազգային միութիւնը երկրի ողջ հայութեան հետ միասին իր գործուն մասնակցութիւնն է ունեցել Կիլիկիայի ազատագրման նպատակով կազմակերպված կամավորական շարժմանն ու դրան հաջորդող խնդիրների իրականացմանը<sup>2</sup>, 1918 թ. մարտին ձեռնարկված 1 մլն դոլարի հանգանակութեանը, իսկ 1919 թ. փետրվարի 1-ին գաղութի պատմութեան մեջ առաջին անգամ իրականացրել է ազգային մակարդակի ընտրութիւններ՝ պատերազմի ավարտից հետո Փարիզում գումարվելիք Համազգային ժողովին ներկայացնելով չորս պատգամալոր, ամերիկյան Մերձավոր Արևելքի նպաստամասուլջ կոմիտեի հետ օգնել եղեռնից վերապրած հայ որբերին ու կարոտյալներին, աջակցել ՀՀ առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունու կողմից ի նպաստ հայոց բանակի ԱՄՆ-ում կազմակերպված հանգանակիչ առաքելութեանը, ինչպես նաև՝ Փարիզի Ազգային խորհրդի նախագահ Պողոս Նուբարի հանձնարարութեամբ 1919 թ. նոյեմբերի վերջին Ջորալաբ Անդրանիկի և հրամանատար Հակոբ Բոնապարտյանի կողմից ԱՄՆ-ում կազմակերպված Ազգային փրկութեան հանգանակութեանը<sup>3</sup>:

Ամերիկայի հայ ազգային միութիւնը ԱՄՆ-ի, ինչպես նաև եվրոպական երկրների անտեղյակ հասարակայնութեանը Հայաստանն ու հայերին ներկայացնելու նպատակով հրատարակել ու տարածել է քաղաքական, պատմական ու դեղարվեստական բնույթի մի շարք աշխատութիւններ:

ԱՄՆ-ի ղեկավարութեան ու կոնգրեսականների շրջանում Ամերիկայի հայ ազգային միութեան ծավալած հայասնպաստ գործունեութիւնը շուտով տվել է իր շոշափելի արդուենքները. ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Ուիլսոնը Հայաստանի Հանրապետութիւն է առա-

<sup>1</sup> Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 994: Թեոֆիլ, նշվ. աշխ., 1922, էջ 284: Ծիգմենան Մ. Գ., նշվ. աշխ., 1930, էջ 372:

<sup>2</sup> Անագեան Զ., Կիլիկիահայորիւնը ԱՄՆ-ում եւ նրանց նպաստը Բնօրրանին. Ամերիկահայերը եւ «Արեւելեան-Հայկական լեզուներ», «Հասփ». Հայագիտական տարեգիրք, Նոր Շրջան, ԺԱ Տարի, 2007-2008, Անիլիսա-Լիբանան, 2009, էջ 61-79:

<sup>3</sup> Ծիգմենան Մ. Գ., նշվ. աշխ. 1930, էջ 360, 366-368, 417-419:

քել գեներալ Ջեյմս Հարբորդի ղեկավարութեամբ քննիչ հանձնախումբ տեղում ուսումնասիրելու հայերի տեղահանումներն ու կոտորածները, ինչպես նաև՝ Հայաստանի նորահաստատյալ պետութեանը տնտեսական օգնութիւնն ցույց տալու առաջնահերթ հարցերը, իսկ Կոնգրեսի Արտաքին հարաբերութիւնների հանձնաժողովի ենթահանձնաժողովը (նախագահ՝ Ուորըն Հարդինգ) 1918 թ. սեպտեմբերի 29-ին և հոկտեմբերի 2-ին ու 10-ին ունկնդրութեան է դրել հայ ներկայացուցիչների և հայասեր ամերիկացիների՝ Հայոց հարցին առնչվող հաղորդումները<sup>1</sup>:

Ամերիկահայ գաղութի և Հայ ազգային միութեան կազմակերպված ջանքերի շնորհիվ 1919 թ. հունվարին 60 հայասեր ամերիկացիների համախմբումով ստեղծվել է Հայաստանի անկախութեան ամերիկյան կոմիտեն (նախագահ՝ Ջեյմս Ջերարդ)՝ երկրի հասարակական ու քաղաքական ոլորտներում հայերի նկատմամբ համակրանք ձևավորելու և ԱՄՆ-ին ճանաչել տալու Հայաստանի լիակատար անկախութեան իրավունքը<sup>2</sup>: Եվ կամ՝ 1919 թ. մարտին ամերիկյան առաջավոր հասարակայնութեան 15.300 ներկայացուցիչներ (հոգևորականներ, նահանգների կառավարիչներ, քոլեջների ու համալսարանների նախագահներ) խնդրագիր են ներկայացրել ԱՄՆ-ի նախագահին՝ փութացնելու Ազատ Հայաստան ստեղծելու ուղղութեամբ Փարիզի Սաղաղութեան ժողովում վերջինիս ձեռնարկելիք ջանքերը և դրանք վերածելու գործուն քայլերի<sup>3</sup>:

Միութիւնը քաջալերել ու նյութապէս օգնել է նաև 1919 թ. նոյեմբերին կազմավորված Ամերիկահայ տիկնանց միութեանը, որը ամերիկացի քվեատու կանանց և բարձրաստիճան պաշտոնյաներին լուսարանել է Հայ դատը՝ փորձելով նրանց միջոցով ազդել Կոնգրեսի վրա՝ վավերացնելու հայանպաստ որոշումները<sup>4</sup>:

Առաջին աշխարհամարտից հետո միութիւնն ԱՄՆ-ի և եվրոպական պաշտոնատարների կողմից ճանաչում ստացած անցագրով կայականներ է տրամադրել դեպի Հայրենիք մեկնող իր հայրենակիցներին: Իր գոյութեան հիմնդ տարիների ընթացքում ԱՄՆ-ում արդեն 187 մասնաճյուղ ունեցող միութեան դրամագլուխը կազմել է շուրջ 930.000 դոլար: Հեռուտես քաղաքական գործիչ և հմուտ ղե-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 372, 373:

<sup>2</sup> ՀՀ ԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 222, ք. 8ա-8բ:

<sup>3</sup> Երկրամասն Մ. Գ., նշվ. աշխ., 1930, էջ 376:

<sup>4</sup> Նույն տեղում: Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 39:

վանագետ Միհրան Սվազլյանի կողմից ղեկավարվող Ամերիկայի Հայ ազգային միությունն իր հետամուտ ճայանպաստ լուրջ խնդիրների իրականացումը համազգային, մինչև անգամ միջազգային ու հատկապես ամերիկյան կառավարական ու հասարակական մակարդակներով կազմակերպելու կարողությունների համար ԱՄՆ-ի պաշտոնական խավերի կողմից ճանաչվել է որպես ամերիկահայ գաղութը ներկայացնող մարմին՝ դառնալով Հայ առաջին լուբիստական կազմակերպությունը ԱՄՆ-ում<sup>1</sup>:

Այսպիսով, Հայ ժողովրդի համար ճակատագրական դարձած Առաջին աշխարհամարտի ու դրան հաջորդող տարիներին ամերիկահայությունը, համախմբելով իր ներգաղութային ողջ մտավոր, նյութական, հասարակական, կուսակցական և այլ կարողությունները, դիվանագիտական, քաղաքական, ռազմական, մարդկային և հնարավոր բոլոր միջոցներով սատարել է հայրենի երկրի ու ժողովրդի պաշտպանութան, ազատագրության ու վերականգնման նվիրական գործին:

### **Ամերիկահայ հոգևոր-մշակութային կյանքը**

Հասարակական-տնտեսական, պատմաքաղաքական, ինչպես նաև մշակութային հանգամանքների բերումով ԱՄՆ մեկնած Հայ դաղթականությունը նոր երկիր է փոխադրել նաև ազգապահպանման հիմնական կովանները (եկեղեցի, դպրոց, պարբերական մամուլ, մշակույթ)՝ նպաստելով օտարության մեջ խարխալիող և ուժացման մշտական վտանգը դիմակայող հայության ստվար զանգվածների ազգային նկարագրի պահպանմանն ու ամերիկահայ գաղութի կազմավորմանը:

#### **ա. Հայ եկեղեցին ԱՄՆ-ում**

Ամերիկահայ հատվածի հոգևոր-եկեղեցական կյանքը, որպես հավաքական ամբողջութուն, զարդացել է Նոր երկրում հայության քվի հետզհետե ստվարացմանը զուգընթաց և էական առաջխաղա-

<sup>1</sup> Ճիգմեճեան Մ. Գ., նշվ. աշխ., 1930, էջ 376: Ավագյան Բ., նշվ. աշխ., 2000, էջ 116-120: Ամերիկայի հայ ազգային միության գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս մաև՝ Ավագյան Բ., Հայ առաջին լոբիստական կազմակերպությունը ԱՄՆ-ում, «Հայոց պատմության հարցեր», Երևան, 2003, քիվ 4, էջ 98-104: Նույնի, Մեծն Բրիտանիայում և Միացեալ Նահանգներում Հայ առաջին լոբիստական կազմակերպությունների հիմնադիր Միհրան Սվազլեանը և Նախագահ Վուտրո Ուիլսոնը, «Ազդակ» Բացառիկ, Պէյրուք, 2009, էջ 96-102:

ցում ունեցել հասարակական-տնտեսական ու պատմաքաղաքական հանգամանքների բերումով ԱՄՆ-ում հայերի հետագա հիմնավորմանը համաքայլ: Արդեն 1880-ական թվականների վերջին այդտեղ հաստատվել են ամերիկահայ առաջին եկեղեցական կենտրոնատեղին, պարբերական մամուլն ու դպրոցը, որոնք, հաջորդող տարիների ընթացքում ենթարկվելով ժամանակի, միջավայրի, ինչպես նաև ներգաղութային կյանքի տարաբնույթ պահանջների անմիջական ազդեցութեանը, կազմակերպվել ու դարձել են օտարութեան մեջ հայերի հոգևոր-մշակութային կյանքի զարգացման, հայապահպանման ու ազգանպաստ կարևոր առաքելութուն իրականացնող կարևոր ու անհրաժեշտ գործոններ:

Սկզբնական շրջանում հայ հոգևոր կյանքն ԱՄՆ-ում նախապատրաստական վիճակում էր. «Աչքերը դէպի հայրենիք սևեռեալ և վերադարձի բարեպատեհ օրուան ակնկառոյց սպասող հայ նժդեհը իր հոգեւոր սնունդը փշրանքներով միայն ստացած է»<sup>1</sup>: ԱՄՆ-ում ազգային եկեղեցի ունենալու պահանջն առավել խիստ է ղգացվել XIX դ. 80-ական թվականներից սկսած, այսինքն, երբ ժամանակավոր, վերադառնալու հույսով մեկնած անհատ հայ պանդուխտներին աստիճանաբար փոխարինելու են եկել ընտանիքներով, հիմնավորվելու մտադրութեամբ գաղթածները՝ իրենց հետ բերելով ընտանեկան ավանդական ծիսակարգի (ամուսնութուն, մկրտութուն, հուղարկավորութուն և այլն) պահպանման անհրաժեշտութուն: Ընդ որում, հայերն իրենց հետ ԱՄՆ են տարել երկու տեսակի կրոնական ժառանգութուն՝ մեծաթիվ հետևորդներ ունեցող հայ առաքելական եկեղեցին և համեմատաբար փոքրաթիվ հայ ավետարանական եկեղեցին՝ իր ժողովական ու երիցական հարանվանութուններով<sup>2</sup>:

Նախքան պաշտոնական եկեղեցի ունենալը, ԱՄՆ-ի հայերից շատերն իրենց հոգևոր մխիթարութունը գտնում էին ամերիկյան եկեղեցիներ, հատկապես ավետարանական ժողովարաններ հաճախելով, որտեղ քարոզում էին ինչպես օտար, այնպես էլ հայազգի պատվելիներ: Սակայն անգլերենի իմացութեան պակասը, նոր բարձրին ու միջավայրին հարմարվելու և ժողովարանները, ինչպես նաև տեղական եկեղեցական հաստատութունների կանխակալ վերաբերմունքը հայ ազգային կրոնի հանդեպ բազմաթիվ խոչընդոտներ էին հարուցում: Այնպես որ, «...ժամանակուայ մի համար ջերմեռանդ

<sup>1</sup> Մոշեղ եպիսկոպոս, Եղվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 95:

<sup>2</sup> Ավագյան Զ., Եղվ. աշխ., 2000, էջ 121-138:

Հայն կ'ապրէր անաղօթք եւ անեկեղեցի»<sup>1</sup>: Ուստի, ելնելով օտարութեան մեջ խարխափող հայրենակիցներին հոգևոր կյանքի թելադրած անհրաժեշտութեան հետևանքով, արդեն 1880-ական թվականների սկզբին, այսինքն՝ ԱՄՆ-ում հայերի թվի աստիճանաբար սովորացմանը զուգընթաց, ազգային ավետարանական անհատ նվիրյալների ջանքերով ստեղծվել են կրոնական հավաքատեղիներ, որտեղ այցելում էին նաև լուսավորչական հայեր: Ամերիկահայ առաջին աղոթատեղին՝ ավետարանական Մարտիրոսաց հայ ժողովական եկեղեցին, հիմնվել էր 1881 թ. Ուստրում իսրայելի աստվածաշնչային դպրոցի շրջանավարտ Հովհաննես Յազիջյանի կողմից: Երկու տարի անց՝ 1883 թ., վերջինիս օրինակով բժշկութեան մի ուսանող Հ. Յազիջյանի ընտանիքում հիմնել է կրոնական մեկ այլ հավաքատեղի<sup>2</sup>:

Ամերիկահայութեան ազգային ու հոգևոր կյանքի կազմակերպման գործում շրջադարձային էին Մարսելում լույս տեսնող «Արմենիա» թերթի խմբագիր Մկրտիչ Փորթուգալյանի այցը ԱՄՆ և օտարութեան մեջ հայապահպանմանն ուղղված համագործակցության նշանակութեան նրա հրատարակային ելույթները: Անդրադառնալով ԱՄՆ-ի հայերի ազգային ինքնահաստատման ու ինքնապահպանման առանցքային ու հիմնական նախապայմաններին՝ Մ. Փորթուգալյանը շեշտում էր. «Հայերը ուր որ գացած են, իրենց հետ տարած են նաև Հայ Եկեղեցին, Հայ Մամուլը և Հայ Դպրոցը, և այդ Ազգ. Երրորդութեան շնորհիւ յաջողած են իրենց Ազգ. գոյութիւնը պահել, հակառակ բոլոր օտարացուցիչ և աննպաստ պարագաներուն»<sup>3</sup>: Ամերիկահայութեան շրջանում հայապահպանման դժ. ժրին գործն իրականացնելու, եկեղեցի, կիրակնօրյա դպրոց, մամուլ և ազգային նշանակութեան այլ հաստատութիւններ հիմնելու նպատակով 1888 թ. Ուստրում ստեղծվել է «Կաճառ. Հայկական» անվանումը կրող ամերիկահայ առաջին կազմակերպութիւնը, որտեղ մինչև եկեղեցու հիմնումը ամեն կիրակի կրոնական ծիսակատարութիւններ են իրականացվել:

Նոր երկրում եկեղեցու շինութեան առիթով համայնքի ջերմում տարբեր կարծիքներ էին առկա. ոմանք, ելնելով ամերիկահայութեան ներկայից ու ապագայից, համաձայն էին նոր եկեղեցու կառուցման գաղափարին, իսկ ոմանք էլ, ելնելով Ամենայն Հայոց հայրապետ

<sup>1</sup> Մկունդ Ս., նշվ. աշխ., 1945, էջ 5:

<sup>2</sup> Yeretzian, A. S., նշվ. աշխ., էջ 28:

<sup>3</sup> Մուշեղ Ապիսկոպոս, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 106:

Մկրտիչ Խրիմյանի այն տեսակետից, թե՛ «տաղաւարիկ մը շինեցէք, ձեր վանքեր ու եկեղեցիներ կը սպասեն, հո՛ն է ձեր փառքը, և հո՛ն պէտք է ըլլաք դուք, և ոչ թէ օտար աշխարհի մէջ», գտնուում էին, որ առժամանակյա տարագրութեան մեջ գտնվող Հայութեան Համար լրիվ բավական է մի շինութիւն դնելն ու այն ժամանակավոր եկեղեցու վերածելը<sup>1</sup>:

Ամերիկահայոց առաջին հոգևոր հովիվ Հովսեփ վարդապետ Սարաջյանի ջանքերով և Համայնքի աջակցութեամբ 1891 թ. հունվարի 6 (18)-ին Ուստրում հիմնվել է առաջին Հայ առաքելական Ար. Փրկիչ եկեղեցին<sup>2</sup>:

Հետագա տարիներին երկրի Հայաբնակ այլ վայրերում ևս ազգային եկեղեցիների Հաստատումով Ամենայն Հայոց կաթողիկոս Մ. Խրիմյանի 1898 թ. հուլիսի 2-ի շրջաբերականով գաղութում հիմնվել է Ամերիկայի Հայ եկեղեցու թեմը՝ 30 Համայնքներով, իսկ Ուստրի Ար. Փրկիչ եկեղեցին վեր է ածվել Առաջնորդարանի՝ Հովսեփ եպիսկոպոս Սարաջյանի գլխավորութեամբ (1923 թվականից Առաջնորդարանը փոխադրվել է Բոստոն, 1927 թվականից մինչև օրս Նյու Յորքում է, իսկ 1928 թ. Կալիֆոռնիայի տարածքը պաշտոնապես անջատվել է ամերիկահայ եկեղեցիների Արևելյան թեմից՝ ստեղծելով Արևմտյան թեմ իր Առաջնորդարանով)<sup>3</sup>:

ԱՄՆ-ի Հայաշատ տարբեր քաղաքներում կազմավորված Հայ առաքելական եկեղեցիներն իրենց հոգևոր հովիվների, Համայնքի կարող ուժերից բաղկացած հոգաբարձուների խորհուրդների, առանձին բարերարների ու անհատ Հայերի ջանքերով հնարավորութիւնների ներածին չափով հոգացել են թեմի հոգսերն ու կարիքները, Առաջնորդարանի նախաձեռնութեամբ պարբերաբար իրականացվել են երկրի տարբեր քաղաքներով մեկ ցրված Հայրենակիցների մարդահամարներ, ձեռնամուխ են եղել օտարութեան մեջ խարխափող Հայութեան ազգային նկարագրի պահպանմանն ու Հայաստանում այլ գործունեութեան: Երկրի գրեթե բոլոր Հայ առաքելական եկեղեցիներում ստեղծվել են Հայաշունչ զբաղարաններ, որոնք ժամանակի ըն-

<sup>1</sup> Մուշեղ Նախկոպոս, նշվ. աշխ., Բ տարի, 1913, էջ 67, 70:

<sup>2</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 183: Ծիգմեճեան Մ. Գ., նշվ. աշխ., 1955, էջ 215:

<sup>3</sup> Megerdichian, R. The Armenian Churches in North America: Apostolic, Protestant and Catholic. A Geographical and Historical Survey (Society for Armenian Studies. Occasional Papers. No. 2). Cambridge, 1983, p. 1. Avakian, A. S. The Armenians in America. Minneapolis, 1977, p. 44. Աշճեան Ա. քհնյ., նշվ. աշխ., էջ 33:

Թացքում Հարստացվել են Հայրենիքից բերված, ինչպես նաև Համայնքի նվիրաբերած գրականությամբ ու մամուլով, քահանաների Հսկողությամբ բացվել են կիրակնօրյա, ավելի ուշ՝ նաև ազգային ամենօրյա դպրոցներ:

Կանոնավոր եկեղեցիներ ունեցող վայրերում իրականացվել են շաբաթօրյա, իսկ վարձու եկեղեցիներում՝ երկշաբաթյա կամ ամսական կրոնական ծառայություններ: Իրենց բնակավայրերում եկեղեցիներ կամ հավաքատեղիներ չունեցող հայերը հաճախել են մերձակա շրջաններում գործող եկեղեցիներ, իսկ հոգևոր հովիվներից զուրկ համայնքներում կրոնական ծառայություններն իրականացվել են այցելու քահանաների կողմից:

Ամերիկահայերը սիրով են հաճախել սուաքելական եկեղեցիներում անցկացվող կիրակնօրյա ծիսակատարություններին: Հատկապես բազմամարդ էին տերունական Հինդ տաղավարային տոնակատարությունները՝ Սբ. Մնունդը, Սբ. Զատիկը, Քրիստոսի Պայծառակերպությունը, Սբ. Աստվածածինը, Սբ. Խաչը, ինչպես նաև՝ այլ տոներ, որոնք բոլորն էլ անցնում էին ըստ պատշաճի կազմակերպված ու ճոխ: Գաղութի բազմաչերտ հավատացյալների համար ծիսակատարությունները պատարագվում էին զրաբար ու աշխարհաբար, երբեմն նաև՝ Թուրքերեն, հետագայում ավելի նվազ՝ անգլերեն<sup>1</sup>:

Ժամանակի ընթացքում ԱՄՆ-ի Հայ առաքելական եկեղեցին, ենթարկվելով ամերիկյան մշտապես փոփոխվող կյանքի ազդեցություններին, ձեռքազատվել է հնացած պաշտամունքային ձևերից ու ծիսակարգից. վերացվել է Սուրբ օրերի հին օրացույցը, այլևս պաշտոնապես չեն տոնվել տարբեր սրբերի ու անվանակոչութային օրերը, հին երկրում շաբաթ օրերին նշվող կրոնական տոները գործունյա ԱՄՆ-ում հիշվել են կիրակի օրերին, վերացվել են ցերեկային կրոնական ներկայացումներն ու իրիկնային ժամերգությունները, հավատացյալների կողմից եկեղեցու պատերի ու սրբապատկերների համբուրելը և այլն: Աստիճանաբար դուրս է մղվել ազգային եկեղեցակարգով 160 օր տևող ծոմապահությունը: Նոր երկրի ու ժամանակի առաջադրած պայմաններին համաքայլ ամերիկահայ եկեղեցական նորոգվող տոնացույցի մեջ սկսվել են ներառվել նաև ամերիկյան որոշ տոներ (Աշխատանքի, Գոհարանության, Մայրերի և այլն),

<sup>1</sup> Mirak, R. On New Soil. The Armenian Orthodox and Armenian Protestant Churches in the New World to 1915 (R. M. Miller, T. D. Marzik. ed. Immigrants and Religion in Urban America. Philadelphia, 1977, pp. 149, 159).

ինչպես նաև՝ ազգային սգատոներ (1894 թ. Սասունի ջարդը, 1915 թ. Հայոց Մեծ եղեռնը և այլն)<sup>1</sup>:

Եթե Հայրենի հողի վրա ծնված ու մեծացած ամերիկահայերի առաջին սերնդի ներկայացուցիչների համար հարազատ էր առաքելական եկեղեցիներում քահանաների անցկացրած կրոնական ծիսակատարությունների ավանդականությունը, ապա ամերիկյան կրթություն ստացած ամերիկահայ երկրորդ սերնդի ներկայացուցիչների համար արդեն ձանձրալի էր այդ ամենը: Ըստ այդմ, հետզհետե նվազել է առաքելական եկեղեցիներ հաճախող ամերիկահայերի թիվը, որոնք նախընտրել են հարազատ եկեղեցու հետ հաղորդակցվել առավելապես հայ եկեղեցական տոների և համազգային նշանակություն միջոցառումների, ինչպես նաև հայություն համար սրտակարգ առիթներով: Ոմանք վճարել են տարեվարձը՝ պայմանով, որ հնարավորին չափ քիչ ներկա գտնվեն ավանդական եկեղեցիների երկարաշունչ ծիսակատարություններին<sup>2</sup>:

Ամերիկահայերը, որոնց զգալի մասը դեռևս Հայրենի երկրում ամերիկյան բողոքական քարոզիչների ազդեցությունը ավետարանականություն ընդունած պանդուխտներ էին, ԱՄՆ-ում հիմնել են նաև ավետարանական աղոթատեղիներ ու եկեղեցիներ, որտեղ անց են կացվել ամենաբազմաթիվ քարոզներ:

1881 թ. Ուստրում հիմնվել է ամերիկահայերի առաջին ավետարանական աղոթատեղին՝ Մարտիրոսաց հայ ժողովական եկեղեցին, ավետարանականներ դուրս. Մինաս Կիրակոսյանի և Հովհաննես Յազիճյանի ջանքերով՝ քաղաքում կազմավորված տնային աղոթատեղիների իրենց հետևորդների համար<sup>3</sup>:

ԱՄՆ-ում հայ ավետարանականները (ժողովականներ, երիցականներ, մկրտչականներ, մեթոդիստներ, եպիսկոպոսականներ) մշտապես գտնվել են ամերիկյան համանուն կրոնական ուղղությունների բարոյական ու նյութական աջակցության ներքո (իրենց եկեղեցիները, մատուռները, ժողովարաններն ու սրահները բազմիցս սիրահոծար տրամադրել են հայ ավետարանականներին), հանգամանք, որից

<sup>1</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 194:

<sup>2</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1977, էջ 144: Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 103: «Կոչնակ», 3.8.1912:

<sup>3</sup> Քասունի վեբ. Ե. Ս., Լուսաշաղի. Պատմություն Հայ Անտարանական շարժման (1846-1946), Պէյրոս, 1947, էջ 332: Tootikian, V. H. The Armenian Evangelical Church. Detroit, 1982, p. 65. Ashjian, Archbishop M., նշվ. աշխ., էջ 16:

գուրկ էր ամերիկահայ առաքելական եկեղեցին:

1901 թ. դեկտեմբերի սկզբին Ուստրի Հայ ավետարանականները քաղաքի Ավետարանական առաքելության և Ամերիկյան Համամիսիոներական խորհրդի Համատեղ ջանքերով ու նյութական օժանդակությամբ կառուցել են Մարտիրոսաց եկեղեցու իրենց սեփական ադոթատեղին<sup>1</sup>:

Թնայետ ամերիկահայ ավետարանական սպասավորները Հիմնականում ամերիկյան կրթություն ստացածներ էին, այդուհանդերձ, իրենց Համայնքների կրոնական Հարցերը Հոգալուց բացի, նրանք զգալի ներդրում են ունեցել նաև գաղութի ալգային-կրթական մակարդակը բարձրացնելու, օտարացման աճող վտանգի դեմ տեղի Հայ երիտասարդությունը Համախմբելու, Հայրենիքին ու ժողովրդին սատարելու և Հայնապաստ այլ ձեռնարկներ կազմակերպելու և իրականացնելու գործում: 600 Հայ մանուկների Համար բացվել են կիրակնօրյա դպրոցներ, դեռահասների Հողևոր նկարագիրը սպառնալու նպատակով ամերիկահայ ավետարանականների ջանքերով ստեղծվել են 500 անդամ ներառող թվով 12 Քրիստոնեական ջանասիրաց ընկերություններ, կազմվել են եկեղեցախնամ ու որբախնամ եռանդուն գործունեություն ծավալող Տիկնանց բարեսիրաց ընկերություններ և այլն<sup>2</sup>:

Դարասկզբին երկրով մեկ տարածված ամերիկահայ ավետարանական եկեղեցիները միավորվել են՝ ստեղծելով միջեկեղեցական կազմավորումներ (1901 թ. Ուստրում՝ ԱՄՆ-ի Արևելյան նահանգների Հայ ավետարանական եկեղեցիների միությունը, 1908 թ. արևմտակողմի՝ Կայիֆոռնիայի Հայ ավետարանական եկեղեցիների միությունը): Արդեն 1923 թ. վերոհիշյալ առաջին միություն կազմում կային կանոնավոր կազմակերպված ավետարանական 10 եկե-

<sup>1</sup> Մուշեղ եպիսկոպոս, նշվ. աշխ., Բ տարի, 1913, էջ 381:

<sup>2</sup> Megerdichian, R., նշվ. աշխ., էջ 20-21: Ատանալեան վեր. Կ. Պ., Յուշարձան Հայ Անտարանականաց և Անտարանական Եկեղեցոյ, Ֆրեզնո, 1952, էջ 433, 435, 448, 456, 457: Մուշեղ եպիսկոպոս, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 104: Ամերիկահայ հանրագիտակ տարեգիրք, 1925, էջ 187, 189, 191: Ամերիկահայ հանրագիտակ տարեգիրք, կազմ. Յ. Խաչմանեան, Պոսթրն, 1926, էջ 197, 199: Wallis, W. D. Fresno Armenians (to 1919). Lawrence. 1965, p. 63. Հայկական Բարեգործական Ընդհանուր Մյուսիսնը Քայիֆորնիոյ մէջ, Ֆրեզնո, 1923, էջ 35, 88: Ապարեգ: Ժողովածու տասնամեակի առթիւ, (1908-1918), Ֆրեզնո, 1918, էջ 310: Անդրեասեան Ա., նշվ. աշխ., Լոս Անճելըս, 1981, էջ 23: Հովիւ Եղեմի, Եղեմական յուշարձան և Էջմիածնական յուշեր. Չոն Եղեմի հիմնարկութեան և Եղեմի իովիսի ուսուցչութեան յիսնամեակներուն, Ֆրեզնո, 1950, էջ 62-63:

ղեցիներ և 14 առաքելութուններ, իսկ երկրորդում՝ 7 եկեղեցիներ և 3 առաքելութուններ<sup>1</sup>:

Այդ երկու միութուններն ամերիկյան օրինակով 1918 թ. Հունիսի 7-ին Ուստրում Հիմնել են իրենց կրոնական գաղափարաբանության վրա Հիմնված, սակայն առավելապես աշխարհիկ նպատակներ հետամտող Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցությունը, որը կոչված էր բարոյապես ու նյութապես սատարել ինչպես ամերիկահայությանը, նույնպես և հեռավոր հայրենի ժողովրդի հոգևոր, կրթական, մշակութային ու առօրյա այլ կարիքներին, աջակցել ավետարանական եկեղեցիների կառուցմանը ԱՄՆ-ում և հայրենիքում, օգնել Հայոց ցեղասպանությունից վերապրածներին, մասնակցել Հայաստանի Առաջին հանրապետության վերաշինությունից աշխատանքներին և այլն:

Ամերիկահայ ավետարանական եկեղեցին, սնվելով առաքելական եկեղեցու քրիստոնեական դրույթներով և համարվելով նրա բաղկացուցիչ մասը, կառչած էր ազգային մշակույթի, լեզվի, սովորույթների մեջ ավանդականի անվերապահ պահպանմանը: Հայ ավետարանականները քրիստոնեության մասին քարոզների հետ մեկտեղ լուսաբանում էին, որ նոր երկրի հարստությունը կյանքում անհրաժեշտ է կողմնորոշվել դեպի արդիականն ու առաջադիմականը, կոչ էին անում ընդօրինակել ամերիկյան գործնական մտածելակերպն ու ապրելաոճը: Ամերիկահայ ավետարանականներն իրենց հոգևոր քարոզներն իրականացնում էին ինչպես հայերեն ու թուրքերեն, այնպես էլ՝ անգլերեն:

Ժամանակի ընթացքում ԱՄՆ-ում Հայություն թվի ստվարացման հետ մեկտեղ Հիմնվել են նաև կաթողիկե եկեղեցիներ ամերիկահայ փոքրաթիվ կաթողիկե հետևորդների համար: Ամերիկահայ առաջին կաթողիկե հոգևորականը Մարտիրոս Մկրյանն էր, որը, 1899 թ. ժամանելով նոր երկիր, ստանձնել է Բոստոնի Հայ կաթողիկե համայնքի հոգևոր հովիվ պարտականությունը: Սակավաթիվ լինելու պատճառով Հայ կաթողիկե ներկայացուցիչները չունեին սեփական եկեղեցիներ կամ կազմակերպված ժողովարաններ և իրենց հոգևոր ծառայություններն իրականացրել են տեղի ամերիկյան կաթողիկե եկեղեցիներում, ունեին «հոգևոր եղբայրներ ու քույրեր» անվանումը կրող պաշտամունքային ծառայություններ իրականաց-

<sup>1</sup> Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 99: Yeretzian, A. S., նշվ. աշխ., էջ 29: Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 100.

նող խմբեր: 1910 թ. Նյու Յորքում հիմնվել է առաջին Հայ կաթողիկե եկեղեցին, որին Հաջորդել են ևս հինգը<sup>1</sup>:

1919 թ. ԱՄՆ-ում կար Հայ առաքելական 15, ինչպես նաև՝ ավետարանական 15 եկեղեցիներ և շուրջ 20 առաքելություններ: Հոգևորականների թիվը մոտ էր 100-ի, որից ավելի քան 50-ը ավետարանական քարոզիչներ էին: Արդեն 1920-ական թվականների վերջին ամերիկահայերի 70–80%-ը պատկանել է Հայ առաքելական, 15%-ը՝ Հայ ավետարանական եկեղեցիներին, իսկ 5%-ը՝ կաթողիկե և քրիստոնեական այլ ուղղությունների կամ աղանդների<sup>2</sup>:

Այսպիսով, Հայ եկեղեցին կրոնական և գաղափարական տարածայնություններ ունեցող իր հարանվանական ճյուղավորումներով, միմյանցից անկախ ու, միաժամանակ, միասնաբար, որպես գաղութի հոգևոր կյանքում առանցքային դեր ու նշանակություն ունեցող գործոն, գնահատելի աշխատանք է իրականացրել ամերիկահայության շրջանում ազգային ոգին ու նկարագիրը, ավանդույթներն ու սովորույթները, վարքն ու բարքը, հեռավոր Հայրենիքի ու ժողովրդի հետ կապն ամուր պահելու ուղղությամբ, հոգևոր, բարոյական ու նյութական նպաստ բերել ինչպես գաղութի, նույնպես և՛ Հայրենի երկրի Հայությանը, վճռորոշ դեր ու նշանակություն ունեցել ամերիկահայ գաղութի կազմակերպման ու Հայապահպանման գործում:

#### **բ. Հայ մամուլը և տպարանները ԱՄՆ-ում**

ԱՄՆ-ի Հայության ազգային համախմբման ու պահպանման գործում զգալի դեր է կատարել նաև տեղի Հայ մամուլը: Հիմնադրվելով ինչպես անհատ հայերի, այնպես էլ ազգային տարբեր կուսակցությունների, կազմակերպությունների, միությունների և ընկերությունների նախաձեռնությամբ՝ ամերիկահայ մամուլը գոյատևել է գլխավորապես բարերարների ու բաժանորդների նյութական բարոյական աջակցության շնորհիվ:

Ամերիկահայ առաջին պարբերական մամուլը՝ «Արեգակը», հիմնադրվել է 1888 թ. Ջերսի Սթիում «ամերիկահայ յուզրուլթեան

<sup>1</sup> Wertsman, V., նշվ. աշխ., էջ 4–5: Boghosian, H. B., նշվ. աշխ., էջ 183: The Armenians in Massachusetts, էջ 70: Mirak, R., նշվ. աշխ., 1981, էջ 148: Megerdichian, R., նշվ. աշխ., էջ 23: Ալեյի մանրամասն տե՛ս Աճեմեան Հ., Ավնարի Սիացեալ Նահանգներու եւ Գաճատայի Հայ կաթողիկե համայնքի պատմութեան, Լոս Անճելես, 2009, 190 էջ (հայերէն, անգլերէն):

<sup>2</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 195: Yeretzian, A. S., նշվ. աշխ., էջ 28: Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 99, 100: Wertsman, V., նշվ. աշխ., էջ 54, 57:

Հայր» Հայկակ էկիւնյանի ջանքերով<sup>1</sup>: Հետագայում նրա հրատարակ-  
չական բեղուն գործունեության շնորհիվ հրատարակվել են մի շարք  
այլ պարբերականներ ևս («Սուրհանդակ»<sup>2</sup> 1889–1890 թթ., Ջերսի  
Սիթի, «Ազատութիւն»՝ 1890–1892 թթ., Նյու Յորք, «Տիպրիս»՝  
1897–1899 թթ., Նյու Յորք, «Քաղաքացի»՝ 1902–1909 թթ., Ֆրեդնո,  
«Նոր կեանք»՝ 1912 թ., Ֆրեդնո):

Ավելի երկար է գոյատևել բժիշկ ու ազգային գործիչ, ակնեցի  
Մ. Սմբատ Գաբրիելյանի հրատարակած «Հայք» երկամսյա պարբե-  
րականը (1891–1898 թթ., Նյու Յորք): Տարբեր ժամանակահատված-  
ներում ազգասեր ու նվիրյալ մի խումբ անհատ Հայերի ջանքերով  
ԱՄՆ-ում սկսել են լույս տեսնել բազմաթիվ այլ պարբերականներ  
ևս, որոնք, անկախ իրենց փոքրաթիվությունից ու կարճատևությունից,  
զգալի ներդրում են ունեցել ամերիկահայ մտավոր կյանքի զարգաց-  
ման գործում, մանավանդ որ գոյատևել են՝ դիմակայելով թե՛ ֆի-  
նանսական և թե՛ խմբազրկան լուրջ զեփարություններին: Դրանք  
էին՝ «Արմենիան» (1890-ական թթ., Բոստոն), «Հայոց աշխարհը»  
(1895 թ., Նյու Յորք), «Կայծակը» (1895–1896 թթ., Լինն), «Եփրա-  
տը» (1897 թ., Ուստր-Նյու Յորք) և այլն: Առաջնեկ այդ թերթերից  
մի քանիսը տպագրական միջոցների ու հնարավորությունների բա-  
ցակայությունից պատճառով լույս են տեսել նաև խմորատիպ, ձեռա-  
գիր տեսքով: Հետագայում, տեխնիկական բարվոք պայմանների  
շնորհիվ, ամերիկահայ մամուլն ընդունել է իր ժամանակի պարբե-  
րականներին հատուկ ձև ու համապատասխան բովանդակություն<sup>3</sup>:

ԱՄՆ-ում հայ քաղաքական կուսակցությունների ի հայտ գա-  
լու հետ մեկտեղ ծնունդ են առել բազմաթիվ նոր պարբերականներ՝  
կուսակցական պաշտոնաթերթեր, որոնք, ի տարբերություն առան-  
ձին անհատների կողմից հրատարակվածների, գտնվել են իրենց կու-  
սակցությունների մշտական հովանավորությունից ներքո, ստացել  
նյութական աջակցություն, ունեցել արհեստավարժ խմբագիրներ,  
ինչպես նաև երկրի ներսում ու դրսում գործող զգալի թվով թղթա-  
կիցներ, որոնց լավ կազմակերպված գործունեությունը ու թերթի

<sup>1</sup> Մուշեղ եպիսկոպոս, Գլխ. աշխ., Ա տարի, 1912, էջ 268:

<sup>2</sup> Այսուհետև Գլխի պարբերական մամուլի վերաբերյալ տվյալները, ի շարս հիշա-  
տակվող այլ գրականության, մեջբերվում են ըստ՝ Ավագյան Է., Գլխ. աշխ., 2000, էջ  
139–154:

<sup>3</sup> Մուշեղ եպիսկոպոս, Գլխ. աշխ., Ա տարի, 1912, էջ 145: Malcom, V. M., Գլխ. աշխ.,  
էջ 124:

տպաքանակի տարածման համակարգով էլ պայմանավորվել է կուսակցական մամուլի հեղինակությունն ու ժողովրդականությունը, ապահովվել էր կարակեցությունը:

Ամերիկահայ կուսակցական մամուլի առաջնեկներն էին 1899 թ. Նյու Յորքում լույս տեսած Վերակազմյալ Հնչակյան կուսակցության պաշտոնաթերթ «Զայն հայրենհացը» և Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության «Հայրենիքը», հետագայում նաև «Ասպարէզը» (1908 թ., Ֆրեզնո):

Ժամանակի ընթացքում իրենց տեական պաշտոնաթերթները, ինչպես նաև ազգային, գրական, քաղաքական, բարոյագիտական բազմազան պարբերականներն են ունեցել նաև Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան («Երիտասարդ Հայաստան»՝ 1903 թ., Բոստոն), Սահմանադրական-դեմոկրատական («Ազգ»՝ 1907 թ., Բոստոն), Հայ դեմոկրատական-լիբերալ («Ազգ-Պահակ»՝ 1921 թ., «Պայքար»՝ 1923 թ., Բոստոն), Ռամկավար-ազատական («Նոր կեանք»՝ 1914 թ., Ֆրեզնո, «Արօր»՝ 1919 թ., Ֆրեզնո, «Նոր կեանք-Արօր»՝ 1921 թ., Ֆրեզնո, «Նոր օր»՝ 1922 թ., Ֆրեզնո), ամերիկահայ բանվորական («Գործաւոր»՝ 1916 թ./1921 թ., Դետրոյտ, Նյու Յորք, «Նոր հոսանք»՝ 1921 թ., Նյու Յորք, «Աշխատաւոր»՝ 1921 թ., Նյու Յորք, «Բանւոր»՝ 1922 թ., Նյու Յորք, «Գործաւոր»՝ 1924 թ., Նյու Յորք, «Պրոլետար»՝ 1924 թ., Նյու Յորք, «Նոր աշխարհ»՝ 1924 թ., Նյու Յորք) կուսակցությունները, ինչպես նաև ամերիկահայ տարբեր ընկերությունները, միություններն ու կազմակերպությունները (Ամերիկահայ չեզքների [Ոչ կուսակցականներ] միության «Արշալոյսը»՝ 1920 թ., Նյու Յորք, Հայ ազատական միության «Ազատ կարծիք»՝ 1922 թ., Նյու Յորք):

Պաշտոնաթերթերից բացի, ամերիկահայ չեզքային կուսակցությունները լույս են ընծայել ազգային, գրական, քաղաքական, բարոյագիտական բնույթի բազմաթիվ պարբերականներ ևս, ազգային և այլ իրադարձությունների հոբելյանական առիթներով հրատարակել են պարբերաբար կամ ամենամյա լույս տեսնող բացառիկ համարներ:

Ամերիկահայ թերթերը, որոնք, ԱՄՆ-ից բացի, լեզու և անլեզու ճանապարհներով տարածվել են Օսմանյան և Ռուսական կայսրություններում, ինչպես նաև եվրոպական ու հայաշատ այլ երկրներում, իրենց էջերում չլիսավոր տեղ են հասկացրել ազգային խնդիրներին, անդրադարձել օտար բունակալների դերիշխանության տակ հեծող հայրենի հեռավոր ժողովրդի թշվառ վիճակին ու նրա ազա-

տագրման ուղիներին՝ շատ հաճախ նույնիսկ տուրք տալով կուսակցական անհարկի վիճաբանությունները: Թերթերում տպագրվել են Հայոց պատմությանը, գրականությանը, լեզվին ու մշակույթին առնչվող հոդվածներ, Հայ և օտար գրականության նմուշներ, ամերիկահայ գաղթականների կյանքին ու կենցաղին, նոր երկրի պայմաններին նրանց ընտելացմանն ու հարազատ երկրին մշտապես սատարելու կոչ անող նյութեր և այլն: Ընդ որում, երկրի արևմտակողմի Հայ կուսակցական մամուլը, ելնելով այդտեղ Հայության աստիճանաբար հիմնավորվելու անառարկելի փաստից, ավելի հակված էր նրանց համար լուսաբանել ամերիկյան ապրելակերպին, լեզվին, կարգ ու կանոնին, հպատակությանն ու նոր կյանքի բարքերին հարմարվելու հետ կապված հարցերը, մինչդեռ արևելակողմի մամուլը մշտաբար էր պահում ամերիկահայության՝ Հայրենիք վերադառնալու փափաղը՝ ԱՄՆ-ը համարելով Հայ պանդուխտների ժամանակավոր կացարան:

Ամերիկահայերն ունեին նաև ավետարանական և առաքելական եկեղեցիների կողմից հրատարակվող կրոնական մամուլ: Ընդ որում, ի տարբերություն առաքելական եկեղեցու փոքրաթիվ ու կարճատև հրատարակությունների, ավետարանական եկեղեցու բազմաթիվ ու տևական հրատարակությունները, կրոնականից բացի, մեծ տեղ են հատկացրել նաև ազգային ու գաղութահայ խնդիրներին:

ԱՄՆ-ի Հայերի ջանքերով լույս են տեսել նաև կրոնական, գաղութային, ազգային, գրական, գիտական, իմաստասիրական, հասարակական, քաղաքական, տնտեսական, առևտրական, առողջապահական, բժշկական, մանկական, երիտասարդական, ուսումնական, երգիծական և տարաբնույթ այլ պարբերականներ:

Նոր երկրում Հայերի հետագա ստվարացմանն ու հաստատմանը համընթաց ամերիկահայ մտավորականների ջանքերով սկսել են լույս տեսնել օտար, ինչպես նաև օտարացող Հայ հասարակայնությանը Հայ կյանքին, մշակույթին, գրականությանը, պատմությանը, եկեղեցուն, քաղաքական վիճակին ու Հայոց հարցին ծանոթացնելու կոչված մի շարք անգլիալեզու ("Armenia" 1904 թ., Բոստոն, "The New Armenia" 1915 թ., Նյու Յորք, "Asbarez" 1908 թ., Գլենդեյլ, "Hairenik Monthly" 1922 թ., Բոստոն, "Armenian News" 1903 թ., Չիկոկո, "Armenian Observer" 1910 թ., Լոս Անջելես, "The Oriental World" 1913 թ., Նյու Յորք, "The Armenian Herald" 1917 թ., Բոստոն, "Information

Bureau" 1919 թ., Նյու Յորք և այլն) պարբերականներ:

ԱՄՆ-ում հաստատված կիլիկիահայ թրքախոս հատվածը ևս ունեցել է իր պարբերական մամուլը, որը լույս է տեսել հայատառ թուրքերեն («Կիլիկիա» 1916 թ., Նյու Յորք, «Կիլիկիա Սալնամէ-սի» 1918 թ., Նյու Յորք, «Բահնիւմա» 1919 թ., Նյու Յորք):

ԱՄՆ-ի հայաշատ խոշոր քաղաքներում հայ մամուլի ի հայտ գալով սկզբնավորվել են նաև ամերիկահայ առաջին տպարանները (Ջերսի Սիթիում՝ «Արեդակ», «Հ. Էլիենեան», Նյու Յորքում՝ «Կոչ-նակ», «Արմենիա», «Շրիտասարդ Հայաստան», «Արաքս», «Լրաբեր», Բոստոնում՝ ««Հայրենիք» լրագրի», «Ձայն Հայրենեաց», ««Ազգ» լրագրի», «Ատլանտեան», «Կրան», ««Պահակ» լրագրի», «Փրես», «Շիրակ», «Շանթ», Ֆրեդնոյում՝ «Քաղաքացի», «Ասպարէզ», «Նոր օր», Կալիֆոռնիայում՝ «Ա. Տումանեան», Ֆիլադելֆիայում՝ «Միածինեան եղբայրներ», Դետրոյտում՝ «Շինարար» և այլն), որտեղ, պարբերականներից բացի, հրատարակվել է նաև գաղութա-հայ բաղմամբույթ գրականություն<sup>1</sup>:

Այսպիսով, ԱՄՆ-ում հայ մամուլի սկզբնավորումն ու ծավալումը, դրա հետ մեկտեղ նաև տպագրության զարգացումը շրջադարձային կարևոր նշանակություն են ունեցել գաղութի մտավոր կյանքի կազմակերպման ու առաջընթացի համար:

#### գ. Հայերի կրթական-մասնագիտական զարգացումը ԱՄՆ-ում

Ամերիկահայություն կյանքում կարևոր տեղ է զբաղեցրել կրթության հարցը, այնպես որ նյութական միջոցներից սուղ ընտանիքներն անգամ հոգացել են, որ իրենց երեխաները ստանան գոնե նախնական կրթություն: Թեև հայերն ԱՄՆ էին եկել համեմատաբար ցածր կրթական մակարդակ ունեցող երկրներից (Օսմանյան կայսրության բնակչության 70%-ը և ցարական Ռուսաստանի 80%-ը անկարող էր կարդալ կամ գրել մայրենի լեզվով), այդուհանդերձ, նրանց 83%-ը գրագետ էր. կարող էր կարդալ և գրել առնվազն մեկ լեզվով: ԱՄՆ ժամանած ուսյալ հայերն ընդհանուր առմամբ իրենց կրթական մակարդակով, լեզուների իմացությամբ, գիտություն ու արվեստի բնագավառներում ունեցած ձեռքբերումներով զբաղիորեն

<sup>1</sup> Կիրակոսյան Ա., Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794–1967). Համահավաք ցանկ, Երևան, 1970, էջ 617, 618: Բաբոյան Մ. Ա., Հայ պարբերական մամուլը. Մատենագիտական համահավաք ցանկ (1794–1980), Երևան, 1986, էջ 410: Թեղլիկ, Տիպ ու տառ, Կ. Պոլիս, 1913, էջ 186–188:

գերազանցել են Համանման այլ ազգերի ներկայացուցիչներին, որոշ դեպքերում՝ անգամ ամերիկացիներին (բացառություն են կազմել սկանդինավյան երկրներից, Մեծ Բրիտանիայից և բրիտանական դադութներից եկածները): Դարասկզբին ամերիկահայերի շրջանում Հայերենի իմացության մակարդակը կազմել է ավելի քան 90%, անգլերենինը՝ շուրջ 60%<sup>1</sup>:

Նոր երկրում Հայերի գերակշիռ մասն ուներ երկլեզվյա խոսակցական մակարդակ, ինչը կապված էր տեղի օտար (Հանրային և գիշերային), ինչպես նաև՝ Հայկական դպրոցներում, ապա նաև՝ ամերիկյան բարձրագույն կրթարաններում (քոլեջներ և Համալսարաններ) նրանց ուսանելու փաստի հետ:

Ամերիկյան Գաղթականական Հանձնախմբի կողմից 1908–1909 թթ. երկրի 37 քաղաքների Հանրային դպրոցներում անցկացված ուսումնասիրությունների Համաձայն, դրանցում սովորել են 1.031 Հայ երեխաներ: Ընդ որում, նրանց զգալի մասն ուսանել է մանկապարտեզից մինչև 8-րդ դասարանը ներառող տարրական դասարաններում, Հատկապես՝ 1-3 դասարաններում (օրինակ, Նյու Յորքում՝ 83%-ը, Ուստրում՝ 78%-ը): Միաժամանակ, եթե խոսվացի, պորտուգալացի, գերմանացի, ռուս և այլազգի դպրոցականները, աշխատել սկսելու և այլ Հանգամանքներից ելնելով շատ Հաճախ վաղ Հասակից Հեռացել են դպրոցից, ապա Հայերի մոտ ընդունված էր առավելազույն օգտվել դպրոցի ընձեռած Հնարավորություններից (այսպես, 1917 թ. Ֆրեդնոյի Հանրային դպրոցների վերջին բարձր դասարաններում ուսանողների 50%-ը Հայեր էին, կամ՝ 1923 թ. Լոս Անջելեսի Հանրային դպրոցներում սովորում էին շուրջ 350 Հայեր)<sup>2</sup>:

Թեև Հայ երեխաների շրջանում ևս բացառված չէին աշխատելու Հանգամանքից ելնելով դպրոցը թողնելու փաստերը, այդուհանդերձ, դրանք աննշան էին: Փոխարենը առկա էին դեպքեր, երբ ԱՄՆ եկած և նոր լեզվին անտեղյակ բազմաթիվ Հայ երիտասարդներ, Հաղթահարելով հոգեբանական խոչընդոտները, ստիպված են եղել ուսանել իրենցից ցածր տարիքի երեխաների հետ: Անգլերենին անտեղյակ Հայ գաղթական երեխաների Համար կային նաև ոչ աստիճանակարգված՝ «չոգենավային դասարաններ», ինչպես նաև կի-

<sup>1</sup> Mahakian, Ch., նշվ. աշխ., էջ 68, 79: Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 104: Yeretzian, A. S., նշվ. աշխ., էջ 45: Wallis, W. D., նշվ. աշխ., էջ 54: Wertsman, V., նշվ. աշխ., էջ 54.

<sup>2</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 271, 272: Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 107: Yeretzian, A. S., նշվ. աշխ., էջ 51:

րակնօրյա ու գիշերային դպրոցներ<sup>1</sup>:

Ժամանակի ընթացքում ԱՄՆ-ի Հայաշատ տարբեր քաղաքներում, գլխավորապես դաղթական Հայերի երկրորդ սերնդի ներկայացուցիչների Համար, Հանրային ու գիշերային դպրոցների կողքին ստեղծվել են նաև մի շարք Հայկական դպրոցներ ու ճեմարաններ: 1880-ական թվականների վերջին էվերեկցի Բարսեղ Վարդուկյանի կողմից Նյու Յորքում հիմնվել է ԱՄՆ-ի Հայկական առաջին դպրոցը՝ Վարդուկյան վարժարանը<sup>2</sup>: Մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը Հայ առաքելական և ավետարանական եկեղեցիների ջանքերով Հայկական դպրոցներ են բացվել ԱՄՆ-ի Հայաշատ գրեթե բոլոր վայրերում: Դրանք հիկեղեցու թեմական դպրոցներ էին, այլ գործել են տարբեր հարանվանությունների պատկանող Հայ երեսյանների Համար:

Հայկական դպրոցները մշտապես գտնվել են հոգևորականների, ուսուցիչների, համայնքի անդամների և հատկապես ազգային դպրոցների հիմնասյունը հանդիսացող տիկնանց ամենօրյա հսկողութան ու հոգածութան ներքո: Կարիքավորները սովորել են անվճար: Հայկական դպրոցներում պարապմունքները կազմակերպվել են ամեն օր՝ կեսօրից հետո՝ ուշ ժամերին, ամերիկյան Հանրային դպրոցներում դասընթացների ավարտից հետո կամ կիրակի առավոտյան: Այստեղ մայրենի լեզվին արդեն ընտանեկան միջավայրից ծանոթ երեխաներին ուսուցանել են Հայոց լեզու (գրել, կարդալ), Հայոց և ընդհանուր պատմություն, կրոն, աշխարհագրություն, մաթեմատիկա և այլ առարկաներ: Դասագրքերը մեծ մասամբ Հայթիայթվել են դրսից: Դասարաններն աղքատիկ էին, գերբեռնված ու փոքր:

Ամերիկահայ համայնքում գործող ճեմարաններից առավել Հայտնի էր 1917 թ. Նյու Յորքի նահանգի Ուեսթ-Սենթ Լեյք վայրում հիմնված Հայկազյան ճեմարանը: Այն ուներ միջին և բարձր դասարաններ, որտեղ ԱՄՆ-ում ուսանած առաջնակարգ Հայ մասնագետներն ամերիկյան քոլեջներին համազոր ակադեմիական դասընթացներ են իրականացրել գիտական երկրագործության և դյուղատնտեսության տարբեր ճյուղերի վերաբերյալ խնդիր ունենալով ամերիկահայ երիտասարդությանը նախապատրաստել երկրի բարձրագույն կրթարաններում իրենց գիտելիքները խորացնելուն, ապա նաև դրանք Հայրենիքի վերաշինության գործին ծառայեցնելուն<sup>3</sup>:

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Հովի Եղեմի, նշվ. աշխ., էջ 8:

<sup>3</sup> Ավագյան Զ, նշվ. աշխ., 2000, էջ 161–163:

Ազգային դպրոցների կողքին ամերիկահայուլթյան Հայապահպանման գործում կարևոր դեր ու նշանակություն են ունեցել նաև երկրի Հայաշատ տարբեր վայրերում հիմնված ընթերցասրահներն ու գրադարանները, որոնք իրենց բուն նպատակից բացի ծառայել են նաև որպես Հայոց լեզուն, մշակույթը, դադուլթային ու ազգային Հարցերը լուսաբանող կենտրոն-հավաքատեղիներ, լսարան-դասասենյակներ<sup>1</sup>:

Հակառակ սուղ միջոցներին, ամերիկյան Հանրային դպրոցների Հայ շրջանավարտների զգալի մասն իր կարևոր և անհրաժեշտ խնդիրն է համարել տեղի բարձրագույն կրթարաններում ուսումնառությունը շարունակելն ու ձեռք բերած գիտելիքները կյանքում կիրառելը: Եվ պատահական է, որ ամերիկյան Հանրային դպրոցներում, քոլեջներում ու համալսարաններում ամերիկաբնակ գաղթական այլ ազգերի Համեմատություն մեծ թիվ են կազմել նաև Հայ ուսանողները (Ամերիկահայ ուսանողական միություն վիճակագրական տվյալների համաձայն, 1917 թ. ԱՄՆ-ում կար շուրջ 300, 1923 թ.՝ 500 հայ ուսանող)<sup>2</sup>:

Ամերիկահայերն ուսումնառություն համար առավելապես ընտրել են հետևյալ մասնագիտությունները՝ ինժեներություն, աստվածաբանություն, բժշկություն, ատամնաբուժություն, մանկավարժություն, իրավունք, գյուղատնտեսություն, ճարտարապետություն, քիմիա, հանքաբանություն, քաղաքատնտեսություն, փիլիսոփայություն, դեղագործություն, անտառաբանություն և այլ բնագավառներ<sup>3</sup>:

ԱՄՆ-ում ուսանող Հայերի մեծ մասը՝ գրեթե 90%-ը, սեփական ուժերով է հարթել իր կրթական ուղին. ուսումնառությունը զուգահեռ կատարել է տարբեր աշխատանքներ՝ Հայթայթելով ինչպես ապրուստի, այնպես էլ ուսման միջոցներ: Կարիքավոր ուսանողներին նյութապես սատարելու նպատակով ԱՄՆ-ի գործարար ու բարեսեր մի խումբ Հայերի կողմից հիմնվել ու նյութատամուսույց աշխատանք

<sup>1</sup> Mahakian, Ch., նշվ. աշխ., էջ 69, 70: "The Armenian Review." Vol. 7 (3), 1954. «Հայրենիք», 3.7.1899: «Չայն հայրենաց», 25.10.1905: Կանոնագիր եւ գրացուցակ Ռեւոլյուցիոնրի Հայկական Գրադարանի Միութեան (հիմնվ. 1905 թ.), Ու. Հոբրեն, 1916, էջ 1-2: Yeretzian, A. S., նշվ. աշխ., էջ 50:

<sup>2</sup> Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 110-111:

<sup>3</sup> «Կոչնակ», 8.11.1913; 16.7.1910: Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 109:

են ծավալել Կրթասիրաց տարբեր ընկերություններ<sup>1</sup>:

Ամերիկահայ ուսանող երիտասարդությունն իր բարեխիղճ աշխատասիրության և գիտության տարբեր բնագավառներում դրսևորած բացառիկ կարողությունների համար մշտապես արժանացել է տեղի ինչպես ուսանողական, այնպես էլ դասախոսական շրջանների հիացմունքին, գովասանքին ու գնահատանքին, ուսումնական, գիտական, անգամ պետական բարձր պարգևների, խրախուսանքների, գիտական աստիճանների և այլն: Արդեն 1923 թ. Յելի, Քորնուելի, Փենսիլվանիայի, Լիհայոյի, Ուիսկոնսինի, Կալիֆոռնիայի և ամերիկյան առաջնակարգ այլ հաստատություններում դասավանդել են երկու տասնյակից ավելի հայազգի պրոֆեսորներ, ընդ որում նրանցից շատերը հետազոտական աշխատանքի հետ միասին ղեկավարել են կրթական ու գիտական այս կամ այն բնագավառներ ներկայացնող տարբեր հաստատություններ<sup>2</sup>:

Այսպիսով, կրթական լայն հնարավորություններ, բարձր մակարդակ և մեծ հեռանկարներ ունեցող ամերիկահայությունն իր աստիճանաբար սովորացող առաջնակարգ գիտնական, դասախոս, ուսուցիչ մտավորականներով նպաստել է Ամերիկայի հայերի մտավոր համախմբմանն ու կազմակերպմանը՝ ի շահ գաղութի հետագա կենսունակության:

#### դ. Հայ մշակութային կյանքը ԱՄՆ-ում

ԱՄՆ-ում կրթական ու մշակութային կյանքի զարգացման համար առկա հիմնականում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտը մեծապես նպաստել է ամերիկահայերի հազեղ կյանքի անբաժանելի մաս կազմող մշակույթի՝ գրականության, թատրոնի, երաժշտության, նկարչության, բանդակագործության և արվեստի այլ բնագավառների ինքնազրուսեորմանն ու առաջընթացին՝ բացահայտելով հիշյալ ասպարեզներում կարող ու շնորհալի ուժերի:

Ամերիկահայ գրական կյանքը սկսել է ձևավորվել գլխավորապես դարասկզբին՝ շնորհիվ հայրենի տարբեր բնակավայրերից ժամանած կամ ԱՄՆ-ում հասակ առած սակավաթիվ անհատների ջանքերի (Հայկակ Լիլիյան, Մ. Պաղտասարյան, Նազարեթ Մանկունի, Ամբաս Գարրիելյան, Զարուհի Գալեմբերյան, Սուրեն Պարթևյան,

<sup>1</sup> Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 109: Մուշեղ եպիսկոպոս, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 101:

<sup>2</sup> Malcom, V. M., նշվ. աշխ., էջ 110: Yeretzian, A. S., նշվ. աշխ., էջ 24-25:

Մուշեղ եպսկ. Սերոբյան, Համաստեղ [Համբարձում Գեղեցյան], Վահե Հայկ, Զարեհ Որբունի, Երվանդ Մեսիայան, Կարապետ Սիտալ, Երվանդ Սահակյան և այլք)։ Նրանց ստեղծագործությունների հրատարակման հիմնական սպարեզն ինչպես կուսակցական, այնպես էլ զուտ գրական ուղղվածություն ունեցող պարբերականներն էին՝ «Հայրենիք» օրաթերթը, «Հայրենիք», «Փիւնիկ» ամսագրերը և այլն, որոնք «եղան անփոխարինելի բեմ Հայ գրականութեան ստեղծման, պահպանման, տարածման եւ քաջալերումին»<sup>1</sup>։ Սկզբնապես նախապատրաստական փուլում գտնվող ամերիկահայ գրակառնությունը ներկայացվել է հիմնականում հայերեն բազմաժանր ստեղծագործություններով, օտար ճեղհականների գեղարվեստական գործերի թարգմանություններով, ամերիկյան, համաշխարհային, ինչպես նաև հայ դասական գրականության և իմաստասիրության դիտական, իմացական ու գեղարվեստական բնույթի ուսումնասիրություններով՝ պատշաճ նախասկիզբ հանդիսանալով հետագա տարիների ամերիկահայ բեղուն գրականության վերընթացի համար<sup>2</sup>։

Ամերիկահայ մշակութային կյանքը նշանավորվել է նաև թատերական արվեստի սկզբնավորումով։ Առաջին թատերախմբերը կազմավորվել են գլխավորապես սիրողներից, քանի որ դեպի Նոր երկիր վաղ շրջանի հայ գաղթականության շարքերում գրեթե բացակայել են առհաստավարժ դերասանները։ ԱՄՆ-ում հայերեն առաջին ներկայացուցչական թատերախմբերը կազմավորվել են 1890 թ. Ուստրի Դրենդ Արմի Հոլում՝ ի նպաստ տեղի Հայ երիտասարդաց ընկերության։ Հետագա տարիներին հայերի աճող հոսքը խթանել է 1905 թ. երկրի հայաշատ գրեթե բոլոր վայրերում ազգային թատերախմբերի ստեղծումը և նորերի ի հայտ գալը։ Մեծ համբավ են ունեցել Բոստոնի Դուրլի Սթրիթ Օփերա Հաուզի և Նյու Յորքի Կարնեգի Լիցեյի հայկական խմբերը։ Հետագա տարիներին ստեղծվել են «Ժիրայր» (1906 թ., Բեյսին), «Հնչակ» (1907 թ., Փրովիդենս), «Ադամեան», «Ազատամարտ» (1908 թ., Փրովիդենս), «Փարամազ» (1909 թ., Յունյուն Սիթի), «Դուրեան» (Ֆրեզնո), «Աւարայր» (1913 թ., Սփրինգֆիլդ), «Շանթ» (1916 թ., Ֆաուլեր), Հայ դրամատիկ (1916 թ., Նյու Յորք), «Փարոս» (1917 թ., Հարթֆորդ), Հայ դրամատիկ (1921 թ., Բոստոն), «Շանթ» (1922 թ.,

<sup>1</sup> «Նախասարդ ամսագիր», քիվ 94, մայիս. 1990, էջ 29, 30:

<sup>2</sup> Ավագյան Զ., Եղվ. աշխ., 2000, էջ 164–165:

Ձիկազո) և այլ թատերախմբեր<sup>1</sup>:

Ազգային, Հիմնականում հայրենասիրական, ինչպես նաև օտար հեղինակների գրական տարաբնույթ գործերի բեմականացումները մեծ ընդունելություն են գտել հարազատ լեզվին ու արվեստին կարոտ մնացած ամերիկահայերի շրջանում: Ազգային թատերական կյանքից հեռու չի մնացել նաև ԱՄՆ գաղթած հայերի թրքախոս հատվածը՝ կիլիկիահայերը, որոնց համար նույնպես կազմակերպվել են համապատասխան ներկայացումներ:

Միրողական թատերախմբերով սկզբնավորված ամերիկահայ թատերական կյանքին նոր լիցք ու կենդանի շունչ են հաղորդել ԱՄՆ ժամանած հայ արհեստավարժ արվեստագետներ տիկնայք Մելիքյանն ու Վերժինե Մամուլյանը, տեր և տիկին Հովհաննես և Արաքս Զարիֆյանները, Սեդրակ և Մարիամ Սուրաբյանները, Անդրանիկ և Ազնիվ ամուսինները, Հովհաննես Արելյանը, Ա. Արմենյանը, Մ. Մանվելյանը, Ի. Ալիխանյանը, Եղիշե Հարութը, Սեդրակ Վարդյանը և ուրիշներ<sup>2</sup>: Հիշյալ շնորհալի դերասանները, որոնք գերազանցապես թատերական ավանդույթներ ունեցող միջավայրում մասնագիտացած կովկասահայ արվեստագետներ էին, սեփական խմբեր ստեղծելու և նրանց հետ հանդես դալու հետ մեկտեղ, սիրով ներդրվել են նաև ոչ արհեստավարժ դերասանախմբերում՝ իրենց հմուտ արվեստով և ուսանելի ու դերազանց խաղով հիացնելով բոլորին՝ միաժամանակ մի նոր մակարդակի բարձրացնելով ամերիկահայ թատրոնը:

Այնպես որ, Հիմնականում դարասկզբին ձևավորված և գերազանցապես սիրողներից բաղկացած ամերիկահայ մեծ ու փոքր թատերախմբերը զգալի ավանդ են ներդրել զաղութի թատերական արվեստի ձևավորման ու զարգացման գործում՝ հիմքեր նախապատրաստելով հետագայում, մասնավորապես Առաջին աշխարհամարտից հետո, արհեստավարժ դերասանների, ինչպես նաև մնայուն ու բազ-

<sup>1</sup> Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 169: Մատաղճեան Թ., Յուշամատեան Թուրքալի, Պէյրուք, 1959, էջ 229: Հնչակեան տարեգիրք, Բ տարի, 1932, էջ 270: Ազաթ-Չարբա, Յուշամատեան Բարձր Հայրի. Կարինապատում, Պէյրուք, 1957, էջ 760: Ամերիկահայ հանրագիտակ տարեգիրք, 1925, էջ 457, 459, 461: Զատասնամեակ (1903-1943) «Երիտասարդ Հայաստան»ի, Նիւ Եօրք, 1944, էջ 277, 280, 282, 283: Պատմութիւն Պաղնատան, Պոսթըն, 1966, էջ 243, 245-246: Այսպէս: Ժողովածու տասնամեակի առթիւ, էջ 167, 317: Հնչակեան տարեգիրք (ամերիկայի շրջանի), Ա տարի, Փրալիտեն, 1931, էջ 272:

<sup>2</sup> Գալսեան Ա., նշվ. աշխ., էջ 103:

մազան խաղացանկեր ունեցող կազմակերպված թատերախմբերի ի հայտ գալու: Միաժամանակ, Նոր երկրի հայաշատ տարբեր վայրերում շրջագայություններով հանդես եկած ամերիկահայ առաջին թատերախմբերը, նախապատրաստական ժամանակաշրջանին հատուկ իրենց բացթողումներով ու թերություններով հանդերձ, մայրենի լեզվով ներկայացումներ ու առավելապես հայ հեղինակների ստեղծագործություններ ներկայացնելով, մեծապես նպաստել են օտարության մեջ խարխափող և ուժացման վտանգին դիմակայող հայության ստվար զանգվածների մշակութային ու ազգային նկարագրի պահպանմանը, ինչպես նաև իրենց համեստ մասնակցությունն են ունեցել գաղութի և հայրենի երկրի միջև հոգևոր կապի ամրապնդմանը<sup>1</sup>:

XX դ. առաջին տասնամյակից սկսած՝ ԱՄՆ-ում ի հայտ են եկել նաև շարժանկարի առաջին սակավաթիվ հայ դերասանները (Ալլա Նազիմովա, Օրսրա Մարտիկանյան, Թամարա Դեյկարխանովա, Թամարա Շայն [Շահինյան], Թամարա Գեվա [Գևորգյան], Թամարա Թումանովա [Թումանյան], Ակիմ Թամիրով [Հովակիմ Թամիրյանց], Քայ [Բյուզանդ] Թումայան, Թուրեն Մամուլյան և այլք)՝ իրենց ավանդը ներդնելով հյուրընկալ երկրի կինոարվեստի զարգացման գործում<sup>2</sup>:

Ամերիկահայ մշակութային կյանքում իր ուրույն տեղն է ունեցել նաև երգարվեստը: Միրոզակյան մակարդակով այն դրսևորվել է դեռևս 1860-ական թվականներին հանձին Միքայել Թոփհանեկյանի, որի երգած ինքնատիպ մեղեդայնությամբ թուրքերեն երգերը հիացրել են ամերիկացիներին և նրանց կողմից նոտագրվել շուժակի ու դաշնամուրի համար<sup>3</sup>:

Հետագայում, սկսած 1880-ական թվականների երկրորդ կեսից և հատկապես դարասկզբից, ԱՄՆ-ում հանդես են եկել բազմաթիվ արհեստավարժ երգիչ-երգչուհիներ (Ալեքսիա Պասյան, Ճլորա Զաբել [Իգաբել Մանկասարյան], Ադսեն Զոփուրյան, Փառլ Անանյան, Ճիլիպ Բեննյան, Արմեն [Արմանդ] Թոքատյան, Ալիմ Քյուրքչյան, Թորգոմ Պեզազյան, Զաբել Արամ [Փանոսյան], Բազրատունի, Արմենակ Շահմուրադյան և այլք), երաժիշտներ (Լևոն Տեր-Օհանյան,

<sup>1</sup> Ավագյան Բ., նշվ. աշխ., 2000, էջ 165-169:

<sup>2</sup> Բախչինյան Ա., Ծագումով հայ են, Երևան, 1993, էջ 81, 109, 128, 129, 179-180, 212, 225:

<sup>3</sup> Մուշեղ Խախկուպու, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 30:

Աստղիկ Գավուզճյան, Սարգիս Քուչնարյան՝ դաշնամուր, Սիրարվիի Գոնտայան, Մինաս Զաղացյանյան՝ ջութակ, Հելեն Մեհրաբյան՝ տավիղ, Հայկ Հովհաննիսյան, Ժորժ Շալ-Պարոնյան՝ թառ և այլք), երաժշտագետ-երգահաններ (Գրիգոր Փրոֆֆ-Գալֆայան, Սյունի, Հարություն Մեհրաբյան, Ռուբեն Տիգրանյան և այլք), երկրի գրեթե բոլոր հայաշատ վայրերում հիմնվել են նաև ազգային երգչախմբեր<sup>1</sup>:

Մի շարք շնորհալի հայերի, գլխավորապես արևելահայերի, ջանքերով ԱՄՆ-ում ստեղծվել ու զարգացում է ապրել նաև գաղութահայ պարավեստը (Արմենուհի Օհանյան, Անիցա Ռզվանյան, Մարի Սուրբյան և այլք)<sup>2</sup>:

Ամերիկահայերն իրենց տաղանդն ու հմտությունը դրսևորել են լուսանկարչության (Մկրտիչ Կարո [Կարոյան])՝ գունավոր լուսանկարահանման եղանակի հայտնագործող), նկարչության (Սարգիս Երկանյան, Մանվել Ազատիկյան, Գ. Գալուստ, Միհրան Սերալյան, Արշակ Ֆեթվաճյան, Հովսեփ Փուշման, Փանոս Թերլեմեզյան, Սարգիս Խաչատուրյան, Հովհաննես Ալհասյան, Արշիլ Գորկի [Ռուտանիկ Մանուկ Աղոյան] և այլք), քանդակագործության (Հայկ Բատիկյան, Հենրի Լայն, Հակոբ Գյուրջյան, Մարտիրոս Մելիքյան և այլք) ընագավառներում<sup>3</sup>:

Այսպիսով, հասարակական-տնտեսական, պատմաքաղաքական, ինչպես նաև մշակութային հանգամանքների բերումով ԱՄՆ անցած հայրենիքը Նոր երկիր է փոխադրել նաև իր հոգևոր կարողությունները՝ կյանքի նոր պայմաններում ու նոր միջավայրում նորովի

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 63, 247-248: Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., Բ տարի, 1913, էջ 159: Mirak, R., նշվ. աշխ., 1983, էջ 103, 170: Wertsman, V., նշվ. աշխ., էջ 6: Ամերիկահայ հանրագիտակ տարեգիրք, 1926, էջ 136, 305, 334-335, 337, 338, 472: Թեոդիկ, Ամենուն տարեցոյցը, ԺԹ տարի, Վիեննա, 1925, էջ 185, 188, 189: Թեոդիկ, նշվ. աշխ., 1926, էջ 470, 472-476, 484: Mahakian, Ch., նշվ. աշխ., էջ 78: Ալյոսյանհան Ա., Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Պէյրոս, 1961, էջ 1472: Գալուստ Ա., նշվ. աշխ., էջ 104:

<sup>2</sup> Թեոդիկ, նշվ. աշխ., 1926, էջ 438:

<sup>3</sup> Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., Բ տարի, 1913, էջ 385, 386, 389, 391: Ամերիկահայ հանրագիտակ տարեգիրք, 1925, էջ 69, 321-325, 327: Թեոդիկ, նշվ. աշխ., 1926, էջ 506, 507, 522, 724: Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 74, 248-251: Արշակ Ֆեթվաճեան. նկարիչ բանասեր, Նիւ Եօրք, ա. ք., էջ 11-12: Թեոդիկ, նշվ. աշխ., 1925, էջ 191, 192: Mooradian, K. The Many Worlds of Arshile Gorky. Chicago, 1980, pp. 1, 3-5. Թեոդիկ, Ամենուն տարեցոյցը, րիւ 9, Կ. Պոլիս, 1915, էջ 283: Mahakian, Ch., նշվ. աշխ., էջ 76, 81:

զարգացնելով և առավել ինքնատիպ մակարդակի հասցնելով դրանք: ԱՄՆ-ում հայության թվի սովորացման հետ մեկտեղ սկսած XIX դ. վերջից և հատկապես XX դարագլխից հանդես են եկել մշակույթի և արվեստի տարբեր ճյուղերի՝ գրականության, թատրոնի, շարժանկարի, երաժշտության, նկարչության, քանդակագործության, լուսանկարչության և այլնի, հմուտ ու արհեստավարժ, սկսնակ ու սիրող ներկայացուցիչներ, որոնք իրենց ստեղծած հոգևոր-մշակութային արժեքներով հուսալի հիմք են հանդիսացել դադուհայ մշակույթի ազգային նկարագրի պահպանման, հետագա զարգացման համար, միաժամանակ հայ արվեստը ներկայացնելով օտար հանրությանն ու արժանանալով նրա բարձր գնահատանքին:

### **Եզրակացություն**

Ընդհանրացնելով նշենք, որ սկզբում կրթական ու տնտեսական նախապայմաններից դրդված պանդուխտ (գլխավորապես ամուրի երիտասարդներ) հայերի (ուսանող, առևտրական, արհեստավոր, հողամշակ, գործավոր) ժամանակավոր բնույթ կրող տեղաշարժը Օսմանյան կայսրությունում հայության նկատմամբ գործադրված պարբերական ջարդերի և Հայոց ցեղասպանության (1894–1896 թթ., 1909 թ., 1915–1923 թթ.) հետևանքով վեր է ածվել զանգվածային գաղթի՝ ընդգրկելով տնտեսական, քաղաքական, մշակութային ու կրոնական ապահով կյանքի հեռանկարից զրկված և հասարակության բոլոր շերտերը ներառող հայրենի բնօրրանի ողջ տարածքի տասնյակ հազարավոր հայերի:

ԱՄՆ-ում հայերը բնակություն են հաստատել լայնածավալ երկրի գրեթե ողջ տարածքում: Օգտվելով ընձեռված լայն ու բազմակողմանի հնարավորություններից՝ նրանք ներգրավվել են իրենց հնարավորություններին, կարողություններին ու նախասիրություններին համապատասխանող տարբեր զբաղմունքներում, ֆիզիկական, մտավոր ու հոգևոր կարողություններն ամբողջովին ծառայեցրել նախընտրած ասպարեզներին և իրենց նպաստը բերել նոր երկրի առաջընթացին:

Ամերիկահայերը երկրամյա քրտնաշան աշխատանքի, ինչպես նաև չափավոր ու համեստ ապրելակերպի շնորհիվ հասել են զգալի հաջողությունների, բավականաչափ կարողության տեր դարձել՝ էպպես բարելավելով իրենց տնտեսական ու կենցաղային պայմանները, աստիճանաբար համակերպվելով նոր կյանքի պայմաններին ու բար-

քերին, կենցաղին ու սովորույթներին, այդուհանդերձ չկորցնելով իրենց ազգային կերտվածքն ու նկարագիրը:

Նոր երկրում Հայ պանդուխտների և դաղթական բեկորների ազգային համախմբման ու կազմակերպման, ամերիկյան համայնակուլ միջավայրում հայկականության ոգին ու գիտակցությունը, լեզուն ու սովորույթները մշտարթուն պահելու, ինչպես նաև հայրենի բնօրրանի և ժողովրդի հետ կապն ավելի գործուն ու հարատև դարձնելու նպատակով ստեղծվել ու ազգանպաստ մեծ գործունեություն են ծավալել բազմաթիվ ու բազմաբնույթ միություններ, կազմակերպություններ, կուսակցություններ, ընկերություններ, և ակումբներ:

Նոր երկրում Հայության թվի ստվարացումով և այդտեղ նրանց աստիճանաբար հաստատումով կազմավորվել են օտարության մեջ ազգապահպան կարևոր դեր ու նշանակություն ունեցող կառույցները՝ եկեղեցին, դպրոցը, պարբերական մամուլը՝ վերջնականապես ձևավորելով Ամերիկայի Միացյալ Նահանգների Հայ դադուլթը:

Առաջին աշխարհամարտի հետևանքով Օսմանյան կայսրությունում և ցարական Ռուսաստանում ստեղծված քաղաքական անկայուն ու ճգնաժամային իրավիճակը, ինչպես նաև դաշնակից տեղությունների նկատմամբ հայերի ունեցած հավատի կորուստը ի չիք են դարձրել ԱՄՆ գաղթած, սակայն հայրենիք վերադառնալու հույսը դեռևս իրենց հոգու խորքում անթեղած բազմահազար հայերի երազանքը՝ նրանց վերջնականապես ամրացնելով որդեգրած նոր երկրին:

## ՀԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ

Մասնագէտները գրեթէ անտեսած են Հայոց Հնագոյն Հետքերը  
Լատին Ամերիկայի մէջ, քանի որ շրջանի համայնքներուն զարգա-  
ցումի պատմութիւնը ըստ էութեան Սփիւռքի Հետ կը կապուի՝ 1920-  
ական թուականներէն ետք<sup>1</sup>:

XVI դարուն Սպանիան երեք ցամաքամասերու վրայ տարա-  
ծուող եւրոպական ամենէն հեղինակաւոր ու զօրեղ պետութիւնն էր,  
կամ, Կարլոս Ա թագաւորի թեւաւոր խօսքով, «մայրամուտ չտես-  
նող» կայսրութիւն մը, որուն հմայքը յարատեւած է դար մը եւս,  
նոյնիսկ երբ արդէն սկսած էր քաղաքական անկումը: Տնտեսական  
հսկայական աղբիւրներով, մանաւանդ թանկագին մետաղներով հա-  
րուստ «Արեւմտեան Հնդիկք»-ի՝ Ամերիկայի նուաճումին փառքը  
Սպանիոյ պատկանած է, ինչ որ բնական դարձուցած է թէ՛ շահա-  
գործումը եւ թէ՛ առեւտրական մրցակցութիւնը:

1492-ին, մինչ Բրիտանիոյ Գոլոմպոսը կը պատրաստուէր ճամ-  
բայ ելլելու՝ նոր ցամաքամասին գիւտը կատարելու, կ'ամբողջանար  
սպանական թագաւորութեան միաւորումը, արաբական վերջին պա-  
տուարին՝ Կրանատայի անկումով: Անմիջապէս հրապարակուած է  
կրօնական մոլեռանդութեամբ տողորուած արքայական հրովարտա-  
կը, որ պարտադրած է «ցեղային» մաքրագտումը՝ երկրի բոլոր հրեա-  
ներուն ու արաբներուն վտարումը, որոնք միայն հաւատաւիոխու-  
թեամբ զերծ եղած են:

1505-ին նոր ցամաքամասին Հետ յարաբերութիւնները կանո-  
նաւորող Սեւիլիայի Առեւտրական Տունը արգիլած է ամէն օտարա-  
կանի մուտքը՝ Նոր աշխարհ: Ոչ միայն օտարականները, այլեւ ոչ  
«զտարիւն» (այսինքն՝ հաւատաւիոխ) սպանացիներու զաւակներն ու  
թոռները հաւասարապէս արգելքի առջև եղած են:

Արգելքին վերահաստատումը 1538-ին կը փաստէ, որ ան բաւա-  
րար եղած չէր անցանկալի տարրերու ներթափանցումը կանոնաւորու-  
ման:

<sup>1</sup> Այս գլխիկն անլի մանրամասն անդրադարձի մը համար տես մեր ուսումնասիրու-  
թեան համապատասխան գլուխները (Վարդան Մատթէոսեան, Հարաւային կողմն  
աշխարհի, Հայերը Լատին Ամերիկայի մէջ սկիզբէն մինչև 1950, Անթիլիաս, 2005):  
Ներկայ աշխատութեան մէջ կատարած ենք զանազան լրացումներ՝ նորայայտ  
տուեալներու լոյսին տակ:

Առեւտրական դարգացումի անհրաժեշտութիւնը պարտադրած է տեղական իշխանութիւններուն, որ աչք փակին խախտումներուն դիմաց: Օտարականներու ներկայութեան ու ազդեցութեան տարածումին լաւագոյն ապացոյցը այն է, որ 1629-ին արգիլուած է ոչ սպանացիներու նշանակումը հանրային պաշտօններու: Արքունիքին կազմած «Հնդկաց Օրէնքներու Համահաւաք»ը 1680-ին արգելքը կրկին վերահաստատած է, յստակ բանաձեւումով, թէ «ո՛չ մէկ օտարական, կամ ոեւէ այլ մէկը որ այս օրէնքներէն արգիլուած ըլլայ, կրնայ Հնդկիքի մէջ գործել ու առեւտուր ընել, ոչ ալ այնտեղէն դէպի այս թագաւորութիւնները [Սպանիա] կամ այլուր, կամ այնտեղ սեփականատէր ըլլալ, եթէ մեր կողմէ արտօնագիր չունենայ»<sup>1</sup>: Բնորոշ է, որ անկանոն պայմաններու մէջ Ամերիկա բնակող օտարականները կրնային իրենց վիճակը դասաւորել *composición* («սրբագրութիւն») կոչուած վճարումով, ըստ 1546-ի որոշումնադրի մը: Ասիկա յաճախակի էր 17-րդ դարուն, երբ եկամուտի կարօտ սպանական դանձարանը պատրաստ էր օրէնքը անտեսելու գումարի մը դիմաց:

Հայոց առաջին կայուն հետքերը տարածաշրջանին մէջ նկատելի են այդ դարու սկիզբէն: Նոր Զուղայի առեւտրական կայսրութեան ոսկեդարուն անսպասելի չէր հայագրի առեւտրականներու ներկայութիւնը Նոր աշխարհի մէջ, թէկուզ եւ սակաւ թիւով, հաւանաբար՝ կաթողիկէ կամ դաւանափոխ<sup>2</sup>: XVII դարուն, գրած է Հ. Ղեւոնդ Ալիշանը, «աստուստ եւ անդր չմնաց մեզ տեղի չհետ կրթելոյ ամենահաս վաճառականաց մերոց, բայց եթէ հեռացեալ յերեսաց հնոյ երկրազնտի՝ ի Նորն թեւակոխիցեմք, ասպատանեալք ի նաւս Սպանիացոց, Պորտոգալաց եւ այլոց պետութեանց Եւրոպէացոց, յորոց աշխարհս դեգերէին մերազնեայք (...) եւ բնական իմն էր շահասիրաց մերոց եւ բնածին վաճառականաց՝ հետեւել նոցա ընդ ոչ բնական ինքեանս ծովային շաւիղս (...)»<sup>3</sup>:

Այսուհանդերձ, առաջին նախաձեռնութիւնը պատկանած է պարզ ճանապարհորդի մը: Ինչպէս կը պարզուի Պաւել Չօբանեանի վերջերս յայտնաբերած հայերէն ձեռագրի մը վկայութենէն, 1607-ին

<sup>1</sup> Graciela Swiderski y Jorge Luis Farjat, *La inmigración*, Buenos Aires, 1999, p. 48.

<sup>2</sup> Վարդան Մառթեանեան, Նոր Զուղայէն մինչև Սպանիա եւ Հարաւային Ամերիկա (ԺԶ-ԺԷ դարեր), «Հանդես Ամսօրեայ», Փետրուար, 2004, էջ 14-18:

<sup>3</sup> Հ. Ղեւոնդ Ալիշան, Սիսական. Տեղագրութիւն Սիմեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 471:

Տէր Եղիշէ Սարբանկացի (*Don Eliseo da Sarbanga*) անունով «Հայկազն Հնախօս» (*Paleologo Armeno*) Հասած էր ծայրագոյն Հարաւ Հրոյ երկիր: Անոր պատմութիւնը, իտալերէն գրի առնուած այլ անձի մը կողմէ, առաջին անգամ տպուած է 1609-ին<sup>1</sup>: Ըստ Հայերէն տարբերակին, վերատպուած է 1665-ին: Վերջինս կը հաղորդէ, թէ «Բարդամնին անունն Ֆրանկեւար Սարբանկ դի Բալալակաւ Արմէնի» էր (*Sarbanga di Paleologo Armeno*) եւ «Ֆրանկեւար Բարդամնին անունն Դոն էզէլէ ան գրիւ» (*Don Eliseo*)<sup>2</sup>: Երկու տարբերակներուն համեմատութիւնը ցոյց կու տայ, որ ըստ էութեան խօսքը երկու տարբեր ճանապարհորդութիւններու մասին է, եւ որ Հայերէն տարբերակը երկու առանձին բնագրեր միաձուլած է՝ Բարդամի 1663–1664-ի ճամբորդութեան մանրամասնութիւնները մեծաւ մասամբ բանաքաղիլով ու խմբագրելով Տէր Եղիշէի 1606–1608-ի ճամբորդութեան Հիմամբ:

Այսպէս, 1628–1643-ին Փերու, Պոլիվիա եւ Զիլէ ապրած սպանացի կրօնաւոր Ֆերնանտօ տէ Մոնթեսինոսը իր Փերուի պատմութեան մէջ (անտիպ մնացած մինչեւ XIX դար) հաղորդած է. «...Ամերիկայի մէջ եւ ճանչցայ ու տեսայ յոյներ, գերմանացիներ, հունգարացիներ, Հայեր, անգլիացիներ, ֆրանսացիներ, հոլանտացիներ եւ մաւրեր, եւ գիտցած եմ որ թուրքեր եղած են, որոնք Հարստութիւններով մեկնած են եւ ապա իմացուցած են սպանացի գերիներու միջոցաւ»<sup>3</sup>:

Հնարաւոր է, որ յիշեալ Հայերուն շարքին գտնուած ըլլայ Լատին Ամերիկայի՝ անունով յայտնի առաջինը: Այժմու Պոլիվիայի Լա Փլաթա քաղաքը (ներկայիս՝ Սուքրէ, երկրի վարչական մայրաքաղաքը), Փոթոսիի հռչակաւոր արծաթի հանքերուն մօտ կը գտնուէր:

<sup>1</sup> Aviso curiosissimo del fortunato camino di don Eliseo da Sarbanga paleologo armeno verso la terra di vista, incognita o del fuoco, Milano, 1609. Իտալերէն գրառումին վերատպումը՝ հանդերձ հայերէն քարգմանութեամբ, տես «Ճանապարհորդութիւն Տէր Եղիշէի Սարբանկացոյ, Հայ Հնախօսի», «Բազմավէպ», 2, 1882, էջ 212–217: Ըստ պատմաբան Սեպուի Ալանտանի. որ մեզի հաղորդած է իտալերէն հրատարակութեան մատենագիտական տունակները, հնարատր է, որ Եղիշէ Սարբանկացին Հնդկաստանէն եկած հին ջողայեցի ճամբորդ մը ըլլար (անձնական հաղորդում, Յունուար, 2004):

<sup>2</sup> Ճանապարհորդութեան նորայայտ բնագիրը տես Պաուլ Զօքանեան, Տէր Եղիշէ Սարբանկացու Հրոյ Երկիր «Ճանապարհորդութեան» հայերէն նորայայտ քարգմանութիւնը, «Հանդէս Ամսօրեայ», 1–12, 2002, էջ 139–147:

<sup>3</sup> Fernando de Montesinos, Memorias antiguas historiales del Perú, "La Revista de Buenos Aires", diciembre de 1869, p. 535–536.

XVIII դարու կեսին Ղուկաս Խարբերդցիի թարգմանած «Սահմանագրութիւն նոր Ամերիկայի մասին» գործը կըսէր, թէ «արդ, այս գիւղս է փոքրիկ եւ ունի զհանգս արծաթոյ առատապէս, վասն զի հարիւր տրամ հողոյ ելանէ ութսուն տրամ մաքրագոյն արծաթ, որ եւ ի յայլ տեղիս անլսելի է»<sup>1</sup>: Լա Փլաթայի եկեղեցական նօտարին արձանագրութեանէն կը պարզուի, որ 1629-ին Յակոբ Հայր (Jacome Armenio) ամուսնացած է տեղաբնիկ կնոջ մը հետ<sup>2</sup>:

Հնարաւոր է, որ Յակոբ մաս կազմած ըլլայ Սեւիլիայի հայ գաղթօճախին, որ Ամերիկայի հետ առեւտուր ըրած է, յատկապէս հետամտելով արծաթը, անհրաժեշտ՝ Պարսկաստանի դրամահատումին համար<sup>3</sup>: Ըստ 1617–1619-ին Փերու ապրած սպանացի կրօնաւոր Անթոնիօ Վալքէզ տէ Էսփինոսայի վկայութեան, Լա Փլաթայի մէջ 23 իտալացի, գորսիքացի եւ ֆլաման բնակած են<sup>4</sup>: Այս թուարկումին մէջ հայերու բացակայութիւնը ցոյց կու տայ, որ Յակոբ հոն հաստատուած է 1620-էն ետք:

Այսպէս է, որ Ամերիկա երթալը բնական էր «եւ ոչ լոկ վաճառականաց, այլ եւ միանձանց (անուանելոցն Միաբանողք), յորոց նաւեցին ոմանք յԱմերիկա ի հանգանակութիւն զբամոյ կամ ողորմութեան, յժէ դարու (...)»: Լ. Անտոն Ապրակունեցի եւ Լ. Յակոբ Կէծկացի Արեւմտեան Հնդկիք ճամբորդելով, «եղեալ մասն մի ի շահարանս Վենետիկոյ» (1652)<sup>5</sup>:

1580–1640-ին, Սպանիոյ եւ Փորթուկալի միացեալ պետութեան օրերուն, հայերը մետաքս կը փոխադրէին մինչեւ Կաղիքս, որ ամերիկեան առեւտուրի մենաշնորհը ունէր<sup>6</sup>: 1660-ին Զաքարիա Ադուլե-

<sup>1</sup> Յ. Յարոսիւմեան, Ղուկաս Խարբերդցիի եւ «Սահմանագրութիւն նոր Ամերիկայի» աշխատութիւնը, «Բանբեր Երեւանի համալսարանի», 3, 1994, էջ 141:

<sup>2</sup> Binayan Carmona, Entre el pasado y el futuro: los armenios en la Argentina, Buenos Aires, 1997, p. 56.

<sup>3</sup> Raymond H. Kévorkian, "Le négoce international des Arméniens au XVIIe siècle", dans Raymond H. Kévorkian (ed.), Arménie entre Orient et Occident. Trois mille ans de civilisation, Paris, 1996, p. 148.

<sup>4</sup> P. Antonio Vázquez de Espinosa, Compendio y descripción de las Indias Occidentales, Madrid, 1969, p. 430.

<sup>5</sup> Ալիշան, Սիսական, էջ 471, 477:

<sup>6</sup> Ե. Խաչիկեան, Նոր Ջուղայի հայ վաճառականութիւնը եւ նրա առեւտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII–XVIII դարերում, Երեւան, 1988, էջ 18: 1601-ին հոն յիշուած է Կօայլն հայ առեւտրական Jorge da CruzÁ (Fernand Braudel,

ցին կը գրէր, թէ «գարցեալ ժէյգիդունի նաւերն Կալիս կու բառնան, Կալիս կու դադարկացընեն. այլ տեղ չկայ (...)»<sup>1</sup>: Ժէյգիդունին Նոր աշխարհն էր:

Կոստանդին Զուղայեցիի անտիպ «Աշխարհատողով գիրք»-ին մէջ (1687) Նոր Զուղայի առեւտրականներուն այցելած վայրերուն շարքին յիշուած է «Ենգիդունի երկիրը»<sup>2</sup>, որ այլ բան չէր, քան Ամերիկան: Արդարեւ, «ուս է ի ներքոյ աշխարհիս՝ Հակոտեանայ մեզ եւ մեծ է քան զերիս մասունս, որ այս աշխարհիս բաժինն, որոց տիրէ արքայն Սպանիացւոց եւ կոչէ Ենկի Տիւնեայ, որ է Նոր Աշխարհ». գրած է XVII–XVIII դարերու մատենագիր Աւետիք Տիգրանակերտցին<sup>3</sup>:

Կաղիքսի Հայկական գաղթօճախին սկիզբը կը թուագրուի 1664-ին<sup>4</sup>, երբ Մկրտիչ որդի Յովհաննէս արդէն առեւտրական կապեր ունէր «Նոր Հնդկիք»-ի հետ<sup>5</sup>: Ըստ երեւոյթին Սպանիոյ այլ վայրերու մէջ վաշխառութեամբ զբաղած ըլլալով, Հայերը արժանացած էին տեղացի ժողովուրդի դժգոհութեան: Կարլոս Բ Թագաւորը 1684-ին հրահանգած է անոնց արտաքսումը: Հրահանգէն թացառուած են Կաղիքսի համայնքին անդամները, 1685-ի արքայական հրովարտակով<sup>6</sup>:

Համայնքին անդամներէն մէկը՝ Մկրտիչ Յակոբ (Juan Bautista Jacome), 1699-ին յայտնուած է Փերուի փոխարքայութեան մայրաքաղաքը՝ Լիմա, ուր վաճառատուն ունէր, աղնուականութեան վկայագրի մը հայցով: Ան 1690-ին ժամանած էր Ամերիկա ու նախապէս

---

Civilization and Capitalism, 15th-18th Century, vol. II, New York, 1982, p. 156), քերես՝ Գեորգ որդի Խաչերի:

<sup>1</sup> Չարաբիա Ազուլեցու օրագրութիւնը, Երեւան, 1938, էջ 16:

<sup>2</sup> Յարութիւն Տէր Յովհաննէան, Պատմութիւն Նոր Զուղայի, Թեքրան, 1980, էջ 175:

<sup>3</sup> Մեջբերումը տես Պ. Չոբանեան, Տէր Եղիշէ Սարբանկացու, «Հանդես Ամսօրեայ», 1–12, 2002, էջ 111: Սայաթ-Նովայի «Դիպս ու ենգիդունիա, զարբաք ու լար իս, գովեյի» (Սայաթ-Նովա, Խաղեր (յիսկատար ժողովածու), Երեւան, 2003, էջ 42) տաղին «ենգիդունիա»-ն նկատուած է Հարաւային Ամերիկայէն «արժեքատր հիստածեղէն» կամ «ուկի», Միջին Արեւելք ներածուած. քերես, փոքրուկայացիներու կողմէ (հմմտ. քրքերէն yeni dünya «նորաձեւ բան մը, կամ բանի մը նոր տեսակ մը») Charles Dowsett, A Song By Sayat-Nova, "Raft", vol. 1, 1987, p. 35, որ տողը մեջբերած է որպէս «ենգի դունիա»: Թրքերէն տաղի մը «Ենգիդունիումըն գոյացած՝ Փոանգըտանու գուրծ է լա» տողը (Սայաթ-Նովա, Խաղեր, էջ 127) արդէն յստակօրէն Նոր աշխարհին կ'ակնարկէ:

<sup>4</sup> Hipólito Sancho de Soprani, Los armenios en Cádiz, "Sefarad". XIV, 1954, p. 296-299.

<sup>5</sup> Այիշան, Միսական, էջ 471:

<sup>6</sup> Sté u Soprani, "Los armenios", p. 304-313.

եղած էր Նոր Սպանիա (Մեքսիքո), Փորթուգելո եւ Փանամա: Ութը վկաներ (Հինգ սպանացի եւ երեք Հայ) Հաւաստած են անոր յայտարարութիւնները<sup>1</sup>: Երեք Հայերն էին Հ. Բենեդիկտոս Բազումենցը (Fray Benito Pason) եւ Հ. Ստեփանոս Շիրանը (Fray Esteban Jiran), որոնք 1692-ի իրենց անյաջող այցելութենէն ետք<sup>2</sup> կրկին Ամերիկա ճամբորդած էին Հանգանակութեան նպատակով, եւ Պետրոս որդի Յովհաննէսին (Pedro Juan de Armenia): Ըստ առկայ փաստաթուղթերու, Մկրտիչ որդի Յակոբին 1700-ին ամուսնացած է սպանացի կնոջ մը հետ, իսկ 1730-ին յիշատակուած է իրենց աղջկան անունը<sup>3</sup>:

Արդէն XVII դարէն Հայ վաճառականներ Հաստատուած էին սպանական տիրապետութեան տակ գտնուող Փիլիպպեան կղզիներու մայրաքաղաքը՝ Մանիլա, ուրկէ երթուղարձ ունէին մեքսիքական Աքափուլքո նաւահանգիստին հետ՝ արծաթի առեւտուրով զբաղելով: Յայտնի է, որ 1723-ին Pedro de Zárate (Հաւանաբար՝ Պետրոս դի Սարհատ) անունով վաճառականը, որ Հասած էր Աքափուլքո եւ Հաստատուած՝ Մեքսիքո քաղաքը, Հաւատաքննութեան կողմէ դատուած է՝ հերձուածող ըլլալու մեղադրանքով<sup>4</sup>:

Հայ կաթողիկէ կրօնաւորներուն այցերը շարունակուած են գոնէ մինչեւ 1720-ական թուականները: Յարդ յայտնի վերջին վկայութիւնը կը պատկանի Քրանչիսկեան Պետրոս Ղորան Զահկեցիին, որ Յուլիս 1723-ին ճամբայ ելած էր Փորթուկալէն. «(...) Մինչեւ Թ. (9) օրումն Հասանք Կանարիայ (կղզին). մէկ օրէն յետն էլ երկիր չի երեւաց, մինչեւ Փորթ Ըրիքո (Porto Ricco). վերջն ԿԵ (օրումն) Հասանք Հնդրստան (յԱմերիկա). առաջի քաղաքն Լայ Վերայ Գրուզ: Ես Քր. Պետրոս Ղօռան եւ Զվանն Պէթիկայթօր գնացի Նօր, Հնդրստան.

<sup>1</sup> Binayan Carmona, Entre el pasado, p. 59-61.

<sup>2</sup> Ալիշան, Միսակամ, էջ 401:

<sup>3</sup> Տե՛ս Binayan Carmona, Entre el pasado, p. 61.

<sup>4</sup> Charles F. Nunn, Foreign Immigrants in Early Bourbon Mexico 1700-1760, Cambridge, 2003, p. 181. Ասիկա կը հերքէ այն տեսակետը, թէ «Փիլիպպեան [կղզիներու] Հաւատաքննութեան կողմէ դատուած խումբ մը հերձուածողներ բնաւ չ'երեւիր լատինամերիկեան Հատաքննութեան պատմութիւններուն մէջ: Խօսքը կը վերաբերի հայ քրիստոնէաներուն» (F. Delor Angeles, The Philippine Inquisition: A Survey, in Tanya Storch (ed.), "Religions and Missionaries Around the Pacific", 1500-1900, Hampshire and Burlington (Vt.): Ashgate Publishing Limited, 2006, p. 131).

մնացի դեղն Գ (3) տարի»<sup>1</sup>: Սկսելով Վերագրուզէն (Մեքսիքո), հաւանական է, որ ան հասած ըլլայ մինչեւ Փերու:

Դեկտեմբեր 1728-ին Կաղիքսէն մեկնած նաև մը կը փոխադրէր Ուրուկուայ եւ Արժանթին ժամանած առաջին հայը՝ նաևուն տնտեսը, որուն ինքնութիւնն ու հետագայ ճակատագիրը անյայտ են<sup>2</sup>: Միայն ծանօթ է, որ նաևը նախ Մոնթէվիտօն եւ ապա Պուէնոս Այրէս ժամանած է Ապրիլ 1729-ին:

XIX դարու սկիզբը Հ. Ղուկաս Ինճիճեանի եւ Հ. Ստեփանոս Ազոնցի «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի»-ն մօտ 175 էջ տրամադրած է Հարաւային Ամերիկային, բաժնուած եօթը «աշխարհ»-ի «Քանամա... Կարդագինէ, Վէնէցուէլա», «Բէրու», «Քիլի կամ Քիլա կամ Չիլէ», «Քարակկայ կամ Բլաղայ», «Ամազունիք», «Պրասիլիա» եւ «Երկիր Մակէլլանեան»<sup>3</sup>: Որքան գիտենք, ասիկա հայերէնով ցամաքամասին ընդարձակագոյն նկարագրութիւնը եղած է:

XIX դարի կէսերուն, սպանական եւ փորթուկալական տիրապետութեան անհետացումէն ետք, Լատին Ամերիկայի մէջ սկսած են յայտնուիլ ցաքուցրիւ հայեր: Այսպէս, 1835-ին յիշուած է Մոնթէվիտօն ապրող, Քրանսահայ գինուոր Յովհաննէս Աքսարեանը: Ուրուկուայի մայրաքաղաքին մէջ 1850-ին Մարիա Պելինճեանը կամ Պելինտեանը երեք կալուածներու տէր էր<sup>4</sup>:

Դարակէսին, արեւմտահայութեան աղէտալի իրավիճակը դէպի Ամերիկա պանդխտութեան շարժումը յառաջացուցած է: Այդ հոսանքէն Քրթած պատահական անհատներ հասած են Պրագիլ եւ Ուրուկուայ: Առաջին յայտնի անուններն են 1850-ական թուականներուն Սան Փաւլօ ժամանած խարբերդցի Եղիա Տէր Եղիազարեանը եւ իր կինը՝ մարուջի Մարիամը: 1860-ին ծնած է անոնց զաւակը՝ Սարգիս Արմենիօ, իսկ 1862-ին ընտանիքը Խարբերդ վերադարձած է: Սարգիս Արմենիօ 1912-ին վերստին դաղթած է Պրագիլ: Ան դեռ ողջ էր 1969-ին, 109 տարեկանին<sup>5</sup>:

<sup>1</sup> Ալիշան, Սիսական, էջ 405:

<sup>2</sup> Buenos Aires y Córdoba en 1729 según cartas de los padres C. Cattáneo y C. Gervasoni S.J., Buenos Aires, 1941, p. 52.

<sup>3</sup> Ստեփաննոս վրդ. Ազոնց, Աշխարհագրութիւն չորից մասից աշխարհի Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկիոյ եւ Ամերիկոյ, Է. Դ. Վենետիկ, 1802, էջ 468-641:

<sup>4</sup> Alberto Douredjian y Daniel Karamanoukian, La inmigración Armenia en el Uruguay, vol. I, Montevideo, 1993, p. 79.

<sup>5</sup> Sarkis Armenio, "Armenia", 10 de mayo de 1969, p. 4.

1860–1870-ին Մոնթէվիտէօ հասած էր վանեցի Հաճի Պետրոսը, որ 1882-ին Սեբրօ Թաղամասին մէջ փերեզակութեան ապրանքներու մթերանոց ունէր երկու հայ ընկերներու հետ: 1880-ական թուականներուն Միացեալ Նահանգներ գաղթել փափաքող հայեր անոր հանդիպած էին Մարսէլի մէջ ու Մոնթէվիտէօ մեկնելու խորհուրդը ստացած: 1882–1890-ին առնուազն 20 հոգի (մեծ մասով խարբերոցի) Մոնթէվիտէօ ապրելէ ետք, փերեզակութեամբ անցած են սահմանակից Ռիօ Կրանտէ տօ Սուլ նահանգը, ի վերջոյ մասամբ Սան Փաւլօ քաղաքը հաստատուելով<sup>1</sup>:

Ապրիլ 1889-ին Մարսէլի «Արմենիա»-յի Թղթակիցը հաղորդած է, թէ 1888-էն Մոնթէվիտէօ հաստատուած էին Մուշէն, Վանէն, Խարբերդէն ու Կարինէն 30 հոգի, որոնք լաւ ընդունուած էին տեղւոյն արաբ համայնքին կողմէ: Փետրուար 22-ին 15 հոգի որոշած են հիմնել Հայկական Միութիւնը<sup>2</sup>: Այս միութիւնը, զոր պէտք է նկատել Լատին Ամերիկայի առաջին հայկական կաղմակերպութիւնը, այնուհետեւ յիշուած է:

Պանդխտութեան հոսանքին բացառութիւն եղած են երկու պոլսահայ ճարտարագէտներ, որոնցմէ մէկը համայնքին ամենէն յայտնի անուններէն դարձած է: Կանտի համալսարանը (Պելճիքա) աւարտելէ ետք, 1879-ին Պրագիլ ժամանած է Միհրան Լաթիֆը (1856–1929): Իր յիսնամեայ գործունէութեան ընթացքին Լաթիֆ զանազան նահանգներու երկաթուղիներ նախագծած ու շինած է, իսկ Ռիօ տէ Ժանէյրօ նահանգին մէջ՝ ելեկտրակայաններ: Սան Փաւլոյի եւ Ռիօ Գրանդէ տօ Սուլի մէջ կատարած իր հանքային պրպտումները շատ կարեւոր եղած են՝ Ա. Աշխարհամարտի ընթացքին երկրին արդիւնաբերութիւնը աշխատունակ պահելու համար: Ան Ռիօ տէ Ժանէյրօյի ծովեղերեայ Պէյրա Մար պողոտան նախագծած ու Սան Փաւլոյի սուրճի ամենամեծ ագարակին տէրը դարձած է: Կեանքի վերջին տասնամեակին մօտէն հետաքրքրուած է հայութեամբ<sup>3</sup>:

Ճարտարագէտ-ճարտարապետ Գրիգոր Հովուեան (1849–1925) Փարիզի "Ecole des Ponts et Chaussées"-ը աւարտած էր 1885-ին: Մեք-

<sup>1</sup> Տէն Վարդանեան, Պրագիլիոյ, էջ 33–37:

<sup>2</sup> Միմ-սարեան, Նամակ Հարաւային Ամերիկայէն, «Արմենիա», 10 Ապրիլ, 1889, էջ 2:

<sup>3</sup> Տէն Թոքակից, Սիլիոնատէր հայու մը մահը, «Հայրենիք», 13 Յունիս, 1929, էջ 3: Գիտ Մշիքարեան, Պրագիլահայ գաղութը սկիզբէն մինչեւ մեր օրերը, Փարիզ, 1938, էջ 16, 17: Եզնիկ քննյ. Վարդանեան, Պրագիլիոյ հայ գաղութը, Պուենո Այրես, 1948, էջ 27–32:

սիբոյի կառավարութենէն պաշտօնի հրաւիրուելէ ետք, անցած է Պրագիլ, ուր Ռիօ տէ ժանէյրոյի քարափը եւ նաւահանգիստը պաշտպանող ամբարտակները շինած ու Հանրային Շինարարութեան նախարարութեան պաշտօնատար եղած է: Ան Ռիօ Կրանտէ տօ Սուլ քաղաքի նաւահանգիստը շինած եւ տարբեր քաղաքներու առողջապահական գործերով, ջրամբարներ կառուցելով եւ ջրաբաշխական գործերը կարգի բերելով է գրադած մինչեւ մեկնումը (1898)<sup>1</sup>:

Արժանթին ապրած ու ցարդ ծանօթ հնազոյն անունը երկրի զինուորական վարժարանի հիմնադիր հունգարահայ զօրավար Եանոշ Յեցն (1822–1904) 3. Ան եղած է 1848–1849-ի հունգարական յեղափոխութեան առաջնորդներէն մէկը: Աւստրիոյ յաղթանակէն ետք դարձած է վտարանդի ու դատապարտուած՝ հեռակայ մահապատիժի: Աստանդական կեանք վարելով Եւրոպայի մէջ, Սպանիոյ մէջ ծանօթացած է Արժանթինի երբեմնի մենատէր Խուան Մանուէլ տէ Ռոսասի եղբօր աղջկան, որուն հետ ամուսնացած է 1859-ին: Հունգարիոյ մէջ նոր յեղափոխութեան ձախողութենէն ետք, 1860-ին հաստատուած է Պուէնոս Այրէս: Ան աշխատած է որպէս երկրաչափ ու զինուորական մարզիչ: 1869–1874-ին զինուորական վարժարանի առաջին տնօրէնը եղած է, իսկ 1884–1895-ին՝ բանակի գլխաւոր շտաբի չորրորդ բաժանմունքի ղեկավար: Աշխատակցած է Հունգարիոյ «Արմենիա» ամսագրին<sup>2</sup>:

Կարգ մը հետազօտողներ փորձած են կապ տեսնել հայերու ներկայութեան եւ լատինամերիկեան որոշ հանրապետութիւններու (Գոլոմպիա, Էքուատոր, Էլ Սալվատոր, Հոնտուրաս, Կուաթեմալա եւ Պելիդ) Արմենիա տեղանունին միջեւ: Այսպէս, հայ գաղթականներու վերագրուած է գոլոմպիական Բինտիօ նահանգի մայրաքաղաք Ար-

<sup>1</sup> Թոքիլ, Ամենուն տարեցոյցը, Վենետիկ, 1925, էջ 780: Գրիգոր Հովեան (1849–1925), «Եգիպտահայ տարեցոյց», Բ տարի, Գահիթ, 1926, էջ 55: Հմմտ. Հրայնայ Աճառեան, Հայ գաղթականութեան պատմութիւն, Երեւան, 2002, էջ 762, որ տարօրինակօրէն գրած է, թէ «Մեքսիքայի կառավարութեան հրաւերով մեկնեցաւ Պրագիլիա»:

<sup>2</sup> Տե՛ս Narciso Binayan, La colectividad armenia de la Argentina, Buenos Aires, 1974, p. 18. Irma Avdjian de Arias Duval, "Juan Fernando Czetz (1822–1904), general húngaro y coronel argentino", en Vartan Matiossian (ed.), Los armenios en América del Sur. Primeras Jornadas de Estudio, Buenos Aires, 1991, p. 19–32. Էվա Գեորգեան-Բագի, Հայ-իւնգարական գրական առնչութիւնները եւ «Արմենիա» ամսագիրը, Երեւան, 1979, էջ 51: Մուրէն Բուլմզեան, «Յեց, Եանոշ», Հայկական սովետական հանրագիտարան, հ. 12, Երեւան, 1986, էջ 153–154:

մենիայի հիմնումը 1889-ին<sup>1</sup>: Գոլոմպլիական աղբիւրներ վկայակոչած են 1880-ական թուականներու հայերու ինչ-որ զանգուածային ջարդ, որուն 200.000 զոհերուն ի պատիւ քաղաքը կոչուած է Արմենիա<sup>2</sup>: Այլ աղբիւրներ քաղաքին Վիլլա Հոլիին սկզբնական անունին փոփոխութիւնը կապած են 1894-1896-ի հայկական ջարդերուն, ու հիմնադիրներուն ի պատիւ 1963-ին զետեղած յուշարձան՝ Հայ նահատակներու յիշատակին<sup>3</sup>: Սակայն, Վիլլա Հոլիին անունի առաջարկը մէկզդի դրուած է հիմնադրութեան նախապատրաստական ժողովներուն ընթացքին, իսկ քաղաքը 1889-ին հիմնուած է Արմենիա անունով: Հիմնադիրներուն շարքին ունէ հայ յիշուած է: Անունին լայն կիրարկումը (միայն Գոլոմպլիայի մէջ Արմենիա կոչուած 43 տեղանուններ սփռուած են 16 նահանգներու մէջ) վերագրելի է Աստուածաշունչի ազդեցութեան:

1890-ին Ուրուկուայ ժամանած է հոն կայք հաստատած ու ընտանիք ձգած առաջին հայը՝ վանեցի Մանուկ Ագարեանը (1867-1954), որ ապրած է երկրի ներքին գաւառները, ուր ամուսնացած է: 1912-ին հաստատուած է Մոնթէվիդէօ: Իր անդրանիկ մանչ գաւակը երկրի առաջին հայ զինուորականը եղած է, իսկ կրտսեր աղջիկը՝ առաջին վկայեալ ուսուցչուհին: 1890-1910 թուականներուն քանի մը տասնեակ հայեր բնակութիւն հաստատած են երկրին մէջ<sup>4</sup>:

<sup>1</sup> Յովհաննէ Պապեսեան, Հանրագիտակ. շտեմարան պիտանի գիտելեաց, Պէյրոս. 1961, էջ 15 (հմտ. Նոյն, Հայկականք, Ֆրէզնօ. 1998, էջ 247): Կամսար Խ Ասպրամ Անեախեան, Հայրենագիտական էտիպներ. Երեւան, 1979, էջ 264: Զատէր Մապունճեան, Հայ մահատակաց յուշարձան Գոլոմպլիոյ Արմենիա քաղաքի մէջ. Օշական, Սեպտեմբեր-Ղեկտեմբեր, 1983, էջ 28:

<sup>2</sup> Մէքքերումը տես Յայմէ Լոպերա Գուտիէրրէզ, La colonización del Quindío. Apuntes para una monografía del Quindío y Calarcá, Bogotá, 1986, p. 114-115.

<sup>3</sup> «Արմենիա», Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2, Երեւան, 1975, էջ 94: «Արմենիա», Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 1, Երեւան, 1990, էջ 394: Այս վարկածին հաւանական աղբիւրին համար տես՝ Հայ մահատակաց յուշարձան Կոլումբիայում. «Սովետական գրականութիւն», 9, 1971, էջ 119, 120: Թիլիմասցոսեան սկզբնաղբիւրը եղած է հետեւեալ հաղորդումը՝ Monument to Armenian Martyrs in Colombia, South America, "The Armenian Mirror-Spectator", May 4, 1968, p. 1.

<sup>4</sup> Աշոտ Արծրունի, Տարեցոյց Հար. Ամերիկահայոց, Պոմոնոս Այրես, 1943, էջ 264. Douredjian y Karamanoukian, "La inmigración", p. 80-87.

1894-ի շուրջ Հաւանա (Գուպա) հասած էր խարբերոցի Ղազար Նազարեանը, որ 1929-ին փայլուն դիրքի տէր էր եւ որուն աղջիկը ոսկեայ մետալով աւարտած է ազգային երաժշտանոցը<sup>1</sup>:

Ռուսական եւ արժանթինեան զանազան աղբիւրներ յառաջ քաշած են Հոկտեմբերեան յեղափոխութեան շրջանին Փեթերպուրկի արժանթինեան դեսպանատան դիւանապետ ու առժամեայ պատասխանատու Փետրո Նաւէյլեանի (1875–1935) հայկական ինքնութիւնը: Հաստատուելու պարագային, ան կը հանդիսանայ Չիլէ ծնած ու ցարդ յայտնի հնագոյն հայր այդ երկրին մէջ<sup>2</sup>: 1918–1921-ին խորհրդային իշխանութիւնները տարբեր մեղադրանքներով բազմիցս ձերբակալած են Նաւէյլեանը, որ 1921-ին յաջողած է ընդյատակեայ դուրս գալ Ռուսաստանէն:

1890-ին Չիլէ ժամանած է վանեցի Մկրտիչ Պինայեանը (1855–1937), որ ապրած ու ամուսնացած է մայրաքաղաք Սանթիակոյի մէջ: 1902-ին սնանկանալով, ան իր ընտանիքով ձգած է երկիրը ու մեկնած՝ Հարաւային Ափրիկէ, ուր յաջողութիւն չգտնելով, 1905-ին հաստատուած է Պուէնոս Այրէս: Իր միակ մանչ զաւակը՝ պատմաբան Նարսիսո Պինայեանը (1896–1970), Արժանթինի առաջին համալսարանաւարտ հայը եղած է<sup>3</sup>: Մկրտիչ Պինայեանի կողքին, 1890-ական թուականներուն քանի մը հայեր եւս կային Չիլէի մէջ<sup>4</sup>, ուր նաեւ ժամանած են արաբխօս հայեր Պաղեստինէն<sup>5</sup>: Արաբացած կամ արաբխօս հայեր, իրենց կարգին, Սուրիայէն արդէն սկսած էին գաղթել Ղէպի Արժանթին ու Պրագիլ այդ տասնամեակին<sup>6</sup>:

Միւս կողմէ, 1890–1900-ին Ղէպի Պրագիլ հայխօս գաղթողներուն թիւը նուազած է, ինչ որ վերագրելի է Մարտէյի մէջ խորհրդատուի չգոյութեան<sup>7</sup>: Գաղթալիքը կրկին աշխուժացած է 1905-էն ետք: 1906-ին հայերը յայտնի էին Պրագիլի եւ Պոլիվիոյ սահմանը

<sup>1</sup> Ս. Գ. Նիկոլեան, Հայ օդիորդի մը յաջողութիւնը, «Հայրենիք», 27 Ապրիլ, 1929, էջ 2:

<sup>2</sup> Տե՛ս Վարդան Մատթեան, Ռուս-արժանթինեան կապերու նախապատմութեան անդեմատմային դէմք մը՝ Փետրո Նաւէյլեան, «Բազմալէպ», 1–4, 2004, էջ 122–138:

<sup>3</sup> Binayan Carmona, Entre el pasado, p. 68–70.

<sup>4</sup> Գաղթականութիւն ի Հարաւ Ամերիկա, «Արմէնիա», 19 Մարտ, 1890, էջ 3: Տե՛ս նաեւ Binayan Carmona, Entre el pasado, p. 71. Աճառեան, Հայ գաղթականութեան, էջ 762:

<sup>5</sup> Նորայր Ա թնձ. Տէր Խորենեան, Կես դարու պատմական բոցոցիկ ակնարկ մը Արժանթինի Հայց. Առաք. Եկեղեցոյ հաստատման եւ զարգացման վրայ, «Հասկ», 1, 2009, էջ 64:

<sup>6</sup> Բրագիլիոյ հայ գաղութը, «Հայրենիք», 6 Օգոստոս, 1927, էջ 1: Սոկրատ Յ. Թերզեան, Սլաքներ եւ դէմքեր, Ա հատոր, Պուէնոս Այրէս, 1961, էջ 11–13:

<sup>7</sup> Նամակ Պրագիլէն, «Արմէնիա», 25 Մարտ, 1893, էջ 2:

նշող Աքրէ դետի երկայնքին: Ըստ անգլիացի գինուորական Փըրսի Տօւրթի, որ շրջանի սահմանազծումով զբաղած էր, «սուրիացիներ եւ Հայեր առեւտրական եղանակին կը վլստային գետին մէջ: Իրենց նաւակները ածան ապրանքով լեցուն էին, ձգախէժով փոխանակելու համար, եւ անոնք շատ աւելի արագ հարստութիւն կը դիզէին քան իրենց եղբայրները՝ անխոնջ փերեզակները»<sup>1</sup>:

Նոյն տարիներուն, Գէորգ Նաչերեան (Օրֆալի), խումբ մը պաղեստինցիներու ընկերանալով, շրջուն վաճառականութեամբ զբաղած է Գոլոմպիայի մէջ, ուր այնուհետեւ խանութ մը բացած է: 1912-ին վերադարձած է Ուրֆա՝ ամուսնանալու եւ ետ դառնալու նպատակով: Սակայն, իր ծրագիրը մնացած է անկատար՝ Ա. Աշխարհամարտի պայթումին պատճառով<sup>2</sup>:

Վկայութիւններ կան, որ մինչեւ 1918, Հայ շրջուն վաճառականներ մենաշնորհային ապրանքափոխանակումով կը զբաղէին Գոլոմպիայի դժուարամատչելի շրջաններու մէջ, հնդկացիներէ ձեռք բերելով թանկարժէք մետաղներ՝ ոսկի եւ լանոսկի (պլատինում)<sup>3</sup>: Լանոսկիի արդիւնաբերական արտադրութեան ծնունդը վերջ տուած է այս մենաշնորհին:

1916-ին Հայ, արար եւ Հրեայ փերեզակներու համատեղ ներկայութիւնը արձանագրուած է Չիլէի եւ Փերուի սահմանակից շրջաններուն մէջ<sup>4</sup>:

Շրջուն վաճառականութիւնը այդ երեք ազգութիւններէն դաղթականներու սկզբնական գործունէութիւնը եղած էր բազմաթիւ երկիրներու մէջ՝ 1870-ական թուականներէն սկսեալ, որովհետեւ նուազագոյն ներդրումը կը պահանջէր՝ աւելի մնայուն հիմքերու վրայ դրամադուլիս մը կուտակելու համար: Ի հարկէ, այդ գործունէութիւնը լաւ աչքով դիտուած չէ իշխանութիւններուն եւ հանրութեան կողմէ, որովհետեւ երկրին համար արդիւնաւէտ չէր՝ հողագործութեան կամ արհեստագործութեան նման: Ասիկա հիմք եղած է զանա-

<sup>1</sup> Percy Fawcett, Lost Trails, Lost Cities, New York, 1953, p. 69.

<sup>2</sup> Jacob (Hagop Khatcherian) Orfali, An Armenian from Jerusalem, Berkeley, 1987, p. 5-21.

<sup>3</sup> Exploring and Prospecting by Aeroplane, "American Review of Reviews", February 1918, p. 209. Benjamin L. Miller and Joseph T. Singewald, Jr., The Mineral Deposits of South America, New York-London, 1919, p. 384.

<sup>4</sup> Henry Stephens, Journeys and Experiences in Argentina, Paraguay, and Chile, New York, 1920, p. 415-416.

զան կարծրատիպերու ստեղծումին, որոնք դեր խաղացած են այս եւ այլ ժողովուրդներուն գաղթին դէմ դրուած արգելքներուն մէջ:

1895–1896-ի ջարդերը առիթ հանդիսացած են, որ կարգ մը լատինամերիկեան երկիրներ նախագիծեր կամ ծրագրեր յղանան՝ հայ գաղթականներ փոխադրելու: Այսպէս, այդ տարիներուն, ըստ երեւոյթին, Պրագիլ եւ Արժանթին խոստացած են հողամասեր տրամադրել հայ գաղթականներու<sup>1</sup>: 1895-ին Պրագիլի խորհրդարանի պատգամաւոր Մէտէյրոս տէ Ալպուքերքէ փորձած է հայ գաղթականներ փոխադրել, սակայն գաղափարը Սան Փաւլոյի կառավարիչի արգելքին հանդիպած է ու ապա՝ այն շողովեան մատնուած: Ան այցելած է Պոլիս 1909-ին եւ երկրորդ փորձ մը կատարած, խանդավառելով տեղւոյն եկեղեցական իշխանութիւնները, սակայն այս եւս անհետեւանք մնացած է<sup>2</sup>: 1896-ին արժանթինեան մամուլին մէջ լուր տարածուած է, թէ Պոլսոյ ջարդերէն ճողոպրած 300 հայեր կը պատրաստուէին մեկնիլ Արժանթին<sup>3</sup>: Սակայն, հաւանական կը թուի, որ անոնք ի վերջոյ եկած չըլլան: Միեւնոյն ատեն, Չիլէի եւ Փերուի կառավարական գործակալներ փորձած են հայ գաղթականներ հրապուրել: Չիլէ մինչեւ իսկ խոստացած է վճարել ճանապարհածախսը, յատկացնել հողատարածքներ ու դրամական օժանդակութիւն<sup>4</sup>: 1897-ին Մեքսիքոյի կառավարութիւնը ծրագրած է հայ երկրագործական համայնք մը ստեղծել Միացեալ Նահանգներու սահմանին մօտ<sup>5</sup>:

1896-ին Պանք Օթոմանի գրաւման մասնակից 15 դաշնակցական յեղափոխականներ Ֆրանսական կառավարութեան կողմէ արտաքսուած են դէպի Արժանթին: Անոնք Պուէնոս Այրէս ժամանած ու հոն մնացած են երկու ամիս, վայելելով արաբական համայնքին օժանդակութիւնը: Խուճը վերադարձած է Եւրոպա, բացառելով ան-

<sup>1</sup> Խոսքով Ներսեսեան, Հայերը Հարաւային Ամերիկայի մէջ (ականատեսի վկայութիւններ), «Ճակատամարտ», 22 Յունիս, 1922, էջ 2: Հմմտ. Ս. Արգուեան, Պրագիլիա իրրու գաղթավայր, «Վերջին Լույս», 28 Փետրուար, 1924, էջ 4:

<sup>2</sup> Medeiros de Albuquerque, Quando eu era vivo... Memorias, 1867 a 1934, "Rio de Janeiro-Porto Alegre-Sao Paulo", 1945, p. 162–163.

<sup>3</sup> Néllida Boulgourdjian, Leticia Otero, Pedro Gitz, Claudia Cortese y Alberto Piñeiro, El Genocidio Armenio en la prensa argentina, tomo I, Buenos Aires, 1988, p. 394.

<sup>4</sup> Սամուէլ Քրոյճեան, Հայերը Հարաւային Ամերիկայում, «Նորք», 3, 1991, էջ 142:

<sup>5</sup> Carlos Antaramian, Armenians in 1930s Mexico City and April 24<sup>th</sup> Commemorations, "Journal of the Society for Armenian Studies", 19:1, 2010, p. 45.

դամներէն մէկը, որ նախընտրած է քաղաքը մնալ, ուր հանդիպած էին նախապէս գաղթած երկու հայերու<sup>1</sup>:

1897-ին Մեքսիքօ հաստատուած է տիպրանակերտցի Գաբրիէլ Պապայեանը, որ զբաղած է ալքոլի դործով եւ մահացած՝ 1945-ի չուրջ: Սուրիացիներու հետ յարաբերութիւն մշակած էր, այն աստիճան, որ իր զաւակը մինչեւ 1920 ինքզինքը սուրիացի համարած է: Պապայեան լայնօրէն օժանդակած է 1920-էն ետք ժամանող հայերուն<sup>2</sup>: 1906–1914-ին ստուգապէս յայտնի է չորս հայերու մուտքը Մեքսիքօ<sup>3</sup>:

1890-ական թուականներու զանգուածային գաղթականութիւնը դէպի Միացեալ Նահանգներ յառաջ բերած է եկեղեցական կազմակերպութեան անհրաժեշտութիւնը: Այդպէս է, որ 1898-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա խրիմեանը ստեղծած է Հայաստանեայց Եկեղեցւոյ Ամերիկայի թեմը, որուն պաշտօնապէս մաս կազմած է Հարաւային Ամերիկան մինչեւ 1937, թէեւ 1912–1925-ին փաստօրէն կապը շատ թոյլ եղած է:

Այսուհանդերձ, դարասկիզբին հայերու ներկայութիւնը հեռու էր նկատառելի ըլլալէ: Միացեալ Նահանգներ գաղթած 15.000-ին դիմաց, ըստ տրամադրելի կցկտուր տուեալներուն, ամբողջ Հարաւային ցամաքամասին մէջ Հայոց թիւը հազիւ կը հասնէր հարիւրեակի մը:

Ցարդ ուսումնասիրութեան կարօտ պատճառներով, որոնք հաւանաբար կապ ունին սպանական ժամանակաշրջանէն ժառանգուած օրէնսդրութեան հետ, դարավերջին արդէն սկսած էր օտար գաղթականութեան սահմանափակումը Հարաւային ու Կեդրոնական Ամերիկայի տարբեր երկիրներու մէջ, որուն ուղղակի թէ անուղղակի զոհերէն եղան նաեւ հայերը: Միջոցառումները ուղղուած էին ամրապն-

<sup>1</sup> Տէն Վարդան Մաթթեան, Պանք Օրոմանէն մինչեւ Արժանիւն, «Յառաջ», 31 Դեկտեմբեր, 1998 և 1 Յունուար, 1999:

<sup>2</sup> Գրիգոր Մանուկեան, Լուրեր Մեքսիքոյն, «Հայրենիք», 27 Փետրուար, 1924, էջ 4:

<sup>3</sup> Ռ. Բարսեղեան, Պատմութիւն հայ գաղութներու. «Հասկ», Փետրուար, 1960, էջ 336 (Յակոբ Սապունճեան՝ 1909-ին, Պոլիսէն): Ը. Antaramian, Armenians in 1930s Mexico City, p. 45 (Յովհաննէս եւ Պերրա Նշան՝ 1906-ին. Ակուստին Նարինեան՝ 1914-ին): 1898-ին Պոլսոյ Ռուպերթ Գոլճէն հայ շրջանաւարտ մը համբային ճարտարագէտ էր Մեքսիքոյի մէջ 1909-ին (George Washburn. Fifty Years in Constantinople and Recollections of Robert College, Boston and New York: Houghton Mifflin Company, 1909, p. 262). Թէեւ ինքնութիւնը յայտնի չէ, րուսկաններու եւ վայրի զուգադիպութիւնը ենթադրել կու տայ. որ խօսքը կրնայ Յ. Սապունճեանի մասին ըլլալ:

դելու եւրոպական գաղթականութիւնը եւ բացառելու «անցանկալի» տարրերը: Այսպէս, 1890-ին Ուրուկուայը արգելած է ասիացիներու, փիրիկեցիներու եւ գնչուներու ներգաղթը: 1906-ին բացառութիւն մը տրուած է սուրիա-լիբանանցիներու, իսկ 1915-ի կառավարութեան մեկնաբանութիւնը կը հաստատէր, որ «մերժելի գաղթ կը նկատուին [այն] սասիացիներն ու փիրիկեցիները որոնց մերժումը գաղթականական իշխանութիւններուն դատողութեամբ յարմար է»<sup>1</sup>, ինչ որ անարգել պահած է հայերու ազատ մուտքը:

1891-ի Վենեզուելայի գաղթի օրէնքը արգելած է ասիացիներու մուտքը: Մինչեւ Բ. Աշխարհամարտի աւարտը տնտեսական եւ քաղաքական պայմանները նպաստաւոր չեն եղած օտարականներու զգալի ներկայութեան<sup>2</sup>:

1897-ին Գոսթա Ռիքայի գաղթականութեան օրէնքը արգելք դրած է չինացիներու, արաբներու, թուրքերու, սուրիացիներու, հայերու եւ գնչուներու մուտքին, պատճառաբանելով, որ անոնք «վնասակար [են] հանրապետութեան յառաջդիմութեան ու բարօրութեան», որովհետեւ «իրենց ցեղին, կեանքի սովորութիւններուն ու վաչկատուն ռզիին պատճառով, որ չի յարմարիր կարգի ու աշխատանքի միջավայրի մը, երկրին համար կազմախօսական այլասերման եւ ծուլութեան ու մոլութեան զարգացման նպաստաւոր աղբիւրներու պատճառ պիտի ըլլան»<sup>3</sup>: 1904-ին նոր հրովարտակ մը վերահաստատած է արգելքը (բացառելով չինացիները), որմէ 1906-ին գերծմնացած են արդէն նախօրօք երկիրը հաստատուածները, որոնց ընտանեկան պարագաներուն հարցը քննելի էր: 1910-ին յիշեալ բոլոր ժողովուրդները, ի բաց առեալ գնչուներէն, մուտքի արտօնութիւն ստացած են<sup>4</sup> երկու նախապայմաններով. «լաւ կրթութիւն» եւ 1.000 գոլոնի (երկրի դրամանիշը) դրամազուլի ունենալ<sup>4</sup>:

<sup>1</sup> Luis Seguí González y Alejandro Rovira, Contribución al estudio del derecho migratorio uruguayo, Montevideo, 1939, p. 59–60. Juan José Arteaga y Ernesto Puiggrós, Legislación y política inmigratoria en el Uruguay: 1830–1939, "en Legislación y política inmigratoria en el Cono Sur de América", vol. III, Buenos Aires, 1987, p. 442–443.

<sup>2</sup> Adela Pellegrino, Historia de la inmigración en Venezuela. Siglos XIX y XX, vol. I, Caracas, 1989, p. 130–131, 184–196.

<sup>3</sup> Steven Palmer, From Popular Medicine to Medical Populism: Doctors, Healers, and Public Power in Costa Rica, 1800–1940, Durham and London, 2003, p. 146.

<sup>4</sup> Roberto Marín-Guzmán, A Century of Palestinian Immigration into Central America. A Study of Their Economic and Cultural Contributions, San José de Costa Rica, 2000, p. 62–63.

Իր կարգին, Կուլաթեմալան 1909-ին արգելած է ասիացիներուն մուտքը<sup>1</sup>, որոնց շարքին պէտք է ընդգրկել հայերը: Նախապէս հոն բնակութիւն հաստատած էր հնդկահայ ընտանիքի շառուիղ Ալպերթ Յարութիւնը (1867–1965), նախ Լիվիւնկսթըն (1901) եւ ապա Կուլաթեմալա (1904), ուր ապրած է մինչեւ մահը: Մատրաս ծնած ու փոքր տարիքին Անգլիա փոխադրուած հայազգի առեւտրականը Կուլաթեմալա հաստատուելէ ետք ամուսնացած էր իտալական մարքիզի մը թուան հետ<sup>2</sup>:

1910-ին Մեքսիքոյի մէջ տեղի ունեցած է հրապարակային բանավէճ մը միջին արեւելքիներու (յատկապէս արաբներու եւ հրեաներու) անցանկալիութեան մասին, որոնք կոչուած են «մուրացիկներ» եւ «աննպաստ»՝ երկրին համար<sup>3</sup>: 1920-ական թուականներուն սկիզբը ընդհանուր դադլթականութիւնը ազատ ձգելէ ետք, 1927-ին Մեքսիքոն արգելած է միջին արեւելեան ժողովուրդներու մուտքը, որոնց շարքին՝ հայերը<sup>4</sup>:

1906-ին Փանամայի ջրանցքի շինարարութեան համար 14 հայեր գործի ընդունուած են: Անոնք եւրոպացիներու շարքին դատուած էին եւ, անոնց նման, սեւամորթներէն կրկնակ վճարում ստացած, քանի որ եռապատիկ արգիւնաւէտ կը նկատուէին<sup>5</sup>:

XX-րդ դարի երկրորդ տասնամակին տեղի ունեցած է հարաւամերիկեան համայնքներուն կազմակերպական գործընթացին սկզբնաւորումը: Ի սկզբանէ, ամենէն հայաշատ համայնքը եղած է

<sup>1</sup> Ignacio Klich, "Les sources concernant les libanais et autres Moyen-Orientaux en Argentine", dans Michel Nancy et Elisabeth Picard (eds.), Les Arabes du Levant en Argentine, Aix-en-Provence, 1998, p. 112.

<sup>2</sup> Narciso Binayan (h.), "Notas para la prehistoria de las comunidades armenias", en Matiossian, Los armenios en América del Sur, p. 14. Յարութիւն ընտանիքին մասին, տես Mesroby J. Seth, Armenians in India from the Earliest Times to the Present Day, Calcutta, 1937, p. 327–380, 384–418, 578.

<sup>3</sup> Walter P. Zenner, A Global Community: The Jews from Aleppo, Syria, Detroit, 2000, p. 111.

<sup>4</sup> Gilberto Loyo, La política demográfica de México, México, 1935, p. 375–376. Moisés González Navarro, Los extranjeros en México y los mexicanos en el extranjero, 1821–1970, vol. 3, México, 1994, p. 35–36.

<sup>5</sup> R. E. Wood, "The Working Force of the Panama Canal", in George W. Goethals (ed.), The Panama Canal. An Engineering Treatise, vol. I, New York-London, 1916, p. 196–198. 1914-ին բրթակից մը գրած է ԱՄՆ-ի հայերու վիճակին մասին, ի միջի այլոց յիշելով, թէ Պանամայի ջրանցքում աշխատելու համար գնացած ռուս գործատրմերին ուղեկցող մի քարձր կրթութեան տէր կովկասահայ անհետ կոլուս (Remmius, «Ամերիկեան ճամակներ», «Մշակ», 8 Մարտ. 1914, էջ 4):

Արժանթինը, ուր ուղղրուած է 1909–1910-ին ծայր տուած պանդխտութեան նոր հոսանքը Օսմանեան կայսրութենէն, Միացեալ Նահանգներ չկարենալ մտնելու հետեւանքով: Ինչպէս կը գրէր Թղթակից մը, «Պուէնոս Այրէսն ալ, իբր երկրորդական գաղթավայր, կը սկսի Հայուն դառնալ Հիւսիսային Ամերիկայէն յետոյ, առժամանակեայ քաւարան անոնց համար՝ որ մեծ մեծ յոյսեր դնելով Հիւսիսային Ամերիկայի վրայ, ճամբայ կելլեն՝ բայց «նօ պօնօ» ըլլալով կէս ճամբան, կուգան մեղքերնին քաւելու հոս, մինչեւ որ ո եւ է կերպով չուեն դէպի Հիւսիս, դէպի երկրային Արքայութիւնը...»<sup>1</sup>:

Անպակաս էին նաեւ խարբբայութիւնները: Որոշ դործակալներ, խոստանալով ապաւիկ տոմս, «գործ կապահովէ[ին] եղբր Հարաւային Ամերիկայի Արժանթինի հանրապետութեան մէջ (...) յետոյ տեղեկացան (...) թէ Ամերիկայի այդ մասին մէջ հայեր չկան եւ հետեւաբար կեանքը պիտի ըլլայ տանջանք մը իրենց համար»<sup>2</sup>:

1909-ին Պուէնոս Այրէսի հայերու թիւը կը հասնէր շուրջ 200-ի<sup>3</sup>: Գաղթականութեան Տնօրէնութեան 1909-ի տեղեկագիրը հայերն ու արաբները «դժուար համարկելի» կը նկատէր, պատճառաբանելով լեզուի տարբերութիւնն ու սովորութիւններու «տարաշխարհիկութիւն»ը<sup>4</sup>:

1898-ին Գորտոպա քաղաքը ժամանած էր առաջին հայը՝ Յակոբ Թիւյսիւզեանը, որ 1904-ին ամուսնացած է արժանթինցիի մը հետ: Ընտանիքը հետագային Պուէնոս Այրէս անցած ու հետքը կորսուած է<sup>5</sup>: Գորտոպայի համայնքը սկսած է կազմաւորուիլ 1909–1910-ին եւ տասնամեակի վերջաւորութեան ունեցած ո՛չ աւելի, քան 100 անդամ:

<sup>1</sup> Կ. Պապօ [Պապոյեան], Հայը Պուէնոս Այրէսի մէջ, «Ազատամարտ», 16/29 Մայիս, 1912, էջ 1:

<sup>2</sup> Ն.Տ.Ս. Թաշճեան, Ամերիկա մի պանդխտք. գոնէ, ու մանաւանդ գալիք տարի, «Ազատամարտ», 8/21 Սեպտեմբեր, 1911, էջ 1:

<sup>3</sup> Արծրունի, Տարեցոյց, էջ 12:

<sup>4</sup> Juan Alsina, La inmigración en el primer siglo de la independencia, Buenos Aires, 1910, p. 209.

<sup>5</sup> Գորտոպայի համայնքի հնագոյն շրջանին մասին, տես María Inés Albarracín, "Los inicios de la colectividad armenia en la ciudad de Córdoba. Un acercamiento a su período de asentamiento, 1900-1920", III Jornadas de Historia de Córdoba, Córdoba, 1997, p. 428–457. Թիւյսիւզեանի մասին, տես նաեւ Ոսկեմատեան Հայկ. Բարեգ. Ընդի. Միութեան, 1906–1931, Ա. հատոր, Փարիզ, 1935, էջ 49: Արծրունի, Տարեցոյց, էջ 309:

Յամաքամասի ամենէն ամուր հիմքերը դրուած են Պուէնոս Այ-րէսի մէջ: Ուսումնասիրողներու աչքէն ցարդ վրիպած տեղեկութիւն մը կը պարզէ, թէ արժանթինահայ համայնքը իր առաջին կազմակերպութիւնը ունեցած է 1907-ին: Այդ տարի Պուէնոս Այրէս հաստատուած են հինգ երիտասարդներ Կեսարիոյ Չոմախլու գիւղէն, որոնք հիմնած են Չոմախլու Գիւղի Ուսումնասիրաց Ընկերութիւնը: Ան հովանաւորած է աղջկանց «Հոփոսիմեանց» վարժարանը, որ տեւած է մէկ տարեշրջան<sup>1</sup>: Ուսումնասիրացի հետագայ ճակատագիրը յայտնի չէ:

1911-ին հիմնուած է Հայ Բարեգործական Ընկերութիւն Արժէնթինի, որ 1913-ին դարձած է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ցարդ գոյասեւոյ տեղական մասնաճիւղը<sup>2</sup>: Նոյն տարին հիմնուած է Գորտոպայի մասնաճիւղը, որ մինչեւ 1918 նշանակալից գործունէութիւն ունեցած չէ<sup>3</sup>: 1912-ին Պուէնոս Այրէս ժամանած է առաջին Հայ եկեղեցականը՝ Պաղտասար քհնյ. Պարասաթեանը, որուն առաջին պատարագէն ետք հիմնուած է եկեղեցական վարչութիւնը՝ Թաղական Խորհուրդ Արժէնթինի անունով, եւ գոյասեւած՝ մինչեւ 1916<sup>4</sup>: 1912-ին յիշուած է նաեւ «բողոքականներու ժողով»-ին գոյութիւնը<sup>5</sup>: Նոյն տարին հիմնուած են Հ. Յ. Դաշնակցութեան<sup>6</sup> եւ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան<sup>7</sup> կոմիտէները: Տասնամեակի աւարտին գոյութիւն ունեցած է Վերակազմեալ Հնչակեան, ապա՝ Հայ Ռամկավար Կուսակցութեան մասնաճիւղը: 1912-

<sup>1</sup> Յակոբ Ասատուրեան, Յովակիմի թոռները, Պէյրութ, 1965, էջ 126, 127: Տես նաեւ Արիս Տ. Կ. Գալֆաեան, Չոմախլու, Նիւ Եորք, 1930, էջ 163:

<sup>2</sup> Արժանագրութեան տոմար Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Պուէնոս Այրէս, 7 Մայիս, 1911: Ոսկեմատեան, էջ 406-407:

<sup>3</sup> Ոսկեմատեան, էջ 409: Մասնաճիւղի հիմնադրութեան պաշտօնական թուականը Մայիս 26, 1918 է:

<sup>4</sup> Տէր Խորէնեան, Կես դարու պատմական բրոցիկ ակնարկ մը, էջ 64-66:

<sup>5</sup> Արժանագրութեան տոմար Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, 16 Յունիս, 1912:

<sup>6</sup> Մ. Կ., Աստուր Չնդանեան, «Արմենիա», 24 Սեպտեմբեր, 1932, էջ 1: Տես նաեւ Գեորգ Տոնապետեան, Հ. Յ. Դաշնակցութիւնը Ամերիկայի մէջ, Բ. Խատրո (1910-1923), Պոստրն, 1995, էջ 120: 1915-ին Գորտոպայի մէջ ստեղծուած Հ. Յ. Դ. «Արժիս» խումբը երկար կեանք ունեցած չէ (Պուէնոս Այրէսի հայկական գաղութը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, «Արմենիա», 28 Յունուար, 1970, էջ 1):

<sup>7</sup> Ս. Շլըրտմեան, Ինչպէս հիմնուեցաւ առաջին հայ թերթը Հարաւային Ամերիկայի մէջ, «Շարժում», 16 Դեկտեմբեր, 1961, էջ 4:

1915-ին ստեղծուած են Թումարզայի<sup>1</sup>, Զէյթունի (1913–1915)<sup>2</sup>, Այն-Թապի (1915–1918)<sup>3</sup> եւ Հաճընի (1915)<sup>4</sup> հայրենակցական կազմակերպութիւններ, որոնցմէ վերջինը գոյատեւած է մինչեւ այսօր:

1911-ին Հայկ Մոսկօֆեան գրած էր Պուէնոս Այրէսի մասին, թէ «Հոս փոքրաթիւ Հայ գաղութ մը կայ որ նոր ինքզինքը ծանօթացնելու կը սկսի տեղական տարրին: Մեծ մասը կարգալ գրել չեն գիտեր եւ թերթ կարդալու փափաք չունին: Ոմանք Մ. Նահանգները կերթան յուսալով թէ Հոն աւելի յաջող կըլլան»<sup>5</sup>, մինչ Միհրան Էքմէքճեան զգուշացուցած է, թէ «այս երկու Ամերիկաներու տարբերութիւնը այնքան մեծ է, որքան հիւսիսը հարաւէն, ըլլա՛յ վաճառականական ձեւերը, թէ գործարանական կեանքը (...)»<sup>6</sup>: 1912-ին Հայ Բարեգործական Ընկերութիւնը Պոլսոյ Պատրիարքին հաղորդած է, թէ «(...) հիմա առ առաւելն 300–400 հայեր տեղս կը գտնուին, բայց անոնց մեծամասնութիւնը ներքին գաւառները տարածուած են եւ միեւնոյն ատեն նկատելի կէտը այն է որ ընդհանրութիւնը առեւտրական ասպարէզի վրայ գործ չունին, այլ միայն անձնականի բաւող ջնջին (sic) գործերով կը զբաղին»<sup>7</sup>: Նոյն տարին, ըստ Կ. Պապոյեանի, «գրեթէ ամէն անգամին իտալական կամ աւստրո-հունգարական շոգենաւները, կը բերեն գաղթականներու շարքին՝ նաեւ 40–50 Հայեր՝ երիտասարդ, չափահաս, նոյն իսկ սպիտակահեր ծերեր՝ կեսարացի, էվէրէկցի, Թումարզացի, Այնթապցի»<sup>8</sup>:

1914-ին Պուէնոս Այրէսի հայերու թիւը կը գնահատուէր 2.000-ի շուրջ<sup>9</sup>: Սակայն, Առաջին համաշխարհային պատերազմին հետեւանքով գաղթը դադրած է, իսկ երկրին տնտեսական դժուարութիւն-

<sup>1</sup> Յարգանք Տասնամեակին, Շիրակօ, 1919, էջ 34:

<sup>2</sup> Չէթուն Պատմագիրք, Պուէնոս Այրէս, 1960, էջ 1132:

<sup>3</sup> Գեորգ Ա. Սարաֆեան, Պատմութիւն Անթալի Հայոց, հատոր Բ., Լոս Անճելըս, 1952, էջ 567–568:

<sup>4</sup> Նոր Հաճըն Պատմագիրք 1921–1973, Պուէնոս Այրէս, 1974, էջ 34–39: Հմմտ Յ. Պ. Պոդոսեան, Հաճընի Ընդհանուր Պատմութիւն եւ շրջակայ Գօգան-Տաղի հայ գիւղերը, Լոս Անճելըս, 1942, էջ 795:

<sup>5</sup> Օրուան լուրեր, «Կոչնակ», 22 Յուլիս, 1911, էջ 713:

<sup>6</sup> Միհրան Էքմէքճեան, Հայ գաղթականներն Հարաւային Ամերիկայի մէջ, «Բիւզանդիոն», 11/24 Յուլիս, 1911, էջ 1:

<sup>7</sup> Հ.Բ.Ը. Միւրեան նամակներու տոմար, Պուէնոս Այրէս, Նամակ Յովհաննէս արք. Արշարունիի, 21 Յունուար, 1912:

<sup>8</sup> Պապօ, Հայր, էջ 1:

<sup>9</sup> Արծրունի, Տարեցոյց, էջ 14: Binayan Carmona, Entre el pasado, p. 203.

ները պատճառ դարձած համայնքին մտաւորապէս կէսի գաղթին, հիմնականին Միացեալ Նահանգներ եւ Ֆրանսա<sup>1</sup>: 1916–1918 թուականներուն Արժանթինէն եւ Ուրուկուայէն մտաւորապէս 200 հայեր մեկնած են դէպի Ֆրանսա եւ Միջին Արեւելք՝ կամաւորական շարժումին մասնակցելու:

1916–1917-ի ընդհանուր ճգնաժամէն ետք, որուն ընթացքին քայքայուած է եկեղեցական վարչութիւնը<sup>1</sup>, Մարտ 1918-ին Պուէնոս Այրէսի մէջ հիմնուած է Արժանթինի Հայ Ազգային Միութիւնը, որ Սեպտեմբերին վերակազմուած է երեք կուսակցութիւններու (դաշնակցական, հնչակեան եւ վերակազմեալ հնչակեան), երկու եկեղեցիներու (առաքելական եւ աւետարանական) եւ Հ.Բ.Ը.Մ.ի անդամակցութեամբ: Ներկայանալով որպէս Ամերիկայի համանուն կազմակերպութեան մասնաճիւղը, Հայ Ազգային Միութիւնը համայնքին առաջատար կազմակերպութեան դերը ստանձնած է, գլխաւորելով Հայ դատի քարոզչական աշխատանքները եւ Հայաստանի նորակազմ հանրապետութեան ու հայութեան տարբեր նպատակներու ուղղուած հանգանակութիւնները: ԱՄՆ-ի մէջ հնչակեաններու եւ ապա դաշնակցականներու բաժանումը պատճառ դարձած է, որ 1920-ին Արժանթինի կազմակերպութիւնը վերջնականօրէն պառակտուի<sup>2</sup>:

1910-ական թուականներուն Պրազիլի հայերու թիւը 200 եղած է, գլխաւորաբար կեդրոնացած Սան Փաւլոյի մէջ<sup>3</sup>: Մեծ Եղեռնի տարագրեալներուն ի նպաստ հանգանակութեամբ զբաղելու նպատակով, 1915–1917-ին գործած է Հայոց Կարմիր Խաչ Ընկերութիւնը<sup>4</sup>, որուն յաջորդած է Հայ Բարեգործական Միութիւնը (1917–1921)<sup>5</sup>: Համատեղ աշխատանքը նպաստած է մինչ այդ իրարու անհաղորդ հայախօս եւ արարախօս հատուածներուն մերձեցումին:

Ռիօ տէ Ժանէյրոյի սակաւաթիւ հայերը նշանակալից դեր կատարած են այդ տարիներուն, շնորհիւ Ֆրանսական Լիկէոնի դասախօս էթիէն Պրազիլի (Իգնատիոս էթեան, 1882–1955), որ 1915 թուականէն սկսեալ պրազիլական թերթերուն մէջ ստորագրուած բազմաթիւ յօդուածներով մեծապէս սատարած է հայերու եւ անոնց դժնդակ ճակատագրի ծանօթացումին: Է. Պրազիլի անխոնջ գործունէութիւնը

<sup>1</sup> Հայկ Մսևօֆեան, Պուէնոս Այրէսի գաղութի նախապատմականը, «Հայ Կեդրոն», Յունուար, 1933, էջ 6: Յ. Պարզեւ (Պարգեւեան), Հայ Կեդրոնը եւ գաղութը, «Հայ Կեդրոն», Նոյեմբեր, 1933, էջ 8:

արդիւնաւորուած է պրագլիական կառավարութեան եւ Հասարակական կարծիքին հայանպատ կեցուածքով:

Փետրուար 1920-ին, Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան հրահանգով, էթիէն Պրագլը նշանակուած է նորանկախ երկրի դիւանագիտական ներկայացուցիչը Հարաւային Ամերիկայի մէջ: Հայ դիւանագէտին ջանքերուն շնորհիւ, Մայիս 1920-ին Արժանթինը դարձած է Հայաստանը իրաւականօրէն ճանչցող առաջին պետութիւնը, որուն յաջորդած են Զիլէն (Օդոստոս, 1920) եւ Պրագլը (Նոյեմբեր, 1920): Ան յամառօրէն աշխատած է Ռուսկոլայի եւ այլ պետութիւններու ճանաչումը ապահովել, ինչ որ իրականացած է Հայաստանի խորհրդայնացումին հետեւանքով<sup>6</sup>:

1910-ական թուականներուն քանի մը տասնեակ հայեր ապրած են Մոնթէվիտոյի մէջ<sup>7</sup>, ուր 1915-ին ձեռնարկուած է տարագիր հայերուն ի նպատակ դրամահաւաք: Ստեղծուած է Հայ Բնակիչներու Կեդրոն կազմակերպութիւնը, որ երկար կեանք ունեցած է<sup>8</sup>: 1918-ին անոր յաջորդած է Հայկական Կեդրոնը, որ գոյատեւած է մինչեւ 1921<sup>9</sup>:

1920–1930-ական թուականներուն զանազան ժողովուրդներու (ներառեալ՝ հայերը) դէմ կիրարկուած օրէնսդրական արգելքները յաւելեալ պատճառ դարձած են, որ այլուր որեւէ նկատառելի հայկական ներկայութիւն չըլլայ: 1929-ին Հոնտուրասը 2.500 տղարի երաշխաւորագիր պահանջած է, իսկ 1934-ին որոշած է ընդունիլ

<sup>1</sup> Արձանագրութեան տոմար Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, 23 Յունիս, 16 եւ 30 Յուլիս, 17 Սեպտեմբեր, 1916: Տես նաեւ Արծրունի, Տարեցոյց, էջ 15:

<sup>2</sup> Տես Վարդան Մատթեոսեան, Պուէնոս Այրեսի Հայ Ազգային Միութիւնը (1918–1920), «Հայկազեան Հայագիտական Հանդէս», հ. ԺԸ, 1998, էջ 131–152:

<sup>3</sup> Ազգային կեանք, «Կոչնակ», 22 Ապրիլ, 1916, էջ 450:

<sup>4</sup> Մխիթարեան, Պրագլիահայ, էջ 11: Արծրունի, Տարեցոյց, էջ 336: Վարդանեան, Պրագլիոյ, էջ 50–51:

<sup>5</sup> Մխիթարեան, Պրագլիահայ, էջ 11–14: Վարդանեան, Պրագլիոյ, էջ 53–64:

<sup>6</sup> Տես Վարդան Մատթեոսեան, Հայաստանի Հանրապետութիւնը եւ Հարաւային Ամերիկայի պետութիւնները (1918–1920), «Հայկազեան Հայագիտական Հանդէս», հ. Ի., 2000, էջ 225–268:

<sup>7</sup> Douredjian y Karamanoukian, La inmigración armenia, p. 88.

<sup>8</sup> Daniel Karamanoukian, El Genocidio Armenio en la prensa del Uruguay. Año 1915, Montevideo, 1985, p. 100–101.

<sup>9</sup> Կոչ, «Հայրենիք», 19 Նոյեմբեր, 1918, էջ 3: Տես Daniel Karamanoukian, Apuntes para una reconstrucción histórica de la conmemoración del 24 de Abril en Uruguay, "Hay Endanik", abril de 1999, p. 38.

միայն երկրագործ հայերը<sup>1</sup>: 1930–1982-ին Նիքարագուա արգելած է հայերու գաղթը<sup>2</sup>: 1935-ին Գոլոմպլիա արտօնած է տարեկան հինգ հայու մուտքը, իսկ 1937-ին սահմանափակած է տասնհինգ ազգութիւններու մուտքը, ներառեալ՝ եգիպտացիներ, սուրիացիներ, պաղեստինցիներ, յոյներ, պուլկարացիներ, ռումանացիներ, ռուսեր եւ թուրքեր<sup>3</sup> (1968-ի հրապարակուած մը հաստատած է, թէ «սեւամորթներն ու հայերն ալ սովորաբար չեն ընդունուիր»)<sup>4</sup>: 1936-ին Կուաթեմալա արգելած է, որ հայերը արդիւնաբերական կամ առեւտրական կալուածներու տէր կամ վարիչ ըլլան<sup>5</sup>, իսկ 1938-ին Փանամա արգելած է անոնց գաղթը<sup>6</sup>:

Մինչ այդ, 1915–1922-ի հայոց պատմութեան անկիւնադարձային դէպքերուն որպէս հետեւանք, որոնց պէտք է գումարել Միացեալ Նահանգներու գաղթականութեան սահմանափակումը՝ 1921-ի եւ 1924-ի օրէնքներով, Հարաւային Ամերիկայի մերօրեայ գաղթօճախները ամրագրուած են Արժանթինի, Պրաչիլի եւ Ուրուկուայի, ու անհամեմատ նուազ կարեւորութեամբ՝ Չիլէի մէջ: Այս կեդրոնացումը պէտք է վերագրել կլիմայական եւ տնտեսա-քաղաքական աւելի նպաստաւոր պայմաններուն: ԱՄՆ-ի գաղթականութեան օրէնքները ծնունդ տուած են սահմանային Մեքսիքոյի եւ Գուպայի փոքր համայնքներուն, որոնք քայքայուած են Բ. Աշխարհամարտի աւարտին: 1920-ին յիշուած է հայերու եւ Արմենիա թաղամասի մը գոյութիւնը Վենեզուելայի մայրաքաղաք Գարապասի մէջ<sup>7</sup>, զորս չենք կրցած ստուգել: Երկրի այժմու համայնքը ծնունդ առած է շատ աւելի ուշ՝ 1950–60-ական թուականներուն:

<sup>1</sup> Dario Euraque, Formación nacional, mestizaje, y la inmigración árabe plesona a Honduras, 1880–1930, "Estudios Migratorios Latinoamericanos", 26, 1994, p. 52.

<sup>2</sup> Rodolfo Sandino Argüello y Marvin Ortega, Aspectos jurídicos de las migraciones en Nicaragua, Managua, 1991, p. 8 ([www.oim.web.cl/72.507-08](http://www.oim.web.cl/72.507-08)).

<sup>3</sup> Klich, Les sources, p. 112.

<sup>4</sup> The West Indies and Caribbean Yearbook, Toronto, 1968, p. 562.

<sup>5</sup> Klich, Les sources, p. 112.

<sup>6</sup> Los aspectos jurídicos e institucionales de las migraciones en la República de Panamá, Panamá, 1992, p. 10–13.

<sup>7</sup> Հայերը Հարաւային Ամերիկայի մէջ, «Ճակատամարտ», 9 Սեպտեմբեր, 1920, էջ 2: Տես նաև Մեսրոպ արք. Աշճեան, Հանդիպումներ, Նիւ Եորք, 1993, էջ 256:

## ԿԱՆԱԴԱ

Կանադահայ Համայնքի պատմութիւնն<sup>1</sup> ուսումնասիրելիս Հարկ է անդրադառնալ նրա կազմավորման և զարգացման չորս շրջափուլերին՝ մինչև Առաջին Համաշխարհային պատերազմ, Հայոց ցեղասպանութիւնից հետո, ապա Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո և 1989 թ. մինչ այսօր ընկած ժամանակաշրջաններին:

